ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

ПРОФ. Х. САМУЭЛЯН

# КУЛЬТУРА ДРЕВНЕЙ АРМЕНИИ

ТОМ ВТОРОЙ

*Бронзовый и ранний железный век*

*МАТЕРИАЛЬНАЯ КУЛЬТУРА*

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-А
ЕРЕВАН 1941

37(47.925)
Ա-17
5927

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐՈՖ. Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Բրոնզե ու վաղագույն երկաթե դար

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1941

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ.

## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հանգուցյալ պրոֆեսոր Խաչիկ Սամուելյանի (1873—1940) գիտական աշխատությունների մեջ աչքի ընկնող տեղ է գրավում նրա «Հին Հայաստանի կուլտուրան» ուսումնասիրությունը: Սամուելյանի այդ աշխատությունը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը լույս է տեսել 1931 թվականին, Հայպետհրատի հրատարակությամբ, երկրորդ մասը ներկա հատորն է, որ տպագրության հանձնվեց հեղինակի մահվանից հետո. երրորդ մասը, որի ձեռագիրը գտնվում է Ինստիտուտիս տրամադրության տակ, տպագրության կհանձնվի ընթացիկ տարում:

«Հին Հայաստանի կուլտուրա»-ի այս հատորը, ինչպես ընթերցողը կտեսնի, չունի իլյուստրացիոն մատերիալ: Հանկարծակի մահը խանգարեց բազմաշխատ հեղինակին հավաքել իր աշխատանքի համար հարկ եղած նկարները: Այդ աշխատանքը հնարավոր չեղավ կատարել առանց հեղինակի, ուստի արժեքավոր այս գործը լույս է տեսնում առանց իլյուստրացիաների, մի հանգամանք, որ, անկասկած, խոշոր թերություն է ներկա հրատարակության համար:

Նույն հատորը, որի շարադրությունը հեղինակն ավարտել է դեռևս 1932 թվականին, ունի մի շարք վիճելի կետեր ու սխալ դրույթներ: Այդ մասնակի թերությունները, սակայն, չեն նսեմացնում Սամուելյանի գործի նշանակությունը:

Բեղմնավոր պրոֆեսորի այս եռահատոր մոնոգրաֆիան, նյութական կուլտուրայի հարուստ և բազմազան մնացորդների ուսումնասիրության ու ընդհանրացման հիման վրա, առաջին անգամն է տալիս հին Հայաստանի կուլտուրայի սիստեմատիկ և ամփոփ պատմությունը և հենց այդ տեսակետից էլ գիտական խոշոր արժեք ունի:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ОТ ИНСТИТУТА

*В трудах покойного профессора Хачика Самуэляна (1873–1940) видное место занимает „Культура древней Армении". Означенный труд состоит из трех частей. Первая часть вышла в 1931 г. в издании Армгиза, вторую часть составляет настоящий том, который сдан в печать после смерти автора. Третья часть названного труда, находящаяся в распоряжении Института, будет выпущена в текущем году.*

*Издаваемый том „Культуры древней Армении", как заметит читатель, не содержит иллюстрационного материала. Скоропостижная смерть лишила неутомимого ученого возможности снабдить свой труд необходимым иллюстрационным материалом; выполнить же эту работу без автора не оказалось возможным, почему настоящий труд издается без иллюстраций,—обстоятельство, которое, несомненно, является пробелом для настоящего издания.*

*Издаваемый том, изложение которого автор закончил еще в 1932 году, содержит ряд спорных моментов и неправильных установок, однако эти частичные дефекты не умаляют значения труда Х. Самуэляна.*

*Трехтомная монография профессора Х. Самуэляна, составленная на основании изучения и обобщения богатых и разнообразных остатков материальной культуры, впервые дает систематизированную историю культуры древней Армении и, как таковая, представляет большую научную ценность.*

*ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ*



# Ա

# ՄԵՏԱՂԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ

## 1

## ՄԵՏԱՂԻ ՍԿԻԶԲԸ

Տեխավին նեոլիթյան դարերին վերաբերող հնագիտական պեղածոների մեջ, Արեւմտյան Եվրոպայում, ինչպես օրինակ՝ Իսպանիայի դամբաններում, Շվեյցարիայի պալաֆիտներում (ցցավոր շենքերում) գտնվել են մետաղի (ոսկու, պղնձի, արծաթի) մանրիկ զանազան կտորներ, որոնք ուլունքների ձեւով գործածվելիս են եղել իբրեւ զարդարանք։ Նախապատմական մարդը երկրի մակերեսին, գետերի ավազներում, իր շահագործած քարհանքերում գտնելով այդ մետաղների բնածին բեկորիկները, հրապուրվում էր նրանց արտաքին փայլից, հավաքում և գործածում էր իր անպաճույճ զարդարանքների համար։

Սակայն մետաղի այդպիսի գործածությունը դեռեւս չի նշանակում, որ այստեղ տեսնելու ենք մետաղի ինդուստրիայի գոյությունը, մետաղների մշակումը։

Մետաղի մշակումը սկսվում է այն ժամանակից, երբ նախապատմական մարդը հայտաբերում է մետաղ թափելու, հալելու և ձուլելու արվեստի գաղտնիքը, երբ նա սովորում է այդ եղանակով պատրաստել իր գոյության համար անհրաժեշտ իրերը, այսինքն՝ զենքեր և տնտեսական գործիքներ։

Առաջին մետաղը, որ ծանոթ է այդ նախատակներին ու հանդիսացել է քարեդարյան գործիքներին հաջորդողը, եղել է պղինձը։ Շնորհիվ իր մի շարք հատկությունների (դյուրին կռելի, մշակելի և այլն), պղինձը, նախնական արհեստի պրիմիտիվ պայմաններում, դարձավ գործածական ու հասարակագույն նյութ, հետզհետե դուրս վանելով քարը։ Բայց և այնպես պղնձի արտադրության այդ դարերում քարե գործիքներն ու այլ առարկաները շարունակում են իրենց գոյությունը պղնձի հետ միասին։ Շատ հաճախ էր պատահում, որ պեղված որեւէ վայրում գտնված գործիքներն ու զենքերը լինեին բացառապես պղնձից։

Ահա թե ինչու այդ ժամանակաշրջանը հնագիտության մեջ ոչ թե միայն կոչվում է պղնձե դար (ըստ ֆրանսիական գիտնականների), այլև ունի ավելի բնորոշ անուն՝ էնեոլիթ (ըստ իտալական հնագետների) կամ խալկոլիթ (ըստ անգլիական հնագետների), որ թարգմանվում է պղնձեքարյա:

Պղնձե դարը կամ էնեոլիթը նախապատմական շրջանում այնքան էլ երկարատև չի եղել։ Այն դարձել է իսկապես մի փոխանցիկ շրջան քարե դարից դեպի բրոնզե դարը, որ հանդիսանում է որոշակի ու հնագույն պատմական դարաշրջանների բնորոշ, քարե դարերին հաջորդող ու երկաթե դարերին նախորդող կուլտուրան։ Պղնձե դարի սահմանները խիստ դժվար է դնել քարե ու բրոնզե դարերից։ Ուստի շատ հնագետներ տրամադիր են այդ դարը միացնել բրոնզե դարին, իբրև նրա սկզբնական շրջանը։

Բրոնզը գոյանում է պղնձին մի փոքր տոկոս (5%—10%) անագ խառնելով, որով ստացվում է ավելի կարծր և դիմացկուն մետաղ։ Մինչդեռ մաքուր պղինձն իր փափկության պատճառով շատ անհարմար էր գործիքներ ու զենքեր շինելու համար, որոնք գործածության ժամանակ չէին դիմանում կարծր առարկաների հարվածներին, ընդհակառակն, բրոնզից շինված գործիքներն ու զենքերը համեմատաբար ավելի նպատակահարմար գործածելի, ավելի դիմացկուն և ավելի հաստ էին լինում[1]։

Մարդկային կուլտուրայի բրոնզե դարաշրջանը, կամ, ինչպես այլ կերպ կոչվում է՝ պալեոմետալը (հնամետաղը), տևել է մոտավորապես 5000-րդ տարուց մինչև 1000-րդ տարին մեր թվականությունից առաջ[2]։ Ամենահին բրոնզե առարկաները, որոնք մեզ հայտնի են Արևելքից ու Միջերկրածովյան շրջանից և որոնց հնության հասակը հաստատապես կարելի է սահմանել, հայտաբերվել են Միջերկրածովյան շրջանում և ծագում են 3-րդ հազարամյակի (մեր թվական. առաջ) կեսերից։ Այդ իրերից մեկը մեր թվականությունից մոտավորապես 1500 տարի առաջ ապրած Պեպի թագավորի բրոնզե արձանն է, իսկ մյուսը նույն ժամանակաշրջանին պատկանող դաշույն է, որ գտնվել է Կրետե կղզում (RL. II, 184):

Համենայն դեպս բրոնզեդարյան կուլտուրայի ժամանակամիջոցը ճիշտ որոշելու համար եղած տվյալները դեռևս կարոտ են հետագա ուսումնասիրությունների և առայժմ բավարար հիմք չեն տալիս վերջնական եզրակացություններ անելու։

Ահա այդ բրոնզե դարի կուլտուրան մեծ չափերով տարածված է եղել Հայկական լեռնաշխարհում, ինչպես ապացուցում են մի կողմից՝ հնագիտական պեղումները, իսկ մյուս կողմից՝ տակավին հնագիտական պեղումների չենթարկված, բայց գետնի խորքերում թաղված հնությունների բազմաթիվ հետքերը։

Երբ և որտեղ է ծագել բրոնզե կուլտուրան և ինչ հանգամանքներում է նա երևացել նախապատմական Հայաստանում։ Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է որոշել, թե նախապատմական անցյալում որտեղ գոյություն ունեին և ինչպես էին շահագործվում պղնձի ու անագի հանքերը։

Մետաղագործության արվեստի սկզբնավորությունը, լինի այդ պղնձի, անագի և կամ երկաթի, խիստ բարդ հարց է, որը շատ է ծեծվել հնագիտության և կուլտուրայի պատմության մեջ և տակավին մնում է անորոշ։ Մինչդեռ այս հարցի լուծումը կարևոր նշանակություն ունի, քանի որ հենց դրանով հնարավոր կլինի պարզել նյութական կուլտուրայի այն շրջանը, երբ սկսվում է մետաղե իրերի արտադրությունը, մի մոմենտ, որով բնորոշվում են ընդհանրապես կուլտուրայի զարգացման աստիճանները։

## II

## ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՆՔԵՐ

Մետաղներից բնածին կտորներով հանդիպում են ոսկին, երբեմն էլ պղինձն ու արծաթը։ Վերջին երկու մետաղները հին դարերի աշխարհում առանձին բնական հատակտորներով հայտաբերվում էին բացառիկ դեպքերում։ Ընդհանրապես պղինձը, արծաթը, կապարը բնության մեջ գտնվում են ծծմբային միացություններով՝ թե հանքային երակներում և թե հանքային շերտերում։ Մթնոլորտի ազդեցության տակ, այդ հանքերը երակների արտաքին մասերում կորցնում են իրենց բաղադրիչ ծծումբը, և նրանց մետաղային տարրերն օքսիդանում են։ Ահա այս երկրորդվող (вторичный) հանքերն էին մշակվում նախնական մետաղագործների ձեռքով։ Հնադարյան հանքագործներն օգտագործում էին լեռներում երևացող հանքերի արտաքին ելքերը, քարային տեսակների խավերից հավաքելով թափթփված առանձին կտորները, երբեմն նաև այդ երակների ուղղությամբ թափանցելով դեպի երկրի խորքերը։ Վերջին պարագան միանգամայն հավանական է, քանի որ տակավին նեոլիթյան ժամանակները, ինչ-

պես գիտենք, հանքափորներն արդեն տիրապետում էին երկրի խորքերը թափանցելու արվեստին — նրանք երկրի խորքում գտնվող կավճային շերտերից հանում էին կրաքար և այլ տեսակի քարեր և դրանցից պատրաստում էին զենքեր, գործիքներ և այլ կենցաղային իրեր։

Ինչ վերաբերում է երկաթին, ապա սրա բնածին կտորները հանդիպում են մետեորիտների ձևով։ Իսկ մետեորիտները խիստ հազվադեպ են գտնվում և սրանց մետաղային զանգվածը մեծ դժվարությամբ է տրոհվում առանձին կտորների, չափազանց բարձր ջերմություն է պահանջվում հալեցման համար, որովհետև մետեորիտների մեջ սովորաբար պարունակվում է նաև նիկել՝ դժվարահալ մի մետաղ։ Սակայն երկաթի տեղածին հանքերն ավելի շատ և հարուստ են պղնձի համեմատությամբ։ Նրանք միշտ հանդիպում են օքսիդացած մետաղի վիճակում։ Ուրեմն երկաթի ձեռք բերումը բնության մեջ մարդուն մատչելի էր ավելի պղինձը հայտաբերելուց և մշակելուց առաջ։ Հավանորեն երկաթի մշակման (հալելու և դարբնելու) հետ կապված դժվարին, գրեթե անհաղթահարելի պայմաններն են եղել պատճառը, որ մետաղագործության առաջին փորձերի ժամանակ հնադարյան մարդը հնարավորություն չի ունեցել երկար ժամանակների ընթացքում շահագործելու երկաթահանքերը։ Միայն հետագայում, երբ հնադարյան մարդը մետաղագործական փորձառություն ձեռք բերեց պղնձի մշակման արվեստի մեջ, հնարավորություն ստացավ դիմելու նաև երկաթի մշակմանը։

Եգիպտական ու բաբելական արխայիկ դամբաններում երևան հանված երկաթը (թեև քիչ քանակությամբ) հիմք է տալիս այդպես կարծելու։ Հենց այդ մշակման դժվարություններն էին, որ երկաթը մի քանի երկրներում որոշ ժամանակ, նույնիսկ բրոնզեդարյան շրջանում, համարվում էր թանկագին մետաղ և գործ էր ածվում միայն թանկարժեք ու հազվագյուտ զարդարանքների համար։

Անագը հանքային երակների մեջ գտնվում է միշտ երկթթվուտի (բիօքսիդ) վիճակում։ Անագը հանդիպում է նաև որպես ճահիճային ավազ. երբ անագ պարունակող ապառաժները մթնոլորտի ազդեցության տակ փշրվում, վեր են ածվում ավազի, այդ մետաղի մանրիկ հատիկները մնում են ավազի մեջ։ Բավական է լվանալ ու ջրի միջոցով քամել ավազը, որպեսզի երևան գան անագի փայլուն հատիկները, ճիշտ այնպես, ինչպես այդ արվում է ոսկի ստանալու համար (JMPO, III, 167—168)։



Հետևաբար՝ նախնադարյան մարդու համար միշտ էլ ավելի դյուրին է եղել ձեռք բերել ոսկի և անագ, սակայն այդ երկու մետաղները, շնորհիվ իրենց ոսկեփայլության ու փափկության, չունեին այն անհրաժեշտ հատկությունները, որոնք խթան դառնային նրանցով փոխարինելու քարե զենքերն ու գործիքները։

Նախապատմական շրջանից մեզ հայտնի բոլոր մետաղներից միայն պղինձն էր, որ շնորհիվ իր որակական հատկությունների՝ սկսեց աստիճանաբար հետզհետե դուրս մղել քարե գործիքներն ու զենքերը, որոնք ի վերջո իսպառ տեղի տվին մետաղի ինդուստրիային։

Պղնձի հարուստ հանքեր գոյություն են ունեցել ու շահագործվել են Փոքր Ասիայում, Իրանի սարահարթում, Կովկասում, Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում, նաև՝ Եվրոպայի հարավ-արևմտյան մասերում, ինչպես՝ Իսպանիայում, Ավստրիայում, այն է՝ Զալցբուրգի մասերը, Կելխայտում, Տիրոլում և այլն։

Մեր այս ուսումնասիրության համար, ի հարկե, կարևոր նշանակություն են ստանում Առաջավոր Ասիայի և սրան հյուսիսից սահմանակից Անդրկովկասի պղնձահանքերի հարստությունները։

Անդրկովկասում պղնձի մշակման երեք գլխավոր կետերն են՝ Լոռին (Լալվարի սարը), Գանձակի գավառը (Գեդաբեկ ու Ղալաքենդ) և Զանգեզուրը (Ղաթարի և այլ բազմաթիվ հանքերը)։ Այնուհետև սրանց հետևում են Նոր Բայազետի գավառը (Մեխմանա, Գեղարքունիք), Դարալագյազի գավառը, Դիլիջանի գավառը և այլն։

Առաջավոր Ասիայում պղնձահանքեր հանդիպում են նրա հյուսիսային մարզերում, գլխավորապես Հայկական լեռնաշխարհում։ Այստեղ հայտնի են Վասպուրականը (Վանի վիլայեթը), Մոքսը, Խարբերդը (Դայան-Մադեն), Սվազը, Արգանին (Արղնի-Մադեն), Սպերը, Դիարբեքիրը և այլն։

Վերոհիշյալ բոլոր հանքերը շահագործվում էին տակավին խոր հնում։ Լոռու և Դարալագյազի երբեմնի հանքավայրերի վայրերում թողած բազմաթիվ հետքերը վկայում են, որ՝ հնադարյան հանքագործներն այնտեղ էքստենսիվ աշխատանք են տարել։ Բազմաթիվ ավերված հանքահորերը, նախնական պրիմիտիվ տիպի հալոցքային վառարանների մնացորդներն ու սրանց մոտ թափթփված պղնձի ու երկաթի խարամները (ШЛАКИ) երկարաձիգ շարաններով հանդիպում են այժմ կուսական դարձած անտառնե-

րում, անմատչելի սարալանջերում, ձորձորներում։ Հնագույն շրջանի հանքագործության մասին վկայում են նաև մի քանի, թեև սուղ, պատմական տեղեկություններ։ Հին սեպագիր հուշարձանները հիշատակում են Ալզե երկիրը (հետագայում պատմական Հայաստանի Աղձնիքը), որպես «մետաղների երկիր», որտեղ մշակվում էր գլխավորապես պղինձ։ Այդ երևում է նաև Ալզեի թագավորի նամակից, ուղղված Ասորեստանի թագավորին. «Այժմ, իմ տեր արքա, ինչ նվեր ուղարկեմ ես 500 տաղանդ պղինձ... Թեպետ այս շատ քիչ է, բայց թող քո սիրտը չվրդովվի, որովհետև Ներգալի (մահվան աստված) ձեռքն իմ երկրում սպանեց բոլոր աշխատավորներին և այդ պատճառով էլ պղինձ չի կարող հանվել»[3]։

Հետագա դարերում Ասորեստանի արձանագրությունները թալանած ավարների ցուցակների մեջ հիշատակում են այս երկրի հարուստ լինելը մետաղներով, նմանապես Հայկական լեռնաշխարհի և այլ մարզերի մասին, որոնք միանգամայն համապատասխանում են վերը մեր թված հանքատեղերին։ Հին, պատմական Հայաստանը ասորա-բաբելական արշավանքների ու խալդական պատերազմների ժամանակ ավար էր տալիս մեծաքանակ պղնձամետաղ և պղնձե անոթներ։

Բացի այդ՝ հայ հին պատմագիրներն էլ հիշատակում են պղնձի երևելի արտադրության մասին. Ղազար Փարպեցին գրում է, թե Արարատյան երկրում հանվում էր պղինձ։ Հին Հայաստանի մետաղահանքերի մասին խոսում են Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Ղևոնդ ու Մովսես Կաղանկատվացի հայ պատմագիրները, նաև Յակուտը և Իբն-ալ-Ֆակիհը արաբական մատենագիրները։

## III

## ԱՆԱԳԻ ՀԱՆՔԵՐԸ ԵՎ ԲՐՈՆԶԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Զարմանալի դժվար է որոշել բրոնզի համար այնքան անհրաժեշտ անագի հանքերի գոյության ու շահագործման հարցը, երբ ժամանակի տեսակետից այդ կապում ենք պղնձահանքերի հետ։ Մանավանդ կարևորություն է ստանում այդ հարցը, եթե նկատի առնենք, որ անագի հանքերն ընդհանրապես սակավաթիվ են, և մասնավորապես Անդրկովկասի ու Առաջավոր Ասիայի վերաբերյամբ մի քանի գիտնականներ, ինչպես օրինակ՝ Ժ. Մորգանը, ժխտում են անագի հանքերի գոյությունը։



Պղնձի ու անագի հանքերը միասին առատորեն հանդիպում են Արևելյան Ասիայում, գլխավորապես Չինաստանում և Հնդկաչինում։ Ուստի շատ գիտնականների կարծիքով՝ բրոնզի ծագման կենտրոնը պետք է համարել այդ երկրները, որտեղից անագը մեր երկրներն էր գալիս հին առևտրական ճանապարհներով և այն ուղիներով, որոնցով կատարվում էին հին քոչվորական արշավանքները։ Սակայն այդ ուղղությամբ եղած գիտական հետազոտությունները տակավին թերի են, ուստի հնարավոր չէ առանց վերապահումների ընդունել բրոնզի ծագման մասին հայտնված այդ տեսակետը։

Չնայած որ ժխտվում է անագի հանքերի գոյությունը Փոքր ու Առաջավոր Ասիայի նկատմամբ, այնուամենայնիվ կան թե պատմական ու թե նորագույն, մեզ ժամանակակից տվյալներ այդ մետաղի հանքերի գոյության մասին վերոհիշյալ երկրներում։ Տիրող բացասական կարծիքները պետք է վերագրել նրան, որ անագի ներկա արտադրության վերաբերյալ հանքաբանական հետախուզումները քիչ են և ծավալով փոքր։ Մինչդեռ կան պատմական տեղեկություններ՝ Փոքր Ասիայում, օրինակ՝ Սինոպի և Կաստամոնիայի շրջակայքում հնում մշակվել են անագի հանքեր։ Ավելի շատ տեղեկություններ կան Առաջավոր Ասիայի նկատմամբ։ Դեռևս հին հույն պատմագիր Ստրաբոնը գրում էր, թե Դրանգիանայում (այժմյան Խորասանը — Պարսկաստանում) եղել են անագի հանքեր (Strabo, գիրք XV, գլ. II, § 19)։ Ստրաբոնի հաղորդած այդ տեղեկության ճշտությունը վերջին ժամանակները հաստատվել է անագի հանքերի հայտաբերված հետքերով։

Հավանորեն անագի արտադրությունը գոյություն է ունեցել հնագույն Ալզե երկրում (Հայաստանի պատմական Աղձնիքը), որի մասին արդեն առիթ ունեցանք վերը նշելու, իբրև «մետաղների երկիր»[4]։ Այս երկրում զարգացած էր, ըստ երևույթին, բրոնզի արտադրությունը, որովհետև Ալզեի թագավորը, համաձայն սեպագիր վկայության, իրեն էր վերապահել բրոնզի մենավաճառը և այդ մետաղի համար նշանակել էր հատուկ սակագին։ Բացի այդ՝ Ալզեի թագավորը արգելք էր դրել, որ իր պետության սահմաններից ոչ մի մետաղագործ-արհեստավոր կամ բանվոր չկարողանա հեռանալ ու հաստատվել որևէ այլ երկրում[5]։ Այս տեղեկությունը վկայում է, որ այդ երկիրն իր բրոնզե մետաղագործությամբ առանձնահատուկ տեղ էր գրավում հարևան երկրների շարքում։

Արդի մի քանի հետազոտությունները վկայում են, որ անագի հանքեր կան Հայկական լեռնաշխարհում: Ըստ Widal Cuinet-ի ուսումնասիրության («Turque d'Asie»)՝ անագի հանքեր են նկատվում Տիլլիում, Բրուսայի, Վանի և Երզրումի վիլայեթներում: Ֆելիքս Օսվալդն անագի հանքերի նշաններ է գտել Դերսիմի շրջանում, Դանջիքիրասա և Կուզըբալա լեռների միջև ընկած տարածության վրա[2]: Դուրալագյոզի արդեն հին պատմական ժամանակներից հայտնի արծաթ-կապարի հանքերում հայտնաբերվել են տակավին ոչ լրիվ հանքաբանական հետախուզությամբ՝ անագի առայժմ ոչ այնքան հարուստ հանքերի նշաններ: Նորագույն հանքաբանական հետախուզումները Սովետական Հայաստանում հայտնաբերել են, որ Ախթալայի և Շամլուղի (Լոռու շրջան) պղնձահանքերը հարուստ են ոսկով, արծաթով ու անագով («Խորհրդային Հայաստան», 1933 թ., № 280): Այս փաստը խիստ արժեքավոր է բրոնզի ծագման ու արտադրության հարցը լուսաբանելու տեսակետից[3]:

Վերը բերված փաստերը գալիս են որոշ չափով հերքելու այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Առաջավոր Ասիայում չեն եղել անագի հանքեր: Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ անագի հանքերի նշաններ կան Առաջավոր Ասիայի և մանավանդ Հայկական լեռնաշխարհի հենց այն վայրերում, ուր միատեղ գոյություն ունեն հարուստ պղնձահանքեր, մի կարևոր հանգամանք, որ գրավական է բրոնզի ինքնուրույն զարգացման: Թերևս նաև հիմք է տալիս բրոնզի ծագման սկզբնական հայրենիքը տեսնել վերոհիշյալ երկրներում: Այս պարագան ավելի ևս հաստատվում է նրանով, որ վերջին տարիները Լենինականում և Երևանի շրջանում հայտնաբերվեցին բրոնզե տապար ձուլելու քարե կաղապարներ:

Հնագիտական տվյալներից պարզորոշ հետևում է, որ պղնձահանքերի շահագործումը Փոքր ու Առաջավոր Ասիայում շատ ավելի վաղ է սկսվել, քան Եվրոպայում: Իսկ երբ քննության ենք առնում պատմական, հնագիտական ու երկրաբանական տվյալները, գալիս ենք այն եզրակացության, որ մետաղի առաջին մշակումը տեղի է ունեցել Առաջավոր Ասիայի հյուսիսային մասերում, թերևս Հայկական լեռնաշխարհում: Այստեղից մետաղագործությունը տարածվել է դեպի հարավ՝ Միջագետք գաղթող բնակչության հետ միասին, երբ այդ երկիրը, ազատվելով իրեն ծածկող լայնատարած ջրերից, դարձավ բնակելի և որտեղ հետա-



գայում գոյացան Բաբելաստանն ու Ասորեստանը, որոնք և մեծ չափով զարգացրին ու ծաղկեցրին մետաղագործությունը: Մեր թվականությունից մոտավորապես 4000 տ. առաջ պղինձ-մետաղն արդեն հայտնի էր ու գործ էր ածվում Էլամում և Եփրատ-Տիգրիս գետերից դեպի հարավ ընկած երկրներում (RL. II, 181): Հնագույն քաղաքների տեղերում, օրինակ Լագաշում, կատարված պեղումները հայտնաբերել են զուտ պղնձից պատրաստված արձանիկներ, որոնք կրում են Գուդեա թագավորի անունը, նաև պղնձե այլ իրեր, որոնք ժամանակակից են այդ արձանիկներին: Գուդեա թագավորն ապրել է մեր թվականությունից մոտ 40 դար առաջ: Ուր և Երեխ քաղաքավայրերի դամբանները, որոնցից հնագույնները հասնում են 25-րդ դարին մեր թվ. առաջ, կրում են արդեն միանգամայն զարգացած բրոնզե դարերի համար բնորոշ հատկանիշներ:

Միջագետքից մետաղագործությունը ծավալվեց դեպի Եգիպտոս մոտավորապես 4000 տարի մեր թվ. առաջ, ուր բրոնզի գործածությունը իր ծաղկման հասավ 20-րդ դարում (մեր թվ. ա.): Այստեղից մետաղագործությունն անցավ Փյունիկյան ծովեզերքն ու Էգեյան կղզիները, ուր բրոնզի արվեստը բարձր ծաղկման հասավ, սկսած 20-րդ դարից մինչև 12-րդ դարը (մեր թվ. ա.): Այդ կղզիներն իրենց հերթին դարձան այն կենտրոնը, որտեղից մետաղագործությունը տարածվեց Եվրոպայում: Եթե մետաղագործությունն Էգեյան կղզիներից ծավալվեց դեպի Եվրոպայի արևմտյան մասերը, ապա նույն Եվրոպայի հարավ-արևելյան մասերը կարող էին մետաղագործության արվեստը թերևս ավելի վաղ ստանալ այն ճանապարհով, որով ընթանում էին հնագույն, տակավին քարեդարյան կուլտուրայի ազդեցություններն այստեղ, այն է՝ Փոքր-Ասիական սարահարթի, Հայկական լեռնաշխարհի ու Կովկասյան լեռնանցքների վրայով, որոնք այնքան հարուստ էին պղնձահանքերով:

Համենայն դեպս, ուր էլ որ ծայր առած լինի մետաղագործությունը, նա սկսվել էր պղնձի մշակմամբ, որին արդեն հաջորդել էր բրոնզի գործածությունը:

Շատ ճիշտ է նկատում անգլիացի հանքագետ Տ. Ռիքարդը, որ բրոնզն սկսել էին պատրաստել շատ առաջ, քան հայտնի էր ձուլել անագը: Հնադարյան մետաղագործն առաջին բրոնզն ստացել էր առանց պղինձը մետաղյա անագի հետ հալելու, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, ինքնածին անագ չի գտնվում, իսկ

մետաղը անագը շատ հազվագյուտ է բնության մեջ։ Տ. Ռիքարդի կարծիքով՝ հնագույն մետաղագործությունը ծագել է խարույկի կրակի մոտ, որովհետև այժմ էլ հնումներում, ավստրալիաբնիկ ժողովուրդները սովորություն ունեն իրենց կրակարանը շրջափակել քարերով։ Եթե պատահականորեն հարուստ վայրում կրակարանի այդ քարերից որևէ մեկը պարունակեր պղինձ՝ թթվածնային կամ ածխածնային միացությունների ձևով, ապա խարույկի բարձր ջերմաստիճանի ջերմության ազդեցությամբ հանքաքարից կարտահոսեր հալված պղինձը։ Սակայն հնագույն մետաղագործը սովորեց կապակցել հատուկ տեսակի այդ պղնձի առաջացումը նրա հանքաքարի մեջ մանրիկ բծերով նկատելի դեղնավուն կամ գորշ-կարմրավուն հանքի պարունակության հետ (այսպես կոչված անագային քարը կամ կասիտերիտը, $SnO_2$)։ Այդ դեղնավուն ու գորշ կարմրավուն հողը նա ավելացնում էր իր ձեռքի տակ ունեցած կանաչագույն կամ կապտագույն պղնձաքարին և դիպվածորեն կարող էր հալել այդ մեկ գույն ունեցող քարն առանձին ու տեսնել, թե ինչ տեսակ պղինձ կստացվի։ Այս դեպքում նա կհամոզվեր, որ ստացվում է միանգամայն այլ տեսակի, պղնձից տարբեր մի մետաղ, որն օժտված է ավելի բարձր, գործնական հատկանիշներով։ Այդ եղանակով կարող էր ստացվել առաջին բրոնզը, առանց ծանոթ լինելու անագային մետաղի հետ։

Բրոնզի ինդուստրիան սկզբնական շրջանում նմանողությամբ հետևում էր նեոլիթյան նյութական կուլտուրային, ընդօրինակում տեղական տիրող կենցաղային տիպերը։ Ուստի, ինչպես որ նեոլիթի ինդուստրիան զարգացել էր որոշ վայրերում ու ստացել այդ երկրներին ու ժամանակներին համապատասխան բնորոշ ձևեր, այնպես էլ բրոնզի ինդուստրիան, զբաղեցնելով նույն կուլտուրական կենտրոնները, ենթարկվում էր տեղական կուլտուրայի պայմաններին և կաղապարվում նրանց բնույթով։

Հիրավի, բրոնզեդարյան կուլտուրան ծագում և զարգանում է այն երկրներում, որտեղ սկսվում է պատմությունը, այն է՝ Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում, Միջերկրածովյան ավազանում, Միջին Ասիայում, գլխավորապես Չինաստանում և Հնդկաստանում, մարդկային հնագույն քաղաքակրթության այդ օրրաններում։ Այդ երկրներում էր, որ բրոնզի ինդուստրիայի հետ միասին սկիզբ առան գրերը, որոնք տակավին առաջ ծնվում ու Բաբելոնում արդեն բրոնզե զարդի հետ միասին այդ երկրները



դարձրին պատմության մասնակից և այսօր հազարավոր տարիների փոշու միջից մեզ բարբառում են մարդկային գործերի, ժողովուրդների գոյամարտերի մասին։

Մետաղը դարձավ այն հզոր ուժը, որ հեղափոխեց մարդկային պատմությունը, հիմնովին կատարելագործեց արտադրության միջոցները, հուժկու թափ հաղորդեց հասարակական ձևերի զարգացմանը, խոր ակոսներ փորեց սոցիալական շերտավորումների մեջ։ Մի կողմից՝ մետաղե գործիքները բարձրացնում էին մարդկային աշխատանքի արտադրողականությունը, զարգացնում տնտեսական կուլտուրան, ավելացնում նյութական բարիքները, որոնց վրա կառուցվում էր մտավոր ու հոգևոր առաջադիմությունը, իսկ մյուս կողմից՝ անդադար հնչում էր մետաղե զենքերի շառաչը, որով նորելուկ տիրապետող դասակարգերը յուրացնում էին բռնության ու ճնշման միջոցները, հափշտակում էին նվաճած բազմահազար մարդկանց աշխատանքի արդյունքները, նետում էին ժողովրդական մասսաները ստրկության և ճորտության դաժան լծի տակ և զարգացնում անխնա շահագործումը։

## IV

## ԵՐԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե բրոնզի ինդուստրիան հսկայական հեղաշրջում առաջացրեց արևելյան աշխարհի արտադրական եղանակներում, դուրս հանելով մարդկային մասսաները նախնական ցեղային-տոհմային կենցաղից և դնելով դասակարգային շերտավորման առաջին հիմքերը, ապա հաջորդ՝ երկաթի ինդուստրիան, որ արդյունք էր մետաղագործության հետագա կատարելագործման և արտադրական եղանակների զարգացման, ավելի ևս խորացրեց այդ հեղաշրջումը մարդկության սոցիալ-տնտեսական կյանքում։ Երկաթի դարը երևան է գալիս արդեն մարդկային պատմական կյանքի արշալույսին։ Եգիպտոսում և Ասորա-Բաբելաստանում այն երևում է այդ երկրների ժողովուրդների պատմական կյանքի առաջին շրջանում։ Առաջավոր և Փոքր Ասիայի, Կովկասի, նմանապես Եվրոպայի մի շարք ժողովուրդների մեջ երկաթի ինդուստրիան սկիզբ է առնում նրանց նախապատմական կյանքի վերջին շրջանում, թեև այդ նախապատմական կյանքն իր ժամանակագրությամբ ավելի նորին, ավելի ուշ տևողություն է ունեցել Եգիպտոսի ու Ասորա-Բաբելաստանի պատմական շրջանի սկզբնավորության համեմատությամբ։

Ինչպես է ծանոթացել մարդը երկաթին։ Առաջին երկաթը, որ ընկել էր մարդու ձեռքը, մետեորիտային էր։ Այդ տեսակ երկաթը հազվագյուտ էր և, պարունակելով որոշ տոկոս նիկել, շատ դժվար էր ենթարկվում մշակման։ Ուստի այդպիսի երկաթը մեծ մասամբ գործադրվում էր զարդարանքների համար։ Իսկ հանքային երկաթը հնագույն մարդը հայտնաբերել է, ամենայն հավանականությամբ, նույնպես դիպվածաբար և նույնպիսի հանգամանքներում, ինչպես և պղինձն ու բրոնզը։ Անշուշտ, ինչպես ճիշտ նկատում է հնագետ Դեշելետը («Manuel d'archéologie», II, 1910 թ., էջ 541) հնագույն մետաղագործը, զբաղվելով պղնձի ու բրոնզի տեխնիկական պատրաստությամբ, հանքաքարերից դիպվածաբար կարող էր ստանալ նաև երկաթի կտորներ, որոնք հետագայում արդեն կարող էին ենթարկվել մշակման։ Նույն կարծիքը հայտնում է Տայլորը իր «Anthropologie» աշխատության մեջ, թե մարդն առաջին անգամ ծանոթացել է երկաթին, հայտաբերելով նրա կտորներն իր կրակարանի խարույկում, անտառային հրդեհների վայրերում, կայծակի խփած տեղերում։ Տ. Ռիքարդը երկաթի գյուտի մասին նույն կարծիքն է հայտնում, ինչ որ ասել է պղնձի ու բրոնզի վերաբերմամբ։ Հնարավոր բան է, գրում է նա, որ հնագույն մարդու կրակի ջերմությունը, ուժեղ քամու շնորհիվ ուժեղ բորբոքվելով, երբեմն կարող էր երկաթի մետաղը վերականգնել օջախը շրջապատող քարերից, եթե վերջինները պարունակում էին երկաթի օքսիդ ($Fe_2O_3$ երկաթի փայլ, կարմիր երկաթահանք)։ Սակայն նույնքան էլ հավանական է, որ պղնձի հանքաքարը հալելիս՝ հնագույն մետաղագործը կարող էր միանգամայն դիպվածաբար ստանալ մաքուր հեմատիտի՝ երկաթի փայլի կտոր։ Ուժեղ կրակի ազդեցության միջոցով երկաթ-մետաղի հայտնաբերումը վերջիվերջո գրավելու էր մետաղագործի ուշադրությունը. նա հնարավոր կկրկներ այդ գործողությունը, մինչև որ գտներ երկաթ-մետաղ ստանալու գաղտնիքը՝ երկաթի վերականգնումն ածխածնի օքսիդի ազդեցությամբ՝ բարձր աստիճանի ջերմության միջոցով։

Եգիպտական գրավոր հուշարձանները հանքային երկաթի մասին առաջին անգամ հիշատակում են XIII դարում (մեր թվ. ա.), մինչդեռ հնագիտական պեղումները երկաթի ինդուստրիայի հետքեր, բացառապես զարդարանքի ձևերով, Եգիպտոսում հայտաբերել են երրորդ հազարամյակին հարող շրջանում։ Սակայն երկաթե դարը, երբ լիակատար երկաթի ինդուստրիա, սկսում



է ծաղկել Եգիպտոսում, ինչպես ապացուցում են հնագիտական հետախուզումները, միայն XIV դարից (մեր թվ. ա.)[10]։ Նույն պատկերն է տալիս հնագիտությունը Ասորա-Բաբելաստանի երկաթի դարի մասին, որն այդ երկրում իր զարգացմանն էր հասել XII դարում (մեր թվ. առաջ)[11]։

Եգիպտոսում, որ տարածվում էր Նեղոսի հովտում, և Ասորա-Բաբելաստանում, որ ընկած էր Միջագետքի դաշտավայրում, երկաթի հանքեր գոյություն չեն ունեցել։ Երկաթը, անտարակույս, ներմուծվում էր այդ երկրները կամ Աֆրիկայի հյուսիսից, այն է՝ Եթովպիայից, և, որ ավելի հավանական է, Առաջավոր Ասիայի հյուսիսից կամ Փոքր Ասիայից, մանավանդ, X—VIII դարերում (մեր թվ. ա.), երբ եգիպտական և ասոր-բաբելական աշխարհակալների արշավանքները ծավալվում էին դեպի հյուսիս։ Եգիպտոսը երկաթը ներմուծում էր Առաջավոր կամ Փոքր Ասիայից, այդ մասին վկայում են հաթական հուշարձանները։ Հաթական թագավորներից մեկը (հավանաբար Խաթուշիլի թոռը՝ Առնուանդա, որ թագավորել է մոտավոր հաշվով 1260—1200 թ. թ. մեր թվ. ա.) իր մի նամակում, որ ուղղված է եգիպտական փարավոնին (ենթադրաբար՝ Մերնեպտահին), ցավակցություն է հայտնում, թե անկարող է եղել իր բարեկամ՝ Եգիպտոսի թագավորի խնդիրքը կատարել, այն է՝ մաքուր երկաթ ուղարկել Կիզվադնայից[12], բայց թե ինքը միջոցներ կձեռնարկի այդ մետաղը պատրաստելու և նրան ուղարկելու (EMGA, II, 529)։

Համենայն դեպս երկաթի հայտաբերման ու առաջին մշակման հայրենիքը չեն հանդիսացել ոչ Նեղոսի, ոչ էլ Եփրատի հովիտները։ Ինչպես ենթադրում են Ժ. Մորգանը, Տ. Ռիքարդը և մի շարք այլ հնագետներ ու հանքագետներ, երկաթի, ինչպես և մյուս մետաղագործության նախնական օրրանը ամենայն հավանականությամբ, եղել է Սև և Կասպից ծովերի միջև տարածվող լեռնաշխարհը՝ Կովկասը։ Մի ամբողջ շարք հնագույն ժողովուրդներ՝ դակտիլները, խալիբները, փռյուգացիները, հաթերը՝ կապվում են հնագույն մետաղի կուլտուրայի պատմության օջախները։ Ասորեստանը մետաղագործության արվեստը Հայկական լեռնաշխարհի վրայով ստացել է Կովկասից, հաթերը երկաթն իրենց հետ բերել են Սիրիա, իսկ փղշտացիները՝ Պաղեստին։ Պաղեստինում 1927 թ. կատարված հնագիտական պեղումներով՝ Գերարում հայտաբերվել են երկաթաձուլական հնոցներ, որոնք վերաբերում

են մոտավորապես 1200 թ. մեր թվականությունից առաջ։ Հետևապես՝ երկաթի հալման գյուտն ավելի հնագույն երևույթ է նյութական կուլտուրայի պատմության մեջ։

Դալրոլ Հայկական լեռնաշխարհին, որը մինչ էլ հարուստ է եղել երկաթի հանքերով, դժվար է որոշել երկաթի մշակման սկզբնավորության ժամանակը, քանի որ հնագիտական հետախուզումները այդ ուղղությամբ չափազանց թերի են[13]։ Պատմական այսօր ավանդությունները, սակայն, ցույց են տալիս, որ X—VI դարերում (մեր թվ. ա.) Առաջավոր Ասիայի հյուսիսում և Փոքր Ասիայում մասամբ, մասնավորապես երկաթի ինդուստրիան առաջին հռչակ էր վայելում հին աշխարհի ժողովուրդների մեջ։ Ասուր-բաբելական արձանագրությունները գնալի Նաիրիի երկրները կատարած իրենց հաճախակի արշավանքների ընթացքում ավար էին վերցնում երկաթի առատ պաշարներ։ Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (722—705 թ. մեր թվ. ա.) պալատը անցյալ դարում պեղելիս նրա մի հատուկ և ընդարձակ պահեստում գտան 160.000 կիլոգրամ երկաթ, որ բաղկացած էր առանձին ձույլերից և գյուղատնտեսական ու զորքինական գործիքներից։ Անշուշտ, պահեստի այդ ահագին պաշարը որպես ավար ձեռք էր բերված Ուրարտուի վրա կատարված արշավանքի ժամանակ։ Հին հունական պատմագիրները, թեև բավական ուշ ժամանակի (մոտ VI դարի մեր թվ. ա.), հիմնվելով ավելի հին աղբյուրների, ավանդությունների և իրենց ժամանակակիցների վկայությունների վրա, վկայում են թե Եվքսինյան պոնտի (Սև ծովի) հարավ-արևելյան երկրներում, ուրեմն Առաջավոր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում, ապրում էր խալիբ (χάλυβες) անունով մի ժողովուրդ, որը հռչակված էր իբրև վարժ ու փորձված երկաթագործ ցեղ։ Այդ ցեղական հատուկ անունը հին պատմական հույների մեջ դարձել էր անվանական բառ՝ «խալիբս», որով նրանք անվանում էին պողպատը, մշակված երկաթի այդ ամենաբարձր տեսակն ու ամենադժվար դարբնումի արդյունքը[14]։

Մյուս կողմից՝ պետք է շեշտել և այն պատմական փաստը, որ խալդերը (ուրարտացիները), հաթական ցեղի վերաբնակումից գոյացած այդ ժողովուրդը, մեծ չափերով զարգացրել էին մետաղագործությունը (պղնձի, բրոնզի և հատկապես երկաթի), ինչպես այդ ակներև է Վանի կուլտուրայի հնագիտական մնացուկներից, որոնք իրենց զարգացման բարձր աստիճանին էին հասել IX—VIII դարերում (մեր թվ. ա.)։ Ընդհանրապես, երկաթի



զարգացած ինդուստրիան չէր կարող գոյանալ հանկարծակի ու ինքնածին կերպով։ Այդ ինդուստրիան երկար ու ձիգ դարերի և նախորդ արվեստի աստիճանական զարգացման հետևանք էր, որ անխնդիրական իր բարձր ծաղկման էր հասել խալդերի, այդ նախահայերի մեջ։ Այդ արվեստը ժառանգություն էր մնացել հաթերից, որոնք տակավին 2000 տարի մեր թվականությունից առաջ վարժ ու կատարելագործված էին պղնձի ու բրոնզի մշակման արվեստում։

Ուրեմն վերը բերված բոլոր ավյալների համաձայն՝ հին քաղաքակիրթ աշխարհին արդեն XII դարում (մեր թվ. ա.) ծանոթ էր երկաթին, իսկ X դարում (մեր թվ. ա.) նա ամուր տեղ էր գրավել այդ ինդուստրիայում. վերջինս սկսել էր դուրս մղել բրոնզի մշակումը, որի մնացուկները հազ ու կտոր, ցանցառ օրինակներով պահպանվում էին հնաշրջվող նոր կենցաղում[15]։

Երկաթի ինդուստրիայի ծագումը, զարգացումը և ծավալումը նույն պատկերն են ներկայացնում, ինչ որ պղնձի ու բրոնզի տեխնիկան։ Ինչպես որ նեոլիթյան կուլտուրայի վերջին դարերում պղինձը իր բնածին պատառական կտորներով ու հատիկներով սկզբում ծառայում էր զարդարանքի համար և որոնից էլ սկսեց զարգանալ նրա մշակումը, այնպես էլ երկաթի ինդուստրիան իր սկզբնական շրջանում, այն է՝ բրոնզե դարերի վերջերին արտադրում էր միայն զարդարանքներ պատկանելիքներ։

Ինչպես արդեն նշել ենք, երկաթը դժվարությամբ էր մշակվում, պահանջելով խիստ բարձր ջերմություն հալելու համար և ավելի կատարելագործված արվեստ՝ իր դարբնման համար։ Երկաթահանքի մշակման այդ դժվարությունները երկաթը դարձնում էին հազվագյուտ ու թանկագին մետաղ, չնայած որ նրա հանքերն ավելի շատ ու հարուստ էին պղնձի համեմատությամբ։ Ուստի երկաթն սկզբներում ծառայում էր միայն զարդարանքների համար, որոնք իրենց ծավալով սովորաբար փոքրիկ իրեր էին և մեծաքանակ մետաղ չէին պահանջում։ Սկզբում երկաթից մատանիներ, ապարանջաններ, կոճակներ, ուլունքներ էին շինում և կամ բրոնզե զենքերի կոթերի ու գոտիների վրա զանազան նախշերով երկաթ էին ընդելուզում (инкрустация)։

Ժամանակի ընթացքում՝ մետաղագործության տեխնիկայի զարգացումով ու կատարելագործումով՝ վարպետները սկսեցին աստիճանաբար տիրապետել նաև երկաթագործության տեխնիկային։ Երկաթից առաջին նվազ զենքեր և այլ գործիքներ

պատրաստելը դարձավ անհրաժեշտ պահանջ, որ սկսեց հետզհետե բանել բրոնզի տեղը։ Երկաթագործությունն սկսեց նվաճումներ անել մետաղի ինդուստրիայում։ Սրան կարող էին նպաստել երկու հանգամանք. Փորձը ցույց էր տալիս, որ երկաթն ավելի դիմացկուն էր գործածության մեջ և ավելի կարծր ու ամուր մետաղ էր բրոնզի համեմատությամբ. ուստի զենքերն ու հարվածական գործիքները նպատակահարմար էր լինում այդ նորագյուտ մետաղից շինել։ Այնուհետև՝ երկաթն սկսում է ավելի ձեռնտու դառնալ, քանի որ անագն իր հանքերի սակավության պատճառով հետզհետե դժվար էր գտնվում և, մեծ մասամբ ներմուծվող մետաղ լինելով, խոշոր դժվարություններով էր ձեռք բերվում։ Բրոնզի դարաշրջանի վերջերին փոփոխական առևտուրը, որը առաջ մեծ ծավալով ու հեռավոր տարածությունների վրա էր կատարվում, մեծապես տուժում է, որովհետև բազմաթիվ մեծ ու փոքր զինվորական պետություններ ու տեղական իշխանություններ են գոյանում, որոնք փակում են նախկին ազատ առևտրական ճանապարհները թե ցամաքի և թե ծովի վրա։ Դրանով խիստ դժվարանում է անագի փոխանակական առևտուրը, և այդ մետաղը դառնում է չափազանց թանկարժեք ու դժվար ձեռք բերելի։ Բայց որովհետև առանց անագի խառնուրդի պատրաստած պղնձե գործիքները գործածության համար այնքան անպետք էին իրենց փափկության պատճառով, ուստի երկաթը պիտի հանդիսանար ավելի գերադասելի ու նպատակահարմար մետաղ։

Մենք տեսանք, որ երկաթի ինդուստրիան սկսել է գոյանալ ու զարգանալ հին քաղաքակիրթ աշխարհում, այն է՝ Առաջավոր ու Փոքր Ասիայում։ Այստեղից արդեն երկաթն այն ժամանակվա առևտրական միջազգային ճանապարհներով ու գաղթաշարժերի ուղիներով, մի կողմից՝ Միջերկրական ծովի ուղղությամբ, գլխավորապես Փոքր Ասիայից, և մյուս կողմից՝ Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի վրայով, գլխավորապես Առաջավոր Ասիայից, սկսեց տարածվել հարավ-արևմտյան ու հարավ-արևելյան Եվրոպայում։ Եվրոպայում երկաթի ինդուստրիան մուտք է գործում և զարգանում այդ մետաղի ներմուծմամբ թե պատրաստի երկաթեղեն իրերով և թե զանգվածային ձուլքերով, քանի որ այդ ժամանակները տակավին հայտնի չէին տեղական երկաթահանքերը։ Հետագայում միայն հայտաբերվել են տեղական երկաթահանքեր, որոնք շահագործվում և խթան են հանդի-



5927

սանում եվրոպական երկաթի ինդուստրիային, ինչպես վկայում են հնագիտական հետախուզումներով հայտնի դարձած պրիմիտիվ հալոցքային բովերը Եվրոպայի լեռնային զանազան մասերում։

Երկաթի ինդուստրիան վերջին հազարամյակի առաջին կեսում (մեր թվ. ա.) մուտք գործելով Արևմտյան Եվրոպա և տարածվելով Դանուբ գետից մինչև Ադրիատիկ ծովը, ստեղծեց յուրահատուկ և նոր կուլտուրա, որը հնագիտության մեջ հայտնի է Հալշտատյան անունով։ Այդ կուլտուրայի բնորոշ գիծը՝ նրա կիսաերկաթային տարրն է, որտեղ դեռևս գերիշխում է բրոնզը։ Հալշտատում (Ավստրիայի Զալցկամերգուտում) հնագիտական պեղումներով հայտնի դարձած բրոնզի ու երկաթի միատեղ գոյությունն ունեցող իրերը, իրենց յուրահատուկ, ակներև բնույթով, իրենց կուլտուրական տեսադծերով համարվում են տիպարային օրինակներ, որոնցով հնագիտության մեջ որոշվում է բրոնզի ու երկաթի ինդուստրիաների փոխանցիկ շրջանը, իբրև մետաղագործության զարգացման որոշ աստիճան, որ կարելի է նկատել բոլոր երկրների վաղագույն մետաղի զարգացման փուլերում։

Կելտերի դաղթն Արևմտյան Եվրոպա, որ ծայր առավ մոտավորապես V դարում (մեր թվ. ա.), նպաստեց այն հանգամանքին, որ երկաթի ինդուստրիան միանգամայն հաստատուն դարձավ և զուտ երկաթի բնույթ ստացավ, շնորհիվ մետաղագործության մեջ կելտական ցեղերի ունեցած հմտության։ Բրոնզը այնուհետև շարունակում էր գործածվել միմիայն զարդարանքներ ու կենցաղային ամաններ պատրաստելու համար։ Այդ երկաթի ինդուստրիան հայտնի է Լատենյան (La Tène) կուլտուրա անունով։

Երկաթե դարն ունեցավ այն նշանակությունը, որ նա ասպարեզից հետզհետե դուրս վանեց ոչ միայն բրոնզե գործիքներն ու զենքերն, այլև խսպառ վերացրեց մարդու գործունեության ոլորտից քարե գործիքների վերջին մնացորդները, որոնք դեռ որոշ չափով պահպանվում էին բրոնզեդարյան կուլտուրայում այս ու այնտեղ, լրացնելով բրոնզե որոշ գործիքների այն բացասական կողմերը, որոնք գործնականում առաջանում էին այդ մետաղի փափկությունից։

Եվ ահա, մետաղագործության այդ առանձնահատուկ կուլտուրական շրջանները չափանիշ դարձնելով, մեր հնագետները փորձում են Հայկական լեռնաշխարհի պեղածոների մեջ բնորոշել բրոնզե ու վաղագույն երկաթե դարերի արտահայտված բնույթը և ըստ այնմ էլ համապատասխան հետևություններ անել։

V

## ԲՐՈՆԶԻ ԴԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Հայկական լեռնաշխարհում հնագիտական հետախուզումներով մինչև այժմ հայտնի վաղագույն մետաղագործության իրերը մեզ տանում են դեպի բրոնզի ու երկաթի դարերը: Հնագիտական գլխավոր վայրերի, ինչպես Լոռու, Նոր-Բայազետի, Դիլիջանի, Զանգեզուրի գավառների, ինչպես նաև Շիրակի, Արարատյան դաշտի և այլ նեկրոպոլներում գտնվում են մետաղի ինդուստրիայի տեսակետից երեք դամբաններ: Առաջին տեսակը պարունակում է զուտ բրոնզե իրեր. երկրորդը՝ միասին խառն իրեր երկաթից ու բրոնզից. երրորդը՝ միայն երկաթե իրեր:

Այն հանգամանքը, որ միևնույն նեկրոպոլում հանդիպում են երեք տեսակ դամբաններ, առիթ է տալիս եզրակացնելու, որ այդտեղ պետք է տեսնել միայն վաղագույն երկաթի ինդուստրիան և ժխտվում է զուտ բրոնզի դարը, հայտաբերված բրոնզե պեղածոն լավագույն դեպքում վերագրելով հալլշտատյան կուլտուրայի տիպին, որպիսին իբրև գոյություն է ունեցել Հայկական լեռնաշխարհում[16]: Այդ նույն տեսակետին են հարում նաև Հայաստանից դեպի հյուսիս տարածվող Կովկասյան վայրերում (Վրաստանում, Օսեթիայում, Մայկոպում և այլն) հայտաբերված բրոնզե ինվենտար պարունակող դամբանների նկատմամբ:

Մի կողմ թողնելով այն փաստը, որ միմիայն երկաթե գործիքներ պարունակող դամբաններն անհերքելիորեն պատկանում են երկաթե դարերին, և միաժամանակ ընդունելով այն տեսակետը, որ շատ դամբաններում միասին գտնվող բրոնզե և սակավաթիվ երկաթե գործիքները վկայում են հալլշտատյան կուլտուրայի, այսինքն բրոնզի դարից երկաթե դարը փոխանցող շրջանի գոյությունը Հայկական լեռնաշխարհում, բնավ չի կարելի անտեսել միմիայն բրոնզե իրեր պարունակող դամբանները և այդ վերջիններս վերագրել նույնպես երկաթե դարին, թեկուզ հալլշտատյան կուլտուրային, լոկ այն հիմունքով, որ այդ դամբանները, իրենց արտաքին հատկանիշներով չտարբերվելով առաջին երկու տեսակի դամբաններից, գտնվել են նրանց շարքերում, միևնույն նեկրոպոլում: Այն դեպքում ինչպե՞ս հաշտվել միմիայն բրոնզե իրերի ներկայության հետ այդ դամբաններում, որոնք



գրեթե կրում են թաղման ծիսակատարության ավելի հին նշաններ: Համենայն դեպս, հայտաբերված բրոնզե իրերը, թեկուզ հալլշտատյան կուլտուրայի տիպի դամբաններում, պերճախոս վկաներ են, որ բացի երկաթի ինդուստրիայից, այդ վայրերում գոյություն է ունեցել նաև բրոնզի ինդուստրիա, որին անդեն հաջորդել է երկաթի կուլտուրան: Բրոնզի ինդուստրիան Հայկական լեռնաշխարհում, շնորհիվ վերջինիս հարուստ պղնձահանքերի և անագ ձեռք բերելու դյուրությունների, ծաղկել է որպես մետաղագործության առաջին շրջան:

Այստեղ հանդերձ՝ պետք է ենթադրել, որ Հայկական բարձրավանդակում երբեմն գոյություն է ունեցել, ի հարկե բրոնզե դարից առաջ, նաև պղնձե դարերի, թեև խիստ կարճատև, մի շրջան: Այդ մասին մեր հնագիտությունը սակավ փաստեր է տալիս: Բացառությամբ հատ ու կտոր առանձին սակավաթիվ պղնձե իրերի, ինչպես օրինակ՝ դանակներ, ասեղներ, կոճակներ և նույնիսկ մի քանի դաշույններ և այլն, որոնք հայտաբերվել են բրոնզե ու երկաթե դարերին վերաբերող պեղածոների մեջ, մենք ունենք մի հետաքրքիր փաստ, որ վերաբերում է Կարմիր-վանքի (Ղըզըլ-վանք, Նախիջևանի մոտ) արխայիկ հնություններին: Կարմիր-վանքի շրջակայքը հանդիսանում է վերին աստիճանի արժեքավոր ու նշանակալի հնավայր, որտեղ կատարված մի շարք հնագիտական պեղումները, թեև հիմնավոր ու սիստեմատիկ եղանակով չտարված, ապացուցում են քարեդարյան շրջանից մինչև երկաթե դարը տարածվող կուլտուրայի խավերի գոյությունը: Այդ կուլտուրան, մանավանդ բրոնզի ու վաղագույն երկաթի շրջանները, չափազանց հոծ է կերամիկայով: Ահա այդ Կարմիր-վանքի հնավայրում 1896 թ. կատարված պեղումներով բացվել են մի շարք դամբաններ, որոնց իրերի մեջ մետաղը բացառապես պղինձն է. թե զարդարանքները, թե գործիքները և թե զենքերը շինված են պղնձից (ИАК, XXIX, 3—5):

Մեր ենթադրությունը, թե այդ դամբանները պատկանում են պղնձե դարերին, հիմնավորվում է նրանով, որ գտնված զենքերը, պղնձե դաշույնները, նիզակները, նիզակների ծայրերն իրենց նախնական ձևով հիշեցնում են նեոլիթյան զենքերը և համապատասխանում են կծկված (скорченный, liegende Hockerbestatung) կմախքներ պարունակող գերեզմանների ինվենտարին, որ այնքան հատկանշական երևույթ է Եվրոպայի և մասամբ Ասիայի էնեոլիթյան դարաշրջանում[17]:

Համենայն դեպս մենք այս ենթադրությունն անում ենք վերապահությամբ, քանի որ մեզ հայտնի չեն վերոհիշյալ պեղումների ստրատիգրաֆիկ հանգամանքները, մանավանդ որ այդ պեղումները կատարվել են ոչ մասնագետի, այն է՝ սահմանապահ զորամասի սպա Ֆեոդորովի ձեռքով:



Բ.

# ԴԱՄԲԱՆՆԵՐ

## I

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի վաղագույն մետաղի կուլտուրայի հուշարձանները գերազանցապես հանդիսանում են բազմաթիվ արխայիկ գերեզմաններ, որոնք, շնորհիվ հնագիտական պեղումների, այսօր դառնում են ուսումնասիրության առարկաներ: Այդ դամբանները մեծ մասամբ պատկանում են բրոնզեդարյան վերջին շրջանին, ուստի նրանց շարքում կան և այնպիսիները, ուր բրոնզե իրերի հետ հանդիպում են նաև երկաթե վաղագույն զարդերի ու գործիքներ, որոնք բնորոշում են նյութական մի կուլտուրա, որ հար և նման է Արևմտյան Եվրոպայում երբեմնի ծաղկող Հալշտատյան կուլտուրային:

Որոնք են այն դամբանները, որոնք մեր մտապատկերներում վերականգնում են նախապատմական այն դարերը, երբ Հայկական լեռնաշխարհում ծաղկում էր բրոնզեդարյան և ապա վաղագույն երկաթեդարյան կուլտուրան:

Ժամանակագրական կարգով առաջին անգամ բրոնզեդարյան կուլտուրայի հետքերը Հայաստանում հայտնի եղան անցյալ դարի 50-ական թվականներին, Դիլիջանից մոտ 5—6 վերստ հեռավորության վրա գտնվող Թեղկին-Լաղեր կոչված վայրում[18], Աղստաֆա գետի աջ ափից սկսվող սարի ամբողջ լանջին փռված նեկրոպոլում (դամբարան), մոտ 400 քառ. մետր տարածությամբ: Սակայն այդ դամբանների ուսումնասիրությունը կատարվել է միայն անցյալ դարի 70-ական թվականներին: Այդ ուսումնասիրությունը ձեռնարկել են նախ Վիրուբովը ու Բայերնը, ապա Գ. Դ. Ֆիլիմոնովը և Ուվարով ամուսինները: Սրանց մեջ ամենաարժեքավորը Ֆ. Բայերնի հետազոտությունն է (1878 թ.), որի հիման վրա էլ ֆրանսիացի հայտնի գիտնական Շանտրը մի

համեմատական ուսումնասիրություն է հրապարակել Ռեդկին-Լագերի և Հյուսիսային Կովկասում հայտնաբերված բրոնզեդարյան կուլտուրաների (Կոբանի և այլն) մասին: Ռեդկին-Լագերում պեղվել և հետազոտվել են 86 դամբարաններ, որոնց միջից հանվել են մեծաքանակ բրոնզե իրեր և խիստ սակավաթիվ երկաթե իրեր, նաև մոտ 312 կավե ամաններ[19]։

Պետք է ասել, որ Դիլիջանի շրջում վերջին ժամանակներս այս ու այնտեղ գիպվածաբար հայտնաբերվում են բավականաչափ բրոնզե ու երկաթե հնադարյան իրեր, ինչպես օրինակ՝ Գոլովինո գյուղում գտնվեցին վաղագույն մետաղի դարերին պատկանող զենքեր ու գործիքներ, որոնք նմանություն ունեն Ռեդկին-Լագերի պեղածո իրերի հետ[20]։

Այնուհետև գալիս են Ժակ Մորգանի պեղումները (1887—1888 թ. թ.) Լոռու գավառում՝ Լալվար լեռան լանջերի վրա, որ այնքան հարուստ է պղնձի հանքերով: Այստեղ պեղվել են 1000-ից ավելի դամբարաններ, ցրված զանազան նեկրոպոլներում, այն է՝ Շեյթան-թաղում (Ղարաղալա լեռան գագաթը), Ախթալայում, Ուչքիլիսայում (Ալավերդի և Ճոճկան գյուղերի միջև տարածվող սարահարթը), Մուսի-Երիում (Ալավերդու մոտերքը գտնվող դաշտը), Կարադաշում (Սադախլու գյուղի մոտերքը, Խրամ գետի հովտում) և Ջալալօղլի (Ստեփանավան) գյուղի մոտերքը (JMMS, I): Լոռու շրջանում պեղումներ է կատարել նաև Ալեքսանդր Երիցյանը (1871 և 1880 թ. թ.)—Հաղպատի, Քոբայրի և Վորոնակի շրջակայքում. այդ պեղումների հետևանքները այնքան էլ հաջող չեն եղել, թեև վերջինում նա հայտնաբերել է բավականաչափ բրոնզե իրեր: Այնուհետև՝ այդ նույն շրջանում պեղումներ է կատարել ակադեմիկոս Ն. Մառը, որը Վորոնակ գյուղի մոտերքում գտել է հետաքրքիր պեղածոներ[21]:

Լոռու գավառից դեպի հարավ-արևելք տարածվում է Գանձակի գավառի (Ադրբեջան) լեռնային շրջանը, նույնպես հարուստ՝ պղնձի և այլ մետաղների հանքերով: Այստեղ պեղումներ է կատարել Վ. Բելքը (1880—1890 թ. թ.)՝ Շամքոր, Ղալաքենդ, Գետաբեկ, Հելենենդորֆ գյուղերի շրջակայքում, հետազոտելով մոտ 300 դամբարաններ հարուստ բովանդակությամբ: Այնուհետև այստեղ հնագիտական հետազոտություն է կատարել Ա. Իվանովսկին (1896 թ.), պեղելով 70 դամբարան (MAK. VI): Մեծ ծավալով պեղումների է ձեռնարկել այստեղ նաև Ե. Ռեսլերը (1901 թ.)—Քոլչալի, Բանանց (Բայան), Կիրանց (Սեիդքենդ), Քարհատ (Դաշքեսան), Գեորգսֆելդ, Հելենենդորֆ գյուղերի մոտ գլխավորապես Կոչկարա գետի հոսանքի ուղղությամբ[22]: Վերջապես, նույն շրջանում, գլխավորապես Զուգաո գյուղի մոտերքում, պեղումներ են կատարել Վլադիմիր Սկինդերը (1905 թ.) և Ռոզենդորֆը (1903 թ.)[23]:

Գանձակի գավառի հնադարյան հարուստ դամբարանների շարունակությունը պետք է համարել Ղարաբաղի շրջանի դամբարանները, որոնք պեղվել են նախ Ե. Ռեսլերի և ապա Ա. Իվանովսկու ձեռքով[24]: Այդ դամբարանները, որոնք արժեքավոր հնագիտական ինվենտար էին պարունակում, գտնվում են Արջաձորում (Դավշանլի գյուղի մոտերքը), Վանք, Կյուլջատակ, Ախմալլի, Դամղալու, Բալլուկայա գյուղերի շրջակայքում, որոնք ընկած են Խաչեն գետի ուղղությամբ, նաև Խոջալու, Դյուզլուլու գյուղերի մոտերքը, Կարկար գետի հոսանքով: Բացի այդ, դամբարաններ են պեղվել Ակերա գետի ուղղությամբ, գլխավորապես Դող և Սարուշ գյուղերում, նաև Կուրուչայի հոսանքով՝ Կարաբուլաղ և Հադրութ գյուղերի մոտերքը (MAK, VI, 134): Այնուհետև Ղարաբաղի վերոհիշյալ դամբարանները ուսումնասիրվել են 1924 թ. հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանի գիտական էքսպեդիցիայի միջոցով[25] և ապա 1927 թ. պրոֆ. Մեշչանինովի գլխավորությամբ մեկնած գիտական էքսպեդիցիայի կողմից[26]:

Ղարաբաղի բրոնզեդարյան կուլտուրայի շարունակությունը տեսնում ենք Զանգեզուրում, ուր, թեև պեղումներ չեն կատարված մինչև այժմ, սակայն գիպվածական հայտնաբերումներով երևան են գալիս այդ կուլտուրային վերաբերող իրեր: Ղաթարի հանքերի Բարաբաթում կոչված վայրում 1927 թ. բացվել են մի քանի դամբարաններ, որոնցից մեկը պարունակում էր բրոնզե կուլտուրայի իրեր (ԽՀ): Վաղագույն մետաղի ինդուստրիայի իրեր են գտնվել նաև Ղափանի Փառավաթում գյուղի արտում, 1927 թ. (ԽՀ): Զանգեզուրի գավառում վերջերս հնագիտական հետախուզումներ է կատարել Ստեփան Լիսիցյանը, որը Գորիսի և այլ շրջաններում հայտնաբերել է բրոնզե ու վաղագույն մետաղե դարերին վերաբերող հետաքրքիր իրեր: Պետք է ասել, որ հնագիտական տեսակետից տակավին կուսական Զանգեզուրը նույնքան հարուստ է նախապատմական հուշարձաններով, որքան և Հայաստանի մյուս մասերը: Սիսիանի Աղիթյան գյուղի հանդում նկատվում են չորս հնավայրեր, յուրաքանչյուրը մոտ 2 կիլոմետր հեռավորության վրա, որոնցից, փլուզումների, հեղեղների և ջրհեղ-

թարությունների հետևանքով, քանդվում էին բրոնզե իրերով հարուստ դամբարաններ։ 1915 թ. գյուղի դիմացի «Զաղացի գլուխ» բարձունքը փլվելիս՝ Թափվել էին հարյուրավոր կավե ամաններ, որոնք ուրույն նմանություն ունեն «Նարմիր-վանքի» կուլտուրային։ Այդ գյուղի մոտ 1908—1909 թ. թ. պատահաբար բացվել էր բրոնզե իրերի համարյա մի շտեմարան, որը չափազանց հարուստ էր բրոնզե զենքերով և բրոնզե մեծ ու փոքր ապարանջաններով։ Ամենաուշագրավը բրոնզե մի արձանիկից մնացած միակ ոտքն էր, որին նայած՝ արձանիկը պետք է ունենար մոտ 40 սանտիմ. բարձրություն։ Հետագայում այդ հետաքրքիր իրը կորել է։ Նման դամբարաններով շատ հարուստ են Դարաքարասի ձորի (Հորաձոր) գյուղերի ղուշները և Վորոտանի ափերը[27]։

Զափազանց հարուստ հնագիտական վայր է հանդիսանում Նոր-Բայազետի գավառը, գլխավորապես Սևանա լճի ավազանի շրջակայքը, որտեղ 1906—1908 թ. թ. պեղումներ են կատարել Երվ. Լալայանի ձեռքով։ Այստեղ բացվել են 516 դամբան՝ չափազանց հարուստ և գիտական արժեք ունեցող վաղագույն մետաղի կուլտուրայի նյութերով (ԱՀ, XIV, XV, XVI. նաև ԷԴԳ, 67—225)։ Երվ. Լալայանից առաջ այստեղ պեղումներ է կատարել Ա. Իվանովսկին, Գյոզալդարայի շրջակայքում հետազոտելով 5 դամբան (МАК, VI)։

Երվ. Լալայանի ձեռքով պեղումներ են կատարվել նաև Դարալագյազի գավառում, թեև համեմատաբար սահմանափակ թվով դամբանների շրջանակում (ԱՀ, XII, 247)։

Դուրս Արարատյան դաշտին, նշանավոր հնագիտական մի աշխարհի, պետք է ասել, որ այստեղ սիստեմատիկ ու տևական պեղումներ չեն կատարվել, թեև հնագիտական առանձնակի հետախուզումներ բավականաչափ եղել են, որոնք միշտ էլ հայտաբերել են բրոնզե և վաղագույն երկաթե դարերի հնագիտական բնորոշ իրեր։ Հիշենք Ա. Ս. Ուվարովի պեղումները Օշականի ու Աշտարակի միջև, ինչպես և Արմավիրի ավերակներում (МС, V, 132), Ա. Իվանովսկու պեղումները Դաշբուրունի (Իգդիրի գավառ) մոտերքում (МАК, VI), Փ. Վ. Զարկովսկու պեղումները Երևանի գավ. Թազաքենդ գյուղի մոտերքում (МС, V, 119—122), Զաքարյանի պեղումները (դիպվածական) Երևանի գավ. Դայու-Թարարա գյուղի մոտերքում, ուր բացվել են 17 դամբան (МАК, 29) և այլն։ Այնուհետև Երևանի նահանգում 1892 թ. մի քանի պեղումներ է կատարել Ն. Մառը (ОАК, 1894 թ., էջ 75—86)։



Ավելացնենք սրանց նաև վերջին տարիները ձեռնարկված մի քանի հնագիտական հետախուզումներն Արարատյան դաշտում ու Արագածի լանջերի վրա։ 1924 թ. Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեն կատարել է հետախուզական գիտարշավ, որի ընթացքում հայտաբերվել էին բրոնզեդարյան կուլտուրայի հետքեր՝ Արագածի հարավային ստորոտում, ընկած Էջմիածնի շրջանից («Նորք» հանդես, 1925 թ., № 5, էջ 207—232)։ 1927 թ. Զվարթնոցի շրջանում, որ, անկասկած, հնագիտական խոր հետքեր է ցուցաբերում[28], Շահումյան ջրանցքից պատռված ջրի հոսանքը բացել էր հնագույն մի դամբան՝ կավե դագաղով ու բրոնզե դարի սկզբնական շրջանին վերաբերող իրերով (ՊՀ. 1927 թ.)։ Վերջապես, 1929 թ. Աղվեսաձոր կոչված վայրում (Փարբիից դեպի Բյուրականի տանող ճանապարհին) հայտաբերվել է մի դամբան, վերին աստիճանի հարուստ ու բազմատեսակ նյութերով (զենքեր, որոնց թվում 6 բրոնզե դաշույններ, գործիքներ, զարդարանքներ, կերամիկա)։ Զափազանց կարևոր նշանակություն ունեն Արարատյան դաշտում վերջերս ձեռնարկված մի շարք պեղումները, որոնք բավական հարուստ հնագիտական նյութեր հայտաբերեցին բրոնզեդարյան կուլտուրայի նկատմամբ։ 1935—36 թ. թ. պեղումներ կատարվեցին Երևանի երկաթուղային կայարանի մոտ գտնվող Մուխաննաթ-Թափա կոչվող բլրի վրա։ Բազմաթիվ կերամիկական բեկորների հետ միասին, որոնց մեջ պատահում են նաև գունանկարկ խեցիներ, հայտաբերվել է պղնձահալ օջախ՝ մանր խարամով (շլակ), որպիսի հանգամանքը վկայում է, որ այստեղ ձուլարան է եղել։ Հիրավի, գտնվել է տափակ, այսպես կոչված կելտաձև տապար ձուլելու քարե մի կաղապար, նմանապես մի այլ քարե կաղապար, երկու մեդալյոն և մի կաղապար զարդարանքներ ձուլելու համար։ 1936—38 թ. թ. Երևանի մոտ, Շենգավիթ կոչված արվարձանում կատարված պեղումների հետևանքով գտնվել են նույնպես տապար ձուլելու քարե կաղապար, պաշտամունքային 3 թրծած կավե օջախներ, բնակարանների մնացորդներ, բրոնզե ու քարե գործիքներ և այլն։ Ավելի հետաքրքիր է Երևանի Զարրախ գյուղի մոտ, «Կարմիր բլուր» կոչվող հնագիտական վայրը, որտեղ դիպվածով 1936 թ. գտնվել էր խալդական մի արձանագրություն։ Այդ գյուտի հետևանքով 1939—1940 թ. թ. այստեղ կատարված պեղումները հայտաբերեցին խալդական կուլտուրային վերաբերող ավյալներ— տապար ձուլելու քարե կաղապար, բրոնզե մեծ վահան,

բրոնզե գեղեցիկ, զարդանկարած կացարեն, գործվածքեղենի մնացորդներ և այլն: Այս բոլոր վայրերը, թեև այդտեղ գտնվեցին ամրավաթիվ գտածոներ, եղել են գլխավորապես բնակատեղեր։ Կանգ չենք առնում Անբերդ ամրոցի ու Դվինի մայրաքաղաքի պեղումների վրա, որոնք արդեն միջնադարյան Հայաստանի պատմությանն են վերաբերում։

Արարատյան դաշտի շարունակությամբ, Արաքսի հովտով, պեղումներ են կատարվել Նախիջևանի գավառի կարևոր հնագիտական նշանակություն ունեցող «Կարմիր-վանքում» (Ղզըլ-վանք), թեև հաճախակի, բայց անսիստեմ ու թռուցիկ կերպով տարված հետախուզական աշխատանքներով։ Այդ հետախուզումները կատարել են շատերը, որոնցից հիշենք հետևյալներին— Նախիջևանյան զորամասի սպա Ֆեոդորով, Երվանդ Լալայան (1905 թ.), ակադեմ. Ի. Մեշչանինով (1925 թ.)[28].

Այս հնագիտական կուլտուրական շրջանին պետք է պատկանի նաև Մեղրու գավառը, որտեղ Ստ. Լիսիցյանն իր հետազոտական արշավանքի ընթացքում հայտաբերել է մի քանի իրեր, որոնք վերաբերում են բրոնզե կամ վաղ երկաթե դարերը փոխանցվող շրջանին (ИКИАИ, т. IV, 1926 թ., էջ 137. VI, 1927 թ., էջ 120)։ Նույն այդ հնագիտական շրջանին են պատկանում Օրդուբադը և դրան հարևան Գողթնի Թանակերտ գյուղը, որտեղ նույնպես հայտաբերվել են բրոնզեդարյան իրեր (СГАИМК. т. I):

Շիրակը, որ ընկած է Արագածի հյուսիսային լանջերից դեպի Փամբակ-Լոռու լեռները, չնայած իր մեծ հնագիտական նշանակության, չի ենթարկվել սիստեմատիկ հնագիտական հետազոտման, էլ չենք խոսում պեղումների մասին, որոնք գրեթե տեղի չեն ունեցել[29]։ Այն հետաքրքիր ու բազմաթիվ հատուկենտ հնագիտական տվյալները, որ ունենք այսօր գրականության մեջ, դիպվածական հանածոներ և գյուտեր են, որոնք վկայում են հարուստ բրոնզեդարյան կուլտուրայի մասին։ Շիրակի հնագիտական պատմության այդ անմխիթար էջերում միակ բացառությունը կազմում է Անին, որ դարձել էր լուրջ և գիտական հիմունքներով տարվող սիստեմատիկ հետազոտման ասպարեզ, շնորհիվ ակադեմիկոս Ն. Մառի ձեռնարկած պեղումների։ Այդ հնագիտական աշխատանքները տևեցին մի քանի տարի, բայց, դժբախտաբար, համաշխարհային պատերազմի հետևանքով մնացին անավարտ և նույնիսկ պեղածո իրեղենի մեծ մասը փչացավ ու կորավ։ Չնայած, որ այդ պեղումներով ու հնագիտական հետազոտություններով լուսաբանվում էր Հայաստանի միջնադարյան կուլտուրան, այնուամենայնիվ Անիի շրջակայքի հնագիտական ստորին շերտերում գտնվեցին վաղագույն մետաղի կուլտուրայի հետքեր։

Շիրակի հնագիտական հարստությունները, որոնք շարունակում են տակավին թաքնված մնալ երկրի մութ խորքերում, երբեմնակի լույս աշխարհ են տեսնում սոսկ դիպվածական հանգամանքներում և շատ անգամ գիտության համար կորչում են, գտնողների անձանց անիրազեկության պատճառով կամ գյուղացիների ձեռքում փչանալով։ Շիրակում մի շարք վայրերում հնագիտական հետախուզումներ են կատարել ճարտարապետ Թ. Թորամանյանը («Բանբեր Էջմիածնի Գիտ. Ինստիտուտի», էջ 218—224), գրականագետ Առաքելյանը և, վերջապես, Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեն, որոնք կարողացել են գտնել բրոնզե ու վաղագույն երկաթե դարերին վերաբերող իրեր։ Բավականաչափ դամբաններ դիպվածաբար հայտաբերվել են Շիրջրանցքի կառուցման աշխատանքների ընթացքում (Օրթաքիլիսայի մոտ), այդ դամբաններից մի քանիսը պատկանում են բրոնզե դարերի վերջավորին և աչքի են ընկնում բավական հարուստ և արժեքավոր ինվենտարով (ՀՏ, 1927)։ Նույնպես հետաքրքիր հնագիտական վայր է համարվում Շիրակի մասը կազմող Բաշ-Շորագյալը, որտեղ Բանգըլել անունով տարածությունում գտնվել են բրոնզեդարյան իրեր[30].

Բացառիկ նշանակություն ունեցող գյուտ է արված Շիրակում 1934 թ. գարնանը, Լենինականի մոտ կոմբինատի կառուցման վայրում (քաղաքի հարավ-արևմտյան կողմը) կոչված խրամը փորելիս՝ որ բացվել են քարաշեն մնացորդներ։ Նախնական հետախուզումով այդտեղ հայտաբերվել են հնագույն բնակատեղի ավերակներ՝ հողի հաստ շերտի տակ բավական ընդարձակ տարածության վրա, որի հարթավայրում տեղավորված են բնակարանները, իսկ նրա անմիջական շարունակությունը կազմող բարձրադիր անկյունում՝ դամբանները։ Գտնված իրերի (հղկված քարե, ապա բրոնզե գործիքներ, նմանապես ոսկրե գործիքներ, կերամիկայի բազմաթիվ խեցիներ) և բնակարանների կառույցների հիման վրա, կարելի է եզրակացնել, որ բնակատեղին պատկանում է բրոնզեդարյան շրջանին, իսկ նրա տակը՝ ստորին, ավելի հին կուլտուրական շերտը պատկանում է նեոլիթի (նորքարյա) դարաշրջանին։ Դամբանները երկու տիպի են. առ-

վակի հողի մեջ փորված, ուր մարդը թաղված է եղել կուչ եկած դիրքով, և այս մեծ սալաքարերով շինված քարարկղներ։ Բայց ամենից նշանակալին այն է, որ երևան է հանվել ձուլարան-արհեստանոցի շենքի մնացորդ՝ լավ պահպանված հնոցով, որը լցված էր մոխրով, իսկ կողքին թափված էին պղնձաքարի այրված խարամներ (շլակներ) և գտնվել է մի կավե աման ներքուստ եղունգներով, հավանորեն հալելու կամ ձուլելու անոթ. իսկ այստեղից մի փոքր հեռու հայտաբերվել է պեղածոների մեջ նաև չափազանց արժեքավոր իր՝ քարից շինված մի կաղապար՝ բրոնզե տապարներ ձուլելու համար (ԱՀ, 1934 թ., № 115)։ Վերջին գյուտը, որ անդրանիկ է իր տեսակում, խոսուն կերպով գիտական նշանակություն ունի հին Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության համար, լցնելով այն բացը, որ կար Հայաստանի հնագիտության մեջ բրոնզե ինդուստրիայի տեղական ծագման ու զարգացման պրոբլեմում։ Բրոնզե տապարների ձուլարան-արհեստանոցի գոյությունը մի վայրում, որ աշխարհագրորեն հարևան է Լոռու արդեն արխայիկ դարերում հայտնի պղնձահանքերի մարզին, գալիս է ապացուցելու և ամուր հիմքերի վրա դնելու այն կարծիքը, որ բրոնզի գյուտի հայրենիքը կարող է լինել և Հայկական լեռնաշխարհը, ինչպես ենթադրում են մի քանի եվրոպական ականավոր հնագետներ։

Ղարսի շրջանում էլ հանդիպում են վաղագույն մետաղի դարերին պատկանող իրեր։ Այս շրջանում չեն կատարվել ոչ միայն պեղումներ, այլև հնագիտական որևէ հետախուզում։ Գրականության մեջ մեզ հայտնի այդ իրերը գլխավորապես հայտաբերված բաներ են (MC, V, 131)։ Ըստ երևույթին, Ղարսի շրջանում բրոնզե իրերով հարուստ է լինելու Սարիղամիշը։

Տարաբախտաբար շատ քիչ պեղումներ և հետախուզումներ են կատարվել Թյուրքահայաստանում։ Առաջավոր Ասիայի նախապատմական կուլտուրայի զարգացման այդ կարևոր մասում հնագիտական հետազոտություններն այստեղ տարվել են գլխավորապես խալդյական կուլտուրայի ուսումնասիրության և մասնավորապես բևեռագիր հուշարձանների որոնման գծով։ Ուստի այդ հնագիտական հետազոտությունները կենտրոնացվել էին Վասպուրականում, մասնավորապես Վանում, ուր շահեկան պեղումներ են կատարել Վ. Բելքը, Լեման-Հաուպտը, Ն. Մառը և Հ. Օրբելին[23]։ Բայց և այնպես մի շարք եվրոպացի գիտական-ճանապարհորդներ, մասնավորապես Վ. Բելքն ու Լեման-Հաուպտը Թյուրքահա-



յաստանի մի շարք հին կուլտուրական վայրերում կարողացել են հայտաբերել վաղագույն մետաղի ինդուստրիայի ծագման տվյալներ։ Նույն Թյուրքահայաստանում, Հասան-Ղալայի մոտերքում, հետաքրքիր, բայց պատերազմի պատճառով անավարտ պեղումներ են կատարվել Սմբատ Տեր-Ավետիսյանի ձեռքով (ИКИАИ, 1926 թ., գիրք IV, և Նոր աշխարհի հանդես, Թիֆլիս, 1922 թ., № 1, էջ 99—108)։

Բրոնզեդարյան ծաղկած կուլտուրայի հետաքրքիր տվյալներ է արձանագրում Առաքելը Թյուրքահայաստանի այն մասի վերաբերյալ, որ ընկած է Ճորոխ գետի հովտում (ՀԱ, 1926 և 1927 թ. թ.)։

Ավելի անմխիթար պատկեր ունենք Պարսկահայքի, մասնավորապես Ուրմիո լճի շրջակայքի, հնագիտական վիճակի մասին։ Այստեղ, կարելի է ասել ոչինչ չի արված. միայն մի քանի դիպվածական գյուտեր են եղել, որ հիմք են տալիս ենթադրելու նույնպես բրոնզեդարյան կուլտուրայի երբեմնի գոյության մասին այս վայրերում, ինչպես տեսնում ենք եվրոպացի մի քանի ճանապարհորդ գիտնականների կցկտուր տվյալներից։

Եթե ընդհանուր մի հայացք նետենք վերը հիշված հնավայրերի վրա, ուր մի ժամանակ ծաղկում էր բրոնզեդարյան կուլտուրան, կնկատենք, որ այդ բոլոր վայրերն ընկնում են նույն տեղերում, ուր ավելի առաջները եղել են թերևս նեոլիթյան կուլտուրայի կենտրոնները (Լ. 117)։ Բրոնզեդարյան կուլտուրան, դիալեկտիկ զարգացման հետևությունով, դառնում է նեոլիթյան կուլտուրայի շարունակությունը, բռնում է նրա տեղը և այդ բազմածավալ լեռնաստանի աշխարհագրական ուժերին տալիս է նոր ուղիներ, վերակառուցում է սոցիալական հարաբերությունները, հիմքեր դնելով դասակարգային հասարակական ձևերի։

Ահա վերը մասամբ հիշատակված կուլտուրական հնավայրերը, որոնք երկար շղթայի օղակներով միջընդմեջ ձգվում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային ծայրերից, սկսած Գուգարքից մինչև Վանա ծովի հարավային ավազանի սահմանները, իսկ արևելքից՝ Կապուտան ծովից (Ուրմիո լիճը) մինչև արևմուտք Փոքր Ասիայի արևելյան սահմանները, ներկայացնում են վաղագույն մետաղի դարաշրջանում ապրող մարդկային զանգվածների կուլտուրայի մի լայնածավալ ֆոն, որի վրա գծում ենք չորս շրջաններ՝ իրենց ինքնահատուկ ու բնորոշ

երանգներով և այդ կուլտուրան կրող ժողովուրդների տեղաշարժական ու մակընթացական գաղթաշարժերի ուղիներով։

1. Արևմտյան շրջան — տարածվում է Ճորոխ ու Արաքս գետերի վերին մասերից դեպի հարավ-արևմուտք, ընդգրկելով Փոքր Հայքն ու Բարձր Հայքը և ապա Բայբուրդ—Երզնկա—Խարբերդ—Դիարբեքիր—Սղերդ—Բիթլիս գծով (մեջն առնելով Մշո դաշտը կամ հին Տարոնը) մինչև Վանա լճի արևմտյան եզերքը, սահման ունենալով հարավում Տիգրիս գետը և ապա սրան միացող Բոհտան սուն։

2. Հարավային կամ Վանյան շրջան — ընդգրկում է մի տարածություն հյուսիսից՝ այժմյան Աղրիդաղ ու Արարատ լեռներից և Արաքս գետի միջին հոսանքից մինչև հարավ՝ Վանա լճի հարավային եզրերին սահմանամերձ վայրերը՝ Բիթլիս—Բոհտան-սու գետը և Ջուլամերիկի գծով, իսկ արևմուտքից պարփակվում է իր մեջ Ալաշկերտի ու Մանազկերտի հովիտները և արևելքից՝ Հին-Բայազետի, Աբաղայի դաշտերն ու Կապուտան ծովի արևմտյան եզրամերձ տարածությունը։

3. Հյուսիսային շրջանը բռնում է մի տարածություն, որը պարփակված է հետևյալ սահմաններում. հյուսիսից Գուգարքը և Սոմխեթի լեռներից հարավ, ապա Չըլդըր լիճը և Արդահան. հարավից—Աղրիդաղի ու Արարատի հյուսիսային լանջերը և Արաքսի միջին հոսանքը մինչև Ջուլֆա. արևմուտքից—Ճորոխ գետի միջին հոսանքը. ընդգրկում է Շիրակի, Արարատյան և Շարուրի դաշտերը։

4. Արևելյան շրջան—սկսվում է հյուսիսային շրջանի արևելյան կողմից, կենտրոն ունենալով Սևանա լիճը։ Այս շրջանի մեջ մտնում են՝ Բորչալուի հարավային մասը, Լոռին, Դիլիջանի գավառը, ապա ամբողջ Սևանի ավազանը (նախկին Նոր Բայազետի գավառ), Դարալագյազի գավառը, Զանգեզուրը և Գողթանը (պատմական Սյունիքը)։ Այս շրջանի հարավային սահմանագիծն է Արաքս գետը։

Չորս շրջանների այս տեսակ բաժանումը, անշուշտ, պայմանական պետք է համարել։ Հայկական լեռնաշխարհի հնագիտության արդի վիճակն այնքան անբավարար ու աղքատ է իրեղեն ապացույցներով, անսպառ հնությունների այդ երկիրը դեռևս այնքան մեծ կարիք ունի մանրամասն ու ծավալուն հնագիտական հետազոտումների, որ խիստ դժվար է ճշտորոշել ու դասակարգել բրոնզեդարյան կուլտուրան որոշակի շեշտված ու սահ-



մանագծված մարզերով։ Մեր գծած արևմտյան ու հարավային շրջանները, ինչպես վկայում են սեպագիր և այլ հուշարձանները, հնագույն դարերում կուլտուրապես ավելի զարգացած ու ավելի ծաղկած վիճակում են եղել, մյուս երկու շրջանների համեմատությամբ, կրելով իրենց մեջ հաթական ու խալդական փյութամ կուլտուրայի տարրերը։ Մինչդեռ ներկայումս այդ երկու շրջանները մեզ շատ քիչ հնագիտական պեղածոներ են տալիս, որովհետև այդ ուղղությամբ չեն կատարվել լայն հետախուզական աշխատանքներ ու այլ պեղումներ։ Ընդհակառակն, այսօր մեր առաջ հյուսիսային և առավելապես արևելյան շրջանները բացվում են անհամեմատ ավելի հարուստ հնագիտական իրեղեն տվյալներով, որոնց մեջ դամբանները պատվավոր տեղ են գրավում։

## II

## ԴԱՄԲԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նախապատմական դամբանները Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ են, և մինչև այսօր պեղածները կազմում են նրանց մի չնչին մասը։ Բայց և այնպես այդ պեղվածներն էլ բավական հարուստ և ուսանելի նյութ են տալիս պատմագիտական ուսումնասիրությունների համար։ Նրանք, կարելի է ասել, առայժմ միակ իրեղեն ապացույցներն են նախապատմական այն կուլտուրայի, որ մի ժամանակ ծաղկում էր Առաջավոր Ասիայի այդ հյուսիսում։

Սովորաբար այդ դամբանները տարածված են լինում սարերի գագաթներին կամ բարձր լանջերում, ջրաբաշխական սահմաններում և, մանավանդ, գետերի հոսանքների ուղղությամբ, այսինքն այն վայրերում, որտեղ նախապատմական մարդը կառուցում էր իր բնակարանները և հնարավորություններ էր գտնում արծարծելու իր տնտեսական գործունեությունը և պաշտպանելու իր ֆիզիկական գոյությունը։

Հին Հայաստանի դամբաններն ըստ իրենց արտաքին տեսքի կարելի է բաժանել երկու տեսակի։ Առաջին տեսակին պատկանում են կուրգանաձև գերեզմանները, որոնք սովորաբար զանազան մեծության հողաթմբեր են (tumulus), սկսած 0,5 մետրից մինչև 7 մետր բարձրությամբ և 3—100 մետր տրամագծով։ Երկրորդ տեսակին պատկանում են այնպիսի հնադարյան գերեզ-

մաններ, որոնք չունեն աչքի ընկնող արտաքին նշաններ, մեծ մասամբ հավասար են գետնին և դժվար է որոշել կամ գտնել նրանց տեղը։ Այս դամբանները գտնվում են մեծ մասամբ լեռնոտ վայրերում, քարքարոտ բարձունքներում, մինչդեռ առաջին տեսակի դամբանները սովորաբար հանդիպում են դաշտավայրերում, երբեմն էլ առանց թմբի։ Երկրորդ տեսակի դամբաններն ունեն շրջանակի շարված քարեր, կենտրոնում հորիզոնական ձևով դրված, երբեմն էլ ցցված մեկ կամ երկու քար։ Սրանք ներկայացնում են իսկապես կրոմլեխի որոշ տեսակը։ Այս վերջինները հազվագյուտ են լինում։

Ըստ արտաքին կառուցվածքի՝ կուրգանաձև դամբաններն իրենց հերթին բաժանվում են երեք հիմնական տեսակների— երկարաձև, կլորաձև և ձվաձև։ Ամենից հաճախ հանդիպում են կլոր, երբեմն—ձվաձև, բայց հազվադեպ են երկարաձև (ուղղանկյուն) կուրգանները։ Այդ հողաթմբերի գագաթները երբեմն լինում են կոնաձև, բայց ավելի հաճախ տափակ կամ գոգավոր։ Գագաթները, եթե կոնաձև են, տնկված են լինում մեկ կամ մի քանի սրածայր քարեր։ Իսկ եթե գագաթները տափակ են, շուրջանակի շարված են լինում քարերով, որոնց կենտրոնում երբեմն էլ ցցված են լինում 1—3 մեծ քարեր։ Այդ երեք տեսակի կուրգանների ստորոտում շուրջանակի շարված են լինում մեծ քարեր։ Երբեմն պատահում են այդ ձևի շուրջանակի քարաշարերը երկու համակենտրոն շրջաններով։

Ահա այդ կուրգանաձև կամ հարթ դամբանները բացվում են գետնի մակերեսից 1—2 մետր խորության մեջ։ Սովորաբար ամեն մի կուրգանի տակ լինում է մեկ գերեզման։ Սակայն հանդիպում են մեծածավալ կուրգաններ, որոնց մեջ երբեմն լինում են երկու կամ ավելի գերեզմաններ։

Այդ բոլոր գերեզմանները կարելի է դասակարգել հետևյալ բնորոշ տիպերին։

1. Քարարկղեր։—Գերեզմանների ամենատարածված ու սովորական ձևը քարե արկղներ են (каменные ящики, Steinkisten, cistes fait de pierres)։ Այս գերեզմանների տարողությունը, Վ. Բելքի հաշվումներով, հասնում է 0,4-ից մինչև 40 խորանարդ մետրի։ Դամբանների երկարությունը տատանվում է 140-ից մինչև 350 սմ., լայնությունը՝ 60—280 սմ. և խորությունը՝ 40—310 սմ.։

Քարարկղները բաղկացած են մեծ սալաքարերից՝ 1—2—4



սալաքարեր կանգնած են լինում կողքի պատերի երկարությամբ, 1—2 սալաքար՝ պատերի լայնությամբ և 1—2 ահագին սալաքարեր, իբրև կափարիչ, ծածկում են վերևից։ Սալաքարերի միջև, մանավանդ անկյուններում, գոյացած արանքներն ու ծակերը շատ անգամ լցված են լինում խոշոր խիճերով ու դաշտային մանր քարերով։ Գերեզմանների հատակը մեծ մասամբ լինում է տակ գետինը, առանց որևէ սալաքարի։

Քարարկղներն իրենց գաղափարով հանդիսանում են նեոլիթյան կուլտուրայից փոխանցված մնացորդ, մեգալիթյան դարերի ժառանգություն (I, 138, 153), այսինքն նրանք դոլմենների վերափոխված ձևն են ներկայացնում։ Թաղման այդ ձևը, որ համատարած է մանավանդ Հայկական լեռնաշխարհի արևելյան հնագիտական շրջանի դամբարանների մեծամասնության մեջ, խիստ բնորոշ է և հատուկ դոլմենների բնույթին[32]։ Ինչպես կարելի է եզրակացնել այդ դամբանների կառույցներից, օրինակ՝ Թեղկին-Լաքերում, մեռյալի դիակը գերեզման էին իջեցնում ոչ թե քարարկղի վերևից, այլ կողքից (առջևի կամ ետևի քարապատից), որը դիտմամբ սկզբում բաց էին թողնում և ապա դիակը այդ անցքով մտցնելուց հետո, փակում էին անտաշ ու մեծ քարերի շարվածքով։ Քարարկղների այս ձևն ավելի մոտիկ է դոլմեններին, քան այն արկղներին, որ մենք հանդիպում ենք Եվրոպայում կամ Հյուսիսային Կովկասում (Կոբանում և այլն)։

Ընդհանրապես քարարկղները, որոնք հիշեցնում են դոլմենի ձևը, մեծ չափով տարածված էին թե Հնաշարյան շրջանում, ինչպես օրինակ՝ սոլյուտրեի մարդու գերեզմանները, և թե մանավանդ բրոնզեդարյան և առաջ վաղագույն պատմական դարերի շրջանում, օրինակ՝ Հալշտատի, Վիլլանովայի և այլ դամբանները։ Նույնիսկ լանգոբարդների ու ֆրանկների գերեզմաններն այդպիսի դամբաններ էին, ավելի կոպիտ ու անտաշ սալաքարերից շինված։ Օվերնում, նմանապես Շվեյցարիայում պալաֆիտային շենքերից (ցցավոր բնակարանները) ոչ հեռու հայտաբերված դամբանները կրում են նույն բնորոշ գծերը, ինչ որ հարավային Կովկասի քարարկղները։

Մեզ համար ավելի մեծ նշանակություն ունի քարարկղների գոյության փաստը Միջերկրածովյան բրոնզեդարյան կուլտուրայում, գլխավորապես Էգեյան կղզիների վրա։ Սկսած XXV դարից մինչև XV դարը (մեր թվ. ա.) յուրահատուկ փարթամ կուլտուրայով ծաղկող Կիկլադյան կղզիներում, Տիրինթ քաղա-

*քի ավերակներում, Թեսալիայում հնագիտական պեղումներով հայտաբերվել են մեծ սալաքարերից շինված ուղղանկյուն արկղներ, մարդկանց կմախքներով ու բրոնզե իրերով (RL, IV, 457)։ Այդ դամբաններն իրենց կառուցվածքով և բովանդակությամբ մեծ նմանություն ունեն Հայկական լեռնաշխարհի մեջ հայտնի քարարկղների հետ։*

*Ի վերջո, անհրաժեշտ է նշել այս ձևի դամբանների մի բնորոշ գիծը։ Ինչպես ցույց են տալիս քարարկղների թաղման հանգամանքները, այն է՝ կմախքի դիրքը, շրջապատած իրերի բազմազանությունն ու շատությունը, հանգուցյալի վրա եղած զենքերն ու զարդարանքները, զանազան կենդանիների կմախքների կամ ոսկրների ներկայությունը — այդ քարարկղներն իբրև հանգստարան են ծառայել գլխավորապես տիրապետող և ունևոր դասակարգին պատկանող մեռյալների համար։ Այդ քարարկղներն իսկապես եղել են ընդօրինակում այն բնակարանների, որոնց մեջ այն ժամանակ ապրել են մարդիկ, բնակարաններ, որոնք գլխավորապես եղել են քառաշեն ուղղանկյուն կառույցներ։*

2. Փորվածքներ *գետնի մեջ, մեծ մասամբ ուղղանկյուն, երբեմն էլ կլորաձև կամ ձվաձև։ Այս տիպի գերեզմանների պատերը երբեմն շարված են լինում անտաշ ու կոպիտ քարերից, իսկ վերևից ծածկված են լինում սալաքարերով և կամ գերաններով, որոնց վրա հող ու խիճ են ածել և ապա արդեն սալաքարեր դրել (Ախթալայի գերեզմանները)*[33]*։*

*Այս տիպի դամբաններն իրենց ծագումով քարարկղների համեմատությամբ, ավելի հին են և պատկանել են հնագույն նախնական բնակարանների, այն է՝ քարայրերի ու սորերի կոնստրուկտիվ տեսակները։ Այս կարգի դամբանների մեջ բրոնզե ու վաղագույն երկաթե դարերում, ըստ երևույթին, թաղվելիս են եղել գլխավորապես չքավոր ու սովորական խավերին պատկանող մեռյալները, որովհետև այդ դամբաններում կմախքների հետ շատ չնչին քանակով ու աղքատ իրեր են հայտաբերվում և կամ ավելի հաճախ ոչինչ չի լինում, բացի կմախքից, եթե միայն վերջինս չի փտել ու փոշիացել։ Ուստի այդ ձևի դամբանները, որոնք, ամենայն հավանականությամբ, պետք է ավելի շատ լինեին, գետնի մեջ երկար ու ձիգ դարերի ընթացքում հողի հետ խառնըվելով, միանգամայն անհետացել են։ Շատ անգամ այս ձևի դամբանները, մանավանդ ժայռոտ վայրերում, փորվում էին քարի*



*մեջ, որով նրանք ստանում էին սարկոֆագի ձև։ Այսպիսի դամբաններ, թեև խիստ սակավաթիվ, հանդիպում են Շիրակում, մասամբ Լոռում։ Երևանի գավառի Թաղաքենդ գյուղի բրոնզեդարյան գերեզմանները փորված են տուֆային զանգվածների մեջ (MC, V, 119)։*

3. Կարասի գերեզմաններ: *Այս տիպի գերեզմանները լինում են մեկկարասային կամ երկկարասային։ Կարասները նման են ներկայումս Կովկասում գործածվող գինու կարասներին։ Մեկկարասային դամբանում կարասը ուղղահայաց է կանգնած, բերանը դեպի վեր ու սալաքարով ծածկված, ինչպես օրինակ՝ Նոր-Բայազետի գավառում (ԱՀ, XIV, 25—27)։ Երբեմն էլ կարասը դրված է լինում բերանքսիվայր, ինչպես օրինակ՝ Ախթալայում (JMMS, I, 62—63)։ Երբեմն էլ հանդիպում են դամբաններ՝ բաղկացած երկու կարասից, որոնք բերան-բերանի են հենած և հյուսիսից-հարավ պառկեցրած, կազմելով միացյալ ամբողջական մի տարածություն, ուր դիակը զետեղվում էր՝ գլուխը մեկ, իսկ ոտները մյուս կարասում (ԼԴԳ, 70—72)։ Կարասե դամբաններ հայտաբերվել են նաև Դարալագյազում (ԱՀ, XII), Շիրակում (ԲԳԻ, 218) և այլուր։*

*Ինչպես ճիշտ նկատում է հնագետ Ժակ Մորգանը, կարասե դամբանները փոխարինում էին քարարկղներին այն երկրներում, որոնք տափաստաններ էին և քարերից, մանավանդ սալաքարերից զուրկ, քանի որ վերջիններս հնարավոր էր հատանել միայն լեռնային զանգվածներում (JMMS, I, 79—80)։ Հիրավի, պրոֆ. Մեշչանինովը Ղարաբաղի սահմաններում տարածվող Միլի տափաստանում 1927 թ. իր կատարած պեղումներով հայտաբերել է բազմաթիվ կարասե դամբաններ։*

*Մեկ կամ երկկարասային դամբաններ մեծ թվով հայտաբերվում են Միջագետքի տափաստաններում։ Բաբելոնում, տակավին մեր թվականությունից 3000 տարի առաջ, ինչպես և հին Եգիպտոսում այդ ձևի դամբանային թաղումը սովորական է եղել (RL, IV, 485)։*

*Հայկական լեռնաշխարհում հայտաբերված կարասային դամբաններն այնքան էլ շատ չեն և նրանց ներկայությունն այդ լեռնոտ երկրում պետք է բացատրել նրանով, որ այդ ձևի թաղման սովորությունը փոխվել է դրսից։ Քարարկղների հետ մեկտեղ կարասե դամբանների գոյությունը՝ այն էլ քարարկղների համեմատությամբ սակավաթիվ օրինակներով, հիմք է տալիս կաս-*

հելու, որ այդ ոչ թե բնիկների կուլտուրային է պատկանում, այլ բղխում է դրսեկ տարրերից, որոնք օտար տափաստաններից գաղթելով այստեղ, շարունակում էին պահպանել իրենց թաղման ավանդական ձևը, մինչև որ կուլտուրապես միաձուլվեցին տեղական ազգաբնակչության հետ։

Դարասի թաղման մի այլ ձևը պետք է համարել կավե դագաղները, որ նույնպես հանդիպում ենք Հայկական լեռնաշխարհի մի քանի կետերում։ Այդպիսի դագաղներ հայտաբերվել են Էջմիածնի գավառում, գլխավորապես Ջվարթնոցի շրջանում (ԽՀ, 1927), նաև Շիրակում։ Այդ դագաղները, որ պարունակելիս են եղել բրոնզեդարյան իրեր, մեծ նմանություն ունեն հին Բաբելոնի բրոնզեդարյան նույնպիսի կավե դագաղների հետ։

## III

## ԹԱՂՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Վերոհիշյալ բոլոր դամբաններում նկատելի են երեք տեսակ թաղման ձևեր—ա) դիակը զետեղվում էր պպզած դիրքով, բ) դիակը պառկեցվում էր կողքի վրա և հազվադեպ՝ մեջքի վրա, գ) դիակիզում։

Պպզած դիրքով թաղումը պետք է համարել ամենահին ձևը։ Այստեղ պահպանվել է հնագարյան մի հայացք, որով մեռյալին տալիս էին կենդանի մարդու սովորական հանգստի դիրքը։ Այդ դիրքով էր կենդանի մարդը հանգստանում, զրուցում, ուտում և խմում. մի սովորություն, որ ներկայումս էլ բնորոշ է արևելյան ժողովուրդների կենցաղում։ Որ իրոք այդ գաղափարն էր արտահայտվում պպզած ձևով թաղելու մեջ, երևում է նրանից, որ պպզած մեռյալի առաջ դնում էին ամաններ՝ ուտելիքով ու ըմպելիքով, նրան շրջապատում էին գործիքներով, զենքերով և այլն։ Թաղման այս ձևը հաճախ է պատահում Նոր-Բայազետի, Դիլիջանի Մեծ Զալայի, նմանապես բոլոր մեկկարասյան դամբաններում։

Պառկած դիրքով թաղումը լինում է գլխավորապես ձախ կողքի վրա, երբեմն նաև աջ կողքով։ Մեռյալին սովորաբար պառկեցնում էին սրունքները ծալած այնպես, որ ծնկները գալիս էին ձեռքերի հանդեպ. բազուկները նմանապես ծալած այնպես, որ ձեռքերը դրված են երեսի հանդեպ. գլուխը, ինչպես և ոտները սովորաբար դրված են լինում տափակ քարի վրա։ Այսպիսով՝ ամբողջ դիակն ստանում էր կծկված, կուչ եկած դիրք։ Այս ձևի թաղումը մի համատարած երևույթ է հնագարյան դամբաններում, թե Եվրոպայում և թե Ասիայում։ Պպզած դիրքով թաղելու համեմատությամբ պառկած դիրքն ավելի տարածված երևույթ է և տիրապետող ձևն է բրոնզե ու վաղագույն երկաթեդարյան կուլտուրայում։ Այստեղ մեռյալին տալիս են քնած մարդու դիրք, որտեղ արտահայտվում է այն հավատալիքը, թե մահվամբ մարդը մտել է հավիտենական քնի մեջ, այսինքն նրա հոգին հեռացել է մարմնից դեպի «հանդերձյալ աշխարհը»։ Թաղման այս ձևի մեջ, անշուշտ, տիրապետում է արդեն անիմիստական աշխարհայեցողությունը, որը թելադրում էր մեռյալի հետ թաղել նրա կենդանության հետ աղերս ունեցող բոլոր կենցաղային պատկանելիքները։

Թաղման այդպիսի ձևին վերաբերող հավատալիքը հետաքրքիր մի երևույթ է, որ հանդիսանում է հոգևոր կուլտուրայի բնագավառում գոյացած վերնաշենքի գծերից մեկը։ Սակայն իրականում կծկված ձևով թաղելու սովորույթի ծագումը պետք է որոնել այն բնական դիրքում, որ ստանում է կենդանի մարդը սովորաբար գետնի վրա քնելիս, երբ նրա մարմինը բնազդաբար կծկվելով, ինչպես այդ նկատելի է նաև չորքոտանի կենդանիների մեջ, ձգտում էր իր ջերմությունը պահպանել (CSA, 23)։ Մի քանի գիտնականների այն կարծիքը, թե այդ ձևն առաջացել է արհեստական կերպով կծկելուց, երբ մեռյալի մարմինը չվանով պինդ կապում էին այն հավատով, որ նա հնարավորություն չունենա, որպես չար ոգի, դուրս գալու գերեզմանից, մեզ թվում է բռնազբոսիկ, ինչպես և այն տեսակետը, թե կծկված դիրք էին տալիս դիակին՝ գերեզմանի փոքրության պատճառով։

Ինչ վերաբերում է մեջքի վրա պառկած ձևով թաղմանը—սա համեմատաբար նվազ տարածված երևույթ է վաղագույն մետաղի դարերում։

Դիակիզումը մնացորդ է նեոլիթյան դարերից, որ շարունակում է իր գոյությունը պահպանել բրոնզի դարերում՝ համահավասար կերպով վերոհիշյալ թաղման երկու, ավելի հնագույն ծագում ունեցող ձևերի հետ (1, 150—153)։ Դիակիզման փաստը հնագիտական մի ապացույց է, որ տվյալ դամբանն իր բրոնզե իրերով անվերապահորեն կարող է պատկանել միայն զուտ բրոնզե դարերին։ Դիակեզ դամբաններ հանդիպում են գլխավորապես Ղարաբաղի շրջանում (Խոջալու), Գանձակի գավառում (ИАК,

вып. 16, 12), Նոր-Բայազետի գավառում (ԱՀ, XV, 168. ԼԴՔ, 111—113), Դարալագյազում (ԱՀ, XII, 247)։

Դիակիզումը Գանձակի գավառում տեղի է ունեցել հենց դամբարանների մեջ։ Այդ դամբարանների պեղումներից երևում է, որ դիակիզումը կատարվել է գերեզմանի մեջ՝ գերաններից շինված հատակի վրա, որ զետեղված է եղել դիակը, իսկ հատակի տակ դարսված են եղել վառելափայտ, ցախ և այլ վառելանյութ։ Գտնված են նաև երկու հարկանի հատակներ, ըստ որում առաջին հատակի վրա դրված էր դիակն իր Թաղման կենցաղային իրերով, իսկ երկրորդի վրա՝ անասուններն ու ստրուկները և ապա այդ ամբողջը վառում, բոցերի ճարակ էին դարձնում (МАК, VI)։ Նոր-Բայազետի գավառում ևս դիակիզումը տեղի է ունեցել գերեզմանների մեջ։

Դամբարանների մեծ մասը պարփակում են անհատական կմախքներ, բայց կան նաև դամբարաններ հավաքական Թաղումով։ Վերջին տեսակի դամբարանները վկայում են տոհմային հասարակության գոյության մասին, որը բրոնզի ու վաղ երկաթի դարերում արդեն քայքայման սոցիալական շերտավորման է ենթարկվել։ Խմբական Թաղման մեջ նկատվում է, որ մեկն իր սոցիալական դիրքով բարձր է մյուսներից, որոնք, ամենայն հավանականությամբ հանդիսանում են նրա ծառաները կամ ստրուկները։ Սրանք վերևից գլխիվայր գցվել են գերեզմանի մեջ, որովհետև այդ կմախքներն անկարգ ընկած են գանգով ներքև, իսկ ոտներով վերև։ Երբեմն էլ այդ կմախքների գլուխները կտրված ու շարված են ոտներին, իսկ մնացած կմախքները դիզված են տիրոջ առջև։ Այդ խմբական Թաղումների մեջ միշտ հանդիպում են նաև կնոջ ու երեխաների կմախքներ, որոնք, անշուշտ, մեռած տիրոջ ընտանիքի անդամներն են և բռնի մահացվել են, ինչպես ծառաները և ստրուկները տիրոջ Թաղման ժամանակ, որպեսզի նրան ուղեկցեն հանդերձյալ աշխարհը։

Հարուստ մեռյալի հետ գերեզմանում Թաղում էին նաև ընտանի կենդանիներ։ Վ. Բելքն իր պեղած դամբարաններում գտել է ձիերի ու շների գլուխներ, Ժակ Մորգանը հայտաբերել է եզան գլուխ, Ա. Իվանովսկին, բացի սովորական կենդանիներից, երկու ուղտի ամբողջական կմախքներ, Եվ. Լալայանը—եզան, ոչխարի, գոմեշի, կզաքիսի կմախքներ և այլն։

Կիզման ենթարկված դիակների հետ միշտ հայտաբերվել են նաև զանազան ընտանի կենդանիների այրված կմախքների



ածխացած մնացորդներ։ Գանձակի մոտ մի դամբարանում Բեռլերը գտել է մարդու ածխացած կմախք, որի տակ եղել է ձիու նույնպես ածխացած կմախք. անտարակույս, մարդը Թաղված ու այրված է եղել ձիու վրա նստած դրությամբ (ИАК, XII)։

Դամբարաններում կմախքների հետ հայտաբերվում են բազմաթիվ իրեր՝ զենքեր, գործիքներ, զանազան ձևի անոթներ, զարդարանքներ, կերակրի, երբեմն էլ հանդերձի մնացորդներ։ Այս իրերն առաջին հնագիտական նշանակություն ունեն. այդ իրերի հիման վրա է, որ գիտությունը կարողանում է որոշել դամբարանների ծագման ժամանակը և տիրող կուլտուրայի բովանդակ պատկերը։ Դամբարանների իրեղեն բովանդակությունը որոշակի արտահայտում է տվյալ ժամանակի տնտեսական-արտադրական զարգացման աստիճանները, սոցիալական շերտավորումները, կենցաղի, արվեստի ու հավատալիքների զարգացումը։

Տիրապետող դասակարգի գերեզմանների իրեղեն պարունակությունը սովորաբար քանակով ավելի հարուստ է լինում և որակով բարձր։ Նմանապես տարբերվում են տղամարդկանց ու կանանց դամբարանները։ Տղամարդկանց գերեզմանների մեջ գերակշռում են զենքերն ու արտադրական գործիքները, իսկ կանանց գերեզմաններում՝ պաճուճանքներն ու զարդերը (ուլունքներ, ապարանջաններ, օղեր, մանյակներ, զգեստների կոճակներ, ֆիբուլաներ, գնդասեղներ և այլն)։

Կավե և այլ ամանները սովորաբար տեղավորում էին մեռյալի գլխի ու ոտների մոտ։ Այդ ամանները մեծ մասամբ լցված են եղել ուտելիքներով ու ըմպելիքով. դա հաստատվում է նրանով, որ պեղածո կավե ամանների մեջ երբեմն գտնվում են կերակուրների մնացորդներ (ցորեն, գարի) և զանազան կենդանիների ու Թռչունների ոսկորներ։

Երկար զենքերը (սեգերը, սրերը, նիզակները) սովորաբար դրվում են կողքի պատի երկարությամբ։ Մանր զենքերը (դաշույն, նետեր և այլն) զետեղվում էին մեռյալի վրա՝ իրենց պատկանելի տեղերում. դաշույնը գոտու մեջ խրած, նետերն իրենց պատյանակով մեռյալի կողքից ամրացած, աղեղն ուսի մոտ և այլն։ Դիակը, մանավանդ տիրապետող դասակարգի ներկայացուցիչներինը, Թաղում էին զգեստավորած ու պճնազարդված։

Գ

# ԳՈՐԾԻՔՆԵՐ

I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հնագույն, այսպես կոչված «նախապատմական» ժողովուրդների կուլտուրան, որ բնորոշվում է քարի և վաղագույն երկաթի ինդուստրիայով, ներկայումս հնարավոր է պատկերացնել հնագիտական հետախուզումների շնորհիվ հայտաբերված իրերի և կենցաղային նյութական միջավայրի ուսումնասիրությամբ: Այդ բոլոր իրերը, կենցաղային նյութական այդ մնացուկները համր հուշարձաններ են, որոնք, պատմագիտական արդի տեսությունների միջից անցնելով, դառնում են հզոր անցյալի, հնադարյան կուլտուրայի խոսուն վկաներ արխայիկ մարդու տնտեսական գործունեության, սոցիալ-հասարակական հարաբերությունների և բովանդակ աշխարհազգացողության: Իսկ գալով այդ նույն դարերի այն ժողովուրդների կուլտուրային, որոնց մասին մեզ հասել են պատմական տեղեկություններ, հնագիտական մնացորդները դառնում են թանկարժեք օժանդակ վկայություններ:

Ուստի կարևորագույն նշանակություն են ստանում Հայաստանի պեղածո իրերի և ընդհանրապես դամբանների և այլ հնավայրերի պարունակության ուսումնասիրման փորձերը, որոնք հետագա հեռանկարներ են բաց անում մեր առաջ: Դժբախտաբար այդ բոլոր պեղածո իրերն այսօր ցրված են զանազան թանգարաններում, նույնիսկ արտասահմանյան կենտրոններում, որով անմատչելի են դառնում լայն ուսումնասիրության համար, և հետազոտողը զրկվում է նրանց մանրազնին ու հանգամանորեն ծանոթանալու հնարավորությունից: Հին Հայաստանի հնագիտական իրերի այդ ցրվածության հետևանքով մինչև այժմ չեն կատարվել մանավանդ բազմաթիվ բրոնզե զենքերի համեմատական ուսումնասիրությունն ու նրանց հնագիտական համա-



կարգությունը: Բայց և այնպես առաջարկում եղած նկարագրական աշխատությունների և լույս տեսած ուսումնասիրական փորձերի, նաև մեր անձնական դիտումների հիման վրա տալիս ենք այդ պեղածո իրերի բնութագիրն այն չափով, ինչ չափով նրանք հանդիսանում են նյութական կուլտուրայի արտահայտիչ տարրերը:

Հայկական լեռնաշխարհում ծաղկող երբեմնի բրոնզի ու վաղագույն երկաթե դարերին պատկանող պեղված դամբաններում նկատելի է մետաղի երեք կարգի ինդուստրիա. ա) զուտ բրոնզի, որ համեմատաբար սակավաթիվ դամբաններում է արտահայտվել. բ) բրոնզի, որին խառն են սկսվող երկաթի ինդուստրիայի սակավաթիվ արտադրությունները և գ) զուտ երկաթե իրեր:

Առաջին կարգի դամբանների մեջ երբեմն խառն հանդիպում են հատուկտոր պղնձե ու քարե իրեր: Անշուշտ, այստեղ մենք գործ ունենք նախընթաց դարերի քարի ու պղնձի ինդուստրիաների մնացորդների հետ, որոնք սակավադեպ օրինակներով ավանդաբար շարունակում են պահպանվել որոշ իրերի պատրաստման արվեստի մեջ վաղագույն մետաղե դարերում: Օրինակ՝ նետերի ծայրերը—պղնձից կամ օբսիդիանից, դանակները—պղնձից, իլիկի գլուխները (առք, ճեղի)—քարից և այլն: Մի-երկու դեպքերում հայտաբերվել են դամբաններ՝ միմիայն պղնձե գործիքներով:

Բրոնզե ու վաղագույն երկաթե դարերի մեջ հայտնի հնագիտական իրերը նյութական կուլտուրայի տեսակետից թեև լրիվ չեն ներկայացնում Հայկական լեռնաշխարհի այդ հնագույն ժամանակների մարդկային կյանքը, որ շրջապատող բնության և գոյության կռվի մեջ հարաբերաբար նույնքան բարդ էր, որքան և այժմ, էլեկտրականության ու ատոմի դարում, երբ, կարծես, մարդը տեխնիկական գերագույն զարգացումով կարողանում է նվաճել շրջապատող բնությունը. այնուամենայնիվ այդ տեսակետից առաջնակարգ ուշադրության առարկա են դառնում հիշյալ հնագիտական պեղածոները, որոնք սերտորեն կապված են մարդու նյութական գոյության պայմանների հետ:

Հնադարյան մարդու գոյության կռիվը, լինի դա շրջապատող բնությունից նյութական բարիքներ յուրացնելու, թե գիշատիչ կենդանիների և իր նման մարդկանց հարձակումներից պաշտպանվելու համար — տարվել է այն միջոցներով, որոնք մարդը կարողացել է ստեղծել ու հարմարեցնել իր ձեռքն ընկած նյու-

թերից։ Դրանք այն գործիքներն են, որոնք մարդու գոյության արշալույսից սկսած, տասնյակ և հարյուր հազարավոր տարիների ընթացքում հետզհետե զարգանալով ու կատարելագործվելով, հասել են վաղագույն մետաղի ժամանակաշրջանին։

Մեզ հետաքրքրող վաղագույն մետաղի դարերում գոյություն ունեցող գործիքները մարդկային կենցաղի և արտադրական հարաբերությունների տեսակետից բաժանվում են երկու կարգի. տնտեսական գործիքներ, որոնք հասարակական խոշոր ունեին արտադրական նշանակություն և մարտական գործիքներ, այսպես՝ զենքեր։ Սակայն այդ բաժանումը պայմանական է, որովհետև գործիքների զարգացման այդ փուլում, շնորհիվ տիրող տեխնիկայի հատուկ պայմանների. գործիքների դիֆերենցացիան առայժմ չէր տարել շեշտված բնույթ։ Մենք տեսնում ենք, որ այդ ժամանակները միևնույն գործիքը թե տնտեսական և թե մարտական նշանակություն ուներ։ Բրոնզե տապարը ծառայում էր հնագույն մարդու թե տնտեսական նպատակներին (իբրև փայտ, քար հատող և կամ իբրև մուրճ՝ իր բութ կողմով) և թե մարտական նպատակներին (իբրև զենք). նիզակով ու նետով նա և՛ որսորդություն էր անում, հայթայթելով իր համար ուտելու միս, և՛ հարձակվում էր զործում թշնամու վրա հեռվից։ Դաշույնը նրան ծառայում էր միաժամանակ որպես դանակ և որպես հարձակվելու կամ պաշտպանվելու զենք և այլն և այլն։ Բայց և այնպես գործիքները, թեկուզ միևնույն գործիքները, մարդկային կենցաղում ծառայել են երկու ուղղությամբ, որպիսի հանգամանքը հիմք է տալիս այդ գործիքները ըստ նրանց էության ու նշանակության այնուամենայնիվ բաժանել վերը նշված երկու կարգերին։

Ահա այդ երկու ուղղությամբ, կենցաղային այդ երկու նշանակությամբ էլ փորձում ենք ստորև քննության առնել բրոնզե ու վաղագույն երկաթե դարերում որպես արտադրության միջոցներ տիրապետող գործիքները։

II

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Դանակ։— Արդեն քարեդարյան շրջանում տափակ, երկու կողանի օբսիդիանը, կայծքարը կամ ոսկորը ծառայում էին իբրև կտրող գործիք, այն է՝ իբրև դանակ։ Այդ նույն ձևը դանակը



պահպանում է նաև մետաղի դարերի սկզբներում և հետագայում. մետաղի արվեստի կատարելագործման շնորհիվ, ստանում է տափակ շեղբի ձև, որ իր էությամբ անփոփոխ հասել է մինչև մեր օրերը։

Հայտաբերված դանակների մեջ հանդիպում են թե պղնձե, թե բրոնզե և թե երկաթե օրինակներ։ Դանակները հայտաբերվում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց գերեզմաններում, մի հանգամանք, որ ապացուցում է նրանց բացարձակապես աշխատանքային. տնտեսական գործիք լինելու։

Դանակների կոթերը սովորաբար չեն պահպանվել։ Դրանից պետք է եզրակացնել, որ այդ կոթերը փայտից էին լինում, երբեմն էլ ոսկրից։ Դանակները մեծ մասամբ միասայր են. սակավ հանդիպում են նաև երկսայրեր։ Վերջին դեպքում նրանք ստանում են փոքր ու նեղ դաշույնի ձև։ Դանակների սայրին ծայրը սովորաբար մի փոքր կեռ է և սուր, իսկ վերին մասը, ուր ամրացվում էր կոթը, վերջանում էր տափակ կամ սրածայր փոքրիկ լեզվակով։ Այդ լեզվակի վրա լինում են 2—3 ծակեր, որպեսզի բևեռների միջոցով ամրացվեն կոթերը, որոնք բաղկանում էին կամ 2 շերտիկից, որոնց միջև ներդրվում էին տափակ լեզվակը, կամ մեկ կտոր փայտից, որի մեջ խրում էին սրածայր լեզվակը։

Պղնձե դանակներ, խիստ սակավաթիվ, հայտաբերվել են Կարմիր-վանքի (Նախիջևանի մոտ) ավերակներում և Աննենֆելդում (Ադրբեջան—Գանձակի գավառ)։

Ավելի մեծ թվով հանդիպում են բրոնզե դանակներ, որոնք բացառապես միասայր են։ Այդպիսի դանակներ մենք ունենք Նոր-Բայազետի, Երևանի, Դիլիջանի (Ռեդկին-Լագեր), Շիրակի, Լոռու և այլ գավառների դամբարաններից։ Հայտաբերվել են նաև Ղարաբաղում և Գանձակի գավառում։

Բազմաթիվ ու բնորոշ են երկաթե դանակները, իբրև հալշտատյան ինդուստրիայի մնացորդներ, որոնք գտնվել են Լոռու գավառում (Մուսի-Երի, Շեյթան-դաղի, Ախթալայի նեկրոպոլներում), Թոփրակ-կալեում (Վան)։ Երկաթե դանակները բրոնզե դանակների համեմատությամբ ավելի երկար են ու տափակ և միաժամանակ ավելի բարակ, որ հետևանք է երկաթ մետաղի կարծրության ու ամրության։ Երկաթե դանակները մեծ մասամբ ունեն ուղիղ, բայց երբեմն էլ կոր ձև։ Կորաձև դանակները նման են մանգաղին, և նրանց սայրը ձգվում է շեղբի գոգավորման

երկարությամբ։ Հանդիպում են նաև երկսայրի դանակներ՝ ուղիղ ձևով։ Թե կորաձև և թե երկսայրի նման դանակներ մինչև այժմ էլ կարելի է գտնել մեր ժողովրդական կենցաղում։

Բնորոշ են Ախթալայում գտնված երկու դանակները, որոնց կոթերը մի ամբողջություն են կազմում շեղբի հետ, զարդարված լինելով միաձույլ մետաղից։ Սրանցից մեկն ունի երկարաձիգ օղակաձև կոթ, իսկ մյուսը՝ քառանկյուն զանգվածեղ կոթ։

Կամ։—Ժակ Մորգանը Ախթալայի իր պեղած դամբաններից մեկում գտել է ամբողջովին պահպանված և երկու տախտակներից բաղկացած կամ, ինչպիսին սովորաբար կալի համար մինչև այսօր էլ գործ է ածվում հայկական գյուղերում և ընդհանրապես Անդրկովկասում ու Առաջավոր Ասիայում։ Թեև այդ գերեզմանը պատկանում է վաղագույն երկաթե դարին, սակայն պետք է ենթադրել, որ այդպիսի կամեր գործածվելիս են եղել նաև բրոնզեդարյան երկրագործական կենցաղում։ Այս ենթադրությունը մասամբ բղխում է այն պարագայից, որ եթե այսօր էլ, Ախթալայի թաղումից գրեթե 3 հազար տարի հետո, գործածության մեջ մնացել է նույն այդ ձևի գործիքը, ապա էլ առավել նա կարող էր գոյություն ունենալ բրոնզի դարերում, եթե նկատի առնենք երկրագործական գործիքների զարմանալի պահպանողական բնույթը։ Իսկ եթե բրոնզի դարերից մեզ չեն հասել ամբողջական ձևով այդ տեսակ կամեր, ապա դա պետք է բացատրել նրանով, որ փայտե մասերն այդքան դարերի ընթացքում կփտեին ու կփչանային։

Հիրավի, Ժ. Մորգանը Շեյթան-դաղի, Մուսի-երիի ու Ախթալայի ավելի հնագույն դամբաններում, որոնք պարունակում էին բնորոշ բրոնզե ինվենտար, գտել է բազմաթիվ սրածայր մանրիկ այն քարերը, որոնք ամրացված են եղել կամերի փայտերի մեջ և ծառայում էին հացահատիկների հասկերը ջարդելու համար։ Ամենայն հավանականությամբ կամերից մնացած այդպիսի սրածայր մանրիկ քարերի հանդիպած կլինեին նաև մեր այլ հնագետ-պեղողները, սակայն նրանց ուշադրությունից կարող էր վրիպած լինել այդ տեսակ քարերի նշանակությունը, քանի որ դրանք խառնված էին լինում հողակույտերի մեջ և կարող էին աննկատելի մնալ։

Մանգաղ։—Տակավին քարե դարերում հանդիպում ենք օբսիդիանից շինված մանգաղներ, որոնք իսկապես խորը կորություն ունեցող դանակներ են, ողորկ կամ սղոցաձև սայրով։ Այդ օբսիդիանե մանգաղներն ամրացվում էին անշուշտ փայտե, կամ ոսկրե, գլխավորապես եղջյուրե կոթերին։ Նույնպիսի ձև ունեն բրոնզե ու վաղագույն երկաթե դարերից մնացած մանգաղները, որոնք, պետք է ասել, սակավաթիվ օրինակներով են հանդես գալիս պեղածո իրերի մեջ։ Մեր այժմյան մանգաղները նույնությամբ պահպանել են այդ վաղեմի ձևը։

Եղան։—Սա բրոնզե մի երկժանի է, որի օրինակը գտնվել է Մուսի-երիի (Ժ. Մորգան), մեկ օրինակ Գանձակի գավառի (Վ. Բելք), երկու օրինակ Նոր-Բայազետի գավառի Գառնաշարի ու Ադիամանի (Երվ. Լալայան) դամբաններում։ Սրանք բաղկացած են 25—27 սմ. երկարությամբ անամեջ կոթից, որի վրա ձգվում են 2 սրածայր ժանիք, յուրաքանչյուրը 35—41 սմ. երկարությամբ և իրարից 15 սմ. հեռավորությամբ։ Կոթի ստորին մասը, ինչպես ցույց է տալիս Մուսի-երիի օրինակը, զարդարված է օղակաձև շրջանակներով։

Ինչպես հայտնի է, ներկայումս էլ մեր գյուղացիական կենցաղում իբրև գործիք գոյություն ունի եղանը, որ բացառապես փայտից է շինված. խոտ հավաքելու, այն էլ ներկա տեխնիկական պահանջներից ելնելով, գործածվում են նաև երկաթե ժանիքներով եղաններ։ Բայց այն հանգամանքը, որ դամբաններից հանված երկժանիները բրոնզից են ու նկարազարդ կոթերով և իրենց արտաքին ձևով, կարծես, չեն համապատասխանում երկրագործական աշխատանքի պահանջներին (ժանիքների նրբությունն ու չափազանց երկարությունը և այլն), իսկ մյուս կողմից այն հանգամանքը, որ այդ երկժանիները գտնվել են թաղման առանձնահատուկ պայմաններում, այն է՝ Ադիամանում—իշխանական դամբանի մեջ, իսկ Մուսի-երիում՝ մի կարկառի տակ թաղված կենդանիների ոսկրների ու մարդկային կմախքի մոտ, մի քանի հետազոտողներ այդ գործիքին տվել են այլ նշանակություն։ Ժակ Մորգանի կարծիքով՝ դա սրբազան նշանի պատկանելիք է (JMMS, I, 134—136)։ Ուրիշների ենթադրությամբ՝ դա իշխանության խորհրդանշան է։ Արդարև, այդ կարծիքներն ունեն իրենց հիմնավորումը։ Հնում երկժանին միաժամանակ թե իրական գործիք և թե իշխանական կամ սրբազան պատկանելիք էր հանդիսանում։ Վերջին նշանակությունը բացահայտ է հնագարյան մի քանի քանդականկարներից, որոնց աստվածները ներկայացվում էին ձեռքներին երկժանի բռնած[34]։

Ըստ երևույթին, Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել նաև եռաժանի: Թոփրակ-կալեում (Վան) Լեման-Հաուպտը և Վ. Բելքը հին խալդական տաճարի ու պալատի մնացորդները պեղելիս՝ հայտաբերել են երկաթե մի եղան, որ թեև բաղկացած է եղել 2 ժանիքներից, սակայն այդ 2 ժանիքների դիրքն ու կոթառի մեկ կողմում մնացած հետքից պետք է եզրակացնել, որ այդ կողմում եղել է 3-րդ ժանիքը, որը, անշուշտ, կոտրվել ու անհետացել է: Անտարակույս, այս տիպի եռաժանին ծառայել է բացառապես իշխանական կամ քրմա-պաշտամունքային սիմվոլի խնդրով (JHM, 102):

Նմանապես կարծիք է հայտնվել, որ եռաժանին գործածվելիս է եղել նաև իբրև զենք: Այս կարծիքը ոչ մի հիմք չունի, մանավանդ եթե նկատի առնենք, որ բրոնզե բարակ ժանիքները թույլ և նկուն լինելով, միանգամայն անպետք են դարձնում այն որպես զենք գործածելու համար:

Բայց և այնպես այդ ամենը հիմք չի տալիս ժխտելու եռաժանու տնտեսական գործիք լինելու հանգամանքը: Հենց նրա սրբազան կամ իշխանական պատկանելիք հանդիսանալու տեսակետը բղխում է այդ առարկայի տնտեսական նշանակությունից: Եղանն իր զուտ երկրագործական համատարած նշանակությամբ հնագույն մարդու մեջ առարկայացել է որպես սրբազան-քրմական կամ իշխանական խորհրդանշան: Իշխանական խորհրդանշանի (էմբլեմ) գաղափարը ծագել է նրանից, որ եղանը գյուղատնտեսական-երկրագործական աշխատանքների ժամանակ, ամենայն հավանականությամբ, պատրիարխալ կենցաղային միջավայրում, եղել է միշտ գերդաստանի հոր, նահապետի ձեռքին: Իսկ նահապետը, գերդաստանի գլուխը, միշտ հանդիսացել է գերդաստանական աշխատանքի կազմակերպողն ու ղեկավարը, գերդաստանի իրավական պետը, որ իր ձեռքում էր կենտրոնացրել բովանդակ իշխանությունը գերդաստանի բոլոր անդամների վերաբերմամբ, արտահայտելով դա հասարակական կյանքում թե՛ սոցիալ-տնտեսական հարաբերություններում և թե՛ հոգևոր-պաշտամունքային ծիսակատարություններում: Այնուհետև, երբ տոհմային համայնքին հաջորդում է սոցիալապես շերտավորված հասարակությունը, տոհմային նահապետի սոցիալ-տնտեսական նշանակությունը բյուրեղանում է ցեղական իշխանի տիրապետության գաղափարի մեջ, դա ալլեգորիորեն կարող էր արտահայտվել եռաժանիով, որպես նախկին ղեկավարող նահապետի ձեռքին



եղած տնտեսական գործիք, որի գյուղատնտեսական նշանակությունն արդեն խորհրդանշանի ձևով շարունակում է պահպանել իր դերը, իբրև ցեղապետի կամ իշխանի իրավազորության սիմվոլիկ արտահայտությունը:

Եթե պեղածո իրերի մեջ մեզ հայտնի եռաժանիներն իրենց արտաքին ձևով հիրավի սրբազան կամ իշխանական նշաններ են հանդիսանում և եթե պեղված դամբարաններում մինչև օրս չեն հայտնաբերվել խակական աշխատանքային եռաժանի եղաններ, այդ պետք է բացատրել նրանով, որ հիշյալ գործիքը այդ արխայիկ ժամանակներում, ինչպես և ներկա մեր գյուղացիական կյանքում, եղել է բացառապես փայտից, որ, անշուշտ, տասնյակ դարերի ընթացքում չէր կարող չփոշիանալ հողի մեջ փտելուց: Իսկ կրոնական-պաշտամունքային և իշխանական նշանակություն ստացած եռաժանին, անտարակույս, շինվում էր ավելի ազնիվ, ավելի թանկարժեք նյութից, որպիսին այն ժամանակները բրոնզն էր:

Խոփ:—Թոփրակ-կալեի խալդական տաճարի ավերակ տնտեսական շենքերի պեղումների ժամանակ հայտնաբերվել է մեկ հատ երկաթե թիականման խոփ, որն ունի խիստ պրիմիտիվ ձև (LHM, 102): Թեև այդ գործիքը հանված է VIII դարի (մեր թվ. առաջ) կուլտուրական շերտից, բայց իր տեսքով ու նշանակությամբ նա ավելի հնագույն կաղապար է ներկայացնում: Այն արխայիկ ժամանակները երկրագործության մեջ կիրառվող կամը, որ իր էությամբ ու կառույցի հարազատությամբ Հայկական լեռնաշխարհում պահպանվել է մինչև մեր օրերը, հիմք է տալիս կարծելու, որ Հայաստանի հնամենի գյուղական վայրերում հողը հերկելու համար կիրառվող այսօրվա հնավանդ արորը, նույն տրամաբանական հետևություններով, նույնպես եղել է բրոնզե ու վաղագույն երկաթե դարերի հողամշակման գլխավոր գործիքը: Արորն ամբողջովին եղել է փայտից և իբրև խոփ ծառայող նրա սրածայր կեռ մասը, անշուշտ, վաղագույն երկաթե դարերում կարող էր փոխարինվել թիականման երկաթե խոփով, որն ավելի դիմացկուն էր և ավելի նպատակահարմար: Այստեղից արդեն արորը կարող էր վերափոխվել նախնական պարզ ու պրիմիտիվ ձևի գութանի:

Մեր երկրի հնագիտական պեղածոներում մինչև այժմ հայտնաբերված չեն արորի մնացորդներ, թերևս այն պարզ պատճառով, որ նրա փայտե մասերը փտած ու փոշիացած կլինեին հա-

դարավոր տարիների ընթացքում։ Սակայն տեսնում ենք, որ մնացել է երկաթե խոփը՝ խաղաղական ժամանակվա արորից կամ պրիմիտիվ, նախնական ձևի գութանից։

Ոչ մի տարակույս չկա, որ խոփը նախնադարյան երկրագործական բրիչից է զարգացել։ Արորն ինքնին, նույն բրիչն է, բայց իր կատարելագործությամբ հարմարեցված է հողը փխրելուն՝ քաշելու եղանակով, որ կատարվում էր անասուններ կամ մարդիկ լծելով։ Բրիչը և արա արորը սրածայր ամուր փայտից էր, որ մետաղե դարերում արդեն փոխվում է մետաղե բրչածայրի և արա թիակի կամ բահի ձևի վերջավորությամբ, որն իր հերթին հետագայում առնում է խոփի ձև։ Սակայն մետաղե խոփի երևալով՝ փայտե արորը չի վերանում ասպարեզից. նա շարունակում է զուգահեռ գոյություն պահպանել հետամնաց գյուղատնտեսական պայմաններում մինչև մեր օրերը, մանավանդ այնպիսի տեղերում, ուր կարիք չէր զգացվում խոր ակոսների։ Նույնիսկ ներկայումս ամբողջ հարավ-արևելյան Աֆրիկայում վայրենի ցեղերը գաղափար չունենն ոչ արորի, ոչ էլ գութանի մասին, այլ կանայք, որոնք, պետք է ասել, հիմնա երկրագործներ են, հողը մշակում են միմիայն բրիչներով։

Մետաղե խոփը, ինչպես հաստատվում է հնագիտական տվյալներով, երևացել է միայն երկաթե դարերում։ Այդպես եր Եվրոպայում, ուր երկաթե խոփը երևացել է լատենյան ժամանակաշրջանում (էջ 17), հին Եգիպտոսում, որը երկրագործական ամենահին երկրներից մեկն է համարվում, այն երևան է եկել Նոր Թագավորության դարերում (մոտավորապես 1580—1200 Ք.Ք. մեր թվականությունից առաջ)։ Մինչև այժմ ոչ մի պղնձե կամ բրոնզե խոփ չի հայտաբերվել և հավանորեն այդպիսիներն երբեք գոյություն չեն ունեցել մետաղե դարերում, քանի որ պղինձն ու բրոնզը, իրենց նվազ կարծրության հետևանքով, միանգամայն անհարմար էին հողը հերկելու համար։

Ընդհանրապես հնագիտական նյութերը մինչև օրս այնքան սուղ են, որ դժվար է պատկերացնել խոփի զարգացումը։

Ագորիճներ:—Կանգ չենք առնում այս քարե գործիքների վրա, որոնք բրոնզե ու վաղագույն երկաթե դարերում պահպանել են նույն ձևն ու նշանակությունը, ինչ որ ունեին նախորդ քարե դարերում և որոնց մասին արդեն խոսել ենք սույն աշխատության 1 հատորում։

Սրոց:—Պեղածոների մեջ դանակի հետ միասին գտնվում են



նաև սրոցներ, որոնք լինում են, անշուշտ, միայն մետաղե գործիքների շարքում։ Սրանք սովորաբար հրաբխային քարից են, իհարկե ամենակարծր, ամենապինդ ու ամենաթանձր տեսակի կայծքարից։ Սրանք բազմատեսակ ձևի ու մեծության են լինում. կան կոնաձև, ուղղանկյունաձև, ձվաձև և այլն։ Երկարությունը լինում է մոտավորապես 5 սմ.-ից մինչև 20 սմ., հաստությունը՝ 1,5—3 սմ.։ Սրոցը գործ էին ածում ոչ միայն դանակ, այլև հավանորեն, մանգաղ, տապար և զենքեր, օրինակ՝ դաշույն, սուսեր, նիզակներ ու նետեր սրելու համար։ Սրոցների մի ծայրը լինում է ծակ, երբեմն էլ այդ ծակից հանգուցված է լինում բրոնզե կամ երկաթե փոքրիկ օղակ, որով սրոցը կախում էին գոտուց։

Ասեղ:—Կանանց դամբաններում գտնվում են բրոնզից ու երկաթից, դանազան մեծության, 10 սմ. միջին երկարության ասեղներ, որոնք ծայրում ունեն թել անցկացնելու ծակ։ Կան նաև մախաթներ ու բիզեր, հավանորեն կաշեղեն կարելու համար։ Մախաթները և բիզերը, բացի բրոնզից կամ երկաթից, լինում են նաև ոսկրից։

Թեշի:—Այս գործիքի միայն գլուխն է հայտաբերվել, քանի որ նրա ձողիկը, փայտից լինելով, փտել-փոշիացել է։ Թեշիի գլուխները, որոնք մեզ հասել են վաղագույն մետաղե դարերից, միայն ոսկրից են։ Ամենայն հավանականությամբ այն ժամանակները եղել են, ինչպես և ներկայումս, գուցե ավելի շատ, փայտե գլուխներ։ Թեշիի գործածությունն սկսվել է տակավին նեոլիթյան դարում, որպիսի ժամանակներից մեզ հասել են նրա կավե ու քարե գլուխները։

Վաղագույն մետաղի դարի թեշիի գլուխները հար և նման են ներկայումս էլ Կովկասում և Առաջավոր Ասիայում գործածվող օրինակներին։ Սրանք կիսագնդի ձև ունեն և մեջտեղը ծակ՝ թեշիի ձողիկն ամրացնելու համար։ Թեշիի գլուխները երբեմն զարդարված են լինում ատամնաձև նշաններով կամ ճառագայթաձև գծերով։

Հերուններ:—Սրանք մեծ մասամբ ոսկրից ու եղջյուրից են։ Որպես քարեդարյան կուլտուրայից ավանդաբար փոխանցված գործիքներ, հերունները տնտեսական կենցաղում կիրառվում էին իբրև բիզեր, մորթին ու կաշին կարելիս՝ ծակելու համար։ Հավանական է, որ հերունները գործ են ածվել նաև իբր զենք, ձեռքի հատու գործիք՝ խողխողելու, մոտիկից սպանելու համար։

Սևանի շրջանի դամբարաններից մեկում՝ կմախքների մոտ, որ անշուշտ սարուկների էին եղել, որոնք սայանվել էին իրենց տիրոջ հետ միասին թաղվելու համար, գտնվել է եղջյուրի մի հերուն (ՀԴ-Գ, 90)։ Հավանաբար այդ գործիքով են սայանվել սարուկները։

## III

## ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Տապար։ — *Տապարը համատարած երևույթ է բոլոր ժողովուրդների կենցաղում։ Նա մի կողմից՝ ծառայել է և այժմ էլ ծառայում է որպես աշխատանքի գործիք, իսկ մյուս կողմից՝ բրոնզի ու վաղագույն երկաթե դարերում եղել է մարտական գործիք։ Մետաղե տապարը ծագել է հնաքարի (պալեոլիթի) մարդու կենցաղում այնքան մեծ նշանակություն ունեցող հարվածաքարից՝* cour de point-*ից։ Վերջինս համատարած գործիք է եղել երկար ու ձիգ դարերի ընթացքում, սկսած էոլիթից մինչև մետաղե գործիքների երևալը։ Հարվածաքարը, միանալով փայտե կոթին, դառնում է իսկական մուրճ, այնուհետև՝ մուրճ-կացին և ապա՝ կտրող, հատանող տապար։*

*Քարե մուրճն իր վերին ու ստորին ծայրերում բութ է, և քարն ամրացվում էր փայտե, երբեմն էլ եղջյուրե կոթին[23], կապելով կամ ձյութի միջոցով նստեցնելով փայտի ու եղջյուրի մեջ փորված բնում և կամ կոթն անցկացնելով քարե ծակի մեջ։ Մուրճ-կացնի մի ծայրը բութ է, իսկ մյուսը՝ սուր. կտրող մուրճը, այլապես՝ տապարը, երկու կողմից էլ, թե վերին և թե ստորին, սրված է։ Այդ երեք ձևի գործիքները միաժամանակ ծառայում էին թե տաշելու և կտրելու, թե հարվածելու և թե նետելու համար։ Առաջին դեպքում այն հանդիսանում էր աշխատանքի գործիք, իսկ վերջին երկու դեպքերում դառնում էր զենք։*

*Բայց մարդկային կենցաղում ունիվերսալ գործիք հանդիսանում է տապարը, որ իրոք ոչ մի առնչություն չունի մուրճի հետ։ Մետաղագործության ծագումով՝ քարե մուրճերը չեն փոխարինվում բրոնզե կամ երկաթե մուրճով և իբրև առանձին գործիք հետզհետե չքանում են մարդու արտադրական միջոցների շարքից։ Միայն հետագա նորագույն մետաղի ինդուստրիայում, երբ սկիզբ է առնում աշխատանքի բաժանումը, երևան են գալիս երկաթե մուրճեր, որպես աշխատանքի առանձնահատուկ գործիքներ։ Այդպիսի երկաթե մուրճ, որ պատկանում է խալդական կուլտուրային, գտնվել է Թոփրակ-կալեի բրածոներում։ Իսկ տապարը, իբրև գործիք, միշտ, մինչև այսօր էլ պահպանում է իր գոյությունը, իսկ իբրև զենք նա գոյություն ուներ Եվրոպայում մինչև միջին դարերի վերջերը, մինչև հրազենի գյուտը։*

*Տապարի կաղապարը, գոյանալով հնագույն քարե մուրճից, չնայած իր երկարատև գոյությանը և համատարած ծավալմանը, անվթար պահպանել է իր սկզբնական ձևը ու ոչ մի շոշափելի փոփոխման չի ենթարկվել։ Նա մինչև այսօր էլ պահպանել է իր իսկական տեսագիծը, հատանող գործիքի կամ դուրի* (ДОЛОТО) *տիպարը։ Միակ փոփոխությունը, որ նկատելի է երկար ու ձիգ դարերի ընթացքում, եղել է միայն շեղբը կոթի հետ ամրացնելու ձևը, որ դանդաղ ժամանակներում, կուլտուրական դանդաղ աստիճաններում, կրել է տիրող արտադրական միջոցների զարգացմանը համապատասխան բնույթ։ Մենք տեսնում ենք, թե ինչպես պղնձե ու բրոնզե դարերից մեզ հասած հնագույն նախնական տապարները, որոնք հնագիտության մեջ հայտնի են* ցելտ *անունով, հարազատությամբ պահպանել են քարե տապարների հար և նման գծերը։ Եթե քարե դարերում և բրոնզի սկզբնական շրջանում տապարը կոթին ամրացվում էր կապելով, ապա հետագայում այդ կոթն ամրացվում էր ուղղակի խրելով (առանց օրեն կապի) կոթառի մեջ, որը տապարի վերին մասում երկու թևերի կորացումով գոյացած անամեջ կոնն էր կամ տափակ կողի մեջ բացված անցքը։*

*Տապարի համատարած նշանակությունն ու դերը մարդկային նյութական կուլտուրայի զարգացման դարավոր ընթացքում, որպես արտադրական միջոց, հետագայում, նախնադարյան հասարակության քայքայման հետևանքով, առնում է արտադրական հարաբերությունները քննարկող սոցիալական խորհրդանիշի (էմբլեմ) գաղափար՝ դասակարգային տիրապետության իմաստով։ Տապարի մեջ տեսնում էին իշխանության, գերագույն դիրքի, աստվածային արժանապատվության նշանաբանները, ինչպես այդ տեսանք երկժանիի վերաբերմամբ։ Այս դեպքում տապարն առնում էր երկակի ձև, որ այնքան մեծ ծավալ էր ստացել Էգեյա-Միկենյան, Փոքր Ասիայի և Առաջավոր Ասիայի կուլտուրական կենտրոնների պաշտամունքներում։ Հաթական Թեշուբ աստվածը ձախ ձեռքին ուներ «երկակի սակր», որը նրա աստվածության նշանն էր համարվում։ Կրետե-Միկենյան աշխարհում մենք հանդիպում ենք բրոնզե «երկակի սակրերի», որոնք գործածվում*

էին իբրև Թագավորի իշխանության նշանակ և ունեին նաև կրոնա-պաշտամունքային նշանակություն[30]: Հին Հռոմում լիկտորները (հասարակ պաշտոնյաները) դատավորի առջևից տանում էին կեչիի (թթենու) և ծփիի ճյուղերի կապուկների մեջ ցցած տապար, որպես իշխանության խորհրդանիշ: Հին Ասորեստանում, ընդհանրապես Միջագետքում, տապարը (hasinnu) հանդիսանում է ասորերքի գլխավոր աստված Աշուրի խորհրդանիշը: Վերջապես, թագավորներին ուղեկցող թիկնապահները, ինչպես, օրինակ՝ միջնադարյան Եվրոպայում, իրենց ուսերին կրում էին տապարներ, որոնք խորհրդանիշ էին հանդիսանում:

Տապարը համատարած է եղել և Հայկական լեռնաշխարհում՝ վաղագույն մետաղի դարերում: Բրոնզե տապարները նույնիսկ տեղական արդյունագործության արտադրանքներ են եղել և, ըստ երևույթին, կարևոր տեղ էին բռնում Հայկական լեռնաշխարհի բրոնզի ինդուստրիայում, ինչպես կարելի է եզրակացնել Լենինականի Մսի կոմբինատի շինարարության վայրում հայտնաբերված արխայիկ ձուլարան-արհեստանոցի և բրոնզե տապարի ձուլման համար ծառայող քարե կաղապարների գյուտից, որոնց մասին խոսվեց վերը: Հնագիտական պեղումներով ու դիպվածական գյուտերով հայտնաբերված բրոնզե ու երկաթե տապարները մեծ նմանություն ունեն Ասորա-Բաբելաստանում, Փոքր Ասիայում և նույնիսկ Եվրոպայում հնագիտական պեղումներով հայտնի դարձած տապարներին: Հայկական լեռնաշխարհում էլ տապարը գործածվել է և՛ իբրև աշխատանքային գործիք և՛ իբրև զենք: Հին Հայաստանի այդ տապարները կարելի է բաժանել երեք հիմնական ձևերի:

1. Տափակ տապար, առանց կոթառի. Շեղբի սայրը լինում է ուղիղ, երբեմն էլ մի փոքր կորացած դեպի դուրս. շեղբի վերին մասը վերջանում է լեզվակով, որը բաժանվում է շեղբի վերին մասից հազիվ նկատելի գոտիով. շեղբի վերին մասի երկու ծայրերին լինում են փոքրիկ անկյունավոր ցցվածքներ: Այդ լեզվակին ու ցցվածքներին է ամրացվում կոթը՝ կապելու միջոցով: Հավանական է, որ այս ձևի տապարները նաև շեղակի ամրացվեին կոթին և ստանային այժմյան մեր ուրագի ձևը: Այս տափակ տապարները նման են ցելտերին, որպիսի հանգամանքը ապացույց է, որ այս ձևի տապարները ստորև նկարագրած մյուս երկու ձևերի համեմատությամբ, ավելի հին ծագում ունեն և իրենց տիպով բրոնզի դարերի նախնական շրջանին են պատկանում:



Տափակ տապարները ծառայում էին իբրև տնտեսական գործիք՝ տաշելու, կտրելու, փորելու համար և այլն, թեև չի կարելի բացասել, որ սրանք չգործածվեին նաև իբրև մարտական գործիք, օրինակ՝ Ուսանացոց Վարդաշեն գյուղում հայտնաբերված Կոտանի տիպի տապարը կամ այն օրինակները, որոնք խիստ փոքր են և աշխատանքային գործադրության համար միանգամայն անհարմար: Անշուշտ, սրանք ծառայում էին, շնորհիվ իրենց փոքր չափի, թշնամուն հարվածելու համար՝ նետելու կամ նշանառությամբ շպրտելու եղանակով: Այս ձևի մարտական տապարի տեսակին է պատկանում Նոր-Բայազետի պեղումներից հայտնաբերված փոքրիկ տապարը (կոթառով), որի շեղբն ունի 5 սմ. երկարություն, իսկ սայրը՝ 3 սմ. լայնություն[31]:

Տափակ ձևի վերոհիշյալ տապարները գտնվել են Նոր-Բայազետի, Ուզկեն-Լագերի և Մուսի-Լերի դամբարաններում, ինչպես նաև Ադրբեջանում (Շուշի, Շամքոր, Հելենենդորֆ): Մուսի-Լերի տապարը հնագույն երկաթի է:

2. Սակր (секира), որ զանգվածեղ խոշոր տապար է, բոլորաձև սայր ունեցող շեղբով. սայրի երկու ծայրերը մահիկաձև թևերով բարձրանում են դեպի վեր: Կոթառը մեծ անցքով է և շեղբից սովորաբար բաժանվում է գոտիով: Շեղբի գլուխը, այն է՝ կոթառը, երբեմն տափակ և բութ է լինում, ստանալով ցածրադիր մուրճի ձև, երբեմն էլ ունի 3—4 ցցված ատամներ:

Այս ձևի տապարները հնագիտության մեջ հայտնի են «Ամազոնյան սակր» անունով. դրանց նկարները հանդիպում են հին հունական կերամիկ վազաների վրա, նաև Բողազ-քյոյի ավերակներում հայտնաբերված հեթեական մի թագավորի պատկերում, որ իր ուսին կրում է այդ ձևի մի տապար (CSA, 248):

Սակրերը, անշուշտ, գործ էին ածվում որպես զենք և այս, ինչպես վերը նշել ենք, որպես իշխանության ու արքայական խորհրդանիշ և միանգամայն անհարմար էին տնտեսական գործիք լինելու: Այս ձևի տապարները դամբարաններում գտնվում էին կմախքի աջ ուսի վրա, որ արդեն պարզորոշ ապացույց է նրանց ռազմական նշանակության:

Այդպիսի սակրեր, բացառապես բրոնզե, հայտնաբերվել են Լոռում, Նոր-Բայազետում, Աղստևաձորում (Էջմիածնի գավառ), Շուշու և Գանձակի գավառներում, Վարդաշենում (Նուխու գ.) և այլն:

Հնագույն պատմական շրջանում ռազմական նպատակով գործում էին հատուկ զորախմբեր, որոնք զինված էին բացառապես տապարներով: Այդպիսի զորախմբեր կային օրինակ՝ Ասորեստանում, Եգիպտոսում և այլուր: Հին Հայաստանի զորքերի մեջ էլ կային հատուկ ջոկատներ, որոնց զինվորները կոչվում էին սակրավորներ[38]:

Սակայն մեր պեղածո սակրերի մեջ հանդիպում են նաև այնպիսի օրինակներ, որոնք թաղված են մեռյալների հետ սոսկ կրոնա-ծիսական նշանակությամբ, պաշտամունքային իմաստով: Այս տիպի սակրերը փոքր չափի են, որ բնավ չէին կարող իբրև զենք ծառայել: Նմանապես այդ նշանակությունն ունի Նոր-Բայազետի պեղումներում հայտնաբերված բրոնզե սակրը, որի կոթառի անցքի միջով հանցուցված է բրոնզե մի մեծ օղակ, ըստ երևույթին կախելու և ոչ թե կոթին ամրացնելու համար:

3. Երրորդ ձևի տապարները, որոնք պատկանում են վաղագույն երկաթե դարերի սկզբնական շրջանին, իբրև ներկայացնում են մուրճ-տապարներ: Սրանք երկթևանի են, մեջտեղը, կենտրոնում, ունենալով ծակ կոթառ, որի մի կողմը շինված է սովորական սեպաձև տապարի շեղբը, իսկ հակառակ կողմը՝ քառակող կամ 6-կողանի զանգվածեղ մուրճ գրեթե նույն երկարությամբ, ինչ և տապարի շեղբը: Այս տիպի տապարներ հայտնաբերվել են Մուսի-Երիի (Լոռի) դամբարաններում (JMMS, I, 98):

Անտարակույս, այս ձևի տապարները ծառայել են բացառապես իբրև տնտեսական գործիք: Երկաթե դարաշրջանում զենքի արտադրության արհեստն այնքան կատարելագործվել էր ու զենքերի տիպարներն այնքան զարգացել էին, որ տապարն սկսում է կորցնել իր վաղեմի մարտական նշանակությունը: Ռազմական գործում սկսում են գերակշռող տեղ բռնել ավելի թեթև դաշույնը և սուսերը, որոնք, երկաթից պատրաստվելու շնորհիվ, իրենց բրոնզե նախորդների համեմատությամբ, ստացել էին ավելի մեծ կարծրություն, մեծ դիմացկունություն և ավելի թեթև շարժունակություն:

Դաշույն: — Մետաղե դաշույնը չափազանց հանրատարած զենք է, որ ծագում է մետաղե դարերի սկզբից և շարունակում է իր հարատևությունը մինչև այսօր, մանավանդ ասիական երկրներում: Հայկական լեռնաշխարհի հնագիտական պեղածոների մեջ դաշույնն իր քանակով ու ձևերով առաջնակարգ տեղ է գրավում, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն ուներ նա հնագույն կուլտուրայում: Դաշույնն իր այդ նշանակությամբ ու դերով տապարի հետ համահավասար տեղ է բռնում մարդկային հին կենցաղում:



Դաշույնի ծագումը պետք է համարել դանակից, որի գործածությունը մենք տեսնում ենք տակավին քարեդարյան շրջանում, երբ քարից, գլխավորապես օբսիդիանից, պատրաստված դանակը, չնայած իր համեմատական փոքրության, ծառայում էր միաժամանակ իբրև տնտեսական գործիք, նաև իբրև զենք, հանդիսանալով քարե դաշույն: Մետաղագործության հետ միասին, երբ հնարավոր է լինում ցանկացած ձևը տալ դանակին ու մեծացնել նրա չափը, երբ կատարելագործվում է զենքեր շինելու արվեստը և զարգանում է մարտական գործիքների հարմարեցումը հարձակման ու պաշտպանման պահանջներին, միայն քարե դանակ-դաշույնը վերափոխվում է երկսայրիի և ստանում է այժմյան դաշույնի ձևը, որ իսկապես սրածայր ու լայնաշեղբ երկսայրի մեծ դանակ է հանդիսանում:

Դաշույնը դառնում է ունիվերսալ մի զենք, որն առաջին առավելություններ ուներ և հնարավորություն էր տալիս մարտիկին միևնույն զենքով թե հոշոտել ու խողխողել և թե հարձակվել ու պաշտպանվել: Մինչդեռ քարե դանակ-դաշույնը, իր քարեղեն նյութի պատճառով, սահմանափակ մեծություն ուներ, բրոնզից և մանավանդ երկաթից շինված դանակին և դաշույնին հնարավոր էր լինում տալ ցանկացած մեծությունը՝ ըստ աճող կենցաղային պահանջների: Եվ մենք տեսնում ենք, որ դաշույնը գերակշիռ տեղ է բռնում մեր հնագիտական պեղածոների մեջ: Նա դարձել էր մարդու առաջնակարգ զենքերից մեկը: Նրանով էին զինված, ինչպես ակնհայտ է պահպանված քանդականկարներից, հաթեական, ասոր-բաբելոնական, սկյութական և այլ զորքերը: Նա, շատ չնչին արտաքին փոփոխությամբ, իր գոյությունը մինչև այսօր էլ պահպանել է ասիական ժողովուրդների մեջ, որոնց ամեն մի տղամարդ իր մարդկային արժանապատվության պահանջն է դարձնում, իր զգեստի ու զարդարանքի անբաժան պատկանելիքն է համարում գոտուց կախած ունենալ դաշույնը: Այսօրվա կանոնավոր զորաբանակների գլխավոր զենքը հանդիսացող հրացանների սվինները իսկապես դաշույնի տեսքն ունեն:

Հայկական լեռնաշխարհի հնագիտական պեղածոներից մեզ

*հայտնի բոլոր բրոնզե ու երկաթե դաշույններն էապես միատեսակ են, տարբերվում են միմիայն իրենց չափերով և ձևերի ու օրնամենտացիայի մանրամասնություններով: Այդ ձևերի ու օրնամենտացիաների բազմապիսի մանրամասնությունների և մանավանդ, զանազան չափերի պատճառով շատ դժվար է, գրեթե անհնարին է կազմել դաշույնների դասակարգումը: Ուստի մենք այստեղ դաշույնները քննության ենք առնում ըստ նրանց նյութի, որով և պայմանավորվում են նրանց ձևերն ու տեսքը:*

1. Պղնձե դաշույններ: *Այս տեսակ դաշույնները խիստ հազվադեպ են: Այդ հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ ընդհանրապես պղնձե դարը կարճատև է եղել (էջ 19) և ապրել է միայն փոխանցիկ շրջան: Թերևս պեղումներն էլ անբավարար ու սակավաթիվ են եղել: Պղնձե դաշույններ հայտաբերվել են հաչակավոր Կարմիր-վանքի (Ղըզըլ-վանք՝ Նախիջևանի մոտ) դամբարաններում, որոնց պեղումները ցույց են տալիս հնադարյան կուլտուրայի բոլոր շերտերը, սկսած նեոլիթից մինչև երկաթե դարը: Վերոհիշյալ պեղածոների մեջ գտնվել են 5 հատ պղնձե դաշույն, որոնք պահվում են Մոսկվայի թանգարանում* (ИАК, XXIX, 3—5): *Սրանցից առաջինը գեղեցիկ օրինակ է՝ նեղ շեղբով ու երախակալով, որի մեջ պարունակված է եղել փայտ, իսկ մյուս չորս դաշույնները համեմատաբար փոքր են և դանակի ձև ունեն: Արդեն այս վերջին չորս դաշույնների ձևը, որոնք իսկապես դանակի կերպափոխություններն են հանդիսանում, վկայում է նրանց հին լինելը, հետևաբար բրոնզե դարերից առաջ շինված լինելը, քանի որ բրոնզե դարն այդ ձևի դաշույններ չի արտադրել:*

*Պղնձե դաշույն գտնվել է նաև Աննենֆելդ գյուղի (Գանձակի գավառ) պեղածոներում. այս դաշույնն ունի լեզվակ՝ երախակալն ամրացնելու համար: Պղնձե դաշույն, պղնձե այլ զենքերի ու իրերի հետ միասին, 1875 թ. հայտաբերվել է նաև Ալեքսանդրապոլի (Լենինականի) բերդում մարտկոց կառուցելիս՝ 7 ոտնաչափ խորություն ունեցող հնադարյան մի դամբարանում:*

2. Բրոնզե դաշույններ: *Սրանք հայտաբերվել են թե ամենահին, բացառապես բրոնզե իրեր պարունակող դամբարաններում և թե հալշտատյան տիպի կուլտուրային պատկանող դամբարաններում ու հնավայրերում: Այս դաշույնները կարելի է բաժանել երկու հիմնական տիպերի:*

*ա) Դաշույններ, որոնց շեղբերն ունեն հատուկ լեզվակ*



(Griffzunge) — *երախակալին ամրացնելու համար: Այս տիպի դաշույնները բնորոշ են բրոնզի սկզբնական շրջանին, թեև այդ տեխնիկան պահպանվել է մինչև բրոնզե դարերի վերջը:*

*բ) Դաշույններ, որոնց երախակալը միաձույլ է շեղբի հետ և մի ամբողջություն է կազմում: Սա երևան է գալիս բրոնզե դարերի վերջերին, երբ մետաղագործական արվեստն ավելի կատարելագործվում է:*

*Այս երկու տիպի առանձնահատկություններն արտահայտվում են դաշույնների երախակալների ձևերում: Առաջին տիպի երախակալները շինվում էին անջատ և ընդունում էին բազմապիսի ձևեր, որոնք հասնում են արվեստի ու նպատակահարմարության ամենաբարձր աստիճանների: Բրոնզեդարյան դաշունագործը երախակալները պատրաստում էր ոչ միայն բրոնզից, այլև, մեծ մասամբ, փայտից, ոսկրից, եղջյուրից, որոնց մշակման մեջ արհեստագործն արտահայտում էր իր շնորհքն ու արվեստը, տալով ընդհանրապես դաշույններին և մասնավորապես նրանց երախակալներին թե նպատակահարմար ձև՝ բռնելու համար և թե արտաքուստ գեղարվեստական ոճ: Մինչդեռ երկրորդ տիպի դաշույններն այդպիսի հնարավորություններ չէին ընձեռում: Այստեղ բրոնզեդարյան մետաղագործը կաշկանդված էր արվեստի արտահայտություններում: Բրոնզե երախակալը, միացած լինելով և միաձույլ ամբողջություն կազմելով շեղբի հետ, չէր կարող ենթարկվել ազատ ու անսահման մշակման: Այս տիպի դաշույնը, երախակալով ու շեղբով միասին, ամբողջական զանգվածեղ մետաղ էր, որ ձուլվում և զարդարվում էր միատեսակ կաղապարով, ընդունված շաբլոններով: Այստեղ երախակալի գեղարվեստական մշակման գործում ինքնուրույն արհեստագործական թափն ու անհատական շնորհքը չէին կարող ազատ ասպարեզ ունենալ: Ահա թե ինչու պեղածո դաշույնների մեջ իրենց քանակով ավելի շատ են առաջին տիպին պատկանողները:*

*Առաջին տիպի դաշույնների երախակալները մեզ չեն հասել, որպեսզի գաղափար կազմեինք նրանց ձևերի մասին, այդ երախակալների փայտե, ոսկրե և այլն մասերը հազարավոր տարիների ընթացքում փչացել են երկրի խորքերում: Սակայն մնացել են այդ երախակալների բրոնզե զարդանկարները և գլուխները, որոնք վկայում են զարգացած արվեստի գոյության այդ հնագույն ժամանակներում: Երախակալների բրոնզե գլուխները սովորաբար ունեն ուռուցիկ կլորաձև կամ կոնաձև և կամ երբեմն*

երկթևանի վերջավորություններ, որոնք այն համարությամբ են ցինված, որ երախակալը դուրս չսահի մարտում ձեռքից և միաժամանակ ձեռքի թաթը պաշտպանի հակառակորդի հարվածներից։ Ահա այդ երախակալների մեջ էին խրում շեղբի լեզվակը և այդպիսով ամրացնում ամբողջ դաշույնը։

Այդ տեսք ունի երկրորդ տիպի դաշույնը, որի շեղբը սովորաբար չի տարբերվում առաջին տիպի շեղբից։ Այս տիպի դաշույնի երախակալները, միաձույլ լինելով շեղբի հետ, պահպանվել ու մեզ են հասել նույնությամբ։ Սրանց երախակալները սովորաբար լինում են պարզ. դաշույնի շեղբի վերին մասը, որ երախակալի համար է, դարձվում է այնպես, որ ընդունում է սնամեջ նեղ գլանի ձև, վերջանալով երբեմն կիսալուսնաձև միաձույլ գլխով։ Երախակալի այդ գլանը սովորաբար լցնում էին փայտով, երբեմն էլ զարդարում ծակոտիների սիմետրիկ նախշերով։ Ռեդկին-Լագերի դաշույնների երախակալների վրա Ռյոսլերը գտել է նաև էմալի մնացորդներ, որով լցված են եղել ծակոտիները։

Բրոնզե դաշույնների, ինչ սրանցից առաջ նաև պղնձե դաշույնների՝ շեղբերն սկզբներում եղել են կարճ, հաստ ու լայն, որոնց ծայրը միանգամից սուր վերջավորության էր հանգում։ Այդ բնորոշ երևույթը պետք է բացատրել երկու հանգամանքով։ Նախ՝ սկզբնական մետաղե զենքերը ձուլվում էին քարե զենքերին նմանեցնելով և ընդօրինակելով. իսկ քարե դաշույնը եղել է հաստ ու կարճ, շնորհիվ քարի նյութերի հատկության ու մշակման հնարավորությունների։ Երկրորդ՝ սկզբներում մետաղե գործիքներ ու զենքեր պատրաստելու արվեստը կատարելագործված չլինելով, բրոնզից ձուլվող զենքերը կաղապարվում էին կարճ ու հաստ։ Էգեյան կուլտուրայի առաջին հնագիտական շերտերում, Կրետե և Միջերկրածովյան այլ կղզիներում բրոնզե դարերում այդ ձևը եղել է գերիշխող։ Սակայն Տրոյայի (Փոքր Ասիայի արևմտյան ծովեզերքում) հարուստ պեղածոներում հանդիպում են դաշույններ՝ կարճ ու տափակ հաստ շեղբով և միաժամանակ, երկարաշեղբ դաշույններ, որոնց շեղբերի շեղակի (ըստ լայնքի) կտրվածքը տալիս է նշաձև կամ ռոմբաձև տեսք։ Նույնը նկատում ենք Հայկական լեռնաշխարհի և մասնավորապես Անդրկովկասի պեղածո բրոնզե դաշույնների վրա։ Այստեղ էլ, ինչպես Տրոյայում, միաժամանակ գոյություն ունեին կարճ և երկարաշեղբ դաշույններ (MAK, VI և VIII)։ Այստեղ, նշաձև կտրվածքով



երկար դաշույնների հետ միասին, հանդիպում են նաև կարճ ու հաստ շեղբով դաշույններ։ Բայց և այնպես նկատելի է, որ դաշույնի շեղբերը, բրոնզե դարերից մոտենալով երկաթե դարերին, կորցնում են իրենց կարճությունն ու հաստությունը և հետզհետե սկսում են երկարել ու բարակել։ Այդպես են Ռեդկին-Լագերի, Երևանի գավառի (Շորլու և Թազաքենդ), Խոջալուի (Ադրբեջան—Շուշու գավառ) բրոնզե դաշույնները։

Բրոնզե դաշույնների մի առանձնահատուկ պատկանելիքը հետևյալն է։ Շեղբերի երեսին, ամբողջ ուղղությամբ կամ շեղբի մեջքի երկարությամբ, ձգվում են 2-ական կամ 3-ական զույգ երկար ջղեր։ Երկրորդ գծագրում այդ ջղերը (Blutrinne), միանալով շեղբի սուրծայր ծայրում, կազմում են եռանկյուն։ Եթե շեղբերը չեն ունենում հիշյալ գծերը, ապա նրանց երեսի մեջտեղով ձգվում է եռանկյունաձև ուռուցիկ մեկ ուղիղ գիծ։

Բրոնզե դաշույնները, որոնք հայտաբերված են Հայկական բարձրավանդակում, իրենց տեսքով, արվեստով ու զարդանկարներով նմանություն ունեն ոչ միայն դամբարան վայրերի, այլև հարևան ու հեռու երկրների դաշույնների հետ։ Ռեդկին-Լագերի կամ Նոր-Բայազետի դաշույնները իրենց նման օրինակները ունեն ոչ միայն Խոջալուի և Դալարքենդի, այլև Կոբանի (Հյուսիսային Կովկաս) հռչակավոր պեղածոների դաշույնների մեջ և նույնիսկ Էգեյան կուլտուրայի մնացորդներում։

3. Երկաթե դաշույններ։ Վաղագույն երկաթի ինդուստրիայի դաշույնները իրենց արտաքին տեսքով շատ քիչ են տարբերվում բրոնզե դաշույններից. միակ տարբերությունը, որ աչքի է ընկնում, դա նրանց չափի մեծացումն է և ապա երախակալի արվեստը։ Հայկական լեռնաշխարհի երկաթե դաշույնների մասին առաջին հիշատակությունը մենք գտնում ենք XIV դարում (մեր թվ. առաջ), երբ Միտաննիի թագավոր Տուշրատան եգիպտական թագավոր Ամենոֆիս 3-րդին ուղղած իր նամակով հայտնում է, թե նրան ընծա է ուղարկում երկաթե դաշույններ (EMGA, II)։

Երկաթե դաշույնների երախակալները լինում են առանձին, անջատ, բնավ չկազմելով շեղբի հետ միաձույլ մի ամբողջություն։ Այդ երախակալների արվեստի հիման վրա էլ երկաթե դաշույնները կարելի է բաժանել երկու տիպի։

ա) Առաջին տիպը ըստ ժամանակագրության ամենահինն է։ Այդ տիպի երկաթե շեղբը վերին մասում վերջանում է լեզվաձև արմատոյթ ելուստով, որ խրելով ամրացվում էր ոսկրից,

եղջյուրից կամ բրոնզից շինված երախակալի մեջ։ Այս երախակալի գլուխը սովորաբար լինում է գնդաձև։

բ) Երկրորդ տիպն առաջինի համեմատությամբ ավելի նոր է։ Սրա շերտի վերին լեզվակը տափակ ու լայն է, որի վրա բրոնզե բևեռներով ամրացվում են երկու թերթիկ՝ ոսկրից կամ փայտից, և, այդպիսով, ստացվում է երախակալ։ Այս երախակալի գլուխը տափակ կորված է, լինում երկու թերթիկների ու դրանց միջև պարփակված լեզվակի պարզ լայնացումով կամ նրանց կիսաբոլորակ ձև տալով։ Այս տիպի դաշույնները մինչև այժմ գրեթե անփոփոխ պահպանվել են գործածության մեջ Կովկասում և Ասիայում։

Հայկական լեռնաշխարհի վերջին տիպի հնագույն երկաթե դաշույնները մեծ նմանություն ունեն հին ասորեստանյան դաշույնների հետ, որոնց պատկերները մենք գտնում ենք հնադարյան ասուրա-բաբելական քանդականկարներում։

Վերոհիշյալ երկրորդ տիպի դաշույնների երախակալները, հնադարյան արվեստի զարգացման զուգընթաց, ենթարկվում են բազմապիսի գեղարվեստական մշակման։ Երախակալները զարդարվում են գնդաձև գլուխ ունեցող բևեռներով, քանդականկարներով, ընդելուզումով (ինկրուստացիա) և այլ օրնամենտացիայով։

Երկաթե շերտերն ընդհանրապես վատ են պահպանվել բրոնզե շերտերի հետ համեմատած, որոնք չեն փտել ու չեն փչացել ժանգից։ Երկաթն այդ կողմից ավելի արագ է ենթարկվել ժանգի ներգործությանը, որի հետևանքով շերտերը կորցրել են իրենց սկզբնական տեսքը և դժվար է որոշել նրանց արտաքին պատկերը։

Դաշույններն ունեցել են նաև պատյաններ, որոնք հանդիպում են սովորաբար երկաթե շերտերի հետ։ Ըստ երևույթին բրոնզե դաշույնները, մանավանդ ավելի հնագույն տարբերինը, չեն ամփոփվել պատյանների մեջ. գոնե պեղածոներում մինչև այժմ այդպիսիներ չեն հայտաբերվել։

Երկաթե դաշույնների պատյանները սովորաբար եղել են կամ բրոնզից, ինչպես Նոր-Բայազետի պեղածոներում, կամ փայտից, որ իր հերթին ծածկված է եղել հաստ կաշիով, իսկ կողերն ամրացված են եղել բրոնզե թերթիկներով, ինչպես Մուսի-երիում։ Վերջին դեպքում կաշե պատյանը առջևի երեսից զարդարված էր լինում բրոնզե կոճակներով կամ եռանկյուններով։



Հնում, ինչպես պարզորոշ երևում է պեղածո դաշույններից, որոնք ոչ մի կանթ կամ օղակ չունեն, դաշույնները կրում էին ոչ թե կախելով, ինչպես ներկայումս են անում, այլ կողքից խրում էին գոտու տակ։ Հիրավի, պեղումների ժամանակ դաշույնները հայտաբերվում էին կմախքների կողերի ոսկրների և բրոնզե գոտու միջև։ Դաշույն կրելու այդ եղանակը մենք տեսնում ենք նաև հնադարյան բազմաթիվ քանդականկարներում և սովորական էր հաթական, ասորեստանյան և այլ ժողովուրդների մեջ (Նկար № 1, հատ. 1)։

Սուսեր (թուր, սուր)։ Այս զենքը վաղագույն մետաղի դարաշրջանի հնագույն երևույթ է։ Եթե քարե դարում գոյություն ունեին քարե ու ոսկրե դանակն ու դաշույնը, որոնք վաղագույն մետաղե դարերում վերածվեցին մետաղե նույնանիշ օրինակների, սուսերը, ընդհակառակը, քարե դարերում չի ունեցել իր նախորդը։ Սուսերը մի նոր ձևի զենք է, որ իր մեջ ի մի է պարփակում երեք մարտական գործիքների՝ տապարի, դաշույնի և նիզակի տեսակները, այն է՝ հարվածելու, հոշոտելու, խողխողելու և ծակելու հատկությունները։ Ի տարբերություն դաշույնի, որ կրում էին սովորաբար գոտու հետևը խրած, սուսերը կրում էին աջ ուսին, ինչպես ցույց է տալիս կրետական մի պատկեր։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ սուսերը սովորաբար կրկնակի մեծ էր դաշույնի համեմատությամբ, ունենալով կես մետրից ավելի երկարություն[33]։

Սուսերն իր արտաքին տեսքով ներկայացնում է դաշույնի մեծացրած ձևը, որպիսի հանգամանքը մի քանի հնագետների հիմք է տվել կարծիք հայտնելու, թե երկսայրի սուսերի մեկնակետը եղել է դաշույնը, իսկ միասայր սուսերինը՝ դանակը։

Սուսերը մեծ զարգացման էր հասել հին Արևմուտքի կուլտուրական մարզերում, և նրա հայրենիքը համարվում են Միջերկրածովյան երկրները, էգեյան կուլտուրայի կենտրոնները՝ Կրետեն և այլ կղզիները։ Սուսերն էգեյան աշխարհի բնորոշ ու հատուկ զենքն էր հանդիսանում և այստեղից Շարդանայի (ենթադրվում է այժմյան Սարդինիա կղզին) ռազմիկները, վարձով զինվորագրվելիս Եգիպտոս (2-րդ հազարամյակում մեր թվ. առաջ)՝ իրենց հետ Եգիպտոս են տարել այդ զենքը, որն այնուհետև այստեղից տարածվել է նաև ամբողջ Առաջավոր Ասիայում (EMGA, I)։

Եթե Հայկական լեռնաշխարհի պեղումներից հայտաբերվել

են բազմաթիվ դաշույններ, ընդհակառակը, սուսերներ քիչ են երևացել։ Այդ հանգամանքից կարելի է եզրակացնել, որ մարտական ավելի գործիքը եղել է դաշույնը, իսկ սուսերն այնքան էլ համատարած զենք չէր[40]։

Կովկասում և հին Հայաստանում գտնված սուսերները մեծ նմանություն ունեն Եվրոպայի սուսերների հետ։ Հայտաբերվել են սուսերներ՝ պղնձից, բրոնզից ու երկաթից։

Գտնվել են երկու պղնձե սուսերներ։ Մեկը հայտաբերվել է 1875 թ. Ալեքսանդրապոլում, բերդի մառանը կառուցելիս՝ դիպվածորեն բացված հնագույն գամբանում, որտեղ կմախքի հետ թաղված են եղել նաև պղնձե դաշույն, նետեր և այլն։ Այս սուսերի երկարությունն է 56 սմ., լայնությունը (երախակալի մոտ)՝ 8 սմ., իսկ ստորին ծայրում՝ 3 սմ.։ Սուսերի շեղբի մեջտեղով, 32 սմ. երկարությամբ ձգվում են չորս կարգ 2-ական ջրեր (Blutrinne)։ Սուսերի երախակալը շինված է երկաթից, իբրև թանկագին մետաղից. այդ երախակալի երկու կողմնակի թևերը կորացած են և կազմում են կիսաբոլոր գլան, որի մեջ հավանորեն մտցված է եղել փայտե կամ ոսկրե պատյանների մասը[41], Երկրորդ պղնձե սուսերը հայտաբերված է Գանձակի գավառի Բանանց (Բայան) գյուղի մոտ (Ռեսլերի պեղումով)։ Այդ սուսերը կոտրված է երկու մասի. նմանապես կոտրված է երախակալը և սրա գլուխը։ Պահպանված շեղբի կտորի երկարությունն է 55 սմ., լայնությունը — երախակալի մոտ՝ 8,5 սմ. և կոտրվածքի ստորին մասում՝ 4,5 սմ.։ Պահպանված երախակալի երկարությունն է 10 սմ.։ Այս սուսերի հետ միասին գտնված դաշույնը և այլ իրերը բրոնզից են։

Նմանօրինակ սուսերներ, բայց արդեն բրոնզից, հայտաբերվել են նույն Գանձակի գավառում՝ Գետաբեկի ու Ղալաքենդի դամբարաններում (Իվանովսկի), Գանձակ քաղաքի մոտերքը (Վ. Բելք), Շուշու մոտերքը (Ռեսլեր), Ղազախի գավառում, Լոռում և այլն։

Շատ հետաքրքիր է Զորագետի հնէաբանական աշխատանքների ընթացքում փորվածքների մեջ հայտաբերված բրոնզե սուսերը, որ պահվում է այժմ Հայաստանի Պետական Թանգարանում։ Այս սուսերի շեղբի երկարությունն է 91 սմ., լայնությունը, լեզվակի մոտ՝ 5 սմ., իսկ ստորին ծայրում՝ 1 սմ.։ Լեզվակը տափակ է, բայց կոտրված, որի երկարությունն է 5 սմ.։ Ընդհանուր առմամբ սուսերը ներկայացնում է զարգացած արվեստի գողարիկ մի գործ։



Բրոնզե սուսերների շեղբերն ու երախակալները մեծ մասամբ միաձույլ են. երախակալները երկու թևից կորացված են, գոյացնելով անամեջ գլան, որի մեջ ամրացվում էր փայտ կամ ոսկր։ Շեղբերի ամբողջ երկարությամբ, երկու երեսից, 3-ական շարքով ձգվում են ջրեր։

Սուսերների մի հատկանշական գիծը, որ ընդհանուր է Հայկական լեռնաշխարհի, նաև Կովկասի ու Առաջավոր Ասիայի նկատմամբ և որով այդ սուսերները շեշտակի տարբերվում են Արևմտյան Եվրոպայի հնագիտական վայրերի սուսերներից — դա սուսերների կլորաձև ստորին վերջավորությունն է, մինչդեռ եվրոպական սուսերի վերջավորությունը սրածայր է։ Այս ընդհանուր հատկանիշից պետք է եզրակացնել, որ այդ սուսերները ոչ թե ծակելու կամ խրելու, այլ հարվածելու կամ հոշոտելու զենք էին ծառայում։

Համեմատաբար ավելի շատ են հայտաբերվել երկաթե սուսերներ, գլխավորապես Լոռու և մասամբ Նոր-Բայազետի գավառների պեղածոներից։ Այդ սուսերները, որոնք բոլորն էլ ժանգից չափազանց կերված են, բրոնզե սուսերների համեմատությամբ ավելի երկար են։ Զորագետում գտնված երկաթե սուսերն իր երախակալի հետ միասին ունի 70 սմ. երկարություն, իսկ միայն շեղբի երկարությունն է 60 սմ. (պահվում է Հայաստանի Պետական Թանգարանում)։ Մուսի-երիի դամբարաններից մեկում գտնված ամենահին երկաթե սուսերը, որի երկարությունն է 61 սմ. և լայնությունը՝ 4,5 սմ., ունեցել է շեղբի հետ միաձույլ լեզվակ, որը կոտրված է և որին, թևերի միջոցով, ամրացված պետք է լիներ փայտե կամ ոսկրե երախակալը։

Հետնագույն ժամանակի դամբարաններում հայտաբերված երկաթե սուսերները կրում են ավելի կատարելագործված ճարտարվեստի նշաններ և ունեն զարդարանքներ։ Սրանք պարփակված են պատյանների մեջ, որոնք փայտից են ու ծածկված են բրոնզե բարակ թիթեղներով. շեղբերը վերջավորվում են միաձույլ լեզվակով, որ մտնում է երախակալի մեջ։ Երախակալը ամբողջաբար բրոնզից է և ունի շրջանաձև զուգահեռ ակոսներ, որոնք, ըստ երևույթին, լցված են եղել հատուկ ոսկրով կամ փղոսկրով, երախակալի գլուխը գնդաձև է։

Այս տեսակ երկաթե սուսերներից մի քանիսն իրենց պատյանների հետ միասին 70 սմ. ավելի երկարություն ունեն։

Ենթադրվում է, ինչպես ակներև է հնագիտական բրածոնե-

րից։ Թե՛ սուսերը կամ սուրը (թուրը) գործածում էին ձիավոր մարտիկները։ Սուսերի մարտական նշանակությունը, այն է՝ հարվածել, խոցխոցել հակառակորդին նրա մարմնի ավելի մեծ մասի վրա, քան, այդ կարելի էր անել դաշույնով, ավելի նպատակահարմար է դառնում, երբ հարվածները տեղում են մի փոքր բարձրից։ Այդ հնարավոր էր ձիու վրա նստած մարտիկի համար։ Այս պարագայից ելնելով, Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված սուսերների նվազ քանակը, համեմատած աղեղին թվով դաշույնների հետ, թերևս կարելի է բացատրել նրանով, որ տիրող մարտական եղանակն եղել է հետիոտնը։ Երկրի լեռնային ռելյեֆը հարմարություն չէր ընձեռում ձիավոր ռազմական տեխնիկայի զարգացման համար, ուստի և սուսերի գործածությունը դառնում էր ոչ այնքան ձեռնտու։ Ձիավոր մարտիկներ մենք տեսնում ենք գլխավորապես տափաստանների ու անապատների բնակիչների՝ սկյութների, սարմատների և Սևծովյան-Կասպիական ու Միջին Ասիայի հնագույն այլ վաչկատունների մեջ։

Նիզակ։ — Սա հնագույն գործիքներից մեկն է, որ սկիզբ է առել տակավին պալեոլիթի շրջանում, երբ նա գործ էր ածվում և՛ որսորդական, և՛ մարտական նպատակներով։ Երկու դեպքում էլ նիզակը ծառայում էր իբրև նետվող և իբրև հարվածող զենք։ Նետողական նիզակներն անշուշտ ավելի կարճ էին, քան հարվածականը։

Նիզակի ամենահին ձևը, ինչպես այդ նկատվել է Թասմանիա կղզու վայրենիների մեջ, եղել է 2—3 մետր երկարությամբ փայտե ձողը, որի ծայրը սրվել է կրակի վրա այրելով։ Հետագայում արդեն, կուլտուրայի զարգացումով, փայտե ձողին ամրացնում էին քարե, օբսիդիանե, ոսկրե կամ խեցիի սուր ծայր-լեզվակ։ Վաղագույն մետաղե դարերում նիզակների ծայրերը լինում էին պղնձից, ապա բրոնզից և վերջապես՝ երկաթից։ Տակավին մետաղե դարերում նիզակը շարունակում է պահպանել նետողական ու հարվածական զենք լինելու նախնական երկակի բնույթը։ Հին հռոմեական պատմագիր Տացիտը ավանդում է, թե իր ժամանակի գերմանացիների սովորական զենքն էր երկաթե ծայրով նիզակը, որը նրանք օգտագործում էին թե՛ ձեռնամարտի և թե՛ հեռակա կռվի ժամանակ, նայած մարտի հանգամանքներին։

Նիզակը, ինչպես և տապարը, իր ծագման խորին հնության համեմատ, ընդունել էր նաև խորհրդավոր ու պաշտային սրբազան



նշանակություն։ Նա համարվում էր իշխանության խորհրդանիշ։ Լանգոբարդների մեջ սովորություն կար հանդիսավորությամբ նիզակ մատուցել նորընտիր թագավորին. Հին հռոմայեցիները հանդիսավոր կերպով նիզակ էին մատուցում հերոս ռազմիկին կամ այն քաղաքացուն, որը փոխադրվում էր ավելի բարձր սոցիալական դասը։ Երկու իրար խոնարհեցրած նիզակների տակով էին անցկացնում պատերազմում պարտվածներին ու գերիներին։ Նիզակն ազատ ծնված յուրաքանչյուր քաղաքացու զենքն էր, ուստի և այն դնում էին զինվորի գերեզմանում։ Նիզակը նաև պատերազմի խորհրդանիշ էր համարվում. Հին հռոմայեցիները, գաղղիացիներն (գալլերը) ու սկանդինավները, պատերազմ հայտարարելիս՝ մի քանի նիզակներ էին նետում թշնամու երկրի սահմանագծի վրայով։

Հին խալդերի Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողմում կանգնեցրած էին երկարաձող նիզակներ, որպես կրոնական-սրբազան նշանակություն ունեցող առարկաներ։ Այդ կրոնական-սրբազան նշանակությունը պահպանվել է, ինարկե համապատասխանորեն փոփոխված տեսագծերով, քրիստոնեական կրոնում, կապվելով այդ Քրիստոսի անվան հետ. այստեղ նիզակի խորհըրդավոր նշանակությունն առարկայացել էր այն կարծեցյալ նիզակի մեջ, որով, իբր թե, հռոմեական զինվորները ծակել էին խաչված Քրիստոսի կողքը։ Այստեղից էլ «սուրբ նիզակների» ծայրերը, որոնք իբրև մասունք պաշտվում են եկեղեցիներում։ Նույնն է հայերի ս. «Գեղարդը», որը իբրև սրբություն պահվում է Էջմիածնի վանքում։

Նախապատմական Հայաստանում էլ նիզակը տիրապետող ու համատարած զենք է եղել՝ սկսած քարեդարյան ժամանակաշրջանից։ Այդ են ապացուցում հնագիտական պեղածոների մեջ հանդիպող բազմաթիվ նիզակածայրերը։ Սրանց փայտե ձողերն ինարկե չեն պահպանվել, բացի մի քանի փտած կտորներից, որոնք երևացել են Լոռու վաղագույն երկաթե դարերի դամբաններում (Մուսի-երիի)։ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված նիզակածայրերն ընդհանրապես միանման են, իրարից տարբերվում են միայն մեծությամբ. նրանք բաղկացած են երկու մասից — կոթառից ու շեղբից, որոնք միշտ միաձույլ են։

Նիզակի կոթառը սովորաբար կոնաձև անամեջ խողովակ է, որ հագցվում էր փայտե ձողին և շատ անգամ երկու հանդիպակաց ծակերից գամվում էր բևեռներով, որպեսզի ավելի պինդ նստի։

Նիզակի շեղբերը, թե պղնձե, թե բրոնզե և թե երկաթե, ըստ իրենց ձևի կարելի է երկու հիմնական տիպերի բաժանել. դաշույնաձև, որոնք սովորաբար նեղ են լինում, և տերևաձև. որոնք ավելի լայն են: Շեղբի ամբողջ երկարությամբ՝ կոթառի ստորին ծայրից մինչև շեղբի վերին սուր ծայրը, ինչպես այդ նկատել ենք դաշույնի կամ սուսերի վրա, ձգվում է մի ուռուցիկ ջիղ, որ հետզհետե բարականում է դեպի վերին ծայրը:

Ըստ երևույթին, նիզակների կողերն իրենց ստորին մասում ունեցել են երբեմն նաև մետաղե զարդ, որ բաղկացած է գնդաձև գլուխ ունեցող գլանակից՝ փորված քանդակներով ու ծաղկոտիններով. այդպիսին գտնվել է Մուսի-երիում:

Սակայն գոյություն են ունեցել բրոնզե այնպիսի նիզակներ, որոնք կոթառի փոխարեն ունեին սրածայր լեզվակ, հար և նման մեր նկարագրած դաշույնների լեզվակներին, որով նիզակն ամրացվում էր կողին, նրա մեջ խրելով: Այս տեսակ նիզակները հայտնաբերված են պեղածոների մեջ և իրենց ծագումով ավելի հնագույն են համեմատած կոթառների հետ:

Բացի վերոհիշյալներից՝ եղել են նաև ամբողջական երկաթե ձողով նիզակներ: Թոփրակ-կալեի պեղումներում նիզակի երկաթե ծայրերի հետ միասին գտնվել են նաև երկաթե ձողերի մի քանի բեկորներ, որոնք միանգամայն հարմարվում են միատեղ հայտնաբերված նիզակի ծայրերին: Այս պարագան հիմք է տալիս եզրակացնելու, որ խալդերի գործածած նիզակների կոթերը եղել են ոչ միայն փայտից, այլև երկաթից, այսինքն՝ գործածվել են երկաթե ամբողջական ու միացյալ ձողից ու ծայրից բաղկացած նիզակներ (LHM, 102):

Հնագետ Ժակ Մորգանը Լալվարի սարալանջերում կատարած պեղումներից նկատել է, որ դամբարանների մեծ մասում կմախքի մոտ հայտնաբերվում էին երկուական նիզակ, մեկը կարճ ու թեթև, իսկ մյուսը՝ երկար ու ծանր: Նրա միանգամայն հավանական ենթադրությամբ՝ կարճ նիզակը ծառայելիս է եղել նետելու համար, իսկ երկարը՝ գեղարդի կռվելու համար: Իրոք, հնագույն դարերի Առաջավոր Ասիայում գոյություն է ունեցել նիզակային մարտի այդ եղանակը: Հին Թեբեի մոտերքը գտնվող Մեդինեթ Աբուի մեհյանի քանդականկարում պատկերված է տեկրացի մի զինվոր (XIII դար մեր թվականությունից առաջ), որն իր ձեռքում կրում է 2 հատ նիզակ (JMMS, 1, 97): Նկատի առնելով, որ տեկրացիները, պատկանելով պելազգյան ցեղին, մի ժամանակ գաղթել են Կապադովկիա (Փոքր-Ասիա) և ձուլվել տեղական բնիկների հետ, զարմանալի չէ, որ նրանց նիզակների վերաբերյալ ավանդական այդ ձևերը չանցնեին և չփոխարինվեին թե ամբողջ Առաջավոր Ասիայում և թե Անդրկովկասում:

Այս տեսակ երկու նիզակների համաժամանակյան գործածությունը, ինչպես վկայում է Քսենոֆոնը (Kyropedia, III, 2, 7), սովորական է եղել խալդերի մեջ: Այդ փաստը հաստատվում է ավելի հին ուրարտու-խալդերի նկատմամբ Թոփրակ-կալեի պեղումներից, որ հայտնաբերվել են երկաթե թե երկար և թե կարճ նիզակներ, նմանապես Բալավաթի դռան վրա Սալմանասար III թագավորին պատկանող բրոնզե նկարներից, ուր խալդերը ներկայացվում են երկար ու կարճ նիզակներով զինված (LHA, II, 795):

**Աղեղ ու նետ**: Այս զենքը համեմատած մյուս հնադարյան զենքերի հետ, ավելի նորագույն երևույթ է: Նա սկիզբ է առել պալեոլիթի վերջերին կամ նեոլիթի վաղագույն շրջանում: Ավստրալիայի վայրենի ցեղերը, որոնք ապրում են պալեոլիթի ու նեոլիթի կենցաղային փոխանցիկ կուլտուրայի պայմաններում, չգիտեն աղեղի ու նետի գործածությունը: Աղեղը չունի իր սկզբնական մեկնակետը, որից նա գոյանար հետագա կուլտուրայի զարգացման ընթացքում, ինչպես օրինակ, քարե մուրճից գոյացել է տապարը, կամ դանակից՝ դաշույնը, ապա սուսերը և այլն և այլն: Չնայած մի շարք հնագետների ու ցեղագրագետների փորձերին՝ բացատրել աղեղի ծագման հանգամանքները, այդ հարցը առայժմ մնում է չլուծված: Այդ զենքը չի ներկայացնում մարդու օրգանների հարթապատկերը (պրոեկցիա), որովհետև նա բաղկացած է երկու մասից. հատկապես աղեղից, այսինքն՝ այն մասից, ուր լարման (ձգման) միջոցով կուտակվում է նետելու անհրաժեշտ ուժը, և ապա նետից, որ իսկապես գործող մասն է:

Աղեղն ու նետը խիստ տարածված զենք էր Փոքր ու Առաջավոր Ասիայում, Միջերկրածովյան ու Արևմտյան Եվրոպայի երկրներում շատ խորին հնուց: Միջագետքում, ինչպես վկայում են հնագիտական հուշարձանները, միայն 3-րդ հազարամյակում են զորքերը զինված եղել նետ ու աղեղով (RL, X, 108): Հրեաները, սկյութները, հին գերմանացիները, գաղղիացիները (գալլերը), անգլո-սաքսերը, նմանապես հին հայերը, ինչպես և միջին դարերում մոնղոլները, սովորաբար կռվում էին այդ զենքով: Սա-

կայն աղեղն ու նետը նույն չափով տարածված էր նաև իբրև որսորդական զենք։

Աղեղը, որ անպայման ձկուն է լինելու, պատրաստվում էր ծառի ճյուղերից և ուներ պարզ կորացրած ձև, որի երկու ծայրերին ձգում էին չորացրած աղիքից կամ բուսական թելից ոլորված լարը։ Աղեղը հնագիտական պեղածոների մեջ չի հայտաբերվել, քանի որ նա, փայտից լինելով, փոշիացել է։ Սակայն աղեղների ձևը մենք գտնում ենք մի շարք նկարներում, որոնք քանդակված պահպանվել են հնագույն գործերից։ Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ մենք գտնում ենք աղեղի ու նետի բնորոշ պատկերներ, որոնք քանդակված են պեղածո հնագիտական բրոնզե գոտիների վրա։ Այդպիսի նկարներ պահպանվել են Ախթալայի (ժակ Մորգան) և Նոր-Բայազետի (Երվ. Լալայան) դամբաններում հայտաբերված երկու բրոնզե գոտիների վրա։

Այդ գոտիների վրա նկարված աղեղն ավելի մեծ է երևում, քան նրան կրող մարդը, հետևապես ունենալու էր մոտ 2 մետր երկարություն։ Այդ աղեղներն իրենց արտաքինով նման են։ Նրանք չունեն պարզորակ կորություն, ինչպես հին-ասորական աղեղները, այլ բաղկացած են 3 մասի կորություններից, ընդ որում միջին փոքր կորությունը ծառայում էր ձախ ձեռքով բռնելու համար։ Այդ ձևի աղեղը որոշ նմանություն ունի հին-հունական և մանավանդ հին-սկյութական աղեղների հետ։ Երևում է նաև, որ երբեմն, աղեղի լարը ձգելիս՝ գործածել են հատուկ ոսկր-մատանի փոքրիկ կոր մանիքով, այդպիսի ոսկե հայտաբերվել է Զիվանշիրի գավառի Ախմալի գյուղի մոտ պեղված դամբանում։

Նետերն իրենց տեսքով ներկայացնում են կարծես նիզակի գաղափարը, բայց չափազանց փոքր են և ընդունակ են թռչելու ավելի երկար տարածության վրա։

Նետերը նախնական շրջանում եղել են բարակ փայտե ձողեր, ծայրերը սրած։ Հետագայում նրանք ստանում են երկու մասից բաղկացած ձև, այն է՝ կոթից, որ նույն փայտե ձողիկն է, և սուր ծայրից, որ լինում էր օբսիդիանից, կայծքարից, ոսկրից և այլն, իսկ այնուհետև, մետաղի դարերում՝ պղնձից, բրոնզից ու երկաթից։ Նետի ամենաէական մասը կազմում է, ուրեմն, նրա ծայրը, որ թե իր նյութի և թե իր ձևի կողմից կրում է տվյալ ժողովրդի կուլտուրայի զարգացման աստիճանների բնորոշ բնույթը։ Ընդհանրապես այդ նետածայրերը չեն ներ-

68

կայացնում մեծ տարբերություններ, մանավանդ իրենց զարգացման առաջին շրջաններում, երբ պատրաստվում էին օբսիդիանից, քարից կամ ոսկրից։

Առաջավոր Ասիայի, մասնավորապես Հայկական լեռնաշխարհի հնագիտական պեղածոների մեջ գտնում ենք բազմաթիվ նետածայրեր, գլխավորապես բրոնզից, այնուհետև քանակով երկրորդ տեղը բռնում են օբսիդիանե նետերը և ապա, ավելի նվազ քանակով՝ ոսկրե ու երկաթե նետերը։

Օբսիդիանե նետածայրերը, խիստ բազմատեսակ ձևերով են հանդես գալիս։ Սկզբնական շրջանում նրանք եղել են բնական, գրեթե անմշակ կտորներ մի քանի սուր կողերով, եռանկյունավոր և այլ ձևերով. հետագայում նրանք մշակվել են և գրեթե նույն ձևերն ունեն, ինչ որ մետաղե նետածայրերը. այս դեպքում նրանք տափակ, մեջտեղը մի փոքր ուռուցիկ եռանկյունիներ են, որոնց հիմքը երբեմն լինում է պոչավոր կամ գոգաձև. պատահում են նաև նշաձև կամ տերևաձև։ Մեծությունը լինում է միջին հաշվով 5—6 սմ.։

Բրոնզե նետերն իրենց ձևով խիստ բազմատեսակ են։ Սրանք բոլորը ձուլածո են. մեծ մասը կոթավոր են. կոթերը կամ սնամեջ են լինում (Նոր-Բայազետ) կամ ոչ-սնամեջ (Շուշի. Գանձակ և այլն)։ Սնամեջ կոթերն ունենում են սովորաբար մեկ ծակ, որպեսզի կոթը նետի ձողիկի վրա հանդուցվելիս՝ ամրացվի բևեռով։

Բրոնզե նետերը, չնայած իրենց բազմազանությանը, նմանապես և երկաթե նետածայրերը, կարելի է բաժանել երեք հիմնական ձևերի.

1. **Եռանկյունաձև**, ինչպես մինյատյուր դաշույնի ձև ունեցող. եռանկյան հիմքն ունի երկու կեռ կամ ուղիղ վայրէջ սուր ճյուղեր. այս ձևն ամենատարածվածն է։ Այս նետածայրի հատկությունն այն է, որ մարմնի մեջ խրվելիս, այլևս դուրս քաշել չի կարելի, որով վերքը դառնում է վտանգավոր։

2. **Եռանկյունաձև**, սակայն առանց վերոհիշյալ ճյուղերի։

3. **Տերևաձև կամ Նշաձև**. այս նետածայրի երկարության միջնագծով անցնում է ուռուցիկ մի ջիղ, որ կազմում է կոթանի շարունակությունը։

Նետերի ձողերի ստորին ծայրին երբեմն ամրացվում են թռչունի փետուրներ, ինչպես այդ բացահայտ է Նոր-Բայազետի նետաձիգի նկարից։ Արձակված նետին դրանով տալիս են

69

հոգեբանական ուղղությամբ սրընթաց ու ազատ հանքերը ըն-դունակություն:

Դուրգ: Հնագարյան կենցաղում, Թերևս վաղագույն պաշտ-պանության, մարդը բնության մեջ պատրաստի զենք ու գործիք էր համարում փայտն ու քարը: Ծառի կոճղը, արմատն իր բնով, ծառի բնից կամ հաստ ճյուղից պատրաստած գանգվածեղ ու ծանր մահակը մի զենք էր, որով մարդը պաշտպանվում էր շրջապատող թշնամիներից: Մինչև վերջին ժամանակները մեր նահապետա-կան կենցաղում այդպիսի մահակով էին զինված հովիվները: Ծակույն փայտի այդ գործիքը, իր նախնի բնական վիճակից դուրս գալով, հետագայում վեր է ածվում հատկապես պատրաստ-ված, որոշ ձևով վերամշակված ունիվերսալ մի զենքի, որը մեր ժողովրդական բարբառներում հայտնի է դուրգ անունով: Այդպիսի զենքի մասին բազմաթիվ հիշատակություններ կան հայ ժողովրդական վիպասանության մեջ, ինչպես օրինակ՝ «Սասմա ծռեր», «Դավիթ ու Մհեր» դյուցազներգություններում, նաև հայ ժողովրդական հեքիաթներում: Նույն այդ զենքը հանդիպում է ռուսական հերոսական ժողովրդական վեպերում палица, իսկ գերմանացիների մեջ streitkolben անունով:

«Սանասար ու Բաղդասար» դյուցազներգության մեջ նույնատ-նուն փայտ երկու եղբայրները դուրգով սպանում են իրենց «կռապաշտ հորը» (ԱՀ, IX, 118): Աբլահ ու Իշխան եղբայրները, չճանաչելով իրար պատերազմի դաշտում, կռվի են բռնվում դուրգե-րով. «Աբլահն ասում ա Իշխանին. են դյուրզը որ ավեցիր ինձ (խփեցիր), հիմացա, որ մեր ազգիցն էր, էնքան ա, որ արունը աչքերս լցվել էր...» (ԱՀ, IX, 123): Հերոս Գառնիկ աղբերը «դյուրզը մի ձեռքով պանդրեց հասնելու դյուշին ինչպես մի չըբուղ» (ձեռնափայտ, մահակ) (ԱՀ, IX, 127):

Հարվածող այդ զենքը՝ դուրգը, փոխանցվելով սովորական հաստ մահակ-փայտից, որի գլուխը հաստ ու ծռս վերջավորություն էր ներկայացնում, ինչպես ներկայումս Ավստրալիայի ու հարավ-աֆրիկյան վայրենիների մեջ, հետագայում, շարունակ զարգանա-լով ռազմական արվեստի մեջ, ստանում է բազմազան ձևեր: Երբեմն դուրգի հարվածական գլուխն այնքան էլ հաստ չէր լի-նում, այլ նրա վրա, որպես մի կոթի, ամրացվում էր քարե, իսկ վաղագույն մետաղի դարերում՝ պղնձե, բրոնզե կամ երկաթե գունդ, կամ բոլորաձև գանգված: Շատ անգամ էլ դուրգի գլխին ցցում էին սրածայր օբսիդիանի և այլ կարծր քարերի բեկորներ:



Ահա այդօրինակ երեք դուրգ է հայտաբերել Եր. Լալայա-նը Նոր-Բայազետի գամբաններում: Ծարիուղլու գյուղի գամբանում գտնվել է դուրգի մի գլուխ, որը ներկայաց-նում է 9 կոնաձև ժանիքներով բրոնզե գանգվածեղ մի գունդ, որի մեջ եղած անցքում ամրացվում էր փայտե կոթը: Այդ գուն-դը, որ ներկայումս պահվում է Հայաստանի Պետական Թանգա-րանում, կշռում է մեկ կիլոգրամ, իսկ նրա կոնաձև ժանիքներից յուրաքանչյուրի բարձրությունն է 3 սմ.:

Պարսն ու պարսատիկ: Քարը, որպես բնությունից պատ-րաստի մարդու ձեռքը տրված ամենանախնական զենքն ու գոր-ծիքը, դարերի ընթացքում, մարտական պրիմիտիվ տեխնիկայի հետագա զարգացումով, ընդունում է զանազան ձևակերպումներ: Նախնադարյան որսորդը կամ մարտիկը ձգտում էր քարին տալ նետելու և հեռվից հարվածելու ավելի մեծ էֆեկտ: Այդ նպատա-կին նա հասնում էր նրանով, որ քարն ամրացնում էր թոկին և վերջինս օգում մի քանի անգամ պտտեցնելով, շպրտում էր հե-ռավոր նշանակետին: Այդպիսի մի զենք էր հին եգիպտացինե-րի, ասորեստանցիների, հին հույների և այժմյան Պաթագոնիայի (Հարավային Ամերիկայի հարավում) վայրենիների մեջ գործած-վող բոլաս: Սա մի տեսակի ուժի հարվածական, նետելի և միան-գամայն մահացու զենք է, որ բաղկանում է իրար հետ թոկով կամ կաշվե պարաններով կապված 2-3 հատ բռնցքաչափ քա-րերից:

Բոլայի մի այլ տարբերակն է լասսոն, որ հարմարեցված է կենդանուն կամ մարդուն ողջ վիճակում որսալու: Սա բաղ-կացած է երկար պարանից ու մեկ ծայրին ամրացված մետաղե օղակից, մի հանգամանք, որ նշում է նրա ծագումը քարեդարյան կուլտուրայից հետո, երբ հնարավոր եղավ մետաղե օղակներ շի-նել: Լասսոն սովորաբար գործ է ածվում լայնարձակ դաշտա-վայրերում և տափաստաններում: Այդպիսի լասսոյի գոյության մասին, որ հին հայկական կենցաղում հայտնի է եղել պարան անունով, հիշվում է հայ ժողովրդական հեքիաթների ու դյուցազ-ներգությունների մեջ: Հնագույն ժողովրդական վիպասանու-թյունից վերցրած մի այդպիսի առասպելական դեպք իբրև պատ-մական փաստ ներկայացնելով, պատմագիր Մովսես Խորենացին նկարագրում է, թե ինչպես Հայոց թագավոր Արտաշես Բ.՝ «Հա-նեալ զօսկէօղ, շիկափոկ պարանն, ընկեց ի մէջս օրիորդին Ալանաց և շատ ցաւեցոյց զմէջս փափուկ օրիորդին, արագ հա-սուցանելով ի բանակն իւր»[42]:

Ահա այդ տեսակ պարանի մնացորդներ է գտել Ն. Լալայանը Նոր-Բայազետի բրոնզեդարյան կուլտուրային վերաբերող դամբաններում։ Այդ պարանը, կամ ինչպես նա անվանում է ճամանը, բաղկացած է եղել երկու մասից՝ երկար թոկից և սրա ծայրին ամրացած 3-4 սմ. տրամագծով բրոնզե հաստ օղակից։ Գտնված են մի քանի այդպիսի օղակներ, որոնց վրա նկատելի է թոկի մի ծայրին կապած տեղը, որ երկար շփումից մաշվել էր (ԼԴԳ, 168)։

Քար նետելու գործիքի մի այլ ձևն է հանդիսանում պարսատիկը, մի հնադարյան զենք, որ ամենահին ժամանակներում գործածվում էր թե անհատապես և թե պատերազմներում, ուր գործում էին պարսատիկներով զինված հատուկ ռազմիկ մասեր։

Պարսատիկը բաղկացած է կաշվե մի կտորից, որ կազմում է հիշյալ զենքի կենտրոնական մասը, սրա երկու ծայրերից ամրացված են թոկի կամ կաշե պարաններ։ Քարը պարփակում են միջին մասում և ապա երկու ծայր-թոկերը միացնելով աջ ձեռքում, մեծ արագությամբ մի քանի անգամ պտտեցնում են օդում, ապա մի ակնթարթում արձակում են թոկերից մեկը, որի ծայրը չի կապած կամ հագցրած մատին, քարն իներցիայի ուժով դուրս է նետվում իր բնից և սլանում դեպի նշան առած կետը։ Մեր թվականությունից 3-րդ հազարամյակում այդ զենքն առանձնապես տարածված էր Միջերկրածովյան երկրներում, Եգիպտոսում, 2-րդ հազարամյակում Պաղեստինում, իսկ VIII դարում՝ Ասորեստանի զորքերի մեջ։ Պարսատիկի գործածման մասին հին Հայաստանում հիշատակում են հայ պատմագիրները։

Պարսատիկը, գրեթե անփոփոխ ձևով, մինչև այսօր գործ են ածում Հայաստանում, մանավանդ լեռնային շրջանների գյուղերում—պատանիներն ու երիտասարդները՝ որպես սպորտ, իսկ հովիվները որպես գործիք հոտը ղեկավարելու ժամանակ։ Անունը պահպանվել է նույնությամբ, կամ անվանում են «պարսեա», իսկ Զանգեզուրում «քարման»։

Սկավառակ: Այս զենքը նետվող կամ շպրտվող քարի մի այլ ձևն է։ Տակավին նեոլիթյան կուլտուրայում (I, 124) գոյություն ունեին օրախցիկաձև սկավառակներ (ДИСК)։ Մետաղի ինդուստրիայի ծագումով՝ քարե սկավառակները ձևափոխվում են մետաղե սկավառակների, դրանց մեկ օրինակը հայտաբերվել է Ադրբեջանում, Գանձակի գավառի Ներքին Քարհատի (Դաշկեսանի) մի դամբանում։



Վահան: Այս զենքով հնադարյան մարդը պաշտպանվում էր հակառակորդի հարվածներից։ Նախնական վահանը եղել է փայտից, որ ձախ ձեռքին բռնելով, կամ ետ էին մղում նետած քարը, տապարի, նիզակի, դաշույնի հարվածները կամ նրանց դեմ էին պահում վահանը, որի՛ ետևը պատսպարում էին մարմնի առջևի մասը։ Ենթադրվում է, որ առաջին վահանները եղել են երկարակող, փոքր ինչ լայնությամբ, պարզ ու հասարակ փայտեր, որպիսիները դեռ այժմ էլ գործ են ածվում Ավստրալիայի ու Աֆրիկայի որոշ մարզերի վայրենի ցեղերի մեջ։ Հետագայում արդեն նախնադարյան մարդը, զարգացնելով իր ռազմական տեխնիկան, սովորեց պատրաստել ավելի լայն վահաններ, որոնք ծածկում էին պաշտպանվողի ամբողջ իրանը։ Այդ վահաններն ունեին բազմազան ձևեր, ինչպես ներկայումս էլ ունեն ժամանակակից վայրենի ցեղերի մեջ։ Վահանները լինում էին ձվաձև, կլոր, ուղղանկյուն և այլն։ Նրանք շինվում էին ծառերի լայնացրած կեղևներից՝ կամ շրջանակներ էին վրաները հաստ կաշի քաշած։ Ետևի մասի կենտրոնում կաշեպարանից, փայտե օղակից կամ հատուկ կոթ ամրացնելով բռնելու տեղ էին հարմարեցնում։

Հայաստանում պեղված դամբաններում չեն հայտաբերվել վահանի մնացորդներ։ Եթե փայտե ու կաշե վահանների բացակայությունը կարելի է բացատրել նրանով, որ այդ պաշտպանողական գործիքները երկար ու ձիգ դարերի ընթացքում փտելփոշիացել են երկրի խորքերում, ապա ինչով բացատրել մետաղի, գեթ պղնձե ու բրոնզե վահանների բացակայությունը Հայկական լեռնաշխարհի մինչև այժմ պեղված հուշարձանային տիպի դամբաններում։ Դա պետք է բացատրել միայն նրանով, որ մետաղագործության սկզբնական շրջաններում մետաղն այնքան դժվար մշակելի էր ու թանկարժեք, որ վահանների համար մեծաքանակ մետաղ պատրաստելն ու արհեստագործելը միանգամայն անձեռնտու, եթե չասենք անհնարին էր։ Կամ եթե մետաղե վահաններ եղել են, ապա պետք է ենթադրել, որ դրանք չեն թաղվել մեռյալների հետ, այլ ժառանգաբար անցել են հաջորդող սերունդներին, իբրև սրբազան նշանակություն և պաշտպանության կախարդական ուժ ունեցող առարկաներ։

Բայց և այնպես հին պատմական դարերից մնացած մի քանի բրոնզե վահաններ հայտաբերվել են Վասպուրականի շրջանում կատարված պեղումներից։ Այդ վահանները, որոնք պատկանում են խալդական կուլտուրային, հայտաբերվել են ոչ թե դամ-

րաններում. այլ պարզապես երբեմնի բնակարաններ կամ սենյակներ եղած վայրերում։ Այս հանգամանքն արդեն ենթադրել է տալիս, որ վահանները թաղելու սովորություն չի եղել։ Հիրավի, մենք տեսնում ենք ասորական նկարներից, որ խալդական տաճարների սյուներն ու պատերը զարդարված էին լինում վահաններով։ Հավանաբար, այդ վահանները զորավոր ու սրբագործված նշանակություն էին ստանում և տիրապետող դասակարգի ու իշխողների կողմից նվիրաբերվում էին տաճարներին ի հիշատակ տարած պատերազմական հաղթանակների։ Այդպիսի բրոնզե վահաններ, որոնք պատկանելիս են եղել խալդական Ռուսաս Բ-ին, Արգիշտիի որդուն (685—675 թ. մեր թվականությունից առաջ) և Ռուսաս Դ-ին, Էրիմենայի որդուն (605—585 թ.) փչացած վիճակում գտնվել են Վանի Թոփրակկալեյի պեղումներում[43]։

Նմանապես մեկ հատ մեծ վահան և մեկ հատ նույնպես բրոնզե կապարճ հայտաբերվել է Զարբախ գյուղի մոտ (Երևանի [illegible]) 1940 թ. պեղած «Կարմիր բլուր»-ում, որի կուլտուրան խալդական տիրապետության ժամանակաշրջանին է վերաբերում։ Այդ վահաններով երևի զարդարված է եղել տեղական մեծ պալատ-շենքի սենյակի պատը։

# IV

## ԿԱՌՔԵՐ

Մեր ձեռքի տակ եղած հնագիտական տվյալները ներկայացնում են Հայկական լեռնաշխարհում մետաղի վաղագույն դարաշրջանում գործածված կառքի երկու տեսակներ։ Սրանք, թեև ամբողջական ու լրիվ չեն պատկերացնում այն ժամանակվա կառքերը, բայց և այնպես գեթ մոտավոր գաղափար են տալիս նրանց մասին։

Սայլ։ — Երվ. Լալայանը Նոր-Բայազետի գավառի պեղումների ընթացքում, Ադիաման գյուղի մոտակա դամբարանում, որ պատկանում է բրոնզեդարյան շրջանին, հայտաբերել է մի կառք։ Այդ կառքը, թեև ամբողջական էր, բայց տասնից փտած լինելով, հանելու միջոցին փշրվել էր։ Երվ. Լալայանին, սակայն, հաջողվել է հանված բոլոր մասերից կազմել այդ կառքի վերականգնեցրած (ռեկոնստրուկտիվ) ամբողջական պատկերը։ Հիշյալ կառքը շատ նման է հայկական և ընդհանրապես Առաջավոր Ասիայի այժմյան սայլերին, ուստի Երվ. Լալայանն իր նկարագրի մեջ այն անվանում է սայլ։

«Նա բաղկացած է երկու քառանկյունի թևերից, որ հանգչում են երկու միապաղաղ անիվների վրա։ Սա տարբերվում է այժմյան սայլերից բոլոր նրանով, որ փոխանակ այժմյան սայլերի առաջամասում գտնված նեցուկի, ունի երրորդ անիվը, որ հետիններից մի քիչ փոքր է։ Նա, գտնված միջոցին, իր տեղում չէր, այլ մի կողմ էր ձգված, սայլից փոքր ինչ հեռու, ուղղահայաց դրությամբ ընկած լինելու պատճառով։ Սայլի փայտե երկու կողի վրա բարձրանում էին փայտե թևեր, որոնք միանում էին առի շեղ ձգված մի-մի կողով և ծածկված էին գեղեցիկ կարվածքով։ Ամեն մի անիվը բաղկացած էր երեք կտորից, որոնք միացած էին իրար հետ փայտե սեպերով։ Անիվի միջին տախտակի մեջ ծակ էր արված առանցքի համար, որի ծայրն ամրացած էր վերևից ներքև խրված փայտերով այնպես, որ ոչ թե անիվն էր պտտվում, այլ առանցքը, ինչպես այժմյան հայկական սայլերինը։ Այս հետևի անիվների տրամագիծը հասնում էր 95 սմ.։ Առանցքը կլոր էր — 12 սմ. տրամագծով, դերանը 1,8 մետր երկարությամբ, որը պեղման միջոցին արդեն կոտրված էր։ Առաջի անիվը, որ, ինչպես ասացինք, հետիններից փոքր էր, 60 սմ. տրամագիծ ուներ և պտտվում էր երկու կողերի ծայրերին անցկացրած առանցքի շուրջը։ Կողերի վրա, հետին անիվների մոտ, ամրացված էր կես մետր երկարությամբ փայտե մի-մի բարձ, որի միջով անցնում էին զուգահեռական երկու սեպեր։ Երկու կողերի վրա փռված էին տախտակներ. սայլի թևերը ծածկված էին պարուրաձև փորվածքներով և գեղեցիկ վարդազարդերով։ Լուծը միանգամայն նման էր հայկական այժմյան սայլի լծին։ Նա մի քառանկյունի փայտ էր, որի ծայրերին անց էին կացված փայտե սամիր. լծի վրա կար բրոնզե երկու շրջանակ, կարծես, բեր զարդարանք, իսկ սրանց միջև կանգնած էր բրոնզե մնամեջ մի արձան, որի մեջ կային երեք փոքրիկ զանգակներ, որոնք, սայլը շարժվելիս, զնգզնգում էին (ՀԴԳ, 194—199)։

Մեռյալի դիակը, որի կմախքը պահպանվել էր դամբարանում, գտնվել է սայլի վրա և ապա միասին ամփոփվել գերեզմանում։ Այդ սայլին, ինչպես բացահայտ է թաղման հանգամանքներից, լծված են եղել երկու զույգ եզներ, որոնց կմախքները թաղված են նույն տեղում։

Կառքով թաղելու սովորությունն առանձնապես տարած-

ված էր հին գերեզմանների և մանավանդ սկյութների մեջ, ինչպես այդ պարզվում է հնագիտական պեղումներից[44]։ Սկյութական այդ ձևի թաղման պարագան նշանակություն ունի մեզ համար այն տեսակետից, որ բացատրելի չէ Եր. Լալայանի հայտաբերած սայլով թաղման սկյութական ծագումը, որ մի քանի գիտնականներ փորձում են Անդրկովկասի բրոնզեդարյան դամբանները կապել սկյութական ժողովրդի պատմության հետ։ Հին սկյութները, ինչպես նկարագրում է Հերոդոտը (IV, 71, 72, 73), իրենց թագավորի կամ ցեղական իշխանի մարմինը թաղելուց առաջ, ի ցույց ժողովրդի, մի անգամ էլ նրան հանդես էին բերում իշխանական բովանդակ փառքով, և մեծ հանդիսավորությամբ պտտեցնում էին հատուկ փառահեղ սայլակառքով[45]։

Երբ վերոհիշյալ նկարագրի հիման վրա համեմատություն ենք դնում Աղիտամանի դամբանի «իշխանական սայլի» բովանդակ կոնստրուկտիվ կազմը ներկայումս Հայկական լեռնաշխարհում գործածվող գյուղացիական սայլերի հետ, տեսնում ենք, որ մեր թվականությունից մոտ 1000 տարի առաջ գոյություն ունեցող այդ սայլը միանգամայն հար և նման է այսօրվա մեր սայլերին։ Այս փաստից ամենայն իրավամբ պետք է եզրակացնել, որ բրոնզե ու վաղագույն երկաթե դարերում գործածական էր նույն սայլը, ինչ որ է ներկայիս մեր գյուղացիականը, որը միաժամանակ ծառայում է թե մարդիկ և թե բեռներ տեղափոխելու համար։

Սակայն մի քանի հնագիտական նկարներից պետք է եզրակացնել, որ Առաջավոր Ասիայի հարավում գործածվում էին նաև քառանիվ բեռնատար սայլեր, գլխավորապես Ասորեստանում, ուր երկրի ռելյեֆը, լինելով ավելի հարթ ու լեռնազուրկ, հնարավորություններ է ընձեռում այդ ձևի կառքերի գոյության։ Բալավատի բրոնզե դռան նկարում տեսնում ենք այդպիսի ասորական քառանիվ մի սայլ, որ կրում է ուրարտական մեկ կարաս. այդ քանդականկարում արձանագրված է ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ի (860—825 թ.թ. մեր թվականությունից առաջ) ավարառումը խալդերից։ Նույնպիսի քառանիվ սայլի պատկեր է փորագրված խալդական գլան-կնիքի վրա՝ խալդական Ռուսաս թագավորի անունով։ Կասկած չկա, որ խալդական այդ կառքն ընդօրինակված է ասորեստանյան համանման կառքերից[46]։

Ռազմակառք։ — Ժակ Մորգանի պեղումով Ախթալայի նախապատմական դամբաններից մեկում հայտաբերված է բրոնզե



կիսատ մի դուռ, որի վրա փորագրված է երկանիվ կառքի պատկեր։ Այս կառքի փորը, որ բաղկացած է ստորին ուղիղ ձողից, առաջամասում միացած է վերին կորացած ձողի հետ, կազմելով en profil մի կիսաշրջան. վերին կորաձև և ստորին ուղիղ ձողերի միջև առիշեղ ամրացած են 3 ուղղահայաց սեպեր։ Կառքն ունի երկու ոչ այնքան մեծ անիվ՝ 6-ական բարակ շառավիղներով։ Կառքի առջևից ձգվում է, ձիերի հավասարությամբ, երկար լծափայտ (ДЫШЛО), որ վերջանում է կոր ծայրով, վրան ծաղկի կաղապար ամրացած։ Կառքի վրա կանգնած է ֆանտաստիկ կենդանու գլխով մեկ մարդ, ձեռքը պարզած, որ նշան է ձիերը քշելու։ Նկարը բավականին կոպիտ է։

Թեև Ժ. Մորգանը որոշ կարծիք չի հայտնում այդ կառքի նշանակության մասին, բայց պետք է կռահել, որ դա ռազմակառք է լինելու։

Հայկական լեռնաշխարհում հնում, ինչպես և ներկայումս, ձիերն օգտագործվում էին հեծնելու համար, իսկ առօրյա տնտեսական կյանքում և սայլերի երթևեկության համար լծվում էին եզները։ Այդ հնագույն դարերում միայն ռազմական կառքերն էին լծվում ձիերով։ Հետևապես՝ վերոհիշյալ երկանիվ կառքը առօրեական փոխադրական սայլ չէ։ Բացի այդ՝ հիշյալ կառաձիերի և մարդու նկարի առանձնահատուկ ոճավորումը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ ռազմական կառք է արձանագրված։ Հնագույն նկարների, ինչպես և անդրկովկասյան գոտիների քանդակների մեջ ընդունված էր պայմանական ոճավորում։ Հին հաթական կնիք-գլանների վրա կենդանիների կոճերն առավելապես նկարագրված է պայմանական տեսաձեյով. նմանապես և եգիպտական նկարների մեջ, որոնք առհասարակ, զարմանալի հարազատությամբ էին վերարտադրում իրականությունը։ Հաթական ռազմակառքի ձիերը կրում էին ծածկոց, որ պատկերացված է մետաղե թեփի ու թիթեղիկների օրնամենտներով։ Այդ ծածկոցն, անշուշտ, ծառայում էր ձին թշնամու նետերից պաշտպանելու համար։ Ահա հաթական ձիերի ծածկոցի օրնամենտացիայի մեջ պետք է որոնել այն պայմանական օրնամենտացիայի ծագումը, որ նկատում ենք կովկասյան և ընդհանրապես հին Հայաստանի պեղածո բրոնզե գոտիների վրա փորագրված ձիերի, և այլ կենդանիների իրանը վերարտադրելու մեջ։

Արդ, համեմատելով Ախթալայում հայտաբերված դռան վրա

պատկերացրած երկու ձիերն ու մարդը, որոնց իրանները ծածկված են բեկբեկ գծերով, իսկ ոտներն ու գլուխները միմիայն կետերով, դժվար չէ եզրակացնել, որ նկարիչը բեկված գծերով ցանկացել է արտահայտել ոչ թե մազեր, այլ մարմնի այդ մասերի ծածկված լինելը, իսկ կետերով ցանկացել է արտահայտել մյուս մասերի մերկ լինելը, տալով իր նկարին ոճավորված տեսագիծ, հին պատկերացումների նմանողությամբ: Ուրեմն Ախթալայի գոտու վրա նկարված ձիերը ծածկոց են կրում, նմանապես մարդու ամբողջ իրանը, վիզը, ծոծրակը և գլուխը, բացի դեմքից, ծածկված են, մի հանգամանք, որ ցույց է տալիս զգեստի կամ պաշտպանողական զրահի ներկայությունն այս դեպքում:

Գալով այդ նույն գոտու վրա պատկերացրած կառքին, նկատելի է սրա ընդհանուր նմանությունը հաթական ռազմակառքի հետ, նմանապես Բրիտանական թանգարանում (Լոնդոն) ցուցադրված՝ Բալավատի բրոնզե թերթիկների վրա գծագրված նինեվիական (Ասուր-Բաբելոնյան) ռազմակառքերի հետ (JMMS, I, 141):

Սակայն մեզ համար հետաքրքրական է նաև խալդական ռազմակառքի նկարը, որ փորագրված է խալդական մի կավե գլան-կնիքի վրա: Այդ ռազմակառքը միանգամայն նման է ասորեստանյան ռազմակառքերին և ամենայն հավանականությամբ խալդերն այդ կառքերի ձևն ընդօրինակել են ասորեստանցիներից, որոնց ռազմական տեխնիկան, ինչպես հայտնի է, հասել էր բարձր զարգացման: Բացի այդ՝ Թոփրակ-կալեում գտնվել է կառքի բրոնզե կաղապար, որ պահվելիս էր եղել Վանի թագավորական միախնարների մոտ (LHA, II, 581): Դժբախտաբար մենք հնարավորություն չունեցանք գտնելու այդ կառքի ոչ նկարագիրը, ոչ էլ պատկերը:

Հետևապես՝ Ախթալայի նկարում մենք տեսնում ենք Հայկական լեռնաշխարհում կիրարկվող ռազմակառքի օրինակ, ռազմակառք, որ իրոք գոյություն է ունեցել այդ երկրում, ինչպես այդ վկայում են հնագիտական տվյալները:

Մի շարք հնագիտական-պատմական փաստեր ապացուցում են, որ Առաջավոր Ասիան է եղել ռազմակառքի ծագման հայրենիքը, որտեղից նա տարածվել է դեպի Եգիպտոս[40]: Մյուս կողմից էլ Առաջավոր Ասիայից սիրիական-փյունիկյան երկրով ու Փոքր Ասիայով նա տարածվել է դեպի Կրետե-միկենյան (Միջերկրածովյան) կուլտուրայի շրջանները և ապա Հունաստան, և



հին Իտալիայի վրայով՝ Հարավային ու Արևմտյան Եվրոպա: Հնագիտական պեղումներով մեզ չեն հասել այդ կառքերի ամբողջական շոշափելի մնացորդներ, որ կարողանայինք նրանց իրական պատկերը վերականգնել: Սակայն այդ պատկերը մեզ տալիս են պահպանված քանդակները, որոնցից ամենահինը վերաբերում է 16-րդ դարին (մեր թվականությունից առաջ)՝ հին եգիպտական Թեբե քաղաքի հնագիտական պեղումներից: Դրանց ավելի հին լինելն այդօրինակ կառքի տերրակոտե փոքրիկ կաղապարները (մոդել) հին ասորեստանյան ծագումով, որոնք վերաբերում են՝ 1900—1300 թվականներին (RL, XIV, 236—237):

Ռազմակառքի ծագումն Առաջավոր Ասիայում պետք է անպայման կապել այդ երկրում ձիերի երևան գալու փաստի հետ: Այդ տիպի կառքերն իբրև ռազմական նշանակության տեսակետից դյուրաշարժ ու արդյունավետ չէին լինելու, հետևապես լծված պիտի լինեին արագավազ կենդանիներ: Այդ կենդանիները եղել են ձիերը, ինչպես և ցույց են տալիս ամենահին քանդականկարները: Իսկ ընտանեցրած ձին Առաջավոր Ասիայում երևացել է մոտավորապես մետաղե դարերի սկզբին, ուստի և ռազմակառքերի ծագումն էլ պետք է վերագրել այդ դարերին:

Ըստ երևույթին 12-րդ դարի վերջերին (մեր թվ. առաջ) հայկական լեռնաշխարհի ժողովուրդների մեջ ռազմակառքն արդեն կարևոր տեղ էր բռնում պատերազմական գործում: Ասորեստանի թագավոր Տիգլաթ-Պալասարը (1108—1080 մեր թվ. առաջ) իր մի հաղթական արձանագրության մեջ հիշատակում է, թե ինքն իր ռազմակառքով արշավել է Նայիրիի վրա և, հաղթելով Նայիրիի թագավորներին, ջարդել է նրանց ռազմակառքերից 120 հատ[41]:

Վերոհիշյալներից պետք է հետևցնել, որ ռազմակառքը, սովորական կառքի կամ սայլի հետ համեմատած ավելի ուշ է երևացել: Սայլը, իբրև ծանրության և մարդիկ տեղափոխող միջոց, ավելի հին ծագում ունի և նրա հայրենիքը նույնպես Առաջավոր Ասիան է համարվում: Սովորաբար սայլին լծում էին եզներ, գոմեշներ. ենթադրվում է, թե սայլը գոյացել է արորի հետ միաժամանակ, որին նույնպես եզներ էին լծում. երկուսն էլ միևնույն տնտեսական [illegible] հետևանքներ են:

Սայլի մեզ հասած ամենահին քանդականկարները ծագում են Բաբելոնից: Լագաշ քաղաքի իշխան Էանադուն (3100 թ. մեր թվ. առաջ) նկարված է մի քարե արձանի վրա՝ սայլի վրա

կանգնած։ Նմանապես բաբելոնյան մի կնիքի նկարը, որ վերագրվում է մոտավորապես 4-րդ հազարամյակին, ներկայացնում է ոչ այնքան պարզ գծերով մի սայլ, որի վրա կանգնած է տապարով զինված մեկ մարդ (RL, XIV, 233—234)։ Սակայն սեպագիր արձանագրություններից ու նկարաքանդակներից հաստատապես կարելի է կռահել, ինչպես ապացուցում է Էկքհարդ Ունգերը, որ սայլն առաջին անգամ երևացել է Սումերական երկրում (Հարավային Միջագետք) մոտավորապես 3500—3300 թվականների միջև, բայց, համենայն դեպս, ոչ 3500 թվականից առաջ, որովհետև այդ թվականին սումերների հնագույն սեպագրերի մեջ և ոչ մի նշանատառ չկար սայլի մասին և միայն 3300 թ. սայլը երևում է սումերական իրականության մեջ, ինչպես վկայում են պատկերներն ու քանդականկարները։ Սումերներից արդեն սայլը տարածվել է ամբողջ Առաջավոր Ասիայում, ապա Եգիպտոսում և, վերջապես, Նախապատմական Եվրոպայում[49]։

Նախնական սայլերի անիվները եղել են առանց շառավիղների (ճաղուղների)։ Դրանք բաղկացած էին հաստ, զանգվածեղ ու միապաղաղ տախտակներից և ամրացված էին առանցքի վրա, որը պտտվում էր սայլի տակ փայտե զույգ սեպերից բաղկացած երկու բների մեջ։ Անիվների այդ հին ձևը, ինչպես տեսնում ենք, համառ պահպանողականությամբ մնացել է Հայկական լեռնաշխարհում մինչև այժմ գործածվող սայլերի մեջ։ Մոտավորապես 2300 թ. (մեր թվ. առաջ) շառավիղով անիվներն առաջին անգամ երևան են գալիս հաթական կուլտուրայում. այդ անիվների պատկերները տեսնում ենք գլխավորապես կապադովկիական կավե տախտակիկների ու կնիք-գլանների վրա[50]։ Հին բաբելական Համմուրաբիի թագավորության շրջանից մեզ հասել են 4 շառավիղ ունեցող անիվների նկարներ։ Սակայն այդ անիվները ոչ թե սայլերին են պատկանում, այլ ներկայացված են առանձին, որպես պատերազմական ու արևի աստվածության խորհրդանիշ (սիմվոլ)։ Պատերազմական այդ աստվածության անվանն էր նվիրագործված նաև ռազմակառքը։

Այստեղից պետք է եզրակացնել, որ շառավիղով անիվներն առաջին անգամ գործադրվել են ռազմակառքերի համար։ Եվ դա բնական էր։ Ռազմակառքը պետք է արագընթաց ու թեթևաշարժ լիներ. նա ծանր բեռ չէր կրում. 1—3 մարդ միայն կարող էին նրա վրա կանգնած դուրս գալ պատերազմի դաշտ։ Ուստի



նրա անիվները թեթև ու արագաշարժ պիտի լինեին, որը հնարավոր է դառնում միայն շառավիղաձև անիվների գործածությամբ։ Մինչդեռ տնտեսական ու փոխադրական նպատակների ծառայող սայլերը, որոնք միշտ ահագին բեռներ էին կրում և լծվում էին դանդաղաշարժ եզներով, անհրաժեշտաբար պետք ունեին ամուր, զանգվածեղ անիվների, շինված միապաղաղ ու հաստ տախտակներից։

Ձիերի սայլը։ Վերը տեսանք, որ վաղագույն ժամանակի դարերում ձիերն օգտագործվում էին ռազմակառքերին լծելու համար։ Սակայն ձիերն ավելի մեծ չափով օգտագործվում էին հեծնելու համար, որի գործնական հետևանքներից մեկը եղավ հեծյալ զորախմբերի անհրաժեշտ մասնակցությունը և խաղացած մեծ դերն այն ժամանակվա պատերազմներում։ Այդ են ապացուցում հին եգիպտական, ասուր-բաբելական, հաթական և այլ քանդականկարներն ու հնագիտական հայտաբերումները։ Այդ են ապացուցում նաև հին Հայաստանի պեղված դամբանները, որտեղ գտնվում են ձիերի ամբողջական կմախքներ (մետաղե բրոնզե կամ երկաթե—սարքով), որոնք թաղվել են իրենց տերերի հետ միասին։ Երբեմն էլ իշխանական կամ ազնվական դամբաններում ձիերի կմախքների հետ միասին լինում են և այլ մարդկային կմախքներ, որոնք, անտարակույս, եղել են ձիապան-ծառաներ։ Ձիերի սարքը գտնվել է գրեթե մեր բոլոր վայրերի դամբաններում։

Ձիերի սարքավորման մեջ ուշադրության արժանի են սանձերը, որոնք ունեն տարբեր ձևեր։ Այդ տարբերությունները հնարավորություն են տալիս պատկերացնելու սանձի ձևերի զարգացման դանդաղ աստիճանները։

Ամենահին ձևը պետք է համարել Նոր-Բայազետի գավառի Ղըլըղ գյուղի Մանիչարի հովտի դամբաններում գտնվածը, որ 12 սմ. երկարությամբ և 1 սմ. տրամագծով բրոնզե մի ուղղապտույտ ձող է, երկու ծայրերն օղակներով ամրացված, որոնց միջով անցկացված պետք է լինեին երասանակները։ Հաջորդ ձևը, որ ավելի զարգացած է և հաճախ է հանդիպում, ներկայացնում է կոր հանդույցներով իրար մեջ անցկացրած բրոնզե երկու ձողիկներ, որոնք ծայրերում վերջանում են միաձույլ ամրացված օղակներով, որոնց կապվում էին երասանակները։ Այս ձևի սանձեր հայտաբերվել են Սողուտլուի (Լոռու) դամբաններում։ Այս սանձերին միանգամայն նման են Նոր-Բայազետի

գավառի Զանգեզուրի դամբարաններում գտնվածները, այն տարբերությամբ միայն, որ սանձի ծայրերը, օղակների մոտ, ունեն շառավղավոր մեխական անվակներ. վերջիններս ծառայել են այն նպատակին, որ թույլ չտան սանձը ձիու բերանից դուրս գալու: Վերջապես, սանձի երրորդ ձևը, որ ավելի բարդ կազմ ունի, որոշ չափով նմանվում է մեր այժմյան սանձերին: Սա երկաթից է, որից և գտնվել է Նոր-Բայազետի մոտ, Գառաշար կոչված վայրի դամբարանում: Երկաթե նույնանման սանձեր հայտաբերվել են նաև Վանի պեղումներով լույս հանած խալդական կուլտուրայում:

Սովորաբար ձիերի վրա եղել են զարդարանքներ, որոնք շինված են բացառապես բրոնզից, երբեմն էլ պղնձից: Ձիերի կրծքին կախված էին լինում կիսալուսնաձև շրջանակներ կամ սրտաձև թիթեղիկներ: Սրանք ծառայում էին որպես հուռութ, պաշտպանելիկ նշանակությամբ, այսինքն՝ ըստ տիրող հավատալիքի, ձին պաշտպանում էին «չար աչքից», կախարդական ազդեցություններից, հիվանդություններից և այլ փորձանքներից: Այդօրինակ պաշտպանելիկ հավատալիքներ մինչև մեր օրերը պահպանվել են ասիական ժողովուրդների, նաև հայերի մեջ, որոնք սովորություն ունեն ձիերի կրծքից կախել թե վերոհիշյալ և թե այլ ձևի հուռութներ (ամուլետներ): Ձիերի վրա եղել են բրոնզե զարդ-կոճակներ, որոնք կլոր են, և 4 սմ. տրամագծով, փոքր ինչ ուռուցիկ, և ծայրերին երկու տեղ երկուական ծակ ունեն ամրացնելու համար: Այդպիսի կոճակներ, իբրև ձիերի զարդարանք, գործածվում են մինչև այժմ էլ: Բացի այդ՝ ձիերի վզից կախված են եղել, ինչպես և ներկայումս, բրոնզե բոժոժներ ու զանգակներ, որոնք ծառայելիս են եղել ոչ միայն իբրև զարդարանք կամ ազդանշան, այլև ունեցել են պաշտպանելիկ նշանակություն:

V

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ աչքի ենք անցկացնում այն բոլոր մարտական գործիքները, որոնք այսօր ասպարեզի վրա են շնորհիվ հնագիտական հայտաբերումների, նկատում ենք, թե տնտեսական գործիքների համեմատությամբ քանակով ու տեսակով որքան հարուստ են այդ զենքերը, որոնք պատկանում էին Հայկական լեռնաշխարհում ապ-



րող ժողովուրդներին: Այդ հանգամանքը վկայում է տեղական հնագույն բնակչության ռազմիկ բնույթը, ցուցաբերում է մարտական գործի բարձր զարգացումն ու տարածումը: Այդ հասկանալի է դառնում, եթե նկատի առնենք հին Հայաստանի աշխարհագրական դիրքը, որ հսկայական նշանակություն է ունեցել այդ երկրի սոցիալ-քաղաքական կյանքի համար:

Հայկական լեռնաշխարհը, հանդիսանալով Կովկասյան պարանոցի շարունակությունը և կազմելով Առաջավոր Ասիայի հյուսիսային մասը, մի կամուրջ էր, որի վրայով դարերի անվերջ հոսանքում մակընթացական ու տեղատվական ալիքներով տեղի էին ունենում էթնիկ բազմաթիվ գաղթաշարժեր Եվրոպայից ու Արևելյան Ասիայի խորքերից դեպի Առաջավոր Ասիա, և երբեմն էլ՝ ընդհակառակը: Այդ էթնիկ ներխուժումները, անտարակույս, չէին կրում խաղաղ բնույթ. նրանք ուղեկցվում էին զենք ու զրահով, ժողովրդական զանգվածների անխնա բաղխումներով: Երբեք չէր դադարում զենքի շառաչի արձագանքը Հայկական լեռնաշխարհի ձորերում. երբեք չէին ցամաքում արյան գետերը նրա դաշտերում, երբ նորեկ տիրողները, նվաճելով բնիկների տեղերը և իրենց հպատակեցնելով տեղացիներին, հաստատվում էին որպես իշխող տարր, որպեսզի հետագա դարերում իրենց հերթին նույնպես ընկճվեին մի այլ, ավելի ուժեղ էթնիկ ներխուժման առաջ:

Այդ էթնիկ գաղթաշարժերը թողել են իրենց հիշատակ հետքերը ոչ միայն հին Հայաստանի մարդաբանական, ազգագրական ու լեզվաբանական շերտերում, այլև այն նյութական մնացորդներում, որոնք այսօր լույս աշխարհ են հանվում հարուստ հնագիտական գյուտերով և որոնց մեջ այնքան մեծ տեղ են գրավում զենքերը: Իսկ այդ զենքերը, ինչպես և մյուս նյութական մնացորդները, շատ բան են ասում Հայկական լեռնաշխարհի այն կուլտուրայի մասին, որի վերաբերմամբ մեզ չեն հասել պատմական տեղեկություններ:

Զենքերի թաղման հանգամանքները դամբարաններում ցույց են տալիս, որ զենք կրողները եղել են իշխող տարրերը: Սրանք, որպես նվաճողներ, կազմում էին զինվորական տիրապետող դասը, որին ենթակա էր նվաճված ժողովուրդը՝ դուրկ այլևս զենք կրելու իր նախկին իրավունքից: Նվաճված ժողովրդին անխնա շահագործելով էր ապրում և մակաբուծային գոյություն պահպանում այդ զինվորական դասը, որն իր զենքի

ուժով էր հլու հնազանդության մեջ պահում այդ ժողովրդին: Այդ մետաղե զենքերը խոսուն վկաներ են Հայկական լեռնաշխարհի վաղագույն մետաղի գործվում տոհմային հասարակության քայքայման և դասակարգային շերտավորման սկզբնավորության:

Մյուս կողմից՝ այդ զենքերը մեզ հնարավորություն են տալիս մոտավոր գծերով վերականգնելու տիրող դասակարգի կենցաղային պայմանները, որտեղ մարտական արվեստի կատարելագործումն ու զարգացումը դառնում է նրա նյութական՝ կայության ու սոցիալական կայունության միջոցներից մեկը, իսկ որսորդության ժամանցն էլ հանդիսանում է ինքնադրոշ տիրապետողի հեղինակության ցուցանիշը:

Մեր նկարագրած զենքերի տեսակներն արդեն ընդգրկում են մարտական տեխնիկայի ամբողջ պատկերը:

Պատերազմում սկզբնապես տիրում էր մոտակա և ապա հեռակա մարտի ձևը: Նախնական զենքերը՝ գուրզը, տապարը, դաշույնը և մասամբ նիզակը՝ հարմար էին միայն մոտակա կռիվների պայմաններում, իսկ աղեղն ու նետը, պարսատիկը, կարճ նիզակը (ДРОТИК), ռազմակառքը, հեծելազորն արդեն հնարավորություններ էին ընձեռում հեռավոր տարածության վրա կռիվներ մղելու:

Մոտակա կռվի ձևն էլ իր հերթին, ռազմական տեխնիկայի զարգացման աստիճանի համեմատ, սկզբներում կրում էր անհատական բնույթ և ապա միայն դառնում է մասսայական ռազմի մոտակա ձևը: Նախնական զենքի տեսակները՝ դաշույնը, տապարը, գուրզը՝ մարտական արվեստին տալիս էին ոչ միայն մոտիկից կռվելու անհրաժեշտություն, այլև ենթադրում էին, որ պատերազմի հաղթական ելքը որոշվում է անհատական մարտի վերջավորությամբ: Հոմերոսի Իլիականում, ժողովրդական դյուցազներգություններում, առասպելներում և հեքիաթներում պատերազմները ու ժողովրդական կռիվները կրում էին իսկապես անհատական մարտի բնույթ, որտեղ իշխանները կամ մասսաների առաջնորդներն իրենց անձնական հերոսամարտով էին ձեռք բերում և վճռում պատերազմի հաղթական վախճանն ու հակառակորդի պարտությունը[1]: Պատերազմական այդ ձևերն այժմ էլ գոյություն ունեն Ավստրալիայի ու Աֆրիկայի վայրենի ցեղերի մեջ:

---

[1] Խմբագրությունը չի բաժանում հեղինակի այս կարծիքը:



Կռվի այդ անհատական ձևը մենք տեսնում ենք նաև հին հայկական առասպելներում (Հայկի ու Բելի կռիվը, Արամի, Արայի և այլոց հերոսությունները ըստ Մովսես Խորենացու Պատմության), հայ ժողովրդական հեքիաթներում և մանավանդ դյուցազներգություններում, որոնց մեջ պատերազմների հաղթանակող մարտիկները՝ Մհեր, Դավիթ, Սանասար, Բաղդասար և այլ հերոսներն են:

Անհատականից այնուհետև զարգացան նախնական մասսայական ձևի պատերազմները, որոնք մոտակա, անմիջական բաղխումով էին տեղի ունենում, կատարվում էին խիտ սեղմված և կուռ շարքերով, որոնց, բացի դաշույնից ու տապարից, գլխավոր զենքերն էին նիզակը (երկար), վահանը և մասամբ սուսերը:

Ռազմակառքը և ձիերի կիրառումը հեծելազորի համար—հեղաշրջում առաջացրին նախնական պատերազմական տեխնիկայում: Հեծելազորն ու ռազմակառքը հանդիսացան այն նոր մարտական միջոցները, որոնցով հնարավոր էր լինում արագշարժ հարձակումով խորտակել խիտ սեղմված զորաշարքերը և վերջիններս ճեղքելով՝ հանկարծակի իրարանցում առաջ բերել կռվողների մեջ և նույնիսկ երկար տարածության վրա հետապնդել փախչող հակառակորդին:

Հեծելազորի ու ռազմակառքի շնորհիվ, որոնք զինված էին գլխավորապես նետ ու աղեղով, նետող զենքերը միահեծանաբար փոխում են մարտական տեխնիկան, հնարավորություն ընձեռելով պատերազմական գործողությունները վարել զինվորական մեծ զանգվածներով լայն ու հեռավոր տարածությունների վրա, որտեղ սկսում են կիրառել հարձակողական ու պաշտպանողական հնարագիտության զանազան եղանակները: Իրավի, հին Հայաստանի դամբաններում գտնված նետերի ու նիզակների մեծ քանակը, համեմատած մյուս տեսակի զենքերի հետ, նաև ձիերի կմախքները վկայում են, որ ռազմական տակտիկան եղել է մասսայական կռիվներով[51]:

Անհատական ու մասսայական մարտաձևերն արդեն ցույց են տալիս իրենց սոցիալական էությունը, որտեղ մեր նկարագրած զենքերը հանդես են գալիս իրենց համապատասխան նշանակություններով: Անհատական մարտաձևը, որ կրում էր հերոսական կռվի բնույթ, յուրահատուկ էր տոհմա-ցեղային հասարակական ձևին, որտեղ նահապետը, տոհմապետը, ցեղապետը հանդիսանում էր իր տոհմի արենակից անդամների բախտի տնօ-

բինոցը, նրա տնտեսական-արտադրական կյանքի ղեկավարն ու ադմինիստրատորը. հետևապես՝ միջցեղային կամ միջտոհմային կռիվներում էլ նա էր հանդես գալիս իր անձնավորությամբ լուծելու մարտական վախճանը։

Կռվի մասսայական ու անհատական եղանակները վկայում են մարտական պրիմիտիվ տեխնիկայի մասին։ Իսկ պրիմիտիվ մարտական տեխնիկան, ինչպես կարելի է եզրակացնել արդի «վայրենի» ժողովուրդների կենցաղի համեմատական ուսումնասիրություններից, բնորոշ և հատուկ է տոհմային-ցեղային հասարակություններին։ Ուստի վերոհիշյալ մի քանի դեպքերը գալիս են կռահել տալու, որ վաղագույն մետաղի, գլխավորապես բրոնզե դարերի սկզբներին, հասարակական կարգն ապրում էր իր փոխանցիկ շրջանը, երբ տոհմային հասարակակարգի կազմալուծմամբ սկսում է առաջանալ դասակարգային հասարակությունը։

Ընդհանրապես, մասսայական մարտաձևը մեզ տանում է դեպի այն ժամանակները, երբ տոհմային-ցեղային հասարակակարգի քայքայումով զարգանում է ֆեոդալական հասարակական ձևն իր ուրույն պետական կազմով, հիմնված դասակարգային հարաբերությունների վրա։ Այստեղ մարտական ձևն էլ ընդունում է համապատասխան դասակարգային կերպարանք, որ արտահայտվում է մասսայական գործողությունների, մասսայական տակտիկական շարժումների մեջ, որտեղ վճռական դեր էր խաղում զինվորական դասն իր պրոֆեսիոնալ ռազմիկներով ու իշխանական գուպաղներով։



Գ

# ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ

## I

Գոտի։ Գեղածո իրերի մեջ գտնվում են բրոնզե գոտիներ, որոնք բնորոշ են վաղագույն մետաղե դարերի կուլտուրայի տեսակետից, հանդիսանալով այն ժամանակվա տեխնիկայի, գեղարվեստի և նյութական կենցաղի զարգացման ցուցանիշը։ Այդ գոտիները հայտաբերվել են տղամարդկանց գերեզմաններում, ուստի և պատկանում են արական սեռի զգեստավորմանը։

Այդ գոտիները սովորաբար բաղկացած են լինում երկու և ավելի թվով բրոնզե թիթեղներից, որոնց երկարությունն ու լայնությունը բազմազան են։ Յուրաքանչյուր թիթեղի լայնությունը տատանվում է 3 սմ. մինչև 19 սմ., իսկ երկարությունը 20—30 սմ., որով գոտու ամբողջ երկարությունը, նայած կրողի մեջքի հաստությանը, հասնում է 80—95 սմ.։ Այդ բրոնզե թիթեղներն ամրացված են եղել կաշու կամ որևէ պինդ կտորի ժապավենի վրա, որի երկու ծայրը հանգուցվել են կամ մեջքի վրա՝ թելով և կամ պարանոցի առաջ՝ ճարմանդով։

Հիշյալ բրոնզե գոտիներն ըստ իրենց արտաքին տեսքի կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների։

1. Գոտիներ, որոնք ներկայացնում են միանգամայն հարթ թիթեղ, առանց որևէ նկարազարդի. այս տեսակ գոտիները հազվադյուտ են։

2. Գոտիներ, որոնց թիթեղները նկարազարդ են փորագիր որնամենտացիայով, գլխավորապես երկրաչափական բնույթի։

3. Գոտիներ, որոնց թիթեղների վրա փորագրված են նաև զանազան կենդանիների ու մարդկանց պատկերներ։

Չնայած իրենց ընդհանրությանն ու նմանությանը ըստ ժամանակակից տիրող ոճի և ըստ արվեստի կոմպլեքսային տիպերի, այնուամենայնիվ այդ գոտիները զարդանկարների ու կոնցեպցիայի կողմից միշտ կրում են արվեստագործի անհատական

կերպն ու առանձնահատկությունները։ Թողնելով այդ գոտիների նկարների ու ածերի վերլուծումը հաջորդ՝ «Ը» գլխին, ուր արծարծելու ենք հնագույն կուլտուրայի շրջանի արվեստի զարգացումը, բավականանք այստեղ միայն ընդհանուր տեսությամբ։

Հայկական լեռնաշխարհում հայտաբերված բրոնզե գոտիները, որոնք բնորոշ են իրենց տեխնիկայով ու արվեստով և պատմագիտական նշանակություն են ներկայացնում՝ հայտաբերվել են Նոր-Բայազետի գավառում, Լոռում, Շիրակում (Գյուլբեյջան գյուղում), Էջմիածնի գավառում (Աղվեսաձոր), Վանում և այլ վայրերում։

Գոտիների թիթեղները մեծ մասամբ խիստ ժանգոտվել ու կորցրել են իրենց բնական տեսքը, նկարները եղծվել են, հազարավոր տարիներ հողի տակ մնալով։ Բայց և այնպես հնարավոր է եղել դրանցից մի քանիսը վերականգնել, մաքրելով ժանգից և միացնելով ցրված կտորները։ Իրենց ծագումով որքան հին են գոտիների թիթեղները, այնքան նրանք պարզ են ու նվազ քանդակազարդ, այնքան հաստ են ու համեմատաբար ավելի նեղ։ Սովորաբար 3-րդ տեսակի գոտիների նկարներն ունեն մի ուրույն ձևի կոմպոզիցիա։ Գոտու վերին ու ստորին եզրերը ներկայացնում են օրնամենտային երիզներ, մեծ մասամբ բաղկացած երկրաչափական և բոլորաձև ու պարուրաձև զանազան քանդակներից. այդ երկու երիզների միջանկյալ ամբողջ երկարությամբ քանդակված են կենդանական, բուսական, երբեմն էլ մարդկային ու զանազան խորհրդանշանային նկարներ։

Այդ գոտիներն իրենց ձևով նմանություն ունեն Գանձակի գավառում և Կովկասի մի քանի վայրերում, օրինակ՝ Կոբանում, նաև Կիևի նահանգում հայտաբերված հնագույն բրոնզե գոտիների հետ։ Հար և նման գոտի ենք տեսնում Բողազքյոյի ժայռի վրա քանդակված հաթական թագավորի կամ իշխանի (10-րդ դար մեր թվականությունից առաջ) մեջքին (1 հատ., նկ. № 1)։ Այդպիսի գոտիներ ենք նկատում փոքր-ասիական մի շարք բրոնզե արձանիկների վրա, որոնք փյունիկյան ու միկենյան ասերի շնորհիվ տարածվում էին Միջերկրական ծովի ամբողջ եզերքում։

Վերոհիշյալ գոտիների նկարները, օրնամենտները, կենդանական խմբերը և այլն ընդհանուր գծերով սերտ առնչություն ունեն հաթական, մանավանդ Սենջիրլիի քանդականկարների հետ։ Մեր գոտիների ոճը մեծ նմանություն ունի հնագույն միկենյան սափորների (վազա) վրա գծված նկարների հետ, մանավանդ գոտիների պայմանական ոճավորությամբ։ Զարմանալի նմանություն է նկատվում նաև մեր բրոնզե գոտիների վրա քանդակված թռչունների ու ձկների նկարային տեսարանների և Կիպրոս կղզու հնագույն սափորների վրայի նկարային տեսարանների միջև[67]։ Ամբողջ տեսարաններ, օրինակ որսի՝ հիշեցնում են եգիպտական որմնանկարները, ռազմակառքը հիշեցնում է ասորաբաբելական նկարաքանդակները և այլն։



Գոտիների վրա քանդակված են զանազան նկարներ, օրինակ՝ ձկների, գետաձիների, ծառերի, արևի, խաչի, սվաստիկայի։ Այս հանգամանքը կասկածել է տալիս, որ գոտիների, ինչպես և հաթական ու այլ նկարներում պետք է տեսնել ոչ միայն բնության ռեալական վերարտադրումը կամ կենցաղային տեսարաններ, այլև կրոնա-խորհրդանշային նշանակություն ունեցող կոմպոզիցիաներ։ Մանավանդ այդ աչքի է զարնում, երբ նկատի ենք առնում, որ կենդանիներն ու մարդիկ ֆանտաստիկ կերպարանքով են դուրս բերված։ Նրանց մարմնի մասերը, ոտները, պոչերը, գլուխները կարծես պատկանելիս լինեն գերբնական արարածների։

Հայկական լեռնաշխարհի վերոհիշյալ բրոնզե գոտիների, մանավանդ Գանձակի գավառի Ղալաքենդ ու Գետաբեկ գյուղերում հայտաբերված գոտիների համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանք մեծ աղերս ունեն 10-րդ դարի (մեր թվ. առաջ) հաթական արվեստի հետ։ Մեր գոտիների ամենահին օրինակները հայտաբերվել են այն դամբարաններում, որոնք վերաբերում են բրոնզե դարերի վերջերին և երկաթի ինդուստրիայի սկզբնական շրջանին, որ համնում է մոտավորապես 10-րդ դարին (մեր թվականությունից առաջ)։

Թեև գոտիները գործածվում էին իբրև հանդերձանքի անբաժանելի մաս, բայց և այնպես, նկատի առնելով նրանց մեծ լայնությունը, կարելի է ենթադրել, որ նրանք միաժամանակ ծառայում էին իբրև զրահ՝ իրանի ստորին մասը պաշտպանելու համար, մինչդեռ իրանի վերին մասի պաշտպանության համար գործ էր ածվում վահանը։ Կարելի է ասել, որ հնագույն բրոնզե լայն գոտին հանդիսացավ այն մեկնակետը, որից հետո զարգացավ մետաղե ամբողջական զրահի գաղափարը։

Սակայն գոտու այդ ուտիլիտար, ինչպես և նրա հանդերձանքային նշանակությունն ավելի հետնագույն ծագում ունի։ Պետք է ենթադրել, որ գոտին մարդկային սկզբնական շրջանում ունեցել է մոգական նշանակություն և գործածվել է իբրև յու-

բառեսալ հուռութ կամ «Թիլիսմն», որ պաշտպանում է չարից ու վտանգից, ապահովում է հաջողություն ու բերում է բարեբախտություն։ Հետագայում արտադրության միջոցների զարգացումով ու բարդացումով և դրա հետ միասին նաև գաղափարախոսական ըմբռնումների բարդացումով՝ գոտին, իբրև մոգական առարկա, նույնպես բարդանում է. նրա վրա շերտավորվում են իմաստավորման նոր ըմբռնումներ, որոնք արտահայտվում են խորհրդավոր նկարների քանդակումներով, զանազան ձևի պանդըլեկների և այլ մանր թալիսման-իրերի կախումով։ Գոտու այդ մոգական նշանակությունը շարունակել է պահպանվել նաև կրոնա-ծիսական համդամունքներում, ինչպես օրինակ՝ քուրմերի և այլ քրիստոնեական քահանաների գոտիները, որ հագնում են որոշ պաշտամունքային ծիսակատարության ժամանակ։

Վարսակալ (դիադեմա)։ Այսպես են կոչվում բրոնզե այն շրջանաձև թիթեղները, որոնք կրում էին երկու սեռի անձինք իբրև գլխազարդարանք, ինչպես այդ երևում է նրանից, որ վարսակալները գտնվել են թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց գամբարաններում։ Վարսակալներն ունեն բոլորակի 34 սմ. երկարություն, ճակատի մասում՝ 3 սմ. լայնություն. երկու ծայրերը, հետզհետե նեղանալով, հասնում են 1,5 սմ. և վերջանում են ծայրերի կորացումով, ժապավեն անցկացնելու կամ ժապավենով գլխին ամրացնելու համար։

Մեզ հասած բազմաթիվ քանդականկարներից, որոնք պատկերացնում են բրոնզեդարյան հաթական (1, նկ. 1) ու էգեյան, նմանապես վաղադարյան երկաթեդարյան ասուր-բաբելական, սիրիական, սկյութական և այլ իշխանների գլխազարդարանքները, պետք է եզրակացնել, որ այդ ժապավենաձև մետաղե թիթեղները բոլորակի կարված էին տղամարդկանց կոնաձև և կանանց գլանաձև գլխարկներին։ Որ իրոք այդ վարսակալներն ամրացվում էին խույրերին (տիարա), դա երևում է Մայկոպի (Հյուսիսային Կովկաս) հնադարյան իշխանական չափազանց հետաքրքիր դամբանում հայտաբերված ոսկե երկու վարսակալից զարդարված վարդի նկարներով. այդ վարսակալներն իրենց վրա ունեն ծակեր՝ կարելու համար և գտնվել են գանգի տակ[13]։ Վարսակալների այդ դիրքը, ինչպես կարծում է հնագետ Բ. Ֆարմակովսկին, կարող էր առաջանալ այն հանգամանքից, որ նրանք խույրի ճոթերին մասի փտումից հետո ընկել են։

Պետք է ենթադրել, որ այդ վարսակալները հանդիսանում



էին ոչ թե սոսկական զարդարանքներ, այլ իշխանական կամ թագավորական նշանակ։ Դրանով պետք է բացատրել վարսակալների սահմանափակ քանակը պեղված իրերի շարքում. այդ վարսակալները գտնված են Նոր-Բայազետի, Լալվարի (Լոռի), Սիսիանի հնադարյան պեղածոների մեջ։ Վարսակալներն իշխանական նշանակներն են, որոնցից հետո զոյացան թագավորական կամ բարձր իշխանական հիմնական նշանակ-հարդարանքը՝ թագը։

Հերազարդ։ Կանացի գլխազարդարանքի շարքին են պատկանում զանազան ձևի հերազարդեր։ Սրանցից ամենատարածվածը եղել է բրոնզե տափակ սկավառականման գլխանոցը։ Նոր-Բայազետի գավառում մեկ պեղումից (Երվ. Լալայան), իսկ Մուսիերիում բազմաթիվ դամբաններում (Ժակ Մորգան), գանգի տակ, ծոծրակի մաս հայտաբերվել են բրոնզե լայն սկավառակներ, կենտրոնում փոքր ինչ ուռուցիկ։ Այս բոլորակները ծածկված են օրնամենտային և այլ նկարներով, իսկ մեկի կենտրոնում ամրացված է Cyprea կոչված խխունջը։ Այս պարագաներով էին զարդարում Հայկական լեռնաշխարհի հնադարյան կանայք իրենց մազերը ծոծրակի կողմից։ Բայց կային նաև բրոնզե հերազարդեր, ափսեի ձև ունեցող, որոնք հավանորեն դրվում էին գագաթի վրա, որպես յուրատեսակ թասակներ։ Այս տեսակ հերազարդ, արծաթից շինված, պահպանվել է գործածության մեջ տակավին ներկա կանացի կենցաղում՝ հայկական մի քանի գավառներում։ Այդ տեսակ հերազարդն այժմ էլ սովորական է ասիական մի շարք ժողովուրդների մեջ։ Նույն այդ ձևի հերազարդ ենք գտնում այժմյան հնդկական Մայսուր կոչված ցեղի կանանց գլխին։

Հերազարդի մյուս տեսակն է բրոնզե այն շղթան, որ հայտաբերել է Երվ. Լալայանը Նոր-Բայազետի պեղումներից և որպիսին այժմ էլ կարելի է հանդիպել Ղարաբաղի, Շամախու, Ախալցխայի հայ կանանց գլխազարդարանքի մեջ, որ սովորաբար կրում են երկու քունքերի կողմից։

Հերազարդ պետք է համարել բրոնզե միացյալ երկանիվ շառավղավոր այն զարդարանքը, որ հայտաբերված էր Նոր-Բայազետի գավառում. նույնը հայտաբերված է Շուշու և Գանձակի գավառների պեղումներում, միայն այն տարբերությամբ, որ սրանց միացյալ անիվները պարուրաձև են[14]։ Այդ պաճուճանքները զարդարում էին քունքերը կամ ականջից վերև եղած մազերի հյուսվածքը։

## II

Ապարանջան։ *Մի բան, որ ամենամեծ քանակով է պարունակվում վաղագույն մետաղի ժամանակաշրջանի դամբաններում, դա բրոնզե ապարանջաններն են։ Դրանք հավասարապես հանդիպում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց գերեզմաններում։ Բացի բրոնզե ապարանջաններից, այդ դամբաններում գտնվում են, թեև խիստ սակավաթիվ, նաև ապարանջաններ երկաթից, կապարից, ուլունքներից և այլն։*

*Վերոհիշյալ ապարանջանները կարելի է բաժանել երկու առանձնահատուկ տեսակների. մի տեսակին պատկանողները հաստ, կլոր օղակներ են, կոպիտ գործված, իսկ մյուս տեսակին պատկանողները կրում են որոշ արվեստի նշաններ ու զարդանկարված են։*

*1. Առաջին տեսակի ապարանջանները, անշուշտ, զարդարանքի համար չեն ծառայում և քանակով ավելի բազմաթիվ են համեմատած երկրորդ տեսակի ապարանջանների հետ։ Այս ապարանջանները սովորաբար գտնվում են կմախքների ոտքերին, ինչպես սրունքներին, այն էլ մի քանի հատ միասին։ Ժակ Մորգանը Լալվարի դամբաններում մի կմախքի երկու սրունքի վրա հայտաբերել է 8 հատ բրոնզե ապարանջան, որոնց ընդհանուր քաշը եղել է 4 կիլոգրամ 520 գրամ։ Անտարակույս, այդ մետաղը միայն ոտների վրա կուտակելը չէր կարող բղխել սոսկ զարդարանքի կամ պաճուճանքի ցանկությունից և հազիվ թե այդ նպատակով այդքան ծանրություն քարշ տային ոտների վրա։*

*Այս հանգամանքն առիթ է տվել Ժ. Մորգանին մանրամասն քննության առնել այդ հարցը։ Հիշյալ ապարանջանները նա ենթարկել է համեմատական կշռի ու դասավորել ըստ ծանրությունների։ Ապարանջանների մեծ մասը՝ կշռում էր յուրաքանչյուրը 30—40 և 80—90 գրամ։ Բոլոր ապարանջաններն ըստ իրենց ծանրության բաժանելով 20 խմբի, ըստ որում առաջին խմբի քաշն է 16.400 գրամ, իսկ վերջինը՝ 665.000 գր., նա եզրակացնում է, որ 8.200 գրամը, լինելով առաջին խմբի ապարանջանների քաշի կեսը, հանդիսանում է մի միավոր, որի բազմապատկումով, շատ չնչին շեղումներով, կազմվում են յուրաքանչյուր հաջորդ խմբի քաշը։ Այս 8.200 գր. համարելով դրամական միավոր, Ժ. Մորգանը պայմանական կերպով այդ անվանում է կով-*



*կասյան սիկլ։ Այնուհետև համեմատության առնելով հին պատմական դրամական միավորները, նա գտնում է, որ կովկասյան սիկլը, խիստ չնչին շեղումով, համաչափ է ասորեստանյան սիկլին կամ ոչ-լիակշիռ դրախմին, որը 8.415 գրամ է (ըստ Ֆր. Լենորմանի) կամ 8.417 գրամ (ըստ Ժ. Օպպերտի)։ Այս համեմատությունից Ժ. Մորգանը գալիս է այն եզրակացության, որ կովկասյան սիկլը պետք է լինի 8.352 գրամ։*

*Այս հաշվումները որոշ չափով հավանական են թվում, երբ նկատի ենք առնում առևտրա-քաղաքական աշխարհակալության դերը Առաջավոր Ասիայում և առևտրական այն հարաբերությունները, որ Հայաստանի վրայով տեղի ունեին Միջագետքից դեպի արևմուտք և հյուսիս։*

*Հետաքրքիր է տեսնել, թե որքան էին կշռում այս տեսակ ապարանջանները միասին յուրաքանչյուր դամբանում։ Բերենք Ժ. Մորգանի մի քանի տվյալները.*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1-ին դամբան | —4.520 գր., | որ | կազմում | է | մոտավորապես | 540 | սիկլ |
| 2-րդ » | —1.917 գր. | » | » | » | » | 228 | » |
| 3-րդ » | —5.073 գր. | » | » | » | » | 604 | » |
| 4-րդ » | —0.177 գր. | » | » | » | » | 13 | » |
| 5-րդ » | —0,201 գր. | » | » | » | » | 24 | » |

*Կարևոր է նշել, որ այն դամբանները, որտեղ բրոնզե ապարանջանների ընդհանուր քաշն ավելի շատ էր, դրա համեմատ էլ գերեզմանի իրերի պարունակությունն ավելի հարուստ էր և ավելի նոր ու գեղեցիկ իր զարդերով* (JMMS, I, 108—112)։

*Նույնպիսի ապարանջաններ հայտաբերել է Լեման-Հաուպտը Ուրմիայի (Պարսկաստան) մոտերքը՝ Գեոյ-Թեփե հորջորջված բլուրի պեղումներից։ Այդ ապարանջանների քաշը եղել է յուրաքանչյուրը՝ սկսած 0,5 կգ. մինչև 2,5 կգ.։ Այս ապարանջանները շինված էին բավական կոպիտ, ոչ հավասար թանձրությամբ, բաղկացած լինելով մոտ 3 սմ. հաստության բրոնզե շրջանակից, որը ծայրերում բարակելով կորանում է և մասամբ հիշեցնում պայտաձև օղակը, որի ծայրերը միացած չեն։ Իսկ եթե պատահում էին ծայրերը միացած օղակներ, ապա միացման կետն այնքան բարակ էր, որ դյուրին նկատելի էր ծայրերի զոդման տեղը* (LHA, I, 285)։

*Հնագույն դամբաններում մեռյալների վրա գտնված ապարանջանների դրամանիշային նշանակությունը հաստատվում է*

նաև կրոնա-պաշտամունքային տիրող հավատալիքներով: Եթե հնագույն թաղման ծեսը պահանջում էր, որ մեռյալի հետ գերեզման դրվեին նրան անհրաժեշտ կենցաղային պիտույքները, որ նրա հետ միասին «մյուս աշխարհ» գնային նաև անգամ իր կինը, երեխան և ստրուկները, ապա բնական է, որ այդ պիտույքների թվում լինեին նաև դրամները: Այս մեռյալների պաշտամունքի և ծիսակատարության համապատասխան սովորույթ էր, որի վերապրուկները պահպանվել էին մինչև վերջին ժամանակները զանազան ժողովուրդների, նմանապես և հայերի մեջ, որոնք մեռյալի երեսին, կամ ծալած ձեռքերի մեջ դնում են պղնձե դրամ:

Հին պատմական գերեզմաններում հնագիտական պեղումներով հայտնաբերվում են թե՛ առանձնակի և թե՛ կճուճներով դրամներ: Հայ պատմագրերն ավանդում են, թե ինչպես հին Հայաստանում, արտաքին բռնակալության օրերին, բնակիչներն իրենց ավերված ու թալանված երկրում, անտանելի քայքայված վիճակում, հնարավորություն չունենալով իրենց նվաճողներին հարկեր վճարելու, քանդում-փորում էին հին գերեզմանները և մեռյալների հետ թաղված դրամները հանում, որպեսզի վճարեն պահանջված ծանր հարկերը:

Ի վերջո կարող է հարց ծագել, թե որքան համատեղելի է այն մոտեցումները, որ սովորաբար ունենք դրամների մասին իբրև որոշ ձևի (կլոր, երբեմն քառակուսի) ու նշանագրերով ձուլված թիթեղիկների,—տարածել նաև ապարանջանների վրա, որոնք մեզ միշտ թվացել են որպես զարդարանք: Այս գլխում հիշենք հին ժողովուրդների առևտրա-փոխանակական հարաբերություններում կիրառվող դրամական միավորները, որոնք սովորաբար լինում էին մետաղե սալական ձույլեր կամ բեկորներ (պղինձ, բրոնզ և այլն) կամ համաչափ ձուլածո կտորներ, մասամբ տափակ, մեջ տեղը ծակած, օղակաձև, այս կտորները հարմար էին հատ թելի վրա անցկացնել պահելու կամ փոխադրելու համար:

Մեզ ժամանակակից մի քանի «վայրենի» ցեղերի մեջ տակավին գոյություն ունեն այդօրինակ դրամներ: Այդպիսի օղակ-դրամներ շրջանառում են Մելանեզիայում. դրանք շինվում են Tridacna gigas կոչված հսկայական խխունջից և բավական գեղեցիկ ու արվեստորեն պատրաստված սպիտակ օղակներ են: Աֆրիկայում Նիգեր գետի վերին հոսանքում ապրող նեգրերը գործ են ածում մետաղե օղակներ՝ նիկելից, արծաթից. այս մետաղները նրանք



ձեռք են բերում եվրոպացիներից և իրենք պատրաստում օղակները, որոնք կրում են ոտներին ու բազուկներին իբրև զարդարանք և միաժամանակ գործ են ածում դրամի նշանակությամբ[55]:

2. Երկրորդ տեսակ ապարանջանները ծառայում էին զարդարանքի համար և առաջին տեսակի ապարանջանների համեմատությամբ ավելի նվազ քանակով են հանդիպում: Սրանք սովորաբար հագցվում էին դաստակի ու բազկի վրա. իրենց արտաքին նկարազարդով ու նյութեղեն բազմազանությամբ այս ապարանջանները բազմապիսի են: Սրանք լինում են բրոնզից, երբեմն էլ կապարից ու արծաթից և կամ սերդոլիկի ուլունքներից, որոնք փոքր մանյակի ձև էին ունենում: Ոսկե ապարանջաններ այդ զարդաշրջանից դեռևս չեն գտնվել:

Բրոնզե ապարանջանները ոչ այլ ինչ են, բայց եթե կլոր կամ տափակ օղակներ, որոնց ծայրերը սովորաբար վերջանում են օձի գլխով և շատ հազվագյուտ դեպքերում՝ ուրիշ կենդանու գլխով: Ապարանջանների վրա փորագրված են լինում զանազան նախշեր: Այս ապարանջանների մեջ հաճախ հանդիպում են նաև այնպիսիները, որոնց օղակային շրջանակների վրա նկատելի են միաշար կամ երկշար փոքրիկ գնդիկներ:

Երկաթե, ինչպես, կապարե ապարանջանների նկարների մասին ոչինչ չի կարելի ասել, որովհետև սրանք միշտ եղծված են թանձր ժանգից: Երբեմն երկաթե ապարանջանները ծածկված են բրոնզե ընդելուզված նախշերով, որոնք սովորաբար պահպանված են լինում, ինչպես օրինակ՝ Մուսի-երիի դամբանի ապարանջանը:

Ուլունքի մանյակաձև ապարանջանները հայտնաբերված են միայն կանանց ու երեխաների կմախքների վրա:

**Մատանի:** Մատների այս հարմարված զարդարանքը բավական մեծ քանակով գտնվել է թե տղամարդկանց և թե կանանց կմախքների վրա, 1—7 հատ յուրաքանչյուրի վրա: Մատանիները սովորաբար միապաղաղ ու միատեսակ ձև ունեն, այն է՝ փոքրիկ օղակ, տափակ կամ կլոր բրոնզից, երբեմն էլ երկաթից, երկու ծայրերն իրար հենած: Պատահում են սակավադեպ՝ պարուրաձև մատանիներ, որոնք բաղկացած են 3—5 օղակային պտույտներից: Պետք է ասել, որ մարդկային կենցաղում մատանիները երևացել են միմիայն մետաղի ինդուստրիայի ծագման հետ:

Սակայն մատանիները ծառայում էին միաժամանակ նաև

տրոյիս կնիքը։ Այդ նշանակությամբ մատանիներ շատ են հանդիպում Միջերկրածովյան էգեյան կուլտուրայում, հին Ասորեստանի, հաթերի, խալդերի և այլոց մոտ։ Այդ ձևի կնիքով հնագույն մատանատերը հավաստում էր իր անձնավորությունը պայմանագրերի, նամակների և այլ փաստաթղթերի վրա, որոնք գրվում էին և ապա մատանիով կնքվում կավե սալիկների վրա՝ նախքան նրանց թրծելը։ Ինչպես հայտնի է, այդ ձևի մատանիների կիրառումը մինչև այժմ էլ պահպանվել է արևելյան ժողովուրդների մեջ, մասնավորապես Թյուրքիայում և Պարսկաստանում. հին Հայաստանում էլ սովորական էին այսպես կոչված ուխտա-ղայիր մատանիները։

Մանյակ։ — Այս ձևի պաճուճանքները, որ կրում էին պարանոցին, հանդիպում են երկու սեռերի. նաև մանկական, կմախքների վրա։ Մինչդեռ մատանիները երևացել են միայն դարերում, ընդհակառակը, մանյակները գործ էին ածվում տակավին պալեոլիթի դարերում և կազմված էին լինում մանր գունեղ քարերի, սերդոլիկի (սուտակ) ուլունքներից[56], մանրիկ խխունջներից և վայրի կենդանիների ատամներից։ Մետաղի ինդուստրիայի դարերում մանյակները ստանում են ավելի բազմազան ձևեր։ Սովորական ձևը բրոնզե կլոր ու հաստ լարերից պատրաստած լայն օղակներ են՝ հարթ կամ ոլորած, որոնք կեռ ծայրերով կիսաբաց են թողնում, որպեսզի հանդուցվեն վզին և ապա թելով ամրացվեն։

Զարդարվում էին նաև թելի վրա շարած ապակե, սերդոլիկե, ոսկե, բրոնզե, կավակե և այլ ուլունքներից մանյակներ, որոնց թելաշարի վրա միջընդմեջ անց էին կացվում բրոնզե փոքրիկ խողովակներ, կամ կախվում էին բրոնզե ու կավակե զանգուլակներ։ Այդպիսի ուլունքներ մեծ քանակով ցրված ու խառնված են լինում դամբաններում, ամենայն հավանականությամբ, շարան թելի փտումից և ոչնչանալուց։

Երևում այդ ուլունքները պատրաստվում էին գերազանցապես Dentalium կոչված խխունջներից, որոնք լայն չափով տարածված էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում՝ բրոնզե դարերի վերջերին ու երկաթե դարերի սկզբներին[57]։

Ինչպես գոտին, այնպես էլ մանյակն իր ծագումով սկզբներում ունեցել է մոգական նշանակություն, որ կրում էին վզին նաև ապոտրոպեիկ նպատակով, մի փաստ, որը հաստատվում է արդի ազգագրական տվյալներով, ուր մենք գտնում ենք մասու-



ծողության սկզբնական շրջանից մեզ հասած վերապրուկներ, երբ մարդիկ իրենց վզին կրում են, իբրև ամուլետ կամ հուռութ, զանազան տեսակի մանյակներ։

Գինդ։ — Այս ականջը զարդարող փոքրիկ օղ է, որ սովորաբար կանայք են գործածում, թեև մեր նախապատմական դամբաններում այդ պաճույճներից գտնվել են նաև տղամարդկանց ականջներին։ Այս օղերը մեծ մասամբ բրոնզից են, թեև լինում են նաև արծաթից։ Օղերի մեծությունը լինում է մոտավորապես 1—5 սմ. տրամագծով։ Գինդերի ձևերը բազմատեսակ են։ Սովորական ձևը սոսկ բարակ օղակներ են, որոնց մեջ անցկացված են լինում 1—2 ծակած ոսկրե, սերդոլիկե կամ գունավոր ապակու ուլունք։ Շատ հաճախակի են նաև բրոնզե լարից շինված օղակները, որոնց մի ծայրը օձապտույտ իջնում է օղակի միջով և պարուրաձև վերջանում է մյուս եզրին։

Ժակ Մորգանը մի քանի դամբաններում, կմախքների ականջների մոտ, գտել է մանրիկ ուլունքներ, որոնք այնքան սակավաթիվ են, որ չի կարելի ենթադրել, թե նրանք մանյակի ուլունքներ եղած կլինեն։ Ուստի պետք է կռահել, որ նրանք ականջի պաճուճանքներ են, որոնք շարված են եղել թելի վրա և ապա, թելը փտելուց, թափվել են ականջի մոտ (JMMS, I, 104)։

## III

Գնդասեղ։ — Հայկական լեռնաշխարհի դամբաններում գտնվել են բազմաթիվ բրոնզե ու սակավաթիվ երկաթե գնդասեղներ, որոնք ծառայել են թե հանդերձները հանդուցելու նպատակով և թե իբրև զարդարանք, բայց ոչ գլխի, այլ ավելի շուտ, զգեստի վրա։ Գնդասեղները միաժամանակ պատահում են երկու սեռի կմախքների վրա։

Գնդասեղներն ընդհանրապես տարբերվում են իրենց գլխի ձևերով. այդ տեսակետից նրանք այնքան բազմազան են, որ անկարելի է դասակարգել բոլոր ձևերը։ Սակայն կարելի է այդ գնդասեղները մոտավորապես բաժանել երեք խմբի, ըստ ժամանակագրական չափանիշի։

1. Առաջին խումբը, որ ամենահինը պետք է համարվի, կազմում են բրոնզե գնդասեղներ՝ երկար, կլոր կամ քառանկյուն, որոնք աստիճանաբար բարականում են դեպի ծայրը։ Սրանք խակապես չունեն գնդաձև գլուխ, այլ գլուխը կազմում է ավելի ամենահաստ ու թանձր մասը, որտեղ կա ծակ, կամ ներկայաց-

նում է կորացրած վերջավորություն և կամ կազմում է ոլորված մի փոքրիկ օղակ: Այս ձևի գնդասեղները, անտարակույս, բընավ չէին ծառայում զարդարանքի համար:

2. Երկրորդ խմբին են պատկանում այն բոլոր բրոնզե գընդասեղները, որոնք ունեն զանազան ձևերի ու մեծության գլուխներ՝ սկսած ամենապարզերից (օրինակ՝ գնդեր, կոներ, պրիզմաներ և այլն) և վերջացրած պարզորակ ֆիգուրներով (ինչպես՝ խաչեր, սվաստիկաներ, անիվներ, թիակներ, երկժանի և այլն):

3. Երրորդ խմբին են պատկանում այն գնդասեղները, որոնք ավելի բարդ արվեստի արգասիք են: Այս գնդասեղների գլուխները ներկայացնում են բազմատեսակ ֆիգուրներ, որոնց մեջ կարելի է տեսնել զանազան կենդանական ու մարդկային գլուխներ, ամբողջական թռչուններ և այլն:

Վերջին երկու խմբի գնդասեղները, որոնք բացի գործնական նշանակությունից, անշուշտ ունեին միաժամանակ նաև զարդարանքի նշանակություն, գլուխներում կամ գլուխներից ներքև ունեին ծակեր: Այդ ծակերի նշանակությունը տարբեր կերպ են բացատրում հնագետները: Կարելի է ենթադրել, ինչպես կարծում է Ժակ Մորգանը, որ այդ ծակերից անցկացրած են եղել բարակ շղթաներ, որոնցից կախված էին լինում զանազան փոքրիկ զարդարանքներ՝ բրոնզե ձողիկներ, զանգուլակներ, ֆիգուրներ և այլն: Այսպիսի նշանակություն թերևս կարող էին ունենալ վերջին երկու խմբերի գնդասեղների որոշ մասը: Սակայն ավելի հիմնավոր է հնագետ Կարլ Շուխարդի կարծիքը, թե, մանավանդ, նկատի ունենանք առաջին խմբի գնդասեղները: Այդ գնդասեղների ծակով թել էին անցկացնում և, երբ գնդասեղով հանգուցում էին հանդերձի ծայրերը կամ փեշերը, այդ թելը նրանց ոլորելով փաթաթում էին ասեղի մյուս՝ սուր ծայրին: Այդ եղանակով ասեղը պինդ էր նստում և չէր կարող դուրս սահել իր տեղից (CSA, 178):

Պրոֆ. Լեման-Հաուպտը Հայաստանում կատարած իր վերջին ուսումնասիրական ճանապարհորդության ընթացքում (1889—90 թ. թ.) Ուրմիայի շրջակայքում գտնվող Գեոգ-թեփե անունով բլրի դամբաններում հայտնաբերել է բրոնզե խիստ բնորոշ գընդասեղներ, առանց սովորական ծակի: Այդ գնդասեղները խրված են եղել մեծ մասամբ գանգի մեջ, մի ականջից մինչև մյուս ականջը, կամ ցցված են եղել գանգի գագաթին: Ուստի այդ գնդասեղները նա անվանում է մեռելային գամ (Totennagel): Միանգամայն ճիշտ եզրակացություն է անում նա, որ այդ գնդասեղները չէին ծառայել իբրև պաշտպանության կամ արհեստական մահվան գործիք, այլ խրվել են միայն մարդու մահից հետո, քանի որ նրանք ներկայացնում են մետաղի բավական գեղարվեստական գործ: Այդ գնդասեղները խիստ մեծ են, համեմատած մեր հայտնի գնդասեղների հետ, և ունեն 23, 5 սմ. երկարություն, չհաշված գլուխը, որ 4 սմ. է և ներկայացնում է եղջերուի գլուխ՝ երկճյուղ կարճացած եղջյուրներով: Այդ եղջերուն պատկերացնում է Առաջավոր Ասիայի մեռած ու չքացած այն կենդանին, որ մի ժամանակ շատ տարածված է եղել այդ երկրամասում և հայտնի է Cervus mesopotamicus անունով: Հիշյալ գնդասեղըն իր մեծությամբ ու գլխով հիշեցնում է միայն Կոբանի (Հյուսիսային Կովկաս՝ Վլադիկավկազի մարզում) պեղումներից հայտնաբերված հռչակավոր ահագին գնդասեղները, որոնց նմանները իսպառ բացակայում են հնագիտական բոլոր պեղածոներում: Լեման-Հաուպտը գտնում է, որ այս հազվագյուտ և յուրահատուկ ձևի գնդասեղներն ունեն կրոնա-պաշտամունքային նշանակություն, հիմնվելով դասական հնության մեջ տիրող սովորույթի վրա, երբ մեռյալի հետ միասին գերեզմանի մեջ էին դնում երկաթե գամ (LHA, I, 280): Այս տեսակետը թերևս կարելի է տարածել նաև վերը նկարագրած այն մի քանի գնդասեղների վրա, որոնք հայտնաբերվել են Ժակ Մորգանի ձեռքով Լալվարի դամբաններում և խիստ բարդ կազմություն ունեն ու համեմատաբար խոշոր են: Բնորոշ է, որ Կոբանի մեծ գնդասեղները նույնպես հայտնաբերվել են գանգերի վրա և ուսին, այդ տեսակետից, նման են Գեոգ-թեփեի գնդասեղներին:

Ֆիբուլ:—Սրանք իսկապես ճարմանդներ են, որոնցով ամրացնում էին զգեստի ծայրերը: Ֆիբուլները զարգացել են, երևակաս ունենալով գնդասեղները: Այստեղ ահա մեզ համար պարզ կլինի Կ. Շուխարդի վերոհիշյալ կարծիքը գնդասեղների ծակի մասին: Հետագա իր զարգացման ընթացքում գնդասեղը ֆիբուլի է վերածվում նրանով, որ նախկին թելը փոխարինվում է մետաղե լարով: Սկզբում այդ բարակ բրոնզե լարի մի ծայրն անց էր կացվում գնդասեղի ծակով, իսկ մյուս ծայրը հանգուցավորելուց հետո, ոլորվում էր ասեղի հակառակ սրածայրին: Հետագայում արդեն գնդասեղներին տալիս էին այնպիսի ձև, որ այդ բրոնզե բարակ թելը դառնում էր միայն բաղկացուցիչ մասը. մի ծայ-

բեց մշտապես ամրացած լինելով գնդասեղին և մյուս ծայրով մանելով գնդասեղի հակառակ, նախկին սրածայրի մասում գոյացրած փոքրիկ օղակի կամ կորացած կարթի մեջ (CSA, 179)։ Այդպիսով՝ ստացվում էր մի փոքրիկ աղեղ՝ իր լարով, նման այ-սօրվա անգլիական գնդասեղներին։

Ֆիբուլները Հայկական լեռնաշխարհում ընդհանրապես քիչ են, քան Արևմտյան Եվրոպայում։ Այս երևույթը մասամբ հասկանալի կլինի, երբ նկատի առնենք, որ Առաջավոր Ասիայի հարավային երկրների և Եգիպտոսի դամբաններում ֆիբուլներ չեն հանդիպում։

Հին Հայաստանի դամբաններում հայտաբերված սակավաթիվ ֆիբուլները բաղկացած են ձուլված կամ դարբնած բրոնզե աղեղից. վերջինիս մի ծայրին փաթաթված կամ ոլորված է բրոնզե կամ երկաթե առանձնաձև մի ձողիկ, որի սուր ծայրը մտնում է աղեղի մյուս ծայրի կարթի մեջ։ Բրոնզե ֆիբուլի ամենահին ձևը բաղկացած է կիսաբոլոր պարզ աղեղից ու ասեղից, իսկ ավելի հետնադարյաններն ստանում են զանազան ձևեր, որոնց աղեղները, միաժամանակ ծառայելով իբրև զարդարանք, ունեն մանգաղի, ոլորված հյուսվածքի, մարդկային ձեռքի, մակույկի և այլնի նմանություններ։

Պանդըլոկ:— *Այս իրերի նշանակությունը բոլորովին պարզ չէ։ Ամենայն հավանականությամբ սրանք, մանավանդ եթե նկատի առնենք նրանց մի քանիսի ձևերը, ծառայել են իբրև զարդարանքներ, որոնք կախվում էին գոտուց, գլխահարդարանքներից և այլն. կարող էին ծառայել նաև իբրև հուռութ կամ մոգական-կրոնական սիմբոլներ։ Պանդըլոկների ձևերը բազմազան են։ Գերակշռող ձևերը կարելի է բաժանել 4 տեսակի։*

1. Կենդանական ձևեր — *մեծ մասամբ թռչուններ, որոնց մեջ հաճախակի պատահում են բադեր, աղավնիներ, լինում են արծվաձևեր, մեկ գլխանի կամ երկգլխանի եղջերուներ և այլն. պատահում են մարդկային պատկերներ, 5 կամ 6 մասերից բաղկացած։*

2. Զանգակաձման ձևեր — *որոնցից մի քանիսն ունեն կանթ՝ կախելու համար, իսկ մի քանիսն էլ գագաթից հատած կոնի տեսք ունեն։*

3. Շղթայիկներ — *սրանք մի ծայրից փոքրիկ օղակի միջոցով անց են կացրած գնդասեղների գլխից, իսկ մյուս ծայրին կախված են լինում մետաղե զանգվածից փոքրիկ գլանակներ՝ կեռ վերջավորությամբ, զանգակիկներ, բոժոժներ և այլ նման փոքրիկ պանդըլոկներ։*

4. Երկրաչափական ձևեր — *սրանք լինում են օղակներ, փոքրիկ կլոր շրջանակներ՝ 4 շառավիղներով, կիսալուսիններ, ռոմբոյիդներ, սվաստիկաներ և այլն։*

*Վերոհիշյալ բոլոր պանդըլոկներն իրենց վրա կրում են զարդարուն նախշեր փորագրված և կամ երկրաչափական ձևերի լուսանցքներով (տես բազմաձևան և զանգակաձև պանդըլոկները)։ Հարկ է նույնպես նշել, որ այս պանդըլոկները մեծ մասամբ հար և նման են այն բոժոժներին ու զանգուլակներին, որոնցով, ինչպես վերը տեսանք, զարդարված էին ձիու սարքերը։ Այս պարագան էլ հիմք է տալիս ենթադրելու, որ պանդըլոկներն ունենալու էին կրոնա-մոգական նշանակություն՝ իբրև սիմվոլներ կամ հուռութներ։*

Զանազան զարդարանքներ:— *Բացի վերոհիշյալ զարդարանքներից, կան նաև զանազան մանր զարդարանքներ, որոնք հայտնի են Հայկական լեռնաշխարհի հնագիտական պեղածոներից։ Սրանցից արժե հիշատակել կարևորագույնները։*

1. *Կան բազմաթիվ ու բազմաձև* կոճակներ, *որոնք շինված են պղնձից, բրոնզից և ոսկուց։ Սրանք միանգամայն նման են մեր այժմյան գործածական կոճակներին և ծառայել են հագուստները հանգուցելու և զարդարելու համար։*

2. Բրոնզե խաղովակիկներ՝ *10—20 սմ. երկարությամբ և 3 սմ. տրամագծով, որոնց նշանակությունը որոշակի հայտնի չէ. կարող էին, իբրև զարդ, ծաղկաձևով միացված լինել զգեստների թղանցքներին կամ մանյակների վրա, մեջընդմեջ, ուլունքների հետ ագուցված։ Այդպիսի զարդարանքներ են գործածվում այժմյան հայ կանանց հին կենցաղային զգեստների վրա։*

3. *Զանազան ձևի ու տեսքի* մեդալյոններ՝ *բրոնզից ու այլ մետաղներից։*

4. *Այնուհետև, դամբանային պեղածոներում մենք գտնում ենք հնադարյան կանացի կենցաղի անհրաժեշտ պարագաներ, այն է՝ բրոնզե* հայելի, *բրոնզե* մազխիլ[32], *որոնցով կանայք իրենց դեմքերից մազքաղարդում էին ավելորդ մազերը, բրոնզե* սանր, *որ երբեմն մարդկային պատկերի ձև ունի։*

5. Գայիսոնի *գլուխներ, որպես բարձր տիրապետող իշխանության նշանակ՝ գտնվել են, սակավաթիվ օրինակներով, Նոր-Բայազետի և Դանձակի գավառների դամբաններում։*

Վերը նկարագրված բոլոր զարդարանքները կրում են բացառապես դասակարգային բնույթ։ Այնպիսի զարդարանքներ, ինչպես նկարազարդ գոտիներ, վարսակալներ, հերազարդեր՝ պարզորոշ ցույց են տալիս, որ պատկանելիս են եղել տիրապետող դասակարգի բարձր խավերին, իսկ բազմաթիվ ապարանջանները, որոնք մետաղե դրամի նշանակություն են ունեցել, վկայում են նաև նյութական հարստության որոշ չափը։

Այդ բոլոր զարդարանքները, որոնց մեծագույն մասը կանանց պատկանելիքներ են, ծառայել են միմիայն սոցիալապես և նյութապես բարձր կանգնած դասի պահանջներին, որոնք կարող էին բխել ապահով ու անհոգ կյանքի, հասարակական արտադրության մեջ չմասնակցելու, շքեղ ու շռայլ կենցաղի պայմաններում։ Անշուշտ, այդ «բախտից» զուրկ են եղել շահագործվող զանգվածները, որոնց աշխատանքի արդյունքներով է հարստացել այն տիրապետող դասակարգը, որը կարողացել է այդպիսի զարդարանքներ ու պաճուճանքներ վայելել այս կյանքում և նույնիսկ իր հետ տանել նաև «հանդերձյալ կյանքը»։

Հիրավի, խիստ սակավաթիվ են այնպիսի թաղումներ պարունակող հնագիտական դամբարաններ, որոնք լինեին առանց զարդարանքների, այսինքն պատկանեին չքավոր, շահագործվող դասակարգին։ Այդպիսի դամբարանները հազվագյուտ են, որովհետև չքավորները թաղված են եղել հասարակ գերեզմաններում, ապակե հողի մեջ հորած, առանց քարարկղների, առանց արտաքին նշանների։ Հետևապես՝ նրանք երկար ու ձիգ դարերի ընթացքում փոշիացել են, միաձուլվել շրջապատի հողի հետ, ոչ մի նշույլ չթողնելով իրենցից։



Ե

# ՄԵՏԱՂԵ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐ

## I

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Բացի գործիքներից ու զարդարանքներից, հանդիպում են նաև մի շարք հնագիտական իրեր, որոնք վկայում են, թե ինչ բարձր աստիճանի էր հասել մետաղի ինդուստրիան, մանավանդ վաղագույն երկաթի դարերում։ Երկաթի մշակման գյուտն արդեն հետևանք է մետաղագործության զարգացման բարձր աստիճանի, որին հասել էր բրոնզի ինդուստրիան և իր հերթին զարկ տվել երկաթագործությանը։ Սրա լավագույն ապացույցը տալիս է հայաստանյան նյութական կուլտուրան, որ այնպես ծաղկել էր Կովկասում և, մանավանդ, Արևմտյան Եվրոպայի հնագիտական հայտնի վայրերում։

Մետաղագործության շահեկան օրինակներ է տալիս խալդյան (ուրարտական) կուլտուրան, որի բեկորները ի հայտ են բերվել, տակավին ոչ ավարտ չափերով, Վասպուրականում, մասնավորապես Վան քաղաքի շրջակայքում, շնորհիվ Վ. Բելքի ու Լեման-Հաուպտի պեղումների։ Այդ պեղումները կատարվել են Թոփրակ-կալեում, որ մի բարձրաբերձ բլուր է և խալդական թագավորության գոյության երկրորդ կեսում հանդիսանում էր խալդական գլխավոր աստվածության կենտրոնն ու թագավորանիստ ամրոցը։ Տիգլաթ-Պալասարի արշավանքից Վան քաղաքը, ուրարտական թագավորանիստ կենտրոնը հարձակման ու ավարի ենթարկվելուց հետո, Ռուսա I թագավորը տեղափոխվեց այդ բլուրը, ուր և կառուցեց իր նոր ամրոց-պալատն ու տաճարը (735 թ. մեր թվ. առաջ)։

Թոփրակ-կալեում պեղված մի շարք շենքերի ավերակներում, որոնք հավանորեն եղել են թագավորական պալատի մնացորդներ՝ իրենց օժանդակ տնտեսական շենքերով, ինչպես մառաններ, պահեստներ և այլն, նմանապես տաճարի շենքի մնացորդ-

ներ. երևան են հանվել կենցաղային նշանակություն ունեցող զանազան առարկաներ արծաթից, ոսկուց, պղնձից, բրոնզից և, ավելի շատ՝ երկաթից, նմանապես բազմաթիվ կերամիկական նմուշներ[90]։ Հիշատակենք այստեղ այդ օրինակներից կարևորագույնները, որոնք բնորոշում են այդ դարաշրջանի նյութական կուլտուրան։

Աշտանակ։ — *Սա 136 սմ. բարձրությամբ եռոտանի է, գեղեցիկ բրոնզե կերտվածքով, որ ցուցադրում է արհեստագործի բարձր ձիրքը։ Այս աշտանակի մեկ ոտքը կոտրվել է երկու մասի, իսկ բունը՝ 3 մասի։ Բունը գլխավորող ճրագատեղն այլևս չկա։ «Բարձր ու կլոր խողովակավոր բունը 3 աղեղնաձև ոտքերի վրայի կիսագնդաձև ծանր պատվանդանից ազատորեն վեր է ձգվում։ Ոտքերի ծայրերը եզան կճղակի ձև ունեն և նրանց բոլորաձև ամեկի վրա նստած են եղել մեկական թևավոր ցուլ՝ մարդկային գլխով, նման ասորական հին պալատների դռնապահներին (քերուբներին)։ Այդպիսի ցուլերից մեկը պահպանվել է միայն մեկ ոտքի վրա, իսկ մյուս երկուսի վրա նրանք չկան, բայց պարզորոշ նկատելի են նրանց երկաթի կպցված լծնելու տեղերը։ Ոտքերի վերին ծայրերը միացնող բունը շրջապատված է բաժակաձև օղակով, որի վերին եզրը զարդարված է տերևների պսակով։ Նման, բայց ավելի փոքր չորս բաժակներ կարգով ագուցված են աշտանակի բնի վրա և իբրև սրա վերին վերջավորություն, ծառայում է սկավառակաձև մի թիթեղ՝ բարձրակոր եզերքով, որ, անշուշտ, ճրագը տեղավորելու համար էր նշանակված»* (LHM, 93—94)։

*Հին ժամանակներն այդօրինակ աշտանակները գործ էին ածվում մեծ մասամբ կրոնա-պաշտամունքային նպատակներով. այդ աշտանակները գլխավորապես իբրև ձեթելու խորաններ էին հեթանոսական տաճարների առաջ, ինչպես պետք է կռահել Թե-բուքի արձանիկից։ Սակայն պետք է ենթադրել, որ այդ ձևի աշտանակները, ամենայն հավանականությամբ, գործ էին ածվում նաև բնակարանների լուսավորության համար։*

*Այդ նախահայկական աշտանակի ձևը շարունակում է իր գոյությունը Հայաստանում ոչ միայն հին ու միջին, այլ և վերջին դարերում։ Դրա նմուշներից մեկը գտնվել է Անիի ավերակների պեղումներից և ներկայումս պահվում է Հայաստանի Պետական Թանգարանում։ Հայկական գյուղական հասարակաց մի քանի վայրերում, ուր լուսավորության համար ավելի գործածական էին*



*մեծ մասամբ կավե ճրագներ, մոտիկ անցյալում կարելի էր հանդիպել փայտից կամ երկաթից շինված նույնանման, բայց ավելի պարզ ու հասարակ ձևի աշտանակների։*

*Բրոնզե մի այլ աշտանակի ոտքի մի մասը գիպսվածաբեն գտնվել է Ղարսի նահանգի Նախճավան գյուղի (Կաղզվանի գավառ) մեջ կատարված հողային աշխատանքների ընթացքում՝ մի գյուղացու մարագի մոտ։ Հայտաբերված բեկորը հորիզոնական գծով ունի 23,3 սմ. երկարություն, իսկ բարձրությունը՝ 17,5 սմ.։*

*Գտնված իրը բաղկացած է հետևյալ մասերից. աշտանակի բունը ոտքի ստորին մասին միացնող ձողի մասը և սրան կպած այծի ոտքը, որ հանգչում է պրիզմայաձև պատվանդանի վրա։ Ամբողջ գործը ներկայացնում է բարձր արվեստի արդյունք, մանավանդ ստորին մասը՝ այծի ոտքը, որ կերտված է բնական հարազատությամբ, պահպանելով կենդանական առանձնահատկությունները՝ մազերը, կճղակը, որ շեշտակի բաժանված է երկու բաղկացուցիչ մասերի, նույնիսկ վերին չպարզված կճղակը՝ ոտոսկրի ձևով։*

*Վերոհիշյալ խալդական աշտանակի հետ համեմատած՝ վերջինս իր կատարելագործված արվեստով ու ոճով ավելի հետին շրջանի արտադրություն է երևում։ Անշուշտ, նա պատկանում է երկաթե դարերին և համեմատության դնելով Հերկուլանումի ավերակներում (հին հռոմեական շրջան) հայտաբերված նման աշտանակի հետ, որը կրում է նույն գեղարվեստական տեսակետը, բայց ավելի սխեմատիկ ու անկենդան ոճով, պետք է եզրակացնել, որ վերջինիս համեմատությամբ Նախճավանի աշտանակի բեկորն ավելի հին ծագում ունի և հավանորեն մոտենում է հին հելլենիստական հուշարձանների դարաշրջանի սկզբնական ժամանակներին*[91]։

Գահույքի ոտք։ *Սա 31 սմ. բարձրությամբ, բավական ծանր մի իր է, բաղկացած երկու հիմնական մասերից. ա) սյունաձև բունը, որ ունի ատամնաձևարար լայնացող բոլորաձև երկու օղակներ, որոնց վրա հագցվում են, ինչպես վերը նկարագրված աշտանակի վրա, դեպի վայր երկարող տերևների դուրս ցցված 2 բաժակներ. բ) բնի վրա ամրացած՝ քիվանման մեջտեղ կոր՝ երկու իրար կցվող ուղղանկյուն դերանների ձևով (26 սմ. և 13,5 սմ. երկարությամբ)։ Երկարադույն ցողունը կրում է սրածայր մի հավելված, որը, ինչպես պետք է եզրակացնել վերին ու*

ստորին եզրերին ցցված ատամներից, խոճկելու էր ուրիշ նյութից, երևի փայտից, շինված գերանի մեջ։ Թե՛ սյունաձև բունը և թե՛ մետաղե վերին ցողունն ունեն ծակեր ու փոսիկներ, որոնց մեջ հավանորեն մի ժամանակ հագցրած են եղել թանկագին նյութեր, անշուշտ քարեր։ Պարզ է ուրեմն, որ բացի վերոհիշյալ սրածայր հավելվածից, գահույքի մյուս մասերը հայտնապես տեսանելի էին։

Բացի վերոհիշյալ մասերից՝ գահույքի ուրիշ մասեր էլ պահվել են այլ անձերի ձեռքում։ Նույն չափով, նույն ձևով և նույն ոճով հայտաբերված մի կտոր, որ պատկանում է մի մասնավոր ֆրանսիացու, ունի այն կարևոր ամբողջացումը, որ վերին ցողունի վրա քանդակված է հանդիսացող առյուծի պատկեր[62]։

Նմանապես Բեռլինի թանգարանում ցուցադրված են մասեր, որոնք կարող են պատկանած լինել հենց այս կամ մի ուրիշ համանման գահույքի, այն է՝ մեկ հատ արծվառյուծ (Greif, грифон) և մեկ հատ բրոնզե սյունի կտոր։ Ասորեստանյան ոճի նմանությամբ կերտված այդ արծվառյուծը, որի երկարությունը կտուցից մինչև թևի ծայրը 28 սմ. է, իսկ ամենամեծ բարձրությունը՝ 21,7 սմ., կրում է թռչունի պոչ ու ճանկեր և երկայնավուն մեծ թևեր։ Թևերի փետրավոր կամ թեփավոր երեսը կերտված է խիստ նուրբ և խնամքոտ արվեստով։ Աչքերն ու հոնքերը լցված են եղել ուրիշ նյութով, հավանորեն թանկագին քարերով։

Բրիտանական թանգարանում (Լոնդոն) էլ կա Թոփրակ-կալեից հանված բրոնզե թևավոր մի ցուլ՝ կրծքի վրա խաչաձևված մարդկային ձեռքերով։ Դեմքը, որ ուրիշ նյութից է կերտված եղել և ներկայումս բացակայում է, նմանապես մարդկային պետք է լինի։ Թե՛ Լոնդոնի ցուլը և թե՛ Բեռլինի արծվառյուծը գլուխներին ունեն հավելված մասնիկ՝ սյունը կրելու համար։ Ընդ որին պետք է նշել, որ Լոնդոնի ցուլի գլխի վրայի հավելված մասնիկը կրում է նույն տերևների օրնամենտը, ինչ որ ունեն Բեռլինի սյունը, գահի 2 ոտքերը և վերոհիշյալ աշտանակը, մինչդեռ Բեռլինի արծվառյուծի հավելվածի զարդանկարը միանգամայն տարբեր է։

Բեռլինի սյունն իր 2,65 սմ. հաստությամբ կարող է միանգամայն հարմարվել արծվառյուծի գլխի վրայի հավելվածի տրամագծին (2,7 սմ.)։ Նմանապես Լոնդոնի կենդանաքանդակը իր բարձրությամբ համապատասխանում է Բեռլինի սյունին։ Հետևապես՝



կարելի է կասել, որ չորս զանազան հավաքույթներում եղած այս բոլոր կտորները պատկանում են միևնույն գահույքին, որ հնարավոր է վերականգնել արխայիկ գահերի ձևի նմանողությամբ (LHM, 95—97)։

Մետաղե ամաններ։ — Տնտեսության մեջ առաջնակարգ նշանակություն ունեցող այս առարկաները մետաղե գործի սկզբից արդեն շինվում են պղնձից և ապա բրոնզից, արծաթից և այլն։ Սակայն մետաղե ամաններ հազվադեպ են գտնվում հնագիտական պեղումներում. նրանք ավելի շուտ հայտաբերվում են հին բնակատեղերի ավերակների պեղումներից։

Մետաղե ամանների շարքում այդ հնագույն դարերում գործածական էին, ինչպես և ներկայումս, գլխավորապես պղնձե առարկաները։ Տակավին 12-րդ դարից սկսած (մեր թվականությունից առաջ), ըստ սեպաձև արձանագրությունների վկայության, ասուր-բաբելական աշխարհակալներն ավար էին վերցնում և կամ հարկ էին պահանջում Առաջավոր Ասիայի, նաև Հայկական լեռնաշխարհի նվաճված ժողովուրդներից անհամար քանակի պղնձե բազմատեսակ ամաններ։

Թոփրակ-կալեում հայտաբերվել են խալդական կուլտուրայի բավականաչափ բրոնզե ամաններ։ Դրանց մեջ ուշագրավ են փոքրիկ կլորակ առարկաները, որոնց մի կողմը մասամբ տափակ է, ներկայացնելով նրանց ետևի մասը, որ, անշուշտ, հարմարեցվում էր պատից կախելու կամ ամրացնելու համար։ Նմանապես գտնվել է նուրբ գործ ներկայացնող ամանի բեկոր՝ հիերոգլիֆ գրերով։

Գտնվել է նաև բնորոշ ձևի բրոնզե մի ճրագ, որ ներկայացնում է երկու բաժանմունքից բաղկացած կիսաբոլոր խորունկ աման, որի մեկ մասում անշուշտ յուղ էր ածվում, իսկ բաժանող միջնապատի 3 ծակերից պատրույգները դուրս էին հանվում վառելու համար դեպի երկրորդ մասը։

Հիշենք նաև բրոնզե մի զավաթ, որ հայտաբերված է Նոր-Բայազետի գավառի դամբաններից մեկում և բրոնզե փարչաձև մի աման, գտնված Շամբորի պեղումներից։

Արծաթե ամաններ սակավաթիվ օրինակներով հայտաբերված են Թոփրակ-կալեի պեղումներում։

II

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐՁԱՆԻԿՆԵՐ

Այժմ դառնանք մնացորդներից ձուլած կենդանական ու մարդկային ֆիգուրներին, որոնք, հանդիսանալով մետաղագործության զարգացման արդյունքներ, միաժամանակ ցայտուն վկաներ են հին դարերի այն կենցաղի, որով ապրում էր երբեմն Հայկական լեռնաշխարհը։

Առաջին հերթին մեր ուշադրությունը գրավում են մարդկային բրոնզե արձանիկները, որոնք գտնվել են Զանգեզուրի շրջանի Արծվանիկ գյուղի մոտերքը (6 հատ) և Սարիղամիշի մոտակա բլրի հինավուրց խալդյական բերդի գետնի խորքերում (15 հատ)։ Այդ արձանիկների բարձրությունը տատանվում է 7,5 սմ. մինչև 9 սմ., ծանրությունը՝ 50 գր. մինչև 70 գրամ։

Հիշյալ արձանիկները կարելի է բաժանել երկու կարգի։ Առաջին կարգի արձանիկների բնորոշ գիծն այն է, որ նրանք ունեն փոքրիկ պատվանդան (ցոկոլ), որի վրա կանգնած է մարդկային ֆիգուրը՝ սեղմված ոտերով և սիմետրիկ գծերով արտահայտված ֆալլուսով։ Երկրորդ կարգի արձանիկները զուրկ են պատվանդանից, մարդկանց ոտքերը բաժանված են իրարից, և ֆալլուսն արտահայտված է ռեալիստորեն՝ ցցված սեպիկի ձևով։

Յուրաքանչյուր այդ կարգն իր հերթին ստորաբաժանվում է երեքական տարբերակների։ Վերոհիշյալ երկու կարգերի առաջին տարբերակը բնորոշվում է սաղավարտով, որի վրա բարձրանում են մանգաղի կամ լուսնի ձև ունեցող 2 եղջյուրներ, որոնց միջև տարածվում է մի կատար։ Երկրորդ տարբերակն ունի սաղավարտ առանց եղջյուրների, բայց մեկ կատարով։ Երրորդ տարբերակն ունի սաղավարտ առանց եղջյուրների ու կատարի, սակայն ցցված սուր ծայրով. սա ավելի շատ փյունիկյան տիպի կոնաձև գլխարկ է, որ այնքան համատարած է Հայկական լեռնաշխարհի նախապատմական քանդականկարներում։

Այդ արձանիկները, բացի սեպիկից, որ ցցված է առջևից և ակներևաբար ֆալլուսի նշանակություն ունի, կրում են նաև, մի քանի բացառությամբ, մի-մի սեպիկ ետևից, որով արձանիկը, ըստ երևույթին, ուղղահայաց դիրքով ամրացվել է որևէ առարկայի, թերևս պատին, սյունին և այլն։

Ֆիգուրների բազուկները մինչև արմունկները բարձրացած են,



որոնցից աջ թևը պարզված է դեպի վեր, հավանորեն բռնած ունեին նիզակ կամ մի այլ հարձակողական զենք, իսկ ձախ թևը պարզված է դեպ առաջ, երևի բռնած էր ունենալու վահան։

Ավելորդ ենք համարում այստեղ ավելի մանրամասն կանգ առնել հիշյալ բրոնզե արձանիկների մյուս բնորոշ գծերի վրա (դիմագծեր, զգեստ, զարդեղենք և այլն), որոնց նկարագիրը տալիս է նրանց մասին եղած գրականությունը[63], սակայն անհրաժեշտ է նշել արձանիկների նշանակությունը լուսաբանող մի քանի հանգամանքներ։

Պետք է ասել, որ միանգամայն համանման արձանիկներ գտնվել են Հայկական լեռնաշխարհի շատ տեղերում։ Բացի այն, որ նույնատիպ մի արձանիկ հայտաբերվել է Ղարսի նահանգում (Պետրիկ Սուտլամիշ գյուղում), այսինքն Սարիղամիշի վերոհիշյալ արձանիկների հայրենիքում, և ընծայված է եղել Անիի թանգարանին[64], այդպիսի արձանիկներ գտնվել են նաև Թիրոնի գյուղում (Վրաստան, Քութայիսի նահանգ), Կազբեկում (Հյուսիսային Կովկաս), Արգունիի ձորի Մալկա գետի վրա և Կովկասի զանազան վայրերում։ Փոքր ու Առաջավոր Ասիայում այսպիսի բրոնզե արձանիկներ գտնված են 70-ից ավելի, որոնք այժմ ցրված են եվրոպական զանազան թանգարաններում։

Արծվանիկի ու Սարիղամիշի վերը նկարագրված բրոնզե արձանիկների դիրքն ու տեսագծերը որոշ նմանություն ունեն նմանույն այլ արձանիկների հետ, որոնք հայտնի են էգեյան աշխարհից և Առաջավոր Ասիայի հնագիտական պեղումներից։ Մեր արձանիկներից մի քանիսի դիրքը (պոզա) կրկնվում է Միկենքի (բրոնզեդարյան Հունաստանում) կերամիկայի վրա նկարված մարտիկների պատկերներում, որոնք ձախ ձեռքին բռնած ունեն վահան, իսկ բարձրացած աջ ձեռքին՝ նիզակ, նմանապես գլխին կրում են սաղավարտ՝ առաջ ցցված 2 եղջյուրներով և որոնց միջև՝ կատարով։ Լիկիայի (Փոքր Ասիա) Զևսի արձանիկներն ունեն նույն բնորոշ դիրքը, բայց այն տարբերությամբ, որ բարձրացրած աջ ձեռքին նա բռնել է շանթ, իսկ ձախ ձեռքին՝ ոչ թե վահան, այլ թռչուն (արծիվ), այսինքն աստվածային երկու խորհրդանշեր։

Երկեղջյուր սաղավարտներ մենք տեսնում ենք հնագարյան Սարդինիայի (Շարդան), հարավային Իտալիայի, Էտրուրիայի բրոնզե արձանիկների վրա։ Եգիպտական հնագարյան (բրոնզե դարերի վերջերին ու երկաթե դարերի սկզբները) ռազմական նկարներում՝ շարդանյան (Սարդինիայի) վարձկան զինվորների

զրահավորման բնորոշ առանձնակիցը հանդիսանում էր երկեղ-
ջյուր սաղավարտը, որտեղ կատարի փոխարեն երկու եղջյուրների
միջև մեծ ճառամբ ցցվում էր գնդակ։ Վերջապես, Մարաշի պե-
ղումներից (հաթական) հայտաբերված բրոնզե մի արձանիկը
կրում է նույնպես սաղավարտ՝ երկու եղջյուրով ու կատարով,
ինչպես և մեր արձանիկները[65]։

Ուրեմն մեր նկարագրած վերոհիշյալ արձանիկներն իրենց տեսագծերով ու կերտվածքով առնչություն ունեն Միջերկրածովյան ու նրանց հարակից հաթական կուլտուրայի հետ և չեն կարող խալդական ծագում ունենալ։

Չնայած, որ մեր արձանիկների մեծ մասը (15 հատ) հայտաբերված է Սարիղամիշի բլրի հնագարյան ամրոցի մնացորդներում, որը (ամրոցը), համաձայն Արգիշտի I-ի այդտեղ թողած սեպագրի (778—750 թ. թ. մեր թվականությունից առաջ), 8-րդ դարի սկզբներին գրավված է եղել խալդերի ձեռքով, այնուամենայնիվ համեմատած խալդական կուլտուրայից մեզ հասած արվեստի նույնանիշ արգասիքների հետ, չեն ներկայացնում ընավ խալդական գործ։ Մինչդեռ խալդական մետաղագործությունը մեզ տվել է նուրբ արվեստի, զարգացած տեխնիկայի արտադրություններ, ընդհակառակը, Արծվանիկի ու Սարիղամիշի մեր նկարագրած արձանիկները հանդիսանում են ավելի ցածր տեխնիկայի ու համեմատաբար կոպիտ արվեստի գործ և իրենց ոճով ու տիպով ընդհանուր գծեր չունեն խալդականի հետ։

Ուստի կարծում ենք, որ հիշյալ արձանիկները տեղական, գավառական արտադրություններ են, որոնք սովորաբար կրում էին հաթական կուլտուրայի տարրեր, թեև մասամբ կոպտացած, և շինված են եղել, ինչպես օրինակ Սարիղամիշինը, թերևս խալդերի արշավանքից շատ առաջ։ Արգիշտի II-ի վերոհիշյալ արձանագրությունից պետք է եզրակացնել, որ խալդական այս թագավորը ոչ թե ինքն է հիմնադրել այդ բերդը, այլ նվաճել է արդեն գոյություն ունեցած ամրոցը։ Հետևապես մեր արձանիկները արդեն նախքան այդ նվաճումը գտնվելիս կարող էին լինել հիշյալ բերդում, իսկ խալդերն իրենց կրոնա-պաշտամունքային պետքերին ծառայող արձանիկներն անշուշտ կբերեին իրենց հետ, որոնք, անտարակույս, ավելի նուրբ ու կատարելագործված տեխնիկայի գործ կլինեին, քան մեր արձանիկները[66]։

Արծվանիկի ու Սարիղամիշի բրոնզե արձանիկներին կից անհրաժեշտ է հիշատակել Փոքր ու Առաջավոր Ասիայում հայտաբերված մի այլ տեսակի բրոնզե արձանիկներ, որոնցից երկուսի



մանրամասն նկարագիրը տալիս և համեմատական ուսումնասիրությունն է անում Ե. Օ. Պրուշևսկայան[67]։ Այդ երկու արձանիկները, որոնցից մեկը ձեռք է բերված Անդրկովկասում, իսկ մյուսը Պարսկաստանում, ներկայումս պահվում են Լենինգրադի Նյութական կուլտուրայի պատմության Ակադեմիայում։ Այդ երկու արձանիկները գալիս են Արծվանիկի ու Սարիղամիշի օրինակների մասին մեր ասածները լրացնելու և պարզաբանելու ընդհանրապես այդ բոլոր արձանիկների նշանակությունը[68]։

Հիշված երկու արձանիկներից մեկը, որ ձեռք է բերված Կովկասում, տափակ է ու երկու կողմանի պատկերով (ռելիեֆ)։ Նա ներկայացնում է մարդկային ֆիգուր՝ եզան ականջներով և երկու եղջյուրներով։ Սա խիստ ուշագրավ օրինակ է Առաջավոր Ասիայի կուլտուրայի և հավանորեն ծագում է Փոքր Ասիայի սահմանային մարզերից, պրոֆ. Շիլեյկոյի կարծիքով՝ Կապադովկիայից։ Այդ արձանիկը կարելի է դասել Առաջավոր Ասիայի մեր Միջագետքի ունեցած սերտ աղերսությունների ժամանակաշրջանին, այսինքն մոտավորապես 3-րդ հազարամյակի վերջերին և միանգամայն անժխտելի է այդ արձանիկի մերձավորությունը 3-րդ հազարամյակի սումերական գլան-կնիքներին։

Նախ և առաջ՝ աչքի է ընկնում այդ արձանիկի նմանությունն արխայիկ դարաշրջանի սումերական գլանների վրա եղած նկարների հետ, որոնց նկատմամբ ոճի բնորոշ առանձնահատկությունն է հանդիսանում ուսերի և ձեռքերի գծավորումների շեշտակի անկյունավորությունը, նմանապես և ֆիգուրի դիրքը։ Մեր արձանիկի ոճի մի շարք հատկանիշ գծերը հիշեցնում են Միջագետքի արխայիկ հուշարձանները։ Կառուցվածքի դիրքը, գլխի տափակ, հորիզոնական հատումը, որ ճակատի համար թողնում է խիստ նեղ շերտ, վերջապես եզան եղջյուրները, որպես աստվածության խորհրդանիշ, ինչպես նաև աչքերի ձևավորումը, կրծքի մազերի նկարը և այլն։

Այսուհանդերձ՝ արձանիկի ոճի մեջ նկատվում են գծեր, որոնք միանգամայն խորթ են Միջագետքի արվեստին և պատկանում են այլ կուլտուրայի։ Մեր արձանիկի այդ բնորոշ առանձնահատուկ գծերն են. ա) ֆիգուրի տափակաձև բնույթը. բ) շեշտված է երկար վիզը (սումերական արվեստին, ընդհակառակը, հատուկ է կարճ վիզ) և գ) տափակ գլխի վրա չափազանց դուրս ցցված քիթը։

Մեր թված այս վերջին առանձնահատկություններն իրենց բնորոշ գծերով հար և նման են Փոքր ու Առաջավոր Ասիայի

(արիա-կապադովկիական ու հաթական) և Միջերկրածովյան (էգեյան կուլտուրայի), առանձնապես Կիկլադյան ու Կիպրոս կղզիների 3-րդ և 2-րդ հազարամյակների հուշարձաններին։

Երկրորդ բրոնզե արձանիկը, որ բերված է Գառնիտառանից, կանգնած առական ֆիգուր է, գոտիով, ծայրը գեպի վեր կտրտված կոշիկներով։ Անկասկած, այդ արձանիկը պատկանում է հաթական կուլտուրական աշխարհին։ Ըստ երևույթին, արձանիկը ներկայացնում է Թեյշեբա աստծուն, որ իր ձեռքերին բռնած ունի համապատասխան աստվածային նշանակները։

Երբ այս երկու արձանիկների հետ համեմատության ենք դնում Սարիղամիշի ու Արծվանիկի բրոնզե արձանիկները, որոնք իրենց ծագումով, անտարակույս, ավելի հետին ժամանակների են պատկանում, քան առաջինները, մի շարք հար և նման գծեր ենք նկատում թե արվեստի և թե ոճի տեսակետից։ Մի կողմ թողած մի շարք մանրամասնությունները, ցայտուն կերպով երևան են գալիս հետևյալ համանման գծերը. ոտքերի և արմունկների անկյունավորությունը, երկարաձիգ վիզը, չափազանց մեծ և դուրս ցցված քիթը, նեղ ճակատը, նեղ, սեղմված բերանը (պարանոցը), ֆիգուրների գլուխը (պոզը), գլխի զույգ եղջյուրները։ Այս հանգամանքն արդեն բավական է, որպեսզի հիմք ունենանք Սարիղամիշի ու Արծվանիկի արձանիկներն իրենց կուլտուրական ակերով մոտեցնելու վերջին արձանիկներին, որոնք, ինչպես պետք է ենթադրել, հաթական ծագում ունեն և կրում են 3-րդ կամ 2-րդ հազարամյակի բրոնզեդարյան կուլտուրայի բնորոշ գծերը։

Վերջին երկու արձանիկների ոճն ու տեխնիկան գալիս են ուրիշ մի անգամ ևս հաստատելու այն կարծիքը, որ Սարիղամիշի ու Արծվանիկի արձանիկները հաթական ու էգեյան կուլտուրաների տեղական արտադրություններն են Հայկական լեռնաշխարհում։

Դառնալով այն հարցին, թե ինչ էին ներկայացնում և ինչ նպատակի էին ծառայում այդ արձանիկները, պետք է խոստովանել, որ դա դժվար խնդիր է, քանի որ բացակայում են հիմնավոր ավյալները։ Ամենից ավելի հավանական է թվում, որ նրանք կրոնա-պաշտամունքային նշանակություն ունեին, թերևս ֆալլուսի պաշտամունքի հետ առնչվող։ Այդ կուլտն առանձնապես ծաղկում էր դեռևս հնագույն ժամանակները Փոքր-Ասիայում, ուր նա տարածվել էր Միջերկրածովյան ժողովուրդների. մանավանդ թրակո-փռյուգիական ցեղերի ներգաղթի հետևանքներով։



III

## ԽԱԼԴԱԿԱՆ ԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՖԻԳՈՒՐՆԵՐ

Միանգամայն խալդական ծագում ունի այն հետաքրքիր արձանիկը, որ գտել են Վ. Բելքն ու Լեման-Հաուպտը Թոփրակ-կալեում։ Սա 37,5 սմ. բարձրությամբ և 10,5 սմ. լայնությամբ մարդկային ֆիգուր է։ Սա ամբողջովին, բացի գլխից, բրոնզից է, և, ըստ երևույթին, սկզբներում ոսկեջրած է եղել։ Դեմքը, որի գիծագծերը գծագրապես ջնջված են, կերտված է սպիտակ քարից. աչքերը և օձերի ծալքածները հավանորեն լցված են եղել ազնիվ քարերով։

Այս արձանիկը մինչև այժմ հայտաբերված միակ խալդական վկայությունն է խալդերի արական տիպարի. սակայն նրա գլուխը եղծված լինելով, դժվար է վերականգնել այդ տիպը։ Այնուհանդերձ տեսնում ենք բնորոշ զգեստով խալդ, որ հավանորեն քուրմ է լինելու, եթե նկատի առնենք, բացի երկար, սեղմ զգեստից, նաև ձախ ուսից կախված լայն ժապավենը (ուրար), որ վերջանում է շղթայով, և աջ ձեռքին բռնած հովնարանման առարկան։ Այս պարագաները մի քանիսներին հիմք են տալիս ենթադրելու, որ այդ արձանիկի մեջ պատկերացված է «ներքինի»։

Այդ արձանիկն ընդհանուր առմամբ նուրբ արվեստի ու խնամքով կատարված գործ է, որով բնորոշվում է խալդական մետաղագործությունը և այդ կողմից նա, վերը նկարագրված արձանիկների համեմատությամբ, ավելի հետին դարերի գործ է և իր կերտվածքով ավելի կատարյալ դեղարվեստական արդյունք։

Վերոհիշյալ արձանիկների շարքը պետք է դասել նաև զուտ խալդական ծագում ունեցող թևավոր արձանիկը, որից 3 օրինակ է հայտաբերված Թոփրակ-կալեի պեղումներից։ Դա բրոնզից ձուլած մարդկային, խեկասեն կանացի ֆիգուր է, որ թռչնային պոչ ունի, իսկ երկու, դեպի աջ ու ձախ կողմերը պարզած ձեռքերը միաձուլված են թռչնային նույնպես տարածված թևերի հետ։ Արձանիկի մեջքին շինված է մի օղակ, որից այդ ֆիգուրը կախվում էր։

Այս արձանիկի նշանակությունը հնագիտական տեսակետից նրանով է բարձրանում, որ նա կրոնա-պաշտամունքային առարկա է։ Սա արևատիպավորակի թևավորյալ պատկերացումն է խալդական աստծով և ներկայացնում է այն սիմվոլը, որ Եգիպտա-

ցիններից փոխանցվել է ասորիներին և ձևավորվել է խալդական հատուկ կերպարանքով։ Թևավոր արևասկավառակին ընդհանրապես ամենուր, որտեղ գոյություն է ունեցել անթրոպոմորֆային աստվածային կերպարանքը, նշանակում է գերագույն աստվածության սիմվոլը, ինչպես Ռա-Ամոնը Եգիպտոսում, Ասուրը՝ Ասորեստանում, Ահուրա-Մազդան՝ Աքեմենյանների մոտ (հին Պարսկաստանում)։

Արդյոք սրանից պետք է հետևեցնել, որ խալդական պանթեոնի գլուխն էր կանգնած մի իգական աստվածություն և որ ինքը՝ Խալդի գերագույն աստվածն էլ իգական էր — մնում է անորոշ։ Բայց և այնպես որոշ է այն հանգամանքը, որ մեզ մինչև այժմ հայտնի են խալդական երկու գլխավոր աստվածություններ, երկուսն էլ իգական սեռով, մի փաստ, որ անտարակույս վկայում է, թե ինչ մեծ դեր ․էր խաղում խալդերի մեջ իգական աստվածությունը (LHM, 87—88)։ Անշուշտ այդպիսի իգական աստվածություն է ներկայացնում Հայաստանի Պետական Թանգարանում ցուցադրված բրոնզե մի արձանիկը, որի բարձրությունն է 12 սմ. և արտաքուստ ունի մուգ-կանաչ գույն։ Այդ արձանիկը խալդական աղվեսի գեղեցիկ մի նմուշ է և աչքի է ընկնում իր նուրբ կերտվածքով[69ա]։

Հնագիտական տվյալներից պարզորոշ երևում է, որ խալդերի մեջ մետաղե արձանագործությունը զարգացած էր մեծ չափերով։ Բացի պեղված իրերից, որոնցից մի քանիսը մենք նկարագրեցինք, այդ մասին վկայում են նաև հին աղբյուրությունները։ Ասորական թագավոր Սարգոն II-ը իր մի արձանագրության մեջ հիշատակում է, որ Մուսասիրի իշխանությունը նվաճելիս՝ պատերազմական հարուստ ավարի հետ վերցրել է նաև խալդական թագավոր Ռուսայի բրոնզե արձանը (LHA, II, 155)[69]։

Բացի այդ՝ Թոփրակ-կալեի պեղածոներում, տաճարին վերաբերող իրերի մեջ գտնվել է բրոնզե մի արձան, որը ներկայացնում է ծնկաչոք մի եզ և որի վրա Խալդ աստծու ձոնելու արձանագրություն է արված (անդ)։

Այստեղ երկար կանգ չենք առնում մի շարք զանազան մեծության ու ձևերի կենդանական արձանիկների վրա, որոնց մեջ [illegible] թռչունն է և առավելապես այծյամը, Հայաստանի ամենատարածված լեռնային այդ վայրի կենդանին։ Հիշենք Նոր-Բայազետի դամբաններից մեկում հայտաբերված իշխանական սայլի վրա այծյամի ֆիգուրը։ Սա տեխնիկայի մի գեղեցիկ գործ է և ծառայել է իբրև զանգակ, քանի որ նրա տակամեջ մարմնում կան 3 գնդակիկներ՝ զնգզնգալու համար։ Ավելի հավանական է թվում, որ այդ արձանիկը մոգական նշանակություն է ունեցել։ Այդ այծյամն ամրացված է մի տափակ պատվանդանի վրա, որն իր հերթին ունի մի սրածայր լեզվակ՝ փայտի մեջ խրելու համար։ Սովորական են մանավանդ արծվառյուծների (грифон, Greif) բրոնզե ֆիգուրները, որոնք հանդես են գալիս մեծ մասամբ ոչ թե ինքնուրույն օրինակներով, այլ իբրև բաղկացուցիչ մասը որևէ այլ առարկայի, առավելապես իբրև պատվանդան, օրինակ՝ գահույքի, աթոռի և այլն (էջ 106)։

Գ

# ՔԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բրոնզե ու վաղագույն երկաթե դարերը քննության առնելիս, որոնց տիրապետող արտադրության առարկաները համապատասխան կերպով բրոնզից ու երկաթից էին, չպետք է անտեսել նաև արտադրական մի ճյուղ, այն է՝ քարի մշակումը։ Անշուշտ, այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե արտադրական այն ձևերին, որոնք հատուկ էին քարեդարյան ինդուստրիային, որ իբրև այդպիսին այլևս գոյություն չուներ ու չքացել էր տնտեսական գործունեության ասպարեզից, այլ խոսքը վերաբերում է մի շարք կենցաղային առարկաների, որոնք անհրաժեշտաբար կերտվում էին քարից, այսինքն մի նյութից, որի բազմազան տեսակներով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը։ Քարագործությունը ծառայում էր այնպիսի առարկաներ կերտելուն, որոնք մյուս նյութերի համեմատությամբ պետք է օժտված լինեին ավելի մեծ, չասենք հավիտենական, ամրությամբ և աչքի ընկնեին իրենց հոյակապությամբ։

Քարը, բացի սակավաթիվ ամանեղենից, գլխավորապես ծառայում էր իբրև նյութ՝ շենքերի բաղկացուցիչ պարագաներ կերտելու, հուշարձաններ կոփելու և կրոնա-պաշտամունքային իրեր պատրաստելու համար։

Ա. Իվանովսկին Գետաբեկ-Ղալաքենդի պեղումներից հանել է, կավե ամանների հետ, նաև քարե երկու ամաններ, որոնք, անշուշտ, կերտվել են մետաղե, հավանորեն բրոնզե, թերևս երկաթե գործիքով։ Այդ ամանները ներկայացնում են բավական գեղեցիկ ճաշակի ու զարգացած տեխնիկայի արտադրանք։ Այդ ամաններից մեկը կապտավուն-մոխրագույն քարից շինված 112 միլիմ. բարձրությամբ մեկ վազա է, որի ոչ այնքան խոր սկահակը հանգչում է գեղեցիկ տաշած և պարուրաձև նախշով զարդարուն պատվանդանի վրա։ Սկահակի արտաքին եզրերը նախշված են փոքրիկ եռանկյունների շարանով, որոնց ծայրագագաթները ուղղված են դեպի վայր։ Սկահակի երկու հանդիպակաց կողմերում, եզրից ոչ հեռու, կան զուգավոր կոթեր (կանթեր), ուղղահայաց ծակով։

Մյուս քարե ամանը ոչ այնքան մեծ, 60 միլիմ. բարձրությամբ ձվաձև մի գավաթ է, որի վերին լայնությունը 61 միլիմ., իսկ հատակը 67 միլիմ. է։ Բաժակի եզրի մոտ դուրս են ցցված երկու հանդիպակաց ունկեր, ծակերով։ Այս ամանը ծածկվում է գմբեթաձև, նույնպես քարից պատրաստված խփով, որի երկու ծակ ունկերը համապատասխան կերպով ընկնում են բաժակի երկու ունկերի վրա։ Խուփը նախշված է մանր կետերից կազմված գծերով (МАК, VI, 117—118)։

Քարե ամաններ հայտաբերվել են նաև Շամքորի և Շուշու դամբարանների պեղումներից. այդ ամանները բավական գեղեցիկ արվեստի օրինակներ են։ Շուշու քարե երկու ամանը նման են կավե ղուլիկների։ Մեկը՝ կանթով է, կողերը զարդարված են՝ կանելյուրային ձևի ուղղահայաց ակոսներով, իսկ մյուսն առանց կանթի է, նմանվում է սափորի և նկարազարդ է։

Թոփրակ-կալեի պեղումներից հայտաբերված են քարե մեկ ամանից մնացած 2 բեկորներ՝ կարմրա-դարչնագույն պորֆիրանման քարից։ Այս ամանի փորը քանդակված է եղել կանելյուրայով, իսկ եզրի վրա նույնպես քանդակված է եղել նստած գծերով մի ինչ-որ արածող կենդանի։

Շատ հետաքրքիր է այն քարե մոզայիկը, որ բնորոշ է հին խալդական շենքերում։ Թոփրակ-կալեի պեղված տաճարը հատակված է եղել մոզայիկ մասերով։ «Սրանք համակենտրոն օղակներ են բնական գույնով, կարմիր, մթագույն (սև, սևականաչ, սակավ դեպքերում դարչնագույն-կարմրավուն) և փափուկ, սպիտակ գիպսակերպ քարերից։ Օղակի միջին մասը տարբեր գույնի քարերին սեղմ էր դրվում։ Երբեմն էլ հատակի մեծ սալաքարը կլորաձև փորվում էր և մեջը այլ գույնի քարե օղակ տեղադրվում։ Այդօրինակ տեղադրման դեպքում կարիք չէր լինում օղակն առանձնապես ամրացնելու։ Նույնիսկ հարկ չէր զգացվում որևէ շաղախ կամ նման միջոցներ կիրառելու, եթե սալաքարի միջի փորվածքը ճիշտ ու համաչափ էր արված կամ եթե օղակը նրա մեջ հաստատուն կերպով էր խրված։ Այլ դեպքերում՝ միջնակետ կազմող կլորիկ մասնիկները, որոնք ավելի սկավառակի, քան թե սեպի ձև էին ունենում, բրոնզե գամերով էին մեխվում հատակաքարի փորվածքների մեջ (LHM, 73)։

Քարագործության մի բնորոշ արվեստն էլ կայանում էր

նրանում, որ նա զուգակցվում էր մետաղագործության հետ, այն է՝ քարե քանդակների մեջ ագուցվում էին մետաղե (բրոնզի, երկաթի, կապարի և այլն) բանվածքներ։ Այդ ավանդը մեծապես զարգացած էր խալդերի մեջ։ Այդպիսի օրինակներից է Թոփրակ-կալեում Լեման-Հաուպտի և Կ. Բելքի պեղումներով հանված 30 սմ. բարձր մի քար։ Սրա երեսը ներկայացնում է մորուքավոր մի մարդ, մասամբ բարձրաքանդակ ու մասամբ փորված, որ երկու ձեռքով բռնել է ծառ կամ ծառի մի ճյուղ։ Մորուքը, գլխի մազերը և գլխարկը ցույց են տալիս ասորական տիպար։ Ծառը, կամ եթե ծառի ճյուղ է, փորված է քարի մեջ և այդ փորվածքը լցված է երկաթով, որի մի բեկորը մնացել է։ Այստեղից պետք է կռահել, որ նաև մնացած խորաքանդակ մասերը հատկացված էին ընդելուզելու նույնպես մետաղով, թերևս և թանկագին քարերով, մանավանդ մարդու բազուկը, դեմքը և հագուստի որոշ մասերը (LHM, 81—82)։

Մի կողմ թողնելով բազմաթիվ կոթողները սեպաձև արձանագրություններով և այդ կոթողների պատվանդանները, որոնք նույնպես քարագործության զարգացման վկաներն են, կանգ առնենք կարևոր նշանակություն ունեցող հուշարձանների վրա, որոնք մարդկային պատկերներ են ներկայացնում։ Այդպիսիներից է գորշ քարից կերտված այրական արձանը, գտնված Վանի ժայռի ամրոցում, ուր Խալդ աստծու տաճարը և խալդական թագավորանիստ վայրն էր եղել, մինչև որ փոխադրվել էր Ռուսայի քաղաքը Թոփրակ-կալեում (735—714 թ. թ. մեր թվ. առաջ)։ Այդ արձանը կերտված է մարդկային բնական մեծությամբ, բայց մնացել է միայն իրանը պատկերող մասը երկու բազուկներով։ Գոտուց մի սուսեր է երևում, որի երախակալից բռնել է ձախ ձեռքը, իսկ աջ ձեռքը, որ տատանիկ ճկված է, արմունկի բարձրությամբ հանդչում է իրանի առաջակողմում։ Իրանի թիկունքից դեպի գլուխը տարածվող մասի վրա նշմարվում է օձիքի ձևով ինչ-որ հավելված, որի վերին երեսը, կարծես, գանգուրներ կամ զարդ է ներկայացնում. անտարակույս, սա գլխից դեպի ցած ծածանվող մազերի ստորին մնացորդն է կամ, ավելի լավ ասած, մինչև ուսերը տարածվող հերազարդ է ներկայացնում, մինչդեռ իրանի առաջակողմում պահպանվել է մորուքի ստորին մասը, նախ՝ խիտ և ապա՝ ցանցառ ակոսքով։

Լեման-Հաուպտը, նպատակ ունենալով լուսաբանել այս արձանի ծագումն ու նշանակությունը, փորձում է համեմատական տեսություն ունել։ «Խիտ գանգուր և գոռեղ մազերը, որոնք մեզ ծանոթ են հին-բաբելական Գուդեայի ժամանակից, լայն երիզով շրջապատում էին գլուխը և, ի հարկե, չէին հասնում մինչև ծոծրակը և ուսերը։ Վերջին պարագան ընդհանրապես տեղի ունի ասորական արձանների ու քանդակների վրա, խալդական առաջին բարգավաճ շրջանին համապատասխան դարերից։ Այսպես է Նեմրուդ-կալեի Նեբո աստծու արձանը, Ասուր Նասիրպալ III-ի արձանը, Սալմանասար III-ի բարձրաքանդակ նկարի վրա՝ միայն այն տարբերությամբ, որ այստեղ գլխի մազերը հետ ու առաջ են վայր ընկնում և լայն տեղով վերջանում։ Նմանապես բազուկների ու ձեռքերի դիրքն առաջին հայացքից հիշեցնում է Գուդեայի արձանի կեցվածքը, որ, Նեբոյի արձանից զատելով, պահպանվել է հնագույն ժամանակների ասորական աստվածների պատկերների վրա, մինչդեռ թագավորների պատկերներից միանգամայն վերացվել է ձեռքերի այդ ձևի չափազանց կծկումը մարմնի վրա. այնուհետև ձախ ձեռքը սովորաբար կրում էր գավազան, իսկ Ասուր-Նասիրպալի պատկերի վրա աջ ձեռքն իրանի կծով ազատ վայր է թողնված. ասորական կոթողների վրա թագավորն աջ ձեռքով սովորաբար մատնանշում է իր առջև գտնվող խորհրդանիշ առարկայի վրա։ Մեր արձանի իրանի վրայի ձախ ձեռքի դիրքը երախակալի հետ՝ համապատասխանում է ասորական թագավորների պատկերներին, իսկ աջ բազուկը, ընդհակառակը, իր նմանողությամբ մոտենում է ավելի արխայիկ բանվածքին՝ իր արմունկի ուղղանկյուն կեցվածքով ու մարմնին սեղմված ստորին բազկի դիրքով. արդյոք աջ ձեռքը դաշույնի նման զենք է բռնած եղել, կարելի չէ հաստատել և ոչ էլ որոշակի ժխտել։ Մորուքն իր տեսքով ու խտությամբ նույնպես հիշեցնում է ասորա-բաբելական նախատիպերը։ Եվ որովհետև հիշյալ ամրոցը պարունակում է, բացի այդ արձանից, խալդական ժայռաշենքեր ու արձանագրություններ և տաճկական բերդի կառուցման միջոցին այստեղ հայտաբերվել են նաև խալդական ժամանակվա դանազան հնագիտական մնացորդներ, ուստի ըստ ամենայնի հավանական է թվում, որ այդ իրանը խալդական ծագում ունի» (LHM, 76—78)։

Այս ենթադրությունն ավելի ևս հաստատվում է վերջերս գերման-անգլիական ընկերության արշավախմբի կողմից Ասորեստանում կատարված պեղումով հայտաբերված արխայիկ արձանի համեմատությամբ։

Աստվածածնյան այս ամենահին արձանն ունի նույն կեցվածքը, ինչ որ Ներս պատու արձանը (9-րդ դար մեր թվ. ա.), որի հետ Վանի վերոհիշյալ մեր արձանի նմանությունն արդեն նշել ենք վերը: Սակայն իր բազալտե նյութով, իր մարմնի վերին մասի գլխավոր գծերի ազգային կազմավորումով, իր արմունկի կոր անկյունով՝ մեր արձանի իրանն ավելի մոտ է հիշյալ հին ասորական արձանին, որը համեմատաբար ավելի գերազանց կատարելագործության է հասցված իր բազուկների ու մարմնի վերին մասի մկանունքներում:

Վերոհիշյալ տվյալները ենթադրել են տալիս, որ մեր արձանի իրանը կարող է ներկայացնել, լինի դա աստված, լինի թագավոր, սոսկ խալդական կամ ավելի կանուխ՝ Լուտիպրիսի որդի, Աշուր-Նասիրպալ II-ի ժամանակակից (884—860 թ. թ. մեր թվ. ա.) Սարդուրի տիրապետության շրջանի դեմք (LHM, 79):



Է

# ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## I

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կավագործությունը, այլապես կերամիկան, շատ մեծ տեղ էր բռնում հնագույն դարերի ինդուստրիայում: Սկիզբն առնելով նեոլիթյան դարերում (1, 130), նա ծաղկեց բրոնզի ու վաղագույն երկաթե դարերում: Հնագիտական պեղումներն ու հետախուզումներն այսօր կուտակել են չափազանց մեծ քանակով ամբողջական կավե իրեր և մանավանդ նրանց կոտրված մասեր: Այս հանգամանքն ինքնին արդեն եզրակացնել է տալիս, թե ինչ մեծ նշանակություն են ունեցել կերամիկային արտադրությունները բրոնզի ու վաղագույն երկաթե դարերի ժողովրդական կենցաղում: Ուստի նյութական կուլտուրայի պատմության տեսակետից խիստ մեծ արժեք են ստանում կավագործական արտադրանքները, որոնք դառնում են հնագետների ուսումնասիրության կարևորագույն առարկան:

Կերամիկայի ձևերը, տեխնիկան, կավային բաղադրությունը, օրնամենտացիան (զարդանկարչությունը) հանդիսանում են այն չափանիշ տարրերը, որոնց հիման վրա գիտնականները փորձում են բնորոշել արխայիկ ժողովուրդների կուլտուրայի զարգացման աստիճանները, կենցաղային մակարդակը, փոխադարձ ցեղային շփումները, հարաբերությունների առկայությունն ու տարածությունը և այլն:

Այդ կողմից առավելապես աչքի են ընկնում գերման հնագետները, որոնք զանազան ժողովուրդների ու գավառների կուլտուրական կապերը որոշելիս՝ օգտվում են մեծ մասամբ կերամիկայի տվյալներից: Հնագիտական այս եղանակն, ունենալով անշուշտ իր առավելությունները, միևնույն ժամանակ հղի է այն վտանգով, որ կերամիկան դառնում է մի տեսակ ինքնամփոփ, ինքնուրույն բնագավառ, բաժանված ժամանակագրական խմբա-

վորումների, որտեղ փորձում են հիմնավորել կուլտուրայի օրինաչափ փոփոխությունները իրենց բնորոշ տարբերություններով ու հատկանիշներով: Իսկ այդ տեսակ մոտեցումից կարող են առաջանալ կոպիտ վրիպումներ ու թերություններ տվյալ կուլտուրայի աստիճանը որոշելու կամ զանազան ժողովուրդների փոխադարձ կուլտուրական կապերը դրսևորելու տեսակետից:

Օրինակ՝ մի քանի հնագետներ կերամիկայի հետազոտական աշխատանքներում մեծ նշանակություն են տալիս համեմատաբար մանր տարբերություններին այնպիսի հատկանիշների մեջ, ինչպես են զարդանկարային տարրերի համադրությունները, ամանների պրոֆիլները, կողերի հաստությունը, կավերի բաղադրությունը և այլն: Այդ հատկանիշների տարբերությունների վրա հիմնվելով, նրանք կերամիկան դասակարգում են ժամանակագրական որոշ խմբավորումների, որոնց մեջ փորձում են տեսնել օրինաչափ զարգացման շրջաններ իրենց առանձնահատուկ տիպերով:

Սակայն այս դեպքում հետազոտողները աչքաթող են անում մի կարևոր հանգամանք, այն է՝ նախ և առաջ պետք է ապացուցել, որ այդ հատկանիշները ձևափոխվում են օրինաչափորեն այն սահմաններում, որոնք նրանք ընդունում են իբրև բնորոշ տարբերությունների նորմեր: Մինչդեռ միատեսակ ու պարզ զարդանկարային տարրերից գոյացող համադրումները մեծ մասամբ հանդիսանում են անհատական ճաշակի ու արվեստագործի շնորհքի հետևանքներ: Ամանների կողերի հաստությունը կամ պրոֆիլը դիպվածական հատկանիշ է. իսկ եթե նկատի առնենք, որ ուսումնասիրության ենթակա են լինում ձեռագործ (առանց դուրգի) կավե ամանների մեծ մասամբ ջարդված բեկորները, ապա այդօրինակ հատկանիշները միանգամայն կորցնում են իրենց ժամանակագրական հիմքն ու նշանակությունը: Նմանապես ամանների կավի բաղադրությունը կրում է եթե ոչ դիպվածական հատկանիշ, գեթ ունի այն նշանակությունը, որ այստեղ դեր է խաղում կավային նյութի տեղական բնույթը և ոչ թե ժամանակաշրջանը:

Բայց և այնպես կավագործության, հատկապես ամանների նկատմամբ, կարևոր նշանակություն ունի արխայիկ ժողովուրդների կուլտուրայի պատմության ուսումնասիրելիս, մանավանդ երբ մենք փորձում ենք վերականգնել մեր պատկերներում Առաջավոր Ասիայի, մասնավորապես Հայկական լեռնաշխարհի



հնագույն կուլտուրայի բովանդակ պատկերը: Միմիայն այն փաստը, որ հին Հայաստանի դամբանների ու հնավայրերի պեղումներով հայտաբերվել են ահագին քանակի կերամիկական արտադրություններ, որոնք իրենց թվով անհամեմատ գերազանցում են մյուս պեղածո իրերին, գալիս է ասելու, որ կավագործական իրերի ուսումնասիրությունը մեծ լույս կարող է սփռել մեր երկրի արխայիկ անցյալի վրա, ուրվագծել այն ուղին, որով ընթացել է տեղական կուլտուրան, և պատկերացնել նախնի ժողովրդական կենցաղը:

Բայց այդ ուսումնասիրության գործն իրականում կանգնած է մեծ դժվարությունների առաջ: Մի կողմ թողնելով այն փաստը, որ հնագիտությամբ մեզանում շատ քչերն են հետաքրքրվում, պետք է նշել, որ մեր հնագետներն էլ բավարար չափով չեն ուսումնասիրել տեղական կերամիկան: Բայերնը, Ժակ Մորգանը, Ռսլարով ամուսինները, Վ. Բելքը, Ռոսլերը, Իվանովսկին, Երվ. Լալայանը և այլք բավականացել են իրենց հայտաբերած մեծաքանակ պեղածո կերամիկայի մասին տալով սոսկ նկարագրական աշխատություններ, որոնք մեզ շատ քիչ բան են ասում, առանց խորանալու նրա տեխնոլոգիական ուսումնասիրության մեջ[70]:

Հայկական լեռնաշխարհի կերամիկայի ուսումնասիրությունը խոչընդոտների առաջ է կանգնած նաև մի այլ կողմից: Այդ կերամիկայի պեղածո բազմաթիվ օրինակները այսօր ցրված են Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Մոսկվայի, Լենինգրադի, Փարիզի, Բեռլինի, Լոնդոնի և այլ թանգարաններում: Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս կերամիկական ամբողջ նյութը լրիվ դասակարգել, նրա տիպարային խմբավորումները որոշել, տիպերի փոխադարձ ազդերը դրսևորել, վերջապես, որ ամենակարևորն է, լուսաբանել այդ տիպերի կապը համապատասխան դամբանների ու թաղումների տիպերի և սրանց մեջ պարունակված ինվենտարի հետ:

Հայկական լեռնաշխարհի կերամիկան բաղկացած է գլխավորապես ամաններից. կան նաև կենդանական աշխարհի ու մարդկանց կավե ֆիգուրներ, տախտակիկներ, որոնք ծառայել են հուշագրերի համար և, վերջապես կենցաղային այլ առարկաներ, օրինակ՝ կրոնա-պաշտամունքային անոթներ, թելերի գլուխներ, ջրատար խողովակներ, աղյուսներ և այլն:

Ամանեղեն կերամիկան ներկայացնում է բավական բարդ ու խայտաբղետ պատկեր՝ բազմատեսակ երանգներով, սկսած

ամենապրիմիտիվ ու պարզ ձևերից, կոպիտ տեխնիկայից, հասարակ զարդանկարներից մինչև կատարելագործված տեխնիկան, զարգացած արվեստը, նուրբ ու գեղեցիկ զարդանկարները։ Երբ պեղված կերամիկայի որոշ վայրերի մի քանի տիպարային օրինակները համեմատում ենք այսօրվա հայկական կենդանի տնայնագործական կերամիկայի հետ, չենք կարող աչքաթող անել, թե երբեմն որքան բարձր էր կանգնած իր արվեստով, զարդանկարներով և ամբողջ կոնցեպցիայով բրոնզեդարյան կերամիկան։ Եվ դա հասկանալի է։ Ներկայումս մեր ժողովրդական կենցաղում կավագործ տնտեսները չունեն այլևս այն տնտեսական նշանակությունը, ինչ որ ունեին հնագույն դարերում։ Նորագույն դարերի գործարանային արտադրությունն իր բազմատեսակ նյութերի տեխնիկայով մատակարարում է կենցաղային կարիքների համար ավելի նպատակահարմար, ավելի դիմացկուն և ձեռնտու անոթներ։ Եթե մեր տնայնագործ բրուտները դեռ ևս շարունակում են այս ու այնտեղ արտադրել կավե զանազան ամաններ, այդ բոլորը սոսկ օժանդակ նշանակություն ունեն տնտեսական կյանքում և սպասարկում են կենցաղային միայն սահմանափակ պետքերին։ Այլ բան էր նեոլիթի ու վաղագույն մետաղի դարերում։ Այդ հնագույն ժամանակներում կերամիկան կոչված էր բավարարելու ոչ միայն ժողովրդական կենցաղի և տնտեսական-գործնական կարիքներին, այլև ժողովրդական զանգվածների մտավոր-հոգևոր պահանջներին, գեղարվեստական ձըգտումներին։ Կերամիկան այն բնագավառն էր, որտեղ գերազանցորեն արտահայտվում էր արխայիկ արվեստագետի ստեղծագործական շնորհն ու հանճարը թե ճարտարվեստի և թե գեղարվեստի բնագավառներում, բանաստեղծորեն կերպավորվում էր կրոնամիֆոլոգիական աշխարհայեցողությունը։

Սակայն երբ վաղագույն մետաղի դարերում մետաղագործությունը ժողովրդական կենցաղում դառնում է տիրապետող պահանջ և թափանցում է տնտեսական կյանքի բոլոր ոլորտները, նա դադարում է այլևս ծառայել միմիայն տիրապետող դասակարգերի պահանջներին, մատակարարելու նրանց անհրաժեշտ զենքեր ու զարդարանքներ։ Ահա այդ ժամանակից սկիզբ է առնում կերամիկայի անկումը։ Զարգացած մետաղագործությունը, արտադրելով կենցաղային պետքերի համար պղնձե և մաքուր բրոնզե անոթներ, կարողանում է ասպարեզից հեռացնել դուրս մղել կավե անոթները. նմանապես մետաղի գեղարվեստական



արտադրությունն ասպարեզից դուրս է մղում կավագործական գեղարվեստը։ Այստեղ մենք տեսնում ենք դիալեկտիկ զարգացման հետևանքով առաջացող կուլտուրական փոփոխությունը։ Ինչպես որ կերամիկան հեղաշրջում առաջացրեց պալեոլիթյան մարդու կենցաղում՝ նրա քարից, փայտից, կաշուց, դդումից պատրաստվող անոթների փոխարեն կավե ամաններ մատակարարելով, այնպես էլ մետաղագործությունը զարգացած մետաղի ինդուստրիայի դարերում պղնձե ամաններով սկսեց փոխարինել կավե անոթներին թե տնտեսական և թե կրոնա-ծիսական կյանքում։ Թե ինչ աստիճանի էր տարածված պղնձե ու բրոնզե անոթների գործածությունը ժողովրդական կենցաղում, այդ երևում է պատերազմական ավարառումներից, որոնց մասին հիշատակում են խալդական ու ասորեստանյան արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի նկատմամբ։

Հայկական լեռնաշխարհի կերամիկան, ինչպես արդեն ասացինք, քանակորեն բավականաչափ հարուստ է ներկայացված և իր բազմազան ձևերով ու պեղածները զանազան թանգարաններում ցրված լինելու հետևանքով դժվարանում է նրանց քիչ թե շատ լրիվ ու ճիշտ դասակարգումը։ Այնուամենայնիվ փորձում ենք այստեղ այդ դասակարգումն անել նախ՝ ըստ տեխնիկայի և ապա՝ ըստ գործածական տիպերի, որոնք կապված են նրանց տնտեսական կիրառման հետ։ Այդ տեսակետից նախահայկական կերամիկան կարելի է բաժանել երեք դասախմբի, որոնք մոտավոր կերպով պատկերացնում են այդ արտադրական ճյուղի զարգացման ուղիները, մինչև վաղագույն մետաղի դարերի կուլտուրայի ծաղկումը, որտեղ կերամիկան շարունակում է պահպանել շատ չնչին փոփոխություններով, իր նախկին ավանդները։

## II

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՒՄԲ

Առաջին դասախմբերին ենք վերագրում կերամիկայի ամենահին ձևը, որ դեռևս իր մեջ կրում է նեոլիթյան կավագործության շատ անպաճույճ ոչ միայն հնարքերն ու մնացորդ գծերը, այլև ամբողջովին արխայիկ ճական գծերը։ Առաջին նվագ այստեղ պետք է նշել այն կավե ամանները, որոնք շինված են ձեռքի վրա, առանց բրուտական դրգի. ապա սրանց հետ միասին հանդիպում են նաև դրգի վրա պատրաստած անոթները։

Կավեղենների ձեռագործ ծեփումը նեոլիթյան ինդուստրիայի սկզբնական շրջանում լինելով միակ տեխնիկական եղանակը, նեոլիթի հետնագույն շրջանում, դրգի գյուտով՝ սկսում է տեղի տալ բրուտական դրգի միջոցով պատրաստման եղանակին, պահպանելով այնուամենայնիվ իր նախկին առաջին ձևերը: Կավե անոթների պատրաստման ձեռագործ եղանակը, ինչպես վկայում են բազմաթիվ պեղածոները, պահպանվել է որպես մնացորդ տակավին բրոնզե դարերում, առավելապես նրա առաջին կեսում, թեև ոչ իբրև տիրապետող տեխնիկական եղանակ: Բրուտական դուրգն այս ժամանակաշրջանում դեռևս նախնական բնույթ էր կրում, միմիայն դյուրություն ընձեռելով շրջելու ամանը, չունենալով տակավին կենտրոնաձիգ ուժի օգտագործման հատկությունը: Բրուտական դրգի գործածությունը չի կարող լինել առանձին բնատնտեսություններում, որոնք սովորաբար իրենք էին պատրաստում սեփական տնտեսության համար անհրաժեշտ կավե ամանները, այլ նա հանդես է գալիս այն ժամանակ, երբ կավագործությունն ստանում է արհեստի բնույթ և դրանով զբաղվում են մասնագիտացած բրուտ-արհեստավորները:

Այդ երկու եղանակներով կերտված կավե անոթներն արտաքուստ տարբերվում են նրանով, որ ձեռագործ արտադրությունները համեմատաբար փոքր են, ավելի կոպիտ ու վատ ողորկված, կողերի անհավասար հաստությամբ: Իսկ բրուտական դուրգը հնարավոր էր դարձնում ավելի մեծ ու կանոնավոր ծավալ տալ ամաններին, ավելի հավասար հաստություն տալ կողերին և դյուրին կերպով լավորակ ողորկման ենթարկել[71]:

Կավահողը սովորաբար լինում էր կոպիտ, լավ մաղած, ալրացած չէր լինում, մեջը խառն էին լինում ավազ ու մանրիկ խիճեր, ինչպես և օրգանական նյութեր: Հետևաբար կավեղենն ավելի փխրուն էր լինում, իսկ մակերեսը դժվար էր ենթարկվում հարթ ողորկման:

Թրծումը կատարվում էր կրակի վրա կամ կրակի մեջ, բայց ոչ հնոցում, ուստի կավեղենը թրծված էր լինում միայն արտաքին ու ներքին մակերեսով, իսկ կավե միջուկը մնում էր բնական գույնով: Այս պարագայում, երբ ջերմությունը լինում էր 400—800° և ոչ ավելի, ամաններն ստանում էին սև գույն, այսինքն ածխանում էին: Երբ սովորեցին փուքսի միջոցով կրակի ջերմությունը բարձրացնել և երբ, մանավանդ, հնարեցին փակ հնոցը, թրծումն ավելի կատարելագործվեց: Միայն 960 աստիճա-



նի ջերմությունից է սկսվում կավի կատարյալ կիզումը, երբ նրա մեջ պարունակվող օրգանական ու ածխային մասերը միանգամայն այրվում են, կավը ենթարկվում է թթվեցման, և անօրգանական մասերը հալվելով՝ ամանին տալիս են կարմրավուն կամ դեղնավուն գույն: Այս դեպքում թրծած ամանի գույնը միատարր, կախված է նրա կավի բաղադրյալ հանքային տարրերից:

Կերամիկայի ամենահին տիպն ու տիրապետողը հանդիսանում են գնդաձև ամանները՝ կլոր ու հաստ փորով, վերջանում է առանց վզի լայն բերանով: Այդ բերանը երբեմն շրջապատված է լինում նեղլիկ եզրով, իսկ տակը մեծ. մասամբ կլոր է լինում, խիստ սակավ դեպքերում՝ փոքր ինչ տափակ: Այսպիսի կլոր հատակով ամանները երբեմն ունենում են 3—4 ոտք, որով նրանք ստանում են կովի ստինքի ձև—մի բնորոշ սոցիալ-տնտեսական երևույթ, որ վկայում է կաթնատնտեսության զարգացման փաստը տվյալ ժողովրդի մեջ: Սովորաբար այս գնդաձև ամանները զուրկ են կոթից, բայց հետագայում, իբրև կոթ, բռնելու կամ ավելի շուտ կախելու համար, ծեփել են ունկեր, երբեմն ծակով. այդ ունկերը լինում են 1-ական կամ 2-ական, երբեմն էլ 4-ական՝ բերանի եզերքին կամ փորի վրա:

Գնդաձև ամանները, հետագայում զարգանալով, սկսում են վերջանալ նվազ կամ երկար բարձրության լայն բերաններով, որոնք անպայման ունենում են տափակ կամ մի փոքր դեպի վայր կորացած եզրեր: Այս տիպի վզավոր բերաններով ամանները արդեն ունեն կանթեր (կոթեր), որոնք ձգվում են բերանի եզրից մինչև ամանի փորը կամ, եթե վիզը երկար է, մինչև փորի վերին մասը՝ վզի հիմքում: Կանթերը լինում են 1-ական կամ 2-ական. վերջին դեպքում ամանն ստանում է ամֆորայի ձև: Ընդհանրապես այս տիպի անոթներն ավելի բազմաթիվ են ու համատարած:

Գնդաձև տիպի ամանների այլափոխումն են հանդիսանում, գործնական նպատակներով, կիսագնդաձև ամանները, մեր ժողովրդական կենցաղում հայտնի ճաշանները, որոնք երբեմն տափականալով ստանում են սկահակի ձև, նույն տիպին են պատկանում գավաթներն ու կաթսայանման անոթները: Թասանների բերանները երբեմն ունեն կորաթեք եզրեր, երբեմն էլ 2-ական կամ 4-ական ունկեր:

Սովորաբար ընդունված է գնդաձև անոթները համարել կե-

րամիկայի ամենահին ձևը: Նա համարվում է դոլմենային (մեգալիթյան) կերամիկա, որովհետև Եվրոպայի հնագիտական պեղածոների մեջ նա գտնվել է դոլմեններում: Հայկական լեռնաշխարհում նույնպես այդ ձևի ամանները դիտավորապես հայտաբերվել են քարարկղային դամբաններում, որոնք իսկապես նույն դոլմեններն են (1, 153—157): Ներկայումս ամերիկական հնդիկ մի քանի ցեղերի մեջ, որոնք կանգնած են կուլտուրական ցած աստիճանի վրա, կավե ամանները պատրաստում են գնդաձև կամ կիսագնդաձև (RL, XIII, 223):

Կերամիկայի գնդաձև ոճը ավելի է առել նշանակություն պարբերում, երբ կերամիկան իր ծագման արշալույսն էր ապրում: Նախնական բրուտն այս դեպքում ընդօրինակում էր այն ամանները, որոնք հնագույն կենցաղում գործ էին ածվում նախքան կավագործության գյուտը: Այդ ամանները, որոնք գործ էին ածվում հատկապես հեղուկների համար և շինված էին բույսային նյութերից, չեն հասել մեզ. պալեոլիթյան կենցաղում այդ ամանները լինում էին ծովային խեցիներից, փայտից, կաշուց, դդումի տեսակին պատկանող պտուղների կեղևներից, երբեմն նույնիսկ մարդկային գանգից: Դեռ շատ ժամանակ չի անցել, երբ մեր կենցաղում ավորական(?) ամաններ էին համարվում կաշուց պատրաստած տիկերը՝ գինի, ձեթ, յուղ և այլ հեղուկներ պահելու համար, և մանավանդ հասարակ դդումը, որ իր դեղինի(?) ու կարծր կեղևի շնորհիվ շատ հարմար էր ամաններ պատրաստելու համար: Սովորական կլոր դդումի վերին մասը կտրելով և միջուկը հանելով, ստացվում էր գնդաձև աման, իսկ եթե կտրում էին միջնեղից, տրամագծի ուղղությամբ, ստացվում էին կիսագնդիկներ. երկարավուն դդումը տալիս էր վզավոր ամանի կաղապար, որից պատրաստում էին շշի ձև ունեցող ամաններ: Անգամ դդումից պատրաստված այն հնագույն անոթները հանդիսացան այն նախակաղապարները, որոնց օրինակով նախնական կավե ամանները ստացան գնդի կամ ռումբի ձևեր (CSA, 41—45)[72]:

Այս կարգի կավե անոթները ծածկված են լինում սև փայլանդերկով[73] կամ թողել են աններկ և, թրծելու ջերմաստիճանի ու կավի հանքային բաղադրության համեմատ, ստանում էին կարմրավունից սկսած մինչև մոխրագույն ու դարչնագույն երանգավորումներ: Արհեստական սև փայլանդերկը պատրաստել են մանգանային թթվուտից, որը կերամիկ փոշիացնելով՝ լուծել են ջրի մեջ և ապա այդ լուծույթով ամանների երեսը ծածկել հաստ շերտով, նախքան թրծելը. փայլանդերկը չորանալուց հետո ամանը ենթարկել են կրակի ազդեցությանը, որից հետո այդ ներկին փայլ է տրվել հղկիչ քարով կամ ոսկրով — ամբողջովին կամ այն տեղերում, ուր, զարդանկարի համեմատ, որոշ վանդակներ ենթարկվելու էին փայլի (JMMS, I, 146—147):

Այս շրջանի կերամիկան զարդարված է նկարներով, որոնք բացառապես երկրաչափական օրնամենտացիա են ներկայացնում, բաղկացած կետերի, գծերի, եռանկյունների, ռոմբերի և կորաձև, օձաձև, պարուրաձև ժապավենների կոմբինացիաներից: Այդ զարդանկարներն իրենց էությամբ հետնորդներ(?) են տակավին նեոլիթյան օրնամենտացիայից: Սրանց մեջ նկատում ենք նկարներ, սկսած դրոշմելու ամենապրիմիտիվ եղանակից, այն է՝ մատներով, եղունգով փոսիկներ, կետեր ու գծեր քաշելուց մինչև սրածայր գործիքով (փայտե, ոսկրե, վանակատե, բրոնզե) նկարելու եղանակը: Փոսիկներն ու ակոսաձև գծերը շատ անգամ լցված են սպիտակ ներկով[74a]: Զանազան զարդանկարների չափազանց բազմազանությունը, որոնք հար և նման են եվրոպական, մանավանդ Դանուբի և հյուսիսային Բալկանյան թերակղզու հնագույն կերամիկայի օրնամենտացիային, այնուամենայնիվ կարելի է նրանք բաժանել ըստ հետևյալ հիմնական և բնորոշ հատկանիշների.

1. Գծային օրնամենտը բաղկացած է մի քանի զուգահեռ ուղիղ գծերից, որոնք ակոսաձև գոտևորում են ամանների փորը կամ բերանների տակը. վերջին դեպքում փորի ստորին մասը մնում է առանց զարդանկարի: Այս գծերը շատ անգամ լինում են ալիքավոր, զիգզագային (բեկբեկ), պարուրաձև, որոնք հաջորդական կարգով իրար տակ են շարվում զուգահեռաբար: Երբեմն այս զուգահեռ գծերին բոլորակի շրջանով հաջորդում է, ստորին կամ վերին գծով. կետերի գոտի, բայց ավելի հաճախ հաջորդում են մի ամբողջ շարան եռանկյունիներ, իրենց գագաթներով դեպի վար, եթե այդ շարանը հաջորդում է ստորին զուգահեռ գծին, կամ գագաթներով դեպի վեր, եթե շարանը բոլորում է վերին զուգահեռ գծի ուղղությամբ: Ուղղահայաց գծեր խիստ հազվադեպ են լինում:

2. Երիզային (шнуровая орнаментация, Schnurornament)— այս օրնամենտը ցուցադրում(?) է այն նկարները, որոնք նեոլիթյան

շրջանում կերամիկայի վրա պատկերվում էին ոլորած բարակ պարանի կամ գայթանի միջոցով, որով սովորաբար կախ էին անում անոթները: Մեասադն գտնվում այդ օրնամենտն արդեն արհեստականորեն դուրս էր բերվում փոքր ինչ բթածայր գործիքով և ոլորաձև հյուսվածքի նմանություն էր ստանում և կամ ավելի հաճախ հատ շարքերով տալիս էին ոլորուն երիզի ձև: Այս զարդանկարներն ամենից շատ էին տարածված և հանդես էին գալիս նույն օրնամենտային կոնցեպցիաներով, ինչպես և գծային զարդանկարները, բացառապես երկրաչափական ոճավորությամբ: Այս զարդանկարները ոչ միայն հորիզոնական բոլորաձև գոտիներ կամ զուգահեռ շարաններ էին ներկայացնում, այլև շատ անգամ ուղղահայաց կարթած գծերի փնջիկներ, մանավանդ եռանկյուններ:

3. Ժապավենային (Bandkeramik) օրնամենտը իսկապես մի կոմբինացիա է գծային ու երիզային օրնամենտների, որոնք կազմում են սովորաբար անոթի շուրթը, գլխավորապես փորի վերին մասում, բոլորող ժապավենի վերին ու ստորին եզրերը, իսկ այդ եզրերի միջև պարփակված տարածության մեջ զետեղում էին զանազան ձևի զարդանկարներ, բացառապես երկրաչափական տեսակներ: Այդ զուգահեռ եզրերի միջև մենք գտնում ենք ռոմբեր, եռանկյուններ, ուղղանկյուններ, ցանցեր, եղևնափշատերևներ և այլն:

4. Ուռուցիկ օրնամենտը բաղկացած է կավից շինված մանր գնդիկներից, որոնք ամանը թրծելուց առաջ ծեփվում էին փորին կամ բերանի ստորին հիմքում օղակաձև շարանով կամ հատուկենտ կերպով: Երբեմն էլ այդ ուռուցիկ զարդանկարը դուրս էր բերվում անոթի փորի վրա, տալով նրան կանացի ստինքի ձև, որի մեջտեղը ցցված էր լինում պտուկանման գնդիկ:

Այս չորս տեսակ բնորոշ օրնամենտները, որոնք գերակշռում են Հայկական լեռնաշխարհի կերամիկայում, հանդես են գալիս ամանների վրա իբրև առանձնակի կոնցեպցիաներ, կամ ամաններին տալով տեղական կենցաղային պայմաններին համապատասխան և կուլտուրական զարգացման աստիճաններից բղխող ինքնատիպ յուրահատուկ բնույթ: Սակայն երբեմն այդ առանձին օրնամենտային տեսակները կապակցվում են իրար հետ և հանդես են գալիս ամանների վրա միացյալ կոմբինացիաներով. այդ առանձնապես նկատելի է ժապավենային զարդանկարների մեջ:



III

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՒՄԲ

Այս երկրորդ շրջանի կերամիկան, համեմատած առաջինի հետ, հասել է ավելի բարձր զարգացման: Կավի բաղադրությունն ավելի նուրբ է, մանր ալրացած է ու լավ մաղված. բացակայում են ավազի, խճի և օրգանական տարրերի մնացորդները: Անոթները կերտվում են կենտրոնաձիգ ուժին հարմարեցված դրգի վրա, որով ամանների կողերն ավելի բարակ են, խնամքով ողորկված և պահպանում են համաչափ հարթություն: Թրծվածքն էլ բարձր կատարելագործման է հասնում, շնորհիվ փակ հնոցի կիրառման:

Անոթների արտաքին ձևավորումը դառնում է բազմատեսակ, նախկին գնդաձև հիմնական տիպը հետզհետե դառնում է ձվածիր կամ տանձի ձևի է փոխվում: Ամանն ստանում է ավելի բարձրացրած դիրք, մանավանդ որ նախկին լայն բերանի ու կարճ վզի փոխարեն զարգանում է բարձրավիզ ու նեղ բերանների կաղապարը: Այս տիպի ամանները մեծ մասամբ օժտված են կոթով, որ սկսվում է վզի բերանից ու ձգվում է մինչև փորի վերին մասը: Կոթի վերին ու ստորին ծայրերում շատ անգամ լինում են կոճակաձև ուռուցքներ:

Կատարելագործված դրգի ու ճարտարվեստի շնորհիվ՝ փոխվում են նաև մյուս տեսակի անոթները. սկահակներն ստանում են ափսեների, խոնչաների, երկարակոթ թասերի և այլ կաղապարներ: Երևան են գալիս նաև նոր ձևի ամաններ, ինչպես՝ քափգիրներ, գլանաձև շուրպաններ, թեյնիկանման ու ծորակավոր ամաններ և այլն, որոնք համապատասխանում են ժողովրդական կենցաղի ավելի զարգացած պահանջներին:

Անոթները, որոնցից շատերը շարունակում են առաջվա պես պահպանել սև փայլաններկը, ծածկված են լինում նաև զանազան երանգի կարմրագույն ջնարակով (ֆիրնիս):

Առաջին շրջանի կերամիկայի, նախորդ գլխում նկարագրած, բոլոր տեսակի օրնամենտները շարունակում են ծաղկել, բայց ավելի ճաշակավոր ոճով և նուրբ կերտվածքով, որտեղ, բացի երկրաչափական ուղիղ գծերից, երևում են նաև կլորագծերով զարդանկարներ: Սակայն այստեղ այդ զարդանկարներին ավելանում են կենդանական նկարներ, որոնք ստանում են ոճավորված օրնամենտացիայի բնույթ: Ուշագրավ է նաև այն երևույթը, որ եր-

բեմն կավե ամանների հատակը ներքուստ զարդարված է լինում թափանցիկ օբսիդիանի կտորներով, որոնք, անշուշտ, կավի մեջ ամրացվում էին թրծումից առաջ: Այդպիսի անոթներ, որոնք գերման հնագիտության մեջ կոչվում են Fenstergefässe — «պատուհանային ամաններ», գտնվել են Հայաստանի մի շարք հնավայրերում՝ Թեղկիկ-Լազերում (Բայերն), Շեյթան-դաղի, Մուսի-Լերիի (Ժ. Մորգան) և այլ դամբաններում: Նույնանման կավե պատուհանային ամաններ հայտաբերվել են Վրաստանի Գլավիս-մանի հնավայրում, Բալտայում և Կոլխասի մի քանի դամբաններում. Նմանապես Փոքր-Ասիայում՝ հին Տրոյայի պեղումներում, ինչպես և Եվրոպայի հյուսիս-արևելյան մասերում: Բնորոշ է, որ Եվրոպայի «պատուհանային անոթները» ծագում են մոտավորապես I—VI դարերից (մեր թվականության), իսկ կովկասյան անոթները պատկանում են 2000—500 թվականներին (մեր թվականությունից առաջ): «Պատուհանային անոթների» նշանակության մասին տիրում են տարբեր կարծիքներ, որոնց մեջ ամենահավանականն այն է, որ նրանք ծառայել են կրոնապաշտամունքային նպատակի, թեև անհավանական չէ նաև այն ենթադրությունը, որ այդ «պատուհանների» միջով հնարավոր էր տեսնել, թե ինչ հեղուկ է պարունակում կախված ամանը[14]:

## IV

### ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՒՄԲ

Այս երրորդ շրջանում շարունակվում են գոյություն ունենալ կերամիկայի նախորդ երկու շրջանների բոլոր հատկանիշները, սակայն ավելի կատարելագործված արվեստով և նոր ձևավորումներով: Կավագործական արտադրությունների մեջ երևան են գալիս ամաններ՝ նմանողությամբ զանազան կենդանիների, կամ ամաններ, որոնց կոթերին տրված է կենդանական բնույթ, ինչպես Մուսի-Լերիի (Լոռի) մի անոթի կոթը ներկայացնում է եղջերուի գլուխ:

Ամանները զարդարվում են ոչ միայն սև փայլաներկով կամ կարմիր ջնարակով, այլև կարմրափայլ գլազուրով: Լեման-Հաուպտի ու Վ. Բելքի պեղումներով Թոփրակ-կալեից հանված հատակափոր (25 սմ. լայնությամբ և 23 սմ. բարձրությամբ) մի անոթ, որ նկարագրել է, վերին աստիճանի հարթ ու փայլուն կարմիր գույնով է ծածկված: Սկզբում ենթադրվում էր, որ դա



սովորական ջնարակ է, բայց մանրազնին քննությունը ցույց տվեց, որ այդ միանգամայն այլ տեսակ արվեստի արդյունք է: Այդ կարմիր շերտը դանակով ամբողջովին դյուրին բաժանվում էր իր կավից: Այս շերտի քիմիական անալիզից ու միկրոսկոպային հետազոտությունից պարզվել է, որ այդ գունավոր կեղևը ոչ թե մի առանձնահատուկ ներկ է կամ ջնարակի որևէ տեսակ, այլ բաղկացած է նույն կավային նյութից, ինչից շինված է և ամանը: Ենթադրվում է, որ հիշյալ գլազուրն ստացվել է հետևյալ եղանակով:

Միևնույն կավից, որ հարուստ է եղել երկաթյա բաղադրությամբ, պատրաստվել է թե վերոհիշյալ ամանը և թե նրա գլազուրը: Սակայն վերջինը, նախքան ամանի վրա ծածկելը՝ մի անգամ արդեն թրծվել է ուժեղ կրակի վրա և ապա մանր աղացվել ու փոշիացվել: Այնուհետև այդ փոշին կանոնավոր ու հարթ շերտով ծածկել են ամանին ու խնամքով հղկել. այդ հղկման հետքերը երևում են միկրոսկոպի տակ: Ապա նորից թրծել են ուժեղ ջերմացած հնոցում, որից այդ շերտը, հալվելով, ստացել է ապակենման փայլ, սակայն չի միաձուլվել ամանի կավային զանգվածի հետ, որի թրծվածքը, համեմատած այդ փայլաներկ կեղևի հետ, ավելի թույլ է: Այդ կավային խմորը, որ հարուստ է երկաթով և որից ամանի հետ միասին պատրաստվել է նաև գլազուրը, չի պարունակել ոչ մի ալկալին կալիում կամ նատր, որ սովորաբար ջնարակի բաղկացուցիչ տարրն է (LHM, 118—119):

Այս երրորդ շրջանում օրնամենտացիան՝ թե երկրաչափականը և թե կենդանական ոճայինը, շարունակում է նույնությամբ պահպանվել, բայց ավելի բազմազան ու բարդ նկարներով:

Այս զարդանկարների մեջ երևան է գալիս կանճիյուրային օրնամենտացիան, այն է՝ ուռուցիկ ուղիղ գծեր, ուղղահայաց կամ թեք ուղղությամբ, որոնց միջև ընկած են կիսաբոլոր ակոսներ: Նմանապես երևում են սեպաձև նաշխեր, որ, անշուշտ, վերաբերում են ասորական կամ, ավելի հավանորեն, ուրարտական ծագման:

Այս զարդանկարներին պետք է միացնել զանազան կենդանիների վերին աստիճանի հետաքրքիր ձևափոխված ֆիգուրները: Սրանք կերտվել են նույն կավից, որից կերտված են ամանները, և նախքան թրծելը կպցրել են անոթի բերանը եզերող շրթին կամ բերանի տակ՝ կողի վերին մասում: Ֆիգուրները կերտված են զարմանալի նրբությամբ: Այդօրինակ անոթներ հայտաբերվել

են Վ. Բեյքի ու Լեման-Հաուպտի պեղումներով՝ Թոփրակ-կալեում, նաև Երվ. Լալայանի պեղումով՝ Նոր-Բայազետի շրջանում։

Թոփրակ-կալեի ֆիգուրը ներկայացնում է ինչ-որ չորքոտանի կենդանի, առանց եղջյուրների, բայց երևույթին մեծ հորթ, որ երկարությամբ ձգվել է կավե կարասի շրթի վրա, ներքին ու արտաքին կողմից. իսկ ինչ-որ մի գազան կախված է կարասի բերանի արտաքին կողմից և առաջի երկու թաթերը դրել է այդ հորթի վրա ու հոշոտում է նրան։

Նոր-Բայազետի սափորը դեղնավուն-գորշ կավից է, գեղեցիկ մի գործ. սրա բերանի շրթի տակը ներկայացված է մի խումբ ոչխարներ և մի մարդու ֆիգուրներ չափազանց նուրբ կերտվածքով և բնականին խիստ մոտիկ ոճավորումներով։

Վերջապես կերամիկայի այս շրջանին են պատկանում գունավոր ներկերով արձանագրած նկարներ՝ կենդանական ու երկրաչափական զարդերով։ Այդպիսի կավագործական օրինակներ հայտաբերվել են Կարմիր-վանքի (Նախիջևան քաղաքի մոտերը) և առհասարակ Թոփրակ-կալեի ու Երևանի գավառի մի շարք վայրերի պեղումներից։

Թոփրակ-կալեի ամանը դեղնավուն-մոխրագույն կավից պատրաստված մի սափոր է (26,5 սմ. բարձր. և 22,75 սմ. լայն.), որի փորը բոլորող երկու ժապավենների միջև դուրս են բերված քայլող թռչուններ, յուրաքանչյուրը 5 սմ. երկարությամբ։ Թռչունները նկարված են մուգ կարմրավուն-շագանակագույն թանձր ներկով և դուրս են փայլում։

Առանձնապես ուշագրավ է Կարմիր-վանքի կերամիկան իր բազմագույն զարդանկարներով, որ Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի կավագործության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։ Այդ ամանները, որոնց մեծ մասը ձեռագործ արտադրություններ են, ճաշակավոր ձևավորում ունեն և շինված են կարմրավուն, լավ տաշված ու մաղված կավից. նրանք ծածկված են մեծ մասամբ կարմիր ներկով կամ պահպանել են բնական դեղնավուն-մոխրագույն տեսքը, որի վրա նկարված են օրնամենտներ՝ սև կամ դարչնագույն, իսկ երբեմն ֆոնը բնականից դեղնավուն է, նաև կարմրագույն ներկերով։ Ամենից հաճախ հանդիպող զարդանկարները ցանցավոր եռանկյունիներ, քառանկյունիներ ու ռոմբեր են. պատահում են նաև ցանցավոր շերտիկներ ու անկյուններ։ Նկարները կատարված են չափազանց համաչափ ու անաղարտ։



Բացի երկրաչափական նկարներից՝ Կարմիր-վանքի կերամիկայի վրա հանդիպում են նաև կենդանիների ու մարդկանց գունանկարներ. նույնիսկ կա էրոտիկ բնույթի մի պատկեր։ Կենդանիների նկարների մեջ հաճախակի են թռչունները և օձեր։

Կարմիր-վանքի գունազարդ կերամիկան որոշ չափով հար և նման է Անատոլի (Թուրքեստան, Աշխաբադ) և Շոշի (Սուզա՝ Իրանի հարավում, հին պատմական Էլամը) գունանկարչ կերամիկային, որի նմանները գտնվել են հին Եգիպտոսի, Պաղեստինի, Թեսալիայի, Սիցիլիայի, Ուկրաինայի և այլ բազմաթիվ հնավայրերում։ Հայաստանի մի շարք վայրերում էլ հայտաբերվել են գունազարդ կավե ամաններ, որոնց մեծ մասը կոտրված բեկորներ են. այս հանգամանքը վկայում է, որ այդ ամանների մասերը ծագում են բնակատեղերից և ոչ թե դամբաններից։ Հայաստանում գունանկարչ կերամիկայի նմուշներ հանդիպում են Թազաքենդ, Մուխաննաթ-թափա, Ոսկեվազ (Ղըզըլ-Թամալ), Աղավնատուն, Նոր-Արմավիր, Կարմիր-բլուր, Ախլաթյան (Սիսիան) և այլ վայրերում։ Այս գունազարդ կերամիկան ներկայացնում է յուրահատուկ մի կուլտուրա, որը պատմական տեսակետից մեծ նշանակություն ունի, սակայն այդ կերամիկայի ծագումը դեռևս բավարար չափով պարզված ու լուսաբանված չէ։ Համենայն դեպս տիրապետող կարծիքն այն է, որ այդ կերամիկան մեծ հնություն ունի։ Ակադ. Մեշչանինովը ընդհանուր առմամբ գտնում է, որ Կարմիր-վանքի գունանկարչ կերամիկան շատ դարերով նախորդել է ուրարտական սեպաձև արձանագրություններին[76]։

## V

## ԱՐԴԻ ԵՎ ՀՆԱԴԱՐՅԱՆ ԱՄԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

Կավե ամանները մեծ նշանակություն են ունեցել հնագույն մարդու կենցաղում, ծառայելով նրա տնտեսական ու կրոնա-պաշտամունքային նպատակներին։ Ըստ այդ նպատակների կավե ամաններն ունեցել են համապատասխան ձևեր։ Սկսած կրակի վրա կերակուր եփելու ամաններից, մանավանդ նեոլիթի դարերում, երբ դեռևս չկար մետաղի գործածությունը, մինչև կանացի օծանելիքներ պարունակող փոքրիկ անոթները,

կերամիկային արտադրանքներն ստանում են մնայուն տիպեր, որոնք չնչին տարբերակներով կրկնվում են Հայկական լեռնաշխարհի բոլոր գավառներում, թեև զանազան անունների տակ։ Կավեղեն ամանների գործածության ահագին դերը համառ պահպանողությամբ մինչև վերջին ժամանակները մնացել է հայ գյուղացիության, ինչպես և Կովկասի ու Առաջավոր Ասիայի ժողովրդական կենցաղում։ Բավական է մի առ մի թվել կավեղեն ամանների բազմատեսակ անունները, որոնք գոյություն ունեն ներկայումս հայ ժողովրդական կյանքում, որպեսզի համոզվենք, թե ինչպես շեշտակի են բնորոշվում տարբեր նպատակների ծառայող կավե անոթները։

Պեղումների հետևանքով լույս աշխարհ հանված կավե ամանները կարելի է բաժանել երեք հիմնական տիպերի, այն է՝ թակույկների կամ սափորների (amphore), սկահակների (koupe) և գավաթների (cruche), որոնք տակավին այսօր էլ գործածական են մեր ժողովրդական կենցաղում։ Այդ երեք տիպերից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվում է բազմաթիվ տեսակների։

1. Թակույկների տիպին են պատկանում հետևյալ տեսակները։

Կճուճ — սրա տարբեր անունններն են՝ օշնակ, ծափ, բղուղ, բղիկ, պուլիկ — նայելով թե ինչ մեծության են։ Ամենամեծ տեսակը հայտնի է ծափ կամ բղուղ անունով։ Այս ամանններն ունենն կարճ վիզ ու լայն բերան, որը երբեմն բոլորված է ատամնավոր կամ երիզավոր զարդանկար ունեցող եզրով։ Վզից ներքև փորն աստիճանաբար լայնանում է մինչև մեջտեղը և ապա նորից նույն չափով, կամ ավելի քիչ, նեղանում է, վերջանալով տափակ կամ կլոր հատակով։ Վերջին դեպքում նա գործածվում է օջախի վրա կամ թոնրի մեջ կախելու համար։ Այս ձևի ամանների մեծ մասը չունենն ոչ ունկ, ոչ էլ կանթ։ Կան կճուճներ, որոնք ունենն 2-ական ծակ կանթեր՝ ուղղակի բերանների վրա՝ դեպի վեր, կամ բերաններից ցած ձգվում են 2—3—4 ունկեր։

Կճուճների մեծ տեսակները, մանավանդ բղուղներն ու ծափերը, ծառայում են պաշարեղեն (թթուներ, յուղ, պանիր, դավուրմա և այլն) պահելու համար։ Պետք է ասել, որ ընդհանրապես մեծ կճուճներ չեն լինում դամբաններում. տեղի սղության հետևանքով ու կրոնա-պաշտամունքային նկատառումներով մեռյալների հետ սովորաբար թաղում էին այդօրինակ փոքր կավե անոթներ։



Դավեր կամ կուլաներ. — Սրանք ավելի երկար վզով են ու նեղ բերանով. փորն էլ ավելի նվազ ուռուցիկ, որ ընդհանուր առմամբ լինում է ձվաձև։ Գործածվում է գինու, ջրի, ընդհանրապես ըմպելի հեղուկների համար։ Այս դավերը, որոնք շատ երկար ու նեղ վիզ ունեն, մեծ մասամբ առանց կանթի են լինում, քանի որ երկար վիզն արդեն հարմարություն է տալիս հենց այդտեղից՝ բռնելու։ Սակայն շատ անգամ լինում են և կանթով։ Պատահում են նաև լայնաբերան ու լայնավիզ դավեր, որոնք որոշ տեղերում մեր ժողովրդի մեջ հայտնի են դարիկ անունով։

Դա կավե կամ կուլայի մի այլ տեսակը, որ կոչվում է կուլկուլակ կամ պուլպուլակ։ Սա երկու բերան ունի, որոնցից մեկը լինում է կարճ, ուղղաձիգ ու համեմատաբար լայն, իսկ մյուսը՝ բարակ և եղջյուրի պես շեղակի վեր ցցված ծորակ է։ Այս ձևի անոթների մեջ ջուր են լցնում, երբեմն էլ գինի, որ խմում են կամ դուրս ածում շեղակի ծորակով։ Կուլկուլակ և պուլպուլակ անունները արդեն իրենց ձայնարկական նմանողությամբ օնոմատոպեիկ ասում են տալիս այդ անոթի գործածական նշանակությունը։ Կուլկուլակների շարքին են պատկանում նաև Դարմիր-վանքի պեղումներից հայտաբերված թեյնիկանման ամանները։

2. Սկահակների տիպին են պատկանում տեղական բարբառով այսպես կոչված քասաները։ Սրանք կիսագունդ տիպի անոթներ են՝ տափակ տակով։ Քասաները, որոնց տրամագիծը սովորաբար լինում է 18—35 սմ., իսկ խորությունը՝ 5—10 սմ., տարբերվում են միայն իրենց մեծությամբ։ Սրանց բերանի շուրջը երբեմն լինում են զարդանկարներ կամ գծեր։ Սկահակները սակավ դեպքերում լինում են նաև կոթավոր (կանթով) կամ ծակ ունկով։

Սկահակի մի այլ տեսակը, որի տակն ավելի նեղ է, ուրեմն և կողերն ավելի թեք, հայտնի են քրեղան կամ չանաղ անունով. այս ամանը գործածվում է կերակուր ուտելիս։

Սկահակների տիպային շարքին են պատկանում այսպես կոչված քափքիրները և քամիչները, որոնք, ըստ էության նույն քասաներն են, բայց ավելի խորունկ և ծակոտկեն հատակով՝ հեղուկ քամելու համար. այդ ծակոտիները անկասկած, շինվել են թրծելուց առաջ։

Սկահակի մի այլ ձևը, միանգամայն տափակ և ներքը մի փոքր զոգավոր, որ ծառայում է իբրև մատուցարան, կոչվում է խոնչա, իսկ Շիրակի հայերի մեջ՝ քաբսանի: Նոր-Բայազետի պեղումներով հայտաբերված խոնչան իրենից ներկայացնում է 3 ոտների վրա հենված մի տաշտակ, որի տրամագիծն է 16 սմ., ոտների բարձրությունը՝ 2 սմ., շրջանակի եզրը ծածկված է խաչաձև օրնամենտով: Այդ տեսակ տաշտակ-խոնչաներ գտնված են Թեփրակ-կալեի պեղումներից, սակայն առանց ոտների: Դրանցից մեծի տրամագիծը հասնում է 25 սմ., բարձրությունը՝ մոտ 6,25 սմ., իսկ մյուսը 16,75 սմ. տրամագիծ ունի և մոտ 5 սմ. բարձրություն. դրանց շուրթերը դեպի դուրս են կորացած (LHM, 117):

Սկահակի տիպի պետք է համարել այն հետաքրքիր ամանը, որ գտնվել է Շամբոբի շրջանում (Գանձակի գավառ), նաև Ցոլոլլու Թափայում (Նուխու գավ.): Դա մի խոր ափսե է, հենված գլանաձև, լայնեզր շուրթով վերջավորվող պատվանդանի վրա և նմանվում է այժմյան այսպես կոչված մրգի «վազա»-ին. այդ սկահակի եզրը շրջապատված է անկյունավոր զարդանկարով և երկու կողմից մեկական ծակ ունի:

Վերջապես սկահակի տիպին կարելի է վերագրել քասաների ավելի մեծ ու խոր տեսակը, որ նման է կաթսայի և գործածվում է կերակուր եփելու համար:

Սկահակի տիպին թերևս կարելի է մոտեցնել այն կավե անոթը, որ հավանորեն գործածվել է որպես գդալ:

3. Գավաթ տիպի կավե ամանները բռնում են սկահակների ու թակույկների միջին տեղը: Դրանք, մեր ներկա ասումով, բաժակներ են կամ խորունկ թասեր, որոնք գործ են ածվել և այժմ էլ գործ են ածվում ջուր, գինի և այլ հեղուկներ ըմպելու կամ դուրս քաշելու համար: Դրանց մեջ կարելի է տարբերել երկու հիմնական տեսակներ. մեկը, որ համեմատաբար ցածր ու տափակ է, որոշ չափով մոտենում է սկահակին և իսկապես թաս է կամ գավաթ, որ երբեմն ունենում է կանթ (կոթ), իսկ երկրորդ տեսակը մոտենում է կճուճի տիպին, սակայն չունի ուռուցիկ փոր, այլ գլանաձև է: Սա նման է մեր այսօրվա բաժակներին կամ ունկավոր բարձրագիր գավաթներին և տեղական բարբառով կոչվում է մաշրապան, տալու և այլն: Այս ձևի աման գտնվել է նաև Թեփրակ-կալեի պեղումներից. դրա բնորոշ առանձնահատկությունն այն է, որ աման-



ի հատակը վերջավորվում է կոնաձև և, անշուշտ, կախում էին կոթից (կանթից), որ բավական մեծ է:

Այս երեք տիպի կերամիկայի ամաններից դուրս է մնում, իբրև բացառիկ երևույթ, Նոր-Բայազետի գավառի պեղումներից հանված ուշագրավ մի աման, որ քառանկյուն արկղիկի ձև ունի: Սա կերտված է ձեռքով՝ չփկացույն կավից և թրծման չի ենթարկվել: Հատակին կան չորս փոքրիկ ոտներ, որոնք միաձուլ են չորս կողանկյունների հետ, իսկ բերանի երկու հանդիպակաց շրթերին՝ մեկական ծակ ունկեր: Ամանի երկարությունն է 9 սմ., լայնությունը՝ 7 սմ. և բարձրությունը՝ 8 սմ.: Այդ ամանը որոշ նմանություն ունի հայ գյուղերում մինչև վերջին ժամանակները գործածվող աղամաններին:

Վերոհիշյալ կավե ամանների թաղման հանգամանքներից կարելի է կռահել, թե ինչ նպատակներով էին դրանք գործածվում տակավին հնագույն դարերի ժողովրդական կենցաղում:

Գավերը և դրանց համանիշ կուլաներն ու կուլկուլակները, մուշտաբաները գերեզմաններում միշտ դատարկ էին գտնվում: Պարզ է, որ դրանց մեջ հեղուկներ են եղել, որոնք դրվել են իբրև մեռյալների ըմպելիք: Միաժամանակ պետք է նշել և այն ուշագրավ պարագան, որ գավերը, համեմատած մյուս անոթների՝ թակույկների ու սկահակների հետ՝ քանակով ավելի են հանդիպում: Այս հանգամանքից պետք է եզրակացնել, որ մեռյալի մոտ սովորաբար խմիչք ավելի էր դրվում, քան կերակուր: Սա էլ կենցաղային բարքերի մի ցուցանիշ է, որ կարող էր հետևանք լինել այդ վայրերի գինեվետ պայմանների, որոնք տակավին ներկայումս էլ գոյություն ունեն:

Մեծ կճուճները սովորաբար լցված են լինում մոխրով, ըստ երևույթին հրակեզ կենդանիների ածյուներից: Պետք է ենթադրել, որ այդ մոխիրն ամանների մեջ լցնում էին տաքացած, որովհետև ամանները մեծ մասամբ ճաքճքված են (JMMS, I, 156):

Փոքր կճուճները, սկահակներն ու դրանց համանման անոթները սովորաբար լի են զանազան ընտանի ու վայրի կենդանիների (խոզի, եզան, ոչխարի, նապաստակի և զանազան թռչունների) ոսկրներով: Դա ապացույց է, որ հիշյալ ամանները լցված են եղել կերակուրներով:

## VI

## ԿԱՎԵ ԱՅԼ ԱՆՈԹՆԵՐ

Կերամիկ ամաններից զատ, որոնք բառիս նեղ իմաստով աղերս ունեին զուտ տնտեսական կենցաղի հետ, հանդիպում են կերամիկ այլ անոթներ, որոնք այս կամ այն տեսակետներով նույնպես հեռու չեն տիրող կենցաղային պայմաններից: Այստեղ ամենից առաջ պետք է հիշատակել կարասները, որոնք նույն կճուճներն են իրենց արտաքին ձևով, բայց անհամեմատ մեծ՝ իրենց ծավալով:

Կարասներ շինելու արհեստը կարող էր զարգանալ կերամիկայի տեխնիկայի զարգացման բարձր աստիճաններում, քանի որ նրա մեծ ծավալը պահանջում էր կավի ու դրա խմորի լավորակ հատկություններ, բարդ թրծվածք և, վերջապես, կերտելու կատարելագործված եղանակ, այսինքն այնպիսի նախադրյալներ, որոնցով ապահովվում էին կարասների դիմացկունությունը և փխրունության աստիճանի առավելագույն վերացումը: Ակներև է, որ հնագույն կարասները պատրաստում էին ծեփուկային (au colombin) եղանակով[71], որի հետքերը կարելի է նկատել կարասների արտաքին կողերի վրա:

Զնայած կարասի ծեփման հետ կապված դժվարություններին, բայց և այնպես այդ ձևի ամանները տարածված են եղել բավական մեծ չափերով: Միայն Թեփրակ-կալեի պեղումների շնորհիվ հանվել են մոտ 25 մեծ կարասներ, յուրաքանչյուրը 500—600 լիտր տարողությամբ: Հայկական լեռնաշխարհի հնավայրերում հայտաբերված կարասները գրեթե անփոփոխ նմանություն ունեն նույն տեղերում մինչև մեր օրերն էլ գործածվող կարասների հետ:

Կարասի սովորական տիպը ձվաձև է, որի փորն աստիճանաբար նեղանում է դեպի վեր ու վերջանում քիչ կամ շատ լայն բերանով, որը բոլորված է լինում նեղ եզերվող շուրթով, իսկ փորից ներքև նույնպես հետզհետե նեղանալով՝ վերջավորվում է սրածայր կամ հատյալ կոնով: Երբեմն կարասի փորի վրայով օղակվում է 1—2 զուգահեռ երիզավոր (Schnurornament) օրնամենտից բաղկացած մի զարդանկար:

Կարասները ծառայում էին հեղուկների (գլխավորապես գինու ու այլ ըմպելիք խմիչքների), հացահատիկների պաշար պահե-



լու համար, այնուհետև թոնրի և, վերջապես, թաղման համար:

Թեփրակ-կալեի պեղումներից հանված կարասները, նաև Վանի շրջանի Շուշանց գյուղի (Վարագ սարի լանջին) հինավուրց ավերակներից գտնված կարասի բեկորները, որոնք ուրարտական ծագում ունեն, բերանի ու օրնամենտային ժապավենի միջև, կողերի վրա կրում են սեպագիր նշաններ ու որոշ կետագրություններ, որոնց վերծանումը ցույց է տալիս, թե որքան տարողություն ուներ կարասը: Բացի դրանից՝ կարասների վրա նկարված են ամաններ, որոնք նրանց պարունակության չափերն են ներկայացնում: Այդ տարողության չափերը վերոհիշյալ սեպագրերի մեջ անվանված են ակարքի և սրա ստորաբաժանումը՝ խիրուսի: Պրոֆ. Լեման-Հաուպտի ենթադրությամբ՝ ակարքին լինելու էր մոտ 120—150 լիտր, իսկ յուրաքանչյուր ակարքին պարունակելու էր 10—12 խիրուսի, հետևաբար ամեն մի խիրուսին հավասար է մոտ 10 լիտրի (LHM, 110—111):

Հույն պատմագիր Քսենոֆոնը (5-րդ դար մեր թվականությունից առաջ), նկարագրելով Հայաստանի գյուղական կենցաղը, հիշատակում է, որ հայ գյուղական մառաններում թաղված էին գարեջրով լի կարասներ: Գինու կարասների նմուշօրինակներ գտնվել են նաև ուրարտական Անիի պեղումներից, որտեղի կարասներն ունեցել են ավելի գեղեցիկ ու բարդ զարդանկարներ: Այստեղ մենք նկատում ենք զանազան կենդանիներ (աքաղաղներ, այծեր և այլն), ծառեր (թերևս խաղողի որթեր) և պարող մարդիկ, որ ցույց է տալիս գինի խմելու հետևանքով առաջացած ուրախ տրամադրությունը:

Թոնրի կարասները, ըստ երևույթին, ավելի նորագույն ծագում պետք է ունենան, քանի որ նախապատմական դարերի նկատմամբ մենք չունենք առայժմ այդպիսի տվյալներ: Թոնրի կարասները մառանի կարասներից տարբերվում են նրանով, որ ձվաձև տիպի չեն, այլ մասամբ գլանաձև, որի հատակը կպչում է թոնրի հորի գետնին:

Թաղման կարասների մասին չենք կրկնում այստեղ, քանի որ այդ առթիվ մանրամասն խոսվել է վերը (էջ 35): Թաղման կարասի գաղափարն ամենայն հավանականությամբ հիմք է դարձել, որ նմանապես քարե սարկոֆագները (I, 151, 157) փոխարինվեն կավե սարկոֆագներով: Այդպիսի սարկոֆագներ հայտաբերվել են Էջմիածնում (Զվարթնոցի ավերակների հնավայրում), Երևանի շրջանում և այլուր: Այդ սարկոֆագների վերին

եզրը զարդարված է երկրաչափական օրնամենտով, իսկ հատակը միանգամայն տափակ է։

Հնագույն կենցաղային պատկանելիքներից մեկն էլ ճրագն է, որ նույնպես կավից էին շինում, թեև գործածության մեջ տակավավին եղել են նաև բրոնզե ճրագներ, անշուշտ, ունևոր սոցիալական խավերում։ Դեռ ոչ հեռու անցյալում նման կավե ճրագներ գործածական էին հայ ժողովրդական կենցաղում։ Այդ անոթները փոքրիկ ու տափակ սկահակների ձև ունեն. մեր հայտնի պեղածո ճրագները պահպանել են ձեթի հետքերը և պատրույգի տեղը սևացած է մխից։

Հին Արմավիրի ու Նոր-Բայազետի պեղումներից հանված ճրագները բավական կոպիտ են շինված և գործ էին ածվում աշտանակի վրա դնելով։ Լոռում գտնված կավե ճրագները բերանի երկու կողմից մեկական ծակ ունեն, հետևապես պետք է ենթադրել, որ այդ ճրագները գործ էին ածվում վերևից կախ տալով։ Ժակ Մորգանի ասելով, նա այդպիսի կավե ճրագներ տեսել է տակավին իր հետախուզական աշխատանքների ժամանակ, Ալավերդու հանքափորերի ձեռքին (JMMS, I, 154)։

Շատ բնորոշ է Թոփրակ-կալեում հայտաբերված կավե ճրագը, որ շինված է նույն տեղում գտնված բրոնզե ճրագի հարազատ նմանությամբ (էջ 107)։

Կավե ճրագներ բավականաչափ գտնվել են Անիի ավերակների պեղումներից, թեև այդ ճրագները պատկանում են հայոց պատմության հին և միջին դարերին, բայց և այնպես ցույց են տալիս, թե ինչ պահպանողությամբ այդ անոթները գոյություն են ունեցել ժողովրդական կենցաղում։

Ճրագները գործադրվում էին ոչ միայն բնակարանների լուսավորության համար, այլև կրոնա-պաշտամունքային նպատակներով։ Կավե ճրագներ գտնվել են Նոր-Բայազետի դամբաններում, նույնիսկ երեխաների կմախքների մոտ (ԱՀ, XIV, 19.34)։ Այդ սովորությունը պահպանվել է հայ ժողովրդական արդի հավատալիքների մեջ։ Սովորաբար երեխային, ինչպես և մեծերին թաղելիս, հայաբնակ շատ վայրերում, ձեռքին մոմ են դնում, որպեսզի «հոգին» մյուս աշխարհ գնալիս՝ ճանապարհին լույս ունենա։ Ինչպես որ ներկա քրիստոնեական եկեղեցում և պաշտամունքներում կրոնական նշանակություն ունի մոմի գործածությունը, այնպես էլ հնագույն կրոնական ծիսապաշտությունների մեջ գործածվել են ճրագները։ Այդ սովորությունը պահ-



պանվել է մեր ժողովրդական հնամենի կենցաղային հավատալիքներում, քանի որ հին հայկական ուխտատեղիներում գտնվել են կավե ճրագներ, որոնք, մինչև այսօր պահպանված ձևայով՝ միանգամայն նման են վերոհիշյալ պեղածո ճրագներին։

Նոր-Բայազետի պեղումներից հանվել են մի քանի հատ արտասովոր գլաններ, որոնց նշանակությունը զուտ կրոնա-պաշտամունքային է եղել։ Այդ գլաններից երեքն իսկապես ներկայացնում են խողովակներ, որոնց վերին ու ստորին ծայրերը վերջանում են ձագարի ձևով. սրանք ունեն 13 սմ. բարձրություն և մեջտեղում՝ 4 սմ. տրամագիծ։ Այդ գլաններից չորրորդը՝ կիսակլոր գագաթով և շրթի ձևով կորացած պատվանդանով մի խողովակ է, 25 սմ. բարձրությամբ ու 5 սմ. տրամագծով. այդ գլանի գագաթի կենտրոնում և կողքերին կան ծակեր։ Հնագետ Երվ. Լալայանը, որի ջանքերով հայտաբերվել են վերոհիշյալ գլանները, միանգամայն ճիշտ կերպով այդ վերջինը համարում է խնկանոց։ Այս ենթադրությունը նա հիմնավորում է այն հանգամանքով, որ հիշյալ գլանը գերեզմանում տեղավորված է եղել պաշտվող եզան կողքին։ Վերջապես գտնվել է մի այլ գլանաձև կավե անոթ, որը Երվ. Լալայանը, հիմնվելով սոսկ արտաքին նմանության վրա, սխալմամբ համարում է թոնրի մոդել։ Նույն պաշտամունքային նշանակությունն ունեն կավե կոնաձև անոթները, որոնցից մեկը հայտաբերվել է Նոր-Բայազետի հնավայրում, իսկ մյուսը, ենթադրաբար, խալդական ծագում ունի (այդ անոթները ցուցադրված են մեր Պետական Թանգարանի հնագիտական բաժնում)։ Նոր-Բայազետի հիշյալ անոթը բավական նուրբ գործ է, սև փայլով. սպիտակ ներկային լիցքի հետքերով, զարդանկարված է շարքային եռանկյունների ժապավեններով, որոնք բոլորվում են անոթի վերին ու ստորին շրթերին, իսկ միջի ազատ տարածության մեջ նկարված է բնական հարազատությամբ մի օձ, որ անշուշտ վկայում է այդ անոթի կրոնա-պաշտամունքային նշանակությունը։ Նույնն է խալդական անոթը, որի զարդանկարային ժապավենը բաղկացած է սեպաձև նշանների (ոչ տառերի) կրկնակի շարանից։

Հնագիտության մեջ հայտնի են նույնանման գլաններ ու երկկոնաձև անոթներ, որոնք հայտաբերվել են Առաջավոր Ասիայում, գլխավորապես Միջագետքի պեղումներից։ Համեմատական հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ կավե անոթները, որոնք իրենց զարդանկարներով ու կերտվածքով ավելի բարձր

արվեստի արտադրություններ են, քան Նոր-Բայազետի գլանները, ծառայել են կրոնա-պաշտամունքային նպատակների: Սրանք եղել են կրակարաններ խնկի ու զոհերի մասերի համար, թերևս և պատվանդաններ (Herd-und Opterständer)՝ կրոնա-պաշտամունքային ծիսակատարությունների ժամանակ: Այդպիսի գլաններ հայտնաբերվել էին Ասուր (հին Ասորեստանի մայրաքաղաքը), Ֆարա, Մուսարան, Ուր և Կիշ (սումերական) քաղաքների ավերակներում (RL. XIV, 85—86): Երբ այդ գլանները համեմատում ենք Հայաստանի Պետական Թանգարանում ցուցադրված գլանների հետ, նկատում ենք բնորոշ նմանություններ, որոնք հաստատում են այդ բոլոր կոնաձև անոթների ու գլանների կրոնա-ծիսական նշանակությունը[39]:

Կավից էին կերտվում նաև այլ կրոնա-պաշտամունքային իրեր, ինչպես օրինակ՝ զանազան կենդանիների ֆիգուրներ: Նոր-Բայազետի դամբաններում գտնվել են մի քանի հատ եզան գլուխներ (Ս. Իվանովսկի, Երվ. Լալայան), հին Նախիջևանի գավառում՝ փայլուն (Երվ. Լալայան) և այլն:

Կավից էին պատրաստում նաև մի շարք թրծված և անթրծված շինարարական նյութեր: Այստեղ առաջին տեղը բռնում են կավե թրծած աղյուսները, որոնց արտադրությունը զարգացած էր բրոնզե դարի վերջերին, ինչպես վկայում են Հայկական լեռնաշխարհի պեղածոները: Պրոֆ. Իվանովսկին Տաշբուրունում (Նախկին Սուրմալուի գավառ) իր կատարած պեղումներից, որտեղ նա գտել էր ուրարտական ծագում ունեցող շենքի ավերակներ, հայտնաբերել էր, որ այդ շենքի հատակը ծածկված է եղել կավե աղյուսներով: 8×6 վերշ. մեծություն ունեցող այդ աղյուսները երեսից հղկված ու խաչաձև ակոսված են խորացրած գծերով: Նույնանման աղյուսներ է գտել Ռեսլերը Վարանդայում՝ Ղարա-քեոփեկ դամբանը պեղելիս:

Բացի վերոհիշյալներից, պրոֆ. Իվանովսկին նույն տեղը գտել է 1,5 սմ. հաստությամբ, 40—42 սմ. երկարությամբ և 17 սմ. լայնությամբ կավե տախտակներ, որոնց երկու հանդիպակաց կողերը, լայնության կողմից, կորացրած են ուղիղ անկյունով և բարձրանում են տախտակների մակերեսից 2 սմ: Այդ կորացրած ծայրերով տախտակները շատ լավ իրար կառչում են և իրարից չեն բաժանվում նույնիսկ ուղղահայաց դիրքով բռնելիս: Հավանորեն սրանք եղել են մեր այժմյան կղմինդրի համանիշ ձևերը



և գործ են ածվել թերևս տների կտուրները ծածկելու նպատակով (MAK, VI, 30):

Պրոֆ. Իվանովսկին էլ հայտնաբերել է նույն տեղում բազմաթիվ ջարդված կիսախողովակներ (նավդան, քունգ): Սրանց մի ծայրն ավելի նեղ է, այնպես որ մի կիսախողովակի նեղ ծայրը կից մտնում է մյուսի լայն ծայրի մեջ և, այդպիսով, կազմում է մի անընդհատ երկարություն: Անտարակույս, որոնք ծառայում էին ջրմուղի համար. այդ հանգամանքը հաստատվում է նրանով, որ հիշյալ խողովակները ցիրուցան գտնվել են շենքերի պատերի երկարությամբ թե արտաքուստ և թե ներքուստ: Կավե ջրատար խողովակներ կան նաև Ղարսըլի գյուղի (Շիրակի գավառ) մոտ եղած կիկլոպյան հին քաղաքատեղում (ԲԳԻ, 219):

Աղյուսի արտադրությանը հարակից են նաև այն կավե տախտակիկներն ու գլանաձև կնիքները, որոնք մնացել են խալդական կուլտուրայից, որ մենք գտնում ենք բրոնզե դարերի վախճանակետին ու երկաթե դարերի սկզբնական ժամանակաշրջանին: Այդ կավե տախտակները գործածվելիս են եղել զանազան գրությունների համար թե միջազգային փոխհարաբերությունների, թե իրավաբանական-օրենսդրական ակտերի և թե պատմական հուշարձանների ու փաստաթղթերի բնագավառում: Հիերոգլիֆ ու սեպագիր փորագրություններով այդպիսի տախտակիկների հետ միասին հայտնաբերվել են նաև մաքուր կավե տախտակիկներ, որոնք պահվելիս են եղել, անշուշտ, ապագա գրությունների համար:

Վերջապես հիշենք, որ կավից էին պատրաստում նաև այնպիսի գործիքներ, ինչպես թեշու գլուխը, ձուլածո փոքր իրերի կաղապարները և այլն, նմանապես մարդկային ֆիգուրներ, որպիսի կավագործությունը սովորական էր էգեյա-միկենյան կուլտուրայում:

Թեև կերամիկայի շարքին չեն պատկանում, բայց և այնպես հարմար ենք սեպում այստեղ հիշատակել արտասովոր այն տեսակավորմամբ ամանները, որոնք ի հայտ են բերվել Սևանի շրջանի դամբաններում: Սրանք ապակյա փոքրիկ սրվակներ են, որոնք գետնի մեջ երկար ու ձիգ դարեր մնալով, քիմիական ազդեցության են ենթարկվել ու ստացել փայլուն կանաչավուն-կապտավուն և այլ երանգավորումներ: Իրենց արտաքին ձևով այդ սրվակները նման են կերամիկական գավերին: Սրանցից մի քանիսը երկկանթ են, ունեն գեղեցիկ օրնամենտացիա և ընդհանրապես նուրբ արվեստի գործ են հանդիսանում:

Այդ սրվակների սակավ քանակը և նուրբ գործ լինելը ենթադրել են տալիս, որ նրանք տեղական արտադրություն չեն, այլ ներմուծվել են օտար երկրներից։ Այդ սրվակները կրոնապաշտամունքային նշանակություն ունեին։ Տակավին պատմական ժողովուրդների կենցաղում սովորություն է եղել. սգի արարողության հետ միասին մեռյալի ազգականների թափած արցունքները հավաքել սրվակների մեջ և թաղել մեռյալի կողքին՝ այն հավատով, որ մեռյալը համոզված լիներ, թե որքան էին սիրում նրան, որպեսզի նա միշտ բարեացակամ մնար դեպի իր կենդանի հարազատները։ Արդի հնագիտության մեջ նրանք կոչվում են արցունքի սրվակներ։

## VII

## ԿԵՐԱՄԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք վերը քննության առանք Հայկական լեռնաշխարհի կերամիկան որպես նյութական կուլտուրայի առարկա՝ այն տեսանկյունով, թե ինչ տեղ էր բռնում նա երկրի տնտեսության մեջ իբրև արտադրության մի ճյուղ և թե ինչ նշանակություն ուներ նա ժողովրդական կենցաղում։

Սակայն կերամիկան հնագիտության մեջ միաժամանակ հանդիսանում է այն մեթոդական ուղին, որը հնարավորություն է տալիս մոտավոր չափերով որոշելու տվյալ հնավայրի երբեմնի կուլտուրական զարգացման ժամանակագրական փուլերը, մանավանդ արխայիկ դարերի վերաբերմամբ։ Ուսումնասիրության այս եղանակը կարևոր նշանակություն է ստանում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մենք չունենք բնավ Հայկական լեռնաշխարհի հնավայրերի ստրատիգրաֆիկ հետազոտությունները (I, 10—11)։

Հայկական լեռնաշխարհի հնագույն կերամիկան պետք է համարել խալդական (ուրարտական), որտեղ տիրապետող են հանդիսանում լավ թրծված, կարմիր փայլով կավե ամանները, որոնց նկարագիրը տվինք ըստ Լեման-Հաուպտի, և մասամբ փայլատ (մաթ) սև կավե ամանները։ Այս տիպի կավագործական ինդուստրիան ծաղկում էր գլխավորապես 8-րդ և 7-րդ դարերում մեր թվականությունից առաջ, երբ արդեն երկաթի ինդուստրիան էր իշխում։ Իբրև կենտրոնական տվյալ այս ժամանակի համար մենք ընդունում ենք այն տարիները, երբ Ռուսաս I-ի (733—714 թ. թ.) ձեռքով վերականգնվում էր Թոփրակ-կալեն։



Դառնալով բրոնզե դարերի նախահայկական կերամիկային, այստեղ իրենց ծագումով ամենահինն ենք համարում Ռեդկին-Լագերի (Դիլիջանի գավառ) կավե անոթները, որոնք, չնայած հայտաբերվել են բրոնզե իրեր պարունակող դամբաններում, բայց այդքի են ընկնում իրենց պրիմիտիվ տեխնիկայի հատկություններով։ Բոլոր այս անոթները սև են, մեծ մասամբ անփայլ. կավը կոպիտ է և մուգ գորշագույն, թույլ և անհավասար է թրծված. ուստի ամանների սև գույնն առաջացել է կրակի վրա կավի ածխանալուց։ Անոթների զգալի մասը շինված է ձեռքով, առանց դրգի կիրառման. սրանք երբեմն այնքան պրիմիտիվ ու կոպիտ գործ են երևում, որ կարծես, պատահականորեն լինեն նեոլիթյան դարերի կավագործության ամենանախնական շրջանից։ Ռեդկին-Լագերի կերամիկային մեծ նմանություն ունեցող օրինակները կարելի է տեսնել Գոլովինոյի[14] պեղածոների մեջ, որոնք պատկանում են բրոնզե դարից երկաթե դարին անցնելու շրջանին, նաև Սևանի ավազանի մի շարք դամբանների բրածոների մեջ։ Այս պարագան վկայում է այն մասին, թե որքան պահպանողական հատկություններով է օժտված կավագործական արհեստը, որը բրոնզե, թերևս նաև վաղագույն երկաթե դարերի սկզբներին շատ հաճախ կրում է նեոլիթյան կուլտուրայի տեխնիկական տեսագծերը։ Այդօրինակ փաստերն զգուշացնում են հնագետ ուսումնասիրողին, թե ինչ վերապահությամբ է հարկավոր մոտենալ կերամիկական արտադրանքների ժամանակագրությունը որոշելու հարցին։

Կերամիկական այս արտադրություններին իրենց տիպային գծերով հարում են (բայց համեմատաբար ավելի կատարելագործված արվեստով) Սևանի (Նոր-Բայազետի), Գանձակի, Շուշու գավառների, Լոռու մի մասի (Սադախլոյի, Ախթալայի, Ուչքիլիսայի, Շեյթան-դաղի, բացառությամբ Մուսի-երիի), Արարատյան դաշտի հնավայրի կավե անոթները, որոնք ընդհանուր առմամբ ներկայացնում են հնադարյան մի ուրույն կուլտուրա։ Այս կերամիկական կուլտուրան իր նմանությունն ունի նաև Հյուսիսային Կովկասում, որտեղ այդ տեսակներից ամենահինն է համարվում Կոբանի հնավայրը։

Կոբանի դամբանների հայտաբերումը Կովկասի հնագիտության պատմության մեջ ժամանակագրական կարգով առաջինն է եղել, որ առիթ է տվել վկայելու բրոնզեդարյան կուլտուրայի գոյությունը Կովկասում։ Ուստի այդ հնավայրն սկզբից ի վեր

մեծ հետաքրքրության առարկա էր դարձել և արժանացել էր բազմաթիվ մասնագետների ուշադրության, որոնք մի շարք ուսումնասիրություններ են կատարել որոշելու համար այդտեղ հայտաբերված իրերի նշանակությունն ու նրանց հնագիտական ժամանակագրությունը: Հայտնի հնագետ Ա. Մ. Տալգրենը (Ֆինլանդիա), ամփոփելով եղած հետազոտությունները, Կոբանի բրոնզեդարյան կուլտուրան, հետևապես և նրա կերամիկան, վերագրում է 1300—900 թ. թ. (մեր թվ. առաջ) ժամանակաշրջանին (RL, VI, 264—266): Այդ նույն ժամանակաշրջանին, այսինքն 2-րդ հազարամյակից մինչև 10-րդ դարը ներառյալ, պետք է վերագրել նախահայկական վերոհիշյալ կերամիկայի գոյությունը, որ այնքան նման է Կոբանի կերամիկային: Հիրավի, հնագետ Բ. Վ. Թեխովսկին, Ղալաքենդի (Գանձակի գավառ) բրոնզեդարու գերեզմանների նմանության վերլուծման հիման վրա, գտնում է. որ այդ կուլտուրան, ունենալով հաթական ծագում, Կովկասում ծաղկել է 10-րդ դարում (ФАР, 44):

Մեզ հետաքրքրող այդ հարցի վրա ավելի մեծ լույս է սփռում վերջերս պրոֆ. Ի. Մեշչանինովի հայտնած կարծիքը, որը գիտեն հավանական ենթադրություն պետք է համարել, մինչև որ այդ չհաստատվի անվիճելի ապացույցներով: Թոխլուջայի (Շուշու գավառ) դամբաններից մեկում է. Ա. Ռեսլերի ձեռքով հայտաբերված մի մեծ ուլունքի ուսումնասիրությունը վերծանելով, Ի. Մեշչանինովը կարդացել է ասորեստանյան թագավոր Ադադներարիի անունը[77]: Այդ թագավորի տիտղոսի առանձնահատուկ ձևով հիշատակվելը և սեպագիր նշանների բնորոշ վերծանությունը հիմք են տալիս նրան այդ ուլունքը վերագրելու Ադադներարի առաջինին, որը թագավորում էր 1310—1281 թ. թ. մեր թվականությունից առաջ[78]: Հետևապես Թոխլուջայի այդ դամբանն իր կերամիկայով ու բրոնզե իրերով հանդերձ պատկանում է առավելն 13-րդ դարին[79]: Ինչպես տեսնում ենք, այս թիվը մոտենում է Ա. Մ. Տալգրենի հայտնած կարծիքին, որ Ի. Մեշչանինովից միանգամայն անկախ ու ավելի առաջ է արտահայտվել:

Միանգամայն ուրույն է Հայկական լեռնաշխարհի այն կերամիկան, որ հանդես է գալիս Կարմիր-վանքի (Ղըզըլ-վանք—Նախիջևանի մոտ), և մի շարք այլ վայրերի պեղածոներում: Այս կավագործական կերտվածքներն ուրույն են իրենց գունանախշ զարդանկարներով: Այս կերամիկան ամբողջովին ձեռագործ է, առանց դրգի ծեփած, բայց չափազանց նուրբ ու արվեստորեն կերտված, որ վկայում է բրուտագործության տեխնիկայի բարձր զարգացումը: Կավը միանգամայն բավարար է ու մաքուր մաղած. նա իր թրծումով ավելի է բաց-կարմրավուն և դեղնավունից մինչև սպիտակավունի հասնող գույների, ամփոփներ: Եվ այս բնորոշ գծերը, որոնք տվյալ կերամիկան միանգամայն տարբերում են մյուս սևագույն կամ կարմրագույն թրծումով, վերը հիշատակված կերամիկայից, ներկայացնում են առանձնահատուկ կուլտուրայի մի պատկեր: Կարմիր-վանքի կերամիկան նմանության այդ կերամիկայից հետո պետք է համարել ամենահինը[80]:

Ինչպես հնագիտական հետախուզումները ցույց են տալիս, այս տիպի գունանախշ կերամիկան տարածված է եղել գլխավորապես Առաջավոր Ասիայում և առաջ Միջին Ասիայում՝ Անդրկովկասյան երկրից սկսած ու Իրանական սարահարթի վրայով մինչև Բելուջիստան, և միանգամայն բացակայում է Փոքր-Ասիայում[81]:

Առաջավոր Ասիայում այդ բնորոշ կերամիկայի կենտրոնը համարվում է հին Էլամը (Միջագետքի հարավային ծայրը), որի մայրաքաղաք Սուզայի ավերակներում հայտնաբերված կերամիկան ուշագրավ պատկեր է տալիս գունանախշ զարդանկար կավագործության զարգացման: Այդ կավե ամանները շինված են դրգի վրա: Պեղման հնագիտական ստորին շերտում, այն է՝ նեոլիթյան կուլտուրայի շերտին անմիջականորեն հաջորդող հարկում երևան եկած այդ գունանախշ կերամիկան բուն կարգի ներկայացնում է այդ արվեստի 1-ին աստիճանը, որին հաջորդող 2-րդ աստիճանն արդեն անկման նշաններ է արտացոլում:

Հնագիտական մանրազնին համեմատական ուսումնասիրություններով (Անդրե, Ֆրանկֆորտ, Հալ-Ռուլեյ և այլք) հաստատված է այն փաստը, որ Միջագետքում այս համատարած կերամիկայի բազմագույն (պոլիխրոմ) զարդանկարը չքանում է ասպարեզից մինչև 3100 թվ. և սակայն Սուզայում նա շարունակում է իր գոյությունը, բայց միագույն (մոնոխրոմ) զարդանկարով, մինչև Սարգոնիդյան տիրապետության սկիզբը, այն է՝ 2800 թ. մեր թվականությունից առաջ (RL, XIV, 84): Այս դարերից հետո Էլամում և ընդհանրապես Միջագետքում, ինչպես և Առաջավոր Ասիայում գործածության մեջ է այլևս ոչ-գունանախշի կերամիկան:

Միջին-ասիական գունանախշ նկարազարդ կերամիկան, նույնանման բնորոշ գծերով, հայտնաբերված է Անաուի ուշագրավ պեղումներում[82]: Այդ կերամիկան, որ երևան է եկել հնագիտա-

կան պեղածո երեք աստիճաններում (շերտերում) և այդ պեղումների ղեկավար պրոֆ. Գոլդմենի կարծիքով պատկանում է նեոլիթյան կուլտուրայի վերջավորմանը[83], միանգամայն համանիշ է Սուզայի գունաներկ կերամիկայի 1-ին աստիճանին և պատկերացնում է կերամիկական այդ տիպարի տիրապետությունն ամբողջ Փոքրասիայում (RL, XIV, 82)։

Էլամի ու Անատոլի գունաներկ կերամիկայի ժամանակագրությունը բնորոշող ակնբախ փաստն այն է, որ Սուզայի (Շոշի) 1-ին աստիճանի գունաներկ կերամիկային վերագրվող անոթները Միջագետքում և Իրանի տափաստաններում ուղեկցվել են միմիայն պղնձի ինդուստրիայի իրերով, առանց բրոնզե իրերի։

Ժակ Մորգանը, որին պատկանում է Սուզայի գունաներկ կերամիկայի հայտաբերումը և հնագիտական ուսումնասիրության առաջնությունը, այդ կերամիկայի մասին տալիս է հետևյալ եզրակացությունը. «...Այդ հնագույն կերամիկան ծագել է ոչ Սուզայում և ոչ էլ Քաղդեայում. Նա արդեն պատրաստի ձևով բերել է Կերխի գետի ափերը։ Կենդանական զարդանկարի ոճավորական տեսագիծը լեռնային ոչխարն է, երկար եղջյուրներով, մի լեռնային կենդանի, որ միանգամայն խորթ է Քաղդեային և Էլամի դաշտին, բայց որը դեռ ներկայումս էլ, մեծ թվով, ապրում է Առաջավոր Ասիայի լեռներում։ Ընդհակառակը, այդ անոթների վրա պատկերացրած կենդանիների շարքում մենք չենք տեսնում այն կենդանիները, որոնք այն ժամանակներն ապրում էին երկու գետերի երկրում (Միջագետքում) — հիպոպոտամը, ռնգեղջյուրը և, գուցե, փիղը։ Այդ ամենի հետևանքով պետք է եզրակացնել, որ նախապատմական արվեստի առաջին արտահայտությունները տեղի են ունեցել ոչ թե Միջագետքի դաշտերում, այլ լեռնային շրջաններում։ Սակայն որտեղ, որ մարզում — այդ մենք չգիտենք։ Բայց պղինձ մետաղի առկայությունը մեզ առաջնորդում է դեպի հյուսիսային լեռնային մարզերը, դեպի Անատոլիա, Հայաստան, Անդրկովկաս, որոնք, ինչպես մենք կարծում ենք, հանդիսացել են մետալուրգիայի օրրանը»[84]։

Հետևապես, մինչև այժմ ասպարեզում եղած հնագիտական տվյալների հիման վրա մենք կարող ենք ասել, որ Հայկական լեռնաշխարհի, մասնավորապես Կարմիր-վանքի, գունաներկ կերամիկան, որ բազմագույն բնույթ ունի, գոյություն է ունեցել առնվազն մինչև 3000 թվ., մանավանդ եթե նկատի առնենք այդ տիպի կերամիկայի չքացումն Էլամում մինչև 2800 թ.։ Կարող



ենք ասել նաև, որ այդ կերամիկան, ուրեմն, հին Հայաստանում ծագել է նեոլիթյան դարերի կուլտուրայի վերջին շրջանում և գոյություն է պահպանել տակավին պղնձեդարյան (էնեոլիթի) ինդուստրիայի ժամանակաշրջանում։ Մեր այս ենթադրությունը, բացի վերահիշյալ տվյալներից, հիմնավորում ենք նաև հետևյալ ապացույցներով։

Կարմիր-վանքի, Թազաքենդի գունաներկ կերամիկան, ի տարբերություն Սուզայի էլամական կերամիկայի արտադրվել է առանց դուրգի, ուստի և համեմատաբար ավելի հին է։ Այդ կերամիկական անոթները հայտաբերվել են զուտ պղնձե իրերի ուղեկցությամբ, ինչպես այդ ակնհայտ է Թազաքենդի պեղումներից. այստեղ այդ գունաներկ անոթները գտնվել են ոչ թե քարարկղային տիպի (դոլմենային) դամբաններում, որից բավականաչափ եղել են Թազաքենդում, այլ ավելի հնագույն տիպի գերեզմանում, այն է՝ հողային փորվածքի՝ սովորական տիպի գերեզմանում, պպզած դիրքով թաղված կմախքի մոտ (MC, V. 119—120)[85]։

Ֆրանկֆորտ ու Վիլհելմ Ժեննի գիտնականներն իրենց լույս ընծայած նորագույն հետազոտություններում նույն եզրակացություններին են հանգում հին Հայաստանի գունաներկ կերամիկայի մասին։ Ֆրանկֆորտը համեմատության առնելով Ուրմիայի և Երևանյան մարզի (արդի Նախ. ԱՍՍՌ, Կարմիր-վանքի և այլ տեղերի) համանիշ կավե անոթները, այն կարծիքն է հայտնում, որ այդ անոթները ներկայացնում են հին Հայաստանի 3-րդ հազարամյակի այդ տիպի կերամիկայի պատկերը[86]։

Նմանապես Վիլհելմ Ժեննին, համեմատելով Շամիրամալթիի (Վանի մոտերքը) կերամիկան (I, 134—136) Ուրմիայի ու Արարատյան դաշտի գունաներկ կերամիկայի հետ, գտնում է, որ վերջինս ավելի հնագույն է, վերագրելով այն 3-րդ հազարամյակին, իսկ առաջինը՝ 2-րդ հազարամյակին[87]։ Այսպիսով Վ. Ժեննին հանգում է այն տեսակետին, թե՝ «պետք է ենթադրել, որ 2-րդ հազարամյակի սկզբին Հայաստանի կուլտուրական միջավայրում տեղի է ունենում փոփոխություն, որով էլամական-միջագետքային հարաբերությունները տեղի են տալիս զորեղ փոքր-ասիական ազդակներին»[88]։

Հիրավի, 2-րդ հազարամյակից սկսած փոքր-ասիական կերամիկայի արվեստի տարրերն ուժգին կերպով ակներև են դառնում նախահայկական կերամիկայում, ինչպես օրինակ՝ խալդական կերամիկայի մեջ, որի մասին խոսք եղավ վերը և որի ատ-

թիվ դիտես կանգ կառնենք հաջորդ գլխում՝ կերպարվեստի մասին խոսելիս:

Ինչով բացատրել գունանկարչ կերամիկայի ժամանակավոր բնույթը և նրա չքացումը մեր հնագույն կուլտուրայի ասպարեզից այն ժամանակ, երբ սև ու կարմիր կավե, այն է, անգունազարդ ամանները շարունակում էին հարատևել:

Այն արտաքին վիճակը, որով աչքի է ընկնում հին Հայաստանի գունանկարչ կերամիկան, ցույց է տալիս, որ այդ անոթները չեն ծառայել տնտեսական նպատակների: Այդ ամանների մաքուր, անաղարտ գրությունը, ներկերի պահպանվելը, կավի արտաքին ու ներքին երեսների ածխացած չլինելը, կամ երբեմնի պարունակած հեղուկի ու կերակուրների քիմիական ազդեցություններից ազատ լինելը՝ վկայում են, որ այդ անոթները չեն գործածվել կրակի վրա կերակուրներ եփելու կամ երկար ժամանակով մթերքներ պահելու համար:

Ուստի պետք է կռահել, որ այդ անոթները ծառայելիս են եղել գլխավորապես կրոնա-պաշտամունքային նպատակների: Այդ իսկ պատճառով նրանք այնպիսի խնամքով նկարազարդվել և բարձր գեղարվեստական կերտվածք են ստացել: Նույնիսկ նրանց նկարները, թեև ընդօրինակված են բնությունից[59], բայց իրենց էությամբ պարունակում են պաշտամունքային տեսարաններ, սիմվոլիկ գաղափարներ, որոնց հաճախ գտնում ենք բնության զանազան տարրերի (ջրի, կրակի, կենդանիների) հավատալիքներին վերաբերող գծեր:

Օրինակ՝ Կարմիր-վանքի գունանկարչ նկարներում հանդիպում են այնպիսի թռչունների նմանություններ, ինչպես կարապը, արագիլը և այլն, որոնք իրենց բնականությամբ կապված են ջրերի ու ճահիճների հետ և հավանորեն տեղական տոտեմիզմի հետքեր են կրում, թերևս, ավելի ճիշտ ասած, ջրի պաշտամունքի տարրերն են արտացոլում: Նմանապես էրոտիկ բնույթի գունանկարը, հայտաբերված մի ամանի վրա, կարող էր աղերս ունենալ ֆալլոսի պաշտամունքի հետ:

Սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխություններով, երբ նրանց վրա կառուցված մատրոր-հայեր կուլտուրան դիալեկտիկորեն ենթարկվում է հեղաշրջման, բնական է, որ այդ սոցիալ-հասարակական հարաբերությունները արտահայտող իրեղեն տվյալներն էլ անէանում էին: Այդպես է եղել և մեր գունանկարչ ամանների հետ, որոնք գործածվելով կրոնա-պաշտամունքային նպա-



տակներով՝ չքացել են ասպարեզից, երբ անէացել են այդ նպատակները, երբ հանդես են եկել նոր հավատալիքներ՝ այլ ծիսական արտահայտություններով: Իսկ այն կերամիկական ամանները, որ սկզբից ի վեր հիմնականում միշտ ծառայել են տնտեսական-կենցաղային նպատակների, հարատև գոյություն են ունեցել և իրենց այդ նշանակությունը պահպանել են մինչև վերջ:

Վերջին հանգամանքով պետք է բացատրել նաև այն երևույթը, որ հիշյալ գունանկարչ կերամիկան, համեմատած կենցաղա-տնտեսական նշանակություն ունեցող կավե ամանների հետ, նվազ քանակով է հայտաբերվել: Պետք է կարծել, որ այդ տեսակ կերամիկան հազվագյուտ գործածության առարկա էր: Հիրավի, այդ կերամիկան, իր արտաքին կերտվածքով և գունանկարչ զարդանկարչությամբ լինելով հատուկ արվեստի գործ, իսկ իր կավային բաղադրությամբ (ընտիր որակ, խնամքով մաղած ու շաղախված), ծեփվածքով ու թրծվածքով բարձր տեխնիկայի արդյունք, հանդիսանում էր թանգարժեք արտադրանք և մատչելի չէր լայնածավալ մասսայական սպառման համար: Հետևապես այդ կերամիկան կրոնա-պաշտամունքային նպատակների հետ միասին, որպես զարդ, կարող էր ծառայել նաև գեղարվեստական նպատակների:

Այդօրինակ կերամիկան, լինելով թե՛ կրոնա-պաշտամունքային և թե՛ կենցաղային տեսակետից յուրահատուկ զարդի ու շքեղության առարկա, մասամբ կարող էր ունենալ միայն տնտեսապես ու սոցիալապես բարձր կանգնած հասարակական խավերում, որոնք, շնորհիվ իրենց նյութական հարստության և տիրապետող դիրքի, ի վիճակի էին այդպիսի շքեղություն թույլ տալ իրենց — մի բան, որից զուրկ էին շահագործվող և սոցիալապես ընկճված ժողովրդական զանգվածները, որոնք ոչ ազատ ժամանակ ունեին, ոչ էլ նյութական հնարավորություններ, ճիշտ այնպես, ինչպես ներկայումս կապիտալիստական հասարակարգում ֆարֆորը և հախճապակե գեղարվեստական անոթներն ու շքեղ ամանները դառնում են միմիայն բուրժուական ունևոր խավերի սեփականություն:

Հետագայում, երբ մետաղագործությունը զարգանում է, կերամիկական վերոհիշյալ թանգարժեք ու շքեղ ամաններին փոխարինում են նույն նպատակով արտադրվող պղնձե ու բրոնզե անոթները, որոնք, ինարկե, սպառումն ունեին տիրապետող և հարուստ հասարակական խավերում: Այլևս այդ կերամիկական ար-

տադրությունը, համեմատած մետաղե ավելի նուրբ ու կատարելագործված անոթների հետ, կորցնում է իր նախկին նշանակությունը սոցիալական բարձր խավերում և չքանում ասպարեզից—մնում է միայն կենցաղա-տնտեսական պահանջներին անմիջապես ծառայող կավե ամանների արտադրությունը։

Այսպիսով՝ արխայիկ կերամիկան մեզ կռվաններ է տալիս պատմության հնագույն փուլերում, մեր թվականությունից գրեթե 2000 տարիներ առաջ, նշմարելու սոցիալական ու տնտեսական տարբերությունների ակներև հետքեր, որոնք մեզ տանում են դեպի սկզբնավորվող հասարակական դասակարգային շերտավորումները։



Ը

# ԱՐՎԵՍՏ

## I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Նյութական կուլտուրայի բոլոր տվյալները քննության առնելիս՝ մենք որոշ չափով շոշափեցինք նաև գործող արվեստի տարրերը։ Այդ տարրերի սաղմերը պարփակվում են տակավին քարե դարերի գեղարվեստական արտահայտություններում (1, 160), որոնք հասարակական ձևերի զարգացման հետ միասին՝ բրոնզե ու վաղագույն երկաթե դարի կուլտուրաներում ստանում են արտադրական նոր ձևերին համապատասխան զունավորումներ։ Տնտեսությունը և դրա վրա կառուցված սոցիալական կազմն իր արտադրական հարաբերություններով հանդերձ՝ ունեն նաև իրենց էսթետիկ արտացոլումը, որ սերտ աղերս ունի մարդու աշխատանքային պրոցեսների հետ։ Այդ էսթետիկ արտացոլումը բեկվում է տվյալ հասարակության պատկերացումների ու հայեցողությունների աշխարհում յուրահատուկ ոճով, գեղեցիկի ըմբռնման բնորոշ գծերով, գույների, հնչյունների և շարժումների ռիթմով, կարճ ասած, գեղարվեստի բովանդակ ստեղծագործությամբ։ Գեղարվեստը նյութական կուլտուրայի պատմության տեսակետից կարևոր սոցիալական նշանակություն է ստանում, որովհետև գեղարվեստի մեջ անդրադառնում են այս կամ այն հասարակական հարաբերությունները։

Այս տեսակետից մեկնելով, անընդունելի են այն կարծիքները, որ մի շարք պատմագիրներ համառությամբ միշտ արտահայտում են այս կամ այն ժողովրդի գեղարվեստը բնորոշելիս։ Այդպիսիները սովորություն են դարձրել ամեն մի ժողովրդի արվեստի մեջ տեսնել միայն օտար ազդեցություն, փոխառություն և ընդօրինակում ուրիշից, միանգամայն անտեսելով այն հիմնական սկզբունքը, որ գեղարվեստը, էսթետիկ կոնցեպցիաները, բղխելով մարդկային հասարակության տեխնիկական ձևերից,

աշխատանքային պրոցեսներից, ինքնին յուրահատուկ արտացոլումներ են տվյալ սոցիալ-տնտեսական հարաբերությունների։

Հայկական լեռնաշխարհի մեզ հետաքրքրող դարերի արվեստի մեջ նկատվող էգեյա-միկենյան, հաթական, ասորա-բաբելոնական և այլ կուլտուրական տարրերի ներկայությունը ոչ թե լոկ ազդեցության հետևանք է, այլ գոյացել է կուլտուրական խաչաձևման պրոցեսով։ Առաջավոր Ասիայի հնագույն պատմական ասպարեզում գործող մի շարք ժողովուրդներ, ինչպես օրինակ՝ ասուրները, խալդերը, հայերը և այլք գոյացել են մի քանի էթնիկ տարրերի խաչաձևումով, որոնք հարանուն գաղթաշարժերի և նվաճողական առաջխաղացումների մթնոլորտի մեջ դարերի ընթացքում միաձուլվել են և ընդ նմին ներծծել են նախորդ բաղկացուցիչ էթնիկ տարրերի կուլտուրական գծերը։ Ահա այս հարաբերական առումով է մեզ ներկայանում ազդեցությունն ասած բանը, երբ խոսում ենք Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստի զարգացման մասին։

Գեղարվեստական արտադրությունները՝ թե՛ նկարչության, թե՛ քանդակագործության և թե՛ արձանագործության ձևերով գոյություն են ունեցել տակավին և՛ պալեոլիթի և՛ նեոլիթի դարերում (1, 160—162)։ Երբ վաղագույն մետաղե դարերում երևան են գալիս բրոնզե և ապա երկաթե գործիքները, գեղարվեստական տեխնիկան, մանավանդ քանդակագործությունն ու արձանագործությունը, կատարելագործվելով, սկսում է զարգանալ և տարածվել ավելի բազմակողմանի հանճարով։ Արվեստի բնագավառում տեխնիկական պրոցեսները և գեղագիտական կոնցեպցիաները թեև երկու տարբեր տարրեր են, սակայն նրանք սերտորեն կապված են իրար հետ։ Արվեստի տեխնիկան ամբողջովին պայմանավորված է արտադրական միջոցների զարգացմամբ, իսկ գեղարվեստական կոնցեպցիան ձևավորվում է արտադրական հարաբերությունների բնագավառում, հետևապես արտահայտում է այդ հարաբերությունների վրա հիմնված սոցիալ-հասարակական կյանքի հույզեր ու մտավոր արտացոլումները նյութական որոշ վերարտադրումներով։

Հայկական լեռնաշխարհի վաղագույն մետաղի արդյունագործության այն ճյուղերը, որտեղ դրսևորվել է հնագույն գեղարվեստը, ներկայացվում են հնագիտական հետախուզումների շնորհիվ հայտաբերված բազմաթիվ իրեղեն տվյալներով։ Կենցաղային զանազան պատկանելիքները, այն է՝ գործիքները, զարդարանքնե-



րը, անոթները, գլխավորապես կերամիկան, նմանապես մոնումենտալ կառույցները, որոնք թերևս 2—3 հազար տարի մեր թվականությունից առաջ են գոյացել, այսօր հնարավորություն են տալիս գաղափար կազմելու հնագույն զարգացած մի գեղարվեստի մասին և չափելու այն ժամանակվա կուլտուրայի մակարդակը։

Գեղարվեստի այն երանգը, որ պատկերացնել է գույների ու ներկերի համադրությամբ, այն է՝ նկարչությունը, շատ քիչ է ներկայացված մեզ հասած իրերում։ Նկարչական արտադրությունները մեզ չեն հասել թերևս այն պատճառով, որ գունավոր ներկերը հազարավոր տարիների ընթացքում, մանավանդ գետնի խորքերում, փոշիացել, անհետացել են։ Միայն որոշ չափով նա պահպանվել է կերամիկայի վրա։

Նկարչության ամենապրիմիտիվ ձևն եղել է այն, որ կերամիկայի վրա քերթած կամ որևէ սրածայր գործիքով գծված զարդանկարների փոսիկները լցնում էին սպիտակ ներկով (ծան.[65])։

Ներկերի տեխնիկան հայտնի էր տակավին պալեոլիթի մարդուն, որը գիտեր գունավոր նկարչությամբ զարդարել իր քարայրների պատերը (1, 184)։ Այդտեղ օգտագործում էին կարմիր, սև ու սպիտակ գույները, որոնց ներկերը հանքային բաղադրություններ էին — մանգան, մուր, օխրա, կիր և այլն — և լուծվում էին ջրի կամ յուղի մեջ։ Գունավոր նկարչությունը որոշ դարերում տիրապետող է եղել կերամիկայի զարդանկարներում։ Կերամիկական նկարչությունը կազմում է կուլտուրայի մի երկարաձիգ շղթա, որ տարածվում է միաժամանակ էգեյա-Միկենյան աշխարհից մինչև Միջագետքի ծայր հարավը և ապա Նեղոսի հովիտը, և հնագիտության մեջ ստացել է իր հատուկ ժամանակագրական անունը — գունազարդ կերամիկայի դարաշրջան։

Ամենահին ժամանակներից ի վեր ավելի հասարակաց և տարածուն էր քանդականկարը։ Սա իր զարգացման բարձր աստիճանին էր հասել վաղագույն մետաղե դարերում, երբ նախկին փայտե կամ ոսկրե գործիքների փոխարեն արվեստագետը հնարավորություն ունեցավ զարդանկարները հանել բրոնզե կամ երկաթե գործիքներով, որոնք, ավելի սուր և դիմացկուն լինելով, ընդունակ էին համեմատաբար խորը ու բազմազան նկարներ արտադրելու։

Զարդանկարներ կերտվում էին ոչ միայն կերամիկայի կամ քարի ու փայտի, այլև մետաղի, այն է՝ բրոնզի ու պղնձի վրա։

Քանդականկարները շատ անգամ լցնում էին հատուկ ներկով կամ փայլուն քարերով, մետաղով՝ արծաթով, երկաթով, բրոնզով, պղնձով, կապարով և այլն. մետաղները, գլխավորապես արծաթը, նկարազարդում էին թթվուտի միջոցով սևացնելով, որպիսի արվեստը մեզանում մինչև այժմ էլ գոյություն ունի սևադա անունով։

Գալով արձանագործությանը՝ պետք է ասել, որ նախահայկական նյութական կուլտուրայում նա առանձնապես երևում է վաղագույն մետաղի դարերում, երբ զարգանում է ձուլածո իրերի արվեստը։ Բրոնզե ձուլած մարդկային արձանիկներն ու կենդանական ֆիգուրները, համեմատած քարե կամ կավե արձանիկների հետ, ավելի մեծ տարածում ունեին, չնայած որ վերջին տեսակի արձանագործությունը գոյություն է ունեցել նաև նեոլիթի դարերում։

## II

## ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի վաղագույն մետաղի ժամանակաշրջանից մեզ հասած հնագիտական այն իրերը, որոնք վերաբերում են գեղարվեստին, եթե քննության առնենք զարդանկարչության (օրնամենտացիա) տեսակետից, լինի նա քանդակային կամ գունաներկի, պետք է բաժանենք զարդանկարների երկու խմբի — մեկը՝ երկրաչափական, իսկ մյուսը՝ կենդանական։

Երկրաչափական զարդանկարների մեջ հիմնական տարրերը հանդիսանում են՝ ա) փոս կամ ուռուցիկ կետեր, բ) ուղիղ, բեկյալ, ալիքավոր գծեր թե միապաղաղ և թե կետերով, գ) եռանկյուններ, քառանկյուններ, ռոմբեր, տրապեցիաներ և այլն, դ) բոլորակ շրջաններ, կիսաշրջաններ, պարույրներ, համակենտրոն շրջաններ։ Առաջին երեք տարրերն իրենց համադրական միացումներով կազմում են այսպես կոչված երիզային կերամիկայի զարդանկարը (էջ 129), իսկ չորրորդը կազմում է ծապավենային կերամիկայի զարդանկարը (էջ 130)։ Այնուհետև, վերոհիշյալների հետ միասին, հանդիպում են զանազան նշաններ՝ խաչի ու սվաստիկայի ձևերով, նմանապես երկրաչափական ձևով ոճավորված տերևների, ծառերի ճյուղերի ու ծաղիկների օրինակներ։

Երկրաչափական զարդանկարները գոյանում են կերամիկայի ծագման հետ միասին՝ նեոլիթի սկզբնական դարերից։



Բնական, իրենց նախնական աստիճաններում այդ նկարները եղել են չափազանց անպաճույճ ու պարզորակ, միանգամայն համապատասխանելով տեխնիկական այն պարզ միջոցներին, որոնք կիրառվում էին այս դեպքում։ Ամենանախնական զարդանկարները պետք է համարել նրանք, որ հնադարյան բրուտը կարողանում էր իր մատների ծայրերով կամ եղունգներով արտագրել կավե ամանների վրա՝ կավի դեռևս թաց վիճակում։ Այդ եղանակով դուրս էին բերվում փոս կետեր, փոսիկներ, ուղիղ կամ կոր գծեր։ Հետագայում արդեն ասեղն ու փայտե կամ ոսկրյա բիզի սուր ծայրով նկարվում են ավելի կանոնավոր գծեր, որոնք զանազան կոմբինացիաներով ստացվում են, սկզբներում անպաճույճ, իսկ հետագայում հետզհետե ավելի բարդ, երկրաչափական զարդանկարների ձևեր։ Այս զարդանկարները կատարելագործության բարձր աստիճանների են հասնում մետաղի սկզբնական դարերում, շնորհիվ տեխնիկական միջոցների զարգացման։

Երկրաչափական այդ զարդանկարների մեջ, նույնիսկ նրանց պրիմիտիվ տեսակներում, չպետք է որոնել արվեստի դիպվածական կամ ինքնաբուխ, կամայական կերպավորում, անհիմն երևակայության հղացում։ Ընդհակառակը, այստեղ նկատում ենք առանձնակի կյանքի ու կենցաղային հանգամանքների արտացոլումներ, կապված շրջապատող այն բնության հետ, որտեղ ընթանում էր մարդու արտադրական բովանդակ գործունեությունը։ Երկրաչափական զարդանկարների մեջ հնադարյան արվեստագետը գծերի միջոցով կերպավորել է իրական կյանքի զանազան երևույթները, որոնք առնչություն են ունեցել նրա գոյության հետ։

Մենք տեսնում ենք, թե ինչպես ցանցակերպ զարդանկարը, որ բաղկացած էր զուգահեռ ուղիղ զույգ գծերի միմյանց հատող հյուսվածքից, ոչ այլ ինչ է, եթե ոչ այն հյուսվածքը, որ ներկայացնում է ծառերի ճյուղերից գործված կողովը։ Կողովը, նախքան կավագործության գյուտը, շատ անգամ ներքուստ ծածկվում էր կավի ծեփով և դառնում էր յուրատեսակ մի աման, որի մեջ հնարավոր էր լինում կարճ ժամանակով պահել նույնիսկ հեղուկ նյութեր։ Երբ այդ հյուսված ճյուղերի փչանալուց կամ այրվելուց հետո մնում էր կավե անփչացած կաղապարը, վերջինիս վրա դրոշմված էր լինում նախկին ճյուղերի հյուսվածքը։ Նույնը պետք է ասել երիզային կամ ժապավենային զարդա-

նկարների մասին, որոնք սկզբնապես բնականորեն արտացոլվում էին, երբ անոթը կամ ամանը կախվում էր կամ ամրացվում օղակաձև կապված պարանով կամ գայթանով:

Այն լեռների ու ձորերի ուրվագծերը, որոնց նախապատմական մարդն արածեցնում էր անասունների փոքրաթիվ հոտերը կամ մշակում էր քարի ու մետաղի հանքերը, իրենց արտահայտությունը գտնում էին կորաձև գծերում: Նույն լեռների գագաթները տալիս էին եռանկյուններ՝ սուր ծայրով դեպի վեր: Գետերի ալեծածան հոսանքը պատկերվում էր մի շարք զուգահեռ ալիքավոր գծերով, իսկ արեգակն ու լուսինը տալիս էին բոլորակ շրջանի կառուցվածքներ:

Նույնն էր նաև կենդանական ու բուսական աշխարհը, որի հետ կապված էր մարդու գոյությունը: Ձուկն իր արտահայտությունը գտնում էր փշերով, անասուններն ու գազանները՝ իրենց ատամներով[90], օձն իր սողուն դրությամբ՝ օձապտույտ կամ ալիքավոր ատամնային գծերով, իսկ կծկված վիճակում՝ պարուրաձև նկարով:

Ծառերն անդրադարձվել են ուղղահայաց գծերով, որոնց երկու կողմերում անկյուններ են կազմում փոքրիկ թեք գծեր. տերևներն ու ծաղիկները ճյուղի վրա ձևակերպվում էին այսպես կոչված պալմետներով՝ արմավենիներով ու ռոզետներով՝ վարդյակներով:

Կենցաղային պարագաները նույնպես տեղ էին գտնում այդ զարդանախշով կերպարվեստում: Բաժակաձևերը, ամբերը, սրապեցիկները թերևս ներկայացնում էին մարդու բնակարանը կամ խրամատով պաշտպանված բնակայանը, նաև դաշտն ու արտը. եռանկյունը՝ գագաթով դեպի վայր՝ ներկայացնում էր այն գոգնոցը, որով մի ժամանակ ծածկվում էր մարդու մերկությունն առջևից[91]:

Այսպես է ընկալվում իրականությունը հնագույն մարդու արվեստի մեջ, ուր գծերը, վերածվելով երկրաչափական նկարների, դառնում են յուրահատուկ ձևի գաղափարախոսական արտահայտություններ: Այստեղ անշուշտ պահպանվել է նախատրամաբանական մտածողությունը, որով մասնիկը փոխարինում էր ամբողջին կամ նմանը գոյացնում էր նմանը (I, 278):

Ահա այդ երկրաչափական առանձին նկարները դառնում են այն բաղկացուցիչ հիմնական տարրերը, որոնցից հնագույն արվեստագետը զանազան համադրական միացումներով կազմում



էր բազմատեսակ զարդանկարներ (օրնամենտներ) և դրսևորում իր գեղարվեստական կոմպոզիցիան: Այդ զարդանկարները թե առանձնակի տարրերով և թե երկդավոր կամ ժապավենային համադրությամբ ծածկում էին գործիքներն ու զենքերը, կերամիկան ու կենցաղային պարագաները, նմանապես շենքերի և կառուցվածքների զանազան մասերը: Այդ զարդանկարներն իրենց հիմնական գծերով զարմանալի նմանությամբ, եթե չասենք նույնությամբ, երևում են գրեթե բոլոր հնավայրերում:

Ռեդկին-Լագերի, Նոր-Բայազետի, Արարատյան դաշտի, Զանգեզուրի, Շուշու գավառների, Լոռու, Դիլիջանի, Շիրակի և այլ վայրերի բրոնզե ու վաղ երկաթե դարերի պեղածո իրերի երկրաչափական զարդանկարները՝ թե կավե ամանների, թե դաշույնի երախակալների, թե զարդարանքների և թե կենցաղային պարագաների՝ աչքի են ընկնում իրենց հիմնական գծերի հար ու նմանությամբ: Այդպիսի նմանություններ երևան են գալիս նաև Հյուսիսային Կովկասի պեղածոներում, օրինակ՝ Կոբանում, Կամունտայում, Մայկոպում, ինչպես նաև Վրաստանում՝ Սամթավրոյի, Մցխեթի և այլ պեղածոներում: Եթե ավելի հեռուները գնանք, կտեսնենք, որ Արևմտյան Եվրոպայի (Գերմանիայի, Բալկանյան երկրների) և Միջերկրածովյան երկրներում, ինչպես և Միջագետքում ու Փոքր-Ասիայում տակավին նեոլիթյան ժամանակաշրջանի կերամիկայի զարդանկարները նույն այդ տեսակներն ունեն, հաճախ ավելի նուրբ ու ճաշակավոր կատարված:

Այստեղ խոսք չի կարող լինել մեքենական ընդօրինակման կամ բացառապես մեկի՝ մյուսի վրա ունեցած ազդեցության մասին: Այստեղ տեսնում ենք այն սոցիոլոգիական օրենքի երևույթը, որ համանիշ պայմաններում տարբեր աշխարհագրական վայրերում գոյանում են նման հետևանքներ, որոնք հետագայում կարող են տարածում գտնել, միաձուլվել և համանմանություն ստանալ այլ վայրերի ժողովուրդների հետ, խաչաձևվելով գաղթաշարժերի և նվաճումների ճանապարհներով:

Այսու հանդերձ՝ չպետք է կարծել, թե այդ երկրաչափական զարդանկարները քարացած ու միապաղաղ կրկնությամբ գոյություն էին պահպանում արվեստի բոլոր բնագավառներում: Ընդհակառակը, կուլտուրայի հարաճուն զարգացման հետ, նրանք էլ զարգանում և ստանում էին բազմազան ձևեր, որոնք հիմնականում շարունակում էին բաղկանալ սկզբնական տարրեր կազմող

նկարներից, բայց արվեստագետի հանճարն ու շնորհքը կարողանում էին ստեղծագործել նրանցից գեղարվեստի այնպիսի արտագրություններ, որոնց գեղեցկությունը, թարմությունը, կերտվածքի կենսականությունն իրենց արժեքը պահպանում են մինչև մեր օրերը։

Այդ զարդանկարներն ամենից շատ և ցայտուն դրսևորվել են կավե ամանների վրա, ուստի նրանց նկարագիրը չենք տալիս այստեղ, քանի որ այդ արել ենք նախորդ գլխում և առաջ ենք բերել համապատասխան պատկերներ։ Սակայն կասենք, որ կերամիկայի կատարելագործման հետ միասին, այդ զարդանկարները ոչ միայն զարգանում և նրբանում էին, ստանալով գեղարվեստական զանազան կոնցեպցիաներ՝ նյութական կուլտուրայի զարգացմանը զուգահեռ, այլև անցնում էին կենցաղային զանազան իրերի, որոնք հարկ էր զգացվում զարդարել պաճուճանկարներով։

Այդ տեսակետից առաջին տեղը գրավում են բրոնզե գոտիները, որոնց մի մասը զարդարված է բացառապես երկրաչափական նկարներով։ Այդ զարդանկարների մեջ պահպանվել են նույն տեսագծերը, որոնց մասին խոսք եղավ վերը։ Այստեղ եզերող ժապավեններով փորագրված են եռանկյունների, քառանկյունների, ռոմբերի, պարույրների և կեռերի շարաններ, պարփակված ուղիղ, ալիքավոր, բեկյալ, փշաձև ու կետավոր ատամգծերի կամ երիզային հյուսվածքների միջև։ Հիշյալ գոտիների վրա փորագրված ռոմբերը, ինչպես օրինակ՝ Ղալաքենդում Իվանովսկու հայտնաբերած գոտու վրա, կազմված են պարուրաձև զարդանկարների համադրությամբ և, կրկնելով էգեյան զարդանկարի տեսագիծը, նման է հաթթական համապատասխան զարդանկարներին, որոնք հանդիպում են գլան-կնիքների վրա, կամ այն երիզաձև հյուսվածքներին, որոնք սովորական երևույթ են նմանատիպ հաթթական գլանների ու ժայռաքանդակների վրա։

Այդ նույն զարդանկարները փորագրված են Նոր-Բայազետի շրջանում բրոնզեդարյան դամբանից հանված իշխանական սայլի վրա, որպիսի հանգամանքը ենթադրել է տալիս, որ սովորություն է եղել կառասայլերի որոշ մասերը զարդարել օրնամենտներով։ Այդ սայլի թևերը, ինչպես տեսնում ենք նկարներից, ծածկված են մեծ մասամբ պարուրաձև երիզների ու մանր քառակուսիներից, իրար մեջ համակենտրոն պարփակված եռանկյունների, բոլորակի շրջանակների և այլ երկրաչափական ձևերի զարդանկարներով։ Մեծ նմանություն կգտնենք, եթե



համեմատության առնենք Ախթալայի կերամիկական խեցու և այդ սայլի վրա քանդակված քառակուսաձև զարդանկարները։

Նույնանման զարդանկարներով են ոճավորված այն ծոփորները (ֆրիզները), որոնք հայտաբերվել են հին, գլխավորապես խաղդական շենքերի որմերի վրա, ինչպես օրինակ՝ Թոփրակ-կալեում, ակադեմիկոս Ն. Մառի (1912 թ.) և ավելի առաջ էլ՝ Լեման-Հաուպտի ու Վ. Բելքի հնագիտական հետախուզումների շնորհիվ։ Այդ ծոփորների մեջ նկարված ռոմբերը նույնանման պատկերն են ներկայացնում, ինչ որ Ղալաքենդի գոտունը, բայց ավելի նուրբ ու կատարելագործ արվեստով։

Ահա այդ երկրաչափական զարդանկարների տեսագծերը հետագա զարգացումով պահպանվել են նաև հին հայկական ճարտարապետության ու քանդակագործության զարդանկարներում։ Այդ տեսնում ենք Մուշի Առաքելոց ու Սևանի վանքերի ճոխ քանդակազարդեր կրող դռների վրա[13], այդ զարդանկարները սովորական են հայկական միջնադարյան մոնումենտալ շենքերի որմերի վրա (ինչպես օրինակ՝ հայտաբերվել են Անիի ավերակներում), նաև հին հայկական թագավորական խույրերի երիզավոր զարդարանքներում։

## III

## ԽԱՉ ՈՒ ՍՎԱՍՏԻԿԱ

Երկրաչափական զարդանկարների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն խաչի ու սվաստիկայի նկարները, որոնք բավական հաճախ են երևում հնագույն արվեստի մեջ։

Հայկական լեռնաշխարհի հնագիտական մի շարք պեղածոների վրա, այն է՝ բրոնզե գոտիների, կավե անոթների և իբրև զարդարանք ծառայող մեդալյոնների զարդանկարներում գտնում ենք խաչի նկարներ։ Երբեմն էլ մանրիկ խաչերի շարան էր հորինվում, որն իբրև ժապավեն զարդարում էր զգեստների քղանցքները կամ շենքերի որմերի ծոփորները։ Այդ կողմից հետաքրքիր են Ժակ Մորգանի հայտնաբերումները Լալվարի (Լոռի) պեղումներից, որոնք վերաբերում են բրոնզեդարյան վերջին շրջանին։ Արդյոք այստեղ խաչը հանդես է գալիս իբրև սոսկ զարդանկարային տեսագիծ, թե խորհրդավոր նշանակ։ Այս

հարցին դժվար է պատասխանել, քանի որ ամենանախնական խաչը, ամենայն հավանականությամբ, ծագել է որպես սոսկ զարդանկար, այն էլ երկրաչափական: Նա գոյացել է երկու ուղիղ, հորիզոնական և ուղղահայաց գծերի հատումով և, սկզբում, անշուշտ, ոչ մի խորհրդավոր նշանակություն կամ գաղափար չի պարունակել:

Հիրավի, խաչի ձևերը, ինչպես վկայում են հնագիտական տվյալները, գոյություն են ունեցել տակավին քարեդարյան նկարներում մեջ: Խաչի նկար գտնվել է Բրեզիում (Ֆրանսիայում, Մենի և Լուարայի մարզերում) հայտաբերված դամբարանների սալաքարերի վրա, Բուրժե լճի պալաֆիտներում (ցցավոր շենքեր) գտնված կավե ամանների վրա և այլն, որոնք նեոլիթյան հնագույն ժամանակաշրջանից են: Խաչի նկարներն ավելի հաճախակաց են դառնում վաղագույն մետաղե դարերում՝ թե կենցաղային պարագաների համար (ամաններ, զգեստներ, զարդարանքներ և այլն) և թե մանավանդ արդեն իբրև խորհրդանիշ, մոգական տարր:

Եգիպտական հնագույն թագավորները, ինչպես ակներև է հնագիտական պատկերներից, կրծքին կամ վզին կրում էին բրոնզե խաչեր, իբրև աստվածային նշան. Նմանապես խաչերով էին զարդարված նրանց զգեստները: Հին եգիպտական աստվածներ՝ Ռա, Հորուս և Իզիս նկարվում էին խաչով: Հին Հռոմում վեստալուհիները (կույս-քրմուհիները), որոնք տաճարներում պահպանում էին անշեջ կրակը, իրենց վզին կրում էին խաչ: Հին հռոմեական զինվորների զենքերի վրա նկարված էին լինում խաչեր: Վերջապես, հին հունական, հռոմեական, եգիպտական, փյունիկյան, փոքրասիական (Միհրդատ) դրամների վրա դրոշմված էին լինում խաչեր: Խաչի համատարած լինելու մասին կարելի էր աշխարհի շրջաններից բազմաթիվ այլ օրինակներ հիշատակել:

Իր սկզբնական շրջանում խաչը, ինչպես տեսանք, ծառայում էր որպես զարդ: Հետագայում միայն, երբ սկիզբ է առնում կրակի և ապա արևի պաշտամունքը, խաչը դառնում է խորհրդավոր նշանակ, մոգական միջոց և այնուհետև՝ կրոնական պատկանելիք տակավին հարյուրավոր տարիներ քրիստոնեությունից առաջ[93]:

Հիրավի, խաչի գաղափարը սերտ աղերս է ստանում կրակն արհեստականորեն գոյացնելու գործողության հետ: Երկու խաչաձև փայտերն իրար քսելով միենույն կենտրոնում, տաքացնում էին անհրաժեշտ կրակը: Եվ ահա երկու խաչաձև գծերը այլաբանորեն պատկերացնում էին այն երկու փայտե ձողիկները (arani), որոնք խորը հնում հնդիկների մեջ գործածվում էին կրակ արտադրելու համար[94]: Ուրեմն խաչի կրոնա-պաշտամունքային նշանակությունն իր ծագումով առաջանում է սոցիալ-տնտեսական նախադրյալներից:

Սակայն բրոնզե դարերից սկսած՝ խաչը խորհրդավոր ու միստիկ նշանակություն է ստանում մի այլ ձևով: Դա սվաստիկան է, այսինքն նույն խաչը, որ 4 թևերի բոլոր ծայրերը ուղիղ անկյունով ծալված են դեպի աջ, կամ դեպի ձախ[95]: Ահա այդ սվաստիկայի նկարները գտնում ենք նաև Հայկական լեռնաշխարհի պեղումների շնորհիվ: Երվ. Լալայանը Զանգեզուրի հնագույն դամբարաններում (Սիսիանի շրջան) գտել է երկու հատ բրոնզե փոքրիկ սվաստիկա՝ թաղված կմախքների կրծքի վրայից: Այդ երկու սվաստիկաներն էլ միանման են, յուրաքանչյուրի թևի երկարությունն է 4 սմ., լայնությունը՝ 1 սմ., կորացված մասը՝ 1 սմ.:

Սվաստիկայի նկարներ է հայտաբերել Ժակ Մորգանը Ենիթափ-դաղի ու Ախթալայի դամբանների պեղածոների վրա: Այդ նկարներից երկուսը փորագրված են գնդասեղի գլուխների վրա, իսկ երրորդը՝ կավե մի թասի հատակին: Նմանապես Բեռլեի պեղումները Բանանց (Բայան) գյուղի (Գանձակի գավառ) մոտերքում դամբանից հանված կավե ամանի վրա նկարված է սվաստիկա:

Սվաստիկաներ նկատելի են նաև Ղալաքենդի ու Գետաբեկի պեղումներով հայտաբերված բրոնզե գոտիների վրա: Հիշենք նաև Հայկական լեռնաշխարհի հարևան Հյուսիսային Կովկասում Կոբանի պեղումներից հանված բրոնզե գոտու վրա նկարված սվաստիկան:

Վերը բերված օրինակները սվաստիկայի ամենապարզ ու տարրական ձևերն են, որոնք ներկայումս էլ գործածական են մի քանի ժողովուրդների մեջ[96]: Սակայն սվաստիկան մըշտապես չի պահպանել իր այդ պարզ ձևը: Նա ենթարկվել է ձևափոխությունների, ստանալով ավելի բարդ տեսք, որ, անշուշտ, ավելի հետնագույն ժամանակի երևույթ է և ներկայացնում է արվեստի զարգացման հետագա աստիճանները: Այսօրինակ բարդ ձևերում մի քանի սվաստիկաների ծայրերն ուղիղ անկյունով հաջորդաբար ծալված են մի քանի անգամ: Մի քա-

նիանների միջնադարյան անկյուններում կամ ծայրերի շուրջը կեռեր են նկարված. ուրիշներն էլ կորածայր են՝ միալար կամ բազմոլոր. կան նաև եռաճանկ, քառանյա ու բազմաճանկ թևերով. կան և այնպիսիները, որոնք իրենց խաչաձևման կենտրոնում ունեն մի շրջանակ կամ սկավառակ։ Այդպիսի բարդ սվաստիկայի մի ձև գտնվել է Անիի պարիսպների վրա։

Սվաստիկայի բազմաթիվ օրինակներ հայտնաբերվել են Փոքր-Ասիայի, միջերկրածովյան կղզիների, Բալկանյան թերակղզու, Իտալիայի հնավայրերում հանված կավե ամանների, բրոնզե զարդարանքների, արձանիկների վրա և այլն։

Ի՞նչ էր ներկայացնում սվաստիկան։ Սվաստիկայի ձևն իրապես այն խաչաձև ձողիկների (arani) հետագայում կատարելագործված եղանակն է, որով սրբազան կրակ էին հանում հնդկական քրմերը Ագնի աստծու պաշտամունքի ազերում։ Դա փայտե խաչաձև մի գործիք էր, որը դյուրին էր կեռացրած ուղղանկյուն ծայրերի միջոցով պտտեցնել աջ ուղղությամբ, որպիսի եղանակը, անտարակույս, մեծ արագություն ու հարմարություն էր ընձեռում կրակ հանելու համար։ Այս տեսակետից սվաստիկան առնում է կրոնական նշանակություն. նա դառնում է խորհրդավոր նշանակ, որ առնչություն ունի կրակի ու արևի պաշտամունքի հետ։ Եվ որովհետև արևի աստվածը կյանքի ու պտղաբերության աղբյուրն էր, սվաստիկան էլ դառնում է պտղաբերության ու ծննդաբերության խորհրդանիշը, կյանքի էմբլեմը, լույսի և գալարծուն փայլակի կերպացումը։ Ահա թե ինչու հնդկական աստվածուհի Մայան պատկերացվում էր սվաստիկայով իր իգանդամի վրա։ Նմանապես էին պաշտվում փոքր-ասիական Նանա, Կյուբելա, Աստարտե, հին հունական Դեմետրե՝ մայրության, պտղաբերության ու արգասավորության և այլ աստվածուհիները։

Այսպիսով՝ երկրաչափական այն զարդանկարները, որոնք ունեն խաչի և սրանից վերափոխված սվաստիկայի ձևեր, առնում են խորհրդավոր ու միստիկ նշանակություն, որը հետագայում՝ կրոնական կյանքի մեջ վեր է ածվում պաշտամունքային նշանակի, մեկնակետ ունենալով կրակի հրավառվելը, կրակի, որն այնքան մեծ դեր է խաղում մարդկային կենցաղում և նախագործն է հանդիսանում մարդու տնտեսական գործունեության մեջ։



IV

# ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐՆԵՐ

Կենդանական զարդանկարները, համեմատությամբ երկրաչափականի, ավելի սակավաթիվ են, մանավանդ կերամիկայի վրա։ Կենդանական զարդանկարների մեջ նկատում ենք երկու տեսակ կերպարվեստ, այն է՝ բնական և այլ ֆանտաստիկ կենդանիների նկարներ։ Ըստ ժամանակագրության և ըստ հնության կենդանական զարդանկարների մեջ սկզբներում ներկայացվել են բնականից վերցրած օրինակներ և ապա հետագայում այդ կենդանիների ֆիգուրները արվեստագետի ձեռքի տակ ստացել են ֆանտաստիկ ձևեր, որոնք հետզհետե ոճավորվել են այն աստիճան, որ կենդանիների պատկերները նմանվում էին երկրաչափական գծերով։

Մենք արդեն տեսանք, որ կերամիկայի վրա կենդանական զարդանկարները, որոնք սովորաբար սակավադեպ են, լինում են խորագրված կամ քարթած և կամ գունաներկով նկարված։ Գեղարվեստական տեսակետից այդ խորագրված կենդանական զարդանկարները մեծ մասամբ կոպիտ ու անպաճույճ են։ Ընդհակառակը, ներկերով արտահայտված կենդանական զարդանկարները համեմատաբար ավելի նրբին են ու ճաշակավոր, ուր նկատելի է արվեստագետի շնորհքն ու ստեղծագործական ունակությունը։

Կենդանական զարդանկարները երբեք չենք տեսնում առանձնակի և ինքնուրույն ներկայացված. նրանք միշտ միացած են լինում երկրաչափական զարդանկարների հետ, որոնք կազմում են յուրատեսակ շրջանակներ կամ երիզներ, որոնց մեջ ամփոփված են լինում կենդանական նկարները։ Այդպիսի կենդանական նկարներ հանդիպում են գլխավորապես Գանձակի գավառի (Հելենենդորֆ, Բանանց կամ Բոյան, Շամքոր) և Ղարաբաղի (Շուշի-Խոջալու) կերամիկական ամանների վրա։ Կենդանիներն այդ զարդանկարներում ներկայացված են ուրվագծերով (կոնտուրներով), որոնց միջի տարածությունը ծածկված է կետերով։ Այդ խորագրված նկարները պատկերացնում են մեծ մասամբ այծյամներ ու եղջերուներ, որոնք բնական են մեր լեռնաշխարհում, մի դեպքում էլ՝ շուն և այլն։ Այդ նկարներում կենդանիները դուրս են բերված մի մասը բնական, իսկ մյուս մասը ֆանտաստիկ կամ ոճավորված տեսքով։ Կենդանիները պատ-

Նկարված են հանգիստ վիճակում կամ ցատկելիս ու քայլելիս. վերջին դիրքերն ավելի հաճախակի են հանդիպում։

Գունավոր նկարներով, այն է՝ սև, շագանակագույն, մոխրագույն, կապտավուն կենդանական պատկերներ հանդիպում են մինչև այժմ հայտաբերված բրուտե ամանների վրա միմիայն Կարմիր-վանքի, Օրդուբադի, Թազաքենդի, Աստապատի և Թոփրակ-կալեի օրինակներում, որոնց մասին խոսել ենք վերը (էջ 134—135)։ Այդ նկարների կոմպոզիցիան միակն է Հայկական լեռնաշխարհի կենդանական պատկերների մեջ և ցարդ չի ունեցել իր նմանը մեր մյուս բազմաթիվ պեղածո կերամիկայի շարքերում։

Կարմիր-վանքի կենդանական պատկերները ներկայացված են կավե ամանի փորի վրայով բոլորվող ժապավենի, բաղկացած ուղիղ գծերից և վրան կցված եռանկյունիներից. այդ ժապավենի մեջ նկարված է միաշարան իրար հետևից ընթացող կարապներ կամ այծյամներ։ Իսկ Թոփրակ-կալեի կավե ամանի կենդանական պատկերը նույնպես բաղկացած է անոթի փորը բոլորող ժապավենից, որտեղ քայլող թռչունների շարան է ներկայացված։ Այս պատկերների աչքի ընկնող բնորոշ գիծն այն է, որ նրանք միանգամայն զերծ են որևէ ոճավորումից և գեղարվեստական վերարտադրությամբ ու նուրբ ճաշակով հարազատորեն ընդօրինակված են բնությունից։ Այստեղ չկան կարկամած ձևեր ու պայմանական կերպավորումներ, այլ անմիջապես ներկայացվում է իրական կյանքը, որտեղ այծյամներն ու եղջերուները կենդանացնում են լեռնային բնությունը, իսկ կարապները խոսել են տալիս ջրային տարերքի՝ գետերի ու լճերի մասին։

Սակայն կենդանական զարդանկարներն ավելի հաճախ են երևում և հարուստ են բրոնզե իրերի վրա, գլխավորապես գոտիների երեսներին։ Եվ այդ հասկանալի է։ Բրոնզե իրերը՝ գոտիները, գնդասեղները, ճարմանդները և այլն ծառայում էին իբրև զարդարանք և անշուշտ, էսթետիկ գոհացում պետք է տային կենցաղային պահանջներին, իսկ մյուս կողմից՝ մետաղի վրա անհամեմատ դյուրին էր փորագրել ցանկալի և բազմազան զարդանկարներ, որոնք ավելի ճկուն և դիմացկուն էին, քան փխրուն կերամիկայի նկարները։ Ուստի նյութական կուլտուրայի տեսակետից կարևոր նշանակություն են ստանում բրոնզե գոտիների զարդանկարները։



Կենդանական զարդանկարները գոտիների վրա սովորաբար զետեղված են լինում միջին տարածության երկարությամբ, և վերից ու վարից եզերվում են երբեմն զուգահեռ ուղիղ կամ ալիքավոր կամ եռանկյունաձև և այլ ձևի գծերով, երբեմն էլ երկրաչափական զարդանկարների շարաններ։ Մի խոսքով՝ կենդանական զարդանկարները պարփակված են լինում երկրաչափական զարդանկարներից հյուսված շրջանակների մեջ. ստացվում է յուրատեսակ ծածկոց՝ կենդանական տեսագծերով։ Այդ զարդանկարների մեջ նկատվում են բնորոշ ընդհանուր գծեր, որոնք հատուկ են մեր բրոնզե գոտիներին. գծեր, որոնցով նրանք հակադրվում են տարբերվում Հյուսիսային Կովկասի (Կոբանի) կամ Հարավային Ռուսաստանի (Կիևի նահանգում հայտաբերված) բրոնզե գոտիներից։ Այնուհանդերձ՝ հարկ է նշել, որ մեր բրոնզե գոտիների ամեն մեկի զարդանկարն առանձին վերցրած՝ պարունակում է միայն իրեն պատկանող մասնակի հատկություններ։ Յուրաքանչյուր գոտու վրա արտահայտվել է նկարող արվեստագետի անհատականությունը, և այս տեսակետից երբեք չենք նկատի, որ բրոնզե գոտիների զարդանկարները լինեն սոսկ ընդօրինակումներ կամ փոխադարձ պատճեններ ու կրկնումներ։ Այդ արվեստագետների մեջ նկատվում է մշտական մի ձգտում՝ գոտիների կենդանական զարդանկարներում վերարտադրել ոչ թե իրական, այլ ֆանտաստիկ կենդանիների կերպարանքներ, որոնք գերակշռող ու բնորոշ տեսագծերն են հանդիսանում այդ արվեստի մեջ։

Սակայն հիշյալ զարդանկարների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կենդանական նկարները, իրենց զարդագծման ընթացքում ներկայացրել են սկզբում ոչ թե ֆանտաստիկ, այլ իրական կենդանիների պատկերներ։ Հիրավի, մենք տեսնում ենք գոտիներ, որոնց վրա արվեստագետը ձգտել է հարազատորեն արտահայտել, թեև երբեմն կոպիտ ու անտաշ գծերով, կենդանիների պատկերները բնական դիրքերում, մանավանդ, երբ նկարվել են կենցաղային զանազան տեսարաններ։ Անտարակույս, այս տեսակ գոտիները, նայած իրենց արվեստի պարզությանն ու անմիջական նախնականությանը, պետք է համարել ժամանակագրական տեսակետից ամենահին օրինակները։

Նոր-Բայազետի, Ախթալայի, Մուսի-երիի, Գետաբեկի գոտիների կենդանիները նկարված են բնականությանը հարազատ մնալու ձգտումով, թեև որոշ պայմանական գծերով։ Այդ հարա-

պատմությունը ներդաշնակվում է ներկայացված կենդանական, գլխավորապես որսորդական տեսարաններով: Նոր-Բայազետի շրջանի դամբաններից մեկում հայտնաբերված բրոնզե գոտին պատկերացնում է նետաձիգ որսորդ, որի առջևից ընթանում են 2 ձի՝ լծված. ըստ երևույթին, որսորդը կանգնած է կառասայլակի վրա, որը սակայն չի նկարված: Ձիերը, թեև կողքից են ցույց տրված, բայց չեն ներկայացնում ֆանտաստիկ կերպարանք: Նույնը պետք է ասենք Ախթալայի գոտու մասին, որտեղ հեռավոր որսորդն իր նետն ուղղել է դեպի որսացու եղջերուն և այծյամը, որոնք ներկայացված են բնականությամբ: Դժբախտաբար այս գոտին փշրված է և պարզ չէ, թե ինչ նպատակի են ծառայում որսորդի հետևից ընթացող եղները, որոնց իրանի միայն առաջին մասն է պահպանվել:

Վերոհիշյալ գոտիների վրա տեսնում ենք կենդանական աշխարհի մի ամբողջ շարք ներկայացուցիչներ՝ իրենց բնական տեսքով: Օրինակ՝ Մուսի-Լեռի գոտու վրա նկարված են՝ գայլը հարձակողական դիրքում, հովվական շունը հաչելիս, եղջերուն ցատկելիս, այծյամ, զանազան թռչուններ, որոնց մեջ աչքի են ընկնում արծիվներն ու բադերը. բադերից մեկը վայրի է, իսկ մյուսը՝ ընտանեցրած՝ հատկապես որսորդական նպատակով, վերջապես սողացող օձը: Այս բոլոր վայրի կենդանիները, ինչպես հայտնի է, համատարած են Հայկական լեռնաշխարհում: Ձին առավելապես նկարված է կամ կառքին լծված, կամ վզից պարան գցած:

Բնորոշ մանրամասնությունը, որ անպայման կրկնվում է բոլոր կենդանական պատկերների մեջ, կազմում են զարդանկարման (օրնամենտիկայի) պայմանական տեսագիծը. կենդանիների իրանը, այն է, մարմինը նկարված է անկյունավոր բեկ-բեկ շտրիխներով, իսկ ոտները, գունչը, եղջյուրները, պոչը, այսինքն մարմնից ազատ մասերը նկարված են կետերով: Այդ պայմանական տեսագծերը, ինչպես ճիշտ նկատում է Բ. Վ. Ֆարմակովսկին (ФАР, 41), իր նմանությունը գտնում է այն ծածկոցների զարդանկարման մեջ, որոնք պատկերացված են եգիպտական նկարներում վերարտադրված հաթական ձիերի վրա: Մետաղե թեփով ու թեթեղիկներով զարդանկարած ծածկոցները, որոնք անշուշտ պաշտպանում էին թշնամու նետերից, մենք տեսնում ենք ձիերի վրա նաև հաթական քանդականկարներում: Ուստի պետք է կարծել,



որ եգիպտացիներն իրենց նկարներում բավական ճիշտ էին վերարտադրել հաթական ձիերի սարքը: Հավանորեն հաթական ձիերի ծածկոցների այդ զարդանկարման մեջ պետք է որոնել մեր նկարագրած գոտիների վրա ներկայացրած կենդանիների իրանի այդ պայմանական տեսագծերով նկարելու սկզբնավորությունը: Ձիերի պատկերների այդ տեսագիծը (թերևս նախնական արվեստագետին անհասկանալի) ամենայն դյուրությամբ կարող էր փոխանցվել նաև մյուս կենդանիների նկարներին (էջ 77):

Սակայն, ինչպես վերը նշել ենք, գոտիների վրա բնական կենդանական նկարների հետ միասին ներկայացված են նաև ֆանտաստիկ կենդանիներ: Այդպիսի կենդանական զարդանկարներով են փորագրված Ղալաքենդի, Խոջալուի, Շիրակի և այլ գոտիները: Հիշյալ նկարներում տեսնում ենք երկգլխանի կենդանիներ. մի քանի կենդանիների պոչերը վերջանում են սրանկյուն տերևիկներով կամ օձի գլուխներով, գլուխները անհամատեղելի եղջյուրներով, ոտները՝ արծվառյուծի (գրիֆոն) գլուխներով և այլն: Այստեղ գեղարվեստական կոմպոզիցիան ձգտում է զարդանկարների մեջ կենդանին ներկայացնել ոչ թե իբրև այդպիսին, որ շնչում, շարժվում է և իրականապես գոյություն ունի բնության մեջ, այլ ձգտում է կենդանու պատկերը ծառայեցնել սոսկ զարդանկարային (օրնամենտային) նպատակներին, թեկուզ բռնադատելով, խեղաթյուրելով կենդանու բնությունը և տալով նրան տարօրինակ կերպարանք ու անբնական դիրք:

Այդպիսի կենդանական զարդանկարը գտնում է յուրահատուկ ոճային ձևավորում, որը տիրապետում է արվեստի զանազան ճյուղերում արխայիկ աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների մեջ և պատմագիտական գրականության մեջ հորջորջվում է սկյութական գազանային ոճ անունով: Այդ անունը ներկայումս պայմանական նշանակություն ունի, քանի որ վերջին ժամանակները մի շարք համեմատական ուսումնասիրությունների ու հնագիտական հետախուզումների հիման վրա ապացուցված է, որ դա ինքնուրույն, առանձնահատուկ սկյութական ոճ չէ, ինչպես առաջներում այդ վերագրում էին սկյութներին, որոնք իբր թե, Հարավային Ռուսաստան ներգաղթելիս՝ այդ ոճն իրենց հետ բերել են Միջին Ասիայից, ուստի և այդ ոճն այլապես անվանում են նաև ուրալա-ալթայան:

Կենդանական զարդանկարները հասարակաց էին դեռևս բա-

ղեկավարության, մանավանդ նրա վերջին դարերում։ Կենդանական ոճը զարգացած էր շատ ավելի հնում, քան թե Սկյութիայում. նա ծաղկում էր տակավին Էլամում, Եգիպտոսում, Ասորա-Բաբելոնում և հաթական ժողովուրդների մեջ՝ Փոքր ու Առաջավոր Ասիայում։ Անտարակույս, նաև սկյութներն իրենց նախնական շրջանում կունենային այդ կենդանական ոճը, բայց պրիմիտիվ ու կոպիտ ձևերով, որոնք չէին կարող ունենալ գեղարվեստական բնույթ. և նրանք այդ կենդանական նկարչությունը կենդանական Ասիայից բերին Ռուսաստանի հարավային տափաստանները։ Սակայն այդ կենդանական ոճը սկյութների մեջ արվեստի բարձր զարգացման հասավ միայն VI դարից (նախքան մեր թվականությունը) սկսած, երբ այժմյան Ռուսաստանի հարավում՝ Պոնտական երկրներում (Սև ծովի) հիմնվեցին հունական գաղութներ, որոնք իրենց հետ Իոնիայից (Փոքր-Ասիայի ծովեզերքում) բերին սեփական, զարգացած կուլտուրան և արմատներ գցեցին Սկյութիայում, Բոսփորյան թագավորության մեջ, որտեղ ամենամեծ կուլտուրական կենտրոններ էին այնպիսի քաղաքներ, ինչպես՝ Օլվիան (ներկայիս Օդեսայի մոտերքը), Պանտիկապեա, Խերսոնես, Թեոդոսիա, Ֆանագորիա, Տանայիս։ Իոնիական գեղարվեստը, որ ներգործում էր կենդանական ոճը, որպես գեղարվեստական տարր, դարձավ սկյութական կենդանական ոճի նախադրյալը, կենդանական զարդանկարային կոմպոզիցիայի հիմքը՝ իր ֆանտաստիկ պատկերներով։

Հետևապես՝ Հայոց լեռնաշխարհի և Կովկասի զարդանկարների մեջ գոյություն ունեցող կենդանական ոճը բնավ չի կարելի վերագրել «սկյութական կենդանական ոճի» հետ որևէ աղերսակցություն կամ, առավել ևս, նրա «ազդեցությանը»։ Եթե սկյութները եղել են Կովկասում և Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մարզերում, ապա նրանց ամենավերջին այդ արշավանքները տեղի են ունեցել 7-րդ դարում մեր թվականությունից առաջ, երբ սկյութական կուլտուրան տակավին բարբարոսական էր ու համապատասխանում էր նրանց նոմադական կենցաղին. այդ կուլտուրան դեռևս չէր ծծել իր մեջ հին հելլենիստական, գլխավորապես իոնիական բարձր կուլտուրայի տարրերը (Լ. 83—88)։

Ուրեմն այս դեպքում խոսք չի կարող լինել, որ «սկյութական կենդանական ոճը», այդ արշավանքների շնորհիվ, տեղափոխված ու արմատացած լինի Հայկական լեռնաշխարհում։ Ընդհակառակը, թե «սկյութական կենդանական ոճն» իր նախագույն իոնիական ոճով հանդերձ և թե Հայկական լեռնաշխարհի կենդանական գեղարվեստի ոճը, եթե նույնիսկ մի քանի ընդհանուր ազդեցությունների ակունքը, իրարից միանգամայն անկախ ունեցել են մի այլ ընդհանուր նախադրյալ։

Այստեղ առաջնակարգ տեղ է գրավում Փոքր-Ասիայի կուլտուրան, որ առանձնապես զարգացել և յուրահատուկ բնույթ էր ստացել տակավին իոնիական գեղարվեստից շատ դարեր առաջ՝ հաթական կուլտուրան էր, որ իր արվեստի մեջ ամենամեծ չափերով ծաղկեցրել էր կենդանական ոճը, որպես գեղարվեստ, զարդանկարային կոնցեպցիա։ Այժմյան Բողազքյոյի, Ձնջիրլիի, Սակչե-գյոզու գյուղերի մոտ գտնվող հաթական հնավայրերում հայտաբերված քանդակազարդ քարե արձանները, բարձրաքանդակները ու գլանաձև կնիքները[3] տալիս են ոչ միայն կենդանական պատկերներ, այլև քանդակված ծաղիկներ ու ժապավեններ, որոնք բաղկացած են լինում երկրային հյուսվածքի կոմպոզիցիայից, որ այնքան մեծ նմանություն ունի նախահայկական վերոհիշյալ բրոնզե գոտիների երիզների հետ։ Հաթական այդ բնորոշ արվեստը խաչաձևվել էր ասորեստանյան արվեստի հետ և տարածվել ամբողջ Առաջավոր Ասիայում, ընդգրկելով Հայկական լեռնաշխարհը և սրա վրայով էլ Կովկասի սահմանները, ինչպես և տիրապետում էր Փոքր-Ասիայում, իր մեջ առնելով իոնիական աշխարհը և ապա Միջերկրածովյան կղզիներն իրենց էգեյա-միկենյան արվեստով։

Այս մտքին ավելորդ չէր լինի առաջ բերել հնագետ Բ. Վ. Ֆարմակովսկու կարծիքը. «Կովկասյան գոտիների նմանությունը հաթական արվեստի արտադրությունների հետ՝ իրենց կոմպոզիցիայում, զարդանկարների ու ֆիգուրների ոճավորումով, նկարի բնույթով և այլն, բերում է այն եզրակացության, որ գոտիների ու հաթական այդ հուշարձանների միջև, անտարակույս, գոյություն ունի առնչություն, որ ընդհանրապես այդ գոտիները պետք է պատկանեն մոտավորապես 10-րդ դարին (մեր թվականությունից առաջ), ինչպես Ձնջիրլիի արձանագործությունները և Բողազքյոյի բարձրաքանդակը, որի վրա նկարված է այդպիսի գոտիով մարդու պատկեր (նկ. 1, հատ. 1)։ Հետաքրքիր է, որ Բողազքյոյի բարձրաքանդակում նկարված մարդու հագուստի զարդանկարն իր ոճավորմամբ միանգամայն համապատասխանում է կովկասյան գոտիների պարունակած զարդանկարին։ Գոտիների զարդանկարչության ոճավորման ու նկարների բնույթի

նմանությունը հնագույն միկենյան հուշարձանների կամ, ըստ ժամանակի նրանց մոտիկ հուշարձանների զարդանկարչության տեսակների հետ, հաստատում է, որ այդ գոտիները պետք է համարել 10-րդ դարի փոքր-ասիական հաթական ոճի ազդեցությամբ երևան եկած ոճ, որի մեջ, ինչպես հայտնի է, կային միկենյան տարրերը։ Այդ գոտիների հայտաբերման հանգամանքները նույնպես նշում են այդ ժամանակը։ Այդ շրջանի գամբռններում, ուր գտնվել են հիշյալ գոտիները, խիստ սակավադեպ է երևացել երկաթը (МАК, VI, 170)։ Հնագույն գոտիները պատկանում են Կովկասում երկաթի երևման դարերի սկզբին, որ դալիս է իսկապես 10-րդ դարի սկզբին» (ФАР, 44)։

Երբ ըստ էության քննության ենք առնում կենդանական զարդանկարային ոճն իր ֆանտաստիկ տեսակներով, ինքնին հարց է ծագում այդ հանգամանքի նշանակության մասին։ Անտարակույս, այդտեղ չպետք է որոնենք պատկերների և ֆիգուրների անմիտ ու անբովանդակ մտահղացում։ Նմանապես խոսք չի կարող լինել այն մասին, որ արվեստագետն այդ կենդանական զարդանկարներում ցանկացել է վերարտադրել բնական երևույթներ կամ կենցաղային տեսարաններ, ինչպես այդ տեղի ունի բնական կենդանական զարդանկարներում։

Մնում է, որ այդ ասկյութական գազանային ոճիս մեջ տեսնենք կրոնա-սիմվոլիկ բովանդակության կոմպոզիցիաներ։ Հիրավի, այդ կենդանական զարդանկարների մեջ հնկատենք շատ հաճախ նաև այնպիսի խորհրդանիշեր, ինչպես խաչն ու սվաստիկան. կտեսնենք, որ ամբողջական կենդանական պատկերի փոխարեն արվեստագործը կիրառում էր խորհրդանշանը, այսինքն սիմվոլիկ ձևով ներկայացնելով կենդանու մի բնորոշ մասը, այսպես ասած՝ կրճատված պատկերացումներ։ Այս բնորոշ երևույթը տիրապետում էր ասորա-բաբելական արվեստի մեջ, իշխում էր հաթական արվեստում։

Այստեղ բնավ չպետք է որոնենք գեղարվեստական ֆանտազիայի և անզուսպ երևակայության մտահղացումներ, այլ միմիայն կրոնական սիմվոլների իմաստ։ Այդ պարագան մեզ տանում է դեպի կենդանիների պաշտամունքը, դեպի այն գաղափարախոսական վերնաշենքը, որի հիմքը խարսխված է երբեմնի գոյություն ունեցող տոտեմիստական սոցիալական հարաբերությունների վրա, որտեղ մարդու տնտեսական գործունեությունը զեկերում էր որսորդության պայմաններում և որտեղ մարդու



գոյությունը շաղկապված էր կենդանական աշխարհից նյութապես կախումն ունենալուն։ Դա մի աշխարհայացքություն էր, որ կաղապարվում էր արվեստի մեջ, մարմնավորում էր սիմվոլիկ նկարների միջոցով և ապա հետագայում վերածվել էր յուրահատուկ զարդանկարային ոճի։ Այդ ոճն իր գեղարվեստական կոմպոզիցիայով հարատևում էր որպես կենցաղային վերապրուկ (survival) (Լ, 16) և շարունակում էր իր արտահայտությունը պահպանել հետագա ժողովուրդների արվեստում, ինչպես, օրինակ՝ խալդյան արվեստում։

Այսպես ուրեմն, Հայկական լեռնաշխարհում արվեստի մեջ տիրող կենդանական զարդանկարներում, մասնավորապես բրոնզե գոտիների նկատմամբ, մենք տեսնում ենք երկու հիմնական ոճ, մեկը՝ ռեալիստական, որի գեղարվեստական կոմպոզիցիան իրական կենդանական բնությունն է, ժամանակակից համապատասխան կենցաղային տեսակների արտահայտումը, իսկ մյուսը՝ ֆանտաստիկ, որի կենդանական նկարների կոնցեպցիան պարփակում է իր մեջ կրոնա-սիմվոլիկ տեսակներ։ Վերջինս իր հերթին, ժամանակի ընթացքում, կորցնելով իր հիմնական իմաստը, փոխարկվում է սոսկ դեկորատիվ զարդանկարների, կարկամած գեղարվեստական, ձևական ոճերի, որոնց մեջ հնավուրց գեղարվեստագետը ելք էր տալիս իր էսթետիկ ըմբռնումներին։

Կենդանական զարդանկարների ծագման այդ սոցիալ-տնտեսական տարրերի մեջ պետք է որոնել այն նշանակալի հանգամանքի բացատրությունը, որ կենդանական զարդանկարն այնքան հարատև կյանքով էր ապրում։ Զարգանալով ու ծաղկելով Հայկական լեռնաշխարհի արխայիկ շրջանի ցեղերի արվեստի մեջ, կենդանական զարդանկարն ուժեղ թափով դրսևորվեց խալդյան արվեստի բոլոր ճյուղերում և ապա գերակշռող տեղ գրավեց խալդականին հաջորդող հայկական արվեստում, փարթամորեն ծաղկելով Հայաստանի սահմաններում մինչև նրա պատմության միջին դարերի վերջը և ժառանգություն թողնելով տիրապետող ֆեոդալական դասակարգի սնած արվեստում։

Արդարև, խալդական արվեստի զարդանկարների մեջ կենդանական ֆիգուրները գերակշռող տեղ են բռնում։ Բացի այն բնորոշ ծոփերից, որ հայտաբերվել է Վանի Թոփրակ-կալեի պեղումների ժամանակ, մենք ունենք Վանից նաև բրոնզե խալդական երկու վահաններ, որոնք ներկայումս պահվում են Բեռլինի

Պետական և Լոնդոնի Բրիտանական թանգարաններում: Այդ վահաններից մեկը կրում է խալդական թագավոր Արգիշտիի որդի Ռուսա II-ի (680—645 թ. թ.), իսկ մյուսը Էրիմենայի որդի Ռուսա III-ի (605—585 թ. թ.) անունները: Վահանները թեև փոսել են և թերի են իրենց ամբողջական մասերից, բայց պահպանել են վերին աստիճանի նուրբ քանդակված պատկերների մնացորդներ, որոնք բաղկացած են կենդանական պատկերներից, բայց ոչ այնպես ոճավորված, այլ բավական բնական գծերով: Այդ պատկերները ներկայացնում են երեք համակենտրոն բոլորակ երիզաձև շրջաններ, որոնց պարբերաբար դասավորությամբ առաջին և երրորդ համակենտրոն շրջաններում տեղավորված են քայլող առյուծներ, իսկ երկրորդ համակենտրոն շրջանում՝ ցուլեր:

Նմանապես Թոփրակ-կալեից գտնված է բրոնզե մի գեղեցիկ սափոր, որ պահվում է Բրիտանական թանգարանում: Այս կտորը, բացի սեպագրերից, ունի նաև գեղեցիկ քանդակված ու խնամքով կատարված՝ ցուլի նկար, գլուխը ձախ կողմը դարձրած և պառկած դիրքում. այս ցուլի աջ կողմում նկատվում է մի այլ կենդանու նկարի մնացորդ:

Վերջապես, ինչպես վերը նկարագրել ենք (էջ 104), Թոփրակ-կալեում հայտնաբերված բրոնզե աշտանակի պատվանդանը և խալդական պաշտամունքի բրոնզե մնացորդները կրում են կենդանական ֆիգուրներ: Սովորական երևույթ էր որոշ կենցաղային իրեր զարդարել կենդանիների կամ նրանց մասերի՝ գլուխների, ոտների և այլ ֆիգուրներով: Այս վերջին տեսակի արվեստն արդեն պատկանում է գեղարվեստական իրերի արտադրությանը, որ նույնպես լայն չափերով զարգացած էր խալդական կուլտուրայում:

## V

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԴԱՆԿԱՐՆԵՐ ՈՒ ԱՐՁԱՆՆԵՐ

Մարդը, համեմատած կենդանիների հետ, նվազագույն տեղ է գրավում զարդանկարներում: Մեզ հայտնի բրոնզե գոտիների վրա նկատում ենք միայն 3—4 այդպիսի պատկերներ: Մարդն այդ զարդանկարներում ներկայացված է մերթ որսորդի դերում՝ նետով ու աղեղով զինված, մերթ վայրի կենդանիների ու ֆանտաստիկ կառուցվածքների դեմ պայքարողի դերում՝ սրով ու վահանով զինված: Առաջին դեպքում վերարտադրված է որսորդական կենցաղային տեսարան, իսկ երկրորդ դեպքում, եթե ուշադրության առնենք հեքիաթական օձի նշանակության մասին վերը ասածները, մեր առջևն է կրոնա-միֆոլոգիկ կոմպոզիցիա, ուր արտահայտվում է, ըստ երևույթին, հավիտենական պայքարի և կյանքի ու մահվան փոփոխման գաղափարը: Համենայն դեպս, այդ նկարների կոնցեպցիայում մարդը ներկայացված է իր գոյության կռվում, բնության դեմ մղած իր պայքարում, ուր ասպարեզ են գալիս գիշատիչ գազաններ ու վայրի անասուններ: Այդ գոյության կռիվը մեզ տանում է նորից դեպի արխայիկ շրջանը, երբ մարդու տնտեսական գործունեությունը, իր որսորդությամբ և բնությունից յուրացողական գոյությամբ և որանց վրա հիմնված տոտեմիստական հասարակական ձևով, սերտորեն կապված էր իրական կենդանական աշխարհի և այստեղից բղխող կենդանական պաշտամունքի հետ:

Վերոհիշյալ զարդանկարներում մարդը պատկերացված է պայմանական գծերով: Մարդու գլուխը սովորաբար կենդանական է՝ կամ թռչունի, կամ կատվի, կամ շան և կամ այլ ֆանտաստիկ կերպարանքով: Կենդանական զարդանկարների նմանությամբ մարդկային նկարներում էլ իրանը սովորաբար գծված է շտրիխներով, իսկ մարմնի բաց մասերը՝ ձեռները, ոտները և գլուխը՝ կետերով. Թեև պատահում են հազվադեպ և այնպիսի նկարներ, որտեղ մարդն ամբողջապես գծված է կետերով, բացի գոտուց, որը շտրիխներով է: Այդ նկարների ուրվագծերից կարելի է կռահել, որ մարդիկ կրում էին կարճ բաճկոն, սեղմ վարտիկներ, որոնք բաճկոնի հետ միացած են գոտիով, և փափուկ կոշիկներ:

Ավելի հազվադեպ է մարդու պատկերը կերամիկայի վրա: Մենք ունենք այդպիսի մի նկար՝ Գանձակի գավառում հայտնաբերված կավե մի ամանի վրա: Այստեղ, ամանի փորի երկու հանդիպակաց կողմերի վրա ներկայացված են 2 մարդու պատկեր, ըստ երևույթին, որսորդական դիրքում, որովհետև մարդը աջ ձեռքին բռնած ունի նետով լարած մեկ աղեղ, իսկ առջևում կանգնած է այծյամ: Մարդկային այդ ամբողջ պատկերը խիստ ոճավորված է անկյունավոր գծերով ու կետերով: Դարձյալ մարդու նկար, բայց գունանկարով, հանդիպում ենք Կարմիր-վանքի կերամիկական մի անոթի վրա՝ երանիկ դիրքով, նման նույն-

պիսի մի էրոտիկ նկարի, որ պատկերացված է Սուզայի (Էլամի) գտածոներից կավե մի սալիկի վրա:

Սակայն մարդկային պատկերները, ոչ այնպես ոճավորված կամ պայմանական գծերով, այլ ավելի իրական գծերով ներկայացված են մեզ տեսնում արձանագործության մեջ: Մեզ արդեն հայտնի հնագիտական իրերի շարքում հանդիպում են բրոնզե մանր արձանիկներ (էջ 108), քարից քանդակված արձաններ (էջ 113) և մի ուշագրավ կավե արձանիկ՝ Կարմիր-վանքի հայտնաբերված կերամիկայից: Վերջին արձանիկը բարձր արվեստի գործ է հանդիսանում: Նա ներկված է սպիտակ գույնով (դեմքն ու ազդրերը) և կարմիր գույնով (աստառն ու ոտները). ամբողջովին ծածկված է սև ու դարչնագույն օրնամենտով: Զգեստը հարթ է, առանց կորվածքի. և երկար քղանցքները կողքերից ընկնում են մինչև ոտները: Զգեստի օձիքը և գոտին ուռուցիկ են. զգեստի վերին մասը նկարված է շերտիկներով. ուրեմն այս դեպքում պահպանվել է այն սովորույթը, որ դիտել ենք բրոնզե գոտիների վրա նկարված մարդկանց մարմնի զգեստով ծածկված մասը շերտիկներով արտահայտելու մեջ (էջ 76, 170): Արձանիկի ձախ ձեռքը հանգչում է գոտու վրա: Դեմքը տափակ է, դուրս ցցված քունքերով. ունի մորուք թե կզակի և թե ծնոտների վրա. գլխին հագած է բնորոշ գլխարկ՝ կարմիր գույնի:

Մարդկային պատկերը կերպավորող արձանները ու նկարները, աննշան բացառությամբ, սովորաբար պատկերացնում էին աստվածներին և այս թագավորներին կամ իշխաններին, որոնք, առաջ գալով դասակարգերին շերտավորված հասարակակարգում, հանդիսանում էին իբրև երկնային տիրապետողների՝ աստվածների երկրային ներկայացուցիչներ և նույն տիրապետող իշխանությունն էին ցուցադրում իրենց երկրային թագավորության մեջ: Թերևս այս հանգամանքով պետք է բացատրել բրոնզե վերոհիշյալ գոտիների վրա նկարած մարդկանց ֆանտաստիկ կերպարանքը, որպես դիցականի, ոչ հասարակ արարածների: Այդ կրոնա-պաշտամունքային տեսագիծն սկսում է մեծ տեղ բռնել արվեստի բնագավառում, ծառայելով տիրապետող ֆեոդալական դասակարգի սոցիալ-քաղաքական իշխանության ամրապնդմանը: Իբրև այդպիսի արվեստի բնորոշ նմուշ կարող է ծառայել այն հետաքրքիր մեդալյոնը, որ հայտնաբերել են Լեման-Հաուպտն ու Վ. Բելքը Թոփրակ-կալեի պեղումներում:

Այդ մեդալյոնը ոսկուց է և նուրբ, ճաշակավոր գեղարվես-



տական գործ է, որ քանդակված ներկայացնում է երկու կանացի պատկեր: Այդ կանանցից մեկը նստած է ուղղաբերձ հենարանով բազկաթոռի վրա, ոտի տակ ունենալով կլորակ պատվանդան: Նրա զգեստը ծածկված է զարդանկարներով, իսկ գլխից իջնում է նույնպես զարդարուն ծածկոց մինչև ոտքերը: Նստած կնոջ աջ ձեռքը պարզել է վեր, իսկ ձախ ձեռքով բռնել է մի տերև: Նրա հանդեպ կանգնած է մի այլ կին նույնանման զարդարուն զգեստով ու գլխի ծածկոցով և ձեռքերը պարզել է աղոթողի կամ հայցողի դիրքով: Անտարակույս, այստեղ ներկայացված է կրոնա-պաշտամունքային տեսարան, որտեղ գահի վրա բազմած դիցուհուն երկրպագության հարգանք է մատուցանում մի ուրիշ կին, թերևս որևէ քրմուհի:

Թեև այս մեդալյոնի կոկոնաձև կազերից և հանգույցներից բաղկացած տեսագծերը որոշ չափով ասորական և հունական նմանություններ են ցույց տալիս, սակայն նկարի ընդհանուր կոմպոզիցիան զուտ խալդական է, ավելի շուտ հիշեցնում է Արևմուտքը՝ կրելով փոքր-ասիական և միկենյան կուլտուրայի հետքեր: Վերջին հանգամանքն առավելապես 8-րդ դարին է մոտեցնում այդ մեդալյոնի արվեստը, որ ժամանակակից է հունական ամենահին գրականությանը և իր հնությամբ ու արվեստի նրբությամբ իր նմաններն ունի միկենյան կուլտուրայի մեդալյոնների վրա: Այդ ձևի աստվածապաշտական մեծարում մենք չենք գտնում ասուր-բաբելական նկարներում, որտեղ մեծարվող աստվածները սովորաբար արական սեռի են լինում: Ընդհակառակը, փոքր-ասիական ու էգեյա-միկենյան պաշտամունքի մեջ հանդես են գալիս, մասնավորապես արձանների վրա, իգական աստվածներ՝ Կիբելլա, Նանա, Ռեյա և այլն, որոնք բեղմնավորության և մայրության գերագույն աստվածություններ են եղել և պատկերացվել են ձեռքին բռնած կակաչի (խաշխաշի) ծաղիկով (LHM):

Վերոհիշյալ մեդալյոնի վրա արձանագրած դիցուհուն իր կերպարանքով ու արտաքին գծերով չափազանց նման է Հայաստանի Պետական Թանգարանում ցուցադրված խալդական մի կնոջ արձանիկը, որը մեզ թվում է, նույն աստվածությունն է ներկայացնում (էջ 114):

# VI

## ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Դառնալով հնագույն կերպարվեստի այն ճյուղին, որ վերաբերում է արձանագործությանը, պետք նշենք, որ մարդկային ֆիգուրների համեմատությամբ ավելի տարածված են եղել կենդանական արձանիկները։ Պեղածո իրերի մեջ հանդիպում են կենդանական ֆիգուրներ թե՛ կավից, թե՛ բրոնզից և թե՛ քարից։

Կավե կենդանական ֆիգուրները շատ անգամ տեսնում ենք կավե անոթների վրա ձեփած և կատարված են նուրբ արվեստով. օրինակ՝ գիշատիչ կենդանիները Թոփրակ-կալեի կարասներում, ոչխարները Նոր-Բայազետի գավառի գամբաններից պեղված կավե սափորի վրա, նմանապես Կյուզալքարա գյուղում (Սևանի շրջան) պեղված գամբաններից մեկում գտնվել է կավից շինված եղան գլուխ (МАК, VI, 134)։

Ավելի բազմաթիվ են բրոնզե կենդանական ֆիգուրները, որոնց մեջ սովորական են զանազան թռչուններ, այծյամներ, ձիեր, եղան գլուխներ կամ ամբողջական եղներ։ Այծյամի բրոնզե գեղեցիկ արձանիկ է ամրացված Ադիամանի (Սևանի շրջան) գամբաններից մեկում հայտաբերված իշխանական սայլի վրա։ Բավականաչափ եղան գլուխներ են գտնված օրինակ՝ Գարաքիլիսայում, Ալեքսանդրապոլի շրջակա ավերակներում, Գանձակի գավառի, Շիրակի, Վանի և այլ հնագիտական պեղածոների մեջ (I, 177—178)։ Ավելի հաճախ են լինում ձիու ֆիգուրները, մանավանդ նրանց գլուխները, որոնք սովորաբար ձեռքի ապարանջանների ծայրերն են զարդարում։ Վերջապես՝ հիշենք բազմաթիվ բրոնզե պանդըլիկները (էջ 100) և գնդասեղների գլուխները, որոնք ներկայացնում են կենդանական փոքրիկ ֆիգուրներ և որոնք գտնվել են բրոնզեդարյան Հայաստանի գրեթե բոլոր վայրերում։ Այդօրինակ կենդանական ֆիգուրներ են բազմանման սնամեջ պանդըլիկները, որոնց մեջքին ամրացված են կախելու համար փոքրիկ կանթեր. պատահում են նաև եղջերուի ֆիգուրներով պանդըլիկներ։ Կան նմանապես զարդասեղներ՝ թռչունների և եղջերուների ֆիգուրներ ունեցող գլուխներով։

Այդ կենդանական բրոնզե ֆիգուրները գործածվել են ոչ միայն իբրև զարդարանք, կախելով գոտիներից (պանդըլիկներ) կամ ամրացնելով վարսերին ու զգեստներին (գնդասեղներ), այլ



մեծ մասամբ ունեցել են կրոնա-մոգական նշանակություն։ Նրանք իբրև հուռութ կամ թալիսման ծառայել են ապոտրոպեիկ նշանակների և հանդիսացել են գեղարվեստորեն վերարտադրված սիմվոլիկ ձևերով գազանի ու խորհրդավոր ուժերը։ Այդ տեսակետից մենք գտնում ենք այստեղ կենդանական պաշտամունքի վերապրուկներ, այսինքն հավատալիքներ, որոնք մեզ տանում են դեպի արխայիկ տոտեմիստական սոցիալական հարաբերությունները։

Բրոնզե կենդանական ֆիգուրները վերոհիշյալ ձևերով հանդիպում են, թերևս ավելի նուրբ ու կատարելագործ արվեստով, Հյուսիսային Կովկասում (Կոբան, Մայկոպ), Փոքր-Ասիայում հաթական արվեստի մեջ, նաև միջերկրածովյան բրոնզեդարյան կուլտուրայում։ Դա արվեստի այնքան համատարած ձև է իր բնորոշ առանձնաձևերով, որ այստեղ օտար ազդեցությունների մասին խոսք չի կարող լինել, և եթե կան այլաձևերը, ապա դրանք միմիայն տեխնիկայի կատարելագործման ու արվեստի նրբացման յուրացումներ կարող են լինել։

Ավելորդ ենք համարում կանգ առնել քարից քանդակագործված կենդանիների ֆիգուրների վրա, քանի որ արվեստի այդ ճյուղի մասին խոսվել է իր տեղում (էջ 117)։ Սակայն ուշադրության արժանի է գրանիտից կերտված ձիու այն արձանը, որ հայտաբերվել է Զանգեզուրի գավառի Զարուզի խճուղային կայարանում. սա մի գեղեցիկ գործ է, որ ներկայացնում է ամբողջովին զարդավորված մի ձի և պարզ պատկեր է տալիս այն դարերի ձիու զարդավորման մասին։

# VII

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արվեստը կիրառվում էր ոչ միայն էսթետիկ ու կրոնական, այլև արդյունաբերական նպատակների համար, զարգացնելով յուրահատուկ գեղարվեստական իրերի արդյունագործություն, մանավորապես կենցաղային իրերի բնագավառում։ Մենք արդեն գիտենք, որ բրոնզե դաշույնների երախակալները շատ անգամ փորագրված են լինում երկրաչափական զարդանկարներով կամ ընդելուզված են զանազան այլ մետաղներով՝ արծաթով, երկաթով կամ էմալով։ Նմանապես զարդարանքները՝ օղերը, ապարանջանները, զարդասեղները, պանդըլիկները, ֆիբուլները, հար-

մանդները, կոճակները և այլն կերտված են լինում զարդանկարներով կամ քանդակներով, այն էլ մեծ մասամբ երկրաչափական ձևերով։ Օղերին տալիս էին պարույրի ձևեր, ապարանջաններին՝ երիզաձև հյուսվածքի և այլն։ Այդ կողմից աչքի են ընկնում կանացի բրոնզե պաճուճանքները և մանավանդ մանյակները, որոնք, բացի միապաղաղ բրոնզե բոլորաձև շրջանակից, բաղկացած են լինում գունեղ քարերի, ապակիների, ոսկրի, մանր խխունջի ուլունքների շարաններից, որտեղ մեջընդմեջ լինում են նաև բրոնզե, երկաթե, պղնձե, կապարե գնդիկներ ու շրջանակներ։ Հիշատակելի են մանավանդ հերազարդ բրոնզե սկավառակները, որոնք կանայք դնում էին իրենց գագաթներին և որոնց նմանները, արծաթից շինած, մինչև վերջին ժամանակները հանդիպում էին հայ գավառական կենցաղում։

Գեղարվեստական արդյունագործությունը մեծ զարգացման էր հասել առավելապես երկաթե վաղագույն դարերում, մանավանդ խալդականում։ Ընդելուզման արվեստը մեծ չափերով ծաղկում էր խալդերի մեջ, որոնք այդ կողմից զարմանալի վարպետներ էին, միացնելով քարաքանդակի արվեստը մետաղագործության հետ (էջ 118)։ Ավելի ուշադրավ է արծաթագործության մեջ կիրառվող սևադայի արվեստը, այսինքն՝ սպիտակ ողորկ արծաթը ծծմբարծաթով մշակելը, որից արծաթի մակերեսը ծածկվում է սևագույն զարդանկարներով։ Այդ տեսակետից նշանակալից է, որ Լեման-Հաուպտն ու Վ. Բելքը Թոփրակկալեի պեղումներում հայտնաբերել են գլանաձև արծաթե մի անոթ, լցված ծծմբարծաթի փոշով, որը գործածվելիս է եղել սևադայի համար։

Թե ինչ զարգացման էր հասել արծաթի նկարակերտման այդ արվեստը, երևում է նրանից, որ սևադան, հնագույն դարերի նուրբ ու կատարելագործված այդ արվեստը, պահպանվել էր մինչև մեր օրերը նույն տեղում, Վանի ոսկերիչների արհեստանոցներում։ Անշուշտ, խալդական այդ արվեստը խորը հնում տարածվել էր Կովկասում, այստեղից էլ, ուշագույն պատմական ժամանակներում անցել էր Ռուսաստան, ուր այն հայտնի էր Տուլայի զարդ (тульская чеканка, Thulaarbeit) անունով[98]։

Ինչպես տեսանք, խալդական արվեստի մի քանի ճյուղերի համեմատությունից բխող եզրակացությունն ակներև է դարձնում այդ արվեստի սերտ աղերսն էգեյա-միկենյան արվեստի հետ, որ Թրակա-փռյուգիական գաղթաշարժով անցավ Փոքր-



Ասիա, և ապա այստեղից, խալդերը, մեր թվականությունից մոտավորապես 1000 տարի առաջ մղվելով դեպի արևելք և հաստատվելով Հայկական լեռնաշխարհի հարավում, իրենց հետ նոր հայրենիքը բերին այդ արվեստը[99]։ Նույնը պետք է ասենք գեղարվեստական արդյունագործության մի քանի ճյուղերի մասին (օրինակ՝ մետաղի ընդելուզումը, սևադան), որոնք պարփակում են իրենց մեջ միկենյան կուլտուրայի գծեր։

Սակայն մյուս կողմից, եթե նկատի առնենք, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մարզերի արվեստի տեսադաշտը (օրինակ՝ Նոր-Բայազետի, Շիրակի կամ Լալվարի, ինչպես նաև Ղալաքենդի և Գետաբեկի բրոնզե գոտիների կենդանական զարդանկարչությունը) նույնպես որոշ առնչություն ունեն փոքր-ասիականի, այն է՝ հաթական և ապա խեթական արվեստների հետ, որոնք իրենց հերթին միկենյան ծագում ունեն, չենք կարող հաստատել, որ անդրկովկասյան այդ արվեստի օրինակները պատկանել են խալդական կուլտուրային։ Այդ բրոնզե ու վաղագույն երկաթե դարերի կուլտուրայի կրողները եղել են, ինչպես պետք է ենթադրել ներկայիս գիտական տվյալներից, միանգամայն այլ էթնիկ տարրեր, բայց ոչ խալդերը։ Սրանք միայն հետագայում, Ը-րդ դարից (նախքան մեր թվականությունը) սկսել են հարավից ռազմական արշավանքներով նվաճել հյուսիսային մարզերը և այնտեղ հաստատել իրենց իշխանությունը, ընդհանրականացնել իրենց կուլտուրան, որը նույն նախադրյալից էր բխում, որից և բրոնզե գոտիների զարդանկարչական ոճը հյուսիսային այդ մարզերի բնիկ ժողովուրդների մեջ։

## VIII

### ԳԻՐ

Հնադարյան մարդու աշխարհազգացողությունները տպավորվում էին նրա նյութական արտադրության արգասիքների վրա։ Դա արտահայտվում էր գլխավորապես նկարներով, որոնք զարդարում էին նրա արվեստի ստեղծագործությունները։ Այդ բավական չէր։ Հնադարյան մարդը ձգտում էր իր աշխարհազգացողությունները հաղորդել նաև իրենից թե ժամանակով և թե տարածությամբ հեռու գտնվող ուրիշներին, մի խոսքով՝ աշխարհազգացողությունները տալ «կարդալու»։ Այստեղ արդեն կարիք էր զգացվում որոշ նշանների, գրերի, որոնք նրա մտքերն ու

գաղափարների «ընթեռնելի» դարձնելն ուրիշների համար։ Թերևս կարելի է ենթադրել նաև այն, որ նախնադարյան մարդը գրանշաններ ստեղծում էր ոչ միայն ուրիշներին կարդալ տալու և իր աշխարհնազգացողությունները հաղորդելու համար, այլև հենց իրեն համար—հիշելու և հաշվելու—որ հետզհետե դառնում է ընդհանուր և միաձև։

Ինչպես որ նախադարյան մարդու աշխարհազգացողությունները նյութականորեն վերարտադրվում էին պատկերներով, անտարակույս, նույնպես էլ մտքերն ու գաղափարները «կարդալու» համար վերածվում էին պատկերավոր գրերի, որպեսզի հասկանալի լինեին ուրիշներին։ Այս տեսակետից գիրը հանդիսանում է արվեստի որոշ ճյուղն ու արվեստագործի շնորհքի և ունակության հետևանք։ Զուր չէր, որ հին Եգիպտոսում գրագետներն ու նկարիչները նույնացնում էին և միևնույն «սեշ կեդուտ» անունով էին հորջորջվում։ Այդպիսով, գաղափարների ու մտքերի հաղորդման նախնական եղանակը կայանում էր պատկերավոր պիկտոգրաֆիայում, որ բնորոշ է քարեդարյան կուլտուրային։ Պետք է ենթադրել, որ պիկտոգրաֆիկ նշաններ են այն տիպիկ նկարները, որոնք հայտաբերվել են Հայաստանի մի քանի վայրերում ժայռերի ու քարերի վրա քանդակված (1, 161)։

Սակայն այդ եղանակով անհնարին էր հաղորդել վերացական գաղափարներ։ Ուստի պիկտոգրաֆիկ նշաններին սկսեցին ավելացնել նաև պայմանական պատկերացումներ, որով պատկերավոր գրերն ստացան իդեոգրաֆիայի ձև։ Այստեղ յուրաքանչյուր նկարը ներկայացնում է համապատասխան բառ, հատուկ գաղափար։ Այդ նկար-բառերի դասավորությամբ էլ շարադրվում էին ամբողջական նախադասություններ։ Այս ձևի հիերոգլիֆները հայտնի են նաև իդեոգրամ (=գաղափարագիր) անունով։

Հետագա դարերում մարդը, կուլտուրայի հարաճուն զարգացման պայմաններում, այլևս չէր կարող բավականանալ հիերոգլիֆներով, որովհետև նրա մտահղացումներն ու խոսքերը շատ անգամ չէին գտնում իրենց համապատասխան արտահայտությունները այդ պատկերավոր նշանների մեջ։ Հետևապես՝ մարդու մեջ միտք է հղանում՝ այդ պատկերավոր նշանագրերին տալ ոչ թե իդեոգրամային (—գաղափարագրական), այլ հնչյունական նշանակություն։ Այս դեպքում պատկերավոր նշանագրերից յուրաքանչյուրը ներկայացնում էր արդեն կամ մեկ հնչյուն



կամ առանձին վանկ, որ համապատասխանում է տվյալ նկարով արտահայտված բառի առաջին վանկին կամ նրա արտասանելի առաջին հնչյունին. այսպիսով ստեղծվում է ֆոնոգրամը (=հնչյունագիրը)։

Այդ եղանակով առաջացան հին եգիպտական հիերոգլիֆները։ Բացի այդ՝ գոյություն են ունեցել ու զարգացել նախասեմական (նախաքաղդեական), հաթական ու կրետական հիերոգլիֆները՝ մեզ հետաքրքրող կուլտուրական շրջաններում[18]։ Հաթական հիերոգլիֆները հայտաբերվել են գլխավորապես գլանաձևերի, կավե տախտակիկների և ժայռաքանդակների վրա, որոնց օրինակները գտնվել են նաև հին Հայաստանի սահմաններում։

Այդ հիերոգլիֆները, մանավանդ եգիպտականն ու նախասեմականը, ժամանակի ընթացքում սկսում են վերածվել գծային նշանների։ Այստեղ կատարվեց զարգացման նույն պրոցեսը, ինչ որ օրնամենտների զարգացման ընթացքում, այն է՝ բնական պատկերավորումների զարդանկարներից առաջացան գծային զարդանկարները։ Այդպես էլ ֆիգուրային ու գաղափարագիր հիերոգլիֆները հետզհետե փոխվում են նշանագրերի, որոնք արտահայտվում են գծային նկարներով և ստանում են պայմանական ոճային բնույթ։ Նշանագրերի այդ գծային ոճն առաջանում է սոսկ տեխնիկական պայմաններից։

Բաբելա-էլամական երկրներում գրությունները փորագրում էին գլխավորապես կավե տախտակիկների վրա։ Իսկ կավի վրա խիստ դժվար և գրեթե անհնարին է սրածայր մետաղե կամ այլ ձողիկով փորագրել կոր ու բոլորակի ձևեր։ Ուստի, բացի կլորիկ շրջաններից ու ձվածիրներից (էլիպսներ), որոնք ստացվում էին հատուկ կաղապարների դրոշմամբ, մյուս նշանագրերը վերարտադրելիս՝ գրագիրն ստիպված էր կլորաձև հիերոգլիֆները վերածել կանոնավոր բազմանկյուն նկարների կամ գծերի որոշ կոմբինացիաների։ Այս գծերը փորագրվում էին սեպաձև նշաններով, որոնք այդպիսի ձև էին ստանում շնորհիվ գրչի եռանկյուն սուր ծայրի։ Այստեղից արդեն մնում էր մի քայլ անել հանգելու սեպաձև նշանագրերին, որոնք հետագայում դառնում են Առաջավոր Ասիայում տիրապետող գիրը։

Սեպագիր նշաններն առաջին անգամ երևացել են սումերների մեջ (Միջագետքի հարավում) մոտավորապես 4-րդ հազարամյակում մեր թվականությունից առաջ և սկզբներում գոյու-

թյուն ունեին պատկերավոր հիերոգլիֆների հետ զուգահեռ։ Սումերական այդ սեպագիր նշանները դարձան այն հիմնական ձևերը, որոնք այնուհետև յուրացրին Միջագետքի և ընդհանրապես Առաջավոր Ասիայի քաղաքական ասպարեզի վրա հանդես եկող ժողովուրդները, հարմարեցնելով սրանք պատրաստի գիրը իրենց լեզուների առանձնահատուկ բնույթին։ Այդպիսով, սկսած 2700 թ. (մեր թվականությ. առաջ) սումերական սեպագիրը դարձավ ակ-կադների, բաբելացիների և ասուրների գիրը։

Ասուր-բաբելական սեպագիրը դարձավ ամենաընդհանրացածը և միջազգային նշանակություն ուներ Առաջավոր ու Փոքր-Ասիայի ժողովուրդների փոխհարաբերություններում։ Ասորական սեպագրերի այդ մեծ նշանակությանը պետք է վերագրել այն հանգամանքը, որ այդ ձևի գիրը յուրացվեց 9-րդ դարում խալդերի կողմից, իսկ 6-րդ դարում (ն. ք. մեր թվականությունը) հին պարսիկների կողմից (RL, VI, 268):

Ահա այդ սեպագրություններն են հանդիպում Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից պահպանված քարաժայռերի ու զանազան հուշարձանների,—երբեմն էլ, խիստ սակավ դեպքերում, կենցաղային իրերի վրա (ամաններ, վահաններ, կամ Խոջալուի ուլունքը Ադադ Ներարի թագավորի անունով)։ Այդ սեպագրությունների մեջ գերակշռող տեղ են բռնում ասորական գրերը և ապա խալդական սեպագրերը, որոնք շարունակ հայտաբերվում են առավելին մինչև մեր օրերը[101]։ Պարսկական սեպագրերի մեջ հայտնի է Բեհիստունի արձանագրությունը (Դարեհ թագավորի)։ Պարսիկները կարողացան սեպագիր նշանները յուրացնելիս՝ ավելի կատարելագործել այն ու պարզեցնել, տալով այդ գրերին տառային նշանակություն։

Սեպագիր նշանները վերջնականապես չքացան գործածությունից մոտավորապես մինչև 1-ին դարը նախ քան մեր թվականությունը։

Համենայն դեպս սեպաձև գրությունները հիերոգլիֆների հետ միասին գոյություն ունեին նաև Առաջավոր ու Փոքր-Ասիայում։ Դա բացահայտ է նրանից, որ «հաթական-կանիսական» բնագրերը փորագրված են սեպագրությամբ. այդ բնագրերից մեկը՝ հաթական թագավոր Արուանդաշի (14-րդ դար մեր թվ. առաջ) մի վավերագիրը՝ դրոշմված է կնիքով, որ թագավորի և թագուհու անունները գրված են սեպաձև նշաններով, իսկ նրանց կից նկարված են խիստ եղծված փոքր-ասիական (հաթական) հիերոգլիֆներ (LHA, II, 591)։ Նմանապես Բյույուք-կալեում հայտաբերված բրոնզե թասի եզրի վրա կան պատկերավոր նշանագրեր, որոնք խիստ նման են փոքր-ասիական, այսպես կոչված հաթական, հիերոգլիֆներին։ Դարձյալ Բյույուք-կալեում գտնված կավե տախտակիկի վրա կան նույնպես գաղափարագրական նշաններ (LHA, II, 592)։

Հիերոգլիֆների հետքեր գտնվել են նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Ղալաքենդում Վ. Բելքի հայտնաբերած խեցանոթական գայլիտոնի գլուխը զարդարված է բնորոշ նշաններով։ Պրոֆ. Լեման-Հաուպտի կարծիքով՝ այդ նշանները պետք է լինեն հիերոգլիֆներ, որովհետև խիստ նման են հաթական մեկ կնիքի վրա փորագրված նշաններին։ Իսկ այդ կնիքի նշանագրերը, որոնք անշուշտ արձանագրում են որևէ անուն, միանգամայն համանիշ են, թերևս ազգակից են փոքր-ասիական հիերոգլիֆներին, որոնք պետք է դասվեն հաթական հիերոգլիֆների շարքը (LHA, II, 593—599)։

Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեի արշավների հետևանքով 1926 թ., Արտաշատի արևելյան ու արևմտյան շրջաններում գտնվել են հիերոգլիֆյան տիպի նշանագրեր, որոնք, չնայած լուսանկարվել են, բայց մնացել են չհրապարակված ու այդ Կոմիտեի գաղտնոցներում պահված, ուստի և հետաքրքրվող բանասերների և կուլտուրայի պատմության ուսումնասիրողների համար մնացել են անմատչելի։

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մարզերի այդ հիերոգլիֆային տիպի նշանագրերը, ինչպես պետք է ենթադրել, զուտ տեղական բնույթ են կրում։ Հիրավի, այդպիսի նշանագրեր, որոնք շատ անգամ ունեն սոսկ գծային ձև և ներկայացնում են հավանորեն գաղափարագրական (իդեոգրաֆիկ) նշանակություն, բավականաչափ հայտաբերվել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսում։ Նրանք առավելին մնում են անվերծանելի և իրենց առեղծվածային բնույթով շարունակում են հանդիսանալ խորհրդավոր մի աշխարհ, ուր գիտական վերլուծումը դեռ չի կարողանում թափանցել ու բանալ անհայտության վարագույրը։ Շատ ճիշտ է նկատում պրոֆ. Ի. Մեշչանինովը, թե սեպագրությունները, լինելով այդտեղ խալդական նորույթ և ծագելով ասորական հողից, գործածվում էին պալատական շրջաններում, այսինքն տիրապետող իշխանական դասի հարաբերություններում, և բնավ չէին հանդիսանում սկզբնական, անդրանիկ գրությունը տեղում.

այդ սեպագրությունները չէին կարողացել դուրս վանել գրության տեղական ձևերը, որոնք գոյություն ունեին նախքան օտար երկրներից ընդօրինակելն ու յուրացնելը և շարունակում էին պահպանվել տեղում վերջինների հետ զուգահեռ (СГАИМК, 1932, № 3—4, էջ 50)։

Հիրավի, Հայկական լեռնաշխարհում, մանավանդ նրա հյուսիսում, ուրարտական ժամանակաշրջանում, գործածական են եղել յուրահատուկ տեղական գրության նշաններ։ Դա ակներև է բազմաթիվ հնագիտական գյուտերից, որոնցից հիշատակենք այստեղ մի քանի կարևորագույնները։

Դեռևս Է. Ռեսլերը Խոջալուի (Շուշու գավառ) պեղումներում, բրոնզե դարերին վերագրվող մի մեծ դամբանի սալաքարի վրա նկատել էր իրեն անհասկանալի մնացած փորագիր նշաններ։ 1926 թ. Ի. Մեշչանինովը, քննելով այդ դամբանը, գտել էր, որ դրանք նշանագրեր են։ Այդ գրերը փորված են մեծածավալ սալաքարերի վրա, որոնք, ըստ երևույթին, դիտավորյալ կերպով տեղավորված են գերեզմանաքարի ներսի կողմից, կողքի պատին՝ ավելի փոքր սալերի շարվածքի մեջ։ Այդ նշանագրերը կրում են շեշտակի արտահայտված գծավոր ձև՝ կորացումներով և երբեմն էլ խաչաձևումներով. տեղ-տեղ նաև ուղեկցում են փոքրիկ շրջանիկներ։ Նշանագրերն ունեն 16 սմ. մեծություն և ծածկում են սալաքարի ամբողջ երեսը, որ դարձրած է դեպի քարարկղի ներսը։ Խոջալուի այդ կուրգանային դամբաններից մեկում, ինչպես արդեն վերը նշել ենք, հայտաբերվել էր նաև մեծ գիտական արժեք ներկայացնող մի խոշոր ուլունք, որի վրա փորագրված են հնագույն ասորական սեպագիր նշաններ. Ի. Մեշչանինովը, վերծանելով այդ սեպագիր նշանները, կարդացել է «Ադադ Նիրարի» ասորական թագավորի անունը։ Վերոհիշյալ Է. Ռեսլերը Արջաձոր գյուղում (Ջիվանշիրի գավ., Ղարաբաղում) ձեռք էր բերել հնադարյան ոսկե մի մատանի, որի վրա փորված են եղել առեղծվածային նշանագրեր։ Մոսկվայի Պատմական թանգարանում պահվող անդրկովկասյան կերամիկայի օրինակներից մեկի վրա, այն է՝ Հելենենդորֆ գյուղի (Գանձակի գավառ) կուրգանային դամբաններից Է. Ռեսլերի ձեռքով հանված մի կավե ամանի հատակին արտաքին կողմից կրում է մի շարք նշանագրեր, որոնք փորված են եղել հում կավի վրա նախքան նրա թրծումը։ Նույնպիսի կավե մի աման գտնվել է Բանանց



(Բայան) գյուղի (Գանձակի գավ.) կուրգանային դամբանից (СГАИМК, 1932 թ., № 3—4, էջ 54)։

Նույն երևույթը նկատում ենք մի շարք կավե ամանների վրա, որոնք հայտաբերվել են Թոփրակ-կալեի պեղումներից։ Այդ անոթների հատակներն արտաքուստ փորագրված են, կավը թրծելուց առաջ, յուրատեսակ նշանագրերով, որոնք խեցգործական հիերոգլիֆներ են հանդիսանում տեղական ծագումով և մինչև այժմ անվերծանելի են մնացել։ Այդ նշանագրերում գերակշռում են շրջանաձև և կիսաշրջանաձև գծեր, եռանկյունների կոմպլեքսներ, որոնք ատամնավոր ձև են ստացել, նաև մի քանի նշաններ՝ կենդանական ձևով։

Խալդական տեղական նշանագրերի բնորոշ պատկերը տալիս է Թոփրակ-կալեի պեղումներում գտնված կավե տախտակիկը։ Նրա նշանագրերը մեծ նմանություն ունեն կրետական կավե տախտակիկների վրա փորագրված նշանների հետ, որոնք պատկանում են կրետա-մինոյան (էգեյան, միջերկրածովյան) կուլտուրային և հայտաբերվել են Կնոսոսի պալատի պեղումներից (ԼՀԱ, II, 589)։ Այդ կրետա-մինոյան նշանագրերը հայտնի հնագետ Էվանսը վերագրում է մոտավորապես 1200 թվականներին մեր թվականութ. առաջ։

Պատմագիտական տեսակետից ավելի հետաքրքիր են այն նշանագրերը, որոնք հայտնի են դարձել Հին Արմավիրի բլրի հնություններում։ Այդ նշանները փորագրված են մեկ սալաքարի անհարթ երեսի վրա, որը կրում է պարզանկարային (օրնամենտային) բնույթի մշակման ակնհայտ հետքեր, իսկ նշանագրությունը բռնում է քարի մեկ անկյունը։ Բոլոր այդ նշանագրերն ունեն գծային ձև, այն էլ անկյունավոր տիպի, երբեմն դուրս ցցված գագաթով, որով նրանք նմանում են եղանի (երկժանիի) պատկերի։ Բացի այդ՝ հանդիպում ենք նաև մանգաղաձև նշաններ կամ շրջանիկներ՝ հարակից քառակուսիներով։ Այդ հիմնական սխեման խճողված է զանազան գծային ավելցուկներով (СГАИМК, 1932 г, № 3—4, էջ 55)։

Վերջապես, հիշենք Դաշբուրուն գյուղի մոտ (Նախկին Սուրմալուի գավ.) Ցոլակերտ անունով հայտնի հնագույն ամրոցի ավերակների վայրում հայտաբերված անվերծանելի արձանագրությունը։ Նրա գծավոր նշանագրերը, բացահայտ պիկտոգրաֆիկ, մեծ մասամբ արտահայտում են այծի և այլ չորքոտանի կենդանիների տեսագծեր[102]։

*Ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ պիկտոգրաֆիկ նշանագրերը հայտաբերվել են պատմականորեն այնպիսի նշանավոր վայրում, ուր կիկլոպյան ամրոցի մնացորդները մեզ տանում են դեպի նեոլիթյան կուլտուրան, իսկ խալդական սեպաձև արձանագրությունները՝ դեպի հին Հայաստանի նախապատմությունը՝ բրոնզի ու վաղագույն երկաթի դարերը։ Այստեղ հարկ է նշել, որ ընդհանրապես այծի կամ այծյամի գծավոր նկարները, այն է՝ «այծագրերը» — բնորոշ պիկտոգրաֆիկ նշաններ են ու շատ մեծ թվով են տարածված Հայկական լեռնաշխարհի հնավայրերում։*

*Վերոհիշյալ բոլոր և սրանց համանման այլ գյուտերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում, միանգամայն անկախ սեպաձև նշանագրերից, որոնք ասորական ծագում ունեն, գործածվելիս են եղել նաև տեղական սոցիալ-կուլտուրական հանգամանքներից բղխող հիերոգլիֆային ձևի յուրահատուկ նշանագրեր, որոնց օգնությամբ այդ աշխարհի դարերի մարդը նյութական ձևավորումով արտահայտում էր իր գաղափարներն ու մտահղացումները։*



Թ

# ԿԱՌՈՒՅՑՔՆԵՐ

## I

## ԲՆԱԿԱՐԱՆ

*Վաղագույն մետաղի դարաշրջանի բնակարանային շենքերի մասին շատ սուղ նյութական տվյալներ ունենք։ Դա բացատրվում է նրանով, որ այդ ուղղությամբ չափազանց աննշան հնագիտական հետախուզումներ են կատարվել։ Լեման-Հաուպտի և Նիկոլսկու ձեռքով կատարված մի-երկու պեղումներ, այն էլ անավարտ, հայտաբերել են խալդական դարաշրջանի շենքերի մնացորդներ միայն, որոնք, լինելով իշխանական պալատներ կամ կրոնական տաճարներ, շատ քիչ գաղափար են տալիս ժողովրդական հոծ զանգվածների կենցաղային պայմանները պատկերացնող շենքերի մասին։ Մյուս կողմից էլ՝ ժողովրդական կենցաղային շենքերի մնացորդները մեզ չեն հասել, քանի որ դրանք, պրիմիտիվ կառույցքի շնորհիվ, չեն ունեցել այն դիմացկունությունը, որ հատուկ էր տիրապետող դասակարգերին պատկանող հոյակապ շենքերին ու տաճարներին։*

*Վերջերս Լենինականում, մեր կոմբինատի կառուցման վայրում հայտաբերված արխայիկ բնակատեղերի մնացորդները, որոնք, ըստ հնագիտական իրեղեն տվյալների, անշուշտ, պատկանում են բրոնզի դարին, թեև այդտեղ չեն կատարված լրիվ պեղումներ ու մանրազննին հետազոտություններ, տալիս են որոշ չափով լույս սփռելու Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասի արխայիկ բնակարանների կառույցքի վրա։ Հայտաբերված բնակարանները կիսագետնափոր են, խոշոր ու բոլորովին անմշակ քարերից շարված պատերով, նրանց մեջ գտնված քարե պրիմիտիվ պատվանդանները (բազաները) — փայտե սյունի համար — վկայում են, որ բնակարանների ծածկը եղել է փայտե գերաններով (ԽՀ, 1934 թ., № 115), ինչպես դա սովորական է մինչև վերջին ժամանակներս հայ գյուղական տան կառույցքում, որի մասին հանգամանորեն կխոսենք հաջորդ գլխում։*

Բայց այն, ինչ որ առայժմ մեզ չեն մատակարարում հնագիտական տվյալները, կարող ենք լրացնել ազգագրական տվյալներով, որոնց հիման վրա հնարավոր է մոտավորապես ուրվագծել մեզ հետաքրքրող դարերի տունը, որտեղ անցնում էր Հայկական լեռնաշխարհի ազգաբնակչության կենցաղը:

Ներկա աշխատության առաջին հատորում արդեն որոշ չափով արծարծել ենք Հայկական լեռնաշխարհի բնակարանի բնույթը քարեդարյան շրջանում, նշելով նրա ծագման տեսակները և սկզբնական զարգացման ուղիները, որոնք տանում են մինչև հնագույն դարերը: Մենք տեսանք, որ մարդու տնտեսական գործունեությունը, լայն չափերով ներգործելով նրա բովանդակ գոյության վրա, անդրադառնում է նաև նրա բնակարանի ձևերում և, անտարակույս, իր դրոշմն է դնում նրա բնակարանի բնույթի փոփոխումների վրա, անկախ ժամանակագրական ու ազգագրական սահմաններից: Աշխատանքի գործիքները, որոնց զարգացումն ու կատարելագործումը խթան են դառնում մարդկային կուլտուրայի առաջադիմության, որտեղ բնակարանն էլ ստանում է իր հիմնական գծերը, հարմարվելով տեղական բնական պայմաններին:

Փալեոլիթյան շրջանի որսորդական և բնության արդյունքները յուրացնող նախնադարյան մարդը, որը գտնվում էր նախատոհմային հասարակական համապատասխան միջավայրում, բնակարան էր գտնում քարայրերում, սարերում և լեռնային խոռոչներում, իսկ նեոլիթյան դարերի սկզբնական երկրագործության տնտեսական պայմաններում՝ նույն՝ բնակարանային տեսակներով կազմակերպված քարե ու հողե հյուղերում: Այս բրոնզե ու վաղագույն երկաթե դարերում, շնորհիվ գործիքների կատարելագործման, բնակարանը փոփոխումների է ենթարկվում ըստ նոր սոցիալ-տնտեսական միջավայրին համապատասխան ձևերի: Այդ դարերում ժողովրդի տնտեսական գործունեության մեջ գերազանցորեն տիրապետում է երկրագործությունը, օժանդակ ունենալով անասնապահությունը: Այդ արտադրական պայմաններում, երբ անհրաժեշտ է դառնում նստակյաց կենցաղը, որի հետ զուգահեռ զարգանում է նյութական արդյունքների կուտակման պրոցեսը, լինի դա մթերային պաշարների համբարումը տեսակի պահումով, թե անասնաբուծության կենդանիների բազմացումով, բնակարանը հանդիսանում է մարդկային



համախմբման այն օջախը, ուր իրենց արտահայտությունն են գտնում վերոհիշյալ տնտեսական գործունեության հիմնական տարրերը և այդ տնտեսական ձևերի վրա կառուցվող սոցիալ-հասարակական կյանքի բնորոշ հարաբերությունները:

Այդ պայմաններում բնակարանը հետզհետե առաջադրում է տարածության լայնացման անհրաժեշտություն, որպեսզի հնարավոր լինի տնտեսական արդյունքների կուտակման զարգացող պրոցեսների պահանջները բավարարել և տոհմային հասարակարգին համապատասխան կենցաղով ապրողներին պատսպարել: Բնակարանն օթևան է դառնում միաժամանակ թե մարդկանց, թե սպասարկող անասունների համար և իր ծավալով ու տեխնիկական կառուցումով պահանջում է ավելի մեծ հարմարություններ: Երբեմնի լոկ միատարր հյուղը բաժանվում է արդեն զանազան տնտեսական մասերի և յուրահատուկ կենցաղային անկյունների՝ իրենց համապատասխան սարքավորումով: Ստացվում է ավելի բարդ ձևի բնակարան, որ իր շեշտակի արտահայտությունը գտնում է հենց վաղագույն մետաղե դարերում:

Մյուս կողմից էլ բնակարանի այդ հիմնական տեսակները հարմարվում են Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմաններին, ինչպես և երկրի շինարարական նյութերի առկայությանը, ներկայացնելով մի կատարյալ ներդաշնակություն շրջապատի բնության հետ:

Հայկական բարձրավանդակի լեռնային կլիմայական պայմանները, այն է՝ ձմեռային ցրտաշունչ սառնամանիքն ու ամառային կիզիչ տապը, տակավին շարունակում են թելադրել մարդուն կառչելու նախնական տների ձևերին, այսինքն՝ երկրի մակերեսից խորանալ հողի սորերի կամ ժայռերի մեջ, ուր հնարավորություն էր լինում պաշտպանվելու թե ցրտից և թե տոթից: Այսուհանդերձ՝ տեխնիկական միջոցների և արվեստի կատարելագործման շնորհիվ, որ հետևանք էր մետաղի ինդուստրիայի զարգացման, տները սկսում են բարձրանալ գետնի երեսի մակերեսը, բայց իրենցից տակավին չեն թոթափում երբեմնի գետնափոր շենքերի տեսակները:

Գալով կառուցվածքի շինանյութերին՝ մենք տեսնում ենք երկու հիմնական տեսակներ: Տիրապետում է ժայռն ու քարը, որ Հայկական բարձրավանդակի բաղադրյալ հարստությունն է լեռնային գանգվածների այդ աշխարհում, և ապա կավը, որ գերակշռում է դաշտավայրերում, ուր քարի պաշարները միանգա-

մայն սուղ են։ Պետք է ենթադրել, որ փայտաշեն բնակարաններ չէին կառուցում։ Հայաստանը, ինչպես այժմ, այնպես և հնում աղքատ է եղել անտառներով։ Սակայն և անտառոտ վայրերում, երբ համեմատության ենք առնում ներկայիս հայ գյուղական տները, օրինակ Լոռում, Դիլիջանի հովտում, Զանգեզուրում, կառուցվում էին մեծ մասամբ նույնպես քարից։ Անտառներով հարուստ այդ լեռնային վայրերում, անշուշտ, քարն ավելի դիմացկուն ու ապահով շինանյութ էր, քան փայտը։

Քարաշեն նախնական բնակարանները սովորաբար քառանկյուն էին և կառուցվում էին ժայռերի անտաշ բեկորներից, որոնք շարվում էին առանց շաղախի ու ծեփի, իսկ որմերի մեջ այդ անհարթ շարվածքից գոյացած խոռոչները լցնում էին հողով, թերևս ցեխով։ Հետագայում արդեն սովորեցին այդ քարերը շարել ցեխի շաղախով։ Այդ հանգամանքը հաստատում են նաև բազմաթիվ պեղված քարարկղները (Նոր-Բայազետի, Դիլիջանի, Գանձակի, Շուշու, Լոռու և այլ գավառների), որոնք քառանկյուն են, անտաշ քարերից կառուցված, և, որպես մեռյալների բնակարաններ, կառուցված են կենդանի մարդկանց բնակարանների նմանողությամբ։ Տանիքը բաղկացած էր մի քանի հորիզոնական գերաններից, որոնք ծածկված էին հողով և, ամենայն հավանականությամբ, այդ ծածկը ներկայացնում էր հատյալ գագաթի ձև ունեցող լայնանիստ կոն։ Այդ կոնաձև տանիքը հիմք է տալիս կռահելու, որ հնագույն պրիմիտիվ բնակարանը Հայկական լեռնաշխարհում էլ թերևս եղել է ոչ թե քառակուսի, այլ կլոր։ Հնագիտական ուսումնասիրությունների և արդի վայրենի ցեղերի ազգագրական հետազոտությունների հիման վրա այդ ձևը համարվում է բնակարանային կառույցքի ամենանախնականը, որի նախատիպն է եղել կլոր փորված հորը կամ քարայրը և կամ վրանաձև պարզ հյուղը։

Նախնական տան այդ կոնաձև կամ վրանաձև տանիքի տեսակիծը հարազատորեն պահպանվել է այն կուրգանների (tumulus) ձևի մեջ, որոնք հին դամբանների և ընդհանրապես քարարկղային դերեզմանների, իբրև մեռյալների բնակարանների, արտաքին ծածկն են հանդիսանում։

Կավաշեն բնակարանները տիրապետող երևույթ են դաշտավայրերում, որտեղ սկզբնական շրջաններում միայն կավն էին օգտագործում իբրև շինանյութ։ Առաջավոր Ասիայի ամբողջ հարավային մասը, Տիգրիսի ու Եփրատի հոսանքներով ողողվող



Միջագետքի լայնածավալ դաշտավայրը, ուր հնապատմական դարերում Բաբելոնը և ապա Ասորեստանը հասել էին զարգացած կուլտուրայի, ոչ միայն հասարակ բնակելի շենքերը, այլև պալատները, տաճարները, քաղաքների պարիսպները կառուցվում էին կավից։ Նույնն ենք տեսնում հնագույն Պաղեստինում, Սիրիայում և այլ հարևան երկրներում։ Նմանապես Նեղոսի հովտում, որ չափազանց հարուստ էր փափուկ կավային նյութով, հին Եգիպտոսի շենքերը կերտվում էին կավից։ Սովորաբար կավից պատրաստում էին աղյուսներ, որոնք չէին թրծվում, այլ չորացվում էին արևի տակ և ապա գործադրվում իբրև շինանյութ։ Այդ կավի շաղախին ավելի մեծ պնդություն և դիմացկունություն տալու նպատակով խառնում էին եղեգնի մանրուք կամ դարման։ Հնագիտական պեղումներն այսօր լույս աշխարհ են հանում երկրի խորքերում պահպանված, բայց չափազանց քայքայված ու փխրած վիճակում, վերոհիշյալ հնապատմական կավե կառույցքների ավերակները։ Միայն հետագայում հին Եգիպտոսը, Բաբելաստանը, Ասորեստանը և Սիրիան սովորական դարձրին քարաշեն կառույցքները շինանյութ քարը ներմուծելով հարևան երկրներից։

Նախապատմական Հայաստանում էլ վաղագույն մետաղե դարերում դաշտային վայրերի բնակարանները, հավանորեն, կառուցվում էին տեղում առատորեն գտնվող կավից։ Թեև արդի հնագիտական հետախուզումները մինչև այժմ չեն հայտաբերել այդպիսի բնակարանների հետքեր, որոնք անշուշտ քայքայվել ու փոշիացել են երկրի խորքում, սակայն բավական է դիտել Արարատյան դաշտի, Շարուրի, Սիսիանի, Թյուրքահայաստանի մի քանի դաշտավայրերի (Ալաշկերտի, Մշի և այլն) մինչև վերջին տարիները գոյություն ունեցող ու կառուցվող գյուղական բնակարանները, որպեսզի մեր այս ենթադրությունը համոզկեր դառնա։ Արարատյան դաշտի ոչ միայն գյուղական, այլև շատ անգամ քաղաքային տիպի բնակարանները, էլ չենք ասում այգիների կամ բակերի պարիսպները, նմանապես բլուրների վրա ավերակ դարձած փոքր ամրոցների որմերը կառուցվում էին ոչ թե անթուրծ աղյուսներից, այլ սոսկ կավե ցեխակույտերից։ Այս դեպքում կավե ցեխից շաղախում են քառակուսի մեծ կույտեր, որոնք առանց չորացնելու գործադրում են նաև այսօր։ Պատը կառուցելիս, սովորաբար, այդ խոշոր կույտերը, միանգամայն թաց, շարում են մի կարգ, ապա թողնում չորանալու և կարծ-

բանալու: Այնուհետև այս պնդացած շերտի վրա շարում են հաջորդ կարգը նույնպիսի թաց կավե կույտերից և ապա այս շարքը չորանալուց հետո հաջորդաբար բարձրացնում են երրորդ շարքը և այլն մինչև ցանկալի բարձրությունը, որից հետո արդեն պատը կամ պարիսպը պատրաստ է լինում: Այստեղ էլ շատ անգամ կավի ցեխին միախառնում են դարման, ինչպես այդ անում էին Ասորեստանում կամ Միջագետքում:

Տարակույս չկա, որ կավե կառույցքի այս ձևն ու տեխնիկան արխայիկ ժամանակներից անշեղ պահպանությամբ հասել է մինչև մեր օրերը՝ Արարատյան դաշտում, շնորհիվ երկրի բնակլիմայական առանձնահատուկ պայմանների: Նույնը պետք է ասել նաև Հայաստանի այլ դաշտավայրերի նկատմամբ:

Ուստի ուշադրության առնելով մի քանի պատմական ու հնագիտական տվյալներ և ուսումնասիրելով վերջին դարերի հայ գյուղացիական տունը, մենք մեր մտապատկերներում վերականգնում ենք Հայկական լեռնաշխարհի հնադարյան բնակարանը:

## II

## ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Հույն պատմագիր Քսենոփոնը, որը 5-րդ դարի վերջին (մեր թվականությունից առաջ) հունական զորքի հետ Պարսկաստանից Հայաստանի վրայով վերադառնում էր հայրենիք և գրել է այդ նահանջի պատմությունը, իմիջիայլոց տալիս է այն ժամանակվա հայկական գյուղի նկարագիրը: Հայաստանի գյուղական տներն ստորերկրյա էին, վերևից ջրհորի նման մուտք ունեցող, սակայն ստորև լայն. մարդիկ մտնում էին ներս, իջնելով սանդուղքով, իսկ անասունների համար փորված էր կողքից հատուկ մուտք. տների մեջ մարդկանց հետ միասին ապրում էին կովեր, ոչխարներ, այծեր. ընտանի թռչունները իրենց ձագերով հանդերձ[103]:

Անցյալ դարում Հայաստանի գյուղերն այցելած եվրոպացի ճանապարհորդները տալիս են հայ գեղջկական տների նկարագրերը, որոնց մեջ ներկայացրած բնակարանները, իրենց չնչին տարբերություններով, հիշեցնում են Քսենոփոնի նկարագրած գյուղական հայ տները: Գերմանացի գեներալ Մոլտկեն, վերհիշելով Քսենոփոնի նկարագիրը, ավելացնում է իր կողմից. «Մինչև



այսօր էլ հայերն ապրում են այդպիսի ստորերկրյա բնակարաններում, որոնք շատ անգամ այնպես խոր են, որ սրանց տանիքները գետնից հազիվ մի քիչ բարձր են: Շատ անգամ ճանապարհորդը, հասնելով գյուղը և կանգնած լինելով նրա տների տանիքների վրա, գյուղն է փնտրում, չնկատելով այն: Միայն այն ժամանակ է նա գլխի ընկնում, երբ իր ձիու առջևի ոտները ծխնելույզի (երդիկի) մեջ են խրվում, կամ երբ ինքը հանկարծակի է գալիս, տանիքից ներս ընկնելով ու թաղվելով ընտանիքի շրջանում»[104]:

Մի այլ գերմանացի ճանապարհորդ՝ Շվայգեր-Լերխենֆելդը, տալով Թյուրքահայաստանի գյուղի պատկերը, այն անվանում է հայկական տրոգլոդիտյան գյուղ (armenisches Troglodytendorf). տունը հողի բլրաձև կույտ է ներկայացնում, որի ճակատից մի փոքրիկ բացվածք, որ իբրև դուռ է ծառայում, տանում է դեպի ներս: «Բնակարանները խղճուկ սորեր են գետնի մեջ, որոնք ոչ թե մարդկային բնակարաններ են, այլ ախոռ: Լույսն ու օդն այստեղ անհարիր բաներ են. ամենքը ծծում են անասունների արտաշնչությունը: Անասունների ձագերը, խոճկորներն ու գառները դարձել են ընտանիքի անդամներ և ազատորեն շրջում են ստորերկրյա այդ տան բոլոր անկյուններում: Օտար հյուրերը սովորաբար ընդունվում են բնակարանի մի անջատ մասում, որ դռնով բաժանված է տան մնացյալ մասից: Կահկարասիք ասած բանը չկա, բացի ցածր ու հարթ բազմոցից (մինդար). պատից կախված են ու փռված տնային զանազան անոթներ, համետներ և այլն»[105]:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շոլեն այսպես է նկարագրում Երզնկայի գավառի (Թյուրքահայաստան) հայ գյուղական տները. «Որքան շքեղ են Հյուսիսային Անատոլիայի (Փոքր-Ասիա) ու հայաբնակ գավառների խղճուկ բնակարանները, համեմատած այն ողորմելի խուղերի հետ, ուր այժմ մենք իջել ենք: Շինված լինելով կավից իրար կցված քարերով, այդ տները սովորաբար գետնի կամ լեռնալանջի մեջ փորված խոռոչներ են. պատերի վրա դրված են կոպիտ տաշված գերաններ, որոնց վրա հանգչում է հողից և ճյուղերից շաղախված տանիքը: Լայն թախտը տարածվում է խուղի չորս պատերի երկարությամբ և միակ կահկարասին է: Գոմը, որ կից է ընդհանուր բնակարանին, շատ անգամ բաժանված չէ նրանից որևէ միջնորմով. ձին, կովը, եզը, ոչխարը, այծն ու հավերը մեծ ընտանեությամբ ապրում են այստեղ

և իրենց կենդանական տաքությամբ ձմեռը ջերմացնում են բնակարանի ներսը»[106]։

Կան նաև հայ ճանապարհորդների նկարագրություններ, որոնցից հիշենք Լևոն Սարգսյանինը, որը Թյուրքահայաստանի հայկական Պոլիգլու գյուղի (Բարձր Հայք) մասին գրում է. «Մենք իջանք մի ունևոր գյուղացու տան առաջ։ Այդ տունը քառակուսի ցածր շինություն էր, անտաշ քարերի և կավի մի կուտակում, լուսամուտներից բոլորովին զուրկ, հողածածկ կտուրով։ Տանտերը ներս տարավ մի նեղ ու մութ շվաք, բաց արեց մի դուռ շվաքի մեջ և մենք մտանք մի խավար տեղ։ Հոտը և անասունների փանչոցը իմացրեց, որ գոմում ենք։ Գոմի մի անկյունն աղոտ լուսավորված էր։ Դիմեցինք այնտեղ, դա հյուրերի համար շինված բաժանմունքը՝ օդան էր։ Այդ քառակուսի տարածությունը շրջապատող երկու պատերը՝ օդայի մուտքի դեմուդեմինը և ձախ կողմինը՝ գոմի ընդհանուր պատերի շարունակությունն էին, բայց այդ մասում սրբատաշ քարերից շինած. իսկ մյուս երկու պատերը, որոնք բաժանում էին օդան գոմից, ցածր էին և գերաններից ու սյուներից շինած. դռան նման մի անցք տանում էր օդան։ ...Առաստաղը գերաններից ու տախտակներից էր, մեջտեղում երեք փոքրիկ ծակեր կային, որոնցից լույս ու թարմ օդ էր մտնում գոմը. բայց այդ փոքրիկ ծակերն էլ ձմեռը ծածկում ենք»[107]։

Ինչպես ազգագրական տվյալները վկայում են, Քսենոփոնի նկարագրած տիպի ստորաբնակ տներ մինչև վերջերս էլ գոյություն ունեին Շատախի գավառում*(Վանա լճից հարավ, Տավրոսի լեռնաշղթայի այն կողմը). այստեղ գյուղացիներն իրենց բնակարանն էին իջնում սանդուղքով՝ հողե կտուրից, որն արտաքուստ միանգամայն աննկատելի է, հավասար լինելով երկրի մակերեսին։

Եթե Քսենոփոնի նկարագրած ստորաշեն տները Հայկական լեռնաշխարհի մի քանի վայրերում պահպանվել են մինչև մեր օրերը, այնուամենայնիվ դարերի ընթացքում, կուլտուրական զարգացման հետ, հայ գյուղական տունն էլ մշակել է յուրահատուկ ճարտարապետություն (արխիտեկտուր)։ Սա թեև գեղջկական բնակարանները որոշ չափով դուրս է հանել հողե տարերից և ժայռերի խոռոչներից ու բնակարաններին տվել է համեմատաբար ավելի ընդարձակ տարածություն, բայց և այնպես պահպանել է իր մեջ հնագույն տների շինարարական տեսագծերը։



Քսենոփոնի նկարագրած հին Հայաստանի գեղջկական տունը, դարերի ընթացքում ստանալով ավելի զարգացած ճարտարապետական կառույցք, որով նա հասել է մինչև մեր օրերը, այնուհանդերձ՝ համառ պահպանողությամբ նա մնացել է նույն կենցաղային հատկանիշներով, որոնք այնքան յուրահատուկ են բնական տնտեսության պայմաններում ապրող գյուղացիական զանգվածներին։

Այդ կողմից բնորոշ են Բարձր Հայքի (Բասենի, Էրզրումի, Երզնկայի, Դերջանի, Կամախի, Թորթումի և այլ մարզերի) գյուղական բնակարանները։ Այդօրինակ տան թռուցիկ նկարագիրը տվել է, ինչպես վերը տեսանք, Լևոն Սարգսյանը։ Սակայն անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել այդ ձևի տան ճարտարապետական նշանակության վրա, որպեսզի պարզենք այս տիպի տան աղերսը Քսենոփոնի նկարագրած բնակարանների հետ։

## III

## ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Բարձր Հայքի բնակարանը բաղկացած է երեք հիմնական մասերից — ա) շվաք կամ բակ, բ) տուն և գ) գոմ կամ ախոռ, որոնք միասին կազմում են քառանկյուն մի կառույցք, նման ձև ամրափակ արկղի։ Այս տիպի շենքերը հնում եղել են գետնափոր, իսկ անցյալ դարում կիսագետնափոր, ըստ որում բնակարանի ներքին մասը միացած էր լինում բլրի կամ սարի լանջին այնպես, որ 3 պատերն ամբողջովին մտնում էին գետնի մեջ, իսկ չորրորդը՝ առաջակողմինը բարձրանում էր արդեն գետնի մակերեսից։ Վերջին ժամանակները սկսել էին տները շինել այնպես, որ ամբողջ կառույցքը գետնի մակերևույթի վրա էր, ամուր հիմքերի վրա խարսխված։ Բնակարանի պատերը $3/4$—$7/8$ մետր հաստությամբ են, կոպիտ քարերով շարված, սվաղված են միայն ներքուստ. արտաքին ճակատի պատը, որտեղ կա ներս տանող միակ դուռը, համեմատաբար խնամքով է շինված, երբեմն նույնիսկ տաշած քարերով։

Շենքի առաջին, բավական մեծ ու լայն, կամարակապ դուռը փողոցից տանում է դեպի բակը կամ շվաքը, որ $2\frac{1}{2}$—3 սաժեն երկարությամբ և 1 սաժեն լայնությամբ նախասենյակ է

Այստեղ են ամառը քնում ընտանիքի այն անդամները, որոնք դաշտային աշխատանքների չեն գնացել. այստեղ են պահում յուղը, պանիրը և այլ երկրագործական ու աշխատանքային պարագաները. այստեղ են մարդկանց ոտքերի տակ վխտում և քչփչում տնային թռչունները: Բակն առաստաղում ունի փոքրիկ երդիկ, որով հազիվ աղոտ լույս է թափանցում ցերեկը:

«Բակից (շվաքից) դեպի ձախ մի առանձին փոքրիկ դռնով մտնում են բնակարանի հիմնական մասը՝ տունը, որ ինքնուրույն մի ամբողջություն է ներկայացնում: Սա քառակուսի սենյակ է 5—7 մետր երկարությամբ կողմերով, ուր լույսը թափանցում է տանիքի մեջ բացված երդիկից: Այս սենյակի բնորոշ կառուցվածքը հանդիսանում է առաստաղը: «Որպեսզի տան պատերը չընկճվեն տանիքի ծանրությունից, քարե պատվանդանների, սրճափարերի, վրա կանգնեցրած են, մասամբ որմի մեջ թաղվելով, լավ տաշված 2-ական քառանկյուն սյուներ, ամեն մեկը $1—1^{1}/_{2}$ մետր հեռավորությամբ սենյակի յուրաքանչյուր անկյունից: Չքավոր տներում այդ սյուները լինում են կեղևից մաքրած ծառի սովորական բներ, որոնք իրենց բարակ ծայրով ցցվում են դեպի վեր: Հիշյալ սյուների վրա նստեցվում են փայտե խոյակներ, որոնք կարճ հիմքով դեպի վայր՝ շրջված նեղ տրապեցիայի ձև ունեն: Այս 8 կեղծ սյուները նեցուկ են հանդիսանում պատերի երկարության վրա ձգված գերան-հեծաններին, որոնք ամենուր հայտնի են ռորմի կամ ռորմա անունով:

Առաստաղը բարձրանում է վեր մի քանի շարքերով, հետզհետե նեղանալով դեպի կենտրոնը, կազմում է յուրատեսակ մի գմբեթ: Այս ծածկն ստացվում է ոչ թե տան քառակուսի կողմերին զուգահեռ գերաններ շարելով, այլ անկյունների հատումներով: Առորմի անկյունները հատվում են եռանկյունի կարճ գերաններով, կոճղերով, որոնց ծայրերը հանգչում են տան յուրաքանչյուր անկյան երկու կողմը կանգնած սյուների վրա: Առորմի ամբողջ անկյունն այնուհետև ծածկվում է նույնպիսի կանոնավոր տաշած քառանկյուն, հետզհետե կարճացող գերաններով. նույնպիսի գերաններով լցվում են առորմների վրա գոյացած եռանկյունների ծայրերի միջանկյալ տարածությունները: Այդ եղանակով պատերի ու առորմների քառակուսին ստանում է ութանկյուն ձև:

Այս առաջին շարքի վրա նույն ձևով կառուցվում է երկ-



րորդը և ապա երրորդ շարքը, որ փոքր տներում արդեն լինում է ոչ թե ութանկյուն, այլ քառանկյուն: Այնուհետև հաջորդ բարձրացող շարքերը հետզհետե նեղացող քառանկյուններ են, որոնք հաջորդաբար իրենց անկյուններով հանգչում են նախորդ շարքի քառակուսու կողերի մեջտեղում: Վերջին քառակուսին, ամենափոքրը, թողնվում է բաց՝ երդիկի համար: Այս քառակուսիների իրար վրա շարվածքով գոյացած անկյունավոր եռանկյունները ծածկվում են կանոնավոր տաշած և իրար կից նստած գերաններով: Երդիկը, նրա մեջ ընկնելու վտանգից ապահովելու համար, ցանցվում է խաչաձև երկաթե ճաղերով՝ խաչերկաթով կամ խաչքով, որոնց ծայրերը խրվում են երդիկի կողերի մեջտեղը: Այդ երդիկը ծառայում է թե լույսի ու օդի և թե ծխնելույզի համար: Արտաքուստ այդ առաստաղի շարքերը ծածկվում են հարդով, ծղոտով կամ շամբով (եղեգնով) և ապա կավով կամ պինդ հողով: Ստացվում է յուրահատուկ ձևի գմբեթ կամ քառակուսու վրա թեթևակի բարձրացող հատյալ կոն:

Այս ձևի առաստաղը շատ տեղերում կոչվում է դարձավոր, իսկ Բուլանըխում, Ալաշկերտում և Լենինականի շրջաններում՝ հազարաշեն, այսինքն հազարավոր կտորներից շինված, Շապին-Գարահիսարում (Թյուրքահայք), Լոռում և այլուր՝ ողորմածածկ, իսկ Շիրակի մի քանի վայրերում՝ դաստամածկ:

Տունն ունի նաև մի բաժանմունք, որ սովորաբար լինում է դռան հանդեպ. այս հանդիպակաց պատի մեջ, նրա գրեթե $^{3}/_{4}$ տարածությամբ թողնվում է կամարակապ բացվածք, որ չի հասնում տան առաստաղին: Սա մուտք է դեպի այսպես կոչված թոնրատուն կամ թոնդրոջախ, ուր գետնի մեջ, անմիջապես երդիկի տակ շինված է թոնիրը՝ հաց ու կերակուր պատրաստելու համար: Թոնրատան հատակը $^{1}/_{4}$ մետրաչափ բարձր է լինում բուն տան հատակից, իսկ առաստաղն ունի իր առանձին երդիկը ծխնելույզի համար: Թոնդրատունը լինում է նույնպես քառանկյունի, երբ նրա առաստաղը կառուցված է դարձավորի ձևով, բայց շատ անգամ էլ կիսաբոլորակ է լինում, տրամագծով դեպի տունն ուղղված, երբ առաստաղը, հրդեհից ապահովելու համար, կառուցվում է քարերով՝ կամարակապ և ստանում է գմբեթի ձև: Այսպիսով՝ ամբողջ բնակարանի ընդհանուր տանիքը արտաքուստ ունի երկու հատյալ կոնի ձևով բարձրություններ, որոնցից մեկը տանն է պատկանում, իսկ մյուսը, ավելի բարձրը, թոնդրատանը:

Թոնդրատան տարնթեր՝ կողքից, հազվադեպ՝ ետևում, փոքրիկ դռնակով միացող փոքր սենյակ է լինում, առանց երդիկի ու առանց արտաքին դռան, որ ծառայում է իբրև մառան և կոչվում է քիլար: Թոնրատունը ծառայում է միաժամանակ իբրև խոհանոց և իբրև սեղանատուն: Այստեղ թոնրի շուրջը, բընդրափին, հավաքվում են ընտանիքի անդամները ճաշելու: Թոնրատան պատերի մեջ լինում են փոքրիկ խորշեր, աչկուճ, որոնք իբրև պահարան են ծառայում կերակուրների և խոհանոցային պարագաների համար: Նույնանման պահարաններ, պատրհաններ լինում են տան պատերի մեջ:

Շվաքի (թակի) հակառակ կողմը, տան հանդեպ, մի այլ դուռ բացվում է գոմի մեջ: Գոմը բաղկացած է լինում երկու մասից՝ բուն գոմից, որ հատկացված է անասունների համար, և օդայից, ավելի փոքր տարածությամբ, որ ծառայում է մարդկանց բնակության համար, առավելապես ձմեռը: Այդ երկու բաժանմունքները ունեն իրենց հատուկ առաստաղային կառույցները, որ տարբերվում են տան գարնավուչից:

Գոմն ունի յուրահատուկ ճարտարապետական կառույց: Գոմը՝ քառանկյուն, նայած անասունների քանակին, տարբեր երկարության ու լայնության մի շենք է, որի մեծագույն մասը հատկացված է անասուններին, իսկ փոքր մասը՝ օդային: Գոմի երկու պատերի ամբողջ երկարությամբ և սրանցից մեկ մետր հեռավորությամբ, զուգահեռ, սիմետրիկ շարքով, քարե պատվանդանների վրա կանգնեցրած են երկար փայտե սյուներ, որոնց միջև տարածքները բավական են մեկական անասունի համար: Այդ սյուների յուրաքանչյուր շարքի վրա, որ 50—60 սմ. բարձր է պատերից, գագաթի գոգաձև փորվածքի մեջ, ըստ երկարության ձգվող պատերին զուգահեռ ամրացվում են երկար գերաններ, մալարան, որոնց վրա ըստ լայնության ձգվող պատերին զուգահեռ և իրարից 1—1½ մետր հեռավորությամբ ամրացվում են գերաններ, կարմնջակ. իսկ մալարաների և կարմնջակի անկյուններին առիշեղ ամրացվում են փոքր գերաններով, մարդակներով: Երբեմն կարմնջակն իր մեջտեղում հենվում է սյունի վրա, որպեսզի չընկճվի կտրի ծանրությունից: Այդ ձևով 2—3 կարգի իրար վրա բարձրացող և հաջորդաբար նեղացող կարմնջակների ու մալարաների շրջանակներով կազմված ամբողջ առաստաղն արտաքուստ ծածկվում է հողով, ինչպես տան



կտուրը: Այս առաստաղը, որ ինչպես գլխիվայր շրջած նավի կամ օրորոցի ձև ունի, կոչվում է օրոցքածածկ:

Օդան բուն գոմից բաժանված է միմիայն 3—4 սյուներով, որոնց վրա հենվում է երկու երկար պատերի միջև ձգված և լայնքի պատերին զուգահեռ հաստ գերանը: Այդ սյուների պատվանդանն է հանդիսանում քարե հաստ ու ցածրիկ, գետնից 1¼—1½ մետր բարձրացող որմը: Չնայած որ օդան շինվում է գոմում՝ հատկապես կենդանիների ջերմությամբ տաքանալու նպատակով, այնուամենայնիվ հանդիպակաց պատի մեջտեղը գտնվում է բուխարի, գետնի մակերևույթից 25—30 սմ. բարձր-բուխարու երկու կողմից, միևնույն բարձրությամբ ձգվում են մոտ 1 մ. լայնությամբ քարե թախտեր, սաքի, որոնք ծածկվում են մինդարով, քեչայով, իսկ ունևորների մոտ՝ կապերտներով կամ խալիներով: Բուխարին ավելի հետնագույն երևույթ է. ավելի խոր հնում օդաները չեն ունեցել բուխարի, ինչպես այդ նկատելի է շատ անգամ չքավոր գյուղացիական տներում, և օդան տաքացվել է միայն գոմի կենդանական ջերմությամբ: Օդայի ծածկն ունի երկկողմանի թեթև թեքություն՝ սարքերի ուղղությամբ:

Օդան հատկացված էր գլխավորապես տղամարդկանց, իսկ տունը՝ առավելաբար կանանց, որտեղ սակայն տանտիրուհու թույլտվությամբ երբեմն կարող էին գիշերել ծառաներից վստահելիները: Հյուրերին ընդունում էին միմիայն օդայում[165]:

Բարձր Հայքի այս տիպի բնակարաններ հանդիպում են նաև Ռուսահայաստանի, գլխավորապես Անդրկովկասի հայկական գյուղերում, այն է՝ Ախալցխայի, Ախալքալաքի, Նոր-Բայազետի և Շիրակի գավառներում: Սրանք այն մարզերն են, ուր 1829 թ. ռուս-տաճկական պատերազմից Բարձր Հայքի հայերը գաղթել ու բնակություն են հաստատել, հարազատությամբ պահպանելով իրենց նախկին բնակարանների ճարտարապետական հատկությունները, որոնք միանգամայն համապատասխանում էին նոր բնակավայրի աշխարհագրական ու կլիմայական պայմաններին:

Բարձր Հայքի բնակարանի վերոհիշյալ նկարագիրը տիպային է, կան, ինարկե, այդ բնակարանի մի քանի վարիանտները, որոնք անշեղ պահպանում են իրենց երեք հիմնական մասերը, սակայն տարբերվում են միայն իրենց այդ մասերի դասավորությամբ:

Առաջին հայացքից, կարծես, այլ պատկեր է ներկայացնում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասի հայ գյուղա-

միջնական բնակարանը։ Այս բնակարանի տիպն է Լոռու գլխատունը և Ղարաբաղի դարբազը, որ նույնպես երեք հիմնական մասերից է բաղկացած, այն է՝ ա) սրահ կամ սեար, բ) գլխատուն կամ դարբազ և գ) գոմ։

Հին տիպի այս բնակարանները կիսագետնափոր են։ Կառուցված լինելով բացառապես լեռնային վայրերում, նրանք իրենց ետին պատով հարում են սարալանջին, ըստ որում ամբողջ շենքը երեք պատով (ետին և 2 կողքի) գրեթե գետնի մեջ է և միայն չորրորդ՝ ճակատի պատը բարձրանում է գետնի մակերեսից։ Այս տեսակ կառույցքի շնորհիվ՝ մեկ բնակարանի կտուրը դառնում է հաջորդ՝ վերև կանգնած բնակարանի առջևի հրապարակը։ Այսպիսի գյուղի ընդհանուր պատկերը հեռվից դժվար է նկատել. միայն գետնի մակերեսից բարձրացող լայն հաստյալ կոնաձև կտուրներից և սրանց երդիկներից ոլորվող ծխից ճամբորդը կարող է գուշակել բնակարանների գոյությունը։

Այս ձևի շենքն ամբողջովին քառակուսի է, որի կողմերը միջին թվով 12 արշին երկարություն են ունենում։ Որմերը շատ հաստ են, հասնելով երբեմն $1^1/_2$ արշ., և շարվում են կոպիտ, անտաշ քարերից։ Միայն ճակատի պատն է, որ սովորաբար շինվում է համեմատաբար ավելի խնամքով, արտաքուստ տաշված քարերից։ Ներքուստ պատերը շատ անգամ սվաղում են կավով կամ ցեխով։ Կողքի երկու պատերը, երկարացվելով, դուրս են գալիս ճակատի պատի մակարդակից և կազմում են սրահի երկու կողքերի պատերը. in antis, որոնք դասական ճարտարապետության մեջ հայտնի են անտ հորջորջումով։

Սրահը բնակարանի ճակատային մասն է, սրա պատի ամբողջ երկարությամբ, և 2—3 արշ. լայնություն է ունենում։ Սրահը բնակարանի բացօթյա մասն է, որի երկու կողքերին ձգվում են, ինչպես վերը նշեցինք, ամբողջ շենքի կողքի պատերի շարունակությունները in antis, երրորդ կողմը շենքի (գլխատան) ճակատի պատն է, իսկ չորրորդ կողմը, առջևից, բոլորովին բաց է և միայն մի քանի սյուներ ունի, որ պահպանում է շենքի կտուրի առջևի շարունակությունը։ Վաղ գարնանից մինչև ուշ աշունը, տարվա տաք եղանակներին, այստեղ է կենտրոնանում ամբողջ ընտանիքի առօրյա կյանքը, այստեղ են լինում նաև անասունները։ Այդ նկատառումով էլ կողքի պատի մեջ շինված է լինում բուխարի՝ կերակուր եփելու համար։

Սրահի, սովորաբար աջ ծայրանկյունում, մի ցածր դուռ ներս



է տանում դեպի գլխատուն կամ դարբազ, որ բնակարանի գլխավոր ու հիմնական մասն է կազմում։ Ցուրտ եղանակներին ակամելիս՝ գլխատունը կենդանանում է, դառնալով ընտանիքի հավաքատեղը և ծառայում է միաժամանակ որպես ընդունարան, սեղանատուն, ննջարան և որպես խոհանոց ու մառան։ Դռնով ներս մտնելիս՝ գլխատունն (դարբազը) ամբողջովին չի երևում, որովհետև դռան կողմից մինչև սենյակի մեջտեղը՝ աջ պատի կողքով, մարդու հասակի բարձրությամբ, ձգվում է մեկ միջնորմ, սովորաբար տախտակե, կազմելով մի տեսակ նրբանցք։ Այս միջնորմը, որ կոչվում է դըրբեքի կամ դըրբա (Ղարաբաղում), գլխատան ներսը պաշտպանում է արտաքին ցրտից, երբ, դուռն անընդհատ բանալով ու փակելով, դրսի օդի հոսանքը թափանցում է դեպի օջախի շուրջը նստողները։ Գլխատան (դարբազի) մեջ են գտնվում հավանոցը (դռան դիմացի պատի անկյունում), ալյուրի շտեմարանը, պատերի միջի խորշերը, պատրհաճները՝ ամանեղեն, անկողիններ (ծալք) և այլ տնային պարագաներ պահելու համար։ Միջնորմի պաշտպանության տակ է գտնվում նաև երկար թախտը, որ ձգվում է ճակատային պատի ներսի կողմում և որի վրա հանգստանում են տնեցիները կամ հյուրերը։ Գլխատան մեջտեղը, երդիկի տակ, գտնվում է օջախը, որ մի փոքր փորված հող է, ուր թոնրանի (կառկարենք) է դրված կամ նրան փոխարինող երկու մեծ քար։

Ինչպես Բարձր Հայքի տան, նույնպես էլ գլխատան (դարբազի) ծածկը ճարտարապետական հետաքրքրություն է ներկայացնում։ Սրա տանիքը նույնպես աստիճանաձև (գմբեթաձև) է, սակայն քառակուսի ձևով, և հենված է 8—9 վերշոկ հաստություն ունեցող չորս սյուների վրա, որոնք կանգնած են սենյակի անկյուններում քարե քառակուսի խարիսխների վրա, ամեն մի պատից $1^1/_2$—2 արշին հեռավորությամբ։ Այդ սյուներն իսկապես հաստ ծառերի բներ են, որոնք ցցված են իրենց արմատաբնով դեպի վեր։ Այդ արմատաբներն երկու կողմերից տափակված են ու մեջը դողափորված (պըռռ) ձև ունեն գերանները տեղավորելու համար։ Սրանք կոչվում են ղընակլըխ, կազմելով ճարտարապետական տեսակետից բնորոշ ինքնատիպ խոյակներ, որոնց տափակ կողերն ուղղված են ետին ու առաջին պատերին զուգահեռ։ Այս ղընակլըխների վրա, պըռռպի մեջ հանգուցվում են, կողքի երկու պատերին զուգահեռ, միջական գերաններ, որոնց վրա էլ, սյուներից աջ ու ձախ, դրվում են 2-ական գերաններ,

ճոխտակ: Ստացվում է չորս պատերին զուգահեռ քառակուսի փայտե շրջանակ: Այդ ճոխտակների վրա, սարքին կողքի մեկական գերաններից 1½ արշ. հեռավորությամբ, դնում են կրկին մի-մի գերան, որ կոչվում է կերաճախպեր, իսկ սրանց վրա էլ նույնպիսի հեռավորությամբ, ճոխտակներից աջից-ձախ տեղավորում են մի-մի զույգ գերաններ, լեյաճեր, որով կերոնախպերները լեյարների հետ միասին կազմում են երկրորդ քառակուսի շրջանակը: Լեյարներն էլ իրենց հերթին հանդիսանում են հենարաններ երկու կարճացրած գերանիկների, կռոփառների համար, որոնք երկու ուղիղ ձողերով միանում և կապվում են հաջորդ՝ երրորդ շրջանակը, որ միաժամանակ դառնում է երդիկի անցքը: Այդ երեք քառակուսի իրար վրա հաջորդաբար բարձրացող շրջանակների միջանկյալ տարածությունները փակվում են տաշած տախտակներով, ողլակներով, որոնց վրա արդեն դրսից լցնում են նախ՝ ծղոտ կամ դարման և ապա՝ ծածկում են պնդացրած հողով կամ կավով: Այստեղ էլ ղարադամի (գլխատան) ծածկն ստանում է ներսից գմբեթի, իսկ դրսից լայնանիստ հատյալ կոնի ձև[109]:

Գլխատանը կից, մեծ մասամբ ետին պատի կողմը կամ երբեմն էլ կողքի պատի կողմը, շինված է լինում փոքրիկ սենյակ, առանց երդիկի, որի մուտքը միմիայն գլխատնից է և որը ծառայում է իբրև մառան, մթերանոց: Այս սենյակը Լոռում կոչվում է մեջճատուն, իսկ Ղարաբաղում՝ քեռլ, այսինքն՝ քարայր, մի բնորոշ անուն, որ ցույց է տալիս նրա ճարտարապետական ծագումը. շատ տեղերում նա փորված է լինում գլխատան պատին անմիջականորեն հարող ժայռի կամ հողե լանջի մեջ և այս դեպքում շարված չի լինում քարերով:

Սրանից մի այլ դուռ էլ բացվում է դեպի գոմը, որ ինքնուրույն մաս է կազմում և կառուցված է լինում գլխատան կողքին: Գոմը սովորաբար առանց օդայի է և ներքին ոչ մի կապ չունի գլխատան (ղարադամի) հետ: Իսկ մի քանի վայրերում, համեմատաբար ավելի նոր կառուցվածքի ղարադամներում, գոմը շինվում էր արդեն որոշ հեռավորության վրա: Սակայն այս հանգամանքը, ավելի նորամուտ լինելով, չի խախտում այն հիմնական տեսագիծը, որ հինավուրց կենցաղային պայմաններում գոմն իրականում գլխատան հետ միասին է եղել, եթե նույնիսկ նրա մուտքն առանձին է և սրահից:

Վերջապես հիշենք թանրատունը, որ, հակառակ Բարձր Հայքի բնակարանի կառուցվածքի, ոչ թե անմիջապես կապված է տան հետ ներքուստ, այլ շինված է գլխատան կից, մուտք ունենալով սրահից: Սա նույնպես ատղամաճաշ տասատաղով է, ունենալով լայն երդիկ, ծխի ազատ ելքի համար[110]:

Մենք երկար կանգ առանք Բարձր Հայքի տան և Լոռու գլխատան կամ Ղարաբաղի ղարադամի տասատաղների նկարագրության վրա, որովհետև այդ կառուցվածքային գծերում պահպանվել են շատ հին ճարտարապետական հնարքներ, որոնք մեզ տանում են դեպի բրոնզեդարյան և նույնիսկ նեոլիթյան կուլտուրայի բնակարանային կառույցը:

Ղաճավանչը կամ ատղամաճաշը իր կոնստրուկտիվ տեսագծերով, եթե գերանները վերածենք սալաքարերի, ոչ այլ ինչ է, եթե ոչ այսպես կոչված «կեղծ կամարը» (falsches Gewölbe, ЛОЖНЫЙ СВОД), որ սովորական էր միկենյան կուլտուրայի համար և ընդհանրացած էր Արևմտյան Եվրոպայի բրոնզեդարյան, նմանապես նեոլիթյան դարերի բնակարանային կառույցներում: Սա աղեղաձև բոլորակի ձգված կամար չէ, այլ բաղկացած է տափակ սալաքարերի հորիզոնական գծերով շարված օղակաձև շրջանակներից: Այս շրջանակները, հաջորդաբար դեպի վեր նեղանալով, շարվում են այնպես, որ յուրաքանչյուր օղակաձև շրջանակի սալաքարերը դուրս են ցցված նախորդ օղակից իրենց կողերով և հենարան են ծառայում հաջորդ շրջանակին, մինչև որ վերջին օղակաձև շրջանակը ծածկվում է մի մեծ տափակ սալաքարով:

Կեղծ կամարի կոնստրուկտիվ ձև են ներկայացնում Ժ. Մորգանի պեղած հողային դամբանները Լոռում:

Ընդհանուր առմամբ ստացվում է լայնանիստ հատյալ կոնի ձև ունեցող ծածկ: «Կեղծ կամարը» իր կոնստրուկտիվ տեսագծերով բխել է այն հանգամանքից, որ արխայիկ դարերում բնակարանները եղել են ոչ թե քառանկյուն, այլ բոլորակի, նմանվելով քարայրներին, կամարաձև խուղերին և վրանաձև պրիմիտիվ հյուղերին: Քառանկյուն բնակարանները, որոնք ավելի հետո են երևացել, չէին կարող ունենալ այլևս կոնաձև տանիքներ, և պետք է նրանց ծածկը հարմարեցվեր նոր կոնստրուկտիվ պահանջներին: Հիրավի, հայկական ատղամաճաշը (ղաճավանչը) իր շրջանակների բարձրացող հաջորդական շարքերով պահպանել է արխայիկ «կեղծ կամարի» տեսագիծը, բայց համապատասխանելով քառանկյուն բնակարանի կառույցքին: Այս ծածկն այլևս բոլորակ շրջանակներ չի ներկայացնում, այլ 8-անկյուն շրջա-

նակներ, ապա և քառանկյուն շրջանակներ, որոնք հաջորդական նեղացումով իրար վրա բարձրանալիս՝ կազմում են «կեղծ-կամարաձև գմբեթ», որն ընդգրկում է ամբողջ տունը բոլոր 4 անկյուններից և կտուրին տալիս է չափազանց լայնանիստ հատյալ կոնի ձև։

Հայկական գլխատան կամ դարաղամի հնությունը որոշ չափով պարզվում է, երբ համեմատության ենք առնում մի ուշագրավ հնադարյան կառույցը, որը գտնվում է այժմյան պարսկական Ադրբեջանում, Սուջ-բուլաղի մոտերքը, Ֆախրիկեն կոչված ժայռերի մեջ (LHA, I, 225—228)։ Մեծ հնություն ներկայացնող այս կառույցի ճարտարապետական առանձնագծերը ոչ միայն բնորոշ կոնստրուկտիվ նմանություններ ունեն գլխատան հետ, այլև սերտ ազգագրական առնչությամբ է թերևս կապված վերջինիս հետ։

Ֆախրիկեն ժայռաշարի բարձր լանջին, որտեղ նկատելի են բազմաթիվ բնական խոռոչներ, մի ընդարձակ բնական քարայր արվեստորեն կոփվել և վերածվել է հոյակապ կառույցի, որը տեղավորված է բավական դժվարամատչելի բարձրության վրա։ Արտաքին մասը, մինչև գետինը, հարթեցվել է առանց կոփման և այն խորդուբորդ շնորհիվ հնարավոր է մագլցելով բարձրանալ, սակայն վերին 3 մետր բարձրությունը, մինչև կառույցի պատվանդանը, խնամքով տաշվել է ու ողորկվել ուղղահայաց մակերեսով, որով միանգամայն անմատչելի է դառնում բուն կառույցը, մինչև որ հատուկ սանդուղք չդրվի։

Կառույցի առջևի մասը ներկայացնում է քարայրի մեջ ամբողջ ճակատով կոփված մի փոքրիկ հրապարակ՝ 7,35 մետր երկարությամբ, 1,58 մետր լայնությամբ։ Հրապարակի ետին մասում ամբողջ երկարությամբ բարձրանում է մեկ աստիճան, որ հանդիսանում է ամբողջ կառույցի երկրորդ մասը, իսկապես ասած, բուն շենքի առջևի մասի ճակատը։ Այս մասը բաղկացած է աջ ու ձախ կողմերը ժայռից կերտված պիլյաստրներից, իսկ մեջտեղում՝ երկու զանգվածեղ, նույն ժայռից կերտված սյուներից, որոշ չափով դորիական ոճի։ Այս մասը կազմում է մի նախասենյակ, միանգամայն նման հայկական սրահին։ Այստեղից արդեն բարձրանում է մեկ աստիճանով, նույնպիսի երկու սյունով ու պիլյաստրներով բաժանված՝ շենքի վերջին ու ներքին մասը, ուր հատակին, ժայռի մեջ, փորված են երեք դամբաններ։ Ամբողջ կառույցը կոփված է քարայրի միապաղաղ ժայռային զանգվածից՝ մեծ արվեստով և բնավ չի կրում խալդական ճարտարապետության ոչ մի հատկանիշ։

Ինչպես տեսնում ենք, այս ժայռաշեն դամբանը, որպես միայն հավիտենական օթևան, կերտվել է նմանողությամբ կենդանի մարդկանց բնակարանի, որ բաղկացած է սրահից և տանից, որոնք կազմում են նաև հայկական բնակարանի հիմնական մասերը։

Փոքր-Ասիայի հնագիտական հետախուզումներով հայտնի Ռ. Լեոնհարդ և Գեորգ Հիրշֆելդ գիտնականները հայտաբերել են հին պատմության մեջ հայտնի Կապադովկիայում (Պաֆլագոնիայում) բազմաթիվ ժայռակոփ դամբաններ, որոնք համանման են Ֆախրիկեի վերոհիշյալ կառույցին և միևնույն ժամանակ, ըստ նրանց վկայության, մեծ նմանություն ունեն ներկայումս էլ այդ մարզերում գոյություն ունեցող գյուղական փայտաշեն ու աղյուսաշեն բնակարաններին[111]։ Ռ. Լեոնհարդի կարծիքով, պաֆլագոնիական (Կապադովկիայի) այդ հինավուրց քարակոփ դամբանները ծագում են մոտավորապես 1200 թվականից նախքան մեր թվականությունը[112]։

Պրոֆ. Լեման-Հաուպտը, հիմնվելով վերոհիշյալ գիտնականների հնագիտական ուսումնասիրությունների վրա, փորձում է Ֆախրիկեի դամբանի ճարտարապետական կառույցը վերագրել արմեններին, երբ սրանք Կապադովկիայից հեռացել ներս թափանցեցին Առաջավոր Ասիա։ «Այս դիտողությունները,— ասում է Լեման-Հաուպտը,— կարող են հիմք ծառայել թե դեմ և թե թեր տեսակետների, որոնց համաձայն հին հունական տաճարաշինության templum in antis իր մյուս բաղկացուցիչ տարրերով փոքրասիական ծագում ունի և ոչ թե հույներից է անցել, այլ ընդհակառակը, փոքրասիացիներից է անցել հույներին։ ...Ամենահավանականն այն է, որ այդ կառույցի (Ֆախրիկեի) ծագումը պետք է կապել այն գաղթի հետ, որ Փոքր-Ասիայից դեպի արևելք կատարեցին հայերը, որոնք, ինչպես կարելի է եզրակացնել նաև այլ նշաններից, մեկնելով Թրակիայից և հետզհետե առաջ խաղալով դեպի Կապադովկիա, կայան էին ունեցել Պաֆլագոնիայում» (LHA, I, 228)։

## IV

## ՏԱՆ ԵՎ ԳԼԽԱՏԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Երբ վերլուծում ենք Հայկական լեռնաշխարհի վերոհիշյալ երկու տիպի, տարբեր երևացող բնակարանների ճարտարապետական տեսակները, տեսնում ենք, որ այդ տարբերությունը սոսկ արտաքուստ է։ Անշուշտ, կուլտուրական զարգացման ընթացքում, երբ փոփոխվում են կենցաղային պայմանները, ապա այնժամ փոխվում ու համակերպվում են նաև բնակարանի կոնստրուկտիվ հանգամանքները, ընդունելով տիրապետող կենցաղին համապատասխան ձևեր։ Բայց և այնպես այդ ձևերում անփոփոխ պահպանվում է մի հիմնական ճարտարապետական գաղափար, որով դարեր շարունակ, մինչև մեր օրերը կառուցվել է հայ գյուղացիական տունը՝ ժառանգություն հանդիսանալով ոչ միմիայն հին պատմական, Քսենոֆոնի նկարագրած, բնակարանի, այլև տեղական նախնադարյանի, որ տանում է դեպի բրոնզե ու հնագույն երկաթե դարերը։

Հիրավի, մեր նկարագրած երկու տիպի բնակարանների կարծեցյալ տարբերությունը ջնջվում է նրանց ճարտարապետական կառույցի այն հիմնական տեսակով, որ բղխում է արտադրության ձևերի նախադրյալներից։ Այդ ճարտարապետական հիմնական տեսագիծը կայանում է նրանում, որ բնակարանը կառուցվում էր, հարմարեցնելով նրա մանրամասնությունները նստակյաց երկրագործական կենցաղային պայմաններին։ Երկրագործությունն իր օժանդակ անասնապահությամբ հանդերձ՝ այն տիրապետող տնտեսական գործունեությունն է, որն իր արտադրական ձևերին է համակերպել նաև բնակության ձևերը։

Մենք վերը տեսանք, որ երկրագործն իր անասունների հետ միասին պատսպարվում էր միևնույն հարկի տակ թե՛ Քսենոֆոնից մեզ հայտնի գետնափոր բնակարանում և թե՛ Բարձր Հայքի տան կամ Հայաստանի հյուսիս-արևելյան մարզերի գլխատան (դարբասի) մեջ, այսինքն սկսած 5-րդ դարից (ն. ք. մեր թվականութ.) մինչև անցյալ դարը. երկար ու ձիգ մի ժամանակաշրջանում, երբ տիրում էր բնատնտեսությունը։ Այդ բնատնտեսության պայմաններում էր զարգանում երկրագործությունն իր օժանդակ անասնապահությամբ և իր կենցաղային դրոշմն էր դնում բնակարանի ճարտարապետական կառույցի վրա։ Սակայն երկրագործությունն ինքնին, բնատնտեսության էքստենսիվ պայմաններում, իր աշխատանքային ձևերով որոշ կախում ունի նաև տեղական կլիմայական պայմաններից ու երկրի կոնֆիգուրացիայից։ Ահա այստեղ է, որ վերոհիշյալ կենցաղին հարմարված բնակարանի ճարտարապետական տեսագիծը դրսևորում է համապատասխան կոնստրուկտիվ ձևեր, որոնք առաջին հայացքից թվում են տարբեր։

Բարձր Հայքը ներկայացնում է անտառազուրկ բարձրավանդակ դաշտեր և կլիմայական տեսակետից հայտնի է թե՛ տարվա եղանակների և թե՛ ցերեկվա ու գիշերվա ջերմության կտրուկ տատանումներով, այն է՝ խիստ սառնամանիք ձմեռ և կիզիչ շոգ ամառ, ցերեկը ջերմության ուժեղ բարձրացում, իսկ գիշերը ջերմության շեշտակի անկում։ Իսկ Հայաստանի հյուսիս-արևելյան մարզերը համեմատաբար հարուստ են անտառապատ ձորերով ու հովիտներով, որոնք պաշտպանված են սառնաշունչ քամիներից և օդը որոշ չափով խոնավություն է պարունակում։ Այս հանգամանքների շնորհիվ այստեղ տարվա եղանակները, ինչպես նաև ցերեկն ու գիշերն իրար հաջորդում են առանց ջերմության խիստ տատանումների. կլիման բարեխառն է, իսկ ձմեռը և ամառը՝ համեմատաբար մեղմ։

Ահա այդ կլիմայական պայմաններին է համակերպվել Հայկական լեռնաշխարհի բնակարանը, իր կոնստրուկտիվ առանձնահատկությունները զարգացնելով վերոհիշյալ երկու տիպերի ուղղությամբ։ Հայաստանի երկրագործ ժողովրդի բնակարանի ամենանախնական ձևը եղել է այն տունը, որի մեջ մարդիկ ու ընտանի անասունները ապրել են միասին, ամփոփվելով չորս պատերի մեջ, ինչպես այդ նկարագրել է Քսենոֆոնը։ Սակայն երբ մի կողմից՝ տնտեսության զարգացման և երկրագործական արդյունքների կուտակման, իսկ մյուս կողմից՝ տոհմային սկզբունքների վրա հիմնված ընտանիքի կազմի աճման և աշխատանքի բաժանման (ըստ սեռի ու հասակի) հետևանքով բնակարանի տարածությունն սկսում է ընդլայնվել, ապա բնակարանի ներքին կազմն էլ սկսում է համակերպվել տնտեսական սպասարկման նոր պահանջներին։ Տունն այնուհետև իր ներքին կառուցվածքով ենթարկվում է որոշ շերտավորման։ Այդ արտահայտվում է գլխավորապես այն երեք մասերի բաժանման մեջ, որոնք գոյություն ունեն թե՛ Բարձր Հայքի տան և թե՛ Ղարաբաղի դարբասի (գլխատան) տիպերում։ Բայց այնուհանդերձ՝ այդ երեք մասերի կոմպլեքսն իր ամբողջականությամբ անփո-

վրա պահպանում է նախնական բնակարանի հիմնական տեսագիծը, միևնույն հարկի տակ պահելով մարդկանց ու անասուններին իրենց մթերային պաշարներով ու աշխատանքային պարագաներով։

Հիրավի, Բարձր Հայքի բնակարանը, բաղկանալով երեք մասից, թեև իր բակով (շվաքով) տունը բաժանում է գոմից, բայց և այնպես ձմեռ ժամանակ ընտանիքը ապրում է ոչ միայն տանը, ուր սովորաբար աշխատում, ճաշում և քնում են, այլև գոմում—ոդայում: Իսկ դարադամում կամ գլխատանը, թեև անասունների բաժանմունքը՝ գոմը անջատ է մարդկանց բաժանմունքից, և ձմեռը գերդաստանի անդամները երբեք չեն մնում անասունների հետ մեկտեղ, սակայն և այնպես գոմը շինված է միևնույն կտուրի տակ և կառուցքային տեսակետից գլխատան հետ միասին կազմում է ամբողջական մի կոմպլեքս:

Նույնն ենք տեսնում թոնրատան մասին: Մինչդեռ Բարձր Հայքի բնակարանում թոնրատունը կամարաձև բացվածքով միացած է անմիջապես տանը հետ, կազմելով սրա յուրատեսակ մի ապսիդը, ընդհակառակը, Լոռու և Ղարաբաղի բնակարաններում թոնրատունը, ինչպես և գոմը (թեև առանձին մուտքով՝ սրահից) շինված է միևնույն հարկի տակ և մի կոմպլեքսով։

Այս երկու տիպիկ շեղումները պետք է բացատրել հիշյալ երկու մարզերի տարբեր կլիմայական պայմաններով: Բարձր Հայքի խիստ կլիման, մանավանդ ձմեռվա առանձնահատկությունները, մարդկանց ստիպում է պարփակվել պաշտպանված շենքում: Ուստի ամբողջ բնակարանն ստանում է բուն ամենայնի փակ արկղի ձև, որ իր նախնական աստիճանում եղել է ստորերկրյա փորված սորը: Շենքի այդօրինակ կառույցքին, ուր ամենքն ստիպված են տարվա այդ շրջանում եղանակին համակերպվել, նպաստում է նաև այն հանգամանքը, որ այդ գավառներում, վառելափայտի բացակայության հետևանքով, միայն աթար են վառում, որ ինքնին բավական թանգ է նստում գյուղացուն: Ջերմության այդ պակասն ահա լրացվում է նրանով, որ մարդիկ ապրում են տնային կենդանիների հետ միևնույն բնակարանում: Նմանապես ամառվա կիզիչ արևին, այդ քարոտ արկղաձև բնակարանը ամեն կողմից փակ ու պաշտպանված լինելով, իր մեջ պահպանում է զովությունը, որի հետևանքով տնային առօրյա կյանքը կենտրոնանում է բակում, կամ շվաքում, մի բնորոշ անուն, որ ցույց է տալիս բնակարանի այդ մասի նշանակությունը ու տեղական ամառային կիզիչ եղանակների նկատմամբ:



Բարձր Հայքի համեմատությամբ Հայաստանի հյուսիսարևելյան մարզերը, շնորհիվ կլիմայական ավելի բարենպաստ պայմանների և անտառներից առատ վառելափայտի, այնքան էլ չեն նեղվում ձմռան ցրտերից, որոնք համեմատաբար ավելի մեղմ են ու հեշտ տանելի: Ուստի վառելափայտի առատության պայմաններում մարդիկ կարիք չունեն բնակարանը տաքացնել անասունների ջերմությամբ: Ահա թե ինչու գլխատունը (դարադամը) միացած չէ գոմի հետ և չունի բակ (շվաք), որին այստեղ փոխարինում է սրահը: Սրահն իր կառուցքային տեսագծով էապես նույն բակն է, բայց տիրող բարեխառն կլիմայի շնորհիվ, ստացել է բնակարանի արտաքին, բացօթյա մասի նշանակություն, մինչդեռ բակը կրելով նույն կոնստրուկտիվ տեսագիծը՝ սառնաշունչ ձմռան և կիզիչ ամառվա ոտքից պաշտպանվելու նկատառումով, մտցել է բնակարանի ներքին, ամեն կողմից փակված մի մաս:

Բարձր Հայքի բակի (շվաքի) և Հայաստանի հյուսիս-արևելյան մարզի սրահի կենցաղային նույնանիշ էությունը ճարտարապետական տեսակետից բացահայտ է նաև նրանց անուններից. Բարձր Հայքի մի քանի տեղերում բակը (շվաքը) այլ կերպ կոչվում է նաև որրախ, այսինքն՝ սրահ, կամ չարդախ, որպիսի անունով է կոչվում նաև Ղարաբաղի շատ տեղերում դարադամի սրահը:

Հայկական լեռնաշխարհի մեր նկարագրած բնակարանի (գլխատան կամ տան) հնագույն ծագումը ավելի ցայտուն է աչքի զարնում, երբ համեմատության ենք առնում միջերկրածովյան հնագույն կուլտուրայի բնակարանները:

Հնադարյան բնակարանի նկարագիր են տալիս Հոմերոսի Ոդիսականն ու Իլիականը, ուր արձանագրված են կենցաղային պատկերներ, որոնք ընդգրկում են զանազան դարերի կուլտուրան, սկսած միկենյան ամենահին կուլտուրայից և վերջացրած հնագույն հունականով, այն է բրոնզեդարյան շրջանով: Այդ բնակարանը կոչվում էր մեգարոն (μεγαρον), այսինքն մեծ տուն, որ մեր գլխատունն է. սա նույնպես քառանկյուն սենյակ էր, մեջտեղում՝ օջախ, որի ծուխը դուրս էր ելնում տանիքի մեջ բացված անցքով՝ երդիկով, որ միաժամանակ լույսի համար էլ էր ծառայում: Մեգարոնը Հոմերոսի մոտ կոչվում է նաև μέλαθρον—սև տուն, մի անուն, որ ցույց է տալիս նրա պատերի սևացած լինելը օջախի ծխից: Մեգարոնի առջևի մասն էր կազմում պրո-

դոմոսը (πρόδομος)—նախասրահը, կիսաբաց մի նախասենյակ, որի ճակատը պատ չուներ, միայն կային երկու սյուներ՝ տանիքը պահելու համար. սա հայկական սրահն է: Հետագայում այդպես, հին-հունական կլասիկ կուլտուրայի շրջանում, մեգարոնը դառնում է բարդացած բնակարանի այն հիմնական մասը, որից բաժանվում են կենցաղային զանազան կարիքների ու տնտեսական սպասարկման ծառայող սենյակներ:

Այսպես մեգարոնն իր պրոդոմոսով բոլոր էական գծերով հար և նման է հայկական գլխատանն իր սրահով: Համեմատական լեզվաբանությունը ցույց է տալիս, որ սրահը եղել է հնդեվրոպական տան անբաժանելի բաղկացուցիչ մասը, ուստի այն հանդիպում է համատարած ծավալումով ու բազմատեսակ ձևերով: Սրահի կոնստրուկտիվ գաղափարը պահպանում է հնադարյան ճարտարապետությունը, որ նպատակ է ունեցել տան երկու կողքի պատերին in antis երկարացնելով դեպի առաջ՝ բնակարանի ներքին մասը պաշտպանել քամիներից: Տակավին նեոլիթյան դարերի բնակարաններն անպայման ունեին այդ կոնստրուկտիվ մասը՝ սրահը. շատ անգամ առանց սյուների: Նեոլիթյան պալաֆիտային (ցցավոր) բնակարանների ցցավոր տները կանոնավոր կրկնությամբ բաղկացած են երկու մասից՝ բուն սենյակ—տնից և սրա առջևի սրահից: Նմանապես նեոլիթյան դարերի Թեսալիայի Սեսկլո և Դիմինիի պեղումներում հայտաբերված դռնաների կերամիկայի վրա նկարված են երկու բաժանմունքից բաղկացած բնակարաններ, որոնք հիշեցնում են Հոմերոսի մեգարոնն իր սրահով:

Մեգարոնի կլասիկ ձևը ներկայացնում է էգեյան բրոնզի դարը: Այդ կուլտուրայի ամենահին ձևը հայտաբերվել է Տրոյայի երկրորդ շերտում. այդ բնակարանը բաղկացած է օջախ ունեցող քառանկյուն սենյակից և տնային, խորը ներս ընկած սրահից: Միկենքի ու Տիրինթի մեգարոնները նույնպես ունեն սյուների վրա հենված կտուրով սրահ: Վերջապես՝ բրոնզեդարյան Գերմանիայի բնակարանները, որոնք փայտաշեն էին, բաղկացած են եղել նույն կոնստրուկտիվ մասերից, որտեղ հիմնական են եղել տուն-սենյակը և սրահը:

Հնադարյան լատինական (հռոմեական) բնակարանը բաղկացած էր atrium-ից, որ նշանակում է «սև սենյակ»: Այս բառը, ինչպես և հին հունական μελάθρον, ընդգծում է այդ բնակարանի կառուցքային էությունը. սա քառանկյուն մի սենյակ էր,



որն ուներ մուտքի մի դուռ և կտուրին մի անցք (երդիկ)՝ ծխի և լույսի համար. ատրիումի մեջտեղը կար օջախ, որ մի փոքր բարձր էր հատակից. կրակի ծուխը, լցնելով սենյակը, դուրս էր գալիս երդիկից: Ահա թե ինչու «սև սենյակ»—atrium էր կոչվում նա[113]: Այս ատրիումը հետագայում, ինչպես վկայում են Պոմպեյի և հին-հռոմեական այլ քաղաքների ավերակները, դառնում է, հռոմեական դասական ճարտարապետական կանոններով, կենտրոնական մեծ սրահ—դահլիճ, որին, առանձին մուտքերով, հարում են զանազան նպատակների ծառայող հատուկ սենյակներ: Հին-հռոմեական ատրիումի ճարտարապետական սկզբունքը գտնում ենք հնագույն էտրուսկական դամբարաններում. օրինակ՝ Ծերվետերիի գերեզմանը, որ քառակուսի քարաշեն բնակարան է ներկայացնում մեռյալի համար, նման է ատրիումին, ունենալով ճակատից մեկ դուռ, իսկ տանիքից՝ երդիկ, որի տակ շինված է օջախը, իբրև մեռյալի վերջին հանգստի տեղը:

Համեմատության առնելով μέλαθρον-ի և atrium-ի հետ դարպասը (գլխատունը), ոչ միայն կոնստրուկտիվ տեսակետով ու կենցաղային նշանակություններով, այլև լեզվաբանական տվյալով, տեսնում ենք, որ հայկական դարպասը, թեև փոխառյալ Թուրքերեն բառ, արտահայտում է նույն իմաստը, այսինքն՝ սև տուն:

Վերոբերյալ համեմատական օրինակները և ճարտարապետական տեսակետից նշված հանգամանքները մեզ բերում են այն եզրակացության, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակարանն իր էական գծերով պահպանվել է մինչև անցյալ դարի վերջերը և ճառագայթ հայացքով մեզ տանում է ոչ միայն դեպի բրոնզեդարյան և ապա նեոլիթյան կուլտուրաները, այլև դեպի այն քարանձավները, այրերն ու սորերը, որոնց մեջ մի ժամանակ բնակվում էր պալեոլիթի մարդը:

Եթե այդ այրերն ու սորերը կուլտուրական զարգացման դարերի հոսանքում վերափոխվել են վերը նկարագրված բնակարանների տիպին, այնուհանդերձ տեղագրական առանձնահատկությունների շնորհիվ՝ քարայրերն իրականում շարունակել են տակավին մինչև մեր օրերը պահպանել իրենց նշանակությունը իբրև մարդկային բնակարաններ: Այդ քարայրերը, համակերպվելով երկրագործական ու սրան օժանդակ անասնապահական տնտեսության պահանջներին, տեղով կենցաղային պայմաններում բաժանվել են նույն բաղկացուցիչ մասերի՝ սրահի ու դոմի,

կազմելով միաժամանակ մի ամբողջական համալիր։ Այդպես են Զանգեզուրի գավառում, առանձնապես Գորիսի շրջանում, բազմաթիվ բնակարանները։ Դրանք բնական ու արհեստական քարայրեր են, որոնք տեղական բարբառով քրատակ (քարէ տակ) են կոչվում։ Հին ժամանակներն այս գավառամասի գրեթե բոլոր բնակարաններն այդպիսի այրեր են եղել։ Քրատակները փորված են և փորվում են ձորերի լանջերին՝ քերծերի մեջ։ Ընդհանրապես դրան վերև մի ծակ է թողնվում իբրև լուսամուտ, թեև կան և այնպիսիները, որոնք բոլորովին լուսամուտ չունեն։ Դրանք բաղկացած են միայն մեկ մեծ սենյակից. թեև կան նաև երկու սենյակ ունեցողներ։ Դրան մոտ անկյունում շինված է լինում մի օջախ, որի ետևում մի փոքրիկ անցք է բաց արած՝ իբր ծխնելույզ։ Մի քանիսի մեջ, մանավանդ հների, թոնիր կա թաղված։ Գոմերի մեջ բնականից պահարաններ, դարակներ ու նստարաններ են փորված։ Բոլոր պատերը սևացած են ծխից, որ բարձրանում է օջախից» (ԱՀ, IV, 59)։

Սղերտ քաղաքից (Թյուրքահայաստան) կես ժամ հեռավորության վրա տարածվում է մի երկար ձոր, որ յուր սեպ և ուղղաձիգ ժայռերով իջնում է դեպի աղմկահույզ ու փրփրադեզ Բոհտան-սու գետը (Տիգրիսի ճյուղը)։ Ձորի այդ մասում եզերքը զանազան բարձրության վրա լի է բնական քարայրերով, որոնք կանոնավոր կերտվել են մարդկային ձեռքով։ Այդ քարայրերը բնորոշ են նրանով, որ Տիգրիսի երկու ճյուղերի ամբողջ գծով, սկսած Դիարբեքիրից մինչև Սղերտ, երբեմն՝ եղել է քարայրաբնակ մի ժողովրդի կենտրոն (LHA, I, 333)։ Նույնն է ներկա Հասանքեֆը, պատմում է Լեման-Հաուպտը, ուր բնակիչներից շատերը, մեծամասնությունը հայեր, ապրում են ծխով սևացած բնական քարայրերում, որտեղ գործում են նաև զանազան արհեստանոցներ ու խանութներ (LHA, I, 374)։ Հասանքեֆի[114] շրջակայքում, ամբողջ ձորի մեջ, Տիգրիսի ընթացքով, հանդիպում են թե առանձնակի և թե խմբված ժայռաբնակարաններ։ Մի տեղ նույնիսկ մնացել է քարայր-բնակարաններից բաղկացած մի ամբողջ հինավուրց քաղաք, որ ներկայումս ամայի է։ Այդ նույն գծի վրա է գտնվում Սքիվթան գյուղը, ամբողջովին բաղկացած ժայռախորշներից, որոնց մի մասը մաքուր բնական քարայրեր են, իսկ մի մասն էլ քարե շարվածքներով լայնացրած ու հարմարեցրված է բնակության համար (ibid., 387)։



# V

## ՔԱՐԱԿՈՓ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Արդի ազգագրական ավյալների հիման վրա փորձեցինք ուրվագծել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակարանը, որի մնացորդները դեռևս չեն հայտաբերված հնագիտական հետախուզումներով. բնակարան, որտեղ ապրել ու գոյություն են պահպանել բնատնտեսության պայմաններում աշխատող երկրագործ զանգվածները։ Սակայն դրա փոխարեն հնագիտական հետազոտությունները այսօր լույս աշխարհ են հանել բազմաթիվ մոնումենտալ շենքեր, որոնց մնացորդներն ու ավերակները լռելյայն բարբառում են իրենց երբեմնի տերերի մասին, որոնք պատկանում էին այն ժամանակվա տիրապետող դասակարգերին։

Մետաղի դարերի հետ սկիզբ առած սոցիալ-հասարակական շերտավորման հետևանքով գոյացող տեղական կալվածատեր-իշխանական դասակարգը և դրա հետ միասին նաև եկվոր նվաճողների ռազմիկ-ղեկավար դասը, իրենց իշխող դիրքի շնորհիվ, կարողացան շահագործել ստորադրյալ երկրագործ զանգվածների աշխատանքը և ունակությունները ու կառուցել, իրենց կենսական պետքերի համար կամ իրենց անունը հավերժացնելու նպատակով, այն հոյակապ շենքերը, որոնց մնացորդները տեսնում ենք բերդերի ու ամրոցների քայքայված պարիսպներում, պալատների, տաճարների և այլ զանգվածեղ կառույցների ավերակներում։ Հայկական լեռնաշխարհի այս տիպի հնագիտական հուշարձանները վերագրվում են խալդական տիրապետության ժամանակաշրջանին, քանի որ այդ մնացորդների մեծ մասը կապված է լինում խալդական սեպաձև արձանագրությունների հետ։ Բայց և այնպես պետք է ենթադրել, որ այդ շենքերից շատերը գոյություն ունեին տակավին խալդերից առաջ։

Վաղագույն մետաղի դարերի զանգվածեղ կառույցների ճարտարապետության մեջ աչքի են ընկնում երեք բնորոշ տիպարներ—քարակոփություն, կիկլոպյան շարվածք և որմնադրություն:

Մետաղագործության գյուտի հետևանքով, երբ ասպարեզ են գալիս բրոնզե և ապա ավելի ամրակուռ երկաթե գործիքները, հնարավոր է դառնում ճարտարապետական տեխնիկայում կիրառել քարերն ու ժայռերը կոփելու և տաշելու արվեստը։ Սկսել են կառուցել այն հոյակապ շենքերը, որոնք մնացել են

մինչև մեր օրերը և վկայում են քարակոփության ճարտարվեստի զարգացման բարձր աստիճանների մասին։ Այդ տեսակետից նշանավոր է խալդական շինարարությունը, որ կարողացել է կարծր քարային զանգվածների ու միապաղաղ ժայռոտ մասիվների մեջ կերտել ամբողջական բնակարան-ամրոցներ, տաճարներ ու բերդեր։ Վաղագույն մետաղե գործերի ճարտարապետը ոչ միայն օգտագործել է բնական այրերն ու խոռոչները, որոնք արդեն քարեդարյան շրջանում ծառայել են իբրև մարդկային բնակարաններ, այլև համառ տոկունությամբ ձեղքել ու փորել է ժայռերի խորշերը և այնտեղ կոփել ողորկ պատերով նաև արհեստական այրեր, որոնք կյանք են առել երբեմնի մարդկային բնակությամբ։

Թորայրատից այդ շենքերի կառուցման տեսակետը պետք է որոնել ավելի հնագույն, նախապատմական դարերում, երբ նեոլիթյան, եւ առավել պալեոլիթյան մարդն իր բնակարանները և մանավանդ կրոնա-պաշտամունքային տեղերը լեռնային մարզերում գերադասում էր ունենալ ժայռերի ու ծերպերի մեջ (Լ, 110, 136)։ Սակայն մետաղե գործերի սկզբին նա շարունակում է կառչել այդ ձևի կառույցներին ոչ միայն հետևելով ավանդական սովորույթներին, այլև պաշտպանողական նկատառումներով։ Այդ խառնաշփոթ ու անհանգիստ ժամանակները, երբ անդադար արշավանքներով հյուսիս-արևմուտքից ներս էին խուժում հաթերը, կիմմերները, սկյութները, արմենները և այլն, իսկ հարավից իրենց աշխարհակալությունն էին համառորեն ջանում հաստատել բաբելա-ասորական թագավորները և երբ տեղական նայիրյան իշխաններն ու մանր թագավորներն իրար դեմ էին ծառանում արյունալի անվերջ հրոսակային դրոհներով իրարից իշխանություններ և հարուստ մարզեր կորզելու համար, բարձրաբերձ սեպ ժայռերի մեջ կառուցված բնակարանները հանդիսանում էին անմատչելի ամրոցներ, բնական անառիկ բերդեր, ուր թագավորներն ու իշխաններն ապաստանում էին և ապահով պահպանում իրենց հարստությունները։

Այդպիսի շենքեր են այն քարակոփ-ժայռասենյակները, որոնք մեծ թվով հանդիպում են Հայկական լեռնաշխարհի զանազան վայրերում, մանավանդ խալդական տիրապետության սահմաններում։ Քարակոփ այդ կառույցների մեջ աչքի են ընկնում Վանի բերդի տակ գտնվող քարայրերը, որոնք սկզբում, անշուշտ, եղել են բնական այրեր և հետագայում միայն են-



թարկվել են ճարտարապետական վերաշինության ու ստացել ներկայիս պահպանված տեսքը։ Այդ քարայրերը, որոնց վերջին մանրամասն նկարագրությունները տվել են Կ. Լեման-Հաուպտը և Վ. Բելքը, բաղկացած են թե առանձնակի խցերից և թե խմբական սենյակներից։ Այդ քարասենյակները, ինչպես հաստատված է հնագիտական տվյալներով, ծառայել են կենդանի մարդկանց բնակության համար և ոչ թե եղել են մեռյալների դամբաններ, ինչպես առաջները կարծում էին հետազոտողներից ոմանք[115]։

Կ. Լեման-Հաուպտը վերջին տեսակի ժայռասենյակների մեջ ուշադրության արժանի է համարում չորս խումբ, որոնք գտնվում են Վանի միջնաբերդի ժայռի մեջ։ Առաջին խումբը՝ Արգիշտի I-ի ժայռասենյակներն են, որտեղ կա այդ խալդական թագավորի սեպագիր հուշարձանը։ Այս խումբը բաղկացած է 6 սենյակից, որոնք գտնվում են ներկայումս ժողովրդական ձևով Խոր-խոռ կոչվող ժայռամասում, միջնաբերդի ժայռի հարավակողմի արևմտյան ծայրում։ Մյուս երեք խմբերը նույնպես հարավային կողմումն են, բայց արևելյան ուղղությամբ։ Դրանք են՝ Նեֆթ-կույու խումբը[116], բաղկացած 5 սենյակից, որին հարակից է Իչկալա խումբը, 7 սենյակից, և ապա այսպես կոչված Արևելյան սենյակները, որոնց թիվը 4 է (LHA, II, 143)։ Դրանց մեջ քարակոփության արվեստն արտահայտվում է զարգացման զանազան աստիճաններով։ Նեֆթ-կույուի և Իչկալայի սենյակներն ավելի կոպիտ են տաշված ու ավելի հին ծագում ունեն, իսկ Արգիշտիի և մանավանդ «Արևելյան սենյակներն» իրենց նուրբ տաշվածքով ու ողորկ պատերով ցույց են տալիս ավելի կատարելագործված աշխատանք, քարակոփության արվեստի զարգացման ավելի բարձր աստիճան։

Վերոհիշյալ չորս խմբերի, ինչպես և խալդական կուլտուրայի բոլոր ժայռակոփ սենյակների մեջ, բացառությամբ Մանազկերտի, իրենց հոյակապությամբ և ճարտարապետական բարձր արվեստով աչքի են ընկնում Արևելյան սենյակները։ Ժայռի կատարից դեպի այդ սենյակներն իջնում է 25 աստիճաններով քարակոփ մի սանդուղք, որն իր հոյակապ կառուցվածքով գերազանցում է նույնանման բոլոր սանդուղքներին, մանավանդ իր պատապարող պատնեշով։ Այդ սանդուղքը ներքևում վերջանում է մի փոքրիկ քարակոփ հրապարակով, որտեղից 6 լայն աստիճաններով սանդուղքը տանում է դեպի ժայռասենյակի մուտքը, որ գեղեցիկ կոփված շրջանակով՝ արտաքին դուռ է։ Սենյակների այս

խումբը, ինչպես ցույց է տալիս հատակագիծը, բաղկացած է մի մեծ ու բարձր դահլիճից (A), ուր մտնում են անմիջապես հրապարակից՝ արտաքին դռնով: Այս դահլիճի երեք կողմից փորված են մեկական սենյակ, դահլիճի համեմատությամբ ավելի ցածր առաստաղով, որոնք դահլիճի հետ միանում են իրենց հատուկ դռներով: Առաջին սենյակում ձախ պատի ամբողջ երկարությամբ շինված է քարակոփ նստարան, դեպի որը բարձրանում են երեք աստիճաններ: Նույնպիսի նստարան կոփված է երկրորդ սենյակի աջակողմյան ժայռապատի երկարությամբ: Մյուս խմբերի սենյակներից մի քանիսների մեջ փորված են խորշեր ու խորաններ, որոնք հավանորեն ծառայում էին իբրև պահարաններ, նման հայկական տան պատուհաններին կամ տաղարներին: Մի քանիսների մեջ էլ ծայրի սենյակում փորված է լինում գաղտնի խոր անցք, որ տանում է դեպի ժայռի ստորոտի աղբյուրը (LHA, II, 148—151):

Ժայռասենյակների դասավորման նույն կոնստրուկտիվ հատակագիծը հարադասությամբ, շատ չնչին խտորումներով, պահպանված է նաև Միացյալ խմբերում: Այստեղ մենք տեսնում ենք, որ բոլոր կողմնակի սենյակները խմբված են կենտրոնական սենյակի կամ դահլիճի շուրջը: Այս հանգամանքը մեզ հիշեցնում է հայկական տան սրահը կամ բակը, որ համանիշ նշանակություն ունի այդ դահլիճի հետ: Նմանապես հիշեցնում է մանավանդ հռոմեական՝ հետագայում զարգացած atrium-ը, կամ հին հունական մեգարոնը, որ ծառայում էր իբրև կենտրոնական դահլիճ, որտեղից մտնում էին կողմնակի սենյակները (էջ 215):

Խիստ ուշագրավ է ժայռակոփ կառույցը Մազկերտի մոտերքը, «Կալա» կոչված տեղում. այդ շենքը, ըստ սեպագիր հուշարձանի, վերագրվում է խալդական թագավոր Ռուսա II-ին (680—645 թ.): Պրոֆ. Լեման-Հաուպտը, մանրամասն նկարագրելով այդ կառույցը, ասում է. «Ինձ ծանոթ խալդական ժայռաշենքերի մեջ միայն սա ունի կլորաձև կամարով մուտք. խալդական մյուս ժայռասենյակների մուտքերը, եթե ընդհանրապես նրանք կանոնավոր են կոփված, ունեն ուղղանկյուն դռներ: Ռուսա II-ի շենքը հայտնապես ձևված է ըստ այն նախատիպ օրինակների, որոնք հասարակաց էին արևմտյան երկրներում՝ խալդական պետության սահմաններից դուրս կամ նրա ծայրամասերում: Թվում է, թե դրանով արդեն գտնվել է պոնտական թագավորական դամբանների աղեղնաձև կամարներով շինված մուտքի



վաղուց ի վեր որոնված նախատիպը: Ինչպես խալդական ժայռաշենքերի մեծամասնությունը, սա էլ բաղկացած է բազմաթիվ սենյակներից» (LHM, 70—73 և LHA, II, 468—471):

Վ. Բելքը ավելի մեծ նշանակություն է տալիս Ամասիայում հետազոտած ժայռաշենքերին, որոնք նա, համեմատելով Վանի ժայռասենյակների հետ, գտնում է ավելի նուրբ կոփված, ավելի բարձր արվեստի գործ: Նման քարակոփ ժայռասենյակներ մեծ թվով հանդիպում են Բալուի, Հասանքեֆի, Սղերտի, Խարբերդի, Հին-Բայազետի շրջակայքում և այլն:

Հասանքեֆում, բացի վերը հիշատակված բնական քարայրերից (էջ 216), կան նաև բնականից կերտված ու վերաշինված մի շարք քարայրեր. սրանք ամբողջական բնակարաններ են, որոնք երբեմն բաղկացած են լինում քարակոփ սանդուղքներով իրար հետ հաղորդակցվող մի քանի հարկից, նաև բաղկացած մի քանի բաժանմունքներից կամ սենյակներից. այդ սենյակներին կից գտնվում են նաև տնտեսության ծառայող մասերը, ինչպես օրինակ՝ թոնրատուն, գոմ՝ ժայռի մեջ փորված մսուրներով, պահարաններ, ջրանցքներ և այլն, բոլորն էլ ժայռերի մեջ կոփված (LHA, I, 377):

Հին-Բայազետի ժայռասենյակները հետազոտել է պրոֆ. Նիկոլսկին (MAK, V): Քարայրի ուղղանկյունի մուտքի մոտ երևում է 2 արշ. բարձրությամբ և 5 արշ. լայնությամբ մի հարթաքանդակ, ուր ներկայացված է կրոնա-պաշտամունքային մի տեսարան, բաղկացած 2 մարդուց (հավանորեն աստվածներ) և այլ մանրամասնություններից, որոնք ենթադրել են տալիս, թե այս ժայռաշենքը ոչ թե խալդական, այլ ավելի հին ծագում ունի: Սա ավելի շուտ պատկանում է հաթական կուլտուրային և իր ներկայացման կոնցեպցիայով, աստվածների հագուստներով և գլխյով որոշ նմանություն ունի Յազըլը-քայայի հռչակավոր քանդականկարի հետ (I, 70, նկ. 3):

Եթե համեմատական վերլուծման ենթարկենք Հայկական լեռնաշխարհում այդքան բազմատարած ժայռասենյակները, կնկատենք երկու հիմնական տիպ — մեկը՝ Հասանքեֆի, որ բնական քարայրեր են և մյուսը՝ խալդական տիպի, որ բնական քարայրերը տաշել ու վերափոխել են քարակոփությամբ կամ կոփել են միանգամայն նորերը: Խալդական տիպի ժայռաշենքերի մասին պրոֆ. Լեման-Հաուպտը տալիս է հետևյալ բնութագիրը. «Եթե ժայռաբնակարանների սերտ մի ընդհանուր հատկանիշ է

եցել թե Փոքր-Ասիայի բնակչության և թե մանավանդ Արևելյան Տիգրիսի ու Արևմտյան Տիգրիսի ափերին մոտ բնակիչների համար, այս խալդերի համար դա բնորոշ է եղել իր տեխնիկական ու որոշ չափով նաև գեղարվեստական վերակառուցմամբ ու կատարելագործմամբ, ինչպես այդ տեսնում ենք արևմտյան Փոքր-Ասիայում՝ կարիացիների ու լիկիացիների մեջ, որոնց հետ խալդերը, ինչպես ակնհայտ է բազմաթիվ նշաններից, իրենց երբեմնի արևմտյան նախահայրենիքում պետք է ունեցած լինեին սերտ հարաբերություններ ու կապեր։ Խալդերը կերտել են խակական ժայռասենյակներ, կանոնավոր շինված դռներով, հարթ ու ողորկ պատերով, շատ հաճախ անգամ մեծ բարձրությամբ ու տարածությամբ։ Ընդհանրապես, հաղարների համանման քարայրաբնակարանները Հառանդրեֆում, ինչպես և ճանապարհորդության ընթացքում հանդիպած բազմաթիվ բնակարան-քարայրերը պահպանել են իրենց նախնական, բնական անձավի հատկությունները։ Այդ քարայրերի մուտքն անփոփոխ թողել է իր բնական, անկանոն վիճակում. քարայրի ներքինը պահպանել է իր նախկին կերպ, անկանոն, անհարթ ու անտաշ պատերն ու առաստաղը, այսինքն այն հատկությունները, որոնցից մեծ մասամբ վերակերտվել ու վերամշակվել են խալդական ժայռաբնակարանները» (LHA, I, 376)։

Քարակոփ կառույցների մեջ չափազանց ուշագրավ են այն բազմաթիվ սանդուղքները, որոնք ցրված են Վանի ժայռի զանազան կողմերում և որոնց մի զգալի մասը, կարծես, ոչ մի նպատակի չի ծառայում։ Այս վերջին տեսակի սանդուղքները կապված չեն որևէ շենքի հետ, բարձրանում են միանգամայն անկախ և շատ անգամ անանցանելի, գլխապտույտ բարձունքներում ու չափազանց թեք, գրեթե ուղղահայաց լանջերով և ապա հանկարծակի վերջանում են ժայռի որևէ միջին կետում։ Այս տիպի սանդուղքները պրոֆ. Լեման-Հաուպտն անվանում է «աննպատակ» («irrational»)։ Այս ձևի սանդուղքների մեջ հաճախ պատահում են այնպիսիները, որոնց աստիճանները իրենց մեծությամբ ու բարձրությամբ միանգամայն անհամապատասխան են մարդկային քայլերին։ Ուստի կարելի է ենթադրել, որ այդ սանդուղքները իրոք ունեցել են մի այլ նպատակ։ Հիրավի, նրանք ծառայել են որպես տերրասներ (հրապարակ), որտեղ, ինչպես ենթադրում է Ռենե Դյու-բուա Ռեյմոնդը, բուսահող էին ածում այգիներ և այլ ծառատունկեր մշակելու համար։ Այդ ենթադրությունը հիմնավորվում է մասամբ նրանով, որ Վանա լճի հյու-



սիս-արևելյան կողմում բարձրացող հին խալդական ժայռաբերդը, որ բաղկացած է այդպիսի տերրասաձև սանդուղքներից, ներկայումս ժողովրդական ձևով հորջորջվում է բոստան-կայա, այսինքն՝ պարտեզ-ժայռ անունով։ Այդ ենթադրությունը մեզ հիշեցնում է նաև Շամիրամ թագուհու այն «կախ-այգիները», որոնց մասին լեգենդար պատմություններ՝ են ավանդաբար պահպանվել և որոնք, անշուշտ, տնկվել էին ժայռերի ծերպերին արվեստորեն փորված տերրասների վրա։

Մյուս կողմից՝ այդ «աննպատակ սանդուղքները» իրենց տերրասաձև աստիճաններով, ինչպես բացատրում է ակադեմիկոս Հ. Օրբելին, իբրև հիմք են ծառայել խալդական կառույցների պատվանդաններին։ Դա բացահայտ երևում է այդպիսի աստիճանների վրա եղած պարիսպների հետքերից, ինչպես օրինակ՝ Վանի միջնաբերդի արևելյան մասում կամ Հայկաբերդի ավերակներում[117]։

Վերջապես, քարակոփության զարգացած արվեստին է պատկանում այն ջրանցքների շինարարությունը, որ վերագրվում է խալդերին, ջրանցքներ, որոնք ձգվելով ժայռերի ծերպերի ու լանջերի վրայով, ջուր էին մատակարարում թե բուսական մշակույթներին և թե ժայռաբնակ վայրերին։

Սակայն քարակոփ կառույցների ճարտարապետությունը հատուկ խալդական արվեստ չէ։ Այդպիսի ժայռակոփ կառույցներ հանդիպում են Հայկական լեռնաշխարհի հարևան երկրներում էլ, օրինակ՝ Փոքր-Ասիայում, Սիրիայում, Կովկասում և այլն։ Այդ կողմից բազմաթիվ են նման կառույցները Վրաստանում։ Բավական է հիշատակել Վարձիային, կամ հին հայկական աշխարհագրության մեջ հորջորջվող Վարձունիքի քարակոփ կառույցները, որոնք կազմում են գրեթե մի մեծ քաղաք, բաղկացած մոտ 700 ժայռասենյակներից, տաճարներից և այլն։ Սա գտնվում է հին պատմական Ջավախքում, այժմյան Ախալքալաքի գավառում, Քուռ գետի ձախ ափին, ունենալով մոտ 3 վերստ երկարություն և 7 հարկ բարձրություն, որի կտուրներից յուրաքանչյուրը հաջորդ վերին հարկի համար ծառայում է որպես հրապարակ (տերրաս) կամ ճանապարհ[118]։ Վ. Բելքը մեծ նմանություն է գտնում Վարձունիքի այդ քարակոփ ժայռաբնակարանների ու Սղերդի և ընդհանրապես Տիգրիս գետի եզերքով տարածված՝ խալդական կուլտուրային վերագրված ժայռասենյակների միջև։

Քարակոփության հոյակապ հուշարձաններ թողել են նաև

ասորեստանյան կուլտուրայից։ Ասորեստանի թագավոր Ասուր-Նասիրապալ III-ը (9-րդ դար նախքան մեր թվականությունը) Մեծ Զաբ գետից (Տիգրիսի ճյուղը) Նիմրուդ լեռան ստորոտում ժայռակոփ մի ընդարձակ թունելով (գետնուղի) ջրանցք է տարել դեպի Կալախ-Նիմրուդ քաղաքը՝ վերջինիս շրջակայքը ոռոգելու համար։ Այնուհետև 7-րդ դարում նույն Ասորեստանի թագավոր Ասարհադոնը (681—667 թ. թ.) ավելի մեծացրել ու ընդարձակել է այդ թունելը, որ սեպագիր արձանագրության մեջ կոչվում է Mgûb. նոր քարակոփ անցքերով, որպեսզի մեծացնի ջրանցքի տարողությունն ու հարմարեցնի նրա ընթացքը Զաբ գետի մակերևույթի և նրա ջրային ռեժիմի հետ (LHM, 52—53)։

Խալդական տիրապետության անկումից հետո քարակոփ կառույցների ճարտարապետությունը պահպանվել է նաև հին հայկական կուլտուրայում—հեթանոսական և ապա քրիստոնեական տաճարների մեջ։ Սրանց ծագումն անշուշտ պետք է որոնել նախապատմական, տակավին պալեոլիթի ու նեոլիթի դարերին պատկանող քարայրերում, որոնք ավանդաբար հարմարվելով, շարունակել են իրենց վաղեմի խորհրդավոր գոյությունը վերափոխված հեթանոսական ու սրան հաջորդող քրիստոնեական տաճարների ճարտարապետական ձևավորման մեջ։ Այդպիսի մի քանի ժայռակոփ հնագույն վանքեր ու եկեղեցիներ են մնացել մինչև մեր օրերը, ինչպես օրինակ՝ Գեղարդա վանքը, Պուսուսի մատուռը և եկեղեցին (Կաղզվանից դեպի Սարիղամիշ տանող ճանապարհին, Բոյան գետակի վերին հոսանքում), Մաղնավանք՝ Մաղավանց գյուղի մեջ (Ալաթի գավառակ՝ Վասպուրականում)[119], Վարդանի վանքը (Մոքսում, Հաւինջ գյուղի մոտ), վիմափոր երկու եկեղեցիներ Մարտիրոս գյուղից (Վայոց ձոր—Դարալագյազ) 2 վերստ հեռավորության վրա (ԱՀ, XII, 289) և այլն։

Քարայրերը պաշտամունքի վայր լինելու հանգամանքը ժողովրդական հավատալիքներում և մեր կրոնական մատենագրության մեջ պահպանվել է նաև նրանով, որ այդպիսի քարայրերը կապում են զանազան «սրբերի» կյանքի հետ, «սրբերի» ու «միայնակյացների», որոնք ապրել ու մեռել են, ճգնելով այդ քարայրերում. այդպես է Մանյա լեռան այրը, որտեղ իբր թե ճգնել է Գրիգոր Լուսավորիչը, Գրիգոր Նարեկացու քարայրերը Վասպուրականում (Նկ. հատ. I, 12), Օհան Օձնեցու այրը Լոռում և այլն. նույն իմաստն է պարունակում Բագնայր հին պատմական տեղանունը՝ իբրև բագին ծառայող քարայր։



Քարակոփության արվեստը, որ, ինչպես տեսանք, իր փայլուն զարգացման էր հասել խալդական կուլտուրայում, մասամբ չվակետ հանդիսանալով հին Հայաստանի նույն ճյուղի ճարտարապետության մեջ՝ նորեկ արմենների համար, չի ներկայացնում ինքնամփոփ, կղզիացած և յուրահատուկ մի արվեստ։ Խալդական այդ ճարտարապետությունը որոշ աղերս ունի էգեյան կուլտուրայի հետ, որ տանում է դեպի բրոնզեդարյան վաղագույն շրջանի կրետա-միկենյան ճարտարապետական արվեստը, դեպի Թեսալիայի ու Թրակիայի հնագարյան քարակոփ շենքերը։ «Գենցանի ժայռերի մեջ, խալդերի համար այնքան բնորոշ, կառուցված շենքերը, տարածված են բովանդակ Փոքր-Ասիայում մինչև Հունաստանի ներսը, Թեսսալիայի ու Պնիքսի ողորկ ժայռաշենքերը, որոնք, անշուշտ, գոնե մասամբ հասնում են մինչև հունաց նախաժամանակները, կարող են համարձակորեն բաղդատվել նույնանման խալդական նշանավոր գործերի հետ։ Ժայռակերտ տանջուղքներն ու ժայռերի մեջ փորված ճանապարհները կարելի է համապատասխան դասել վերոհիշյալ երկրների թե՛ արևելքում և թե՛ արևմուտքում։ Ստորերկրյա գետնափոր անցքը (թունելը), որ Միկենքի միջնաբերդից դեպի դաշտավայրն է տանում, խալդական բերդերի մնայուն հատկանիշն է, որ, ինչպես խալդերի մոտ՝ այնպես էլ Միկենքում ծառայում էր ջրի մատակարարման համար։ Տարայիս լեռում կառուցված բերդին մասամբ համապատասխանում է նաև Եփրատի մեջ շինված ժայռեղեն ամրոցը, որ գտնվում է խալդական թագավորության ծայրամասում։ Մի կողմից՝ Կարիական (Դրեսսի) ժայռադամբանները, մյուս կողմից՝ Միկենքի և նրա կուլտուրական շրջանակների մեջ ամփոփված նկուղանման կամ սենեկանման դամբանները միևնույն հարակցությամբ պատկանում են Փոքր-Ասիայի նույնանման ժայռաբնակարաններին ու ժայռադամբաններին, որոնք խալդերի մոտ հասել են գերագույն կատարելագործման։ Հին Հունաստանն արևմուտքից, իսկ Հայաստանն արևելքից կազմում են այստեղ սահմաններն ու միջնակետերը փոքր-ասիական երկրի, որի մեջ ժայռաշինությունն բնիկ է և որի համար նա հանդիսանում է բնորոշ հատկանիշ» (LHM, 120—121)[120]։

# VI

## ԿԻԿԼՈՊՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՈՐՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կիկլոպյան, կամ աչքատարյան, ճարտարապետության մասին այստեղ երկար կանգ չենք առնում, քանի որ այդ արդեն մանրամասն նկարագրել ենք մի անգամ (I, 138, 144—147): Այս ձևի շինարարությունը, լինելով նեոլիթյան կուլտուրայի կառույցների տիրապետող ճարտարապետությունը, փոխանցվել է նաև վաղագույն մետաղի դարերի սկզբնական շրջանը: Սակայն այստեղ, շնորհիվ տեխնիկական ավելի կատարելագործված միջոցների, այն է՝ մետաղե գործիքների, կիկլոպյան շարվածքներում քարային զանգվածների արտաքին երեսը տաշվում էր և որոշ չափով հարդարվում: Ուստի այս դեպքում մենք կարող ենք Հայկական լեռնաշխարհում կիկլոպյան շինարարության զարգացման բոլոր աստիճանները էլ գտնել: Այդպիսի տաշված կիկլոպյան կառույցքներ հանդիպում են խալդական ճարտարապետական արվեստում: Ընդհանրապես կիկլոպյան կառույցքն այդ շրջանում տիրապետող է հանդիսանում բերդերի ու ամրոցային պարիսպների շինարարության մեջ:

Վանի խալդական տիրապետության շրջանում կառուցված բերդի պարիսպն ունի կիկլոպյան շարվածք, առանց որևէ շաղախի, նման հնագույն կիկլոպյան շինվածքին, սակայն նրա արտաքին երեսը հարդարված է, տաշված լինելով: Ուստի այստեղ չեն նկատվում քարե անագին զանգվածների դուրս ցցված կողերն ու անկյունները, ինչպես այդ սովորական է հին կիկլոպյան շարվածքներում: Հիշենք նաև պրոֆ. Լեման-Հաուպտի հետազոտության մեջ նկարագրված Սարդուրաբերդը—Sardursburg (Վանի միջնաբերդի տակ, լճի ափին), մի հսկայական, ուղղանկյուն, քարե տաշված մեծղի զանգվածներով շինություն, ուր քարերը առանց շաղախի խնամքով հղկված են իրար:

Նույնպես կիկլոպյան ձևի տաշած պատաշար է հանդիսանում խալդական Մենուա թագավորի (մոտ. 810—778 թ. թ.) կառուցած հսկայական ջրանցքը, որ ներկայումս հորջորջվում է Շամիրամ-սու անունով: Այդ կողմից՝ ավելի ևս աչքի է զարնում Թոփրակ-կալեի խալդական տաճարի հիմքը, որ բաղկացած է մասամբ տաշած և մասամբ անտաշ, կոպիտ քառակուսի խոշոր քարերից, որոնք կցված են իրար առանց շաղախի (LHM, 72):

Կիկլոպյան կառույցքների մասին հիշվում է հայ ժողովրդական վիպասանությունների մեջ, որոնք, անտարակույս, շատ հին ծագում ունեն: «Սասնա ծռեր»ում Սանասար ու Բաղդասար հերոսների համար պատմվում է. «պղնձեցին մենձ-մենձ քարափներ ու շենքինք են շինում իրենց. եփոր էդ շինության շինեցին պրծան, մեկ կեղ շինեցին» (ԱՀ, IX, 118):

Նույնիսկ խալդական վերջին շրջանի ավելի կատարելագործված շինությունները կառուցված են նմանապես խոշոր ու մեծ, բայց համեմատաբար ավելի հարթ, խորանարդաձև տաշած քարերից, որոնք շարվում էին նախապես կոփված ու հարդարված ժայռերի ծերպերի վրա: Այդ առանձնապես նկատելի է Վանի միջնաբերդի արևելյան մասում, նույնպես Թոփրակ-կալեի մի անկյունում և Հայկաբերդի մի քանի տեղերում: Եթե պարիսպը շարվելու էր ժայռերի լանջերին, այն դեպքում այդ լանջերի վրա կոփվում էին սանդղաձև աստիճաններ, յուրաքանչյուր պատաշարին համապատասխանելով մեկ աստիճան: Այդպիսի աստիճաններով են ծածկված Թոփրակ-կալեի բարձրաբերձ կողերը, նույնն է նաև Վանի ժայռի հարավային կողմի գլխավորապես բարձունքների և Վանի միջնաբերդի ժայռի հյուսիսային լանջերի վրա: Խալդերը, ըստ երևույթին, սովորություն ունեին ժայռերի լանջերին կոփել տեղամասերի սիստեմ, որը պաշտպանում էին ոչ թե մեկ, այլ մի քանի շարք պարիսպներով[13]:

Վասպուրականից մինչև Արարածի լանջերն ու Գեղամա սարերը (Սևանա լիճը) ցրված բազմաթիվ մեծ ու փոքր բերդերն իրենց կիկլոպյան, կոպիտ ու անտաշ քարերից շարված պարիսպներով՝ սովորաբար վերագրվել են խալդերին այն հիման վրա, որ այդ ամրոցներից մի քանիսներին կից գտնվել են խալդական սեպագիր հուշարձաններ: Այդ տեսակ կարծիքն անհիմն պետք է համարել:

Կիկլոպյան կառույցքի այդ ամրոցներն ու պարիսպները գոյություն են ունեցել շատ ու շատ դարեր առաջ նախքան խալդերի՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մարզերն արշավելը, գոյություն կարող էին ունենալ թերևս նեոլիթի դարերում: Դեպի հյուսիս սկսած իրենց նվաճողական արշավանքների ընթացքում, խալդերը, ինչպես վկայում են նրանց սեպագրությունները, կատաղի դիմադրության էին հանդիպում տեղական իշխողների կողմից, որոնք ապավինում էին սեփական բերդերին ու ամրոցային պարիսպներին: Ահա այդ պատրաստի ամրությունները, որոնք ի վաղուց անտի կառուցված են եղել տեղական

բնակչության մշտնջենական պաշտպանության համար, ընկնելով հաղթական խաղերի ձեռքը, դառնում էին արդեն վերջիններիս սեփական հենակետեր։ Ուստի այստեղ խոսք չի կարող լինել նոր ամրոցների ու բերդերի կառուցման մասին, քանի որ այդ կիկլոպյան կառույցներն ավելի հնագույն դարերից էին մնացել, իսկ եթե խալդական մի քանի նվաճողներ իրենց սեպագիր հուշարձաններում նշում են, թե իրենք են ամրոցները կառուցել, այդ պետք է ըմբռնել այն իմաստով, որ նրանք օգտագործել են հին, ավանդական ամրությունները, վերջիններս համարելով իրենց նվաճումները, գուցե և վերանորոգելով դրանք, որոնք կարող էին ռազմական գործողությունների հետևանքով խախտված լինել։

Կավագործության տեխնիկան ինքնին արդեն գաղափար էր տալիս հնագույն արհեստագործին շաղախված կավի մածուցիկ հատկությունների մասին։ Եթե հնագույն շինարարական արվեստըն ստիպված էր կիրառել կիկլոպյան պատաշարերը, շենքերի ամրությունը պայմանավորելով շարվող քարերի հսկայական մեծությամբ ու ծանրությամբ միայն, ապա հետագայում նա սովորում է կիկլոպյան զանգվածեղ քարերը փոխարինել ավելի հարմար ու համեմատաբար ավելի փոքր ծավալի քարերով, որոնց շարվածքը մածուցիկ շաղախի միջոցով կարող էր ունենալ դիմացկունության և ամրության հատկություններ։ Այսպիսով՝ արդեն վաղագույն մետաղե դարերում, երբ մի կողմից՝ մետաղե, առավելապես երկաթե գործիքների օգնությամբ հնարավորություններ են ստեղծվում քարերը տաշել, ողորկել ու ցանկալի ձևերով կերտել, իսկ մյուս կողմից՝ կավագործության արվեստի շնորհիվ սկսում է զարգանալ նաև աղյուսի արտադրությունը, շինարարության տեխնիկայում զարկ է ստանում որմնադրությունը։

Կիկլոպյան պատաշարերը, գլխավորապես շենքերի կառուցման ասպարեզում, տեղի են տալիս կանոնավոր որմերին, որոնք կառուցվում են կամ մշակված քարերից կամ կավե աղյուսներից՝ մածուցիկ շաղախների միջոցով։ Հնագիտական հետախուզումների միջոցով այդպիսի շենքերի մնացորդներ են հայտաբերվել խալդական ժամանակաշրջանից։

Թոփրակ-կալեում, պրոֆ. Լեման-Հաուպտի և Վ. Բելքի կատարած պեղումների հետևանքով, երևացել է մի մեծ շենք, հավանորեն Ռուսա I-ի (773—714 թ. թ.) ժամանակվա հին տաճար, որ ամբողջովին շինված է եղել անթուրծ աղյուսներից։ Անթուրծ



աղյուսներից մոնումենտալ շենքերի կառուցումը մեզ հիշեցնում է հնագույն ասորեստանյան շինարարության եղանակները։

Նույն բլրի վրա, պեղումների հետևանքով, բացվել են անհայտ մի շենքի մնացորդներ, որի որմերը շարված են եղել թրծած աղյուսներից, իսկ դրա հետ միասին երևան հանված ծխացած գերաններն էլ, ըստ երևույթին, ծառայել են տանիքի համար (LHM, 69)։

## VII

## ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ՇԵՆՔԵՐ

Երբ վերը քննության էինք առնում անցյալ դարի հայ գյուղացիական տունը, այն եզրակացությանն եկանք, թե այդ շենքերը, իբրև որոշ հասարակական-տնտեսական ֆորմացիայի երևույթ, ներկայացնում են հնագույն կառույցների մինչև մեր օրերը հասած ավանդական մնացուկներ, կառույցներ, որոնք իրենց հիմնական կոնստրուկտիվ տեսագծերով տարածվում են մեզ դեպի նախնադարյան բնակարանը։ Այս եզրակացությունն ավելի համոզիչ կդառնա, եթե մենք մեր օրերի գյուղացիական այդ տները համեմատենք մոնումենտալ հին կառույցների հետ։

Թեև այդ մոնումենտալ շենքերը հնագույն ֆեոդալական դասակարգի ճարտարապետության պատկերն են ներկայացնում, բայց և այնպես իրենց կոնստրուկտիվ ձևերի մեջ, ըստ կարելվույն հոյակապ դրսևորումներով, արտացոլել են նույն հիմնական ճարտարապետական տեսագծերը, որոնք հատուկ էին երկրագործական-անասնապահական արտադրության հարաբերություններում զարգացող բնակարաններին, ինչպիսիք էին դարբասը կամ տունը:

Հայկական լեռնաշխարհում հնագիտական հետախուզումներով առայժմ հայտաբերված հնագույն մոնումենտալ շենքերը, որոնք գլխավորապես պատկանում են խալդական ժամանակաշրջանին, այնքան թերի են (պահպանվել են միայն հիմքերը կամ ստորին մասերի որմերը և միանգամայն ավերվել վերին մասերը, մանավանդ ձեղունը), որ դժվարացնում են համեմատության փորձը։ Սակայն այս դեպքում մեզ կարող է օգնել հին հայոց եկեղեցական ճարտարապետությունը, որը հանդիսանում է վերահիշյալ մոնումենտալ ճարտարապետության պատմա-

կան ժառանգորդը: Համեմատենք օրինակի համար, հայ եկեղեցական ճարտարապետության մեջ տիրապետող տիպը՝ քառանկյուն ձեն իր գմբեթավոր ձեղունով՝ Բարձր Հայքի մեզ՝ արդեն հայտնի տան հետ:

Եկեղեցական գմբեթը, որ կոնաձև վերջավորությամբ բարձրանում է տանիքի կենտրոնում կառուցված թմբի վրա, իսկապես մի հոյակապ կառույցքի վերածված այն երդիկն է, որ հատուկ լայնանիստ կոնի ձևով տան կտուրի կենտրոնում բարձրանում է օջախի վրա ոչ միայն ծխի, այլև լույսի համար: Հիշենք, որ հնագույն հայ եկեղեցիները միշտ առանց լուսամուտ-պատուհանների են եղել, հետևապես լույսի միակ աղբյուրը վերևից է շինվել: Իսկ եթե սրան ավելացնենք և այն հանգամանքը, որ շատ անգամ հնագույն եկեղեցիների, մանավանդ որանց գավիթների գմբեթները ցածրիկ թմբի վրա բարձրացող հատյալ կոներ էին, որոնց հատվածքը բաց էր, կտեսնենք, որ այստեղ արդեն ամենայն հարազատությամբ պահպանվել է երդիկի ճարտարապետական բովանդակ կաղապարը:

Սակայն ավելի ուշագրավ է, երբ տան առաստաղը՝ գարգավուլը (Նկ 201) համեմատում ենք եկեղեցու ձեղունի հետ: Ահա այդ գարգավուլը, որ շինվում է փայտից և տան քառակուսի շենքի վրա բարձրանում է, համաչափ անկյուններում, արդեն ութանկյուն դարձած հաջորդական փոքրացող շրջանակներով մինչև երդիկը, ճարտարապետական տիրող սովորությամբ կրկընվում է նաև եկեղեցու ձեղունի կառույցքում, բայց արդեն ոչ թե ակնոց կամարիս կոնստրուկտիվ ձևերով, այլ իսկական քարե լարաձիգ ձևի կամարների կոմպլեքսով: Ինչպես որ գարգավուլի գերանները հանգչում են տան անկյունների երկու կողմում կանգնեցրած սյուների վրա, այնպես էլ եկեղեցու ձեղունի կամարները, որոնք տան առաստաղի գերանների (տարմի) հոմանիշ կոնստրուկտիվ գաղափարներն են ներկայացնում, հենվում են կրկնակի ձև ունեցող 4 քառակուսի սյուների վրա, որոնք բարձրանում են անկյունների մոտ, և, այդպիսով, գմբեթի տակ ութանկյուն շրջանակ են կազմում:

Այնուհետև ուշադրության արժանի են եկեղեցու ճարտարապետական մի քանի մանրամասնությունները, որոնց ծագումը պետք է բացատրել հայկական տան պատկանելի մասերի նշանակությամբ: Եկեղեցիների արևելյան կողմը միշտ ունենում է ապսիս, կիսաբոլորակաձև կամ քառանկյունաձև խորան: Սա



հայկական տան թոնրատան կաղապարացումն է ճարտարապետական տեսակետով: Այստեղ թերևս կարող ենք նշմարել և խորհրդավոր սիմվոլացում. օջախի առաջ է կանգնեցրած եկեղեցու սեղանը, որ սրբազան զոհարանի գաղափարն է մարմնացնում. իսկ թոնիրն էլ, ինչպես գիտենք, հայ նահապետական տան մեջ պաշտամունքի առարկա է եղել: Հետևապես, տան այդ պաշտամունքային մասի պահպանումը եկեղեցական շենքի մեջ՝ հատուկ խորանի (ապսիսի) ձևով՝ միանգամայն բնական է և օրգանական: Սեղանի, այն է՝ ապսիսի երկու հակառակ կողմերում շինված խցիկները, որոնք խորան են կոչվում և որտեղ սովորաբար եկեղեցական զգեստներն ու սպասները, նաև զանազան սրբություններն են պահվում, իրենց տեղադրությամբ ոչ այլ ինչ են, եթե ոչ թոնրատան կից կառուցված մեկ կամ երկու փիլարները, որոնք տան մառանի կամ շտեմարանի համար են ծառայում: Վերջապես, մի հետաքրքիր մանրամասնություն էլ նշենք: Հայոց հին եկեղեցիներից շատերն ունեն այսպես կոչված գավիթ, որ եկեղեցու արևմտյան ամբողջ կողմին կցված առանձին մեծ նախասենյակ է, որտեղից գլխավոր մուտքն է լինում դեպի տաճարի ներսը: Այս մասը համապատասխանում է Մեծ Հայքի բնակարանի բակին կամ շվաքին:

Հայոց հնագույն եկեղեցիներն ունեցել են շենքն արտաքուստ մեկ կողմից (հարավից) կամ չորս կողմից շրջապատող սյունազարդ ծածկույթներ (գավիթներ-portique), ինչպես դա բացահայտ է Տեկորի, Երերույքի, Մրենի եկեղեցիների, նաև Գառնիի հին հեթանոսական տաճարի ավերակներից, ինչպես և այդ պահպանվել է մի քանի հնագույն եկեղեցիներում՝ Քասախի, Աշտարակի, Օձունի (Լոռի) և այլն: Այդ գավիթները, առավելապես ճակատայինը, ճարտարապետական կաղապարացումն են գլխատան (դարբազի) տիպի բնակարանների սրահների, որոնց կոնստրուկտիվ տեսագիծը հիմք է ծառայել եկեղեցական ճարտարապետության այդ մասի կառուցվածքին, որի գործածությունը, սկսած 7-րդ դարից (մեր թվականության) արդեն վերանում է եկեղեցական ճարտարապետության մեջ[123]: Նույնպիսի ճարտարապետական կառույց են ունեցել ըստ երևույթին, խալդական տաճարները: Մեզ հասել է մի հետաքրքիր քանդականկար, որ գտնվել է Խորսաբադի ավերակներում և պատկանում է Ասորեստանի Սարգոն թագավորին: Սա ցանկացել է այդ պատկերի մեջ հավերժացնել իր հաղթանակը խալդերի վրա, ներկայացնե-

լով Մուսասիրի տաճարը[122] և ավրոցը, որոնք նա գրավելով՝ հրի էր մատնել (714 թ. նախքան մեր թվականությունը)։ Այս նկարի մեջ ներկայացված տաճարի ճակատը կազմում է սյունազարդ դամբկոն, որ բուն շենքի առաջակողմն է կազմում և իր կոնստրուկտիվ տեսագծով հար և նման է հայկական գլխատան սրահին, որպիսի մի բնորոշ նմանություն էլ ունենք նաև Ծախրինեկի հնագույն կառույցքի սրահաձև շենքի մեջ (ԼՉ 208)։

Մի քանի հնագույն կիսավերակ վանքերի, ինչպես Հաղարծնի ու Գոշավանքի, սեղանատներն խիկապես կրկնություն են։ Ղարաբաղի հին գյուղական «ղարադամ»ի, որտեղ կրակը վառվում էր բնակարանի մեջտեղում, ծուխը լցվում էր ամբողջ սենյակը և ապա երդիկից դուրս գալիս։ Վերոհիշյալ վանքերի սեղանատները կամարակապ են, առանց լուսամուտների, որոնք ունեն երդիկի նման վերնալույս և միայն մեկ դուռ. այդ սեղանատները ներքուստ ունեն ծխից սևացած պատեր, պատերի տակ աստիճանանման բարձրություն, որտեղ ձմեռվա երկար գիշերները, բարձերի վրա կրթնած, շարվում էին վանքի միաբանները զրուցելու և հանգստանալու. այս աստիճանաձև բարձրությունը նման է հայկական տան սաքու-ին, որտեղ նահապետական ընտանիքի անդամներն ու հյուրերը նստում էին և ժամանակ անցկացնում զրույցներով[123 ա]։

Վերոհիշյալ թռուցիկ համեմատական ակնարկն արդեն բավական է ապացուցելու, թե որքան խոր հնության է պատկանում հայկական տունը կամ ղարադամը, երբ նրա ճարտարապետական տեսագծերը կաղապարված ենք տեսնում հայկական տաճարի կառույցքում, որն ինքնին արդեն արխայիկ ճարտարապետության տրադիցիաներով է միշտ կերտվել[124]։

Սակայն ընդգծենք այստեղ, որ հայ քրիստոնեական տաճարներն ու վանքերը, ինչպես վկայում են հին հայ պատմագիրները, փոխարկվել են մեծ մասամբ հեթանոսական մեհյաններից կամ կառուցվել են հեթանոսական ավերված տաճարների վրա։ Այս դեպքում քրիստոնեական ճարտարապետությունը թե կոնստրուկտիվ և թե գեղարվեստական կողմից շարունակում էր կիրառել հեթանոսական մեհյանների շինարարական ձևերը և ընդօրինակում նրանց ճարտարապետական տեսագծերը։ Իսկ նախաքրիստոնեական մեհենական ճարտարապետությունն էլ պարունակում էր կոնստրուկտիվ այն ձևերը, կառույցքի այն մասերը, որոնք իրենց ծագումով մեկնում են տիրող կենցաղային



պայմաններից և իրենց կաղապարն են ունեցել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակարանների մեջ, որոնց մասին խոսք եղավ վերը։

Նույնն ենք ասելու նաև հայ իշխանական պալատների մասին, որոնց ավերակները մնացել են հայ միջնադարի ճարտարապետական հուշարձաններում։ Սրանք նույնպես կառուցվել են հայկական տան համանիշ ճարտարապետական տեսագծերով, միայն տարբերվում են սոսկ իրենց պանդղվածեղ հոյակապությամբ, իրենց խոշորությամբ ու փարթամությամբ։

Մեր այս ամբողջ ակնարկն ի վերջո լրացնում ենք համեմատության առնելով երկու ուշագրավ շենքեր, որոնց դերն ու նշանակությունը տակավին պարզված չէ և որոնք ամենայն հավանականությամբ պատկանում են խալդական կուլտուրային։

Թոփրաքալեից (նախկին Սուրմալուի գավառում) 3 վերստ դեպի արևելք, ուր գտնվել էր խալդական Մենուա թագավորի (810—778 թ.) սեպաձև արձանագրությունը, պրոֆ. Իվանովսկին պեղել է (1893 թ.) մի մեծ քարաշենքի ծածքը՝ 13 սաժ. երկարությամբ և 9 սաժ. լայնությամբ։ Շենքի արտաքին հիմնական որմերը շարված են երկու կարգ քարե կանոնավոր քառակուսիներից (սև-կապտավուն բազալտ), որոնց կողերը հավասար են 1 արշ.։ Պատի մեջ որմերը խորանում են 4 արշ.։ Ամբողջ շենքը բաղկացած է 8 սենյակից, որոնք իրար հետ հաղորդակցվում են մեկ արշինից ոչ լայն անցքերով։ Շենքի հատակը ծածկված է եղել 8 × 6 վերշ. մեծությամբ, կավե թրծած աղյուսներով, որոնց մակերեսը շատ լավ ողորկված է և ունի 2 խաչաձև ակոսներ։ Աղյուսները կից միացած են իրար այնպես, որ պեղման ընթացքում մաքրվելուց հետո թողնում էին գեղեցիկ պարկետային հատակի տպավորություն։ Հյուսիսային սենյակների անկյուններում գտնվել են թոնիրներ՝ $1^1/_2$ արշ. տրամագծով, իսկ մյուս սենյակների անկյուններում գտնվել են աղյուսների կույտեր, որոնք ենթադրել են տալիս, թե այդտեղ եղել է օջախ։ Արևելակողմի միջին սենյակի մուտքի աջ ու ձախ կողմերում գտնվել են $1^1/_2$ արշ. բարձրությամբ քարե սյուներ՝ հատյալ անկյուններով և 2 պատվանդաններ։ Դժբախտաբար այստեղ ոչ մի պեղածո իր չի հայտաբերվել, որպեսզի հնարավոր լիներ քիչ թե շատ վստահությամբ որոշել այդ շենքի հնության ժամանակն ու հանգամանքները (MAK, VI, 38)։

Եթե դիտենք այդ շենքի հատակագիծը, կտեսնենք, որ

այստեղ պահպանված կան հայկական տան ճարտարապետական տարրերը, միայն այն տարբերությամբ, որ այս շենքը պանդվածեղ է ու ավելի մեծ և, գյուղացիական տան համեմատությամբ, փոքրնամ լինելով, ավելի շատ սենյակներ է պարունակում: Հավանորեն սա եղել է իշխանական տուն: Արևելյան առաջին նախասենյակը՝ դա հայկական սրահն է, միայն փոքր կոնստրուկցիայով, կամ, ավելի շուտ, բակը: Այստեղից մուտքը տանում է դեպի երկրորդ սենյակը. սա գլխատունն է, որի շուրջը դասավորված են կենտրոնային նպատակներին հատկացված այլ սենյակները (ննջարան, թոնրատուն, մառան և այլն): Այս ամբողջ շենքն իր մեծ կենտրոնական դահլիճով և կողմնակի առընթեր սենյակներով ընդհանուր առմամբ շատ նման է Վանի միջնաբերդի տակ եղած՝ Արգիշտիի և այլ ժայռափորված բնակարաններին (էջ 219), բայց ավելի մեծ չափերով հիշեցնում է հին հռոմեական atrium-ը կամ հին հունական մեգարոնը (էջ 213):

Ա. Իվանովսկին հանդիպել՝ 1894 թ. նույն վայրում պեղումներ է կատարել ավելի մեծ չափերով ու երևան է հանել մի մեծ շենք: Սրա բովանդակ կառույցից ակներև է, որ դա եղել է խալդական շրջանից հասարակական մի շենք, ըստ երևույթին, հեթանոսական տաճար: «Շենքն ունի 15 սաժ. երկարություն, իսկ արևմտյան պատը՝ 9,3 սաժ., պատերի լայնությունն է 1 սաժ. և շարված է խոշոր, լավ տաշված, քառակուսի, անհավասար մեծության քարերից (սև-կապտավուն բազալտ): Որմնաքարերը շարված են 2 կարգ, առանց շաղախի, կիպ իրար հպած: Որմերի արտաքին ու ներքին մակերեսները հարթ են, բացառությամբ այն արանքների ու ճեղքերի, որոնք գոյանում են քարերի միացման տեղերում: Որմերի բարձրությունն է 1,6 սաժ. և շարվածքն սկսվում է ոչ թե գետնի մակերևույթից, այլ գետնի խորքից, ուր հիմքի համար փորված է եղել նախապես $^1/_2$ սաժենաչափ խորություն 2 սաժ. լայնությամբ: Շենքի հյուսիսային որմը, ինչպես նկատելի է նկարից, իր շարվածքով տարբերվում է մյուս պատերից: Սրա որմնաքարերի 2 շարքը, արտաքինն ու ներքինը, անջատ-անջատ իրարից հեռանում են, արանքում գոյացնելով դատարկ տարածություն, որը լցված է անտաշ քարակտորներով. նույնը նկատելի է նաև արևելյան որմնաշարում: Բացի այդ՝ հյուսիսային, արևելյան, ըստ երևույթին նաև հարավային (սա շատ է քայքայված) որմերը ներքևում շրջապատված են 1 արշ. բարձր. և $1^1/_2$ արշ. լայնությամբ քարե շարվածքով: Հյուսիսային որմերի



մեջ, արևմտյան ծայրից 9,5 սաժ. հեռու, կա 2 արշ. լայնությամբ մի անցք, որ գետնից բարձր է 1 արշ.: Այդ անցքի մոտ, արտաքուստ, գտնվել են 2 մեծ քարեր, որոնք իրենց կողանկյան վրա ունեն խոր տաշվածքներ, որ ենթադրել է տալիս, թե դրանք դռների ամրացման համար են ծառայել: Հիշյալ անցքից 1,5 սաժ. երկարության վրա հյուսիսային պատը թեքվում է դեպի հարավ-արևելք, և, այդպիսով, ամբողջ արևելյան որմը ներկայացնում է մի կիսաբոլորակ, որից հետո շարունակվում է հարավային պատը՝ կանոնավոր շարվածքով. այստեղ, արևելյան ծայրից 4 սաժ. հեռու, նույնպես բացվում է մի անցք, որը, ի տարբերություն հյուսիսային անցքի, գետնի հավասարությամբ է, ուրեմն 1 արշ. ցածր: Այս անցքից դեպի արևմտյան անկյունը՝ պատը խիստ ավերված է: Շենքի հատակը ծածկված է եղել նույն ձևի աղյուսաներով, ինչպես և վերը նկարագրված շենքը: Նկատելի էր հատակի աղյուսածածկի անխախտ մնացորդը 2 շարքով՝ հյուսիսային և 4 շարքով՝ արևելյան պատերի ուղղությամբ: Հյուսիսային որմի ուղղությամբ շենքի ներսը նկատելի են իրարից մոտ 4 արշ. հեռավորությամբ 5 հատ մեծ, լավ հղկված, գետնի մեջ խրված քարեր (նույն բազալտից), որոնց 2—3 քառորդը հողի մեջ էր, իսկ 1,5—2 քառորդը՝ մակերևույթից բարձր: Այս քարերի վերին մակերեսը տափակ է և ունի քառակուսի կամ ուղղանկյուն ձև, ծայրերը թեթևակի կլորացրած: Այս քարերի 5-րդի հանդիպակաց հարավային որմի ուղղությամբ նույնպես խրված է նման քար: Այս հարավային պատաշարը, մեծ մասամբ ավերված լինելով, անհնարին եղավ ստուգել, թե շարունակվո՞ւմ են արդյոք այդ քառակուսի քարերը նմանապես այդ ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ այդ քառակուսիներն ու քառանկյունները խարիսխների մնացորդներ են, որոնց վրա երբեմն կանգնած են եղել քարե սյուներ» (MAK, VI, 41—44):

Զննելով այս հետաքրքիր շենքի ճարտարապետական այլ մանրամասնությունների մեջ, փորձենք տալ սրա համեմատությունը հին հայկական, գլխավորապես եկեղեցական ճարտարապետության հետ: Այդ նկարագրած կառույցն ամբողջովին կրում է բազիլիկյան ոճ, այսինքն՝ ուղղանկյուն երկարավուն մի շենք, որի ներսը, հյուսիսային և հարավային պատերի ուղղությամբ, կանգնած են երկու շարք սյուներ և ապա շենքի արևելյան կողմը վերջանում է ապսիդով (կիսաշրջան խորան): Բացի այդ՝ 1 արշ. բարձրության արտաքին շրջապատ շարվածքները հիշեց-

նում են հին հայկական տաճարների նույնանման շարվածքները, որոնք շատ անգամ 2—3—4 ատրճանաձև պատվանդան են հանդիսանում: Ընդգծենք նաև մի բնորոշ հանգամանք. պեղումներն ապաքիի մեջ ի հայտ են բերել 4-ական քարերով շարվածք, որ, անշուշտ, ներկայացնում է նույն բեմը, որ ունեն հայ եկեղեցիները: Հետևապես այստեղ մենք գործ ունենք հնագույն հեթանոսական տաճարի կառույցքի հետ: Այդ շենքը նշանակալից է դառնում նրանով, որ պեղումների միջոցով նրա շրջապատում հայտաբերվել են մի շարք ավելի փոքր, պարզ ու կոպիտ շինված որմեր, որոնք, անտարակույս, պատկանելիս են եղել բնակարաններին, բաղկացած 1—2 երբեմն էլ 3 բաժանմունքներից, երևի սենյակներից:

Այս պեղման հնագիտական վայրում տաճարը գտնվել է խալդական Մենուա թագավորի սեպագիր հուշարձանը (9 դար ն. ք. մեր թվ.): Այդ փաստը որոշ չափով հիմք է տալիս կարծելու, որ այդ կառույցները պատկանում են խալդական կուլտուրային, վաղագույն երկաթե դարերին: Պրոֆ. Իվանովսկին այս շենքի պեղման ընթացքում հայտաբերած կերամիկան համանման է գտնում Գանձակի գավառում (Ղալաքենդի ու Գետաբեկի) իր պեղումներով հանած կավե ամաններին. սակայն Գանձակի գավառի պեղածը այդ կավե ամանները նմանություն ունեն, կավելացնենք մենք, Դիլիջանի (Թեղկին-Լագերի, Գոլովինայի), Նոր-Բայազետի և Լոռու գավառների արխայիկ դամբաններից հանած կերամիկային, որոնք մենք դասում ենք բրոնզեդարյան ինդուստրիայի վերջին ժամանակաշրջանին: Այս հանգամանքը կռվան է հանդիսանում եզրակացնելու, որ վերոհիշյալ շենքն ավելի հին ճարտարապետական կառույց է և ծագում է 9-րդ դարից (նախքան մեր թվականությունը) էլ առաջ:

Այս ենթադրությունն ավելի ևս հավանական է դառնում, երբ ուշադրության ենք առնում վերոհիշյալ շենքի որմերի կառուցողական առանձնահատուկ ձևը: Այն է՝ նրանց շարվածքն առանց շաղախի է, որ շինարարական արխայիկ ձևն է հանդիսանում: Նմանապես խորին հնություն է ներկայացնում հատակի աղյուսների ձևը, որ միանգամայն համանման է Վարանդայում, Կարաքեփեկ կոչված կուրգանի մեջ հայտաբերված նույնպիսի աղյուսների հետ:



ծ

# ԲՆԱԿԱՏԵՂԵՐ ԵՎ ԱՄՐՈՑՆԵՐ

## I

## ԱՄՐՈՑԻ ԵՎ ԲՆԱԿԱՏԵՂԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագործության ու անասնապահության տնտեսական ձևերից բղխող արտադրական հարաբերությունները տակավին նեոլիթյան դարերում (I, 141—148) տոհմային հասարակություններին թելադրում էին համայնական բնակությամբ ապրել առանձին գյուղերով, որոնք, արտաքին հարձակումներից պաշտպանվելու նպատակով, տարածվում էին բլրերի ու ամրոցների շուրջը: Սակայն երկրագործությունն իր օժանդակ անասնապահությամբ շարունակում է տիրապետող տնտեսական ձևը հանդիսանալ նաև վաղագույն մետաղի շրջանում, բայց աշխատանքի հասարակական բաժանման և կուտակման տենդենցների զարգացման հետևանքով՝ արտադրական հարաբերությունները ենթարկվում են արդեն փոփոխման: Սկիզբ են առնում նոր հասարակական ձևեր, որոնք համապատասխան կերպով իրենց կնիքն են դնում բնակատեղերի կազմակերպման ու զարգացման վրա: Եթե նեոլիթյան դարերին հատուկ տոհմային հասարակական ձևերում, բնակությունները կամ գյուղերը հարում էին բնական հարմարագույն դիրքերին ամրոցների վերածված կենտրոնների շուրջը, ուր վտանգի րոպեներին ապավինում էին բոլոր տոհմիկները՝ թշնամիների ու ավարառուների հարձակումներից, ապա վաղագույն մետաղե դարերում, երբ սոցիալական շերտավորման շնորհիվ արդեն երևան է գալիս դասակարգային հասարակական ձևը, գյուղերի ու սրանց ապավեն ամրությունների փոխադարձ կապումը կորցնում է իր նախկին նշանակությունը:

Ամրոցներն ու բերդերը դառնում են տիրապետող դասակարգերի բնակատեղիներ, ուր, ապահովապես ամրանալով իրենց դիմակիցների հետ, իշխում էին ենթակա գյուղերին, մի կողմից՝

շահագործելով նրանց բնակչությանը և մյուս կողմից՝ նույն այդ շահագործման նկատառումներով պատրաստ լինելով իրենց ամրոցներում պաշտպանելու այդ բնակչությանը: Այդ նպատակով բնակատեղերն ու շենքերը շրջապատվում էին պաշտպանողական պարիսպներով, դառնում էին քաղաքատեղ, որի կենտրոնում կամ ծայրում որպես միջնաբերդ բարձրանում էր իշխանական ամրոցը:

Հնագիտական հետախուզումներ կատարողները շատ քիչ ուշադրություն են դարձրել Հայկական լեռնաշխարհի արխայիկ բնակատեղերի ու ամրոցների վրա: Մինչև այժմ էլ չեն կատարվել այդպիսի վայրերի հնագիտական պեղումներ ու հետազոտություններ: Հետևապես մեր հնագիտական գրականության մեջ շատ քիչ բան կա այդ մասին: Մեզ մնում է պատմական ու ազգագրական տվյալների ու համեմատական հնագիտության օժանդակությամբ փորձել ուրվագծելու մեզ հետաքրքրող այդ հարցը:

Քսենոֆոնը հունական արշավանքի վերադարձի պատմության մեջ տալիս է 5-րդ դարի (նախքան մեր թվականությունը) հայ գյուղական բնակչության հետաքրքիր նկարագիրը: Երբ հույները Կենտրիտես գետը (Տիգրիսի ճյուղը, ներկայումս Բոհտան-սու՝ Թյուրքահայաստանում) անցնելով, մտան Հայաստանի սահմանները, առաջին բնակավայրը, ուր նրանք ոտք դրին՝ դա մի մեծ գյուղ էր: Այդ գյուղում էր գտնվում Արևմտյան Հայաստանի կառավարիչ՝ սատրապ Տիրիբազի պալատանք-ամրոցը[135], տներից շատերն ամրացված էին աշտարակներով: Այդ իշխանանիստ, կենտրոնական գյուղի շրջակա լայնարձակ տարածության վրա ցրված էին բազմաթիվ այլ գյուղեր, որոնք ունեին գյուղատնտեսական մթերքների առատ պաշարներ: Գյուղերը շրջապատված էին հողային պատնեշով[136]:

Այս նկարագիրն ավելի պարզորոշ է դառնում մի շարք հնագիտական տվյալներով, որոնք վերաբերում են Հայկական լեռնաշխարհի այն դարաշրջանին, երբ այնտեղ իշխում էին խալդերը, սկսած 9-րդ դարից (նախքան մեր թվականությունը): Խալդական կուլտուրայից մնացած սեպագիր հուշարձաններն ու ավերակ հնությունները վկայում են բազմաթիվ ամրոցների մասին, որոնք եղել են կամ բնակատեղերի միջնաբերդեր և կամ առանձին բերդեր, որոնք իրենց պահակակետերով իշխում էին շրջակա մարզի բնակատեղերի վրա: Խալդական տիրապետությունը, իբրև նվաճող ու իշխող դասակարգի տիրապետություն, կրում էր



ռազմա-ֆեոդալական բնույթ (I, 73—76), որով մեզ հասկանալի է դառնում այդ ամրոցների դերը ոչ միայն ռազմական պաշտպանության տեսակետից ընդդեմ արտաքին թշնամիների, այլև իրենց ֆեոդալական կայունության տեսակետից տիրող սոցիալ-տնտեսական պայմաններում: Խալդական տիպարային յուրահատուկ ամրոցները սեպ ժայռերի մեջ, քարակոփ, կամ բնական քարայրերը վերակերպված բերդեր են հանդիսանում, որոնք խիտ ցանցով պատել են մի տարածություն, սկսած Ուրմիո լճից մինչև Վանա լիճը և ապա Տիգրիսի ու Եփրատի հովիտներով ու ձորերով մինչև Բաբերդի ու Էրզրումի սարահարթերը: Իսկ այնտեղ, ուր բնությունը չի ընձեռել քարակոփ բերդերի կառուցման հնարավորություններ, խալդերը կարողացել են օգտագործել տեղական հարմարությունները, կամ նոր բերդեր շինելով բարձրաբերձ ու անմատչելի բլուրների վրա ու սարերի լանջերին և կամ, ավելի հաճախ, վերակառուցելով արդեն խորը հնուց գոյություն ունեցող ամրությունները: Այդպես են խալդերի նվաճած երկրների այն բոլոր ամրությունները, որոնք ծայր են առնում Արաքսի հովտից, Արարատյան դաշտով ձգվում են դեպի հյուսիս, տարածվելով մի կողմից՝ դեպի Սևանա լիճը և ապա դեպի Դիլիջան ու Աղստև (Աղստաֆա) գետի հովիտը, իսկ մյուս կողմից՝ դեպի Շիրակի դաշտը և Ղարսի մարզերը—մինչև Չըլդըր լիճը:

Խալդական այդ բազմաթիվ ամրությունների սիստեմը ներկայացնում էր լայնատարած մի խիտ ցանց: Ինչպես վկայում է Կ. Լեման-Հաուպտը, Մազկերտի քարակոփ բերդից մի շարք ձորերի վրայով հեռվում նկատելի է Բուլուի քարակոփ բերդի ճակատը, իսկ Մազկերտի, Բուլուի և Խարբերդի քարակոփ բերդերը միասին կազմում են կանոնավոր եռանկյունի (LHA, I, 472):

Ղարաչայի հովիտը, սկսած Մարիղամիչից մինչև Եղգիբիլիսա գյուղը, որ բռնում է մոտ 14 վերստ տարածություն, ամրացված է եղել 4 բերդի գծով: Այս հովիտը խալդերի համար ծառայում էր որպես կարևորագույն նշանակություն ունեցող մի ճանապարհ՝ դեպի հյուսիս, և ամբողջ այդ մարզը, Ղարսի նահանգը, հանդիսանում էր նրանց առաջխաղացման ճանապարհը՝ հարավից (MAK, VI):

Նմանապես Արարատ սարի փեշին ընկած Դաշբուրունի շրջանը պաշտպանված էր 3 բերդերի գծով: Այստեղ էր ընկած Վանից Բայազետի վրայով (նույնպես քարակոփ բերդ էր) դեպի Արարատյան դաշտը տանող ամենակարճ ճանապարհը, որով երբեմն արշավում էին խալդերը:

Խորը հնում։ Թերևս խալդերից առաջ, ավելի խիտ ցանց էին ներկայացնում Նոր-Բայազետի գավառի ամրոցները։ Միայն Նոր-Բայազետ քաղաքի շրջակայքում վերցրած տարածությունը, որի տրամագիծն է արևելքից արևմուտք (Նորատուսից մինչև Փաշաքյանդ) և հարավից հյուսիս (Ղուլալիից մինչև Ադիաման) 10 վերստ, ամրությունների մի փոքր աշխարհ է հանդիսանում, որտեղ իրարից շատ մոտիկ շինված են եղել թվով 10 ամրոցներ ու բերդեր[127]։

Այդ բոլոր ամրությունների միջնաբերդերը բարձրանում էին պարիսպներով ու պատնեշներով պաշտպանված քաղաքի կամ գյուղի կենտրոնում կամ մեկ ծայրում. ամենաբարձր ու անառիկ կետում, որտեղից հնարավոր էր միշտ աչքի առաջ ունենալ շրջակայքը՝ լայնատարած հորիզոնով։ Այդպիսի դիրքում ամրոցները մի կողմից՝ միշտ արթուն պահպանում էին լինում, որպեսզի հանկարծակի չգան առաջին թշնամու անակնկալ հարձակումներից, իսկ մյուս կողմից՝ իրենց անմիջական ազդեցության ներքո էին պահում շրջակա գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները, իբրև շահագործվող հպատակներ, ենթակա էին այդ միջնաբերդերում նստած տիրապետող իշխաններին։ Նույնիսկ բնակության այնպիսի վայրեր, ինչպես Հասանքեֆը, որ ամբողջովին քարայրաբնակարանների քաղաք էր հանդիսանում (էջ 216) և Տիգրիսի ու Եփրատի հովիտներում գտնվող մի ամբողջ շարք քարայրաբնակ գյուղեր, նմանապես ունեին քարակոփ իշխանանիստ միջնաբերդեր, որոնք բարձր ու դժվարամերձ կետերից իշխում էին գյուղերի ու սրանց շրջակայքի վրա։ Այժմ էլ դեռ գոյություն ունեցող հնագարյան այդ գյուղերն ու ավանները շարունակում են թառած մնալ ոտքին ի վաղուց անտի ավերված, ոչնչացված բերդերի ստորոտներին։

Հետագայում, խալդերի անկումից հետո, պատմական հին ու միջին դարերում այդ ամրոցներից ու բերդերից շատերն օգտագործվել են թե հայերի, թե պարսիկների և թե թուրք նվաճողների կողմից։ Ամրոցների այդ վաղեմի նշանակությունն իր բնորոշ գծերով մասամբ պահպանվել էր մինչև վերջերս էլ։ Թյուրքահայաստանի զանազան գյուղերում նախապատմական ու խալդական դարերից մնացած միջնաբերդերը վերանորոգելուց հետո այնտեղ ապրող քրդական ցեղապետները, շեյխերն իրենց ձեռքի տակ էին պահում շահագործվող ու կեղեքվող գյուղացիական զանգվածները կամ հրոսակային հարձակումներ են



գործում շրջակա ցեղերի և իրենց իշխանությունից դուրս գտնվող գյուղերի վրա։

Վանի ժայռակոփ ամրոցը և այս հետագայում Թոփրակկալեի ամրոցը եղել են նաև խալդական թագավորանիստ վայրեր — ապարանքներ։ Ուստի նրանք հարմարեցված էին ոչ միայն ռազմական պաշտպանություն ընձեռելու նրանց ստորոտում գտնված քաղաքի կամ գյուղերի բնակչությանը, ոչ միայն իշխող դասի պաշտպանության համար թշնամիների հարձակումներից, այլև ծառայում էին տիրող ֆեոդալի քաղաքական ու տնտեսական նպատակներին։ Վանի ու մի շարք քարակոփ խալդական բերդերի հետազոտությունները և մանավանդ Կ. Լեման-Հաուպտի ու Վ. Բելքի պեղումները Թոփրակ-կալեում, գլխավոր ամրոցային ժայռասենյակներին կից, ի հայտ բերին տաճարներ, բազմաթիվ օժանդակ, երկրորդական շենքեր, որոնք ծառայելիս են եղել իբրև պահեստներ, շտեմարաններ, մառաններ (Թոփրակ-կալեում՝ գինու կամ այլ խմիչքների կարասներով), գոմեր, ջրամբարներ և այլ զանազան նկուղներ. դրանք իրար հետ կապված էին լինում քարակոփ սանդուղքներով, նեղ փապուղիներով, ստորերկրյա անցքերով, որոնցով, պաշարման դեպքում, մարդիկ դուրս էին գալիս բերդից դեպի ձորի հատակը՝ ջուր վերցնելու կամ արտաքին աշխարհի հետ գաղտնի հարաբերություններ պահպանելու նպատակով։

Իշխանական այդ ամրոցում էին ամփոփվում հրոսակային ու ռազմական արշավանքներով ձեռք բերված ավարները. այնտեղ էին ամբարվում ենթակա շահագործվող բնակչությունից վերցված բնական հարկերը, տուրքերը և կողոպտված զանազան գյուղատնտեսական արդյունքները. այնտեղ էր դիզվում ապրանքների այն մասը, որը, իբրև տիրապետող իշխաններին հասանելիք մաքսային տուրք, վերցվում էր անցնող կարավաններից։ Այդ ամրոցների քարակոփ մութ զնդաններում էին դաժան պատիժ կրում և անլուր խոշտանգումների ենթարկվում իշխող դասակարգի դեմ խիզախողներն ու ըմբոստները։ Այդ ամրոցներում էին շինվում Խալդ և այլ աստվածներին հատուկ կրոնա-պաշտամունքային սենյակ-տաճարները, ուր աշխարհիկ իշխողները սրբագործում էին իրենց բռնակալ տիրությունն աստվածային ուժերի, երկնային իշխողների նշանաբաններով, որպեսզի ավելի հմայիչ ու անառիկ երևային իրենց ենթակա ժողովրդական զանգվածներին և հզորավոր ազդեցությամբ հլու հնազանդության ու ակնածող

հպատակության զգացմունքներ պատվաստելին նրանց մեջ։ Վերջապես այդ նույն նպատակով էլ թագավորներն ու իշխանները հիշյալ ամրոցներում թաղվում էին հատուկ քարակոփ դամբանների մեջ, խորհրդավոր հեռավորությամբ մեկուսացած ստորադասված մասսաների հայացքներից։

Ահա այդ հիմնական գծերը պահպանվել էին նաև հին պատմական ժամանակները Հայաստանում գոյություն ունեցող ամրոցների վերաբերմամբ, որոնք իսկապես ավելի հին, նախապատմական դարերից կայուն էին մնացել իրար հաջորդող տիրակալ իշխանների ձեռքում։ Հին հայոց պատմագիրները հիշատակում են բազմաթիվ այդպիսի բերդեր ու ամրոցներ. Բնաբերդ, Ծոփաց երկրում, որտեղ հայ թագավորները պահում էին իրենց գանձերը (Փավստոս Բուզանդ. Դ.ԺԲ., Ե., Է.), Անգեղ բերդ, Բարձր Հայքում, որ հայ Արշակունի թագավորների տոհմական շիրիմն էր և միաժամանակ թագավորական գանձերի պահեստը (անդ. Դ. ԻԴ), Անի բերդը, Դարանաղյաց գավառում, որտեղ պահվում էին թագավորական գանձերը և միաժամանակ գտնվում էին թագավորական դամբանները (անդ. Դ. ԻԴ)[128], Գառնի բերդը, հայտնի իր անառիկ ամրությամբ, որն Արշակունի թագավորների դաստակերտն էր և գանձերի պահպանության տեղը, և այլն և այլն[129]։

Այդ իրոք բերդերն ու ամրոցները կապված են եղել տիրապետող դասակարգի իշխանության մռայլ ու դաժան բնույթի հետ, որ նրանք խորհրդավոր և ահարկու ազդեցության տակ են պահել ժողովրդական զանգվածների միտքն ու զգացմունքը տակավին հնագույն, թերևս նախապատմական դարերում, այդ ակներև է այն տարածված լեգենդար զրույցներում, առասպելական պատմություններում, որոնք մինչև մեր օրերը ժողովրդի բերանում պահպանվել են այս կամ այն բերդի մասին։ Մի կողմ թողած բերդերի հետ առնչվող զանազան «ջինվիզներից», «օղուղներից», դևերի, «քյոռօղլիներից» և այլ գերբնական հերոսների մասին շրջող պատմությունները, խիստ բնորոշ է այն տարածված տեսակետը, որ բազմաթիվ տարբերակներով հանդես է գալիս զանազան ժողովուրդների առասպելական զրույցներում «աղջկա բերդերի»—«աղջկալաններից» մասին, որոնք բավականաչափ հայտնի են նաև Հայկական լեռնաշխարհում։ Ըստ այդ առասպելաբանությունների՝ բերդ կառուցելիս նրա հիմքում կամ գլխավոր աշտարակի որմում կենդանի թաղել են ծնողների, մեծ մասամբ որևէ այրի կնոջ, մինուճար դեռահաս կույս աղջիկը[130]։



Այդ կողմից հետաքրքիր է նաև Սասուն բերդի անվան հայ ժողովրդական բնորոշ ստուգաբանությունը «Դավիթ ու Մհեր» դյուցազներգության մեջ. «էս տուն չի», սասում էր». «անսպով, որ մեծ-մեծ քարեր են բերի, ասավ. էս սասուն ա, էս ինչ քարեր են դրեր». սասուն քարեր են. կամ «քանի սասում բերդ մի» բացականչությունը։ Այդ բառերում ակնբախ արտահայտվում է ժողովրդի այն ահն ու սարսափը՝ «սասում-ցասումը», որ ծագում էր Սանասար ու Բաղդասար անուններով ժողովրդական վեպում հայտնի՝ իշխան եղբայրների կառուցած բերդից[131]։

Հիրավի, Սասուն բերդը, իբրև Սասուն պատմական գավառի կենտրոնական ամրություն, գոյություն է ունեցել։ «Այժմ դեռ մնում են Սասնու բերդի ավերակները, բուն Սասուն կոչված գավառակում, որ Մշո հարավ-արևելյան կողմումն է, 8 ժամ հեռավորության վրա, ցից-ցից, սրածայր ու տաշված քարերով պատած մի տեղ։ Դեռևս տեղ-տեղ կան կիսախարխուլ պարիսպները։ Դա «Դավիթ-Մհերի» բերդն է, որ գտնվում է երկու կողմից մի խրամատ ունեցող բլրակի գագաթի վրա, որի շուրջն ու ստորոտը խառնիխուռն թափթփված կան այդ գավառի գյուղերը[132]։ Այս նկարագրից պարզ է բերդի դիրքը շրջակա գյուղերի նկատմամբ, որ հատուկ է իշխանական ամրոցների կառուցման տեսակետին, որոնք և իրենց արտահայտությունն են գտել ժողովրդական բանահյուսության մեջ. «Սասնա բերդի ու քաղաքի հիմը դնում են, ըստ վեպի, «մի վերունի սարի» մեջ կամ «չոլ յաղանի տեղում» Աղնանց տոհմի նախնիները՝ երկու եղբայր Սանասար և Բաղդասար (ըստ այլ վարիանտի՝ Առլիմելիք, Աբամելիք)։ Քաղաքի մեջ, որ առաջ են շինում, բնակեցնում են իրենց ամբիկ ժողովուրդը, ապա մեծ-մեծ քարեր են կրում, ավարտում բերդը։ «Քարի սան քարի տուն զարկեցին, ձագ թալեցին ու թամամեցին դրերդ»[133]։ Հիրավի, այժմյան ավերակ «Սասուն» բերդի հարավ-արևելյան կողմում կա Քաղքիկ անունով գյուղը, որ հիշեցնում է վիպական Սասուն քաղաքը։

## II

## ԲԵՐԴԵՐԻ ՆԱԽՈՒՅԹԸ

Ժողովրդական վերոբերյալ բանահյուսության մեջ ցայտուն գծերով դրսևորվել է բրոնզի և ընդհանրապես վաղագույն մետաղի դարյան բերդաշինության հիմնական տեսակետը, որով առանձին նշանակություն է տրվում ամրության կենտրոնական մասին

կամ միջնաբերդին։ Վերջինս, իբրև իշխանանիստ կայան, կառուցվում էր ժողովրդի բնակատեղիից անջատ, որը միշտ լինում էր այդ բերդի տակ կամ ստորոտում և կամ նրան կից՝ բոլորակի շրջապատելով նրան ու իր հերթին, պարփակվելով ամուր պարիսպներով։ Այս բնորոշ երևույթը հետևանք է սոցիալական այն շերտավորման, որ սկիզբ է առնում մետաղի ինդուստրիայի ծագումով։

Եթե ուշադրության առնենք նեոլիթյան դարերի բերդակառուցման տեսակետը (Լ. 141—148), կտեսնենք, որ ամրոցների բովանդակ կառույցը բնավ չի կրում դասակարգային շերտավորման նշաններ, քանի որ այդ ժամանակները տիրում էին տոհմային հասարակական ձևերը։ Բերդը, բաղկացած լինելով կենտրոնաձիգ բոլորակի մի քանի շարք պարիսպներից և կենտրոնում ունենալով ռեֆուգիում, որից շառավղաձև իջնում էին քարաշար պատնեշներ, ներկայացնում էր ռազմա-պաշտպանողական տեխնիկային հարմարեցված մի ամրություն. այստեղ, արտաքին հարձակումների դեպքում, ապավինում էին շրջակա դաշտի վրա ցրված անպաշտպան գյուղերն իրենց ամբողջ տնտեսական բնակչությամբ և անասուններով։ Այդպիսի պայմաններում միջնաբերդը, հանդիսանալով ընդհանուր ամրոցի բաղկացուցիչ մասը, ծառայում էր ոչ թե իբրև տիրող իշխանի բնակատեղի, քանի որ այդպիսին այն ժամանակվա սոցիալական ձևերում գոյություն չունեին, այլ իբրև մի կենտրոն, որտեղից ղեկավարվում էր ռազմական պաշտպանությունը և որը հանդիսանում էր դիմադրության վերջին, ամենաուժեղ կետը։ Այդ ամրությունները, իրենց միջնաբերդով հանդերձ, հարձակման վտանգն անցնելուց հետո, դատարկվում էին, որովհետև պաշարվածները վերադառնում էին իրենց գյուղերը և շարունակում առօրյա կյանքը, մինչև մի նոր հարձակման սպառնալիքը։

Բրոնզի ու վաղագույն երկաթեդարյան ամրոցների բնորոշ սոցիալական գծեր որոշակի նկատելի են Հայկական լեռնաշխարհում ցրված բազմաթիվ բերդերի ավերակներում։ Այստեղ մի կողմից՝ միջնաբերդը, իսկ մյուս կողմից՝ նրա ստորոտին թառած քաղաքատեղին իր պարսպով այսօր լռելյայն բարբառում են դասակարգային շերտավորման հնագույն օրերի մասին։

Այդ տեսակետից հետաքրքիր օրինակներ ենք գտնում Նոր-Բայազետի գավառի այն վայրերում, ուր հայտաբերվել են մեր նկարագրած արխայիկ դամբաններն իրենց պերճածո նյու-



թական ինվենտարով, դամբաններ, որոնք նույնպես կրում են դասակարգային շերտավորման նշաններ։ Այդպիսի մի քանի ամրությունների նկարագրեր ենք գտնում մեր գրականության մեջ։

«Ամենից ուշագրավն ու հոյակապը Ղշլաղի Ջաղացի-գարի ամրոցն է։ Այս բերդը գտնվում է Ղշլաղից Նորատուս տանող ճանապարհի արևմտյան կողմում՝ մի կողմից հենվելով հարավային ձորին, իսկ երկրորդ կողմից՝ արևելյան բարձրաբերձ զառիթափին։ Ամրոցի ստորոտով պտույտ անելով անցնում է Գավառագետը։ Մեր նշած ամրությունների մեջ այս բերդն ամենաբարձրն է և շատ վեհատեսիլ դիրք ունի արևելյան ձորաբերանին։ ...Պարսպապատ մասը, որ թեք է, խոնարհված դեպի հարավ-արևելք, սեղանակերպ է՝ լայն կողմով հենված արևելյան ձորաբերանին, որտեղ նույնպես կան պարսպի հիմքի հետքեր ու դեպի արևելյան ձորը տանող փոքրիկ դռնանցք, որ խցված է։ Մնացած պարիսպները, որոնք 3 մետրանոց ու երկշար են, հսկա ժայռերից, փոքր քարերի անշաղախ լցքով, այնքան լավ են պահպանված, որ հենց առաջին հայացքից ցայտուն ներկայացնում են բերդի ընդհանուր կերպարանքը՝ մեծ տպավորություն անելով։ Ավելի կանգուն են մնացել արևմտյան ու հատկապես հարավային պարիսպները։ Հյուսիսային, արևմտյան ու հարավային պատերի մեջ կան անկյունավոր ելուստներ (выступы), անկյունավոր բուրգեր, որոնց նմանները Թ. Թորամանյանը մատնանշել է Արտաշատի հնադարյան բերդաքաղաքներում։ ...Պարիսպներից ներս կան շինությունների հետքեր հատկապես արևմտյան ու հարավային կողմերում։ Խոշոր քարերով շինության բարձր հետք կա նաև հարավային պարսպին կից, հարավային մեծ բուրգի մոտ։ Բերդի հյուսիսային պարսպի երկարությունն է մոտ 51 մետր, արևմտյանը՝ 66, հարավայինը՝ 104 ու արևելյանը՝ 100։ Պարսպափակ հողամասը բռնում է մոտ ½ դեսյատին տարածություն»[134]։

Իր մեծությամբ և շրջակա բերդերի շարքում իր բռնած կենտրոնական դիրքով աչքի է զարնում Նոր-Բայազետի հնադարյան բերդը, որտեղ հայտաբերվեց 1927 թ. խալդական սեպագիր հուշարձանը։ «Բերդը մի երկարացած հրվանդան է՝ արևելքից արևմուտք ընկած։ Գլուխը միանգամայն հարթ-տափարակ է, որ փռվում է բերդի պարիսպներից էլ շատ հեռու, դեպի արևելք։ Արևմտյան ծայրը երեք կողմից ուղղաձիգ ժայռապատ է ու

դժվարամատչելի։ Հարավային կողմում քարափը շարունակվում է մինչև վերջ, իսկ հյուսիսային կողմում ավարտվում է՝ արևելյան երկրորդ պարսպին դեռ չհասած։ 19-րդ դարում բերդի պարիսպները բավական բարձր են եղել, իսկ այժմ կարելի է տեսնել կամ հիմքի քարերն ու կամ այս քարերը հանելու համար արված փորվածքը, որի լարաձիգ ուղղությունը մատնում է պարսպի տեղը. պարսպի լայնությունն ամենուրեք 3 մետր է։ ...Բերդը շուրջանակի միապարիսպ է, բայց ունեցել է միջնաբերդ էլ, որն արևմտյան ավելի անառիկ ծայրումն է եղել։ Միջնաբերդն առանձնացվել է մի հաստատ եղանակով. ամրոցի հավասարասրունք ու երկար եռանկյունին, որի գագաթն արևմուտքումն է, արևելյան պատին զուգահեռ 3 մետրանոց մի նոր պարսպով բաժանվել է 2 մասի—արևմտյան ու արևելյան. արևմտյան եռանկյունին միջնաբերդն է, արևելյան սեղանակերպը՝ արտաքին ամրոցը։ Բերդի պարսպի հիմքերն ամենից լավ նկատելի են հյուսիսային կողմում. հարավային կողմում հին պարսպի մասեր երևում են ս. Ստեփանոսի մատուռի մոտի ձորաբերանում։ ...Ամրոցի հարավային քարափների մեջ կան մի քանի բաց կամ խցված քարայրեր. սրանցից 2 գլխավորը, որոնք իրար հետ կապված են միացնող անցքով, գտնվում են միջնաբերդի քարաքերթից մի քիչ դեպի արևելք։ Հարավային լանջումն են նաև այն քարե ու թերևս քարակոփ սենյակները, որոնց մուտքը ժայռերի փուլ գալու հետևանքով հիմա փակված է. այս սենյակների ներկայությունը հնագիտական խոշոր նշանակություն ունի բերդի կարևորությունը բացահայտելու տեսակետից։ Ամենահետաքրքիր կառուցումներից են այն երկար գետանցքերը, որոնք բերդի գլխից տանում են մինչև ձորամեջի ջուրը—Գավառագետը. մեկը միջնաբերդից, իսկ մյուսը՝ արտաքին ամրոցից։ Ներքնուղիները մյուս բերդերի գետանցքների համեմատությամբ բավական ընդարձակ են. պատերը շարված են խոշոր քարերից, իսկ ծածկը միակտուր սալաքարերից է։ Արտաքին ամրոցի գետանցքի երկարությունը մոտ 270 մետր է, որը հնումը կարող էր ավելի լինել, երբ գետանցքն ավելի է մոտեցած եղել գետին։ Միջնաբերդի ներքնուղու երկարությունն է մոտ 265 մետր։ Կենտրոնական այս բերդի երկարությունն է 375 մետր, արևելյան արտաքին պարսպինը՝ մոտ 185 մետր. միջնաբերդի երկարությունն է մոտ 121 մետր, և միջնաբերդի արևելյան պարսպինը կամ միջնապարսպինը՝ 82 մետր»[135]։



Այդպիսի բերդերի մնացորդներով հարուստ է նաև Շիրակի գավառը, որտեղ հետախուզումներ է կատարել հնագետ-ճարտարապետ Թ. Թորամանյանը։ Նրա նկարագրած մի քանի ամրություններից, որոնք պատկանում են վաղագույն մնացած դարերին, առաջ բերենք մի օրինակը՝ Հոռոմ գյուղինը։ «Ալեքսանդրապոլին դեպի հարավ-արևելք 15—16 քիլոմետր հեռավորության վրա կըգտնվի Հոռոմ գյուղը. գյուղի արևելյան կողմի բարձունքներուն վրա է այս հետաքրքրական ավերակը, որուն գյուղացիք ըստ սովորականի Ղալաինչի (միջնաբերդ) անունը կուտան։ Գյուղին անմիջապես կից կտեսնվեն չորս մեծ և մի քանի հատ մանր բլուրներով ամբողջովին շրջապատված հին քաղաքը։ Բլուրներեն ամենեն լայնանիստը, որ քաղաքի հյուսիս-արևմտյան կողմի վրա է, կիշխե իր ոտքին տակ տարածվող ընդարձակ դաշտավայրին վրա. Թե պատերի վիթխարի կառուցվածքով և թե ներքին բաժանումներով, անպայման հատուկ է այս մասն իշխանական բնակության։ Համեմատաբար այս ամենեն մեծ ու ընդարձակ բլուրը, նախ գագաթեն շրջապատված է մեծադանգված որձաքարե պատերով, և հետո էլ ստորոտեն շրջապատված է չափազանց հաստ մի պարսպով. իսկ այս 2 պարիսպների մեջ կան անհավասար չափերով բաժանումներ՝ որոնք անշուշտ հատուկ էին արքունի բնակության։ ...Մյուս մեծ ու փոքր բոլոր բլուրներն էլ առանց բացառության ամրացված են շրջապարուր պարիսպներով, ոմանք 3 կամ 4, ոմանք 2 կարգ ըստ բարձրության ու տարածության. յուրաքանչյուրին գագաթներուն վրա միշտ կան բնակության հատուկ բաժանումներ. իսկ ստորին լանջերը քաղաքի մասերը կկազմեն»[136]։

Վերջապես հիշենք պրոֆ. Իվանովսկու և ապա պրոֆ. Նիկոլսկու պեղած նույնանման, բայց ավելի մեծ ծավալի ամրությունները, որոնք գտնվում են Մեծ Արարատի ստորոտում, այժմյան Դաշբուրուն գյուղի մոտ և որոնք Մովսես Խորենացու Պատմության մեջ հիշատակվում են Ցոլակերտ անունով, իբրև թե Հայկ նահապետի տոհմից սերված Ցոլակ իշխանի որդի Ամասիայի իշխանանիստ ամրոցը։ Այդ բերդը գտնվում է Դաշբուրունի հարավային ուղղությամբ մի բարձրաբերձ բլրի վրա Մեծ Արարատի ստորին լանջում, որ այստեղ թեքակողաձևով փռված է դաշտի վրա։ Բլրի հյուսիս-արևելյան կողմը սեպ կտրվում է ճանապարհի կողմը, իսկ մյուս կողմերը դարձած են դեպի խորունկ ձորը, որը երեք կողմից ընդգրկում է այդ բլու-

դը և ապա ձգվում է հարավային ուղղությամբ։ Ամրոցն անկանոն հնգանկյան ձև ունի, որի ամենամեծ երկարությունը հարավային և հյուսիսային անկյունների միջև մոտ 400 մետր է։ Ամրոցի պարիսպները չափազանց քանդված վիճակում են։ Ամրոցը շարված է ահագին քարերից, որոնք տեղ-տեղ կոպտատաշված են, բայց մեծ մասամբ անտաշ են։ Պարիսպների պահպանված մասերի բարձրությունը հասնում է 1 մետրի, հաստությունն էլ 1 մետրից չի անցնում։ Որմերի վրա, ըստ երևույթին, բարձրանում էին մի քանի աշտարակներ, որոնցից 5-ի ավերակները տակավին պահպանվել են (3-ը արևմտյան, իսկ 2-ը հարավային կողմը), բայց նրանց թիվը, ամենայն հավանականությամբ, ավելի է եղել։ Հարավային կողմից դեպի բերդը տանում է բավական հարթ ու լայն վերելք, որը պաշտպանված է պարիսպներով (MAK, V, 38):

Այս բերդի շրջակայքում որոշ հեռավորության վրա մնացել են հետքեր երբեմնի, ըստ երևույթին, բավական մեծ բնակատեղիի, որ թողնում է քաղաքի տպավորություն և գտնվում է 3 վերստ հեռու այժմյան Դաշբուրունից, ուր հայտաբերվել է խալդական թագավոր Մենուայի (810—778 թ.) սեպաձև արձանագրությունը։ Ա. Իվանովսկու ասելով՝ դժվար էր որոշել այդ քաղաքատեղիի բռնած տարածությունը։ Այն վայրի մակերեսը, ուր հողի խորքերում թաղված է մնացել քաղաքը, ներկայումս բոլորովին հարթ է և միայն տեղ-տեղ գետնից հազիվ նկատելի ցցված քարերը վկայում են, որ հողի տակ շենքեր կան։ Այդպիսի նշանների և զանազան տեղերում կատարած փորձնական մի քանի պեղումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ քաղաքը բռնելու էր ոչ պակաս 10—12 վերստ շուրջանակի տարածություն։ Քաղաքի բազմաթիվ շինություններից մնացել են միայն գետնի մեջ թաքնված պատերին մասերը, մոտավորապես $1^1/_2$ մետ. բարձրությամբ։ Այդ բնակատեղիին պատկանող մի քանի կարկառուն շենքերի նկարագրերն առաջ ենք բերել նախորդ գլխում (էջ 229—236)։

Այս քաղաքատեղիի և վերոհիշյալ ամրոցի միջև եղել են իրարից որոշ հեռավորության վրա նաև երկու բերդակներ, որոնք նույնպես կառուցված են բլուրների վրա, բայց ավելի փոքր և շարված են նույն ձևի քարերով։ Այդ բերդակներից մեկի մոտ կա մի լիճ։

Վերը նկարագրված Ցոլակերտի մեծ բերդի հաջող աշխարհագրական դիրքը, նրա ծավալը, պարիսպների ահագին հաստությունը, մի քանի աշտարակների ներկայությունը վկայում են,



որ այդ ամրոցը երբեմն ահագին դեր է խաղացել իր նշանակությամբ։ Նրա, ինչպես և մյուս 2 բերդակների որմերի շարվածքն ու կառույցքը, նմանապես սրանց կից գտնվող պեղված քաղաքատեղիի ավերակ շենքերի բնույթը կասկած չեն թողնում, որ այդ հինավուրց քաղաքն ու բերդը միևնույն կուլտուրական դարաշրջանին են պատկանում, որ այդ քաղաքի ու բերդի միջև սերտ կապ գոյություն ուներ վերոհիշյալ միջանկյալ երկու բերդակների միջոցով։ Այդ երեք ամրությունները իրենց դիրքով անշուշտ հանդիսանում էին հիշյալ քաղաքի մի տեսակ միջնաբերդ։ Ի՞նչ քաղաք էր այդ։ Դաշբուրունի մոտ հայտաբերված սեպագրության մեջ խալդական Մենուա թագավորն արձանագրում է, որ ինքն այդ վայրում կառուցել է Խալդ աստծու տաճարը և իր սեփական պալատը. այդ վայրը դարձրել է մայրաքաղաք, տալով նրան իր սեփական անունը՝ Մենուահինիլի։ Անտարակույս, խոսքն այստեղ վերաբերում է այն Լիխիունինի-ին, որ Մենուան գրավել էր ու քարուքանդ արել, որպես իր նվաճած Իրիդուահինի երկրի մայրաքաղաքը։ Դա առաջին երկիրն էր Արարատյան դաշտում, ուր ներս էր խուժել Մենուան, անցնելով Արաքսը այժմյան Դաշբուրունի մոտ։ Այսպիսով, հիշյալ քաղաքը դաշտավայրում և ամրոցները լեռան ստորոտի բլուրների վրա, նաև սրանց բաժանող լիճը կազմում էին մի ամբողջություն և մեծ նշանակություն ունեցող ռազմական ու կուլտուրական կենտրոն։ Այդ վայրը մեր թվականությունից 8 դար առաջ խալդական թագավորների համար մի բանալի էր դեպի Երևանի դաշտը, որտեղ առաջին անգամ ոտք դրեց Վանյան թագավորներից առաջինը՝ Մենուան։ Տիրելով այս վայրին, նրա հաջորդները, մասնավորապես Արգիշտի I-ը (778—750), նվաճեցին ամբողջ Արարատյան դաշտը և սրան հարակից Արագածն (Շիրակի գավառը) ու Սևանը (MAK, V և VI)։

Չմտնելով այն հարցի լուսաբանության մեջ, թե արդյոք վերոհիշյալ քաղաքատեղին իր բերդերով իրոք հայկական պատմության մեջ հիշատակվող Փառախոտն էր, թե՞ Ցոլակերտը կամ ավելի հին Զոլկերտը, որ համենայն դեպս նույն այդ տեղերումն է եղել, մեզ համար արժեքավոր է միայն այն հանգամանքը, որ հիշյալ քաղաքատեղին իր ամրոցներով ընկած է եղել այն մեծ առևտրական ճանապարհի վրա, որ ամենահին դարերից գործում էր Առաջավոր Ասիայից Հայաստանի վրայով դեպի Անդրկովկաս և ավելի հյուսիս, մի ճանապարհ, որ նշանակված կա 4-րդ դարին

վերագրված Պեյտինգերյան քարտեզում (Tabula peutingeriana)[137]։ Սակայն այդ բերդերն ավելի հին ծագում պետք է ունենան, թերևս խալդերից շատ առաջ։ Որպես այդ հնագույն կուլտուրայի վկաներ մնացել են մի քանի հիերոգլիֆային նշանագրեր, որոնք արձանագրված են Ցոլակերտի ավերակ բերդերից մի փոքր հեռու գտնվող երկու ժայռերի վրա[138]։

Նույնպիսի նախապատմական ամրություն է ներկայացնում հայոց հնագույն պատմության մեջ հռչակավոր Դարանի բերդը, որի մասին ավանդում են Մովսես Խորենացին իբրև «Հայկ նահապետի ժառանգների կառույցը», Եղիշեն, Փավստոս Բուզանդը և սրանցից էլ առաջ հին հռոմեական աղբյուրը Տակիտոսը։ Հայոց հնագույն պատմական գրքերից այդ ամրոցում Տրդատ թագավորին վերագրված շինարարություններից մնացել են այսպես կոչված «Տրդատի թախտ» կամ «Խոսրովադուխտի հովանոցը», որի ավերակները, ճարտարապետ Բունիաթյանի կողմից վերջերս կատարված մանրազննին ուսումնասիրությամբ, վկայում են որ այդ շենքը եղել է հույն-հռոմեական ոճով կառուցված հեթանոսական տաճար գուցե հենց հռոմեական նվաճող զորավարների ձեռքով շինված (I-ին դարի սկզբին)։ Դարանի ամրությունն ըստ ամենայնի ուշագրավ է նրանով, որ նա տիպիկ ֆեոդալական ամրոց էր, որը նրա ստորոտում փռված ավանի կամ գյուղաքաղաքի համար հանդիսացել է իբրև միջնաբերդ, ուր կառուցված են եղել իշխանական ապարանքն ու հարակից տաճարը և այլ սպասարկող շենքերը։ Դարանին, որը, ըստ Եղիշե պատմագրի, «անմատույց ամուր» բերդ էր, կանգնած թերակղզու ձև ունեցող բարձրաբերձ ժայռի վրա, որա հարավային կողմը, եռանկյան հիմքը, կազմում է սեպ ժայռերի ձոր, որով հոսում է Դարանի գետը (հին հայոց պատմական՝ Աղատ)։ Արևելյան ու արևմտյան կողմերը, որոնք կազմում են եռանկյան երկու կողմերը, բնական ժայռոտ խորունկ խրամատներ ներկայացնող թեքվածքներ են, որոնք անառիկ են դարձնում բերդը։ Բերդի հինավուրց մի քանի մնացորդները ցույց են տալիս նրա կիկլոպյան բնույթը — ահագին քարերը շարված են առանց շաղախի։ Նույնիսկ հեթանոսական տաճարի (Տրդատի թախտը) հոյակապ կառույցքի որմնաքարերն իրենց հսկայական մեծությամբ, թեև տաշված ու կոկված, հիշեցնում են կիկլոպյան շենքի տեսարժները, մանավանդ որ նրանք շարված են եղել ոչ թե շաղախի մածուցմամբ, այլ երկաթե բեկոնների ամրացումով[139]։



Սակայն ամրոցների ու սրանց հարակից բնակատեղիների կառուցման տեսակները բացառիկ ու կղզիացած երևույթ չեն սոսկ Հայկական լեռնաշխարհի հնագույն կուլտուրայի պատմության մեջ։ Նման օրինակներ մեծ չափերով գտնում ենք հնագույն պատմության մեջ դեր խաղացող այլ և այլ ժողովուրդների կյանքում թե Առաջավոր ու Փոքր-Ասիայում և թե միջերկրածովյան երկրներում։ Ինչպես քանիցս նշել ենք, Հայկական լեռնաշխարհի կուլտուրան իր զարգացումով մեծ աղերս է ունեցել էգեյա-միկենյան և հաթական կուլտուրաների հետ, որ իրենց հետ բերել են հին Հայաստան ու այստեղ ծաղկեցրել խալդերը և ապա արմենները, երբ իրենց էթնիկ ներդաղթով հաստատվում են նոր հայրենիքում, պահպանելով իրենց վաղեմի դասակարգային կազմակերպությունը։

Էգեյա-միկենյան կուլտուրան միջերկրածովյան աշխարհում և հաթական կուլտուրան Փոքր-Ասիայում պատկանում են բրոնզե դարերին։ Էգեյա-միկենյան կուլտուրայի կարկառուն կենտրոնները են հանդիսացել Տիրինթը ու Միկենքը։ Հնագույն պատմության մեջ առաջին անգամ այստեղ ենք հանդիպում քաղաքների ու ամրոցների, իշխանական դղյակների ու ապարանքների, հին ու հոյակապ ճարտարապետական կերտվածքների։ Ամրոցները խոյանում էին բարձունքների անմատույց գագաթների վրա, իսկ սրանց շրջակա ստորոտին կամ լանջերին խիտ ու խիտ խմբվում էին քաղաքային կամ գյուղական տները, պարփակված հսկայական պարիսպների շրջապատի մեջ։ Այդպես էր Տիրինթը, որի պատաշարը բաղկացած էր հսկայական անտաշ քարերից, որոնցից շատերը 2—3 մետր երկարություն, 1 մետր լայնություն և 1—2 մետր հաստություն ունեին։ Տիրինթի շրջապատ որմերը բոլորում էին մոտ 100 մետր երկարությամբ և 300 մետր լայնությամբ մի բլուր, որ բաղկացած էր 3 բաժանմունքից։ Ամենավերին բաժանմունքը, բլրի գագաթին, պարփակում էր իր մեջ իշխանական ապարանքը, միջին բաժանմունքում գտնվում էին վասալների ու ծառաների (ստրուկների) բնակարանները և վերջին՝ երրորդ բաժանմունքը, ամենաստորինը հանդիսանում էր քաղաքատեղին[140]։

Նույն պատկերն են տալիս հաթական ամրությունները, որոնք պատկանում են Փոքր-Ասիայի նույնպես բրոնզեդարյան կուլտուրային։ Պեղումներով հայտաբերված հին հաթական քաղաքատեղիները, ինչպես այժմյան Բողազքյոյ գյուղի մոտ (հին

հաթական Մառուշաշ), այժմյան Մարաշը, Էյուկը, բոլորն էլ կիկլոպյան պատաշարերով ամրացված բլուրներ են, որոնց գագաթում գտնվում էր միջնաբերդը, իսկ ստորոտում՝ քաղաքատեղին[141]։

## III

## ՔԱՂԱՔՆԵՐ

Ասորեստանյան ու խալդական սեպագիր հուշարձաններին նայած՝ պետք է կարծել, որ Հայկական լեռնաշխարհում քաղաքների թիվը հասնում էր մի քանի հարյուրի, իսկ թագավորների թիվը՝ մի քանի տասնյակների, թերևս մինչև հարյուրի։ Ասորեստանյան թագավոր Ասուրնասիրպալը (884—860 թ.) մի արձանագրության մեջ հիշատակում է, որ ինքը Նաիրիի երկրում նվաճել է 250 քաղաք։ Ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ը (860—825) միայն Ուրուատրի փոքրիկ երկրում (Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան անկյունում) ավերել էր 100 քաղաք, իսկ դրա հարևան Մուսասիրի երկրում՝ 46 քաղաք։ Խալդական թագավոր Մենուան (810—778) նվաճել էր Վանա լճից մինչև Արաքսի հովիտն ընկած տարածության վրա 400 քաղաք, Սարդուր թագավորը (750—733)՝ 200 քաղաք և այլն։ Խալդական թագավոր Արգիշտին (778—750) Աշխալաշի երկրում կործանում է 105 իշխանական ապարանքներ և գրավում է 453 քաղաք։

Եթե մտածենք «քաղաք» բառին այն իմաստով, ինչպես ներկայումս ենք ըմբռնում որոշ սոցիալ-տնտեսական առումով, անշուշտ այդքան անհավատալի թվով քաղաքներ գոյություն չէին կարող ունենալ համեմատաբար ոչ այնքան մեծածավալ տարածության վրա, այն էլ անտեսապես ոչ այնպես զարգացած մի երկրում։ Քաղաք ասելով, վերոհիշյալ արձանագրությունները, անտարակույս, նկատի ունեին որոշ բնակչություն ընդգրկող ամրությունները՝ հանդերձ իրենց միջնաբերդով։ Քաղաք բառը թե հայերենում և թե վրացերենում (քալաքի) յուրացված է սիրիական լեզվից և նշանակում է ցանկապատ, այսինքն պարսպով պատված, խրամատով ու պատնեշով օղակված մի վայր, ուր բնակչությունը հնարավորություն ունի պաշտպանել իր անվտանգությունն արտաքին հարձակումներից, այն է՝ պատսպարվել միջնաբերդի շուրջը։ Նույն իմաստն է պարունակում նաև ռուսական город բառը, կամ լատինական urbs և oppidus և այլն։



Սակայն այդ տեսակ ամրություն-քաղաքը միաժամանակ կարող էր լինել իր բնակչության էությամբ նաև սոսկ մի գյուղ։

Միևնույն ժամանակ, ըստ սեպագիր տվյալների, երևում է, որ այդ քաղաքները եղել են ինքնուրույն հասարակական միավորներ՝ իրենց անկախ իշխաններով, իսկ շատերն էլ իրենց առանձին թագավորներով, որոնք տիրում էին այդ քաղաքներին հարող մարզերին։

Ահա այդ առումով կարելի է ընդունել, որ Հայկական լեռնաշխարհում քաղաքների թիվը կարող էր հասնել մի քանի հարյուրի։ Սրան միանգամայն համապատասխանում է ամրությունների այն խիտ ցանցը, որի մասին վերն ակնարկել ենք (էջ 240), նաև այն հանգամանքը, որ ներկայումս գտնում ենք [illegible] այս ու այնտեղ ցրված բազմաթիվ ամրոցների ու բերդերի ավերակներից։ Այդ նույն առումով պետք է բացատրել այդքան բազմաթիվ իշխանությունների ու թագավորությունների առկայությունը, որոնց մասին հիշատակում են սեպագրությունները։ Անտարակույս, այդքան բազմաթիվ քաղաքների, այսինքն ամրությունների, գոյությամբ նույնպես բազմաթիվ էին լինելու նրանց իշխող տերերը։

Քաղաքների ու իշխանների այդպիսի շատությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ գործ ունենք ոչ թե զարգացած ֆեոդալական ձևավորման հետ (ֆորմացիա), ինչպես այդ կարող էր թվալ առաջին հայացքից, այլ տակավին տոհմային հասարակակարգի մնացորդների հետ։ Դա մի փոխանցիկ շրջան էր, երբ տոհմային կարգը, դասակարգային նոր հարաբերությունների հողի վրա սկսված սոցիալական շերտավորման հետևանքով, չքանում էր, տեղի տալով նոր հասարակական ձևերին, որտեղ նախկին տոհմապետներից, որոնք իրենց տոհմերով խիտ առ խիտ ցրված էին Հայկական բարձրավանդակի բազմաթիվ ձորերում ու դաշտերում, գոյանում են տիրակալ իշխաններ՝ իրենց հպատակ հասարակությամբ, բաղկացած մեծ մասամբ նախկին տոհմակիցներից[142]։ Այդ սոցիալ-քաղաքական վերափոխման պրոցեսը, որի արագացմանը մեծ զարկ է տալիս Ասորեստանի աշխարհակալական էքսպանսիան դեպի Հայկական լեռնաշխարհը, իր զուտ ֆեոդալական կերպարանքն ստանում է միայն խալդերի տիրապետության օրով։

Խալդական Մենուա թագավորն էր, որ պսակեց իր նախորդներ Սարդուրի և Իշպուինիի գործը, հաստատելով Հայկա-

Վան լեռնաշխարհում մի մեծ ու հզոր ֆեոդալական պետություն: Նա, գրավելով 400 քաղաքները, որոնք պատկանում էին մանր-մունր «իշխաններին» ու «թագավորներին», հիմնեց մի թագավորություն, իրեն հորջորջելով, առաջին անգամ, «թագավոր թագավորաց», իսկ իր երկիրը, Վանյան թագավորությունը, կոչվելով Բիայնա, ստացել էր ընդգրկված բազմաթիվ մանր երկրների կոլեկտիվի նշանակություն. Նա հորջորջվում էր «երկիր երկրների», և այդ Բիայնա անունը, ինչպես և նախկին Նաիրին, հասկացվում էր հոգնակի թվի առումով:

Ընդգծենք մի բնորոշ երևույթ ևս, որը մասամբ հիմնավորում է վերոհիշյալ մեր ենթադրությունը, թե քաղաքների այդ շատությունը պետք է բացատրել տիրող տոհմային հասարակական ձևի առնչությամբ, երբ բազմաթիվ մանր ու ցրված տոհմերն առանձնակի բնակություն ունեին յուրաքանչյուրն իր առանձնացված սեփական վայրում: Դա նրանց տնտեսության զուտ գյուղացիական ինքնամփոփ բնույթն էր, որ կրում էր բացարձակ երկրագործական-անասնապահական արտադրության ձև: Այդ հանգամանքն ապացուցվում է այն ավարներով, որոնց մասին հիշատակում են ասորեստանյան ու խալդական արձանագրությունները: Այդ բազմաթիվ քաղաքներից վերցված ավարը բաղկացած էր լինում բացառապես գյուղատնտեսական արգասիքներից, մանավանդ մեծաքանակ անասուններից՝ եզներից, ձիերից, ոչխարներից և այլն: Դա բնորոշ բնատնտեսություն էր, որ հատուկ է տոհմային հասարակական ձևերին: Միայն հետագա ժամանակների մեջ (Բիայնայի սահմաններում) գտնում ենք արդեն, բացի գյուղատնտեսական արգասիքներից, նաև արհեստագործական, գլխավորապես մետաղագործական արտադրություններ, մի բնորոշ պարագա, որ ապացույց է առաջացած նոր տնտեսական գործոնների, որոնք աղերս ունեին ֆեոդալական ձևավորման հետ:

Բայց և այնպես գոյություն ունեին նաև քաղաքներ, արդեն ֆեոդալական դարաշրջանում, մեր սոցիալական առումով, այսինքն, ի տարբերություն գյուղի, բազմամարդ բնակչություն ընդգրկող վայրեր դասակարգային կազմությամբ և իշխանանիստ ամրոցով: Մի ամփոփ բնակավայրի, որքան էլ նա բազմամարդ լինի, կարող է միանգամայն գյուղական բնույթ ունենալ, եթե նրա բնակիչների արտադրական գործունեությունը պարփակվում է զուտ գյուղատնտեսության մեջ՝ երկրագործական-անասնա-



պահական արգասիքներում: Այս դեպքում քաղաքի էական հատկանիշն այն է, որ նրա բնակչությունը բաղկացած է գլխավորապես այնպիսի տարրերից, որոնք իրենց նյութական գոյությունը պահպանում են ոչ թե նրանով, որ անմիջականորեն իրենք են արտադրում կենսական հայթայթման արգասիքները, այլ դրանք ստանում են ուրիշներից: Այդ տարրերն են՝ պետական-վարչական ներկայացուցիչները, կրոնական պաշտոնյաները, արհեստավորները, մշտական ռազմիկ ուժերը: Սրանք բոլորն էլ իրենց նյութական գոյությունը պահպանելու համար պետք է անհրաժեշտ սննդամթերքները ձեռք բերեն դրսից, որ ներմուծվում է սրանց համար շրջակա այն վայրերից, ուր տիրում է գյուղական տնտեսությունը:

Իշխանական ամրոցները, որոնք կանգնած էին մեծ ու հարմար ճանապարհների վրա, ապահով պատսպարան էին ներկայացնում արհեստավորների ու առևտրականների համար, կուտակվող գյուղատնտեսական արգասիքների ու ապրանքների պահեստների համար, ուղևորի կամ փոխանակության շուկաների համար: Սրանք հետզհետե կենտրոնանում և լայնարձակ դարդանում էին իշխանական ամրոցի շուրջը, գտնելով այստեղ ապահովման ապաստարան, ուր բնակչության կազմի մեջ անդադար ներհոսում էին նաև շրջակա գյուղերից տնտեսապես ու սոցիալապես անջատվող ու չերտավորվող տարրերը: Այդպիսի քաղաք-ամրոցի տերը, իշխելով իրեն ենթակա մարդին և հենվելով սեփական ռազմական ուժին, շահագրգռված էր իր քաղաքի զարգացումով ու ապահով վիճակով, որովհետև հենց ինքը, իբրև միակ խոշոր կալվածատեր, հանդիսանում էր միաժամանակ ամենամեծ ու ամենագիշատիչ շահագործողն ու կուտակողը:

Ահա այդպես էին այն քաղաքները, որոնց մասին խոսք եղավ վերը, ինչպես օրինակ՝ Դաշբուրունի մոտի քաղաքատեղիի ավերակները (էջ 248) և այլն: Հինավուրց քաղաքները, որոնք ընկած էին վաճառաշահ ու ռազմական հաղորդակցությունների ճանապարհների վրա, իրենց այդ նշանակությունը պահպանում էին մինչև պատմական դարերը: Այդպես էին հին պատմական Հայաստանի Արտաշատը, Երվանդաշատը և այլն:

ԺԱ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## 1

## *ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ*

*Նյութական կուլտուրայի այն իրեղեն տարրերը, որոնք քննության առնվեցին նախորդ գլուխներում, արդեն որոշ չափով պատկերացնում են Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական գործունեությունը վաղագույն մետաղի դարերում: Այդ պատկերն ավելի ևս կամբողջանա, երբ ուշադրության առնենք այդ երկրի աշխարհագրական, կլիմայական և այլ բնական պայմանները, որոնց մասին խոսել ենք ներկա աշխատության առաջին հատորում* (I, 39—62): *Մեկնելով ակնարկված տվյալներից, տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհում վաղագույն մետաղի դարերում տնտեսական գործունեության մեջ գլխավորապես դեր էին խաղում երկրագործությունը, անասնապահությունը, ապա արհեստներն ու առևտուրը:*

*Գեղամա լեռների մեջ գտնված մանգաղներն ու երկժանիները և ապա կալսելու կամը (Մուսի-Երի), երկաթե խոփը (Թոփրակ-կալեում) հանդիսանում են այն գործիքները, որոնք վկայում են տեղական բնակչության մեջ տիրող երկրագործության մասին, առավելին վաղագույն մետաղի դարերում: Այդ ժամանակից հետո ոչ այնքան ուշ դարաշրջանի մասին Քսենոփոնը վկայում է, որ հայերի գլխավոր զբաղմունքը եղել է երկրագործությունն ու անասնապահությունը: Քսենոփոնի նկարագրած հայ գյուղական կենցաղից երևում է երկրագործ ժողովրդի մի տնտեսություն, որ բաղկացած էր առատ բնական բերքերից՝ հացահատիկներից, պտուղներից ու սրանցից պատրաստած կերակուրներից, ինչպես և գարուց պատրաստած ոգելից խմիչքից, որոնք պահվում էին գետնի մեջ ամրացված կարասների մեջ*[143]: *Քսենոփոնի նկարագրության մեջ բերված տվյալներից երևում է, որ բացի ցորենից*



*ու գարուց, որոնք պահվում էին գետնափոր հորերում (այդ սովորությունը մնացել է նաև այժմյան հայ գյուղերում), բացի ցորենից և գարեջրից, որոնք նմանապես պահվում էին գետնի մեջ ամրացված կարասներում (ինչպես և մինչև վերջին ժամանակները), կային մեծ քանակով նաև պատվական արմտիք (լոբի և այլն), պտուղներ, ինչպես թուզ, զանազան բույսերից քաղած յուղեր, այն է՝ քունջութի, նշի, ֆնդուխի և այլն:*

*Այդ բովանդակ տնտեսությունն իր էությամբ բացարձակապես բնական բնույթ ուներ, մի տնտեսություն, որ իր արտադրական ձևը պահպանել էր մինչև մեզ մոտիկ ժամանակները, մնալով էքստենսիվ մշակության պայմաններում:*

*Քսենոփոնի վերոբերյալ նկարագրից հնագույն Հայաստանի գյուղատնտեսության մեջ բուսականության բազմազանության ու առատության մասին ստացվող տպավորությունն ունի իր հիմունքները նաև վերջին ժամանակվա բուսաբանական հետազոտություններում: Մի շարք գիտական ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհն սկզբնական հայրենիքն է եղել մի շարք պտուղների, ինչպես օրինակ՝ ծիրանի, դեղձի, նռան և այլն, նմանապես և հացահատիկների, գլխավորապես ցորենի, որի վայրի, այսինքն նախնական տեսակն անցյալ տարիներս հայտաբերվել էր Սովետական Հայաստանում*[144]:

*Վերջապես Հերոդոտի (5-րդ դար մեր թվականութ. առաջ) և Մովսես Խորենացու հիշատակած «հայկական ներկը», որով հայտնի էր Արարատյան դաշտը, ուր աճում էր այդ ներկի միջատը՝* որդան կարմիր, *այնուհետև մարենան, գետորը—սև ներկատու բույս. և այլն, ցույց են տալիս, թե ինչ հարուստ ֆլորա էր ներկայացնում այդ երկիրը:*

*Այդ հարուստ բուսականությունը լայն ասպարեզ էր բաց անում հողերի մշակման, բույսերի բուծման ու հավաքման համար, ընդհանրապես երկրագործության համար, որը գերակշռող տեղ էր բռնում ժողովրդական տնտեսության մեջ:*

*Հայկական լեռնաշխարհի գերակշռող երկրագործական այդ բնույթն էր թերևս գլխավոր պատճառներից մեկը, որ ասորա-բաբելական աշխարհակալներին գրգռում էր նվաճել այդ երկիրը ոչ միայն իբրև ռազմական մեծ կարևորություն ներկայացնող միջնաբերդ, որ ապահովում էր Միջագետքի տիրապետության թիկունքը հյուսիսից, այլև մի երկիր, որն իբրև մթերային շտե-*

մարան էր ծառայելու Ասորեստանի համար: Հիրավի, այն արշավանքներն ու հարձակումները, որ ասուրա-բաբելական թագավորները ձեռնարկում էին Նաիրիի և Ուրարտուի դեմ, միշտ ուղեկցվում էին անհագին ավարառությամբ, որի մեջ առաջնակարգ տեղ էին բռնում երկրագործական արգասիքները: Ասուրնասիրպալ թագավորը (884—860) Նաիրիի դեմ վարած պատերազմի հաջողությունները արձանագրելիս՝ հիշատակում է, որ հնձել է Նաիրի երկրի ամբողջ բերքն ու ամբարել իր երկրի համար Տուշխա, Դամդամուսա, Սինաբուս և Տիդու քաղաքներում, որոնք գտնվում էին Ասորեստանի Բիտ-Զամանի գավառում: Հետաքրքիրն այն է, որ այդ ավարի մեջ հիշատակվում են ոչ միայն հացահատիկներ, այլև հարդը, խոտը, որ իբրև կեր այնքան անհրաժեշտ էր Ասորեստանի անասունների համար դալարազուրկ Միջագետքում: Նույնիսկ հարկերն ու տուրքերը հաղթական Ասորեստանի կողմից պահանջվում էին երկրագործական արգասիքներով, այն է՝ հացահատիկներով, հարդով, պտուղներով և գինով: Այդ նպատակով ասորեստանյան թագավորները Նաիրի երկրի սահմանամերձ վայրերում կառուցում էին հատուկ պահեստներ ու շտեմարաններ՝ գանձված հարկերը մթերելու համար: Այդպիսի վայրերից նշանավոր էր Բիտ-Զամանին, այժմյան Դիարբեքիրի գավառը:

Նմանապես բնորոշ է Քսենոֆոնի նկարագրության մեջ հիշատակված այն փաստը, որ խալդերը, որոնք արմենների ասպատակման հետևանքով քաշվել էին լեռնային մարզերը, զրկվելով երկրագործական հարմար հողերից, շարունակ հարձակումներ էին գործում դաշտերում հաստատված հայերի վրա, որպեսզի սրանցից խլեն երկրագործության համար մշակելի հողերը:

Երկրագործության այսքան մեծ նշանակությունը Հայկական լեռնաշխարհի տնտեսական կյանքում, անտարակույս, սերտ առնչություն ունի կիրարկվող գործիքների հետ: Արդեն մեր թված գործիքները, որոնք հայտաբերվել են բրոնզեդարյան դամբարաններում, որոշ գաղափար են տալիս երկրագործական տեխնիկայի վիճակի մասին: Սակայն այդտեղ չենք գտնում ամենաէական ու գլխավոր գործիքը, որով հերկվում և սերմնական մշակման էր ենթարկվում հողը: Այս հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ այդ նպատակին ծառայող գործիքը եղել է ամբողջապես փայտից: Ուրեմն այդ արխայիկ ժամանակներից նա չէր կարող հասնել մինչև մեր օրերը, թեպետ և այն պատ-



ճառով, որ նա երբևիցե մետաղների հետ թաղված չի եղել դամբարաններում: Բայց այն ուշագրավ փաստը, որ դամբարաններում գտնված այլ երկրագործական պարագաները միանգամայն նման են հայ գյուղացիական կենցաղում մինչև վերջին ժամանակները կիրարկվող գործիքներին, թելադրում է հետևցնելու, որ այսօրվա մեր նահապետական արորը եղել է նաև այն արխայիկ դարերի հերկելու գործիքը (I, 275): Հարկավ, այսօրվա արորը, համեմատած բրոնզե դարերի հետ, գուցե ավելի զանգվածեղ ու ծանր է, որպեսզի ավելի խոր ակոսներ փորի. բայց իր էությամբ, իր հիմնական գծերով նա մնացել է նույնը:

Այս հանգամանքն ավելի բացահայտ է դառնում, երբ այսօրվա հայկական արորը համեմատում ենք հող վարելու այն գործիքների հետ, որոնց օրինակները մեզ հասել են բրոնզեդարյան քանդականկարներում, ինչպես՝ Բոհուսլանի, Լոմբարդիայի (այժմյան Բրեշիա քաղաքի մոտ), հին Եգիպտոսի, Միջագետքի, և, վերջապես, երբ համեմատում ենք այն բնականոն փայտե արորի հետ, որ հայտաբերվել է Յուտլանդիայում մի ճահճի միջից և վերագրվում է մոտավորապես I-ին դարին նախքան մեր թվականությունը:

Երկրագործությունը, որպես տիրապետող տնտեսական զբաղմունք, կարող էր զարգանալ բուսականության այն պայմաններում, որոնք այնպես առանձնահատուկ էին Հայկական լեռնաշխարհին և պարփակում էին իրենց մեջ արտադրական այդ ճյուղի զարգացման տարրերը, թեև բնատնտեսության ձևերով:

Հայկական լեռնաշխարհը, ինչպես ներկայումս, այնպես էլ արխայիկ դարերում, շնորհիվ իր ռելյեֆի, ներկայացնում է զանազան կլիմայական գոտիներ, որոնք հնարավորություններ են ընձեռում զարգացնելու գյուղատնտեսական գրեթե բոլոր ճյուղերը, սկսած լեռնային մարգագետիններից (ալպիական բուսականություն) մինչև մերձարևադարձային (սուբտրոպիկ) մշակույթները: Հայկական լեռնաշխարհի հարավային մարզերի հողերը կլիմայի չորության հետևանքով առաջացող չոր հողեր են, մինչդեռ հյուսիսային շրջանների հողերը ճանաչվում են որպես խոնավ շրջանի հողեր: Բացի այդ՝ գոյություն ունեն այսպես կոչված հողային ուղղահայաց գոտիներ, ուր հողային տեսակների փոփոխությունը լեռնային շրջաններում ենթակա է նույն օրենքներին, որոնք բնորոշ են հարթավայրերի համար, միայն այն տարբերությամբ, որ հարթավայրերում հողերի տեսակները, կլիմայի համապա-

տափաստան, փոխվում են աստիճանաբար, չորությունից անցնելով խոնավի։ Այսպիսով, լեռնային մարզերում կլիմայական պայմանները երկրագործության համար տարբեր են այնչափ, որչափ տվյալ վայրը մոտիկ կամ հեռու է լեռներից։

Համաձայն այդ կլիմայական հանգամանքների փոխվում են նաև հողային տեսակները։ Կիզիչ ճառագայթների ու մթնոլորտի չորության ազդեցության տակ դաշտային հողերն ստանում են կիսաանապատային գորշ բնույթ և տալիս են աղքատ բուսականություն։ Սակայն այդ հողերը քանի մոտենում են բարձրադիր շրջաններին, որոնք ավելի հարուստ են խոնավությամբ ու օդի բարեխառնությամբ, փոխվում են, ստանալով բուսառատ հատկություններ՝ սկսած մերձարևադարձային մշակույթներից մինչև ալպիական բուսականությունը։

Այս բնական պայմաններում երկրագործությունը մեր երկրում ստանում է երկու որոշակի տիպ՝ լեռնային ու դաշտային։ Այդ երկու տիպերն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց արտադրողական ուժերով, ոչ միայն իրենց արտադրության արգասիքների տեսակներով, այլև արտադրական միջոցների կիրառումով, մշակույթի աշխատանքային ձևերով։ Եթե լեռնային տիպի երկրագործությունը, լինի դա հացահատիկային կամ բանջարա-պտղաբուծական, հիմնվում էր տվյալ վայրի սոսկ արտադրողական ուժերի վրա, որոնք, կլիմայական հողային պայմանների շնորհիվ, կարող էին առանց օժանդակ արհեստական միջոցների բավարարել մշակույթի պահանջները, ապա դաշտային երկրագործությունը, յուրահատուկ կլիմայական ու հողային պայմանների հետևանքով, ստիպված էր օժանդակ միջոցների օգնությամբ արթնացնել ու բարձրացնել արտադրողական ուժերը։

Այդ միջոցների մեջ առաջնակարգ տեղ է բռնում արհեստական ոռոգումը, որ ահագին նշանակություն է ունենում Հայկական լեռնաշխարհի տափաստաններում թե՛ արխայիկ հնում և թե՛ ներկայումս։ Այդ նշանակությունը մեծապես արտահայտվել է այն ջրանցքային սիստեմում, որի նշանները գտնում ենք ամենավաղ նախահայկական դարերում։ Դա զարգացած ջրանցքային շինարարություն է եղել, որի թողորդները մեզ հասել են կամ մինչև այժմ էլ գործող ջրային առուներով ու ամբարներով և կամ ավերված ու ոչնչացված դրության հետքերով։

Այդ տեսակետից հարուստ է եղել խալդական կուլտուրան, որը ջրանցքաշինարարության մեծ գործունեության է արժանացել իր պատմության ընթացքում։ Խալդական սեպագիր հուշարձանները հիշատակում են այդպիսի մի շարք ջրանցքների մասին, որոնք կյանք են տվել Վասպուրականի, Արարատյան և այլ դաշտավայրերին, կենարար ջուրը հանելով անմատչելի թվացող տեղերից ու հասցնելով դեպի երկրագործ-մշակը։



Զվարթնոցի սեպաձև արձանագրության մեջ խալդական Ռուսա II Թագավորը (680—646), Արգիշտիի որդին, պատմում է, որ ինքը, նվաճելով Կուրիարլինի երկիրը, Իլդարու գետից ջրանցք է կառուցել, տնկել այգի ու շինել քաղաք։ Իլդարու գետը, ամենայն հավանականությամբ, լինելու էր այժմյան Զանգուն (Հրազդանը)։ Հիրավի, Զանգուի աջակողմյան սեպ ժայռերից, բազալտե ժայռերի մեջ փորված են երկու փապուղի (առուներ), որոնցից սկիզբ առնող ջրանցքները ոռոգում են—վերինը՝ Երևանի այգիները (Դալմա), իսկ ներքևինն սկսվում է Երևանի այժմյան կամրջից մոտ 2,5 վերստ ցած, 110 սաժեն երկարությամբ փապուղով, և ոռոգում է Երևանի ու Վաղարշապատի միջև ընկած հողերը[145]։

Նմանապես խալդական շինարարության են պատկանում Արաքս գետից հանած ջրանցքները՝ այժմյան Սարդարաբադի դաշտը ոռոգելու համար, ինչպես վկայում է դեպի այդ դաշտը տանող մեծ ջրանցքի սկզբում ժայռի վրա քանդակված սեպագրությունը։ Նույնպիսի ջրանցքների հետքեր են նկատվում նաև Հին Արմավիրի և Դաշբուրունի մոտ գտնված ավերակ քաղաքների շրջակայքում, որտեղ ջրանցքները, անտարակույս, կառուցվել են խալդերի ձեռքով, երբ սրանք նվաճել են այս երկրները։

Ջրանցքաշինարարությունն ավելի մեծ չափերով երևան է գալիս բուն խալդական երկրում, Վասպուրականում ու շրջակա մարզերում։ Այդ բազմաթիվ ջրանցքներից մի քանիսը գոյություն ունեն մինչև այսօր էլ և շուրջ 2500 տարի շարունակ ոռոգում են մշակույթային հողերը։ Այդպիսի նշանավոր ջրանցքներից է Վանի Շամիրամ-առու կոչվածը, որ իսկապես շինել է, ինչպես ցույց են տալիս սեպագիր հուշարձանները, խալդական Մենուա թագավորը (810—778)։ Այս ջրանցքը 70 կիլոմետր երկարություն ունի և սկսվում է Հայոց Ձորում, այստեղ գտնվող այժմյան քրդաբնակ Վերին Մեժինկերտ գյուղի մոտ բղխող հորդ աղբյուրից։ Ահա ինչպես է նկարագրում այդ ջրանցքը Վ. Բելքը, որ հետազոտել է այն, անցնելով նրա ամբողջ երկարությունն

սկզբից մինչև վերջը։ «Շամիրամ-սու» հորջորջվող արհեստական ջրանցք է, որ բղխում է Վանի լճի հարավ-արևելյան կողմը Հայոց Ձորի հարավային սահմանը կազմող բարձրաբերձ ժայռոտ լեռան ստորոտից և, անցնելով Վերին Մեծինկերտ գյուղի միջով ու Խոշաբ գետի վրայով, մի քանի գյուղեր ոռոգելուց հետո, Վան քաղաքից մի փոքր ներքև թափվում է համանուն լիճը։ Ջրանցքի ակունքը հոկտեմբեր ամսին, այսինքն ամենաչոր ժամանակը, մի վայրկյանում տալիս է ոչ պակաս 1500 լիտր ջուր։ Այդ ջուրը, որ մեծ չափով ածխաթթու գազ է պարունակում, դուրս է ժայթքում ժայռերի ճեղքվածքներից ու մեծ շառաչյունով օրընթաց նետվում է ժայռոտ գետնի վրա։ Սկզբներում նա թափվելիս է եղել ուղղակի Խոշաբ գետը, որ հոսում է այդ ակունքից 5 կիլոմետր հեռավորության վրա։ Հետագայում արդեն հանրային օգտի համար կառուցվեց ջրանցքը, ակունքներից ջուրն ուղղելով դեպի Վերին Մեծինկերտ, ուր մեծ ավազան շինվեց ջուրը կուտակելու համար։ Այստեղ, ըստ հին ավանդության, եղել է երբեմն մի մեծ քաղաք։ Վերին Մեծինկերտից, ջրանցքի հատակը բարձրացնելով, ջուրը տարվել էր Ներքին Մեծինկերտ. այստեղից էլ հսկա ծառերի հաստ բներից շինված հաղթ խողովակով Խոշաբ գետի վրայով անց է կացված մյուս կողմը։ Խոշաբի մյուս եզրից այն կողմը ջրանցքն ընթանում է ցից ժայռերով ու լեռան ստորոտով դեպի արևմուտք, ոռոգելով մի շարք գյուղերի հողեր մինչև Արտամետ... Արտամետի ետևը Ծըվստան գյուղից ջրանցքը շրջվում է դեպի հյուսիս ու հոսում է Վան քաղաքի հարավային կողմում տարածվող դաշտերի վրայով, ուր հավանորեն հին ժամանակները Վանի հռչակավոր բուրաստաններն ու այգիներն էին գտնվում, բայց ներկայումս մեծ մասամբ խոպան ու անմշակ երկիր է։ Ասացինք, որ ջրանցքի ակունքը Վան քաղաքից 70 կիլոմետր հեռու է, բայց ջրանցքի երկարությունը, նրա կորությունները հաշվելով, 80 կիլոմետր կլինի։ Ջրանցքը Խոշաբ գետի վրայով անցնելուց հետո մինչև Ս. Վարդան գյուղը իր շինության համար մեծ դժվարություններ չի ունեցել, քանի որ մեծ մասամբ անցնում է կակուղ գետնով։ Սակայն Ս. Վարդանից մինչև Արտամետ, ուր գետինն ապառաժոտ է ու խոր վիհերով ճեղքված, հարկադրված են եղել գետնի մակերեսից մինչև վեր 10—15 մետր բարձրությամբ կիկլոպյան պատեր կառուցել, մեծ ու փոքր ժայռերի բեկորներն անշաղախ իրար վրա շարելով, և ապա ջուրը դրանց վրա անցկացնել։ Այդ պատերը տակավին այսօր էլ կանգուն են։ Այս ջրանցքի մասերը, ամբողջ երկարությամբ, զանազան տեղերում, գլխավորապես այնտեղ, ուր կառուցողական դժվարություններ են հանդիպել, ժայռերի վրա սեպաձև արձանագրություններ են քանդակված, կառուցող թագավոր Մենուայի անունը հիշատակելով[146]։



Այդպիսի մի մեծ ջրանցք, դարձյալ Վանում, կառուցել է Ռուսա I (733—714 թ.թ.) թագավորը։ Վան քաղաքի մերձակա Տոնի գյուղի մոտ, այդ թագավորի թողած մի արձանագրությունից (Քեշիշ-գյոլ կոչված լճակի մոտ, որ իսկապես այդ ջրանցքի համար եղել է արհեստական մի մեծ ջրամբար) երևում է, որ հիշյալ ջրանցքը կառուցվել է Թուշպա (Տոսպ-Վան) քաղաքի և շրջակա այգիներն ու հողերը ոռոգելու նպատակով[147]։

Ուրարտական այլ արձանագրությունները վկայում են ջրանցքաշինարարության մասին նաև Մալազկերտի կողմերում։

Նմանապես հնագույն ջրանցքների հետքեր են նկատվում Նոր-Բայազետի գավառում, որը բրոնզեդարյան շրջանում բերդերի ու քաղաքատեղիների խիտ ցանցով էր ծածկված և շեն էր ավար ու հարուստ բնակչությամբ, ինչպես կարելի է եզրակացնել արխայիկ բազմաթիվ դամբաններից, մի բնակչություն, որի գլխավոր զբաղմունքը եղել է երկրագործությունն ու անասնապահությունը։

Ոռոգման մի այլ սիստեմ է ստորերկրյա ջրերի օգտագործումը գետնափոր փապուղիների ու անցքերի միջոցով, որ մինչև այսօր էլ մեզանում գործադրվում է «քյահրիզների» ցանցով։ Ահա այդ սիստեմը, ինչպես վկայում են Վանի և հին Հայաստանի այլ տեղերի քյահրիզները, մեծ չափերով ծաղկել է շնորհիվ խալդական շինարարության, ինչպես ապացուցում են Կ. Լեման-Հաուպտը և Վ. Բելքը։ Պրոֆ. Լեման-Հաուպտի կարծիքով՝ ջրանցքային ոռոգման այդ սիստեմը հին Հայաստանից էլ անցել է հին Պարսկաստան՝ Ատրպատականի հյուսիսային մասը, մինչև խալդական տիրապետության օրերին։ Պրոֆ. Լեման-Հաուպտի ենթադրությամբ՝ ոռոգման այդ ձևը գոյություն է ունեցել Վասպուրականում դեռևս խալդերից առաջ եղած նախաբնիկների մեջ, որոնցից յուրացրել և ավելի մեծ զարկ են տվել ու զարգացրել խալդերը (LHA, II, 111—115, 319)։

Այդ հնագույն դարերի երկրագործության, հատկապես հացահատիկային մշակույթի զարգացմանը վերաբերող փաստերից մեկն էլ այն ջրաղացներն են, որոնց մնացորդները դեռ այսօր էլ

կարելի է տեսնել Եփրատի ու Տիգրիսի հովիտներում, երբ այնտեղ ծաղկում էր ուրարտական կուլտուրան։ Բավական է միայն ուշադրության առնել Հասանքեֆ հինավուրց ժայռաբնակ քաղաքի մեջ երբեմնի գործող 17 ջրաղացների սիստեմը, որպեսզի մեզ պատկերացնենք երկրագործության հետ աղերս ունեցող այդ ձեռնարկությունների նշանակությունը։ Այդ ջրաղացները, ինչպես ասում է Կ. Լեման-Հաուպտը, գործողության մեջ էին դրվում տուրբինյան սկզբունքին նմանվող եղանակով, որ առավելին բնորոշ էր խալդական ժամանակաշրջանի համար։ «Տասնյոթն այդպիսի ջրաղացներ, միմյանցից բավական հեռավորության վրա, այժմյան քաղաքի արևելյան կողմը՝ հարավից գետի վրա տարածվող ժայռադանդվածների մեջ են փորված։ Նրանք իրար հետ միացած են մեծ մասամբ ստորերկրյա, նեղ ու խորունկ ժայռային ջրանցքներով։ Վերին ջրաղացներն ընկած են հեռու քաղաքամերձ վայրի, իսկ ստորինները դեպի գետը նայող ժայռապատի ուղղությամբ։ Աստիճանաձև շինված ջրանցքային հունը հնարավորություն է ընձեռում, որպեսզի բոլոր ջրաղացները կարողանան շարժման մեջ լինել միևնույն ջրահոսանքով, որ բխում է հեռվում, բավականաչափ բարձր առաջին ջրաղացից։ Այդ ամբողջ ջրանցքային կառույցը, հատկապես ջրաղացների համար, ընդգրկում է մի ահագին տարածություն» (LHA, I, 376—377)։

Այդ տուրբինային սիստեմը, ինչպես հայտնի է, գրեթե նույնությամբ պահպանվել է մինչև մեր օրերը Հայաստանի գյուղական վայրերի ջրաղացների մեջ։

II

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը Հայկական լեռնաշխարհի ժողովրդական տնտեսության մեջ գրավում էր երկրագործության հետ եթե ոչ համահավասար, գեթ նրանից հետո առաջնակարգ նշանակություն ունեցող տեղ։ Երկրի տեղագրական ու կլիմայական պայմաններն այդ կողմից մեծ առավելություններ էին ներկայացնում։ Լեռնային մարգագետնային-ալպիական գոտիները հնարավորություն էին տալիս ամառվա կիզիչ տաքությունից չորացած տափաստան-դաշտավայրերից դեպի այդ լեռների լանջերը քշած անասուններին մշտադալար կեր մատակարարել (արոտ, յայլաղ), իսկ ստորին հովիտներն ու բարձրաբերձ լեռներով պաշտպանված



դաշտերը ձմեռվա ամիսներին անասուններին ընձեռում էին արածելու հնարավորություններ (ղոմեր, ղըշլաղներ)։

Բնական պայմաններում անասնապահության վերաբերյալ կիրառվող այդ ձևերը Հայկական լեռնաշխարհում պահպանվել են մինչև մեր օրերը։ Անասնապահությունը ժողովրդական տնտեսության բնական ձևերում ահագին նշանակություն էր ստանում մի կողմից՝ մատակարարելով մսից ու կաթից պատրաստված կենսական մթերքներ, կաշուց, բրդից և ոսկրներից պատրաստված պարագաներ՝ կենցաղային կարիքներին բավարարելու համար, իսկ մյուս կողմից՝ բուծելով թե երկրագործության և թե տրանսպորտի համար այնքան կարևոր կենդանական քաշող ուժ։

Հայկական լեռնաշխարհի հին ժողովրդական տնտեսության մեջ անասնապահության ունեցած կարևոր դերի մասին գտնում ենք բավականաչափ ապացույցներ։

Վաղագույն մետաղե դարերի դամբաններում հայտաբերվել են զանազան տեսակի տնային կենդանիների (կով, եզ, ոչխար, խոզ, այծ և այլն) կմախքներ ու բազմաքանակ ոսկրներ. այդ կենդանիները թաղված են եղել մեռյալների հետ միասին, որպես նրանց պատկանելի ապրանք՝ «մյուս աշխարհը» տանելու համար։

Հայկական լեռնաշխարհում հայտաբերվող պիկտոգրաֆիկ նշանագրերի մեջ գերիշխող «իծագիրը», նմանապես այծի կամ համանման կենդանական բրոնզե ֆիգուրները, որոնք սովորական զարդարանքներն էին, խիստ բնորոշ երևույթներ են, և վկայում են այն մասին, թե ինչպես տեղական ժողովրդի արտադրական տնտեսական գործունեությունը բեկվել է նրա մտահայացքներում, այդ հանգամանքն ապացուցում է, որ անասնապահությունը, մասնավորապես այծաբուծությունը, նշանավոր տեղ էր գրավում նրա տնտեսության մեջ։

Քսենոֆոնը նկարագրում է հայերին ոչ միայն որպես երկրագործ, այլև որպես անասնապահությամբ զբաղվող ժողովուրդ։ Քսենոֆոնն ի միջի այլոց պատմում է, թե ինչպես Պարսկաստանից նահանջող հույն զինվորները Հայաստանի գյուղերում հանգիստ առնելիս՝ հյուրասիրվում էին. «Ճաշի սեղանին միանգամից մատուցում էին ոչխարի, այծի, խոճկորի, հորթի և հավի միս մեծաքանակ ցորենի ու գարու հացի հետ միասին»։ Նույն Քսենոֆոնն ավանդում է, որ հայերն իրենց անասնապահության համար նեղված էին լեռնային արոտատեղերի պակասությունից, որոնք գտնվում էին լեռները քաշված խալդերի ձեռքին։ Մի այլ հույն

պատմագիր՝ Հերոդոտը (484—425 թ. ն. ք. մեր թվականութ.) վկայում է, որ հայերը հարուստ էին անասուններով և այդ պատճառով նրանց անվանում է πολυπρόβατοι—անասունների հարուստ հոտեր ունեցողներ[149]։

Ըստ սեպագիր արձանագրությունների՝ Հայկական լեռնաշխարհը նվաճած ասուր-բաբելացիներին, և ապա հետագայում հին հայերը Պարսկաստանին՝ երկրագործական արգասիքներից բացի, հարկեր ու տուրքեր էին հատուցում նաև մեծաքանակ գանազան տեսակի անասուններով։

Ասորեստանյան թագավորների դեպի Հայկական լեռնաշխարհը կատարած արշավանքները սովորաբար վերջանում էին հարուստ ավարառություններով, որոնք բաղկանում էին հազարավոր գլուխ ձիերից, ջորիներից, էշերից, եզներից, արջառներից ու տասնյակ հազարավոր մանր եղջերավոր անասուններից։ Ասորեստանյան Սարգոն II թագավորն իր արշավանքի ժամանակ Մուսասիր երկրից ավար էր վերցրել—100.255 գլուխ ոչխար, 920 էշ, 690 ջորի և այլն։

Խալդական թագավոր Արգիշտի Ա (778—750) դեպի Նայիրիի երկրները կատարած մի շարք արշավանքներում վերցրել էր ահագին ավար—582.874 գլուխ ոչխար, 125.543 եզ, 10.607 ձի, 346 ուղտ։ Սրանց հետ միասին գերվել էին 79.936 տղամարդ և 52.381 կին, ընդամենը 132,317 հոգի[150]։ Եթե թույլ տանք մեզ կողմից, թերևս բռնազբոսիկ, համեմատության փորձ անել, հաշվի առնելով այդ գերիների քանակի կեսը, իբրև տնտեսության տերեր, կտեսնենք, որ յուրաքանչյուրին ընկնում է 9 գլուխ ոչխար և 2 եզ, մի հարաբերական թիվ, որ կարող էր մոտավոր գաղափար տալ 8-րդ դարի (նախքան մեր թվականութ.) անասնապահության քանակական վիճակի մասին։

Նույնն ենք տեսնում հարկերի և տուրքերի վերաբերմամբ։ Հայկական լեռնաշխարհի Նայիրի երկիրը Սարգոնին (8-րդ դար ն. ք. մեր թվակ.) և ընդհանրապես, հաղթական Ասորեստանին վճարում էր տարեկան տուրք, որի մեջ, բացի երկրագործական արգասիքներից ու մետաղներից՝ կային 2000 եզ և 1200 ձի։

Քսենոփոնի վկայությամբ, Արևմտյան Հայաստանը պարսկական թագավորին (5-րդ դար նախքան մեր թվականութ.) տալիս էր տարեկան տուրք, ի միջի այլոց, նաև 20.000 ձի (V, 34)։ Այնուհետև Քսենոփոնը բնութագրում է Հայաստանի ձիերը, որոնք ավելի փոքր են պարսկականի հետ համեմատած, սակայն ավելի



կայտառ են (V, 36)։ Հույն հին պատմագիր Ստրաբոնի (63 թ. նախքան մեր թվականութ.— 23 թ. մեր թվականութ.) վկայությամբ՝ հին Հայաստանում կային հիանալի արոտավայրեր՝ հատկապես ձիերի համար։

Վերոհիշյալ տվյալներից պետք է եզրակացնել, որ անասնապահության մեջ առանձնակի տեղ էր բռնում ձիաբուծությունը։ Սա գյուղատնտեսական-արտադրական մի ճյուղ էր, որ մեծ չափերով զարգացած է եղել ամենահին դարերից սկսած և զարգանում էր տակավին հետագա պատմական Հայաստանում, որտեղի ձիերը մեծ հռչակ ունեին հին պատմական աշխարհում։

Թե ինչ նշանակություն ուներ ձին Փոքր-Ասիայում և Հայկական լեռնաշխարհում, այդ մասին բացահայտորեն վկայում է Բողազքյոյի պեղումներից հայտնաբերված հաթական թագավորական պալատական մի կավագիր, հատկապես ձիաբուծությանը նվիրված մեծ շարադրություն, որի հեղինակն է Միթաննիի երկրից Կիկկուլի անունով մեկը (EMGA, II, 35)։

Այն հանգամանքը, որ ձիու կմախքները և ձիու սարքերի մասերն ու զարդարանքները գտնվել են սկսած միայն բրոնզե դարերի դամբարաններում, հիմք է տալիս գիտնականներին ենթադրելու, որ այդ կենդանին իր ընտանեցված բնույթով երևան է եկել պղնձեդարյան կամ, ավելի ճիշտ, բրոնզեդարյան ժամանակաշրջանում։ Հիրավի, Հայկական լեռնաշխարհում էլ ձիու կմախքներ ու ատամներ, ձիու սարքավորման մնացորդ մասեր և, վերջապես, ձիու կերպարվեստային վերարտադրումներ հանդիպում են բրոնզեդարյան կուլտուրայում, ինչպես օրինակ՝ Նոր-Բայազետի, Լոռու և այլ պեղումներից։ Մենք այստեղ քննության չենք առնում այն հարցը, թե ինչ կենդանական տեսակներից, ինչ ճանապարհով և ինչ սոցիալ-տնտեսական պայմաններում է առաջացել ընտանի ձին—այդ հարցը տակավին մնում է մութ ու անլուծելի։ Միայն բավականանանք նշելով, որ, մի շարք գիտնականների կարծիքով՝ ազնիվ ձին (equus domesticus, eguus caballus) գոյացել է տափաստանյան վայրենի ձիանման մի քանի տեսակներից, այն է՝ կիանգի և քուլան-ից (equus hemionus), նմանապես Մոնղոլիայում վերջերս ռուս ճանապարհորդ Պրժևալսկու հայտնաբերած վայրի ձիուց (equus Przewalskii), որ նույնպես պատկանում է քուլանի ցեղին։ Ասորեստանյան հուշարձաններում նկարած ընտանի ձիերը խիստ նման են այս վերջինին, ինչպես և ներկայումս մոնղոլների մեջ օգտագործվող ընտանի ձիերին։

Համենայն դեպս պետք է ենթադրել, որ ձին ծագել է Կենտրոնական Ասիայում։

Փոքր-Ասիայում և ապա Առաջավոր Ասիայում նա երևացել է արիական ժողովուրդների ներգաղթի հետ, որոնք մոտավորապես 1600 թվականներից (Նախքան մեր թվականութ.) հաստատվել են Միջագետքում և Սիրիայում։ Ահա այդ արիացիներին հատուկ է եղել ձին։ Բազմաթիվ արիական անձնական անուններ, որոնք վերջավորվում են asva=ձի՝ վանկով, ցույց են տալիս, թե ինչ սերտ առնչություն են ունեցել նրանք այդ կենդանու հետ։ Այդ ժամանակները ձին ծառայում էր ոչ թե հեծնելու, այլ կառքեր քաշելու համար, որոնցով արիները արագությամբ անցնում էին իրենց երկարատև գաղթաշարժի ճանապարհները կամ կատարում ռազմական արշավանքները։ Մինչ այդ, ինչպես երևում է քարաքանդակ նկարներից, սումեր-բաբելական տաճարանում արագընթաց կառքերի համար օգտագործվում էր էշը։ Ահա թե ինչու Միջագետքում ձին կոչվում էր sisû—«լեռնային երկրի էշ», որ գալիս էր փոխարինելու «դաշտային էշին» (EMGA, I, 651)։

Այսպիսով՝ Փոքր ու Առաջավոր Ասիայում, ձին որոշ հեղաշրջում է առաջացնում ռազմական արվեստի մեջ, ծառայելով որպես լծկան ռազմակառքերի համար, որոնք վճռական դեր էին խաղում մարտական հարձակումների ժամանակ, ինչպես այսօր զրահապատ ավտոներն ու տանկերը։

Սկսած 1600 թ. (մ. թ. ա.) սումեր-բաբելական, եգիպտական որմնանկարների մեջ կերպարվում էին բազմաթիվ երկանիվ ռազմակառքեր, երկու ձի լծված։ Այդ կառքերը, ինչպես վկայում են քարաքանդակ նկարներն ու սեպագիր հուշարձանները, ռազմադաշտում իրենց արընթաց խոյացումով ու արագ հարձակումով հանկարծակիի էին բերում և շփոթ առաջացնում հետիոտն զորքերի շարքերում, նրանց տրորելով ձիերի սմբակների ու կառախմբերի անիվների տակ։

Միայն հարյուրավոր տարիներ անցնելուց հետո ձին սկսում են օգտագործել հեծնելու նպատակով և ապա ռազմական շարքերում հեծելազորով կռվելու համար։ Բացի այդ՝ ձին, իբրև արագավազ ու կայտառ կենդանի, մեծ չափերով սկսեցին օգտագործել մրցարշավների մեջ, որոնք կատարվում էին ռազմակառքերով և ապա, երբ սովորական դարձավ հեծնելու ձևը, նաև ձիարշավներով, որոնք հին դարերի տիրապետող դասակարգերի սիրելի ու ժամանցների սիրելի ձևերն էին։ Իսկ ընդհանրապես սընտեսության մեջ, մանավանդ երկրագործական աշխատանքներում ձին գրեթե ոչ մի դեր չէր խաղում, ըստ հնում այդ դերը վերապահելով եզանն ու կովին։



Փոքր ու Առաջավոր Ասիայի բնիկների մեջ ձիու երևալը բնորոշ ցուցանիշ է կենցաղային այն փոփոխությունների, որ տեղի էին ունենում նախկին համայնա-տոհմային հասարակության քայքայման և ֆեոդալական կարգի առաջացման հետևանքով։ Ձին հանդիսանում էր տիրապետող ֆեոդալ իշխանների, նվաճող դասակարգի անբաժանելի պատկանելիքը, որ այնպես արդյունավետ ծառայում էր նրա ռազմա-նվաճողական նպատակներին, որ այնպես անհրաժեշտ էր նվաճված ու ստրկացված մասսայից բարձր կանգնելու և նրան տիրապետելու իր դիրքին։ Ձին համարվում էր «ազնիվ» կենդանի, որ աշխատելու, բանելու չէր, ինչպես եզը, որը համանիշ էր ստրկին, ստորադաս գյուղացուն, շինականին, այլ վերապահվում էր պատկանելու միայն «ազնվականներին», այսինքն ազատանիին, ֆեոդալներին, իշխաններին[151]։ Նույնիսկ հին պատմական դարերում հեծելազորը, ինչպես օրինակ, Հունաստանում, Հռոմում, Հայաստանում և այլն, բաղկացած էր բացառապես արտոնյալ, ազնվական դասին պատկանող ձիավորներից, բայց ոչ երբեք «ստորադաս» հասարակական խավերից[152]։ Ձիերը թաղվում էին միայն իշխանների հետ՝ դամբարաններում։ Միայն ձին էր, որ բոլոր ընտանի կենդանիների մեջ արժանանում էր դարպասանքների և ըստ կարելվույն ճոխ և հարուստ սարքի, որով չափվում էր նրա տեր իշխանի դիրքն ու հարստությունը։ Այդպես են ներկայացվել ձիերը հնագույն կերպարվեստի մեջ, որի մի քանի օրինակները քանդակներով կամ արձանիկներով հայտաբերվել են հնագիտական պեղումներում։

Ահա ձիու այդ սոցիալ-տնտեսական նշանակությունն է, որ ձիաբուծությանը տալիս է առանձնահատուկ բնույթ և մեծ ուշադրության առարկա դարձնում նվաճողական քաղաքականությամբ տարվող իշխանների ու թագավորների համար։ Զարմանալի չէ, որ ավարառումների մեջ ձին մեծ տեղ էր բռնում կամ ռազմական տուգանքների և տուրքերի մեջ առաջնագույն պահանջը տարածվում էր ձիու վրա։ Այդ ուղղությամբ էր զարգանում ձիաբուծությունն անասնապահության մեջ Հայկական լեռնաշխարհում, որը, ինչպես վերն ակնարկեցինք, իր ճոխ արոտատեղերով ու կլիմայական պայմաններով ահագին հարմարություններ էր ընձեռում այդ ճյուղի բարգավաճման համար։

Խոսելով անասնապահության մասին, բառիս իսկական առումով, այսինքն մի տնտեսական ճյուղի, որ սոցիալ-տնտեսական նշանակություն էր ներկայացնում, թույլ ենք տալիս մեզ, մի փոքր շեղվելով, մտնել ընդհանրապես ֆաունայի բնագավառը՝ այն չափով, ինչ չափով նա որոշ աղերս է ունեցել Հայկական բարձրավանդակի բնակչության կենցաղային պայմանների հետ անասնապահության ճյուղում։

Հնագույն մետաղի դարերի դամբարաններում, բացի ընտանի կենդանիների (կով, եզ, խոզ, ոչխար, ձի, այծ, շուն և այլն) և թռչունների (հավ, բադ և այլն) կմախքներից ու ոսկրներից, հաճախ են բերվել նաև վայրի կենդանիների ոսկրներ, ինչպես օրինակ՝ աղվեսի, նապաստակի, եղեղնաարջի կամ գորշուկի, կզաքիսի և այլն։ Նմանապես տեսնում ենք, որ բրոնզե իրերի, ինչպես արձանիկների ու պանդղլոկների մեջ, հին արվեստագետը կերպավորել է այծյամ, եղջերու, բադ և այլն։ Նաև բրոնզե իրերի, մանավանդ գոտիների վրա ու կավե ամանների վրա արձանագրված են նույն կենդանիների պատկերները։

Այս տվյալների հիման վրա կարելի է կռահել, որ, բացի անասնապահության միջոցով բուծվող կենդանիներից, այն ժամանակների մարդն իր տնտեսության համար անհրաժեշտ էր գտնում գործածել նաև վայրի անասուններից ստացվող նյութական բարիքներ՝ մաշկը, մորթի, կաշի, եղջյուրներ և այլն։ Այդ ամենը նա կարող էր ձեռք բերել որսորդությամբ, որը, թեև ֆեոդալ դասակարգին ծառայում էր սովորաբար իբրև զվարճանքի ու ազնվական վարժությունների ասպարեզ, սակայն պետք է ենթադրել, որ մյուս՝ ստորին դասակարգին պատկանողներն էլ պարապում էին այդ գործով իրենց կենցաղային կարիքները բավարարելու նպատակով։

Իրոք, որսորդությունը մեծ ծավալ կարող էր ունենալ Հայկական բարձրավանդակում, որի ֆաունան հարուստ էր վայրի կենդանիների ու թռչունների տեսակներով։ Որսորդության այդ նշանակությունն արտահայտվել է նաև հնագիտական գտածոների մեջ, ինչպես օրինակ՝ բրոնզե գոտիների և կավե ամանների ու բարձրաքանդակների վրա նկարված են որսորդական տեսարաններ։ Այդ նկարներից պարզվում է, որ որսորդությունը տեղի էր ունենում ոչ միայն նետ ու աղեղով և նման զենքերով, այլև բազեներով. այդ տեսակ երկու բազեի նկարներ են մեզ հասել, որոնցից մեկը սանձված բազե է ներկայացնում։



Հետաքրքիր է, որ արաբական տիրապետության օրոք (7—8-րդ դարերը մեր թվականության) նվաճված Հայաստանը, ինչպես գրում է արաբական պատմագիր Իբն-Հաուկալը, արաբական ընդհանուր հարկի մեջ, բացի դրամական ու բնեղեն վճարումներից, պարտավոր էր տալ 20 հազ. բազե, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե բազեի միջոցով որսորդությունը նախապատմական ժամանակներից ի վեր շարունակել է գոյություն ունենալ հին Հայաստանում։

## III

## Ա Ր Հ Ե Ս Տ Ն Ե Ր

Այն բոլոր հնագիտական իրեղեն տվյալները, որոնց տեսությունը տվինք նախընթաց գլուխներում, ինքնին արդեն հանդիսանում են որոշ արհեստների արտադրություններ։ Այդտեղ գոյություն ունեն մի շարք արտադրական ճյուղեր, որոնք կազմավորվել են մասնագիտացած արհեստներում և բառ այնմ էլ համապատասխան տեղ բռնել ժողովրդական տնտեսության մեջ։

Այդտեղ մենք նկատում ենք այնպիսի արհեստներ, ինչպես կավագործություն (բրուտագործություն), մետաղագործություն (հանքափորություն), դարբնություն, ձուլագործություն, հյուսնություն, ադյուսագործություն, ոսկերչություն, քարտաշություն, քարակոփություն, քանդակագործություն (թե մետաղների և թե քարերի), մանածագործություն, ջուլհակություն, փոկակարություն, կաշեգործություն, կողովագործություն և այլն։

Արհեստները գոյություն ունեին դեռևս ինքնամփոփ տնտեսությունների մեջ տոհմային համայնական ձևերում։ Այդ տնտեսությունը սովորաբար առանձնացած էր ուրիշ նույնանման տնտեսություններից, կազմում էր ինքնուրույն ամբողջություն, տնտեսական միավոր, որի անդամները համախմբված լինելով մի գերդաստանի կամ մի տոհմի մեջ, միասին էին արտադրում ու սպառում արդյունքները։ Այստեղ արհեստները բաժանված, անջատված չէին իրար առանձին տնտես-արտադրական կատեգորիաներ տիրապետող երկրագործությունից ու նրան օժանդակ անասնապահությունից։ Արհեստներն այստեղ նույնպես, ինչպես և երկրագործությունը, ծառայում էին միմիայն այդ ինքնամփոփ տնտեսության պահանջներին։ Նրանց արտադրած արդյունքները մնում էին նույն տնտեսության շրջանակներում և սպառվում էին միայն այդ տնտեսության անդամների կողմից։

Այդ արհեստների մեջ դեռևս գոյություն չուներ աշխատանքի բաժանում ըստ մասնագիտությունների, ըստ տեխնիկայի առանձնահատկությունների ու արտադրական եղանակների, այլ եթե կար աշխատանքի բաժանում, դա բացառապես միևնույն ընտանիքի ներսումն էր և հիմնված էր սեռերի ու հասակների սկզբունքի վրա։ Արհեստները, կրելով այդ դարաշրջանում ներքին, տնային բնույթ, մեծ մասամբ կենտրոնացած էին կանանց ձեռքում, որոնց վրա էին ծանրացած տնային ներքին բոլոր աշխատանքները։ Կանայք ոչ միայն վարում էին ներքին տնտեսությունը, ոչ միայն կենսամթերքներ հայթայթելու գործով էին զբաղված, այլև հանդիսանում էին նախնական կավագործները (բրուտները)՝ տնտեսության համար ամաններ պատրաստելու գործում, մանածագործները՝ թել գործելով, ջուլհակները՝ այդ մանվածքից կտավ, մահուդ և այլն գործելով, դերձակները, կաշեգործը, կողովագործները, մաշագործները և այլն, և այլն։

Տղամարդիկ պատրաստում էին իրենց զենքերը, գյուղատնտեսական դաշտային գործիքները, կատարում էին կառուցողական աշխատանքները, զենքերի ու գործիքների համար նյութեղեն էին մշակում և այլն։ Այդ բոլոր տեսակի աշխատանքները ընդամ անջատված չէին երկրագործությունից, կազմում էին նրա օժանդակ ու բաղկացուցիչ մասը և կատարվում էին միջընդմեջ՝ գյուղատնտեսական աշխատանքների հետ։

Ժամանակի ընթացքում տոհմային համայնական տնտեսությունն իր կղզիացած վիճակում այլևս չէր կարողանում բավարարել նույն տնտեսության անձուկ սահմաններում արտադրված նյութերով և ստիպված է լինում որոշ արգասիքներ ձեռք բերել ուրիշ տնտեսություններից։ Այդպիսով՝ համայնական տնտեսությունների միջև զարգանում են մշտական տնտեսական կապեր։ Այս պայմաններում որոշ համայնական տնտեսություններ կամ այդ տնտեսությունների առանձին անդամներ սկսում են պատրաստել ուրիշ տնտեսությունների պահանջները բավարարելու համար համապատասխան արգասիքներ։ Սրանք արդեն այդ աշխատանքով սպասարկում են համայնքի մյուս տնտեսություններին, ստանալով վերջիններից, փոխանակական եղանակով, իրենց անհրաժեշտ նյութերը։

Այս հարաբերությունների միջավայրում առաջանում է արդեն աշխատանքի բաժանում ոչ միայն առանձին տնտեսության ներսում, այլև համայնքի բաղկացուցիչ տնտեսությունների միջև։ Աշխատանքի այդ բաժանումն ավելի ևս մեծ զարկ է ստանում, երբ ասպարեզ է գալիս մետաղի գործածությունը։ Մետաղը հնարավորություն տվեց պատրաստել զենքեր ու գործիքներ, որոնք անչափ բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը տնտեսության բոլոր ճյուղերում։ Արհեստների ճյուղավորման հետևանքով սպառման առարկաները բազմապատկվում և դառնում են բազմազան։

Արհեստները պահանջում են որոշ մասնագիտություն, հատուկ ճարտարություն և փորձառություն, որոնք ձեռք են բերվում երկարամյա վարժությամբ։ Այսպիսով առաջ էին գալիս զանազան մասնագիտական ճյուղերի արհեստավորներ, որոնք, եթե սկզբնական շրջանում որոշ չափով կապված էին երկրագործական տնտեսության հետ, ապա հետագայում միանգամայն խզվելով նրանից, դառնում են անկախ արհեստագործական արտադրողներ։ Կատարվում է, ինչպես Ֆ. Էնգելսն է ասում, աշխատանքի երկրորդ մեծ բաժանումը. արհեստը բաժանվում է երկրագործությունից[153]։ Երկրագործության ու արհեստի միջև գոյացող՝ աշխատանքի բաժանումն այնուհետև ավելի ևս խորանում է, որով միշտ աճում են անմիջական փոխանակման համար արտադրված արդյունքները, և դրա հետ միասին փոխանակումն առանձին արտադրողների միջև դառնում է հասարակության համար կենսական անհրաժեշտություն[154]։ Սկսում են մեծ թափով զարգանալ արհեստները և ընդ նմին զարգանում է արտադրության տեխնիկան։

Արհեստների այդ տրոհման պրոցեսը, որ սկսվել էր նախավերջին տոհմային հասարակական ձևերում, ավելի մեծ թափ է ստանում և նրա մեկուսացումն ու կենտրոնացումը, իբրև անկախ և երկրագործությունից միանգամայն անջատ արտադրական ձև, բյուրեղանում է գլխավորապես այն դարաշրջանում, երբ տոհմային հասարակական հարաբերությունները հեղաշրջվում են և նրանց տեղը բռնում է ֆեոդալական հասարակակարգի շենքը։ Այս նոր հասարակական ձևերում, երբ զարգանում է խոշոր կալվածատիրությունը և դրա հետ տնտեսականորեն ու իրավաբանորեն կապվում են գյուղացիական զանգվածները իրենց կախյալ դրությամբ, տնտեսության կազմակերպության կենտրոնը դառնում է ֆեոդալական կալվածքը, իշխանական, տերունական տունը։ Այստեղ էլ արհեստները կենտրոնանում են ֆեոդալական

կալվածքի շուրջը, ստանում են կալվածատիրական տնտեսության համապատասխան բնույթ, որ գալիս է բավարարելու ոչ այնքան գյուղացիական տնտեսության պահանջներին, որքան այն սոցիալական խավերին, որոնք կազմում էն ֆեոդալական ձևավորման հիմքերը. որոնք այն արտոնյալ դասերն էին — ինչպես իշխանական ու ազնվական բազմանդամ տոհմերը, զինվորականությունը, հոգևորականությունը — որոնք ոչինչ չէին արտադրում, այլ իրենց գոյությունը պահպանում էին, երկրագործների ու արհեստավորների արտադրությունը շահագործելով միայն։ Այստեղ է, որ արհեստները դառնում են «հասարակական անհրաժեշտություն» և ավելորդ դասակարգի հոգատարության առարկա այն իմաստով, որ, նպաստելով արհեստների զարգացմանը, տիրապետող դասակարգերն ամրացնում և ընդլայնում էին շահագործման եղանակները և իրենց նյութական արդյունքների կուտակման պրոցեսը։ Հետևապես արհեստները ամփոփվում են այն վայրերում, ուր նրանք անմիջական սպառում էին գտնում։ Դրանք այն իշխանական ամրոցներն էին, ուր կուտակված էր զինվորականությունը, այն քաղաքներն էին, ուր կենտրոնանում էին վարչական-պետական մարմիններն ու ծաղկում շուկաները, վերջապես այն հարուստ կալվածատեր վանքերն էին, որոնք ընկած էին հաղորդակցության բանուկ ճանապարհների վրա։

Այս արհեստների զարգացման այդ շրջանն է մեզ մասավորապես պատկերանում Հայկական լեռնաշխարհում վաղագույն մետաղի դարերում։

Ավելորդ ենք համարում այստեղ երկար կանգ առնել վաղագույն մետաղի դարերում գոյություն ունեցող արհեստներից յուրաքանչյուրի նկարագրության վրա, քանի որ այդ արհեստներից բղխած արտադրանքների մասին հանգամանորեն խոսվել է նախընթաց էջերում։ Սակայն արժեր ուշադրության առնել մի քանի արհեստների էական գծերը, որոնք բնորոշ են Հայկական լեռնաշխարհի նյութական կուլտուրայի տեսակետից։

Ամենահին արհեստը պետք է համարել, անշուշտ, կերամիկան — կավագործությունը, որ սկիզբ է առել նեոլիթյան դարերում։ Սա վաղագույն մետաղի դարերում դառնում է ամենատարածված ու կատարելագործված արհեստներից մեկը։ Կավագործությունն իր նախնական ստադիաններում գտնվում էր կանանց ձեռքում, որոնք պատրաստում էին ամաններ՝ հատկապես իրենց



տնտեսության համար։ Բայց երբ արհեստն անջատվեց տնտեսությունից և առաջացավ նրա մասնագիտացումը, այն ժամանակ կավագործությունը, ինչպես և այլ մի շարք արհեստներ դարձան տղամարդկանց գործ, որոնք իրենց աշխատանքով հանդես էին գալիս տնային տնտեսությունից միանգամայն անջատ և սպասարկում էին հասարակական տևական զարգացող պահանջներին։ Աշխատանքի այս մասնագիտացումը և առանձնահատուկ բնույթը խթան են հանդիսանում այդ արհեստի զարգացմանը թե՛ արտադրանքների բազմազանության, թե՛ տեխնիկայի կատարելագործման և թե՛ արվեստի նրբության տեսակետից։ Հատկություններ, որոնք այնպես ցայտուն արտահայտված են պեղված կավե ամաններում։

Կավագործական արհեստի մասնագիտացումն սկսվում է այն ժամանակից, երբ հնարվում է դուրգը (բրուտական չարխը), որ շարժվում էր կենտրոնաձիգ ուժի շնորհիվ, այսինքն, երբ հնարավորություն է ստացվում բրուտական դրդին տալ այնպիսի հատկություն, որ նա մեքենայորեն պտտվում է արհեստագործի ոտների շարժումով և ազատ է թողնում բրուտի ձեռքերը կավե նյութը ձևելու և կերտելու համար։ Արհեստն այստեղ արդեն դուրս է գալիս իր նախկին դիպվածական վիճակից, երբ ամանները պատրաստում էին այն ժամանակ միայն, երբ տնային տնտեսության մեջ զգացվում էր նրա կարիքը։ Դուրգը, ընդհակառակը, դառնալով արտադրության միջոց, և իբրև արհեստագործական մեքենա, որը պահանջում էր հմտություն ու մասնագիտական շնորհ, արդեն ծառայում է շուկայի պահանջներին, այսինքն փոխանակական կամ առևտրական նպատակներին։ Դուրգը հիմք է դնում կավագործական հատուկ արհեստանոցների գոյությանը, որով կերամիկական ամաններ պատրաստելը դառնում է յուրահատուկ արտադրական ճյուղ և մտնում է ինքնուրույն արհեստների շարքը, ունենալով իր սոցիալական հետևանքները։

Այնուհետև գալիս է մետաղագործությունը, որ ծնունդ է առնում մետաղների գյուտով և նրանց մշակման մասնագիտական բնույթի շնորհիվ։ Մետաղագործությունն իբրև արդյունագործության կարևոր մի ճյուղ՝ ավելի մեծ նշանակություն է ստանում և հարգ է ունենում Հայկական լեռնաշխարհում, որն այնքան հարուստ է եղել բազմապիսի մետաղներով։ Նախ՝ զուտ պղինձը, ապա բրոնզը, որն ստացվում էր պղնձի ու անագի խառնուրդից, առաջացնում են միաժամանակ դարբնության և ձուլագործու-

թյան արհեստները։ Մենք տեսնում ենք պեղված բրոնզե իրերի մեջ, թե մետաղագործության այդ ճյուղն ինչ մեծ զարգացման ու ծաղկման է հասնում, արտադրելով այնքան բազմատեսակ կենցաղային ու ռազմական իրեր, որոնք աչքի են ընկնում ոչ միայն իրենց տեսակների քանակով, այլև արվեստի ճոխությամբ։ Ասորեստանյան արձանագրությունները հաճախ հիշատակում են Հայաստանից տարած ավարի մեջ մեծաքանակ մետաղե իրեր, գլխավորապես պղնձե անոթներ։

Անտարակույս, պղնձի ու բրոնզի մետաղագործությունն առաջին նշանակություն ուներ երկրի տնտեսական կյանքում, ուստի այդ ճյուղի արհեստները շատ էին գնահատվում և իշխող թագավորների ու ֆեոդալների հովանավորության առարկա էին դառնում, որպես եկամտի հարուստ աղբյուր։ Օրինակ՝ Աշշիի (պատմական Հայաստանի Աղձնիքը) թագավորն իրեն էր վերապահել բրոնզի մենավաճառը և այդ ճյուղին պատկանող արհեստավորներին առանց իր թույլտվության չէր թողնում հեռանալ իր թագավորության սահմաններից (էջ 7)։

Ավելի մեծ նշանակություն է ստանում մետաղագործությունը, երբ ասպարեզ է գալիս երկաթը, մի մետաղ, որ պղնձի ու բրոնզի համեմատությամբ ավելի բարդ ու դժվար աշխատանք է պահանջում։ Երկաթի արհեստագործությունը, շնորհիվ իր առանձնահատուկ բնույթի, մեծ հեղաշրջում է առաջ բերում մետաղագործության մեջ. դա սոցիալ-տնտեսական մի նշանակալի երևույթ էր, որ անդրադարձել էր նույնիսկ ժողովրդական աշխարհազգացողության, առավելապես հավատալիքների մեջ։ Երկաթագործ դարբինները համարվում էին խորհրդավոր ուժ, մոգական ընդունակություն ունեցող մարդիկ։ Սրանք ոչ միայն շիկացած երկաթից մուրճի ու սալի միջոցով կոփում էին զանազան զենքեր, որոնք իրենց ամրությամբ և հատու սայրով գերազանցում էին նախորդ բոլոր զենքերն ու գործիքները, այլև նույն մուրճի և սալի միջոցով կախարդական ազդեցություն կարող էին ունենալ մարդկանց կյանքի զանազան երևույթների վրա[156]։ Այդ հիման վրա դարբիններին վերագրում էին նաև բժշկական ընդունակություններ։

Գերմանացի հայագետ պրոֆ. Յո. Կարստը հետաքրքիր դիտողություն է անում, որ երկաթ հայկական բառը հին հայ ժողովրդական ստուգաբանությամբ պարունակում է նաև միստիկական նշանակություն։ Ըստ ժողովրդական հավատալիքի՝ գրերը



փորագրվել են երկաթե որածայր ձողիկով, ուստի և համարվել են երկաթագրեր։ Երկաթագիրը, ժողովրդական ստուգաբանությամբ, հին կախարդական կամ խորհրդավոր նշանագրեր էր և որպես արխայիկ տերմին ծառայում էր հին մոգական նշանագրերի կամ հիերոգլիֆների համար, մի տերմին, որ հետագայում փոխանցվել է քրիստոնեական սուրբ համարվող «աստվածաշնչյա» հայկական թարգմանության մեսրոպյան գրերին։ Այնուհետև երկաթ բառը, որ արևելյան հայ ժողովրդական բարբառներում հնչում է օրկաթ, ստուգաբանորեն մոտենում է հին հունական ὄργιων բառին, որ նշանակում է կրոնական ծես կատարող, միստիկ, ὄργια — խորհրդավոր աստվածային պաշտոն, միստերիա, գաղտնիք։ Հետևապես այդ բառերի սեմանտիկ բովանդակությունն էլ բնորոշում է դարբնական արհեստի խորհրդավորությունը[157]։

Երկաթագործ արհեստավորները ժողովրդական ավանդություններում հանդիսանում են խորամանկ դարբնող, ինչպես Թուբալը հրեական պատմության մեջ՝ ըստ «աստվածաշնչի»։ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան սահմաններում ապրում էին մի քանի ժողովուրդներ, ինչպես խալիբները, թուբալները, մոսխները, որոնց տնտեսական գործունեության մեջ, շնորհիվ նրանց լեռներում եղած հարուստ հանքերի, երկաթագործությունն առաջնակարգ տեղ էր բռնում։ Խալիբների անունով էին հին հույները ճանաչում երկաթի լավագույն դարբնած տեսակը՝ պողպատը, որ կոչվում էր χάλυψ (էջ 14)։ Մոսխները, ինչպես գիտենք (I, 97), արմենների կամ հայերի հոմանիշ անունն է, որից սոմխի ազգագրական անունն է բղխել վրացիների մեջ հայերի վերաբերմամբ։ Խալիբներին, ինչպես ակներև է Ստրաբոնի պատմությունից, հին հույները դնել էին տակավին բնակվելիս Կուր և Արաքս գետերի վերին մասերում, այսինքն Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնական մարզերում։ Եթե նկատի առնենք մի քանի գիտնականների այն կարծիքը, թե խալիբները խալդական ծագումից են (LHA, II, 798—809), ապա ենթադրական կապակցություն է նկատվում այդ երկու էթնիկ զանգվածների միջև նույնիսկ այն առումով, որ հենց խալդերն էլ հայտնի էին իրենց ճարտարությամբ ու հմտությամբ երկաթագործական արհեստներում, ինչպես այդ հաստատում են հնագիտական տվյալները։

Համենայն դեպս պետք է նշել այն հանգամանքը, որ այսպես կոչված հաբեթական խմբի ժողովուրդների մեջ երկաթագործու-

թյունը և ժամանակավորապես երկաթի մշակումն առաջին տեղ էր բռնում և որոշ կնիք դրոշմում նրանց նյութական կուլտուրայի վրա։ Այդ տեսակետից բավական է ուշադրության առնել երկաթ բառի գոյացման լեզվաբանական բացատրությունը։ Ակադեմիկոս Ն. Մառը ապացուցում է, որ այդ բառի արմատը հաբեթական է՝ rkn || rkd, և այդ արմատից են գոյացել ոչ միայն նյութական կուլտուրայի բազմաթիվ հաբեթական տերմինները՝ մետաղ երկաթի ու մետաղե առարկաների, այլև այնպիսի բառեր, ինչպես հայկական երկինքը=erk—in, որ բառացի նշանակում է երկաթ, նաև երկիր=erk—ir, որ նույնպես երկաթի նշանակություն ունի[167]։

Ի վերջո հիշենք նաև մի վերին աստիճանի զարգացած ու հասարակաց արհեստ, որ առաջին նշանակություն էր ստացել Հայկական լեռնաշխարհի նյութական կուլտուրայում և իր ազդեցությունը պահպանել էր նաև պատմական Հայաստանում մինչև միջին, թերևս և նոր դարերը—դա քարակոփությունն էր, քարտաշությունը։ Քարակոփության արհեստը, ինչպես արդեն գիտենք, մեծ զարգացման էր հասել խալդերի մեջ, որոնք թողել են այդ արհեստի զանգվածեղ, հոյակապ բազմաթիվ հուշարձաններ։ Խալդերը վարժ արհեստագործներ էին միաժամանակ երկաթի ու քարի մշակման ասպարեզում։ Նրանք կարողանում էին, իրենց զարգացած արհեստի շնորհիվ, այդ երկու տարրերի մշակման ձևերն իրար միացնել և երկաթը կիրառել քարակոփ արտադրությունների մեջ թե շինարարության և թե արվեստի բնագավառներում։

Ինչպես երկաթի մշակման ասպարեզում, այնպես էլ քարի մշակման գործում, այդ արհեստին առանձնապես նվիրվում և նրանով զբաղվում էին որոշ էթնիկ խմբեր։ Այժմյան Տրապիզոնի ետևը տարածվող երկիրը մինչև վերջին ժամանակները հունական պատմության մեջ հայտնի էր խալդիա, իսկ հայոց մեջ՝ Խաղդիք անունով։ Այս երկրի ժողովուրդը, անտարակույս, հին խալդերի մնացորդն էր, որ արմենների ներխուժումով տեղահան էր եղել իր ի վաղուց անտի բնակած երկրից և նահանջելով՝ քաշվել դեպի Փոքր-Ասիայի այդ վայրերը։ Ահա այդ խալդիացիք, կամ խաղդիք, հայտնի էին քարտաշության զարգացման արհեստով, որ նրանք ավանդաբար պահեցին մինչև նորագույն ժամանակները, մինչև 20-րդ դարը, երբ այնտեղից առաջին թվով քարտաշներ էին պանդխտում կամ գաղթում ամբողջ Սև



ծովի հարավային եզերքով նաև դեպի Անդրկովկաս, որպես հմուտ և փորձված քարտաշներ, իրենց արհեստը կիրառելու տեղական շինարարության մեջ (LHA, I, 93, 123, 305)։

## IV

## ԱՌԵՎՏՈՒՐ

Երբ քննության էինք առնում նեոլիթյան դարերի կուլտուրան, ակնարկել էինք այն ժամանակները տեղի ունեցող առևտրական հարաբերությունների մասին (I, 165)։ Հետագայում, վաղագույն մետաղե դարերում այդ առևտրական հարաբերությունները էլ ավելի մեծ զարկ ստացան, դառնալով մասնագիտական զբաղմունք։ Ահա այն ժամանակներից հասարակության մեջ դրսևորվեց մի նոր սոցիալական խավ հանձինս առևտրականների։

Հայկական լեռնաշխարհում տիրող բնատնտեսության պայմաններում, երբ յուրաքանչյուր տնտեսություն իր ինքնամփոփ անայլին բնույթով՝ սպառելի անհրաժեշտ նյութերը, սկսած կենսամթերքներից ու վերջացրած կենցաղային պիտույքներով, չնչին բացառությամբ, ինքն էր արտադրում, առևտուրը երկրի ներսում, կարելի է ասել, գրեթե գոյություն չուներ։ Սակավ դեպքերում միայն կարիք էր ծագում, երբ որևէ տնտեսություն իր արտադրած ավելցուկով, փոխանակությամբ, մի այլ տնտեսությունից ձեռք էր բերում իր չունեցած արտադրանքը կամ իրը։ Սակայն մենք տեսանք, որ արհեստն անջատվեց երկրագործությունից, մի պրոցես, որ սկզբներում թույլ լինելով, հետագայում հետզհետե զարգանում է ու խորանում։ «Արտադրական պրոցեսում այդպիսով տեղի է ունենում աշխատանքի բաժանումը, որ խախտում, քայքայում է արտադրության և յուրացման նախկին համատեղությունը, և տիրապետող կանոն է դառնում անհատական յուրացումը, որ իր հերթին առաջ է բերում փոխանակություն առանձին անձերի միջև» (Ֆր. Էնգելս)։ Այսպիսով ծագում է արտադրության՝ անմիջական փոխանակության համար, այսինքն ապրանքային արտադրություն։ Այս դեպքում, ի հարկե, մեզ հետաքրքրող դարաշրջանում ներքին առևտուրը կարող էր գոյություն ունենալ այն չափով, ինչ չափով զարգանում էր նախկին միասնական արտադրության բաժանումը երկու անջատ արտադրական պրոցեսների, այն է՝ երկրագործների ու արհեստավորների, որոնք փոխանակում էին իրենց արտադրության արդյունքնե-

րը։ Ուստի առևտուր անելով, այսինքն ապրանքի փոխանակություն, երբ առևտրականը հանդես է գալիս որպես միջնորդ դերում՝ տիրող արտադրական հարաբերություններում, պետք է հասկանալ արտաքին միջցեղային, միջժողովրդական առևտուր։ Այստեղ կատարվում է այն, ինչպես Վր. Ընդեյան է ասում՝ աշխատանքի երկրորդ կարևոր բաժանումը. առաջանում է հատուկ մի դաս, որ զբաղված է ոչ թե արտադրությամբ, այլ միայն արդյունքների փոխանակությամբ. ստեղծվում է առևտրականների դասը[128]։

Այդ արտաքին առևտուրն այն ժամանակվա սոցիալական զարգացման պայմաններում շոշափում էր գլխավորապես տիրող դասակարգերին՝ հանդերձ իրենց կալվածատիրական տնտեսություններով։ Նյութական բարիքներն ու արտադրությունները կուտակվում էին միայն կալվածատեր-ֆեոդալ դասակարգին պատկանող տնտեսություններում, որ նրանք դառնում էին ապրանք և հանդիսանում էին ոչ թե անմիջական փոխանակությամբ տեղական սպառողների կարիքներին ծառայող անհրաժեշտ նյութեր, այլ շահագործման առարկա, մի կողմից՝ ֆեոդալ կալվածատերերի ընչաքաղց ախորժակը հագեցնելու, իսկ մյուս կողմից՝ առևտրական-վաճառականի վաշխառուական բնազդները բավարարելու համար։

Ահա թե ինչու առևտրական կենտրոնները կամ շուկաները գտնվում էին իշխանական ամրոցների կամ գյուղերի մոտերքը, միջնաբերդի ստորոտում գտնվող պարսպապատ գյուղի կամ քաղաքի ծայրին, պարիսպների գծից դուրս։

Հին խալդական արձանագրություններում մեր իմաստով «քաղաք» բառը ամփոփաբար արտահայտվում է patari բառով։ Ակադեմիկոս Ն. Մառի վերլուծմամբ՝ patari բառից է գոյացել հայերեն վաճառ, վրացերեն վաճառի, որ նշանակում է առևտրական, վաճառական, հին, աքեմենյան պարսկերեն՝ a—ba+dar—i, որից և բազար բառը։ Հետևապես patari բառով իմաստավորվում է այնպիսի քաղաք, որի միջնաբերդի շուրջը, պարսպապատ շենում ապրում էր բնակչությունը և գտնվում էր նաև առևտրական շուկան։

Այդպիսի վկայություններ կան հին Միջագետքի ու Փոքր-Ասիայի վաճառաշահ արխայիկ քաղաքների մասին։ Նաև մի վկայություն, բայց արդեն հին հայկական պատմության շրջանից. Դվինի վաճառաշահ քաղաքի մասին (6-րդ դար մեր թվականութ.) տալիս է Պրոկոպի Կեսարացի պատմագիրը, որը նկարագրելով այդ քաղաքի դիրքն ու նշանակությունը, ավելացնում է թե



եկվոր վաճառականները ցրված են այդ քաղաքի մոտակա շրջակայքում գտնվող բազմաթիվ գյուղերում։

Առևտրականները լինելով օտարազգիներ և այլացեղ տարրեր, համարվում էին ոչ անվտանգ ու վստահելի, որպեսզի նրանց թույլատրվեր ազատ ելումուտ ունենալու ամրոցի և քաղաքի պարիսպների ներսը։ Այս պարագայում ավանդաբար պահպանվել էր արխայիկ դարերից մնացած հակացողությունը վաճառականների մասին։ Հնագույն դարերի վաճառականը, ինչպես, եղել է միշտ արկածախնդիր ճանապարհորդ. հեն (պիրատ), որ իր կարավանով ու զինված համհարզներով երկրից երկիր էր թափառում և շատ անգամ թալանով ու ավազակությամբ էր ապրանքներ ձեռք բերում վաճառելու նպատակով։ Այդ տեսակ անվստահելի ու կասկածամիտ վերաբերմունք դեպի օտարերկրյա վաճառականները բնորոշ գիծ է, որը համատարած է եղել ամենահին ժամանակներից գրեթե բոլոր երկրներում, մինչև իսկ միջնադարյան Եվրոպայում և Ռուսաստանում։ Այդ գիծը պահպանողական ավանդույթով մնացել է մի քանի հայկական ավաններում, որոնք հայկական միջնադարում, թերևս և 18-րդ դարում, կալվածատեր իշխանների ու մելիքների ֆեոդալական ամրոցներ են եղել. օրինակ՝ Նախկին Մելիքանիստ Դորիսում (Զանգեզուր) իշխանի պարսպապատ ապարանքը գտնվում էր միջնաբերդի նշանակություն ունեցող բարձր կետում, որի ստորոտում տարածվում էր գյուղը, իսկ գյուղի ծայրամասում, արտաքին սահմանի վրա, տեղավորված է շուկան։

Չափազանց կցկտուր տեղեկություններ ունենք վաղագույն մետաղի դարաշրջանի առևտրի մասին Հայկական լեռնաշխարհում։ Այս տեղեկությունները այնուամենայնիվ հնարավոր են դարձնում մոտավոր գծերով պատկերացնել այդ առևտրի բնույթը։ Սակայն մենք համեմատաբար ավելի շատ տեղեկություններ ունենք Հայաստանի հնագույն պատմական շրջանի վերաբերյալ։ Այդ տվյալները հետադարձ մղումով կարող ենք մոտեցնել վաղագույն մետաղե դարերին, մեկնելով այն տեսակետից, որ այդ երկու ժամանակաշրջանում, տիրող բնական տնտեսության պայմաններում, երկրի արտադրողական ուժերն այնքան էլ մեծ փոփոխություններ չէին կրել, իսկ եթե եղել էին փոփոխություններ, այնուամենայնիվ իրենց մեջ պահպանել են անցյալի բնորոշ հետքերը։ Վերջապես մեր հեռանկարներից դուրս չպետք է մնա Առաջավոր ու Փոքր-Ասիայի հնագույն դարերի առևտուրը, որ

սերտորեն կապված էր Հայկական լեռնաշխարհի վրայով կատարվող առևտրի հետ և տալիս էր նրան իր սովորութական իրավունքին և կենցաղային բարիքներին համեմատ գծեր։ Ջե՞ որ առևտուրը, այն էլ արտաքինը, որի մասին է մեր խոսքը, չի հանդիսանում ինքնամփոփ երևույթ, չի պարփակվում սոսկ մի-երկու երկրների միջև, այլ ողողվում է ծավալուն տարածությամբ, թափանցելով ամենուր, որտեղ արտադրական պրոցեսները քիչ թե շատ հնարավորություններ են ընձեռում փոխանակության համար։ Այդ է եղել միշտ առևտրի հիմնական գիծը թե՛ հնում և թե՛ ներկայումս կապիտալիստական պայմաններում. դրանում է նրա միջազգային բնույթը։

Տակավին 3-րդ հազարամյակում (նախքան մեր թվականը) Հայկական լեռնաշխարհի վրայով առևտրական հարաբերություններ էին պահպանվում Հարավային Միջագետքի ու Փոքր-Ասիայի միջև։ Տել-Ամարնայի[159] հինավուրց ավերակներում հայտաբերված նամակները, որոնք կավե սալագիր տախտակներ են, վկայում են, որ 2500 թվականներին աքքադացի[160ա] վաճառականները—tamkarē արդեն ամուր ոտք էին դրել Փոքր-Ասիայի արևելյան մարզերում և կապ էին պահպանում իրենց հովանավորող Աքքադայի իշխան Սարգոնի հետ (EMGA, II, 12)։ Այս երևույթն ավելի պայծառ աչքի է ընկնում հետագա դարերի բաբելական բազմաթիվ արձանագրություններից, որոնք հայտաբերվել են Բողազքյոյում, Քյուլթեփեում ու Կապադովկիայի այլ վայրերում և վկայում են ասուր-բաբելական վաճառականների աշխույժ հաղորդակցությունը Փոքր-Ասիայի հետ (EMGA, II, 13)։ Հին սումերներն ունեին արդեն չափեր ու կշիռներ, նմանապես դրամանիշներ, որոնք նրանց առևտրի զարգացման նախադրյալներն էին։ Սկզբներում խոշոր առևտրով զբաղվում էին թագավորներն ու տաճարները. այնուհետև սրանց մրցակից դուրս եկան մասնավոր առևտրական ձեռնարկությունները, որոնք իրենց գործառնությունները տարածում էին իրենց երկրից դուրս, դեպի այն ժամանակվա արտասահմանյան վաճառաշահ շուկաները Առաջավոր ու Փոքր-Ասիայում (RL, V, 71)։

Հետաքրքիր պատկեր են ներկայացնում հին Եգիպտոսի առևտրական հարաբերությունները երկրորդ հազարամյակում մեր թվականությունից առաջ։

Եգիպտոսն աշխույժ առևտուր էր անում Փոքր-Ասիայի հետ, գլխավոր հաթական երկրների, նաև Առաջավոր Ասիայի հետ, ար-



տահանելով այդ երկրներից Եգիպտոսի թագավորական տան համար զենք, գինի, պտուղ, յուղ, պարեջուր, պղինձ, երկաթ, ձիեր, եզներ և այլն (EMGA, II, 493)։

Ասուր-բաբելական վերոհիշյալ առևտուրը, որ տեղի էր ունենում Հայկական լեռնաշխարհի վրայով, հետագայում էլ, պատմական դարերում, շարունակվում էր գրեթե նույնությամբ, ինչպես այդ ակներև է հույն պատմագիր Հերոդոտի նկարագրություններից։

Մեզ հասել է հին պատմական տեղեկություն, թե ինչպես խալդական թագավորությունն առևտրական հարաբերություններով կապված էր Փոքր-Ասիայի երկրների հետ, ինչպես նշում է Փր. Շախերմայրը[160բ]. Ասորեստանի թագավոր Սարգոն II (723—706 թ. թ.) իր արձանագրություններում Մուսասիրի նվաճման մասին հաղորդում է, թե վերջինիս խալդական տաճարներում ավար վերցրած հարուստ իրերի մեջ կային, բացի տեղական խալդական արտադրանքներից՝ նաև Թուբալի, արևելյան Փոքր-Ասիայում գտնվող Տիբարեն երկրի արտադրանքներ, այն է՝ ոսկեունկերով անոթներ, արծաթե ինկամաններ և այլն, որոնք, ուրեմն, 8-րդ դարում (մեր թվակ. առաջ) այնտեղից արտահանվել են Մուսասիր, մինչև Ասորեստան-Խալդական սահմանները։ Այս փաստը միանգամայն համապատասխանում է այն հայտնի ու բնորոշ խոսքերին, որոնք, ըստ «Աստվածաշունչ» կրոնական գրքի, հրեական մարգարե Եզեկիելը արտասանել է իր օրերի մեջ փյունիկիայի Տյուրոս քաղաքի վերաբերմամբ. «Յավանը [Հունաստանը], Թուբալն ու Մեսեխը քեզ հետ առևտուր են արել և քեզ համար բերել են քո շուկաները գերիներ ու մետաղանոթներ»։ Ուրեմն փյունիկիայում և Պաղեստինում Թուբալի ու սրա հարևան մեսեխների մետաղե ապրանքները մրցում էին հունական ապրանքների հետ (LHA, II, 894)։

Վերոհիշյալ տեղեկությունները իրենց ամբողջությամբ հանդերձ՝ այնուամենայնիվ շատ քիչ են ասում։ Հայկական լեռնաշխարհն իր աշխարհագրական դիրքով ոչ միայն ռազմական մեծ նշանակություն ուներ Առաջավոր Ասիայի տիրապետության համար, ոչ միայն Սև ու Կասպից ծովերի միջև ընկած կամուրջ էր հանդիսանում ժողովրդական ռազմարշավների ու գաղթաշարժերի համար, այլև առևտրական կարավանների համար ճանապարհ էր բացանում Առաջավոր Ասիայի հարավից դեպի հյուսիս, մանավանդ Փոքր-Ասիայի վրայով դեպի Միջերկրական ծովը։ Այդ առևտրա-

կյան ճանապարհները Տիգրիսի, Եփրատի, Ճորոխի, Արաքս գետերով և նրանց հովիտներով ուղղվում էին ամենահին դարերից սկսած, դեպի Փոքր-Ասիայի՝ Միջերկրական ու Սև ծովերի եզերքները, նաև դեպի Կասպիական ծովը։ Այդ աշխարհագրական դիրքում Հայկական լեռնաշխարհը ներկայացնում էր ոչ միայն տրանզիտային միջանկյալ երկիր, այլև ինքն էլ որոշ չափով հանդիսանում էր առևտրական շուկա թե իր բնատնտեսության արգասիքների արտահանման և թե օտար երկրներից ապրանքների ներմուծման համար։

Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան դամբաններից հայտաբերված ապակե իրերն ապացուցում են, որ նախապատմական շրջանում որոշ իրեր պետք է ներմուծված լինեին օտար երկրներից։ Այդ պեղածոների մեջ հանդիպում են ապակե սրվակներ, մանյակների բազմաթիվ ուլունքներ, խխունջներ, մեծ մասամբ cyprea moneta և conus, նաև անտիմոնից զարդեր և այլ այնպիսի նյութեր, որոնց ծագումը պետք է որոնել Հայաստանից դուրս։ Իսկ եթե հաստատվի, հակառակ մեր արտահայտած կարծիքի (էջ 7), թե Հայկական լեռնաշխարհում գոյություն չեն ունեցել անագի հանքեր, որը բրոնզի ձույլի բաղկացուցիչ մասն է, ապա կնշանակի, որ անագ մետաղն էլ մեծ չափերով պիտի ներմուծվեր, եթե նկատի առնենք բրոնզե զենքերի, գործիքների, զարդերի ահագին պաշարը պեղածոների մեջ։

Այդ ապակե իրերը, որոնք անշուշտ ներմուծված են, եզրակացնել են տալիս, որ ապակե (vèrre et pâte) նյութերը, ինչպես օրինակ՝ արցունքների սրվակները և զանազան գույնի ուլունքները, բերված պետք է լինեին Եգիպտոսից կամ Փյունիկիայից (Սիրիայից), որոնք այն ժամանակվա ապակու արտադրության կենտրոններն էին. cyprea moneta-ն, conus և մանրիկ խխունջային ուլունքները ծագում են միջերկրածովյան կղզիներից ու եզերքներից, ուլունքներ պատրաստելու զանազան գունեղ քարերը, ինչպես օրինակ՝ սերդոլիկը, կորնալինը, ագատը՝ Կովկասից, ոսկին՝ Եգիպտոսից և այլն և այլն։

Դժբախտաբար մենք տվյալներ չունենք, թե օտար երկրներից էլի ինչ ապրանքներ էին ներմուծվում Հայկական լեռնաշխարհի ժողովուրդների կենցաղային պահանջներին բավարարելու նպատակով։ Սակայն վերը թված իրերն ապացուցում են, որ ներմուծվող ապրանքների խոշորագույն մասը կազմում էին շքեղության ու արդուզարդի առարկաները, որոնք ծառայում էին տիրապետող դասակարգերի և ընդհանրապես հարուստ խավերի կենցաղային շռայլ պահանջներին։ Ներմուծվող ապրանքների այդ յուրահատուկ բնույթը, ինչպես ակներև է հին պատմագիրների ավանդած փաստերից, պահպանվել էր նաև հետագայում հին պատմական Հայաստանի ներմուծական առևտրում։ Այդ տեղեկությունների համաձայն, Հայաստան էին ներմուծվում ոսկեղեն ու արծաթեղեն, զոհարեղեն, մետաքսի ու կերպասի գործվածքներ, ազնիվ կավեղեն, այսինքն նյութեր, որոնք գալիս էին բավարարելու շքեղ ու հղկված կյանք վարող իշխանների ֆեոդալ դասակարգի պահանջներին։

Այդ առևտուրը մանավանդ զարգանում է 6—5-րդ դարերից սկսած (Նախ քան մեր թվականը), երբ միջերկրածովյան գրեթե ամբողջ եզերքում սկսում է թարգավաճել հունական գաղթականությունը, որի մի նշանավոր հատվածը Փոքր-Ասիայի ծովափնյա երկրներում բարձր զարգացման է հասնում, թե իր արդյունաբերությամբ և թե առևտրական գործողություններով, որոնք այն ժամանակվա մասշտաբով գրեթե համաշխարհային բնույթ էին ստացել։ Այդ առևտրական հարաբերությունների շրջանակների մեջ էր գրավվել նաև հին Պարսկաստանը, որը Դարեհ Ա. թագավորի օրով, առևտրի ծավալման համար ձեռնարկում է մի շարք միջոցներ, ինչպես օրինակ՝ դրամական սիստեմի բարեփոխում, վաճառականական ճանապարհների կառուցում և այլն։ Հին Պարսկաստանում հայտնի էր Դարեհի շինած մեծ «Թագավորական ճանապարհը», որ ծառայում էր ոչ միայն պետական-վարչական, այլև առևտրական նպատակներին։ Այդ ճանապարհի մի զգալի մասը, 300 վերստ երկարությամբ, 15 կայարաններով, անցնում էր հին Հայաստանի միջով, վորն այն ժամանակ Պարսկաստանի լայնածավալ թագավորության մեջ առանձին սատրապություն էր կազմում։ Այս ճանապարհի վրա կամ սրա հարևան ուղղությամբ էին զարգանում հին հայկական վաճառաշահ քաղաքները, ինչպես հետագայում զարգանում են դեպի ավելի հյուսիս գտնվող Արտաշատ, Ազար, Արքաստա քաղաքները, որոնք ընկած էին միջազգային այն մեծ տրանզիտային ճանապարհի վրա, որը Սև ծովը կապում էր Հնդկաստանի հետ։

Տրանզիտային այդ մեծ ճանապարհը Առաջավոր ու Փոքր-Ասիայում գոյություն է ունեցել նաև հռոմեական կայսրության օրով. այդ ճանապարհի քարտեզը, այսպես կոչված Tabula Peutingeriana[131], ցույց է տալիս նույն ճանապարհի ուղղությունը

Հայաստանի վրայով, որ ձգվում էր Արտաշատ—Սատաղա և Արտաշատ—Տիգրանակերտ քաղաքների գծով։ Առաջին գիծն Արտաշատի վրայով ուղղվում էր դեպի Սև ծովի հարավային նավահանգիստները, իսկ երկրորդը՝ Տիգրանակերտի վրայով գնում էր հյուսիսային Միջագետք։

Անշուշտ, այս մեծ առևտրական ճանապարհների ծագումը պետք չ որոնել նախապատմական դարերի, թերևս նեոլիթյան դարերի խորքերում, երբ այդ ճանապարհները տրորվում էին զանազան էթնիկ գաղթաշարժերի մակընթացությամբ ու տեղատվությամբ, երբ նրանց վրայով էին անցնում զանազան ցեղային հորդաների արշավանքները։ Վերջապես այդ ճանապարհներով էին կատարվում, ինչպես կարելի է եզրակացնել սեպաձև արձանագրություններից, ասուր-բաբելական արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ, նաև խալդերի նվաճողական առաջխաղացումը, խալդերի, որոնց ամրոցների ու կայարանների ցանցը տարածվում էր այդ ճանապարհների ուղղություններով։

Եթե Հայկական լեռնաշխարհի ներմուծական առևտրի վերաբերյալ տեղեկությունները սուղ են, ընդհակառակը, համեմատաբար ավելի են արտածման վերաբերյալ տեղեկությունները։ Անշուշտ, արտածումը վերաբերում էր այնպիսի նյութերին, որոնք տալիս էր Հայկական լեռնաշխարհի բնությունը։ Արտածման մեջ առաջին տեղը բռնում էին լեռնային ու հանքային արտադրանքները՝ քարեր ու մետաղներ, ապա գալիս էին երկրագործական արգասիքները, վերջապես՝ տեղական արդյունագործության, այսինքն արհեստավորների արտադրությունները։

Հայկական լեռնաշխարհն այդ հին դարերում, ինչպես և այսօր, հարուստ էր հանքամետաղներով։ Սկզբներում պղինձը, կապարը, և ապա երկաթը, իսկ այնուհետև զառիկը (մկնդեղ), սնդիկը, պղնձարջասպը և մանավանդ աղն արտահանվում էին գլխավորապես դեպի Առաջավոր Ասիայի երկրները մինչև Եգիպտոս՝ բավարարելու այդ վայրերի զինական պահանջները և ապա կենցաղային պիտույքների համար։

Մենք արդեն գիտենք նախընթացից, որ դեռևս նեոլիթյան դարերում Հայկական լեռնաշխարհից օբսիդիանն արտահանվում էր դեպի Իրանի սարահարթը և դեպի Միջագետք՝ քարե գործիքների ու զենքերի համար, ինչպես և աղը՝ այժմյան Նախիջևանի ու Կողբի հանքերից (I, 118, 165)։ Նմանապես որոշ տեսակի քարեր, որոնք հատուկ էին Հայկական լեռնաշխարհի բնու-



թյունը, շարունակում էին արտահանվել նաև վաղագույն մետաղի և ապա հին պատմական դարերում։ Այսպես օրինակ՝ հին հռոմեյեցի պատմագիր Պլինիոս Ավագի վկայությամբ՝ Հայաստանից արտահանվում էին սրիչ քարեր, իսկ հունական պատմագիր Դիոնիսի հաղորդած տեղեկությամբ՝ արտադրվում և արտահանվում էր այնպիսի կարծր տեսակի քար, որով հատկապես փորագրում էին և ծակոտում կնիքները։

Հանքերի ու մետաղների արտածման իրավունքը պատկանում էր, ըստ երևույթին, տեղական իշխաններին, որոնք այդ նյութերը դարձրել էին իրենց մենավաճառի առարկա։ Ալշեի երկիրը (տես ծանոթ. 4), որ հայտնի էր ասորեստանյան հուշարձաններում իբրև մետաղների երկիր, արտադրում էր բրոնզ, որի արտածման ու սակագնի իրավունքն այդ երկրի թագավորները վերապահել էին իրենց (ԼՉ 7)։ 13-րդ դարում (մեր թվականութ. առաջ) հաթական թագավորը Եգիպտոսի փարավոնի խնդրանքով խոստանում էր նրան ուղարկել մաքուր երկաթ (ԼՉ 13)։

Առևտրական հարաբերություններն այն ժամանակ, ինչպես դա բացահայտ է Տել-Ամառնայի նամակներից, դրվում էին պետական ձեռնարկչության կամ հսկողության ներքո։ Թագավորները միջազգային առևտրական հարաբերություններում ակտիվ դեր էին խաղում, նկատի ունենալով, անշուշտ, իրենց շահերը։ Այսպիսով՝ հզոր հաթական թագավորը կարող էր իր ձեռքն առնել երկաթի արտածումը իր իշխանության ներքո գտնվող Կիզվադնայից և այդ մենաշնորհը, ինչպես հիշտ է նկատում Շախերմայրը, «օգտագործում էր երկու ձևով—կամ դադարեցնում էր երկաթի արտածումը հաթական առևտրական հաշվեկշիռը բարձրացնելու համար և կամ արգելում էր հօգուտ հաթական ռազմական զինումների» (LHA, II, 891—892)։

Մետաղների այդ արտածումը շարունակվում էր նաև հին պատմական Հայաստանում. այդ մասին տեղեկություններ են տալիս, թե՛ օտար և թե՛ հայ պատմագիրները[162]։

Գյուղատնտեսական արգասիքներից արտածվում էին հացահատիկներ, գինի, յուղ, ներկատու բույսեր, ձկնեղեն ու զանազան կենդանիներ։ Այս տեսակ ապրանքների արտածման վերաբերյալ ավելի հարուստ տեղեկություններ կան հին Հայաստանի պատմական շրջանից։ Հայաստանից արտահանվում էին դեպի Բաղդադ (Միջագետք) ցորեն, Վանի տառեխ ձուկը, Արաքսի և

Կուրի սուրմաևի (շամայ) ձուկը: Արտածվում էին ընկուզենու փայտը, որդան կոչված կարմիր ներկը, ան ներկատու գդտարը, գեղատու և այլ տեխնիկական բույսեր[163]: Դեպի Բաբելոն գինի արտահանելու մասին վկայում է Հերոդոտն իր պատմության մեջ: Արտահանվում էին նաև ձիեր և այլ կենդանիներ, որոնցով այնքան հարուստ էր Հայկական լեռնաշխարհը, շնորհիվ իր զարգացած անասնապահության:

Հայկական լեռնաշխարհում պղնձի և սուտ երկաթի հայտաբերումով սկսեց զարգանալ այդ հյուղի ինդուստրիան, որի հետևանքով ոչ միայն հրապարակ եկավ մետաղագործության արհեստը, այլև, բրոնզե ու երկաթե գործիքների արտադրության շնորհիվ, կատարելագործվեցին մի շարք դանազան արհեստներ: Ահա այդ արհեստների արտադրանքները դառնում էին արտածման առարկա, իսկ երբեմն էլ դառնում էին հարկատվական կամ ավարառման առարկա ասուր-բաբելական նվաճողների համար: Մետաղի այդ արհեստագործությանն էին պատկանում զենքերը, պղնձի բազմատեսակ անոթներն ու այլ կենցաղային պատկանելիքները:

Պատմական վկայություններից պետք է կահել, որ արտածական առևտուրը Հայկական լեռնաշխարհում կատարվում էր գլխավորապես սեմիտական ազգերին պատկանող վաճառականների ձեռքով: Մենք արդեն առիթ ունեցանք նշելու (էջ 282), որ առկավլին 3-րդ հազարամյակում (Ն. Ք. մեր թվ.) Փոքր-Ասիայում, Հայկական լեռնաշխարհի վրայով, առևտուր էին անում Բաբելոնի վաճառականները՝ tamkarê-ները: Պետք է ենթադրել, որ այդ վաճառականները շարունակում էին իրենց առևտրական հարաբերությունները մինչև Հայաստանի հին պատմական դարաշրջանը:

Հույն պատմագիր Հերոդոտի նկարագրերը՝ Հայաստանից դեպի Բաբելոն կատարվող առևտրի մասին՝ մինչև վերջին ժամանակները թե հայ և թե օտար պատմագիրների կողմից մեկնաբանվում էր այն առումով, որ առևտրականները հայեր էին: Սակայն վերջերս պրոֆ. Հ. Մանանդյանը, ավելի ճշգրիտ վերլուծելով Հերոդոտի այդ վկայության թարգմանությունը՝ ապացուցում է, որ այդ վաճառականները կարող էին լինել միայն ասորեստանցիները[164]:

Պատմական հին Հայաստանում արտածական առևտուրը գերազանցապես սեմիտական ազգերի ձեռքում էր կենտրոնացված,



գլխավորապես ասորեստանցիների: Այդ են ապացուցում հայերեն լեզվի մեջ խոր հնությունից արմատացած մի շարք այնպիսի բառեր, որոնք վերաբերում են առևտրական հարաբերություններին: Այդպիսի բառերից են՝ հաշիվ, խանութ, գագուր, որոնք սեմիտական ծագում ունեն: Այդ առևտրականներն իրենց ապրանքներով ու սեփական կարավաններով երթևեկում էին թե ցամաքով և թե գետերով (Տիգրիսի ու Եփրատի վրայով): Հույն պատմագիր Հերոդոտը նկարագրում է այդպիսի առևտրական մի երթևեկություն, որ գետի վրայով տեղի էր ունենում Հայաստանի ու Բաբելաստանի միջև:

«Հայաստանում,—ասում է Հերոդոտը,—նավերի կողերը շինում են ուռենիներից և դրսից պատում են կաշվով. նավի ոչ առջևի կողմն է հայտնի և ոչ հետևի կողմն է սուր, այլ նա ունի վահանի նման բոլորակ ձև: Այսպիսի նավերի մեջ լցնում են հարդ և ապա ապրանք բարձում, մանավանդ գինի: Երկու մարդ թի քաշելով նավարկում են գետի հոսանքով վայր: Այդ նավերը շինում են շատ մեծ և փոքր. ամենամեծը՝ մինչև 5000 տաղանդ բեռ է տանում (մոտ 8000 փութ): Յուրաքանչյուր նավ իր մեջ ունի մեկ էշ, իսկ մեծերը՝ մի քանի էշ: Երբ նավավարները Բաբելոն են հասնում և բեռը վաճառում, նաև նավի փայտե կողերը ու հարդը, իսկ կաշին, էշերի վրա բարձելով, Հայաստան են քշում, որովհետև անկարելի է գետի հոսանքին հակառակ նավարկել, այնքան նա արագ է: Հենց այդ պատճառով էլ նավերը փայտից չեն շինվում, այլ կաշուց» (Herodoti historia, I, 194):

Իր նախնական շրջանում առևտուրը կատարվում էր ապրանքների անընդմիջական փոխանակությամբ: Դա այն ժամանակն էր, երբ ապարանքի վրա առավելին չկար միջնորդ վաճառականը: Հետագայում, արտաքին առևտրական հարաբերությունների զարգացման շնորհիվ, երբ հանդես է գալիս առևտրական դասը, ակներև է առնում մետաղե դրամի գործածությունը: Այդ դրամն սկզբներում բաղկանում էր դանազան մետաղների, այն է՝ պղնձի, բրոնզի, երկաթի, արծաթի ու ոսկու որոշ չափի ձուլակներից: Ձուլածո այդ մետաղներին տալիս էին դանազան ձևեր, երբեմն էլ օղակի ձև, որ կրում էին որպես ապարանջան կամ մատանի և կամ շարում էին ժապավենի վրա: Այդպիսի ապարանջաններ մեծ քանակով հայտաբերված են Հայկական լեռնաշխարհի բրոնզե դարերին պատկանող դամբարաններում:

Հետագայում արդեն ցեղային-առհմային հասարակական

ձևերն անվանում են, երբ կազմակերպվում են պետական-հասարակական ձևերը, մետաղե ձույլերը փոխարինվում են գլխավորապես արծաթից ու ոսկուց հատած դրամներով, որոնք կրում էին միայն երկրի տեր-իշխանները կամ թագավորները: Հայկական լեռնաշխարհում, ինչպես և ամբողջ Առաջավոր ու Փոքր-Ասիայում առևտրական հարաբերությունների մեջ սկզբներում տիրապետում էր չափ ու կշիռ և դրամների բաբելական սիստեմը: Բաբելական դրամներն արծաթից էին և բաժանվում էին երեք գլխավոր միավորների՝ տաղանտ, մնա և շիկել (սիկղ) (EMGA, II, 516):

Այնուհետև, սկսած 6-րդ դարից (մեր թվարկ. առաջ), Դարեհ Վշտասպ պարսիկ թագավորի օրով, երևում են պարսկական դրամներ, որոնք տիրապետող շրջանառություն են ունենում նախնական Հայաստանում: Պարսկական այդ տիրապետության շրջանում, երբ հին պատմական Հայաստանը, որպես երկու սատրապական թեմեր մտնում էր Պարսկաստանի լայնածավալ պետական կազմի մեջ, երկու հայ սատրապ իշխանները՝ Օրոնտասը (Երվանդ) և Տիրիբազը ամենայն հավանականությամբ հատում էին իրենց դրամները: Հնագետ և գրականագետ Ատրպետը փորձում է ապացուցել (ԱՀ, XX, 212—226), որ Փոքր Հայքի սատրապ-թագավոր Տիրիբազը (5-րդ—4-րդ դար մեր թվարկ. առաջ) կտրել է իր անունով մի շարք դրամներ[165], որոնք պետք է համարել հայկական նախնական դրամանիշները:

«... Մետաղի փողի հետ չարտադրողի տիրապետության մի նոր միջոց է հանդես գալիս արտադրողի և նրա արտադրության վերաբերմամբ: Գտնվեց ապրանքների ապրանքը, որ մյուս բոլոր ապրանքները թաքնածածուկ պարունակում է իր մեջ այն կախարդական միջոցը, որ կարող է ուզածդ ժամանակ վերածվել ամեն ցանկալի և ըղձալի իր: Ով այդ միջոցն ուներ, նա տիրապետում էր արտադրության աշխարհին, իսկ ով ուներ այն ամենից առաջ: Վաճառականը: Նա ապահովեց փողի պաշտամունքը: Նա հոգում էր այն մասին, որպեսզի բոլորի համար ակներև դառնա, թե որչափ մյուս բոլոր ապրանքները, ուրեմն նաև բոլոր ապրանք արտադրողները պետք է ծունկ չոքեին փողի առաջ ու երկրպագեին նրան: Նա գործնականապես ապացուցեց, թե որչափ հարստության բոլոր մյուս ձևերը դուռ հարստության այս մարմնավորման հանդեպ միայն լոկ երևութական հարստություն են վերածվում: Փողի իշխանությունն այլևս երբեք այնպիսի



անօրինակ վայրագությամբ և բռնությամբ հանդես չի եկել, ինչպես իր գոյության այս երիտասարդական շրջանում»[166]:

Եվ ահա այդ դրամ կուտակելու, հարստանալու այդ տենչը դառնում է խթան, որ տիրապետող ֆեոդալ-իշխանական դասակարգը, որի ձեռքում էր կենտրոնացած իր երկրի բովանդակ հողային ֆոնդը, որի մենաշնորհի շղթաներով էին գրկված երկրի արհեստավորների արտադրությունը և որի ամբողջ պահեստներում էին կուտակվում ճորտացած երկրագործի ու շինականի աշխատանքի պտուղները, դառնում է առևտրական հարաբերությունների գործուն մասնակից և երթևեկող առևտրականների, պաշտպան-հովանավոր:

Փակելով առևտրական հարաբերությունների քննությանը նվիրված այս գլուխը, անհրաժեշտ ենք համարում առանձնապես կանգ առնել առևտրական մի բնորոշ հուշի վրա: Դա գերեվաճառությունն է, որը մեծ չափերով զարգացած էր հին պատմական աշխարհի ժողովուրդների մեջ (Փյունիկիա, Ասորեստան, Բաբելոնաստան, Պարսկաստան, Հունաստան, Հռոմ և այլն): Այդ առևտուրն սկիզբ է առնում նախապատմական ամենահին դարերից:

Գերեվաճառության հիմքը կազմում է ստրկական ինստիտուտը: Ստրուկները «կենդանի գործիքը» էին, որ ձրի ու հարկադիր աշխատանքի ձեռքեր էին հանդիսանում դեռևս տոհմային-ցեղային հասարակական ձևերի տնտեսություններում, և ապա շարունակում էին նույն դերն ունենալ ֆեոդալական շրջանում հատկապես իշխանական խոշոր կալվածքներում և թագավորների ձեռնարկած «պետական» շինարարական աշխատանքներում (ջրանցքներ, ամրոցներ, ապարանքներ, այգիներ և այլն), որոնք, վերջին հաշվով, նույնպես ծառայում էին տիրապետող դասակարգի շահերին. միայն:

«Կենդանի գործիքի» այդ պահանջից գոյանում է ստրկական շուկա՝ իր անհրաժեշտ «կենդանի ապրանքի» առք և վաճառք: Այստեղ էլ հանդես է գալիս հատուկ գերեվաճառ առևտրականը, որ այդ ապրանքը ձեռք է բերում ավարառու իշխաններից ու թագավորներից:

Հին ֆեոդալական դարաշրջանում իշխաններն ու թագավորները մեծ թվով գերիներ էին ավար վերցնում ոչ միայն իրենց տնտեսությունների համար ստրուկներ ունենալու, այլև, գլխավորապես, առևտրական նպատակով: Ստրուկները ներկայաց-

*նում էին փոխանակային մեծ արժեք, շահավետ ապրանք, որի պահանջը միշտ էլ մեծ է եղել այն ժամանակվա միջազգային շուկաներում, շնորհիվ այն հանգամանքի, որ ստրուկների հարկադրական աշխատանքն այն հիմքն էր կազմում, որի վրա բարձրանում էր ամբողջ հասարակության վերնաշենքը (Ֆր. Էնգելս)։*

*Ահա այդ գերեվաճառությունը ծաղկել է նաև Հայկական լեռնաշխարհում հնագույն դարերից սկսած։ Մենք տեսնում ենք, թե ինչպես ասորա-բաբելական, հաթական և այլ խալդական թագավորներն ու իշխանները, ռազմական արշավանքների ու ասպատակությունների ասպարեզ դարձնելով այդ երկիրը, իրենց մշտական ավարառությունների մեջ մեծ տեղ էին տալիս գերիներին, որոնք այնուհետև վաճառքի առարկա էին դառնում։ Նույնը շարունակվում էր հին պատմական Հայաստանում պարսկական, հունական, արաբական և այլ ավարառությունների ժամանակները։*

*Հայոց պատմության հին, նույնիսկ միջին դարերում ստրկական վաճառքի էին հանվում ոչ միայն գերիները, այլև խաղաղ բնիկները՝ չհատուցած պարտքերի ու հարկերի և տիրապետող իշխանների ու ֆեոդալների կամայականությունների ու գիշատիչ ագահության հետևանքով։ Այդ իմաստն են պարունակում մի շարք օրենսդրական որոշումներ, որոնցից առանձնակի ուշադրության են արժանի Շահապիվանի (447 թ.) ժողովի 5-րդ և 6-րդ կանոնները[167], Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոնների 3-րդ հոդվածը[168], Դվինի ժողովի 9-րդ հոդվածը[169], Պարտավի ժողովի[170], Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերը։ Այդ օրենքներից կարելի է մակաբերել, որ հայերը նույնիսկ իրենց հայրենակիցներին առնում և վաճառքի առարկա էին դարձնում։ Այդ վաճառքը կատարվում էր մեծ մասամբ արտածությամբ դեպի օտար երկրները, արտասահմանյան շուկաները, ինչպես Ալեքսանդրիա, Բաղդադ, Հռոմ, Բյուզանդիոն, Վենետիկ և Միջերկրական ծովի շահաստանները, որոնք այնպիսի խոշոր միջազգային շուկաներ էին, որ ընդունակ էին կլանելու անսահման քանակով «կենդանի ապրանք»։*

*Ըստ երևույթին Հայաստանի իշխանների ու թագավորների համար ստրուկների վաճառքը շահավետ առևտրական գործ էր, որովհետև նա իր գոյությունը պահպանել էր տակավին 13-րդ դարում։ Եվ այդ մեզ հասել է Կիլիկիայի հայոց թագավորության*



*շրջանից հետաքրքիր մի պայմանագիր, որով հայոց թագավոր Լևոն III-ը, ի շարս այլ պայմանների, ստրկավաճառքի մենաշնորհ է տալիս ջենովացիներին[171]։*

*Վերոբերյալ փաստերն էլ բավական են, որպեսզի հետադարձ հեռանկարով պատկերացնենք ստրկավաճառության գոյությունը հին Հայաստանում, որտեղ նա ծաղկել է սկսած նախապատմական դարերից, երբ Հայկական լեռնաշխարհը հանդիսանում էր վաճառականական աշխույժ հարաբերությունների ասպարեզ՝ իր վրայով անցնող առևտրական տարանցիկ մեծ ճանապարհների շնորհիվ։*

---

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պետք ենթադրել, որ ակկադներում բրոնզը կազմվում էր անտիմոն մետաղի կամ կապարի (արճիճ) ձուլածո խառնուրդից, որովհետև այս մետաղները համեմատաբար ավելի վաղ էին հայտաբերվել, քան անագը, որն ավելի ուշ է երևացել, այն է՝ մոտավորապես 2000 տարի Ն. Ք. մեր թ. (RL, II, 428): Կապարը հին ակկադերենում կոչվում էր annaku, նմանապես նույն այդ անունն էր ստացել հետագայում հայտաբերված անագը, շնորհիվ այն հանգամանքի, որ իր փայլով ու հատկությամբ կապարին խիստ նման էր: Բնորոշ է, որ հին հայերենում էլ շատ անգամ կապարը կոչվում էր, ըստ ակկադերենի, անագ=annaku, որպիսի անունը հետագայում նույնպես հայերենի, ինչպես և ակկադերենի մեջ, անցավ անագ մետաղին: Հայկական լեռնաշխարհի պեղված բրոնզե իրերը չեն ենթարկվել մանրազնին քիմիական վերլուծման, որպեսզի հնարավոր լիներ հաստատելու, թե արդյոք բրոնզե իրերի մեջ կա՞ն փոփոխակները, որոնք կազմված լինեին պղնձի ու կապարի կամ անտիմոնի ձուլածո խառնուրդից: Մեզ հայտնի բրոնզե իրերի մի քանի վերլուծությունները, ընդհանրապես, ցույց են տալիս սոսկ պղնձի ու անագի խառնուրդ: Թերևս այս հանգամանքը պետք բացատրել նրանով, որ մեզ հայտնի պեղված բրոնզե իրերը բացառապես պատկանում են բրոնզեդարյան կուլտուրայի վերջին ժամանակաշրջանին:

Սևանի շրջանում Երվ. Լալայանի հայտաբերած բրոնզե իրերը՝ քիմիկոս Սկինդերի վերլուծությամբ՝ պարունակում են՝ անագ 6,55%-ից մինչև 10,10%, նմանապես 2%—3% երկաթ (ՀԴՊ, 222—223): Երկաթի այդ փոքր տոկոսի ներկայությունը թերևս հիմք կարող է ծառայել, որ այդ բրոնզե իրերը պատկանում են բրոնզե դարի վերջին և երկաթե դարի սկզբի շրջանին:

2 Մետաղի ինդուստրիայի ծագման ժամանակը խիստ տարբեր են որոշում հնագիտության ականավոր ներկայացուցիչները, մանավանդ եթե նկատի առնենք այն կարևոր հանգամանքը, որ պալեոմետալի դարը չէր կարող ամենուր միաժամանակ սկիզբ առնել: Հնագետ Մորտիլիեի կարծիքով՝ մետաղեդարյան ինդուստրիան սկսվել է 6000 տարի Ն. Ք. մեր թվականությունը, հնագետ Բարտելոն փորձում է հաստատել, որ պղնձե գործիքները երևացել են Ասորեստանում՝ մեր թվականությունից 6000 տարի առաջ, Եգիպտոսում և Քաղդեայում՝ 4000 տարի առաջ: Ըստ հնագետ Վ. Գորոդցովի հաշվով՝ պղնձե ու բրոնզե դարաշրջանը տևել է 5000 թ. մինչև 1500 թ. Ն. Ք. մեր թվ., իսկ Ֆրանսիացի հնագետ Ժ. Մորգանի կարծիքով՝ 5000 թ. մինչև 1200 թ.:

³ Միտանի-խուրրի ժողովուրդը. «ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագիր» № 1, 1926 թ., նաև EMGA, II, 153.

⁴ Գիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ խալդական Al-zi-ni-ni հողանունի ձևը համապատասխանում է հայ մատենագրական Al-zi-nik=Աղ-ձի-նիք=Աղձնիք ձևին։ Մինչդեռ մի քանի գիտնականներ, ինչպես Մյուլլեր, Մոսզեր, Հոմմել, Եդ. Մայեր, Տուրաև, շփոթելով Ալզի անունը Ալասիայի կամ Ալաշիայի անվան հետ, Ալզին համարում են Կիպրոս կղզին, որ հարուստ է եղել պղնձահանքերով. մանավանդ որ Ալզին էլ հարուստ է եղել պղնձահանքերով և պղնձի մեծ առևտուր է ունեցել Եգիպտոսի հետ։ Սակայն Բոգազքյոյից գտնված հաթական հին դաշնագրերից հետո այլևս չի կարելի մտածել Ալզիի և Կիպրոսի նույնության մասին. ուստի Ալզիի թագավորների նամակները չեն կարող վերաբերվել Կիպրոսին, ինչպես մինչև այժմ ընդունում էին։ Աղձնիքը գտնվում էր Հայաստանի արևմտյան հարավակողմը, Զորբորդ Հայքի, Տուրուբերան և Մոկք նահանգների ու Ասորեստանի միջամտյրում. Տիգրիս գետն անցնում է այդ նահանգի միջով, որտեղ հայտնի էին Սիմ, Տորոս, Խույթ, Անգղի, Խուլփ, Տարբուշ լեռները։ Աղձնիքի մասերը կամ մեջը հիշվում է նաև Ե ր կ ա թ ա հ ա ն ք կոչված բլուրը և Ե ր կ ա թ ա հ ա տ ա ձ ո ր ը։ Հայ պատմագիր Փավստոս Բյուզանդը հիշատակում է այս նահանգի գլխավոր երկաթահատոց և կապարահատոցը։ Այս երկաթահանքը սահմանակից էր Վասպուրականի Ռշտունյաց գավառին։ Մովսես Խորենացին Աղձնիքի նահանգի բնական հարստությունների մեջ հիշատակում է երկաթը, որ, անշուշտ, հանվում էր վերոհիշյալ լեռից (Ս. Երեմյան — Բնաշխ. բառարան)։

⁵ Տես ծանոթ. 3.

⁶ Oswald Felix — Handbuch d. regionalen Geologie — Armenien.

⁷ Վերջին ժամանակներս անագի նոր հանքեր են հայտաբերվել նաև Վրաստանում։ Ձիրուլի գետի ավազանում, գետային ավազներից հանված ալեֆները (լվացված ու զտված հանքավազ), ինչպես ապացուցվել է քիմիական վերլուծություններով (Институт прикладной минералогии), պարունակում են մեծ տոկոսով անագ («Заря Востока», 1934 թ. № 84)։

⁸ T. A. Rickard — The early use of the metals. „The Journal of the Institute of metals", vol. XLIII, 1930, № 2, London, էջ 308—314։

⁹ T. A. Rickard — Iron in antiquity. „The Journal of the Iron and steel, Institute", vol. CXX, 1929, № 11, էջ 326։

¹⁰ Եգիպտական բուրգերի արձանագրություններում, որոնք վերաբերում են 2750—2450 թ. թ. (մեր թվ. առաջ), երկաթն անվանվում է «երկնքի մետաղ», հետևապես դա եղել է մետեորիտային և ոչ թե հանքային երկաթ, որի մասին արդեն հիշատակում են եգիպտական ավելի հետնագույն արձանագրությունները, այն անվանելով «երկրի մետաղ»։ Նույնն ենք գտնում հաթական XIV դարի (մեր թվ. առաջ) մի գրավոր հուշարձանում, ուր ասվում է «երկնքի սև երկաթի» մասին։ Ակներև է, որ Եգիպտոսի ու Ասորեստանի հնագույն երկաթը եղել է մետեորիտներից։

¹¹ Վերջերս անգլիական գիտարշավի կատարած (Wolley) պեղումները Ուրում և Վարկում (Միջագետք) հայտաբերել են երկաթե իրեր, գլխավորապես կշտաքարեր ու կնիքներ, որոնք ծագում են Ուրի թագավորության III դինաստիայի ժամանակաշրջանից, մոտավորապես 3-րդ հազարամյակի վերջին մեր թվ. առաջ (2200—2000 թ. թ.) և երկաթաքարից կամ կարմիր երկաթահանքից են պատրաստված։ Երկաթաքարի այդ հնագույն գործածությունը կնիքների ու կշտաքարերի համար՝ կարող էր, իհարկե, դյուրացնել երկաթ-մետաղի հայտաբերումը („Revue d'Assyriologie", XXVI, 1929 թ. 120)։

¹² Կ ի զ զ վ ա դ ն ա երկիրը գտնվում էր Փոքր-Ասիայի արևելյան մասում և սահմանակից էր Առաջավոր Ասիային. սակայն այդ երկրի ճիշտ տեղը ներկայումս հնագետների ու պատմաբանների կողմից երկու տարբեր ենթադրություններով է որոշվում։ Գիտնականների մեծագույն մասը (Ֆորրեր, Բիլաբել, Շախերմայեր և այլք) պնդում է, որ Կիզզվադնան տարածվում էր Փոքր-Ասիայի հյուսիս-արևելյան մասում, սկսած Սև ծովի հարավ-արևելյան ափերից, և ընկնում էր հետագա պատմական Կապադովկիայի տերիտորիան, իսկ մի քանիսներն էլ ենթադրում են, որ, ընդհակառակը, Կիզզվադնան ընկնում էր Փոքր-Ասիայի հարավ-արևելյան մարզերը։

¹³ Երկաթահանքերը Հայկական լեռնաշխարհում գտնվում են գլխավորապես Տավրոսի լեռնաշղթայի մասերում։ Երկաթի հանքերը մանավորապես հայտնի են Վասպուրականում (Վանա լճի հարավ-արևմուտքում. հին ժամանակներից հայտնի էին «երկաթահատ լեռները»), Սասունի լեռներում (Տալվորիկ), Սպեր-մացին (Բայբուրդ մոտ), Գողթն, Լոռի և Զանգեզուրի գավառներում։

¹⁴ Բնորոշ է, որ խ ա լ ի բ բառը մետաղագործության առնչությամբ պահպանվել է մինչև օրս էլ հայ և հարևան ժողովուրդների բարբառներում. խալիբ է կոչվում այն կաղապարը, որի մեջ ձուլվում է մետաղը և իր վերջնական ձևն ստանում։

¹⁵ Պրոֆ. Լեման-Հաուպտի կարծիքով՝ Ասորեստանում, մոտավորապես 700 տարի մեր թվականությունից առաջ, երկաթը, որպես զենքի ու հատանող գործիքների համար կիրառելի մետաղ, սկսում է աստիճանաբար դուրս վանել բրոնզե զենքերը, մինչև որ Սարգոն թագավորի ժամանակ՝ նա դառնում է հարմարագույն և ձեռնտու մետաղը նաև ռազմական գործիքների և այլ իրերի համար. իսկ երկաթի առաջին երևալը կարելի է համարել Ասուրնասիրպալի թագավորության ժամանակ (884—860 թ. թ.)։ Պրոֆ. Լուշանը նույնպես պնդում է, որ Ասորա-Բաբելոնում երկաթի ինդուստրիայի առաջին հետքերը երևում են 900 թ. ոչ վաղ (ն. ք. մեր թ.), իսկ 800 թ. նա արդեն մեծ չափերով էր տարածված։ Լուշանի կարծիքով՝ երկաթե ինդուստրիան անհնարին Եվրոպայում տարածվել է ու ամրացել ոչ վաղ 300 թ. (ն. ք. մեր թ.)։

¹⁶ Մի քանի հնագետներ, մանավանդ Ժակ Մորգանը և դանդարան պրոֆ. Վ. Վ. Բունակը կովկասյան Հայաստանում հայտաբերված դամբանները դասում են երկաթե դարերին, իսկ Վ. Բունակն այնքան հեռու է գնում, որ Նոր-Բայազետի դամբաններից շատերը վերագրում է հետնագույն երկաթե դարերին, նույնիսկ մեր թվականությանը մոտիկ դարերին (Русский антропологический журнал, т. 17, в. 3—4, էջ 64—65)։ Եթե Ժ. Մորգանի կարծիքը, թե այդ բրոնզե և երկաթե պեղածները թերևս պատկանելիս լինեն երկաթի վաղագույն, սկզբնական շրջաններին, այն է՝ հալշտատյան տիպին, որոշ չափով ընդունելի է, որքան այդ վերաբերում է Լոռում նրա կատարած պեղումներին (JMMS, т. I), ընդհակառակը, Վ. Բունակի կարծիքը առանց սուբյեկտիվ ենթադրության տպավորություն է թողնում, քանի որ նա, բացի դանդաղական ուսումնասիրություններից, այդ պեղածո իրերի ուսումնասիրությամբ չի

զբաղվել և իր ընդհանուր եզրակացությունը հիմնավորել է միմիայն Նոր-Բայազետի զուտ երկաթե դարերին պատկանող գամբարաններով, անտեսելով, որ այնտեղ կային նաև բրոնզե դարերին պատկանող գամբարաններ։

17 Ժակ Մորգանը Անդրկովկասի նկատմամբ միանգամայն ժխտում է զուտ պղնձի դարաշրջանի գոյությունը։ Ժակ Մորգանը, ինչպես է ասել, շատ զգույշ հետազոտող է և իր զգուշությունն ու վերապահությունը երբեմն հասցնում է սկեպտիցիզմի աստիճանին։ Նա իր հետևությունները անում է, հիմնվելով գլխավորապես իր կատարած պեղումների վրա. շատ անգամ աչքաթող անելով այն հնագիտական տվյալները, որոնք հայտաբերվել են իրենից անկախ, մի շարք այլ հնագետների ջանքերով։ Մինչդեռ ինքը՝ Ժ. Մորգանը, ժխտելով պղնձե դարի գոյությունն Անդրկովկասում, միաժամանակ Ախթալայում հայտաբերել է, թեև եզակի, մի շատ հին գամբարան, որ պատկանում է էնեոլիթի դարաշրջանին (JMMS, I, 55—57)։ Ժ. Մորգանը իր պեղումները կատարել է 1887 և 1888 թվականներին, իսկ այդ ժամանակից հետո թե Անդրկովկասում և թե Հայկական լեռնաշխարհում հայտաբերվել են ավելի հարուստ և բազմակողմանի հնագիտական իրեղեն տվյալներ, որոնք միանգամայն թուլացնում և վերացնում են նրա եզրակացությունները, որ նա արել է, հենվելով միայն իր պեղածների վրա։ Բավական է այստեղ նշել հենց այն փաստը, որ այլևս ոչ մի նշանակություն չունի նրա երբեմնի հայտնած կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհում գոյություն չի ունեցել քարե դարը, որի գոյությունը պետք է արդեն հաստատված համարել վերջին տասնամյակի ընթացքում հայտաբերված տվյալների հիման վրա։

18 Այդ վայրը կոչվում է Ռեդկին-Լագեր անունով, որովհետև այստեղ անցյալ դարի 50-ական թվականներին վրան է խփել Աղստաֆա-Դիլիջան խճուղին կառուցող ինժեներ Ռեդկինը։ Այդ խճուղու կառուցման աշխատանքների ընթացքում էլ դիպվածաբար տասնյակ անգամ հայտաբերվել են հիշյալ գամբարանները։ Այդ գամբարաններից հանված բոլոր իրերը ու ոսկորները մինչև 1922 թ. պահվում էին նախկին Կովկասյան թանգարանում (Թիֆլիսում) և ապա, տեղափոխվել են Բաքու՝ Ադրբեջանի նորաստեղծ թանգարանը։

19 *Fr. Bayern*—Untersuchungen über die ältesten Gräber und Schatzfünde in Kaukasien-Zeitschrift für Ethnologie, 1885, B. XVII.

*Fr. Bayern*—„Redkin Lager". Zeitschrift für Ethnologie—Verhandlungen, 1882.

*Fr. Bayern*—Contribution à l'archéologie du Caucase. Lion, 1882.

*R. Wirchow*—Ueber die kulturgeschichtliche stellung des Kaukasus, unter besonderer Berücksichtigung der ornamentierten Bronzegürtel aus Transcaucasischen Gräbern, Abhandlungen der königlichen Akademie der Wissenschaften zu Berlin, 1895. (Կա հայերեն թարգմանությունը—ԱՀՀ, I)։

***Ф. С. Байерн*** — О древних сооружениях на Кавказе. Сборник сведений о Кавказе. Тифлис, 1871, т. I.

***М. С.***, V, 59.—Коллекции Кавказского Музея.

***В. Вырубов*** — Предметы древности в хранилище Об-ва любителей Кавказской археологии. Тифлис. 1877, вып. I.

***А. Бобринский*** — Раскопки у ст. Делижан. ОАК, 1891 г.

20 Այդ իրերը ներկայումս գտնվում են Պետական թանգարանում (Երևանում)։



21 О раскопках в Борчалинском уезде, главным образом в сел. Ворнак, произведенных Н. Я. Марром. — „Дело Археологической Комиссии", 1892 и 1893 г. г.

МС, V, стр. 127.

22 Է. Ռեսլերը Գանձակի գավառում կատարած իր պեղումների մասին մանրամասն տեղեկություններ տվել է հետևյալ հրատարակություններում.

ИАК, вып. 12-ый, 16-ый.

ОАК, 1891 г.—стр. 125—176.; 1895 г.—стр. 57—58 и 182.; 1897 г.—стр. 82 и 70.; 1898 г.—стр. 68. МС. V.

23 ***Вл. Скиндер*** — Опыт археологической разведки (Елисаветпольск. курганы). Пятигорск, 1906 г.

***Г. О. Розендорф*** — ОАК, 1903 г., стр. 92—98.

24 О раскопках Рёслера в Ходжаллу—ОАК, 1895 г., 1899 г. и 1900 г.

Նույնը—„Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte"—1895 j.-s. 549. 1896 j.-s. 178, № 7, s. 86. 1898 j.-s. 441. 1899 j.-s. 246—247.

25 ***С. Т. Австасян*** — Первобытные памятники Нагорного Карабаха в связи с вопросом о скифском происхождении курганов Азербайджана. ИКИАИ, т. V.

*Մ ի ր ա ն  Տ ե ր-Ա վ ե տ ի ս յ ա ն* — Ղարաբաղի գամբարանների մասին.— «Մարտակոչ», 1924 թ. և 1925 թ., №№ 235, 239, 253։

26ա ***И. Мещанинов*** — Краткие сведения о работах археологической экспедиции в Нагорный Карабах и Нахкрай в 1926 г.—„Сообщения Гос. Акад. Ист. Матер. Культуры", т. I, 1927 г. стр. 217—240.

27ա Այս տեղեկությունները մեզ հաղորդել է ընկ. Մորուս Հասրաթյանը։

27բ Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեն 1931 թ. աշնանը պեղումներ է սկսել Զվարթնոցի շրջակա հնագիտական վայրում, այսպես կոչված հին Վաղարշապատի տեղում. այդ աշխատանքները դեռևս ավարտված չեն և շարունակվելու են։ Հետևանքները առայժմ մեզ անհայտ են։

28 ИАК, вып. 29.

***Мещанинов*** — Краткие сведения о работах археологической экспедиции в Нагорный Карабах и Нахкрай в 1926 г.—„Сообщения Гос. Акад. Ист. Матер. Культуры", т. I, 1927 г., стр. 239—240.

*Ե ր վ. Լ ա լ ա յ ա ն* — ԱՀ, XIII։

29 Շիրակի գավառում անցյալ դարի 90-ական թվականներին պեղումներ էր կատարել գիտնական Բագրատ Խալաթյանը, գլխավորապես Մարմաշենի, Ղափլիի շրջակայքում, սակայն նրա պեղման հետևանքները մնացել են անհայտ, Բ. Խալաթյանի վաղաժամ մահվան պատճառով։ Թ. Թորամանյանի վկայությամբ՝ այդ պեղումների ընթացքում հայտաբերվել են գամբարաններ—քարարկղներ՝ բրոնզե իրերով («Բանբեր Էջմիածնի Գիտական Ինստիտուտի», էջ 219 և 224)։

30 Сборник материалов по описанию местностей и племен Кавказа. Тифлис. XIII, стр. 145—146.

31 ***Акад. Н. Я. Марр*** — Археологическая Экспедиция 1916 г.

в Ван, изд. Русского Археологического Общества. 1922 г.—„Надписи Сардура II из раскопок ниши на Ванской скале".

*И. А. Орбели* — Предварительный отчет о командировке в Азиатскую Турцию 1911—12 г.г. „Известия Академии Наук".

*С. В. Тер-Аветисян* — Курганы Хасан Калы — „Известия Кавк. Историко-Археологического Института", т. IV.

*C. F. Lehman-Haupt* — Armenien Einst u. Jetzt. I u. II B. Materialen zur alteren Geschichte Armeniens und Messopotamiens. Berlin 1907. (*Թարգմանաբար թարգմանված է հայերեն «Բազմավեպում»—1908 թ. №№ 3, 5, 7, 10—12 և 1909 թ. №№ 1—3*)։

*C. F. Lehman-Haupt* — Vorläufige Berichte über die im Jahe 1890 erziehelten. Ergebnisse einer Forschungsreise durch Armenien. „Nachrichten d. Königl. Gesellsch. d. Wisensch. zu Göttingen". 1899.

*C. F. Lehman-Haupt* — Von der deutsch—armenischen Expedition 1900. „Wiener zeitschr. für Kunde d. Morgenlandes" IV, Heft 1—2. *Թարգմ. «Հանդես Ամսօրյա», 1900 թ., էջ 215—219, 243—248, 287—294, 335—340։*

*C. F. Lehman-Haupt* — Das vorarmenische Reich von Wan „Deutsche Rundschau", 1894, Decembr.

*C. F. Lehman-Haupt* — Reisebriefe von der armenischen Expedition. „Mitteilungen d. Geogr. Gesellschaft in Hamburg" 1899, XV, p. 1—22, 189—221.

*C. F. Lehman-Haupt und W. Belck* — Bericht über eine Forschungsreise in Armenien. 1900. *Թարգմ. «Հանդես Ամսօրյա», 1899, էջ 281—284։*

*C. F. Lehman-Haupt und W. Belck* — Zweiter Vorbericht über eine Forschungsreise in Armenien. 1900. *Թարգմ. «Հանդես Ամսօրյա», 1900 թ., էջ 65—66։*

*C. F. Lehman-Haupt und W. Belck* — Chaldische Forschungen. „Verhandlungen d. Berl. Anthrop. Geselschaft" 1895, p. 578—616. 1896, p. 309—327. 1897, p. 302—308. 1898, p. 414—416, 489, 522—527, 568—592. 1899, p. 411—420, 487—489, 608. 1900, p. 37.

*W. Belck* — Archeologische Forschungen in Armenien. „Verhandlungen d. Berl. Gesellsch. f. Anthropologie, Ethnol. u. Urgeschichte", 1893, s 64, 81.

*W. Belck* — Das Reich der Mannäer. 1891.

*W. Belck* — Bauten und Bauart der Chalder—„Verhandlungen d. Berl. Gesellsch. f. Anthr., Ethnologie und Urgeschichte", 1895, s. 602.

*W. Belck* — Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens. H. I u. II. 1901. Leipzig.

*W. Belck* — Untersuchungen u. Reisen in Transkaukasien. Hoch—Armenien und Kurdistan. „Globus", 1893, LXIII.

*Վ. Բ ե լ ք — Մոկք, ՀԱ. ԺԷ, էջ 321։*

*Վ. Բ ե լ ք — Աղձնիք, ՀԱ. ԺԸ, էջ 65։*

*Վ. Բ ե լ ք — Հայաստանի աշխարհագրությունը, ՀԱ. ԶԺ, 233։*

[32] *Վ. Բելքը կարծիք էր հայտնել, որ քարարկղի ձևի դամբանների տարածման սահմանը պետք է համարել Արաքս գետը, որից այն կողմը նրանք այլևս չեն հանդիպում։ Այս կարծիքն անհիմն պետք է համարել, քանի որ Արաքսի այն կողմը, գլխավորապես Թյուրքահայաստանում, այդ ձևով պեղում-*



*ներ չեն կատարվել և ընդհանրապես հնագիտական հետախուզումներ այնտեղ չեն ունեցել։ Մինչդեռ Լեման-Հաուպտը Պարսկահայաստանում, Ուրմիայի շրջանում, Դեալ-Թեփե կոչված բլուրում հետախուզել է դամբարանների մի ստվար խումբ, որ, մի քանի դամբաններ պեղելով, հայտաբերել է մեծ հայկան բացարկղները բրոնզե և մասամբ երկաթե իրերով* (LHA, I, 282—285)։

[33] *Ա. Իվանովսկին գրելով այն դամբարանները, որոնց մեջ, բացի փիրուն ոսկուց՝ թաղված են եղել շատ քարեր և գերեզմանի միջի ամանները ջարդված են եղել, կարծիք է հայտնում, որ այդ դամբանները փայտե ծածկ են ունեցել «Մեռյալին թաղելուց և մոտը ամաններ շարելուց հետո, որոշ բարձրությամբ շինել են փայտե ծածկ, որի վրա թափել են մանր քարեր և ապա ծածկել տափարով։ Հետագայում, երբ փայտե ծածկը փտել է ու քանդվել, քարերը ներս են թափվել, ջարդել կավե ամանները ու կարել գլխավորապես իրերը։ Այնուհետև առաջացած դատարկության մեջ հետզհետե լցվել է փխրուն հողը։ Ուստի դամբանների մեջ իմ գտած փայտե կտորները ես համարում եմ այդպիսի փայտե ծածկի մնացորդներ»։ Այդպիսի փայտե կտորներ գտել էր նաև Բայերնը Ռեդկին-Լագերի մի դամբանում* (MAK, VI, 165—170)։

[34] *Երկժանին, մանավանդ եռաժանին ամբողջ Առաջավոր Ասիայում, առավելապես Բաբելաստանում հնագույն դարերում ներկայացվում էր իբրև աստղերի աստվածությունների պատկանելիք և հանդիսանում էր շանթի սիմվոլը (մրրկի, ջրային աստղերի, օդերևույթի աստվածների)։ Այսպես ժամերգների մեջ, ըստ այդ հնագույն աշխարհագրագրության նմանության էին անվանում շանթի փայլակներին կամ բոցավառ լեզուների* (RL, II, 462)։ *Հին հունական պանթեոնում, որ կրում է եգեյա-մինոյան (միջերկրածովյան) կուլտուրայի ազդեցությունը, ծովային աստղերի աստված Պոսեյդոնը ներկայացվում էր միշտ եռաժանին ձեռքին բռնած։*

[35] *Երկժանի կաթիլին ամրացված քարե կացին Հայաստանում գտնվել է ակադեմիկոս Ն. Մառի պեղումներից և ներկայումս պահպանվում է Վրաստանի Պետական Թանգարանում։ Նույնպիսի մի կացին հայտաբերել է Վ. Բելքը Նաժիրամագութիի պեղումներում (Վանի մոտ). տես նկար № 35, էջ XX—մեր այս աշխատության I հատորում։*

[36] *«Երկակի սակրը» կրետա-միկենյան կուլտուրայում համարվում էր նշանակ երկրի մեծ աստվածուհու, կյանքի ու մահվան տիրուհու, պտղաբերության հովանավորուհու։ Փոքր-ասիական զանազան ցեղերի լեզվում այդ երկակի սակրը կոչվում էր «լաբրիս», և հետագայում, երբ գերագույն աստվածային իշխանությունը կին-աստվածությունից անցավ այր-աստվածությանը, լաբրիսը Արամազդի ձեռին դարձավ աստվածային նշանակ*—Ζεὺς λαβραῦνδος *էր կոչվում «երկակի սակրի կրող Զևս»։*

[37] *Նոր-Բայազետի տապարն իր կոմպոզիցիայով ձևով հիշեցնում է Ավստրալիայի և այլ վայրերի ցեղերի մեջ գործածվող այն նշանավոր զենքը, որ կոչվում է բ ու մ ե ր ա ն գ։ Թերևս մյուս կողմից կարելի է ենթադրել, որ այդ փոքրիկ տապարը կարող էր ունենալ նաև կրոնա-մոգական նշանակություն, իբրև աղոթարանների միջոց կենցու համար՝ չարից, վատից պաշտպանվելու կամ իբրև սիմվոլիկ նշանակ՝ աստվածությանը նվիրելու համար։*

[38] *Ս ա կ ր բառն իսկապես նշանակում է տապար, իր ծագումով նախահայկական է (հաբեթական, ըստ ակադեմիկոս Ն. Մառի կամ պելազգա-իբերական՝ ըստ Յոսեփ Կարստի*—Geschichte der armenischen philologie, *էջ 60*

Heidelberg, 1930 j.) և իր բառական ծագումով համանիշ սիրիական—sequra, լատինական—securis-ին. Նույն ծագումն ունի ռուսական секира բառը, որ նշանակում է մարտական տապար Բերդաշ է, որ մեր տապար բառը նույնն է, ինչ որ ռուսերեն топор, կամ հայերեն կացին—հին ասորական hasinnu. Այս լեզվաբանական տվյալները արդեն բավականաչափ բնորոշում են տապարի ունիվերսալ բնույթի գործիք լինելը, որի անունը դրեթե ամենուր միևնույնն է։

39 Ժ. Մորգանն այն կարծիքին է հայտնում, որ Լոռում իր հայտնաբերած տապարները ձուլված են եղել զուտ ձևով (JMMS, I, 91)։ Այդ հավանական կարող է լինել կարճ տապարների նկատմամբ. գամով խփելու ձևով տապար կրելու ամրությունը, քան երկաթինը, գոյությունն է ունեցել նաև տարբերաստանյան մարտիկների մեջ, ինչպես այդ երևում է մեզ հասած քանդականկարներից։

40 Ռեդկին-Լագերի (Դիլիջանի մոտ) դամբարանների (որոնք համարվում են Հայկական լեռնաշխարհի ամենահին դամբարանները) հարուստ պեղածոների մեջ, որտեղ հայտնաբերվել են բրոնզե դաշույններ, չի գտնվել ոչ մի տապար։

41 Г. Филимонов — Закавказские древности. „Вестник О-ва древно-русского искусства“, 1876 г. № 11—12, стр. 100—102.

42 Մովսես Խորենացի — Պատմություն Հայոց. գիրք Բ, գլ. Ժ.

43 Berrot et Chipiez— Histoire de l'art dans l'antiquité, II, էջ 756,—Maspero—Histoire anceienne des peuples de l'orient classique, III, էջ 56. Линч—Армения, II, էջ 80. LHM, 99.

44 Ю. Готье — Очерки по истории материальной культуры Восточной Европы, стр. 261.

45 Վանի հնագույն կուլտուրայից ծագող (հավանորեն խալդական, թերևս գուցե ավելի հին) կնիքի նկարը ներկայացնում է այսպես կոչված նավաձև սայլ (Schiffswagen), որ ենթադրաբար ծառայում էր մեռյալների համար. Այս նկարն իր տեսակի մեջ միակն է հանդիսանում և նրա զուգահեռությունը Միջագետքում և ընդհանրապես Բաբելոնում մինչև այժմ ապացուցված չէ (RL, XIV, 242)։

46 Հին Եգիպտոսի Թեբե քաղաքի ավերակներում պեղված մի դամբարանից հայտնաբերված ռազմակառքի փայտեղեն մասերի քննությունը ցույց է տվել, որ այդ կառքի փայտը ծագում է գուցե ավելի հյուսիս գտնվող երկրների բուսականությունից (RL, XIV, 236)։

47 Հովսեփ Սանդալճյան — Ասորեստանյա և պարսիկ սեպագիր արձանագրություններ. Վիեննա, 1901 թ., էջ 107։

48 Eckhard Unger — Der Rennwagen in Vorderasien. 1929.

49 Մի քանի հնագետ-պատմագիրներ այն կարծիքին են պաշտպանում, թե նախնական սայլն իր սկզբնական ձևով եղել է քառանիվ։ Նրանք փորձում են այդ ապացուցել Միջագետքի, նաև հաթական մի քանի քանդականկարների հիման վրա։ Կարծում ենք, որ անիվների թիվը դեռ որոշիչ այդ երկանակը, առանց նկատի առնելու տեղագրական ու կենցաղային պայմանները, միանգամայն բավարարում է։ Անիվների թիվը դեռ տեխնիկական նշանակություն ունի, որ գլխավորապես կախված է տեղական պայմաններից։ Անշուշտ, լեռնային վայրերում չի կարող բնավ գործածվել քառանիվ սայլը, այլ կարող է գործել երկանիվ կառքը. չափազանց զառիվայր ու թեք ժայռոտ վայրերում.



ինչպես օրինակ՝ կովկասյան մի քանի լեռնային մարզերում նույնիսկ այժմ էլ գործածում են սայլեր առանց անիվների, նման ձմեռվա սահնակներին։ Ուշադրության առնելով Հայկական լեռնաշխարհի տեղագրական պայմանները, պետք է ենթադրել, որ սկզբից ի վեր մեզանում նախնական սայլերը եղել են երկանիվ և այդպես մնացել են մինչև ներկա ժամանակները։ Միայն վերջերս նոր-նոր գործածության են դրվել քառանիվ սայլերը, որոնց համար արդեն գոյություն ունեն համապատասխան ճանապարհներ։

50 Eduard Meyer — Reich und Kultur der Chettiter, էջ 44.

51 Հունաց դեմ պարսից թագավոր Քսերքսեսի մղած պատերազմում (483 թ. նախքան մեր թվակ.) Դարեհի փեսա Արտոխմես պարսիկ զորավարի հրամանատարության ներքո գտնվում էր հայկական բանակը. հայ մարտիկները զինված էին փռյուգացիների նման և կրում էին կաշվե գդակ, նեղ վահան, նիզակ, դաշույն և տեգ (javelot, дротик)։

52 Б. В. Фармаковский — Архаический период в России, 1914 г.

53 Ibid. էջ 52.

54 Հնագետ Ուվարովը այդ տեսակ ակնոցաձև երկու միացած պարույրները դասում է ոչ թե հերազարդերի շարքը, այլ համարում է ականջի զարդարանք (գինդ), հիմնվելով այն փաստի վրա, որ ներկայումս մի քանի վայրերի ցեղերի մեջ գոյություն ունեն հար և նման ականջային պաճուճանքներ։ Թերևս Ուվարովի կարծիքն ընդունելի կարող էր լինել, եթե իրոք այդ պարույրները փոքր ու թեթև լինեին ականջին կրելու համար. մինչդեռ Նոր-Բայազետի, Շուշու և Գանձակի գավառներում հայտնաբերված այդ զարդարանքներն իրենց մեծությամբ ու ծանրությամբ միանգամայն անհարմար են ականջներին կրելու համար։

55 Մետաղե զրահները միշտ և ամենուրեք միաժամանակ դարձել են նաև զրահ-զարդարանքներ, որովհետև միշտ և ամենուր մետաղն իր գեղեցիկ տեսքի շնորհիվ առաջին իսկ պահից գործածվել է սկզբում իբրև զարդարանք։ Այժմյան այսպես կոչված վայրենի ժողովուրդների մեջ մետաղե զարդերը ծառայում են միշտ որպես զրահ և ընդհակառակը։ Նույնն է եղել հին հույների մեջ, որոնցից սովորությունը պահպանվել է մինչև այժմ։ Էրզրումի, Վասպուրականի, Ղարաբաղի, Շամախու, Ախալցխայի և այլ գավառների հայ կանայք սովորաբար կրում են պարանոցային մանյակներ, բազուկների ապարանջաններ, ճակատի զարդարանքներ, որոնք կազմված են լինում արծաթե կամ ոսկե դրամներից։

56 Մինչև վերջին ժամանակները կարծում էին թե սերդոլիկը (սուտակաքարը) զարդարանքի համար ներմուծվում էր ուրիշ երկրներից. հնագետ Բայերն առաջինն ապացուցեց, որ սերդոլիկը կա Կովկասում, օրինակ՝ Ախալցխայի գավառում Մաճուլի գյուղի մոտերքը, նաև Գանձակի գավառում Ելենենդորֆ գյուղի մոտ։

57 Այդպիսի մանյակներ ներկայումս ցուցադրված կան Մոսկվայի Պատմական Թանգարանում։

58 «Դամը, իբրև կապելու հզորագույն միջոց՝ հմայության համար ունեցել այնպիսի ամրացման ուժ, որ կարող էր վանող միջոցի նշանակություն ստանալ։ Ուստի նա ընդհանրապես հմայելու գործերի դեր էր խաղում։ Այդ պատճառով ենթադրում էին, որ մեռյալների հետ, ինչպես ընդունված էր հին համոզմունքների մեջ, գերեզմանում դրված դամը պետք է զսպեր վանելու հոգուն, Հերմեսի. հունական այդպիսի գերեզմանային մի դամի վրա արձանագրված է,

որ այդ գամը Հեկատայի, մանրացության աստվածուհու, ոգի-շներին ամուր բանիս (LHA, I, 280)։

Այդ տեսակ մոգական հավատալիք պահպանված կա նաև հայերի մեջ. Վասպուրականում, երբեմն մի ննջեցյալից հետո տնեցիներից հիվանդանում են, կարծում են, թե ննջեցյալն խեղդված մեռած չէ և տնեցիներից յոթը հոգի տանելու է։ Որոշելու համար, թե ննջեցյալն խեղդված մեռած է, թե ոչ, գերեզմանի վրա ցորեն են ածում և ձին տանում մոտ, եթե կերավ, այդ ապացույց է, որ ննջեցյալն խեղդված մեռած չէ։ Այս դեպքում քաշ են տալիս գերեզմանը, ննջեցյալի գլուխը ջարդջարդում, կամ մի մեխ խփում գլխին, մինչև էլ սրտին (Տես. Լալայան — Վասպուրական, էջ 181)։

59 Բրոնզե նույնանման մասնիկներ հայտաբերվել են ակադեմիկոս Ն. Մառի պեղումներով՝ Անիի ավերակների միջնադարյան կուլտուրայի շերտերում։

60 Թոփրակ-կալեում պեղումներ են կատարել նաև ակադեմիկոս Ն. Մառն ու պրոֆ. Հ. Օրբելին, իսկ ամենից առաջ՝ ուրարտական արշավախումբը։

61 *Тревер* — Бронзовая ножка канделябра из Нахчавана. — „Известия Госуд. Академии Истории Материальной Культуры", т. I, 1921 г., стр. 261—264.

62 Այս մասին պատկերը լույս է տեսել՝ Perrot et Chipiez—Histoire de l'art dans l'antiquité, հատոր II, էջ 725։

63 *А. А. Захаров* — Кавказ, Малая Азия и Эгейский мир. Труды секции археологии Института археологии и искусствоведения, т. II, стр. 33—36.

*С. В. Безсонов* — Бронзовые статуэтки из Сарыкамыша — «Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի», № 4, էջ 67—78։

64 Анийская серия, реестр предметов древности № 2. стр. 51, 1908 г., составил Н. Марр.

65 С. В. Безсонов-ի և А. А. Захаров-ի վերոհիշյալ աշխատությունները (ծանոթ. 63)։

66 Ս. Վ. Բեզսոնովը փորձում է ապացուցել, որ Սարիղամիշի արձանիկները հին հայկական արվեստի գործեր են, այն էլ նախաքրիստոնեական, այսինքն հեթանոսական շրջանի, մասնավորապես նախ քան I դարը մեր թվականությունից առաջ։ Նրա գլխավոր հիմնավորումն այն է, որ նախ քան I դարը (որից հետո միայն հեթանոսական կրոնը Հայաստանում հելլենիստական դարձել էր ազդված) հայկական հեթանոսական կրոնը եղել է սիրիական ու հին պարսկական (նախաքեմենյան) հավատալիքների խառնուրդ, որտեղ աստվածությունները պաշտվում էին արձանների ձևով։ Հետևապես հիշյալ արձանները հանդիսանում են ընդօրինակումներ այդ աստվածությունների («Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի № 4, էջ 72—73)։ Մեր կարծիքով՝ հայկական նախահելլենիստական (հունական) հեթանոսական կրոնը ոչ թե պարսկական ու սիրիական հավատալիքների խառնուրդ կամ ազդեցությունների հետևանք էր ներկայացնում, այլ պարզապես փոքր-ասիական ժողովուրդների, գլխավորապես փռյուգիական հավատալիքներից էր ծագում, որն իր հերթին անցել էր Փոքր-Ասիա միջերկրածովյան ժողովուրդների կրոնից, որտեղ իր նախնական շրջանում գլխավոր աստվածությունները ներկայացնում էին իգական սեռ։ Հետագայում, իգական աստվածությունները, իբրև ընդհանրապես, արգասաբեր ուժեր, փոխվում են արական աստվածությունների, որոնք ընդհանրապես, արգասաբեր ուժերի խորհուրդ ձևավորվեց Փալլուսի պաշտամունքի մեջ, որ ծագել և գոյություն է ունեցել մեր նախապատմական շրջանում։ Եվս այդ Փալլուսի պաշտամունքի իրական նշաններն ենք նկատում վերոհիշյալ բրոնզե արձանիկների մեջ, որոնք ավելի աչքի են ընկնում Փալլուսի պատկերացումով։

67 *Е. О. Перушевская* — Древне-восточные статуэтки. „Известия Академии Истории Материальной Культуры", т. V, стр. 463—481.

68 Այդ արձանիկների հնագիտական հայտաբերման և գյուղի վայրի մասին մանրամասնություններ չեն հաղորդված, որովհետև ձեռք են բերված մասնավոր անձերից։ Ուստի այդ արձանիկների հնագիտական հարազատությունը կարող է կասկածելի լինել։ Համենայն դեպս մենք մասամբ վերապահությամբ ենք մոտենում նրանց ընդունությանը, թեև միևնույն ժամանակ համոզված ենք, որ եթե նույնիսկ նրանք կեղծված լինեն, այնուամենայնիվ ընդօրինակված են իսկականներից։

69ա Այդ արձանիկը ձեռք է բերվել մի մասնավոր անձից, որի ասելով՝ այն գտնվել է 1907 թ. Վանից դեպի հյուսիս ընկած խալդական շրջանում հայտնի Դարաբեկ բերդի ավերակներում։

69բ Ի պատիվ խալդական թագավոր Ռուսաս I-ի, բրոնզե արձանը կանգնեցրած է եղել կրոնական կենտրոն համարվող Մուսասիրում, որտեղ էր գտնվում նաև Խալդի գլխավոր աստծու պաշտամունքի տաճարը. վերոհիշյալ արձանը բաղկացած է եղել 2 ձի լծած սայլակառքից, որի վրա կանգնած էր Ռուսասի արձանը։ Սարգոն թագավորի տեղեկություններից երևում է, որ այդ արձանի վրա գրված է եղել. «Երկու իմ ձիերով և իմ կառապանի օգնությամբ ես իմ երկու ձեռքով վերանվաճեցի Ուրարտուի թագավորությունը»։

70 Վերջին ժամանակները Վիլկե, Վլ. Ժեննե և Ֆրանկֆորտ գիտնականները լույս են ընծայել մի քանի ստվար աշխատություններ կերամիկայի համեմատական ուսումնասիրության մասին, ի միջի այլոց նաև նախապատմական Հայաստանի վերաբերմամբ։ Ինչպես սպասելի էր, այդ աշխատությունները բնավ չեն կրում սոցիոլոգիական բնույթ և ներկայացնում են սոսկ տիպոլոգիական նկարագիր, ձևական բովանդակություն։

71 Ենթադրվում է, որ նախկին բրուտական գործի գյուտը, կավագործության ամենապարզագույն տեխնիկական եղանակը եղել է այսպես կոչված ծեփային, որ հնագիտության մեջ հորջորջվում է՝ Ֆրանսերեն — au colombin, Գերմաներեն — Tonwulsttechnik, Ռուսերեն — налепом անուններով։ Ամանը կերտվում էր ոչ թե մի գունդ կավից, այլ կավից նախապես շինվում էին մատաղենաձև օղակներ, ցանկալի անոթի չափին համապատասխան տրամագծերով և ապա, օղակները թաց վիճակում հետզհետե իրար վրա շարք առ շարք նստեցնելով, ծեփում մի ամբողջություն, խնամքով ակագում և հարդարում ծեփած շրջանների շրթերը, մինչև որ անհետանում էին միացման գծերը։ Այս եղանակով կավագործությունը մինչև վերջին ժամանակները պահպանվել էր հյուսիսային Ռուսաստանի մի քանի գյուղերում. Հայաստանում էլ մինչև վերջին ժամանակները ձեռագործ կավե ամանները այլ կերպով չէին ծեփվում։ Այժմ էլ այդ գործը կատարում են գլխավորապես կանայք, որոնք կավախմորը ոլորում են երկար ժապավեններ և ապա հերթով իրար վրա դարսում և բութ մատով հարդարում։ Ծեփային կերամի-

կույի հինավուրց գոյության մասին վկայում են մեր վաղագույն մետաղի ժամանակաշրջանի մի քանի կերամիկական արտադրությունները, որոնք իրենց արտաքին կերպարանքով պահպանել են այդ ծեփային եղանակի նշանները, թեկուզ իբրև օրնամենտացիա, պահպանելով ամանների կողերի վրա մի շարք զուգահեռ օղակաձև ուռուցիկ գծեր, որոնք ցույց են տալիս այդ օղակների միացումով իրար վրա շարված ծեփը, նմանապես կարասների ծեփը կրում է նույն նշանները։

72 Հայաստանի Պետական Թանգարանում ցուցադրված են երկու հատ համանման կավե ամաններ — մեկը սև, մեծկեկ բաժակ է — Սևանի շրջանից, իսկ մյուսը՝ նույնպիսի անոթ, կարմրավուն, առաջինից ավելի փոքր — Կարմիր-վանքից (Նախիջևանի գավառ). երկուսն էլ առանց զարդանկարի։ Սրանք զարմանալի հարազատությամբ կառուցված ընդօրինակումներ են ընկույզի կիսված կճեպի։ Այս ձևի բնական ընդօրինակումը բնականից՝ գալիս է միանգամայն հաստատելու գնդաձև կերամիկայի ծագումը դդումի ձևից։

73 Դավաղների ու գուլերը, բացի արհեստական միջոցներից (մանգաղային թթվուտով ներկելը կամ կավի մեջ սև ավազային մասնիկներ խառնելը և այլն), ինչպես ասել ենք, առաջանում է վառ թրծվածքից. այդ սև գույնը հնագույն փայլ է տալիս ամանի երկարատև գործածումից։

73a Սղիսակ զանգվածով կավե ամանների զարդանկարները ընդելուզելու սովորությունը շատ հին ծագում ունի և չի հանդիպանում որևէ որոշ ժամանակաշրջանի արգասիք։ Ցակավին Շլիմանը հնադարյան Տրոյայի (Հիսարլըկի Իլիոնի) վայրում կատարած իր հայտնի պեղումների ժամանակ գտել է այդպիսի սպիտակ ներկով լցված կերամիկական զարդանկարներ։ Այդ ձևի ընդելուզում հայտաբերվել է նեոլիթյան դարերի բոլոր հնավայրերում (Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Հունգարիայում, Իսլանդիայում, Հոլլանդիայում, Անգլիայում և այլն)։ Ինչպես կարծում են հնագետներ Թ. Վիրխովը, Դրեմպլերը, Կրաուզեն և այլք՝ այդ սպիտակ նյութը, որ ծառայում էր զարդանկարների ընդելուզման համար, զանազան նյութերի քիմիական բաղադրությամբ կարող էր լինել. դա կամ ածխաթթու կիր էր, երբեմն խառն կավճի հետ, կամ ֆոսֆորաթթու (կոստանդին), կիր կամ գիպս էր։

73b O. G. von Wesendonk—Fenstergefässe im Kaukasus, «Prähistorische Zeitschrift» 1927. B. XVIII, H. $^{3}/_{4}$ s. 301.

75 *И. Мещанинов*—Археол. Экспед. в Нагорн. Карабах и в Нахкрай. „Изв. О-ва изучения и обследов. Азербайджана", т. IV, стр. 106.

75a Այսանդ երկար կանգ չենք առնում այս տիպի գունավորված կերամիկայի վրա, քանի որ հաջորդ համապատասխան գլուխներում առիթ ենք ունենալու վերստին անդրադառնալու այդ նյութին։

75b Բնորոշ աղզագրական երևույթ է, որ երկար ու ձիգ դարեր անցնելուց հետո էլ, ներկայումս, մի քանի հայաբնակ վայրերում գործածվում են կլոր հատակով ամանների համար հատուկ պատվանդաններ՝ կավից կամ փայտից շինված, որոնք հար և նման են մեր նկարագրած արխայիկ եռչկանաձև պատվանդաններին։ Սևանի շրջանում այդպիսի պատվանդանները, որոնց մի օրինակը ցուցադրված է Երևանի Պետական Թանգարանի ազգագրական բաժնում, տեղական հորջորջումով կոչվում են «կարկեճ» ոտք։

76 Դոլմենի գլուխը գտնվում է Դիլիջանից մոտ 3 վերստ հեռու։ 1930 թ. հայտաբերվել են հնագիտական իրեր, գլխավորապես կերամիկա։ Դոլմենային



կուլտուրան, չնայած բրոնզե իրերի հետ պարունակում է նաև երկաթե իրեր, նման է Խոջալին-Լաչինին, որից 8 վերստ հեռավորության վրա է գտնվում, և ամենայն հավանականությամբ միևնույն ժողովրդին է պատկանում։

77 *И. Мещанинов* — Ходжалинский курган № 11, „Известия О-ва обслед. и Изучения Азербайджана", 1926 г., № 2.

—*И. Мещанинов*—Археологическая Экспедиция в Нагорном Карабахе — „Сообщ. Гос. Академии Истории Материальной культуры", т. V, стр. 223.

—Ходжалинская бусина—„Заря Востока" 1926 г., № 1364.

—К вопросу об ассирийской бусине из Ходжал. могильника. „Известия общества обсл. и изучения Азербайджана", 1926 г., № 3.

78 Հին Ասորեստանի պատմության մեջ հայտնի են չորս Ադադ-Նիրարի։ Վերջին երկուսը եղել են՝ Ադադ-Նիրարի III—808—783 թ. թ. և Ադադ-Նիրարի IV—761—755 թ. թ. մեր թվականությունից առաջ։

79 Անշուշտ, այդ ուլունքը, իբրև ավար, Խոջալուի հին շրջանն է բերվել որևէ տեղական թագավորի կամ իշխանի ձեռքով, որ մասնակցել է Ասորեստանի դեմ մղված արշավանքներից մեկին, ամենայն հավանականությամբ Ադադ-Նիրարի I-ի թագավորության ժամանակ և կամ, որ ավելի քիչ հավանական է թվում, նրա թագավորելուց հետո։

80 Վերջին տարիների պատահական հայտաբերումներով ապացուցվեց, որ Կարմիր-վանքի ուրույն կերամիկայի սահմանները ավելի լայն են (Արտաշատյան գավառ, Սիսիան և այլն), սակայն սիստեմատիկ պեղումներ այս ուղղությամբ դեռ չեն կատարվել։

81 Գունավորվ կերամիկան մեծապես զարգացած էր նաև էգեյան կուլտուրայում նեոլիթի դարերում. այդ կողմից հայտնի են Էմիկենյան կուլտուրայի կերամիկական անոթները, որոնք իրենց օրնամենտացիայով որոշ չափով տարբերվում են Առաջավոր Ասիայի նույնանման կերամիկայից։ Հնարավոր էր ենթադրել, թե կարող էր որոշ աղերս գոյություն ունենալ Արևմտյան և Արևելյան այդ նույնանման կերամիկայի միջև, այն նկատառումով, որ Թեսալիայից Սև ծովի հյուսիսային եզերքով և Կովկասի վրայով անցք ունեցող որևէ ազդեցություն հետ այդ կերամիկական արվեստը մտներ Առաջավոր Ասիա։ Սակայն այս հարցը լուծելու ոչ մի տվյալ առայժմ չկա։

82 Անաուի գյուղը, որ հայտնի է իր նախապատմական կուրգաններով, գտնվում է Ռուսական Թուրքեստանում, Աշխաբադից ոչ այնքան հեռու, դեպի Մերվ տանող երկաթուղու վրա։ Անաուի հռչակավոր դարձած պեղումները կատարվել են 1904 թ. Ամերիկական հնագիտական արշավախմբի ձեռքով՝ պրոֆ. Պումպելլիի ղեկավարությամբ։

83 Անաուի պեղումների միայն III հնագիտական շերտն է խեցեղեն պարունակել գունավորված զարդանկարված կերամիկա, որը նմանվում է Սուզայի I-ին տարիների ոճին։ II և I շերտերը պարունակեցին են եղել ոչ միայն յուրահատուկ ձևի ամաններ, այլև կարմրավուն ու դարչնված անոթներ, որոնք հիշեցնում են փոքր-ասիական կերամիկական արտադրությունները. որոնց արտաքին երեսի վրա, որ թրծվելու հետևանքով կարմիր գույն էր ստացել, երբեմն էլ գեղնավուն, ազրկելուց հետո նկարվել են փայլուն սև գույնի երկրաչափական զարդանկարներ, որոնք մասամբ հիշեցնում են Սուզայի I-ին տարիների ոճը (RL, XIV, 82)։

84 *Жак де Морган*—Доисторическое человечество, пер. с французск., стр. 211.

85 Դժբախտաբար ճշգրիտ տեղեկություններ չկան Կարմիր-վանքի հնավայրում հայտաբերված, մեզ հետաքրքրող կերամիկային ուղեկցող մետաղե իրերի վերաբերյալ, որովհետև սիստեմատիկ պեղումներ կատարված չեն եղել և հայտաբերված անոթներն էլ մեծ մասամբ դիպվածական գյուտեր են։ Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ հնավայրը պարունակում է հնագիտական բոլոր շերտերը, սկսած նեոլիթից մինչև վաղադարյան երկաթի դարերը, կարելի է կռահել, որ մեզ հետաքրքրող գունանկարկ կերամիկան կարող էր հայտաբերված լինել պղնձի դարերի շերտում, քանի որ այդտեղ մեծ քանակությամբ պղնձե գործիքներ, զենքեր ու զարդարանքներ են գտնվել բրոնզե իրերի հետ Կարմիր-վանքի անդրանիկ պեղողը՝ Ն. Վ. Ֆեոդորովը 1895 թ. իր բացած գամբաններում կերամիկա է գտել միմիայն պղնձե իրերի հետ (ИАК, XXIX)։

86 Zeitschrift für Ethnologie 1900. s. 69. Տե՛ս Frankfort—Studies in early pottery of the near east, B. I, B. II. 184.

87 Prachistorische Zeitschrift B. XIX 3/4 Heft, s. 300–302. 1928 թ.

88 Համեմատել՝ մեր այս աշխատության I հատորի 65 ծանոթությունը, էջ 339։

89 Հենց այն փաստը, որ հին Հայաստանի գունանկարկ կերամիկայի նկարների առաջները բնական վերարտադրումներ են, հաստատում է այդ կերամիկայի ավելի հին լինելը Սուզայի գունանկարկ կերամիկայի համեմատությամբ, որովհետև վերջինս կրում է ոճավորված բնույթ և, ուրեմն, ավելի հետագայի է բնականից։

90 Կենդանական ատամների կաղապարումը զարդանկարչությամբ հայտնի է հնագիտության մեջ «գայլատամի զարդանկար» — Wolfszahnornament — հորջորջումով. այդ զարդանկարը, ինչպես մանրամասնորեն նկարագրում է հնագետ Վիլկեն, կարելի է համառոտ տեսնել Միջին Եվրոպայի ինչպես բրոնզեդարյան, այնպես էլ նեոլիթյան կավե ամանների վրա. Նույնիսկ այդ օրնամենտը կգտնենք պալեոլիթյան դարերին պատկանող նկարներում։ Հետևապես «գայլատամի զարդանկարի» ծագումը պետք է բացատրենք այն տնտեսական ու սոցիալական միջավայրով, որտեղ հնադարյան մարդու արտադրական հարաբերությունները կառուցված էին գլխավորապես որսորդության վրա։

91 Բակայիրի անունով վայրենի ցեղի (Հարավային Ամերիկայում, Բրազիլիայի ներքին կենտրոնական մարզերում, հասարակածի գոտում) մի գյուղում գերմանացի հայտնի ճանապարհորդ Ֆոն-Շտայնենը, մտնելով ցեղապետի խրճիթը, նկատում է պատի շուրջ բոլորը նկարված ծածկը, լայնությամբ 15—40 սմ., որ բաղկացած էր ծառի կեղևի տախտակներից՝ մրով սև ներկված։ Այդ սև ֆոնի վրա կավյին սպիտակ ու դեղին գույնի կավով ներկված ձկներ, բույրակներ, հավանկյուններ, ամբեր ու այլ նկարներ, որոնց մեջ Ֆոն-Շտայնենը ենթադրում էր տեսնել սոսկ երկրաչափական զարդանկարներ։ Սակայն մեծ եղավ նրա զարմանքը, երբ ցեղապետը նրան բացատրեց, որ այդ գծային նկարները ներկայացնում են իրական առարկաներ. կինը նկարված է եռանկյունաձև, որովհետև այդ ձևն ունի կանացի «ուլուրին» նրա միակ զգեստը, որով ծածկվում են նրա սեռական մասերը. երկու ամբերը, միացած իրենց սուր ծայրերով, պատկերացնում են չղջիկը և այլն։



92 Մուղնի Առաքելոց վանքի, նմանապես Սևանի վանքի այդ պատմական հին գանձերը ներկայումս ցուցադրված են Հայաստանի Պետական Թանգարանի հնագիտական բաժնում։

93 Բոլոր վկայությունները պարզորոշ ապացուցում են, որ խաչը քրիստոնեական ծագում չունի, ինչպես ենթադրում են հավատալ քրիստոնեական եկեղեցու վարդապետները։ Խաչը քրիստոնեական կրոնի մեջ երևացել է 4-րդ դարում, թերևս 5-րդ դարի սկզբներին, այն էլ փոխանցվելով միթրայական կրոնից, ուր խաչն ուներ արևային, խորհրդավոր նշանակություն։ Խաչի զորությունը գտնում ենք հին ժողովուրդների հեթանոսական կրոններում, հավատալիքներում և պաշտամունքներում, միստիկական վարդապետություններում բացատրվում էր նրանով, որ այդ հավատալիքների և ուսմունքների հետևորդները խաչի մեջ տեսնում էին բնության ստեղծագործող էության նշանաբանը, հավերժության ու նոր կյանքի նշանակը, որ արտահայտությունն էր արևի, ջերմության, ուրեմն և այդ նյութեղեն երևույթի՝ կրակի, որ գոյանում էր երկու խաչաձևված փայտե ձողիկներ իրար քսելուց։

94 Երկու փայտի կտորներով՝ մեկը ուղղահայաց բարակ ձող, իսկ մյուսը կոր տախտակ (հաստլիկ ծառի բունը)՝ կրակ առնելու եղանակը, բայց տեղական յուրահատուկ տարբեր ձևերով, մինչև այսօր էլ գոյություն ունի երկրագնդի գրեթե բոլոր վայրենի ժողովուրդների մեջ։ Ամենապրիմիտիվ եղանակը գտնում ենք Ավստրալիայի մի քանի վայրենի ցեղերի մեջ, որոնք փայտե բարակ ձողիկը ողորկ ձևած բռնում են փայտե (ծառի ընկույզ հատած) չոր տախտակի վրա կտրված կողին, որ մասամբ հիշեցնում է խաչաձև բռնման եղանակը։

95 Սվաստիկան զանազան ժողովուրդների մեջ, ի հարկե, տարբեր անուններ է ունեցել, իսկ ներկայումս գիտության մեջ գործածվող սվաստիկա բառը սանսկրիտական հին անունն է։ Այդ բառի իմաստը, շատ փոքրիկ տարբերություններով, մեկնաբանվում է այսպես. նա բաղկացած է իրականում երկու բառերից՝ su, որ նշանակում է լավ, բարի և asti—լինել, ուրեմն այդ բառի նշանակությունն է—su+asti=լավ լինել։

96 Սվաստիկան հայտաբերված է մեր ժամանակներից մի քանի վայրենի ցեղերի մեջ Ավստրալիայում, Աֆրիկայում և Ամերիկայում, նմանապես հնագույն կուլտուրայի ասպարեզներում ապրած այնպիսի ժողովուրդների մեջ, ինչպես են, օրինակ՝ չինացիները, ինդուսները և երկու դար առաջ նաև ճապոնացիները, որոնք այդ նշանները գործ էին ածում համապատասխան կերպով։

97 *Perrot et Chipiez*—Histoire de l'art dans l'antiquité, IV, 553.

98 Այդպիսի անուն են տալիս այդ ձևի նկարակերտ զարդերը Տրոյա քաղաքի անունով, որը Ռուսաստանում մետաղագործության, գլխավորապես տնայնագործական, կենտրոններից մեկն էր համարվում։

99 Մի քանի պատմական սեպագիր հուշարձանների հիման վրա ենթադրական եզրակացություն է արվում, որ խալդերը արևմուտքից, այն է՝ Փոքր-Ասիայի մարզերից, գաղթել են դեպի արևելք, հայկական լեռնաշխարհը, մոտավորապես ասորեստանյան թագավորներ Տիգլատ-Պալասար Ա-ի (1108—1080 թ. թ.) և Ասուր-Նասիրպալ Բ-ի տիրապետության ժամանակաշրջանում։

100 Փիկտոգրաֆիկ գրերն այժմ էլ գործ են ածվում Հյուսիսային Ամերիկայի մի քանի վայրենի ցեղերի մեջ, Ռուսաստանում՝ չուկչաների, յուկագիրների և այլ հյուսիսային ժողովուրդների մեջ։

Նմանատիպ հիերոգլիֆները, Աստվածոր Աոխայի կուլտուրայից միանգամայն անկախ, զարգացել էին Չինաստանում, Ճապոնիայում, որտեղ այսօրվա նրանց գրերն այդ հիերոգլիֆների վերափոխված ձևերի ընդօրինակումներն են։ Մանավանդ ուշագրության արժանի են Միջին Ամերիկայի հին հնդկացիական, այժմ չքացած ժողովրդի՝ Մեքսիկայում և Պերուում՝ գեղարվեստորեն զարգացած հիերոգլիֆները։

101 Խալդական, գլխավորապես վանյան, սեպաձև արձանագրությունների հայտաբերումը։ Դրանց հավաքումն սկսվել է 1825—26 թ. թ. գերմանացի գիտնական Փր. Էդ. Շուլցի ձեռքով։ Այնուհետև բազմաթիվ խալդական սեպագրեր հայտաբերվել են նաև անդրկովկասյան Հայաստանում, ուր առաջացել էին ուրարտական-խալդական նմանությունները։ Վերջին անգամ սեպագիր հուշարձան հայտաբերվել է Նոր-Բայազետում 1927 թ., Շուլցի հայտաբերումից ուղիղ 100 տարի անց։

102 «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1910 թ., № 6, էջ 574—576։

Դաշբուրունի նշանագրերի նկարը զետեղված է սույն աշխատության 1-ին հատորում (նկար 61) թյուրիմացությամբ, քանի որ հիշյալ հատորի ընթացքում ոչ մի խոսք չի ասվում այդ նշանագրերի մասին և նկարն էլ չէր առնված այդ նյութից։ Ուստի այս անգամ, երբ արդեն խոսվում է այդ նշանագրերի մասին, ստիպված ենք նրանց նկարը վերստին առաջ բերել ներկա հատորում։

103 Ξενοφῶντος—Κύρου Ἀνάβασις, IV s., 25.

104 *Moltke* — Briefe über den Zustand und die Begebenheiten in der Türkei

105 *Schweiger-Lerchenfeld*—Zwischen Donau und Kaukasus. s. 580.

106 *Le comte de Cholet* —Arménie, Kurdistan et Mésopotamie, p. 194.

107 Լ և ո ն  Ս ա ր գ ս յ ա ն—Այց Բյուրոց հայաստանին. Թիֆլիս, էջ 19։

108 Բարձր Հայքի տան նկարագիրը շարահյուսելիս՝ օգտվել ենք գլխավորապես Ս տ ե փ ա ն  Լ ի ս ի ց յ ա ն ի  ա շ խ ա տ ո ւ թ յ ո ւ ն ի ց — „Армянские жилища Высокой Армении", տպագրված „Известия Кавказского Историко-Археологического Института", հատ. IV, էջ 55—70, որտեղից շատ տեղում քաղվածքներն առաջ ենք բերում ամբողջական հատվածներ։ Բացի այդ, օգտվել ենք՝ Ե ր վ ա ն դ  Լ ա լ ա յ ա ն—Ջավախք Ա. հատոր, էջ 112—114, Թիֆլիս. նաև Փ ա ր ա մ ա զ  Տ ե ր-Մ ո վ ս ի ս յ ա ն—Հայ գյուղական տունը, Վիեննա, 1894 թ.։

109 *Ст. Лисициан* — К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам) — „Известия Кавказск. Историко-Археологического Института", Тифлис, том III, стр. 100—105.

Նույնի—Крестьянское жилище Мегринского района. Ibid. том VI, стр. 119—140.

110 Բացի վերոհիշյալ աղբյուրից, ղարադամի մասին հանգամանորեն խոսում է Փ ա ր ա մ ա զ  Տ ե ր-Մ ո վ ս ի ս յ ա ն ն  իր «Հայ գյուղական տունը» աշխատության մեջ, նաև Երվ. Լալայանը՝ «Սիսիան» ազգագրական տեսության մեջ։ Դիլիջանի մասին՝ նմանապես Երվ. Լալայանը—«Բորչալուի գավառ» ուսումնասիրության մեջ։

111 Այդպիսի ժայռակոփ դամբաններ հայտաբերվել են այժմյան Անատոլիայի, հին պատմական Կապադովկիայում, Ալաջա, Յոնուս-ատրյակ-չերեկչեր, Իսկիլիպ, Կալեճիկ, Ղարակոյունլու, Կարգան, Սողանլըդերե գյուղերի մոտ (RL X, 36)։



112 *G. Hirschfeld* — Die paphlagonischen Felsengräber. „Abhandl. Preussisch. Akademie". 1885.

*R. Leonhard* — 1) Paphlagonische Denkmäler „Jahresb. schles. Ges. f. vaterl. Kultur, 80.

2) Die paphlagonischen Felsengräber und ihre Beziehung zum griech. Tempel. 84 (107).

113 Վերջին տարիները գերմանացի հայտնի հնագետ Կարլ Շուխհարդը առարկում է atrium անվան այդ տեսակ բացատրության դեմ. նրա կարծիքով՝ ատրիում անունը գոյացել է ոչ թե լատինական ater—սև բառից, այլ դա էտրուսկական բառ է, որի համանիշն է Hatria—էտրուսկների հիմնած գաղութավայրը Պադուս գետաբերանում և Ադրիատիկ ծովի անունը (CSA, 118)։

114 Հ ա ս ա ն-բ ե ր դ (այսինքն Հասանի բերդը) այսօրվա հորջորջվող անունը թյուրքերին ժողովրդական լեզվում աղճատված բառ է. նրա ծագումն արաբականից է, Hisar Kalâ, որ նշանակում է «Կայծք ամրոց»։

115 Վերջերս՝ 1931 թ. հրատարակած „Armenien einst und jetzt" աշխատության 3-րդ գրքում, Լեման-Հաուպտը ենթադրում է, որ այսպես կոչված Խորխորյան սենյակները, իբր Սարդուր III-ի կառուցած, կարող են լինել նաև թագավորական գանձատուն (LHA, II, 854), հակառակ այն կարծիքի, որ նա արտահայտել էր նախորդ հատորում. դա մի ենթադրություն է, առանց փաստական ակնարկների։

116 Ն ե ֆ թ ե  կ ո ւ յ ո ւ—թյուրքերենով նշանակում է «Նավթի հոր», որպիսի անունով է ժողովրդի մեջ հորջորջվում այդ ժայռասենյակների խումբը. որովհետև այդ սենյակներից մեկում մշտապես տիրում է նավթի հոտ, իբր երևույթին հանքային, գուցե և անհայտ նավթային բաղադրություններից բխող։ Այսպես է կոչում այդ ժայռասենյակները առաջին անգամ հետազոտող գերմանացի գիտնական Շուլցը։

117 Археологическая экспедиция 1916 г. в Ван. Раскопки двух ниш на Ванской скале. Доклады Н. Я. Марра и И. Орбели. 1922 г. стр. 10.

118 Ե ր վ.  Լ ա լ ա յ ա ն—«Ջավախք», Ա. հատոր, 1897 թ., Թիֆլիս, էջ 48։

119 *Линч*—Армения, т. II, стр. 376.

120 Խիստ ուշագրավ է այն պարագան, որ մինչև այսօր էլ Վասպուրականի հայ ժողովրդական ավանդությունները խալդական հոյակապ գործերը՝ ժայռակոփությունը, ջրանցքները և այլ շինարարության վերաբերյալ՝ վերագրում են Շամիրամ թագուհուն և սրա անունով էլ կոչում են բազմաթիվ կառույցները՝ Շամիրամ-առու (Մենուաի ջրանցքը), Շամիրամ-Արթի, Շամիրամի պալատներ և այլն։ Այդ ավանդությունները գոյություն են ունեցել նաև հին դարերում, որովհետև տակավին Մովսես Խորենացին, հիմնվելով այդ ավանդությունների վրա, նույնպես Վանի հոյակապ հին կառույցները, արձանագրությունները, ինչպես և Վան քաղաքի (Շամիրամակերտ) հիմնադրությունը վերագրում է Շամիրամին։ Նորագույն պատմագիտական ու հնագիտական հետազոտություններով հաստատվում է, որ Շամիրամը եղել է իրապես պատմական անձնավորություն. նա եղել է ասորեստանյան Սամսի-Ադադ

թագավորի (825—811 թ.) ամուսինը և Ադադ-Ներարի թագավորի (811—783 թ.) մայրը։ Վերջինիս անչափահասության պատճառով, նա 5 տարի կառավարել էր պետությունը և ընդհանրապես աչքի ընկնող դեր էր ունեցել Ասորեստանի պալատական ու քաղաքական կյանքում։ Շամիրամի կերպարը, ամուսինը, որդին անշուշտ պատկերացումներ էին մղում մի կողմից՝ նոր ստեղծված ուժեղ մեդական թագավորության, իսկ մյուս կողմից՝ խալդերի դեմ Մենուայի և Ռուսայի թագավորների ժամանակ։ Նա այս հանգամանքներում, ինչպես կարծում է պրոֆ. Լեման-Հաուպտը, Շամիրամի անձնավորության հմայքն ատելության հիմք կարող էր դառնալ մեդացիների մեջ։ Վերջիններից էլ այդ ավանդությունն անցել է հայերին, որոնք այն ժամանակ մեդացիների իշխանության ներքո էին և ապա երբ առաջ խաղալով դեպի հարավ, գրավեցին խալդերի երկիրը, իրենց հետ բերին այդ ավանդությունը։ Այստեղ տեսնելով մի կողմից՝ առաջին շինարարության մնացորդներ և հսկայական վիթխարի կառույցներ, իսկ մյուս կողմից՝ այն գերիշխող դերը, որ ուներ խալդերի մեջ ընդհանրապես կինը՝ պաշտամունքի, կենցաղի և հասարակական-պետական կյանքում, ժառանգորդների զուգակցությամբ այդ ամենը կապեցին Շամիրամ թագուհու անվան հետ, որ ի հարկե, ոչ մի իրական-պատմական հիմք չուներ (LHA, I, 253—265)։

121 Археологическая экспедиция 1916 г. в Ван. Раскопки двух ниш на Ванской скале. Доклад И. Орбели, стр. 10.

122 Թ. Թորամանյան — Գեղամական ճարտարապետություն. Ա. Տեկորի տաճարը։

123 Մուսասիրը գտնվում էր Վանա և Ուրմիո լճերի միջև ընկած տարածության վրա, որ ներկայիս հյուսիսային Քրդստանն է, այն է՝ Հաքյարի գավառից մինչև Ուրմիո լճի հարավ-արևմտյան կողմերը (Ռևանդուզի շրջանը)։

123ա «Աշխարհագրական Հանդես», հատ. XXV, էջ 73 և 83։

124 Եթե չենք սխալվում, մեր գրականության մեջ առաջին անգամ Ստեփան Լիսիցյանն է կարծիք հայտնել այն մասին, որ հայ եկեղեցական ճարտարապետության ծագումը պետք է որոնել հայ գյուղական տան հին կոնստրուկտիվ ձևերում (Крестьянские жилища Высокой Армении — „Известия Кавказск. Историко-Археологическ. Института", IV, 63—69)։ Նույնպես հայ եկեղեցական ճարտարապետության մի այլ տիպը, բազիլիկան, որի ծագումը սովորաբար վերագրվում է հունա-բյուզանդական ճարտարապետությանը, նա փորձում է ապացուցել զուտ հայկական ճարտարապետության հիմունքներով։ Հայ եկեղեցական բազիլիկայի ճարտարապետական սկզբունքները նա գտնում է Բարձր Հայքի տան անբաժանելի մասը կազմող գոմի կոնստրուկտիվ ձևերի մեջ (անդ)։

125 Քսենոֆոնի ժամանակ Հայաստանը կազմում էր Պարսկաստանի բաղկացուցիչ մասը, ներկայացնելով 2 մարզեր, որոնք առանձին սատրապություններ էին՝ Արևելյան և Արևմտյան Հայաստան հորջորջումով։

126 Ξενοφῶντος Κύρου ἀνάβασις, գլ. IV, § 1—4 և գլ. V, § 9—10։

127 «Նոր-Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը» — ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի տեղեկագիր, № 2։

128 Արևմտյան հիշատակության Անի մայրաքաղաքն այժմ Կեմախ կոչվող քաղաքի ավերակ միջնաբերդն է։ Այդ հին Անի քաղաքի այժմյան Կեմախ անունը, ինչպես մի ժամանակ փորձում էր լեզվաբանորեն ապացուցել հայագետ Սեն-Մարտենը և վերջերս էլ ապացուցում է պրոֆ. Լեման-Հաուպտը, վկայում է, որ այդ Անի ավանում հին դարերում եղել է հայ Արշակունի թագավորական սեփական դամբարանը։ Արաբական Կեմախ անունը ծագում է կեմախ հայկական բառից, իսկ այդ հայկական բառն էլ իր հերթին յուրացված է ասորական kimachchu բառից, որ նշանակում է դագաղ, այն էլ կամ կավե կամ քարե, ինչպիսին սովորաբար գործ էին ածում բաբելոնացիներն ու ասորեստանցիները։ Այսօր էլ բնիկ հայերը և թյուրքերը տեղում արտասանում են այդ անունը ոչ թե Կամախ կամ Կեմախ, ինչպես այդ գրվում է պաշտոնական լեզվով, այլ, ինչպես պնդում է պրոֆ. Լեման-Հաուպտը, կըմախ, առանց հնչյուն ձայնավորի առաջին վանկում և շեշտը դնելով երկրորդ վանկի վրա։

129 Դասնի բերդի մասին տես ծանոթ. 139։

130 Բերդի հիմքում կենդանի կույս աղջիկ թաղելու ժողովրդական ավանդությունը գոյություն ունի նաև Եվրոպայի ժողովուրդների մեջ՝ կամուրջների ու քաղաքային պարիսպների վերաբերմամբ, որոնց պատերի մեջ կենդանի թաղում էին, բաց տեղում սառցելների, ծնողների միմիակ երեխաներին. այդ տեսակ ավանդությունն այնքան հնությունից մնացած աղոտ հիշողություն է մի ժամանակ գոյություն ունեցող մարդկային զոհաբերությունների մասին։

131 Մ. Աբեղյանն իր «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության մեջ ժողովրդական այդ ստուգաբանությունը բացատրում է նրանով, որ Սասունը—սարսափը առակ քարերի մեծությունից, բերդի վիթխարությունից է առաջ եկել և ժամանակավոր տատանվող ահ ու ցասում լցնելով շրջապատի բնակիչների համար (ԱՀ, XIV, 51)։ Այդ կարծիքը գտնում ենք անհամապատասխան, քանի որ այդ բերդի կառուցումը և գոյությունը, ըստ ժողովրդական դյուցազներգության, կապված է միմիայն տիրապետող իշխանների հետ (ներկա դեպքում Սանասար ու Բաղդասար), որոնք բերդի սարքում բնակեցնում են իրենց նեթական սեփական ժողովուրդը, որն այդ շինության մեջ ոչ մի մասնակցություն չի ունեցել և ահ ու սարսափի զգացմունք է տածել դեպի այդ բերդը կառուցող և իրենց վրա տիրող իշխանները։

132 և 133 Մ. Աբեղյան — «Հայ ժողովրդական վեպը». ԱՀ, XIV, 49, 50։

134 և 135 «Նոր-Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը» — (ՀՍԽՀ Գիտությունների և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագիր № 2)։

136 Թ. Թորամանյան — Նախաքրիստոնեական հայ ճարտարապետություն. «Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի» ՀՍԽՀ, 1921—22, էջ 119—120, Էջմիածին։

137 Փառախոտի ու Ծոլակերտի — Զոլակերտի տեղագրությունը, առանց այդ կոչելու Դուշքուբունի ավերակներին վերաբերող որևէ անունության հետ, նաև նրանց անունների ստուգաբանությունը տալիս է պրոֆ. Հ. Մանանդյանն իր „О торговле и городах Армении" աշխատության մեջ (էջ 107—108), նմանապես իր «Հայաստանի հին ճանապարհները» ուսումնասիրության մեջ— «Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի» № 3, էջ 69—71։

138 Մեսրոպ եպիս. Սմբատյան — Ցոլակերտ. «Արարատ» ամսագիր. 1910 թ., № 6, հունիս, էջ 574—576։

139 Դասնիի ամրոցի ավերակները գտնվել են մի քանի կերպարանք ճա-

նապարհորդների ուշադրությունը. ուշագրավ են Ֆրանսիացի Դյուբուայի և անգլիացի Կեր Պորտերի նկարագրությունները։ Դյուբուայի՝ այս նկարագրությունները հիմք ունենալով այդ նշանավոր ամրոցի վրա երկար կանգ է առնում Ղևոնդ Ալիշանն իր «Այրարատ» ստվարահատոր աշխատության մեջ։ Սակայն սրա տված հատակագիծը (ըստ Դյուբուայի), մանավանդ միջնաբերդի պարիսպների ուղղությունն այնքան էլ ճիշտ չէ։ Այս տեսակետից միանգամայն հարազատ պատկեր է տալիս ճարտարապետ Բունիաթյանի վերջերս տեղում մանրամասնորեն հետազոտած ու ճշտիվ հանած հատակագիծը։

140 *Б. Богаевский* — Крит и Микены, стр. 203—205.

141 *Ж. Контено и А. Захаров* — Хетты и хеттская культура, стр. 50—57, 77—78, նաև EMGA, II.

142 Ի. Մեշչանինովի՝ „Циклопические сооружения Закавказья" աշխատության (ИГАИМК, т. XIII, вып. 4—7, 1932 г.) մեջ բազմաթիվ ամրոցների տեղադրությունը նույնպես կապում է Նաիրի երկրում խալդական արշավանքների ժամանակ տիրող տոհմա-ցեղային հասարակական կարգի հետ։

143 Ξενοφῶντος—Κύρου Ἀνάβασις, IV, 3, 5.

144 Վայրի ցորենն ու գարին բուսել են նաև Հայկական լեռնաշխարհի հարևան Բաբելոնաստանում, ինչպես վկայում է բաբելական հին պատմագիր Բերոզը, որն ապրում էր Սելևկյանների տիրապետության սկզբնական շրջանում։ Այդ հիման վրա շատ գիտնականներ այն կարծիքն են պաշտպանել, թե երկրագործության, հատկապես հացահատիկների առաջին մշակման հայրենիքը եղել է Բաբելոնաստանը։

Վայրի ցորենի նմուշներ առաջին անգամ հայտաբերվել են 1906 թ. Պաղեստինում, այնուհետև նման նմուշներ հայտաբերվել են նաև Սիրիայում Միջագետքում և ապա Կիլիկիայում։ Հայաստանում առաջին անգամ վայրի ցորեն հայտաբերել է Երևանի Գյուղատնտեսական Ինստիտուտի պրոֆ. Մ. Թումանյանը։ Վայրի ցորենի նմուշները Հայաստանում տարածված են Շորբուլաղ—Զրաշեն, Աղջաբերդ—Գյարմիչլու տարածությունների վրա և բոլոր տեսակներով, որոնց թիվը հասնում է ավելի քան 50-ի, գերազանցում են վերոհիշյալ բոլոր երկրներից։

Ակադեմիկոս Ն. Վավիլովը, որն ուսումնասիրել է նաև Հայաստանի հացահատիկային կուլտուրան, սահմանում է ամենագլխավոր դաշտային, բանջարանոցային ու այգեգործական բույսերի հինգ հիմնական օջախներ—ա) հարավ-արևմտյան Ասիան, ուր ի միջի այլոց մտնում է նաև Հայկական լեռնաշխարհը, բ) հարավ-արևելյան Ասիան, գ) Միջերկրածովյան ավազանը, դ) հյուսիսային Աֆրիկան և ե) միջին Ամերիկան (Մեքսիկա և Պերու)։ Անա այս օջախներից հացահատիկների կուլտուրան տարածվել է դեպի այլ երկրներ՝ միգրացիայի (գաղթաշարժերի) միջոցով։ Մինչդեռ պետք է ընդունել հացահատիկների և պտուղների ընտանեցման կամ կուլտուրացման ոչ թե միգրացիայի հանգամանքը, որ ինքնին գիտականորեն երևույթ պետք է համարել, այլ հասարակական զարգացման ներքին անհրաժեշտությունը. երբ մարդը նվազ, թույլ ինտենսիվ անտեսության ձևերից անցնում է դեպի ավելի ուժեղ ինտենսիվ ձևերի։ Ուստի այդ տեսակետից մի կենտրոնական երկիր համարել բույսերի կուլտուրացման վերաբերմամբ, միանգամայն անհարիր է։ Շատ ճիշտ է նկատում գերմանացի գիտնական Շմայխերը (RL, XI), որ երկրագործական կուլտուրայի սկզբնական զարգացումը պետք է համարել յուրաքանչյուր այն երկիրը, ուր



մարդն ստանձնապես առաջադիմել էր և ուր եզը, այծը, ոչխարը, խոզը, այսինքն մեր ընտանի անասունները, գոյություն ունեին նախնական ժամանակները նույնպես վայրի վիճակում, ինչպես և վայրի վիճակում բուսնում էին ցորենն ու գարին, որոնք, ուրեմն, նմանապես կարող էին ենթարկվել ընտանեցման։

145 *Մ. Տեր-Մովսիսյան* — «Արարատ» ամսագիր, 1912 թ., № 3, էջ 233—239։

146 «Հանդես Ամսօրյա», 1893 թ., էջ 84—85։ Շամիրամ-առու ջրանցքի ավելի մանրամասն նկարագիրը տալիս է պրոֆ. Լեման-Հաուպտը. LHA, II, 95—109։

147 *И. И. Мещанинов* — Халдоведение, էջ 63։ Ի. Մեշչանինովը այդ ջրանցքի կառուցումը վերագրում է խալդական Ռուսա III թագավորին, սակայն պրոֆ. Լեման-Հաուպտը ավելի մանրամասն տեղագրական ու արձանագրական ուսումնասիրությամբ ապացուցում է, որ Քեշիշ-գյոլի ջրանցքի կառուցումը պատկանում է Սարդուր III-ի որդի Ռուսա I-ին (733—714 թ. թ.), որը, շարունակելով իր հոր շինարարական գործը, մայրաքաղաքը Թոփրակ-կալե տեղափոխելով, այդ ջրանցքը կառուցել է հատկապես նոր մայրաքաղաքի կարիքների համար, նրա ստորոտի այգիները, այսօրվա Այգեստանը, ոռոգելու նպատակով (LHA, II, 42—47)։

149 Herodoti historiae, V. 49.

150 *И. Мещанинов* — Халдоведение, էջ 28։

151 Ձիու վերաբերմամբ այդ հինավուրց ֆեոդալական հայացքը մինչև անցյալ դարը զարմանալի հարազատությամբ պահպանվել էր Թյուրքիայում, ուր ձի հեծնել կարող էին միայն մահմեդականները, այսինքն նվաճող, տիրապետող ցեղային տարրը, իսկ քրիստոնյաները ու հպատակները իրավունք չունեին ձի հեծնելու։

152 Հին ֆեոդալական Հայաստանում, Արշակունյաց հարստության շրջանում, ինչպես բացահայտ է հայ պատմագիրների վկայություններից, ձիավոր զորքը բաղկացած էր ազնվականական արտոնյալ «ազատների» դասակարգին պատկանողներից, ուստի և այդ ձիավոր զորքը կոչվում էր «ազատագունդ» կամ «ազատաւորական բանակ» (Проф. Я. Манандян „Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении", 1932, էջ 6—8)։

153 *Фридрих Энгельс* — Происхождение семьи, частной собственности и государства, 1932 թ. Թարգմ. գերմաներենից, էջ 164։

154 Ibid, էջ 166։

155 «Սրա (Արտավազդ թագավորը, որդի Արտաշես թագավորի) մասին պառավները ևս պատմում են, թե նա բանտարկված է մի այրի մեջ, երկաթյա շղթաներով կապված, և թե երկու շուն միշտ կրծում են նրա շղթաները, և նա աշխատում է դուրս գալ ու վերջ տալ աշխարհին, բայց թե դարբինների մուրճի ձայնից զորանում են, ասում են, կապանքները. Սրա համար նույնիսկ մեր ժամանակում դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրը երեք կամ չորս անգամ խփում են սալին, որ զորանան, ասում են, Արտավազդի շղթաները»—Մովսես Խորենացի՝ Հայկական պատմություն. աշխարհաբար թարգ. Մալխաս Ստեփանյանի, գիրք Բ, գլ. ԿԱ, էջ 175։

Վերոհիշյալ առասպելը և դարբինների՝ սալին մուրճով զարկելու սնոտիապաշտությունը մինչև վերջին ժամանակները պահպանվել են Հայկական մի քանի վայրերում։ Բնորոշ է, որ նույն տեսակ առասպելական ավանդություն

գոյություն ունի և Վրաստանում, բայց Ամիրանի կոչվող հերոսի անվան հետ կապված։

156 J. Karst — Armeno-pelasgica. Geschichte der armenischen Philologie. 1930. Heidelberg, էջ 76։

157 Н. Марр — Яфетические элементы в языках Армении. „Изв. Академии Наук". СПБ, 1911 г.

158 Фридрих Энгельс — Происхождение семьи, частной собственности и государства.—1932 г. էջ 167։

159 Տել-էլ-Ամառնա — Միջին Եգիպտոսի հնավայրերը քաղաքի ավերակներն են. այդ անունը ծագել է նրա մոտ ապրող բեդուինական ցեղի։ այդ քաղաքը կառուցված է եղել Ամենոֆիս IV փարավոնի ձեռքով և կոչվում էր «Ախետ-Ատոն», այսինքն «Արևի հորիզոն»։ Ակերակ քաղաքի բովանդակ դիրքը պահպանվել է բավականին լավ վիճակում, որովհետև Ամենոֆիսի մահվանից հետո քաղաքը բոլորի թողի էր արվել և այլևս երբեք բնակություն չէր ունեցել, որպես մի անիծված ու հերետիկոս (Ամենոֆիսը արևպաշտական նոր կրոն էր ստեղծել) քաղաք։ Ամարնայի ավերակների հնագիտական արժեքը չափազանց մեծ է. այնտեղ պահպանվել են եգիպտական արվեստի ու ճարտարապետության և ընդհանրապես նյութական կուլտուրայի հարուստ մնացորդներ, որոնց մեջ աչքի է ընկնում հարուստ պալատական գրադարանը, բաղկացած բազմաթիվ պետական գրագրություններից՝ կավե տախտակների վրա։

160ա Ակկադ — այդ անունով էր կոչվում «Հյուսիսային Բաբելոնիան» տարբերելու համար «Հարավային Բաբելոնիայից», որ հայտնի էր Շումեր (Սումեր) անունով։ Հին այդ անունը ծագել էր Ակկադ քաղաքից, որ գտնվում էր Եփրատի ձախ ափին։ «Աքքադական Թագավորական տոհմի իշխանության» ներքո այդ քաղաքը եղել է կառավարական ու պետական մայրաքաղաք և մի որոշ ժամանակ էլ գլխավոր քաղաքը՝ ամբողջ Միջագետքի համար։

160բ Fr. Schachermeyr — Materialien zur Geschichte der ägäischen Wanderung in Kleinasien „Athenische Mitteilungen", XLI, 1928.

161 Tabula Peutingeriana — քարտեզը 14-րդ դարում գտել է Վիեննայի հումանիստ Կոնրադ Ցելտեսը և հանձնել Աուգսբուրգի գիտնական Պեուտինգերին, որի անունով էլ կոչվել է այդ քարտեզը։ Ենթադրվում է, որ քարտեզի սկզբնական բնագիրը կազմվել է 4-րդ դարի երկրորդ կեսում՝ համեմատական աշխարհագետ Կաստորիուսի ձեռքով։

162 և 163 Проф. А. Я. Манандян — О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Эривань, 1930 г. էջ 84—88, 158—159։

164 Նույն. էջ 10—11։

165 Այդ դրամները ներկայումս պահվում են Փարիզի Ազգային Թանգարանում՝ Աքեմենյան շրջանի դրամների ժողովածուի շարքում։ Այդ դրամների ուսումնասիրությունն է նվիրված E. Babelon-ի մանրամասն աշխատությունը՝ Les monnais de perses Achéménides, les satrapes et les dynasties tributaires. Փարիզ, 1893 թ., որտեղ այդ դրամները նա վերագրում է Կիլիկիայի քաղաքներին։

166 Фр. Энгельс — Происхождение семьи, частной собственности и государства. Москва, 1932 г., էջ 167—168։



167 «Եթէ կին ոք արար և ամուսն պատահեսցի, և այրն հանցէ զնա վասն յամեղութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ...» («Կանոնագիրք Հայոց» խմբ. Արսէն Ղլտջյանի, 1913 թ., Թիֆլիս, կանոն Ե, էջ 64)։

«Եթէ ոք կին յանէ եղանիցի, կայցեն և անդրէն յայր իւր տացեն, և մանաւանդ, որ վարձկանոք իցէ վարձեալ և ոչ բաղարար, թէպէտ և վաճառեալք և յաղախնութիւն կայցեն...» (Անդ. կանոն Զ., էջ 65)։

168 «Եղբն ամանք և գվոշխս դանէկանաց իւրեանց, կէսք վաճառեսցեն ընկերաց իւրեանց, որպէս ծառայս, և այլքն առեալ վարձանս կանանց իւրեանց ամբարշտաւալք 'ի բռնութեան, անարգարութեամբ անձանց իւրեանց մեղանչ» (Ibid. կանոն Դ., էջ 108)։

169 «Յարժամ ազատք ըէւրեանց գերդ և գմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն, զմատնդատարս եկեղեցւոյ ջանան 'ի ծառայութիւն և 'ի աղախնութիւն արկանել... Արդ եթէ ոք ազատութեան ակամբ հայեսցի և զազատ մանկունս եկեղեցւոյ 'ի բամբել և ի վիճակ ծառայութեան արկցէն, այնպիսիքն ի սուրբ լուսաւորչի օրհնութենէն և մեռոն ժողովուոյ հեռի կացցէն...» (Անդ. հոդ. Թ., էջ 126)։

170 «Մեր չեն հասեալ 'ի ժողովրդականաց յայն, որ ի ներքութենէ հարկաց անձինք հանեն 'ի վաճառ և առեալ ինչ 'ի գայութիւն լեցի և վաճառեցցէ զեկեղեցին...» (կանոնք Պարտաւայ ժողովոյն, 768 թ. հոդ. ԺԴ. անդ., էջ 169)։

171 «... և 'ի ծառայս, որ կու գնեն ու 'ի յերկրէն հանեն, նայ իրաւունք կուտան, նայ չտան իրաւունք, ապա թէ զբիտոնէ ծառայք գնեն նա երդնուն, որ առնելի չծախեն և ոչ հենց մարդոյ, որ կամենայ առնելի ծախելու Դեանց Ալիշան — «Միսաչար»։

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Այստեղ առաջ են բերված, բացի բնագրում և ծանոթագրություններում հիշատակված աղբյուրներից, նաև նյութի վերաբերյալ կարևորագույն աշխատությունների անունները ըստ համապատասխան լեզուների*


## Ա

1. *Arzruni A.* prof. Über das Vorkommen von Zinnstein und die Bronzeindustrie des Kaukasus. „Verhandl. d. Berlin. Gesellschaft für Anthrop., Ethnol. und Urgeschichte. 1884, s. 58.

2. *Tallgren A. M.* — Die Kupfer=und Bronzezeit in Nord und Ostrussland. Helsinglors, 11.

3. *Schachermeyr. Fr.* — Herkunft und Verbreitung des Eisens. „Athenische Mitteilungen", XLI, 1916. *Հրատարակված է 1928 թ., էջ 409.*

4. *Blinkenberg* — Mémoires des Antiquités du Nord, 1925. ff. 191.

5. *Andrée, J.* — Bergbau in der Vorzeit. 1922.

6. *Undset.* — Das erste Auftreten des Eisens in Nordeuropa, deutsch von J. Mestorf, 1882.

7. *Montelius, O.* — Die chronologie der ältesten Bronzezeit in Norddeutschland und Skandinavien. 1900.

8. *Much, M.* — Die Kupferzeit in Europa, 1893.

9. *Tröltsch, v. E.* — Die pfalbauten des Bodenseegebiees, 1902.

10. ***Шмидт*** — Металлургия в мифе и религии древней Греции. „Известия Государственной Академии Истории Материальной культуры", т. IX, вып. 8—10.

11. *Ebert, M.* — Kaukasische bronzezeitliche Kultur, Reallexikon, B. VI, s. 264—266.

12. *Möller Georg.* — Die Metallkunst der alten Aegypten. 1925.

13. *Feldhaus Franz, M.* — Die Technik der Antike und Mittelalters. Posdam. 1931.

14. *Belk Woldemar* — Die Erfinder der Eisentechnik. „Zeitschr. für Ethnologie". 40, 1908.

15. *Besk Ludwig* — Geschichte des Eisens. 1903.

16. *Niemann, W. B.* — Das Eisen im alten Aegypten „Technik und Kyltur", XVII, 1926, 11. 4.

17. *Amelia Herz* — L'histoire d'outil en fer. „L'anthropologie". 1925.

18. *Quiring Heinrich* — Die Herkunft des ältesten Eisen und Stahls. Forschung und Fortschritte, 1933, № 9.





19. *Nils Aberg* — Bronzeitliche und früheisenzeitliche Chronologie. III Theil Kupfer und frühbronzezeit. Stockholm, 1932.

20. ***А. С. Уваров*** — К какому заключению о бронзовом периоде приводят сведения о находках бронзовых предметов на Кавказе. „Труды V археологического с'езда в Тифлисе", стр. 1—9.

21. ***Пиотровский*** — Древне-египетский термин „металл" и др., „Известия Государственной Академии Истории Материальной культуры", т. IX, вып. 3.

## Բ

1. ***Марр, Н. Я.*** — Раскопки в Эриванской губ. „Отчет Имп. Археологич. Комиссии за 1892 г.". СПБ. 1894, стр. 75—86.

2. ***Реслер*** — Ганджинские могильники. ОАК. 1891 г., стр. 125 и 176; 1895, стр. 57—58, 182; 1897 г. стр. 82, 170, 1898 г., стр. 68.

3. ***Ռեսլերի պեղումները Խոջալուում.*** „Verhandlungen der Berliner Gesellschait für Anthropologie, Ethnologie, und Urgeschichte. ***1895 թ., էջ 549, 1896 թ., էջ 178. № 7, էջ 60. 1898 թ., էջ 441. 1899 թ., էջ 246—247.***

4. *Duhn, W.* — Rot und Tod. „Archiv für Religionswissenschaft." 1906, IX.

5. *Bayren, F.* — Redkine Lager. „Zeitschrift für Ethnologie".—Verhandlungen, 1882.

6. *Bayern, F.* — Untersuchungen über die ältesten Gräber und Schotzfunde in Kaukasien. Zeitschrit für Ethnologie. Supplement. Berlin, 1885. B. XVII.

7. *Bayern, F.* — Contribution à l'archeologie du Caucase, Lyon, 1882.

8. ***Бобринский, А.*** — Отчет Археологической Комиссии за 1891 г., Раскопки у ст. Делижан.

9. ***Спицын, А. А.*** — Некоторые закавказские могильники. „Известия Археологическ. Комиссии", вып. 29.

10. Археологические исследования ***Э. Реслера*** в Елисаветпольской губ. 1901 г. „Известия Археологическ. Комиссии", вып. 12 и 16.

11. ***Мещанинов, И.*** — Краткие сведения о работах археологической экспедиции в Нагорный Карабах и Нахкрай в 1926 г. „Сообщ. Академия Истории материальной культуры", т. I, 1927 г., стр. 217—240.

12. ***Скиндер, В. А.*** — Раскопки от Елисаветполя до Чавдар. 1905 г. „Известия Археологической Комиссии", вып. 29.

13. ***Шарифов, Д.*** — Раскопки в Ялойлу—тапа (Нухинск. уезд, 1926 г.). Материалы Азгосмузея, вып. 1, Баку, 1927.

14. ***Т. Пассек и Б. Латынин*** — Ходжалинский курган № 11. „Известия О-ва обследования и изучения Азербайджана". № 2, Баку, 1926 г.

15. ***Т. Пассек и Б. Латынин*** — Очерк по истории Северного Азербайджана. „Изв. О-ва обсл. и изуч. Азербайджана" № 3. Баку, 1926 г.

16. *Բարայան, Հ. — Խոջալուի գերեզմանները. ՍՀ.* 1.

17. ***Ерицов, А.*** — Об археологических разысканиях в Лорийском приставстве летом 1871 г. „Известия Кавказск. Отд. Русск. Географического Общества", т. I, вып. 2, 1872 г.

18. *Ерицов. А.* — Археологические разыскания в Тифлисск. уезде „Изв. Кавк. Отд. Русск. Географ. Общества“. т. 1, вып. 4, 1872 г.

19. *J. de Morgan* — Les nécropoles préhistoriques de l'Armenie russe. „Revue Archéologique“. III, 16. 1890, II, 176 ff.

20. *R. Virchow* — Fundstücke aus Grabhügeln bei Urmia. „Zeitschrift für Ethnologie“, 32. 1900. 609.

21. *O. G. Wesendonk* — Archeologisches aus dem Kaukasus. „Archeologischer Anzeiger“. 1925, 43 ff.

22. *Belck, W.* — Untersuchungen und Reisen in Transkaukasien, Hoch-Armenien und Kurdistan. „Globus“. LXIII, 1893.

23. *Belck W.* — Archeologische Forschungen in Armenien. „Zeitschr. für Ethnologie“. XXV.

## Գ

1. *Ludwig Noiré* — Das Werkzeug und seine Bedeutung für die Entwickelungsgeschichte der Menscheit. 1880.

2. *Undset Jngvald* — Die ältesten Schwertformen. „Zeitschr für Ethnologie“. 1896, Heft 1, s. 27.

3. *Max Jähns* — Entwickelungsgeschichte der alten Trutzwaffen.

4. *Bonnet, H.* — Die Waffen der Völker des alten Orients. 1926. Leipzig.

5. *Volf Walthér* — Die Bewaffnüng der altägyptischen Heeres. 1926. Berlin.

6. *Hunger Johannes* — Heerwesen und Kriegsführung der Assyrer auf der Höhe ihrer Macht. „Der alte Oriant“. XII, 4.

7. *Forres* — Dolche und Schwerter in ihrer Formentwicklung. Leipzig, 1905.

8. *Nauffer, O.* — Der Rennwagen im altertum. Leipzig, 1904.

9. *Unger Eckhard* — Der Rennwagen in Vorder asien. 1929.

10. *Studniczka Ferdinand* — Der Rennwagen in syrisch-phönikiçshen Gebiet. Arch. Jahrb. 22. 1907, s. 146—196.

11. ***Гольмстен, В. В.*** — К разработке приемов исследования вещественных памятников.—Меч и Сабля. „Сообщения Гос. Акад. Истории материальн. культуры“. 1932 № 11—12.

12. ***Марр, Н. Я.*** — Средства передвижения, орудия самозащиты и производства в доистории. Ленинград, 1926.

13. ***Арцыховский, А. В.*** — К методике изучения серпов. „РАНИОН“ труды секции археологии, т. IV, 1928.

14. ***Арцыховский, А. В.*** — Социологическое значение эволюции земледельческих орудий. „РАНИОН“—труды социологическ. секции, т. 1, 1927.

15. *Adler, B.* — Pfeil und Bogen in Kult und Sage „Der Weltkreis“ 1931. Heft 7—8, s. 1—13.

16. *Gotz, B.* — Pfeil und Bogen als erotische symbole. „Der Weltkreis“, 1931. H. 9—10, s. 139—148.



17. *Norpeа* — Zur Genese der primitiven Pflugtypen. Zeitschrift für Ethnologie, 51, 1919.

18. ***Веселовский, Н. И.*** — Роль стрелы в обрядах и ее символическое значение. „Записки Восточн. Отд. Русск. Археологическ. Общества“. 1921, XXV, стр. 273—292.

## Դ

1. *Wirchow, R.* — Ueber die kulturgezchichtliche Stellung des Kaukasus. „Abhandlungen d. Königl. Akademie d. Wissenschaften zu Berlin“. 1895. *Սրա հայերէն թարգմանութիւնը՝ «Ազգագրական հանդէս», հատ. I.*

## Ե

1. ***Мещанинов, И.*** — Змея и собака на вещевых памятниках Кавказа. „Записки Коллегии востоковедов при Азиатском Музее РАНИОН 1925 г., т. I, стр. 244—256. Ленинград.

2. ***Снегирев, И. Л.*** — О некоторых псевдо-хеттских статуетках. „Сообщ. Гос. Академии Истории Материальной Культуры“, VIII, стр. 28—36.

3. ***Мещанинов, И.*** Prof. d-r. W. Antoniewicz — (библиография) — О закавказских бронзовых статуетках Виленского музея. „Сообщения Гос. Акад. Истории Материальн. Культуры“, 1931 г., № 6, стр. 30.

## Է

1. ***Т. Пассек и Б. Латынин*** — К вопросу о керамике из Ялойлу-Тапа. „Изв. О-ва обслед. и иссл. Азербайджана“, 1927 г., № 4.

2. ***Мещанинов И. И.*** — Орнамент сузских чаш первого стиля. „Изв. Акад. Ист. Материальн. Культуры“, т. V, стр. 412—448.

3. ***Ушков, А. М.*** — Керамика Востока. „Изв. Об-ва обслед. и исслед. Азербайджана, № 2.

4. ***Городцов, В. А.*** — К выяснению древнейших технических приемов гончарного дела. Журнал „Казанский Музейный Вестник“, 1922 г., № 2, стр. 178—187, Казань.

5. ***Зеленина, Д. К.*** — Примитивная техника гончарства „налепом“ в Восточной Европе. „Этнография“ 1927 г., № 1, стр. 87.

6. ***Меликсет-Беков, Л.*** — Коллекция глиняных сосудов и бронзовых украшений, найденных случайно в сел. Авранлу (в Цалках). Известия Кавк. Института Арх. и Истории“. 1926 г., т. IV.

7. ***Путятин, П. А.*** — Орнаментика гончарного искусства. Труды VI археол. с'езда, т. I, Одесса, 1886 г.

8. *Wesendonk, O. G.* — Fenstergefässe im Kaukasus. „Praehistorische Zeitschrift“. B. XVIII, 1927. 3/4 Heft.

9. *Johannes Bochlau* — Die spirale in der Bandkeramik. „Praehistorische Zeitschrift. B. XIX. 1928, 1/2 Heft, s. 55—96.

10. *Menghin* — Die ethnische Stellung der Ostbandkeramischen Kulturen Tocharer und Hettiter. „L'academie des Sciens d'Ukraine", Hruschewsky Festschrift. Kiew, 1928.

11. *Andrae, W.* — Farbige keramik aus Assur und ihre Vorstufen in Altassyr. Wandmalereien. Berlin, 1923.

12. *Dannerberg K.* — Die Töpferei der Naturvölker Südamerikas. „Archiv für Anthropologie, XX, 1925, № 2—3.

13. *Wilhelm, A. Jenny* — Zur Gefässdekoration des Donauländischen Kulturkreises. Mitt Anthrop. Geselschaft. Wien. 1928.

14. *Wosinsky* — Jnkrustierte Keramik.

15. *Pottier, M. E.* — Antiquités de la Susiane, II. 1927.

16. *Pottier, M. E.* — „Memoires de la Société Nationale des Antiquaires de France", LX, Paris, 1901, *էջ 1—16, Հնագետ* De Baye-*ի ձեռքով Կովկասից Փարիզ տարված կերամիկայի 23 հատորների նկարագրությունը։*

17. *Franchet* — La ceramique primitive.

18. *Genouillac* — Ceramique Cappadocien. 1926. Louvre, Dép. Antiq. Orient. Série Archeol. I, 2. 1927.

19. *Grempler* — Die weisse Füllmasse in Einritzungen praehistorischer Thongefässe. „Verhandl. d. Berl. Gesselischaft für Anthr. Ethnologie und Urgeschichte". 1895, s. 462.

20. *R. Buchholz* — Über die Durchlässigkeit vorgeschichtlicher Thongefässe und deren hauswirtschaftliche Verwendbarkeit. „Verhandl. d. Berl. Gesellsch. f. Anthrop, Ethnol. u. Urgesch., 1891, 259.

21. *Հին Նախիջևանի հնությունները. Կերամիկա. «Արարատ» ամսագիր, 1893. № 6, էջ 557—558.*

22. *Առաքել — Հոգու փարչը. «Բանվոր» (Լենինական), 1922.*

## Ը

1. *Ungnad, A.* — Die Künst des Tell-Halaf. „Pantheon", 1931. Heft 4.

2. *Reber, T.* — Die Stellung der Hettiter in der Kunstgeschichte. „Sitzungsberichte d. Königl. Bayer. Akademie d. Wissensch. Philosoph.—phil. und historische Klasse". 1910, 13. Abhandl.

3. *Curtius, L.* — Studien zur Geschichte der altorientalischen Kunst, I. „Sitzungsb, d. Königl. Bayer. Akademie d. Wissensch.". phil.—hist. Klasse. 1912.

4. *Ernst v. Stern* — Die praemikenische Kultur in Südrussland Moskau. 1906.

5. *Schuchhardt, C.* — Das technische ornament in den Augängen der Kunst. „Paehistorische Zeitschrift". Bd. I und II.

6. ***Мещанинов, И. И.*** — Закавказские поясные бляхи. „Сборник материалов для описания местн. и племен Кавказа". 1926, вып. 45, стр. 195—232. Махач-Кала.

7. ***Гёрнес, М.*** — Культура доисторического прошлого, пер. с нем. 3 т. Москва, 1913—14 г.

8. ***Верман*** — История искусств, т. I.

9. „*Атеист*„ — *№ 15, 1927. Ամսագրի նշված №-ը զբաղված է խաչի ծագման վերաբերյալ հոդվածներով։*

10. *Եղեկյան Ա. — Սվաստիկա. Ազ.* XVII.

11. *Ewans, A. J.* — Die europäische Verbreitung primitiver Schriftmalere und ihre Bedeutung für d. Ursprung der Schreibschrift. „Die Anthropologie und die Klassiker". 1910, Heidelberg, übersetzt von J. Hoops

12. *Messerschmidt Leopold* — Die Entzifferung der Keilschrift. „Der Alte Orient". V, 2.

13. ***Мещанинов, И.*** — К вопросу о стадиальности в языке и письме. „Известия Гос. Акад. Ист. Мат. Культуры", т. VII, вып. 5—6.

14. ***Мещанинов, И.*** — Закавказские иероглифы. „Сообщения Гос. Акад. Ист. Мат. Культуры", 1932, № 3—4.

15. ***Мещанинов, И.*** — Загадочные знаки Причерноморья. „Изв. Гос. Акад. Ист. Мат. Культуры", 1933, вып. 62.

16. ***Праводлюбов, В. А.*** — История письма. Госиздат. Москва, 1921.

17. ***Вейле Карл*** — От бирки до азбуки. Пер. с нем. Д. Анучина. Москва, 1923 г.

18. *Hoernes* — Urgeschichte der bildenden Kunst. 1898.

19. *Առաքել — Այծեղիր. «Մարտակոչ» (Թիֆլիս), 1927 թ. և «Բանվոր» (Լենինական), 1927 թ.*

## Թ

1. *Walter Schulz* — Das germanische Haus in der vorgeschichtlichen Zeit. 1913.

2. *Behn* — Bei Frage zur Urgeschichte des Hauses. „Praehistorishe Zeitschrift. B. XI, XII.

3. *Schlitz, A.* — Der Bau vorgeschichtlichen Wohnanlagen. MAGW, 33. 1903.

4. *Stephani, K. G.* — Der älteste deutsche Wohnbau. 1902—03.

5. *Henning, R.* — Das deutsche Haus. 1882.

6. *Lichtenberg* — Haus, Dorf, Stadt. 1909.

7. *Belck, W.* — Bauten und Bauart der Chalder. „Verhandlungen d. Berl. Gesellsch. f. Anthrop., Ethnologie und Urgeschichte". 1895, s. 602.

8. *Oelman, F.* — Haus und Hof in Altertum. 1927.

9. *Leonhard, R.* — Die paphlagonischen Felsengräber und ihre Beziehungen zum griechischen Tempel. „Jahresbericht. Schles. Gesellsch. für vaterländ. Kultur" 84. 1907.

10. *Huntington, E.* — Weitere Berichte über Forschnngen in Armenien und Comagene. „Zeitschr. für Ethnologie". 1901, Heft 4.

11. *Brandenburg, E.* — Ueber Felsarchitektur in Mittelmeergebiet. Leipzig. 1915.

12. ***Шагинян Мариетта*** — Армянская деревня. Подножье Алагёза. „Известия ЦИК СССР и ВЦИК", 1926, № 162.

13. ***Ерицов, А.*** — Материалы по экономическому быту государств.

крестьян Казахского уезда. т. II, ч. III. (Զետեղված է, ի միջի այլոց, Ղազախի հայ գյուղական տան նկարագիրը).

14. *Strzygowski, J.* — Die Baukust Armenier und Europa, I—II W. 1919.

15. *Durm, J.* — Baukunst der Griechen.


## Ժ

1. *Andrae, W.* — Die Festungswerke von Assur. Leipzig. 1913.

2. *Billerbeck Adolf* — Die Festungsbau im alten Orient, „Der Alte Orient", I, 4, 1910.

3. *Cohausen, A.* — Die Befestigungswesen der Vorzeit und des Mittelalters.

4. *Schuchhardt, C.* — Die Burg im Wondel der Weltegschichte. 1932.

5. *Schuchhardt, C.* — Hof, Burg und Stadt bei Germanen und Griechen. 1908.

6. ***Гурко-Кряжин*** — Циклопические сооружения Закавказья. „Новый Восток". 1926, № XV, стр. 212—220.

7. ***Мещанинов, И.*** — Циклопические сооружения Закавказья. „Известия Гос. Ак. Ист. Мат. Культуры". 1932, т. XIII, вып. 4—7.

8. *Թորամանյան Թ.* — *Նախաքրիստոնեական հայ ճարտարապետություն. «Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի». Էջմիածին, գիրք Ա և Բ. 1921—22 Թ. Թ., էջ 207—225.*

9. *Առաքելյան — Երրակի աշխատության (կենկողյան) ամրոցները. «[illegible]» 1913, գիրք* XXV, *էջ 165—188.*


## ԺԱ

1. *Behlen, H.* — Der Pflug und das pflügen. 1904.

2. *Hahn, Ed.* — Von der Hacke zum pflug. Leipzig, 1919.

3. *Lefevre des Noëttes* — La force motrice animale à travers les âges. 1924.

4. *Hilzheimer, M.* — Geschichte unserer Haustiere, 1912.

5. *Hilzheimer, M.* — Die Haustiere in Abstammung und Entwicklung. 1909.

6. *Hilzheimer, M.* — Natürliche Russengeschichte der Haustiere, 1925.

7. *Antonius, O.* — Grundzüge einer Stammesgeschichte der Haustiere. 1922.

8. *Hahn, E.* — Hausthiere, 1896.

9. *Hahn, E.* — Entstehung der Pflugkultur, 1911.

10. *Negelein* — Die Stellung des Pferdes in der Kulturgeschichte. „Globus". 84/22. 1903.

11. *Hahn, Ed.* — Demeter und Baubo. Versuch einer Theorie der Entstehung unseres Ackerbau. 1897.

12. *Hahn, Ed.* — Das alter der wirtschaftlichen kultur der Menscheit. Heidelberg, 1905.




13. *Hahn, Ed.* — Die Entstehung der wirtschaftlichen Arbeit. Heidelberg. 1908.

14. *Leser Paul* — Entstehung und Verbreitung des Pfluges. „Anthropos Bibliothek", 1931. B. III, Heft 3.

15. *Առաքելյան — Հին Հայաստանի Հրանոցները. «Էջմիածին» ամսագիր (Վիեննա), 1924 Թ. № 3—4.*

16. ***Мещанинов, И.*** — Ирригация в халдском периоде Закавказья. „Сообщения Гос. Акад. Ист. Материальн. Культуры", 1931, № VI, 12—15

17. ***Григорьев Г. В.*** — К вопросу о центрах происхождения культурных растений. „Известия Гос. Ак. Инст. Мат. Культуры", т. XIII, вып. 9, 1932 г.

18. *August Köster, prof.* — Schiffahrt und Handelsverkehr des östlichen Mittelmeeres im 3 u. 2 Jahrtausend v. Chr.. „Beihefte zum Alten Orient". Heft 1. 1925.

19. *Delitsch Fr.* — Handel und Wandel in Altbabylonien, Stuttgart, 1910.

20. *Schwenzner Walter* — Das geselschaftliche Leben in Alten Babylonien nach den Verträgen und Briefen dargestellt. „D. Alte Orient," 16, 1.

21. *Landsberger Benno* — Assyrische Handelskolonien in Kappadozien aus dem 3 Jahrhundert. „D. Alte Orient".

22. *Köster, A.* — Die Herkunft des Pferdes in Babylonien. „Festschrift für C. F. Lehmann-Haupt, Wien-Leipzig. 1921.

23. *Meissner, B.* — Das Pferd in Babylonien. „Mitteilungen d. Vorderasiat. Geselschaft". 1913. № 2.

24. ***Быковский, С. Н.*** — К вопросу об одомашнении животных. „Советская Этнография", 1934 г. № 3.

25. Проблема происхождения домашних животных. „Сборник лаборатории генетики Академии Наук СССР", 1933 г.


## ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. *H. Schmidt* — Vorgeschichte Europas. Bd. I, Stein und Bronzezeit. Leipzig—Berlin, 1924.

2. *Winkler Hugo* — Die Euphratländer und d. Mittelmeer. „Der Alte Orient". VII, 2.

3. *Fimmen, D.* — Die Kretisch-mykenische Kultur. Leipzig. 1921.

4. *Delitzsch* — Assurbanipal und die assyrische Kultur. „Der Alte Orient", XI, 1.

5. *Aigner August* — Hallstatt, ein Kulturbild aus praehistorischer Zeit. München, 1911.

6. *Wilke, S.* — Archeologische parallelen aus dem Kaukasus und den unteren Donauländer. „Zeitschrift für Ethnologie". 1904, s. 99.

7. *Wilke, S.* — Vorgeschichtliche Beziehungen zwischen Kaukasus u. dem unteren Donausgebiete.

8. *Boson, G.* — Les metaux et les pierres dans les inscriptions assyrobabyloniennes. 1914.

9. *Langdon, S.*— Ausgrabungen in Babylonien seit 1918. „Der Alte Orient".

10. *Ausgrabungen* d. Deutschen Orientgesellschaft in Babylon. Leipzig. 1911—1918.

11. *Ausgrabungen* in Sendschirli. Herausg. v. Orient-Comité zu Berlin. Bd. I—IV. Berlin. 1893—1911.

12. *Lewy, J.* — Forschungen zuralten Geschichte Vorderasiens. Leipzig, 1925.

13. *Montelius, O.* — Die älteren Kulturperioden im Orient und in Europa. B. II. Babylonien, Elam. Assyrien. Stockholm. 1916—1923.

14. *Sarre Fr. und E. Herzfeld* — Archeologische Reise un Euphrat und Tigrisgebiet. 4 Bde. Berlin, 1913—20.

15. *Leonhard, R.* — Paphlagonische Denkmäler. „Jahresb. Schles. Gesellsch. f. vaterland. Kultur". 80.

16. *Neuburger, A.* — Die Technik des Altertums Leipzig. 1921.

17. *Bilabel Fr. und A. Grohman*— Geschichte Vorderasiens u. Uegyptens v. 16 Jahrtaus. v. Chr.- Heidelberg, 1927.

18. *Sophus Müller* — Urgeschichte Europas, 1905. *(կա ռուսերեն թարգմանություն):*

19. *Much, M.* — Die Trugspiegelung orientalischer Kultur in den vorgeschichtlichen zeiten Nord-europas. Wien. 1906.

20. **Готье, Ю.** — Железный век в Восточной Европе. Москва, 1930.

21. ***Готье, Ю.*** — Очерки по истории материальной культуры Восточной Европы, т. I. Каменный век—Бронзовый век. Железный век на юге России· Ленинград, 1925.

22. ***Нижне-Дунайская*** культура в Болгарии *(համեմատական է Արևմտյան կուլտուրայի հետ)*, „Новый Восток", 1923, № 4.

23. *Захаров, А.* — Эгейский мир, 1924.

24. ***А. Левин-Дорш и Г. Кунов*** — Первобытная техника. Пер. с нем. под ред. проф. Д. Анучина. Госиздат, Москва—Петроград.

25. ***Карл Вейле*** — Элементы человеческой культуры. Пер. с нем. Госиздат, 1923.



# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբաղայի դաշտ 30
Աբամելիք 243
Աբլաղ 70
Ագնի 166
Ադադ 52
Ադադ-Նիրարի 148, 186, 188
Ադիաման 45, 74, 76, 180
Ադրբեջան 22, 43, 53, 59, 72
Ադրիատիկ ծով 17
Ազատ գետ 250
Ազար 285
Ազնանց տոհմ 243
Ալանք 71
Ալաշկերտ 30, 195, 201
Ալավերդի 22, 142
Ալեքսանդրիա 292
Ալեքսանդրապոլ 56, 62, 247
Ալզի 6, 7, 276, 287
Ախալցխա 91, 203
Ախալքալաք 203, 223
Ախթալա 8, 22, 34, 35, 43, 44, 68, 76—78, 147, 163, 165, 169, 170
Ախլաթյան 23, 135
Ախմայի գյուղ 23, 68
Աքքադ 282
Աքյուրա 23
Ահուրա-Մազդա 114
Աղավնատուն 135
Աղկալա 240
Աղձնիք 5—7, 276
Աղստաֆա 21, 239
Աղստև 239
Աղվեսաձոր 25, 53, 88
Աղրի դաղ 30
Ամասիա 221, 247
Ամենոֆիս 3-րդ 59
Անաու 135, 149, 150
Անատոլիա 150
Անբերդ 26
Անգեղ բերդ 242
Անդրե 149
Անդրկասպյան երկիր 149
Անդրկովկաս 5, 6, 44, 58, 67, 76, 111, 150, 203, 249, 279
Անի 26, 27, 101, 109, 141, 142, 163 166, 242
Աննենֆելդ 43, 56
Աշխաբադ 135
Աշխալըշ 252
Աշտարակ 24, 231
Առաջավոր Ասիա 5—8, 10, 11, 13, 14, 16, 28, 31, 44, 49, 51, 61, 63, 66, 67, 69, 75, 76, 78—80, 83, 93, 99, 100, 107, 109—111, 122, 136, 143, 149, 150, 156, 172, 173, 185, 186, 194, 209, 249, 251, 268, 269, 281—283, 285, 286, 290
Առաքելոց վանք 163
Առնուանդա 13
Ասիա 19, 37, 60
Ասլիմելիք 243
Ասորա-Բաբելոնական 11, 13, 52, 78, 172
Ասորեստան 6, 9, 13, 14, 52, 54, 72, 76, 79, 96, 114, 119, 144, 195, 196, 224, 231, 253, 258, 266, 283, 291
Ասսարհադոն 224
Աշուր 114, 144
Աշուր- Բանիպալ III 119
Աշուր-Նասիրպալ III 119, 120, 224, 252, 258

Աստապատ 168
Աստարոտ 166
Ավստրալիա 67, 70, 73, 84
Ավստրիա 5, 17
Ատրպատական 263
Ատրպետ 27, 29, 290
Արա 85
Արագած 25, 26, 187, 227, 245, 249
Արամ 85
Արարատ լեռ 30, 239
Արարատյան դաշտ 18, 24—25, 30, 147, 151, 161, 195, 196, 239, 249, 257, 261
Արարատյան երկիր 6
Արաքս 30, 249, 261, 277, 284, 287
Արաքսի հովիտ 26, 239, 252
Արգիշտի 74, 110, 176, 234, 252, 261
Արգիշտի I 219, 249, 266
Արգիշտի II 110
Արզունի 100
Արդահան 30
Արծվանիկ 108—112
Արդինի Մուսին 5
Արմավիր 24
Արշակունի 242
Արուանդաշ 186
Արջաձոր 23, 188
Արտամետ 262
Արտաշատ 255, 285, 286
Արտաշես Բ 71
Արգոստաս 285
Արևելյան Ասիա 7, 83
Արևելյան Տիգրիս 222
Արևելք 2
Արևմտյան Եվրոպա 1, 17, 21, 63, 67, 79, 100, 103, 161, 207
Արևմտյան Հայաստան 238, 266
Արևմտյան Տիգրիս 222
Աքեմենյաններ 114
Աֆրիկա 13, 48, 73, 84, 94

Բաբելաստան 9, 195, 288, 289, 291
Բաբելոն 10, 35, 79, 195, 288, 289
Բաբերդ 239
Բագնայր 224
Բաքու 123
Բալավատ 67, 78
Բալլուկայա 23
Բալկանյան երկրներ 161
Բալկանյան թերակղզի 129, 166
Բալու 221, 239
Բասրա 132
Բաղդասար 70, 85, 227, 243
Բաղդադ 287, 292
Բայազետ (Հին) 239
Բայան (տես Բանանդ)
Բայբուրդ 30
Բայլերն 21, 123, 132
Բանանդ (Բայան) 22, 62, 165, 167, 188
«Բանբեր Էջմիածնի գիտ. ինստիտուտի» 27
Բանցրել 27
Բաշ-Ապարգյալ 27
Բասեն 199
Բարաբաթ 23
Բարձր Հայք 30, 198, 199, 203, 205—207, 210—213, 230, 242
Բել 85
Բելուջիստան 149
Բելք Վ. 22, 28, 32, 38, 45, 46, 62, 103, 113, 118, 123, 132, 134, 163, 178, 182, 187, 219, 221, 223, 228, 241, 261, 263
Բեհիստուն 186
Բասեյին 106, 123, 175
Բեռլինի պետական թանգարան 175
Բիայնա 254
Բիթլիս 30
Բիտ-Զամանի 258
Բյուզանդիոն 292
Բյուրական 25
Բնաբերդ 242
Բոլոնիա 259
Բոլշայի 22
Բոհուսլյան 259
Բոհման Մու. 30, 216, 238
Բողազ-քյոյ 53, 88, 173, 251, 267, 282
Բոյան գետակ 224
Բորչալու 30
Բուլանըխ 211
Բունյաթյան 250
Բուրմե լիճ 164
Բրեգե 164
Բրիտանական թանգարան 78, 176
Բրուսա 8

Գայա-Խարարա 24
Գանձակ 5, 22, 23, 37—39, 43, 45, 53, 56, 62, 69, 72, 88, 89, 91, 101, 138, 147, 148, 161, 165, 167, 177, 180, 188, 189, 194, 236
Գառնի 231, 242, 250
Գառնիկ 70
Գավառագետ 245, 246
Գարահիսար 201
Գեղամա սարեր 227
Գեղարդա վանք 224
Գեղարքունիք 5
Գեորգսֆելդ 23
Գեոյ-Թեփե 93, 98, 99
Գետաբեկ 5, 22, 62, 89, 116, 165, 169, 183, 236
Գետիկ Սալյանբեշ 109
Գերմանիա 161, 214
Գյուղաղալար 24, 180
Գյուլալյու 23
Գյուլբեյջան 88
Գոլովինո 22, 147, 236
Գողթան գավառ 30
Գողթն 5, 26
Գոշավանք 232
Գորիս 23, 216, 281
Գուգարք 29, 30
Գուդեա 9, 119
Գրիգոր Լուսավորիչ 224
Գրիգոր Նարեկացի 224

Դայնա 261
Դամղալու գյուղ 23
Դանդամաուա 258
Դանուբ գետ 17, 129
Դանջիկյալա 8
Դաշբուրուն 24, 189, 233, 239, 247—249, 255, 261
Դաշքասան 22, 72
Դավիթ 85
«Դավիթ-Մհեր» 70, 243
Դավշանլի գյուղ 23
Դարբասի ձոր 24
Դարալագյազ 5, 8, 24, 30, 35, 38, 224
Դարանաղի 242
Դարեհ 186
Դարեհ Ա. Վշտասպ 285, 290
Դեմետրե 166
Դեշելյա 12
Դերջան 199
Դերսիմ 8
Դ ը ղ 23
Դիարբեքիր 5, 30, 216, 258
Դիլիջան 5, 18, 21, 22, 30, 36, 43, 147, 161, 194, 199, 236, 239
Դիմինի 214
Դիոնիս 287
Դվին 26, 280, 292
Դրանգիանա 7

Եգիպտոս 9—13, 35, 48, 54, 61, 72, 78, 80, 100, 114, 135, 172, 184, 195, 259, 282—284, 286, 287
Եզդիբեկլիա 239
Եղեկիել 283
Եթովպիա 13
Եղիշե 250
Եվրոպա 5, 8, 9, 11, 16, 17, 19, 33, 37, 48, 52, 80, 83, 128, 132, 281
Եվքսինյան Պոնտ 14
Երեխ 9
Երերույք 231
Երզնկա 30, 197, 199
Երիցյան Ալեքսանդր 22
Երվանդ 290
Երվանդաշատ 255
Երևան 8, 24, 25, 35, 43, 59, 74, 123, 134, 151, 249, 261
Եփրատ 13, 194, 225, 239, 240, 264, 284, 289
Եփրատ-Տիգրիս 9

Զ ա ր 224
Զարուդ 181
Զալցբուրգ 5

Զայցկամերհուտ 17
Զաղալու 82, 165
Զանգեզուր 5, 18, 23, 30, 72, 108, 181, 194, 216, 281
Զանգի 261
Զվարթնոց 25, 36, 141, 261
Զաքարյան 24
Զեռ 109

Էանդայուն 79
Էգեյա-Միկենյան աշխարհ 157
Էգեյան աշխարհ 109
Էգեյան կղզիներ 9, 33
Էլամ 9, 10, 135, 149, 150, 172, 178
Էյուկ 252
Էնգելս Ֆ. 273, 279, 280, 292
Էջմիածին 25, 36, 53, 88, 141
Էջմիածնի վանք 27, 65
Էվանս 189
Էտրուրիա 109
Էրզրում 8, 199, 239
Էրիքուահինի 249
Էրիմենա 74, 176

Tabula Peutingeriana 250, 285
Թաղարենդ 24, 35, 59, 135, 151, 168
Թանաքերտ գյուղ 26
Թամանիա 64
Թեբե 66, 79
Թեշուբ 51, 112
Թեոդոսիա 172
Թեսալիա 34, 135, 214, 225
Թիֆլիս 29, 123
Թյուրքահայաստան 28, 29, 195, 197, 198, 216, 238, 240
Թյուրքահայք 201
Թյուրքիա 96
Թորթում 199
Թորամանյան Թ. 27, 245, 247
Թուբալ 277, 283
Թուշպա 263
Թուրքեստան 135
Turquie d'Asie 8
Թոփրակ-կալե 43, 46, 47, 51, 66, 67, 74, 78, 103, 106, 107, 113, 114, 117, 118, 132, 134, 138, 140—142, 146, 163, 168, 175, 176, 178, 180, 182, 187, 189, 226—228, 241, 256
Թրակիա 209, 225

Ժեննի Վերհեյմ 151

Իբն-ալ-Ֆակիհ 6
Իբն-Հաուկալ 271
Իգդիրի դաշտ 24
Իդրիս 164
Իլյարու 261
Իլիակոն 82, 213
Իշխան 70
Իշպուինիս 253
Իոնիա 172
Իշկալա 219
Իսպանիա 1, 5
Իվանովսկի Ա. 22—24, 38, 62, 116, 123, 144, 145, 162, 191, 233, 234, 236, 247, 248
Իտալիա 79, 109, 166, 259
Իրան 5, 135, 156
Իրանական սարահարթ 149, 286

Լագաշ 9, 79
Լալայան Երվանդ 24, 26, 38, 45, 68, 71, 72, 74, 76, 91, 123, 134, 143, 144, 165
Լայարդ 5, 22, 66, 91, 92, 99, 163, 183
Լեման-Հաուպտ 28, 46, 93, 98, 99, 103, 113, 118, 132, 134, 141, 146, 163, 178, 182, 187, 191, 209, 216, 219—222, 226, 228, 239, 241, 263, 264
Լենինական 8, 27, 52, 56, 191, 201
Լենինգրադ 111, 123
Լևոնյան Գ. 93
Լեոնհարդ Ր. 209
Լիխիունիելի 249
Լիկիա 109
Լիսիցյան Ստեփան 23, 26
Լոնդոն 78, 106, 123, 176
Լոռի 5, 8, 18, 22, 28, 30, 35, 43, 53, 54, 62, 63, 65, 81, 88, 91, 132, 142, 147, 161, 163, 194, 201, 204, 206, 207, 212, 224, 231, 236, 267
Լոռաձոր 24
Լուարա 164
Լուսաղբյուր 120
Լևոն III 292
Լևոն Սարգսյան 198, 199

Խաթուշիլ 13
Խալդ 118, 241, 249
Խալդի 114
Խալդիա 278
Խալիբ 14, 277
Խաղդիք 278
Խաչեն գետ 23
Խատտուշաշ 252
Խարբերդ 5, 30, 221, 239
Խերսոնես 172
Խլաթ 224
Խոշաբ գետ 262
Խոջալու 23, 37, 59, 148, 167, 171, 186, 188
Խորոմվաղուխա 250
Խորասան 7
Խոյխոս 219
«Խորհրդային Հայաստան» (Խ. Հ.) 8, 23, 25, 27, 28
Խորասարոց 231
Խուբուշկիա 252
Խրամ գետ 22

Ծոփք 242
Ծղկոտան 262

Կազբեկ 109
Կայա 220
Կալախ-Նեմրուդ 224
Կաղզվան 105, 224
Կամախ 199
Կաունեկեա 111
Կապադովկիա 67, 111, 209, 282
Կապան-Մադեն 5
Կապուտան ծով (Ուրմիա լիճ) 29, 30
Կասպիական ծով 64, 284
Կասպից ծով 13, 283
Կատտամունի 7
Կարաբուրյալ 23
Կարաղաշ 22
Կարաքենդեկ 236
Կարմրական ժայռապատկերներ 175
Կարկառ 23
Կարմիր-բլուր 25, 74, 135
Կարմիր վանք 19, 24, 26, 43, 56, 134, 135, 148—152, 168, 177, 178
Կարստ Յ. 276
Կեյխալը 5
Կենտրիտես գետ 238
Կենտրոնական Ասիա 172, 268
Կերկի 150
Կիզվատնա 13, 287
Կիլիկիա 292
Կիկլադյան կղզիներ 33, 112
Կիկկուլի 267
Կիպրոս 89, 112
Կիրանց 22
Կիև 88, 169
Կյուլթեպե 166
Կյուլչատակ 23
Կնոսոս 189
Կոբան 22, 33, 53, 59, 88, 99, 117, 148, 161, 165, 169, 181
Կողբ 286
Կոմանա 161
Կոշկաբար 23
Կովկաս 5, 11, 13, 16, 33, 49, 60, 62, 63, 88, 103, 109, 111, 132, 134, 136, 147, 148, 172—174, 182, 223
Կովկասյան պարանոց 83
Կովկասյան լեռնանցք 9
Cuint Widal 8
Կուրդարա 8
Կուր գետ 277, 288
Կուրխայինի 261
Կուրուչայ 23
Kyropedia 67
Կրետե 2, 58, 61, 225
Կրետե-Միկենյան 51, 78

Հադրութ 23
Հալշտատ 17, 33
Հալ-Ռասլեյ 149
Հաղարծին 232

Հաղպատ 22
Համմուրաբի 80
Հայաստան 3, 6, 7, 18, 21, 23, 26 27, 28, 31, 40, 47, 52, 54, 62, 63, 65, 71—73, 77, 81, 83, 85, 93, 94, 96, 98, 100, 104, 114, 123, 132, 135, 141, 144, 150—152, 175, 179, 180, 184, 185, 187, 190, 194—196, 199, 210, 211, 213, 225, 238, 242, 249, 251, 255, 257, 263—267, 269, 271, 276, 278, 281, 284—290, 292, 293
Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտե 25, 27, 187
Հայաստանի Պետական թանգարան 62, 63, 71, 104, 114, 143, 144, 179
Հայկ 85, 247, 250
Հայկա բերդ 223, 227
Հայկական Բարձրավանդակ 19, 59, 193, 253, 270
Հայկական Լեռնաշխարհ 3, 5, 6, 8, 9, 13, 14, 16—19, 21, 28—30, 31, 33—36, 41, 46, 47, 52, 54, 55, 58, 61, 64, 65, 68, 69, 73, 74, 78—80, 82—84, 88, 89, 91, 96, 97, 100, 101, 107—109, 112, 116, 122, 123, 125, 128, 130, 134, 136, 140, 144, 146, 150, 156, 158, 163, 165, 168, 170, 172, 173, 175, 183, 186—188, 190—194, 196, 198, 203, 210, 211, 213, 215, 217, 218, 221, 223, 226, 227, 229, 233, 238, 242, 244, 251—253, 256—260, 264—267, 269, 274, 275, 277—279, 281—284, 286, 288—290, 292, 293
Հայոց Ձոր 261, 262
Հառիճ 224
Հասան-Ղալա 29
Հասանքեֆ 216, 221, 222, 240, 264
Հարավային Ամերիկա 71
Հարավային Եվրոպա 79
Հարավային Միջագետք 80, 282
Հարավային Ռուսաստան 169, 171
Հելենենդորֆ 22, 23, 53, 167, 188
Հերար 13
Հերկուլանում 105
Հերոդոտ 76, 257, 266, 283, 288, 289
Herodoti 289
Հին Արմավիր 142, 189, 261
Հին Բայազետ 30, 221
Հին Նախիջևան 144
Հիրշֆելդ Գեորգ 209
Հյուսիսային Անատոլիա 197
Հյուսիսային Կովկաս 22, 33, 59, 90, 99, 109, 147, 161, 165, 169, 181
Հնդկաչին 7
Հնդկաստան 10, 285
Հոմերոս 84, 213, 214
Հոռոմ 247
Հորուս 164
Հունաստան 78, 109, 225, 269, 283, 291
Հռոմ 52, 164, 269, 291, 292
Հրազդան 261

Ձողկերա 249
Ձորագեղ 62
Ձորագետ 63

Ղազախ 62
Ղազար Փարպեցի 6
Ղաթար 5, 23
Ղարաքենդ 5, 22, 59, 62, 89, 116, 148, 162, 163, 165, 171, 183, 187, 236
Ղալաջիչ 247
Ղարաբաղ 23, 35, 37, 43, 91, 167, 188, 204—207, 211—213, 232
Ղարադաղյա լեռ 22
Ղարա-քյոփեկ 144
Ղարս 28, 105, 109, 239
Ղարսաչայ 239
Ղափան 23
Ղափըլը 145
Ղզլթամուր 135
Ղզլվանք 19, 26, 56, 148
Ղշլաղ 81, 245
Ղուբլու 240
Ղըմզլու 198
Ղևոնդ 6

Ճանկան 22
Ճորոխ 29, 30, 284

Մաղավանց 224
Մազկերտ 220, 239
Մալխա 109
Մայա 166
Մայկոպ 18, 90, 161, 181
Մայսուր 91
Մանազկերտ 30, 219
Մանանդյան Հ. 288
Մանիչարի հովիտ 81
Մանյա այր 224
Մառ Ն. 22, 24, 26, 28, 163, 278, 280
Մատնավանք 224
Մարաշ 110, 252
Մարախրոս 224
Mgüb 224
Մեղրինե Արու 66
Մելազկերտ 263
Մելանեզիա 94
Մեծ-Արարատ 247
Մեծ-Ջուր 224
Մեծ Հայք 231
Մեծ Զաբ 36
Մեղրի 26
Մեն 164
Մենուա 226, 233, 236, 248, 249, 252, 253, 261, 263
Մենուահինիլի 249
Մեսեխ 283
Մեղրինե-Արու 66
Մեծամոր 23, 26, 35, 135, 148, 187, 188
Մերնեպտահ 13
Միթանի 267
Միլլի տափաստան 35
Միկենք 109, 214, 225, 251
Միհրդատ 164
Միջագետք 8, 9, 13, 35, 52, 67, 93, 111, 143, 149, 150, 157, 161, 185, 186, 195, 257—259, 268, 280, 286, 287
Միջերկրածովյան երկիր 2, 10, 61, 67, 72, 161
Միջերկրածովյան կղզի 58, 166, 173
Միջերկրական ծով 16, 88, 283, 284, 292
Միջին Ասիա 10, 64, 149, 171
Մխախան 5
Միտանի 59
Մխիթար Գոշ 292
Մծխեթ 161
Մհեր 85
Մշո դաշտ 30
Մոլոկե 196
Մոնղոլիա 267
Մոկս 5, 224
Մոսկվա 56, 123, 188
Մոսկվայի Պատմական թանգարան 188
Մովսես Խորենացի 6, 71, 85, 247, 250, 257
Մովսես Կաղանկատվացի 6
Մորգան Ժակ 6, 13, 22, 35, 38, 44, 45, 66, 68, 76, 77, 91, 92, 93, 97—99, 123, 132, 142, 150, 163, 165, 207
Մուխանաթ-Թափա 25, 135
Մուշ 163, 195, 243
Մուսասիր 65, 114, 232, 252, 266, 283
Մուսի-Լեռ 22, 43—45, 53, 54, 60, 63, 65, 66, 91, 95, 132, 147, 169, 170, 256
Մուսայան 144
Մաք կամբինա 52, 191
Մրեն 231

Յազլի-քայա 521
Յարոյլու 138
Յակուբլու 6
Յավան 283
Յաֆուզլու 71
Յուլյանդրիա 259

Նաիրի 14, 79, 252, 254, 258, 266
Նախ. ՍՍՍՀ 151
Նախճավան գյուղ 105
Նախիջևան 19, 26, 43, 56, 134, 148, 286
Նանա 166, 179
Ներո 119, 120
Նեգոս 13, 157, 195

Նեմրութ 224
Նեմրութ-կալե 119
Ներգալ 6
Ներշապուհ Մամիկոնենից եպիսկոպոս 292
Ներսես Կաթողիկոս 292
Ներքին Մեծմենկերտ 262
Ներքին Թարնաա 72
Նեֆթեկուլա 219
Նիգեր գետ 94
Նիկոպոլի 221, 247
Նորատուս 240, 245
«Նոր Աշխարհ» հանդես 29
Նոր-Արմավիր 135
Նոր Բայազետ 5, 18, 24, 30, 35, 36, 38, 43, 45, 53, 54, 59, 60, 63, 68, 69, 71, 72, 74, 81, 82, 88, 91, 101, 107, 114, 134, 138, 139, 142—144, 147, 161, 162, 169, 170, 180, 183, 194, 203, 236, 240, 244, 245, 263, 267
«Նորք» հանդես 25
Նուխի 53, 138

Շախերմայր 287
Շահապիվան 292
Շահումյան շրջանը 25
Շամախի 91
Շամիրամ 223
Շամիրամայթի 151
Շամիրամ-սու 226, 261, 262
Շամլուղ 8
Շամքոր 22, 53, 107, 117, 138, 167
Շանար 21
Շապին-Գարահիսար 201
Շատախ 198
Շարգան 109
Շարուրան 61
Շարուր 30, 195
Շեյթան-դաղ 22, 43, 44, 132, 147, 165
Շենգավիթ 25
Շիկլիկա 111
Շիրակ 18, 26, 27, 30, 35, 36, 43, 88, 138, 145, 161, 171, 180, 183, 201, 203, 239, 247, 249

Շիրշրանք 27
Շուլի 197
Շուշ 135, 150
Շորլու 59
Շու 164
Շուխարդ Կալե 98, 99
Շուշանց 141
Շուշի 53, 59, 62, 69, 91, 117, 147, 148, 161, 167, 188, 194
Շվայցեր-Լերխենֆելդ 197
Շվեյցարիա 1, 33

Ոսկեվազ 135
Ոսկեպարնա 135
Ունգեր Էկշտարդ 80
Ուչքիլիսա 22, 147
Ուվարով 21, 123
Ուվարով Ա. Ս. 24
Ուտեացիք 53
Ուր 9, 144
Ուրարտու 14, 258
Ուրմիա 98, 151
Ուրմիո լիճ 29, 93, 180, 239, 252

Չարդախ 20, 74
Չարկովսկի Գ. Վ. 24
Չըլդըր լիճ 30, 239
Չինաստան 7, 10
Չովդաա 23

Պաթագոնիա 71
Պալեստին 13, 72, 135, 195, 283
Պանտիկապեա 172
Պասավաթումբ գյուղ 23
Պատուշար 45, 82
Պարսկահայք 29, 93, 150, 180
Պարսկաստան 7, 96, 111, 112, 114, 196, 263, 265, 266, 285, 290—292
Պարտավ 292
Պաֆլագոնիա 209
Պեպի 2
Պերուշևսկայա Է. Օ. 111
Պլամխման 132
Պլինիոս Ավագ 287
Պնիքս 225
Պոմպե 215

Պոնտական լեռներ 172
Պումպելի 150
Պուասա 224
Պրժեվալսկի 267
Պրոկոպ Կեսարացի 280
Պելոպոնեսյան պատերազմ 250

Ջալալօղլի (Ստեփանավան) 22
Ջաղացի գլուխ 24
Ջաղացի-դար 245
Ջավախք 223
Ջիվանշիր 68, 188
Ջուլամերիկ 30
Ջուլֆա 30

Ռա-Ամմոն 114
Ռեդկին-Լագեր 21, 22, 33, 43, 53, 58, 59, 132, 147, 161, 236
Ռեյա 179
Ռեյնե գյուղ բուռ Ռեյմոնդ 222
Ռիոն գյուղ 109
Ռիքարդ Տ. 9, 10, 12, 13
Ռոզենդորֆ 23
Ռուսա 118
Ռուսա I 103, 228, 263
Ռուսա II 176, 220, 261
Ռուսա III 176
Ռուսահայաստան 203
Ռուսաս 114
Ռուսաս I 146
Ռուսաս Բ. 74
Ռուսաս Գ. 74
Ռուսաստան 172, 182, 281

Սադախլո 22, 81, 147
Սալմանասար III 67, 76, 110, 252
Սամթավրո 161
Սանասար 70, 85, 227, 243
«Սասնա Ծռեր» 70, 227
Սասուն 243
Սատալա 286
Սարգոն 231, 282
Սարգոն II 14, 114, 266, 283
Սարդարաբադ 261
Սարդինիա (կղզի) 61, 100
Սարգոնիդյան տիրապետություն 149

Սարդուր 120, 252, 253
Սարդուրաբերդ 226
Sardursburg 226
Սարիղամիշ 28, 108—112, 224, 239
Սարուղ 23
Սարչե-գյուլու 173
Սեփրգենց 22
Սենջիրլի 88, 173
Սեակյո 214
Սինարուր 258
Սինոպ 7
Սիսիան 23, 135, 195
Սիրիա 13, 195, 196, 223, 268, 284
Սիցիլիա 135
Սկինդեր Վլադիմիր 23
Սկյութիա 172
Սոդերդ 30, 216, 221, 223
Սմբատ Բագրատունի 292
Սյունիք 30
Սոմխեթի լեռներ 30
Սոուջ-բուլաղ 208
Սովետական Հայաստան 8, 257
Սուզա 135, 149—151, 178
Սումերական երկիր 80
Սուրմալու 144, 189, 233
Սպեր 5
Ստեփանավան 22
Ս. Ստեփանոս 216
Սփազ 5
Ս. Վարդան 262
Strabo 7
Ստրաբոն 7, 267, 277
Սրվեթան 216
Սևան 30, 145, 147, 163, 165, 180, 249
Սևանա լիճ 24, 30, 227, 239
Սև ծով 13, 14, 64, 172, 278, 283—286

Վան 5, 8, 14, 28, 43, 46, 74, 78, 82, 88, 103, 118, 120, 141, 151, 175, 180, 182, 218, 219, 222, 223, 226, 227, 234, 239, 241, 261—263, 287
Վանա լիճ 29, 30, 198, 222, 239, 252, 262
Վանյան թագավորություն 249

Վան-Տոսպ 263
Վանք գյուղ 23
Վաղարշապատ 261
Վայոց Ձոր 224
Վարանդա 144, 236
Վարագ սար 141
Վարդանի վանք 224
Վարդաշեն 53
Վարձիա (Վարձունիք) 223
Վասպուրական 5, 28, 73, 103, 224, 227, 261, 263
Վենետիկ 292
Վերին Մեծիրենքեր 261, 262
Վիլյանովա 33
Վիրուբով 21
Վլադիկավկազ 99
Վոլինսկան 213
Վորոնեժ 22
Վորոտան գետ 24
Վրաստան 18, 109, 132, 161, 223

Տալիզին Ե. Մ. 148
Տայլոր 12
Տանայիս 172
Տաշբուրուն 144
Տակյիսոս 250
Տավրոս 198
Տարոն 30
Տաշիր 64
Տել-Ամառնա 282, 287
Տեկոր 231
Տեր-Ավետիսյան Սմբատ 23, 29
Տիրաբեն 283
Տիգլաթ-Պալասար 79, 103
Տիգոու 258
Տիլլեր 8
Տիգրանակերտ 286
Տիգրիս գետ 9, 30, 194, 216, 223, 224, 238—240, 264, 284, 289
Տիրիբազ 238, 290
Տիրինֆ 33, 214, 251
Տիրոլ 5
Տիրոս 293
Տոնի 263
Տոսպ 263
Տուլա 182

Տուշպա 59
Տուսիա 258
Տրապիզոն 278
Տրդատ 250
Տրդատա Թախտ 250
Տրոյա 58, 132, 214

Րեոսլեր Է. 22, 23, 39, 62, 123, 144, 148, 165, 188

Ցերվետերի 215
Ցուլակ 247
Ցուլակներ 189, 247—250

Փամբակ-Լոռի 26
Փաշաբյանդ 240
Փատտաֆոս 249
Փավստոս Բուզանդ 6, 242, 250
Փարիզ 123
Փարպի 25
Փյունիկիա 283, 284, 291
Փյունիկյան ծովեզերք 9
Փոքր Ասիա 5, 7—9, 11, 13, 14, 16, 29, 51, 52, 58, 67, 78, 109—112, 132, 149, 161, 166, 172, 173, 181, 183, 186, 197, 209, 222, 223, 225, 251, 267—269, 278, 280—285, 288, 290
Փոքր Հայք 30, 290

Քաղդեա 150
Քաղքիկ 243
Քարհատ 22
Քասախ 231
Քաստիլիա 225
Քեշիշ գյոլ 263
Քիրեկլյա 179
Քիշ 144
Քյուլթեփե 282
Քյուրդիստան 208
Քորայր 22
Քոպայիս 225
Քութայիս 109
Քուռ 223
Քսենոփոն 67, 141, 196, 198, 199, 210, 211, 238, 256—258, 265, 266



Քրիստոս 65

Օդեսա 172
Օլվիա 172
Օհան Օձնեցի 224
Օձուն 231
Օշական 24
Օպպերտ Ժ. 93
Օսեթիա 18
Օվալդ Թելլերս 8
Օվերն 33
Օրդուբադ 26, 268
Օրբելի Հ. 28, 223

Օրթաքիլիսա 27
Օրոնտես 290

Ֆախրիկեն 208, 209, 232
Ֆանագորիա 172
Ֆարս 144
Ֆարմակովսկի Բ. Վ. 90, 148, 1
173
Ֆեոդորով 20, 26
Ֆիլիմոնով Գ. Դ. 21
Ֆինլանդիա 148
Ֆրանկֆուրտ 149, 151
Ֆրանսիա 164

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ — «Ազգագրական հանդես» (Թիֆլիս)։
ԼԴՊ — Երվանդ Լալայան—Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931 թ.։
ԽՀ — «Խորհրդային Հայաստան» օրաթերթ։
ՀԱ — «Հանդես Ամսօրյա» (Վիեննա)։
ИАК — Известия Археологической Комиссии.
МАК — Материалы Археологической Комиссии.
КИАИ — Кавказский Историко-Археологический Институт.
ОАК — Отчет Археологической Комиссии.
ФАР — **Фармаковский, Б. В.** — Архаический период в России — „Материалы по археологии России", т. 34.
MC — Museum Caucasicum.
JMMS — *Jack Morgan* — Mission Scientifique au Caucase. I.
JMPO — *Jack Morgan* — La préhistoire oriental, III.
LHM — *C. Lehman-Haupt* — Materialien zur älteren gechichte Armeniens und Mesopotamiens.
LHA — *C. Lehmann-Haupt* — Armenien einst und jetzt, I u. II B. B.
EMGA — *Eduard Meyer* — Geschichte des Alteriums, I u II.
CSA — *Carl Schuchhardt* — Alteuropa.
RL — *Max Ebert* — Reallexikon der Vorgeschichte.
СГАИМК — Сообщения Государственной Академии Истории Материальной Культуры.
ԲԳԻ — «Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», գիրք Ա և Բ., Էջմիածին, 1921—22։
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ներկա շարադրության մեջ փակագծերում դրված հռոմեական ու արաբական թվանշանները նշանակում են մեր սույն աշխատության համարն ու էջը։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

### Ա. Մետաղի ինդուստրիա

I. Մետաղի սկիզբը . . . 1
II. Մետաղների հանքեր . . . 3
III. Անագի հանքերը և բրոնզի արտադրությունը . . . 6
IV. Երկաթի արտադրությունը . . . 11
V. Բրոնզե դարը Հայկական Լեռնաշխարհում . . . 18

### Բ. Դամբարաններ

I. Հայկական Լեռնաշխարհի հնավայրերը և կուլտուրական շրջանները . . . 21
II. Դամբարանների տեսակները . . . 31
III. Թաղման ձևերը . . . 36

### Գ. Գործիքներ

I. Ընդհանուր ակնարկ . . . 40
II. Տնտեսական գործիքներ . . . 42
III. Մարտական գործիքներ . . . 50
IV. Կառքեր . . . 74
V. Եզրակացություններ . . . 82

### Դ. Զարդարանքներ

I. Գոտի, ճարմանդ, հերազարդ . . . 87
II. Ապարանջան, մատանի, մանյակ, գինդ . . . 92
III. Գնդասեղ, ֆիբուլա, պանդուլներ, զանգակ . . . 97

### Ե. Մետաղե այլ պարագաներ

I. Կենցաղային պարագաներ . . . 103
II. Մարդկային արձանիկներ . . . 108
III. Թռչնական արձանիկ ու կենդանական ֆիգուրներ . . . 113

### Զ. Քարագործություն

Քարե ամաններ, քարե մուրճեր, ընդհանրացում . . . 116

Էջ

## Է. Կավագործություն


I. Ընդհանուր ակնարկ . . . . . . 121
II. Առաջին դասախումբ . . . . . . 125
III. Երկրորդ դասախումբ . . . . . 131
IV. Երրորդ դասախումբ . . . . . . 132
V. Արդի և հնագույն ամանների փոխադարձ առնչությունը . . . . . . 135
VI. Կավե այլ անոթներ . . . . . . 140
VII. Կերամիկայի ժամանակագրությունը . . . 146


## Ը. Արվեստ


I. Ընդհանուր ակնարկ . . . . . . 155
II. Երկրաչափական զարդանկարներ . . . 158
III. Խաչ և սվաստիկա . . . . . . 163
IV. Կենդանական զարդանկարներ . . . 167
V. Մարդկային զարդանկարներ ու արձաններ . 176
VI. Կենդանական արձանագործություն . . 180
VII. Գեղարվեստական իրերի արդյունագործություն . 181
VIII. Գիր . . . . . . . . 188


## Թ. Կառույցներ


I. Բնակարան . . . . . . . 191
II. Հին հայկական բնակարանը . . . 196
III. Բարձր Հայքի ու Հայաստանի հյուսիս-արևելյան մասի բնակարանները . . . . . 199
IV. Տան և գլխատան համեմատական գծերը . . 210
V. Քարակոփ բնակարաններ . . . . 217
VI. Կիկլոպյան կառույցներ և որմնադրություն . 226
VII. Մոնումենտալ շենքեր . . . . 229


## Ժ. Բնակատեղիք և ամրոցներ


I. Ամրոցի ու բնակատեղի փոխադարձ առնչությունը 237
II. Բերդերի կառույցքը . . . . . 243
III. Քաղաքներ . . . . . . 252


## ԺԱ. Տնտեսական գործունեություն


I. Երկրագործություն . . . . . 256
II. Անասնապահություն . . . . . 264
III. Արհեստներ . . . . . . 271
IV. Առևտուր . . . . . . 279
Ծանոթագրություններ . . . . 295
Գրականություն . . . . . 320
Անվանացանկ . . . . . . 329





Պատ. խմբագիր՝ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ստորագրված է տպագրության 1/III 1941 թ.
ՎՖ 651, պատվեր № 288, տիրաժ 3000, հրատ. № 90
Տպագրական 22 մամ., մի մամ. 36,400 նիշ, հեղ. 18 մամ.

Գինը 13 ռ., կազմը 2 ռ.

Երևան, ԱրմՖԻԼ-ի հրատարակչության տպարան, Լենինի փող. 67

37(47.925)
Ս-17

# ԽԱՉԻԿ ՍՏԵՓԱՆԻ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ
/1873-1940 թթ./



Ծնվել է 1873 թ. օգոստոսին Ղրիմի Կերչ քաղաքում, ծխական քահանայի ընտանիքում: Թեոդոսիայի գիմնազիան ավարտելուց հետո շարունակել է ուսումնառությունը Պետերբուրգի /1895-1900/ և Եենայի /1901-1903/ համալսարաններում: 1904-1920 թթ. աշխատակցել է մի շարք պարբերականների Թիֆլիսում ու Շուշիում /"Մշակ", "Տարազ", "Արշալույս", "Սուրհանդակ"/, դասավանդել է Նոր Նախիջևանի, Ալեքսանդրապոլի թեմական դպրոցներում ու գիմնազիաներում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Նա իր գիտական լայն, բազմաժանր հետաքրքրությունների մեջ նախապատվությունը տվել է պատմաբան-ազգագրագետի և պատմաբան-իրավագետի մասնագիտություններին: 1906 թ. Երվանդ Լալայանի հետ հիմնել է Հայոց ազգագրական ընկերությունը և եղել է նրա պաշտոնական "Ազգագրական հանդես"-ի խմբագրակազմի անդամ, որի էջերում էլ լույս են տեսել Խ. Սամվելյանի ուսումնասիրությունները, որոնք նոր խոսք էին այդ բնագավառում:

Նա մասնակցել է ոչ միայն ազգագրական նյութերի հավաքման ու հրատարակության գործին, այլև իր գիտական աշխատություններով սկիզբ է դրել հայ ազգագրության գիտական ուսումնասիրությանը և նրա մեթոդաբանության մշակմանը:

1921 թ. տեղափոխվել է Երևան, դասավանդել է հայ մշակույթի և իրավունքի պատմություն, հայոց պատմություն և արխիվագիտություն պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Միաժամանակ վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ: 1924 թվականի մարտից նա Հայաստանի կառավարության որոշմամբ պետական կենտրոնական արխիվի հիմնադիր վարիչն էր, որտեղ պաշտոնավարել է մինչև 1934 թ.:

Խ. Սամվելյանի բեղմնավոր գիտական գործունեությունը ընդգրկում էր հայոց հին և միջին դարերի պատմությունը, հայ իրավունքի պատմությունը, ազգագրությունը, հնագիտությունը, դրամագիտությունը, վիմագրությունը: Սա նրա ամենամեծ ծառայությունն է հայագիտությանը: Խ. Սամվելյանի երկարամյա գիտական արդյունավոր գործունեության գնահատականը պետք է լիներ 1940 թվականի սեպտեմբերին ՀՍՍՀ ԳԱ հայկական մասնաճյուղի պատմության ու նյութական մշակույթի ինստիտուտի գիտական խորհրդի նիստը, որը նրան պետք է շնորհեր պատվավոր դոկտորի գիտական աստիճանը, սակայն նա չհասցրեց լսել իրավամբ իրեն պատկանող այդ հաճելի լուրը:

Նրա գրչին են պատկանում "Հայ իրավունքի պատմություն", "Հայ սովորութական իրավունք", "Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին հայոց քաղաքացիական իրավունքը", "Նախնադարյան հասարակության պատմություն", "Խալդական հասարակություն", "Ստրկությունը Հին Հայաստանում", "Հին արևելքի պատմությունը", "Հին Հայաստանի կուլտուրան" հիմնարար աշխատությունները: